



# 9 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



ՏԻՊՐԱՆ ԱՆԻ  
ՀԱՏԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՓԵՐ

# 9



ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆ

# ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

9-րդ դասարան

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

ԵՐԵՎԱՆ



2013

ՀՏԴ 373.167.1: 820/89 (075.3)

ԳՄԴ 84(0) ց72

Գ 316

ԳԱՍՊԱՐՅԱՆ, Դ. Վ.

Գ 316 Գրականություն: 9-րդ դասարանի դասագիրք / Դ.Վ. Գասպարյան.-  
Եր.: «Տիգրան Մեծ», 2013, 288 էջ:

Ներկայացված են հայ գրականության հնագույն, հին և միջնադարյան շրջանները՝ առասպելներ, Գողթան երգեր, Մաշտոց, Բուզանդ, Խորենացի, Նարեկացի, Շնորհալի, Քուչակ, Սայաթ-Նովա, բանահյուսությունից՝ «Սասնա ծռեր» դյուցազներգությունը, նոր շրջանից՝ Խ. Աբովյան, Մ. Նալբանդյան և Ռ. Պատկանյան, արտասահմանյան գրականությունից՝ Վ. Շեքսպիր: Բացատրված են տեսական առանձին հարցեր, որոնք սովորողներին կօգնեն ճիշտ ընկալելու գրական երկը և ըմբռնելու գեղարվեստի առանձնահատկությունները:

ՀՏԴ 373.167.1: 820/89 (075.3)

ԳՄԴ 84(0) ց72

ISBN 978-99941-0-538-0

© Գասպարյան, Դ.Վ., 2013

© «Տիգրան Մեծ», 2013

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Գրականություն» առարկան 9-րդ դասարանում ընդգրկում է հայ հին և միջնադարյան գրականության առանձին հեղինակների, նոր շրջանի հայ գրականությունից՝ Խաչատուր Աբովյանի, Միքայել Նալբանդյանի, Ռափայել Պատկանյանի, ինչպես նաև համաշխարհային գրականության մեծագույն ներկայացուցիչ Վիլյամ Շեքսպիրի ստեղծագործությունները: Ընդգրկված են նաև «Սասնա ծռեր» դյուցազներգությունը և հայրենները:

Այս ամբողջ գրական ու բանահյուսական ժառանգությունն ունի ոչ միայն բարձր գեղարվեստական, այլև ճանաչողական նշանակություն: Այստեղ մեր ժողովրդի պատմական անցյալն է՝ արտացոլված առասպելների ու դյուցազներգության մեջ, հայ միջնադարյան քնարերգության ընտիր էջերն են, շեքսպիրյան հանճարի գանձերը:

Հայ գրականությունն սկզբնավորվել է V դարի սկզբին՝ գրերի գյուտից (405 թ.) անմիջապես հետո, համարվում է աշխարհի հնագույն գրականություններից մեկը և ունի համաշխարհային պատմական արժեք:

Հայ գրականությունն արտացոլում է հայ ժողովրդի ազգային գիտակցությունն ու հոգեկերտվածքը: Սկզբնավորման պահից իսկ հայ գրականությունը ձևավորել է ազգային ավանդույթի առանձնահատուկ գծեր, որոնք արտացոլում են հայ ժողովրդի պատմական ճակատագիրը, պատմական հիշողությունը, պատմականորեն ձևավորված հոգեբանությունը, կյանքն ու կենցաղը:

Հայ գրականությունը հայ ժողովրդի համար ավելին է եղել, քան սոսկ գեղարվեստը, որովհետև ծառայել է այնպիսի բարձրագույն արժեքների հաստատմանը, ինչպիսին են հայրենիքը և հավատը, որոնց շնորհիվ դարերի հոլովույթի մեջ պահպանել է իր ինքնությունը:

Այդ հատկանիշերի շնորհիվ գրականությունը դարձել է հայ ժողովրդի ազգային ինքնաճանաչողության գեղարվեստական վավերագիրը:

Հայ գրականության գրային շրջանին, ինչն սկիզբ է առնում գրերի գյուտից հետո, նախորդել է **նախագրային** շրջանը: Այս շրջանն ընդգրկում է հայ ժողովրդի ծագումնաբանությունն ու պատմական զարգացումը մինչև IV դարի սկիզբը, այսինքն՝ քրիստոնեության ընդունումը: Այս ընթացքում հայ ժողովուրդն ստեղծել է իր դիցաբանությունը և օրհներգեր նվիրել իր աստվածներին: Ստեղծել է նաև սեպագիր ժառանգություն, առասպելներ, Գողթան երգեր: Ապրել և ստեղծագործել են Արտաշես Ա հայոց թագավորի որդի բանաստեղծ Վրույրը, Տիգրան Մեծի որդի Արտավազդ Բ-ն, ով գրել է ողբերգություններ, ճառեր և պատմական երկեր: Արտաշատի, Տիգրանակերտի թատրոններում բեմադրվել են ողբերգություններ, այդ թվում՝ հույն թատերագիր Եվրիպիդեսի «Բաքոսուհիներ»-ը: Հայաստանում ապրել և ստեղծագործել են նշանավոր հույն մատենագիրներ, որոնցից Մետրոդորոս Սկեպսացին գրել է Տիգրան Մեծի կյանքի ու գործի պատմությունը (չի պահպանվել):

Այս հարուստ ժառանգությունից ամեն ինչ չէ, որ պահպանվել է, բայց ինչ էլ որ պահպանվել է՝ վկայում է հայ ժողովրդի բարձր զարգացման ու բարձր մշակույթի մասին:

Հայ գրականության գրային շրջանն սկսվում է 301 թ. աշխարհում առաջինը քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունելուց հետո: Մինչ մաշտոցյան գրեր այդ գրականությունն ստեղծվել է օտար գրերով և օտար լեզուներով (հունարեն, ասորերեն), բացառված չէ նաև՝ նախամաշտոցյան հայ գրերով:

**Գրային շրջանի** հայ գրականության բուն զարգացումը կապվում է Մեսրոպ Մաշտոցի ստեղծած հայոց այբուբենի հետ: Միանգամից բարձր զարգացում ապրեց պատմագրությունը, վարքագրությունը, հոգևոր բանաստեղծությունը, թարգմանական գործը, իմաստասիրությունը, քարոզչական գրականությունը:

Ամենևին պատահական չէ, որ V դարը մեր մտավոր կյանքի պատմության մեջ կոչվում է Ոսկեդար:

Հայ հին և միջնադարյան գրականությունն ստեղծվել է հայոց լեզվի զարգացման հաջորդական փուլերով՝ գրաբար, միջին հայերեն, ինչպես նաև աշխարհաբար (Սայաթ-Նովա):

Հայ հին և միջնադարյան գրականության պատմական զարգացումն ընդգրկում է V-XVIII դարերը և ներքուստ ենթարկվում է այսպիսի խմբավորման՝

**ա. V դար, Ոսկեդար,  
բ. VI-IX դարեր,  
գ. X-XII դարեր,  
դ. XIII-XVIII դարեր:**

Ամբողջությամբ տասնչորսդարյա գրականություն՝ լի հայ ժողովրդի պատմության բախտորոշ իրադարձություններով:

**V դարում** գրվեց հայոց պատմությունը, Մաշտոցի վարքը, ստեղծվեց հոգևոր բանաստեղծությունը, հայերեն թարգմանվեց «Աստվածաշունչ»-ը:

**VI-IX դարերում** ստեղծվեցին պատմագիտական նոր աշխատություններ, որոնց հեղինակներն էին Սեբեոսը, Հովհան Մամիկոնյանը, Մովսես Կաղանկատվացին, Ղևոնդը: Ասպարեզ եկան բանաստեղծ Դավթակ Քերթողը, Կոմիտաս Աղցեցին, Ստեփանոս Սյունեցին և ուրիշներ: Ձևավորվեց աշխարհիկ և հոգևոր բանաստեղծության ավանդույթը: Այս շրջանի գրականությունը կոչվում է նաև մաքառումների գրականություն, որովհետև ստեղծվեց հայոց պետականության անկումից հետո:

Այս շրջանում հայ ժողովրդի հանճարն ստեղծեց «Սասնա ծռեր» դյուցազներգությունը, ինչը, պատմվելով սերնդեսերունդ, հասավ մինչև 19-րդ դար, գրի առնվեց և առանձին պատումներից ստեղծվեց «Սասունցի Դավիթ» համահավաք բնագիրը:

**X-XII դարերում** շարունակվեց պատմագրությունը՝ Թովմա Արծրունի, Հովհաննես Դրասխանակերտցի, Ուխտանես, Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Արիստակես Լաստիվերցի, Մատթեոս Ուռհայեցի: Այս շրջանում ապրեց և ստեղծագործեց մեծագույն հայ բանաստեղծ Գրիգոր Նարեկացին: Նրա գործը շարունակեցին Գրիգոր Մագիստրոս Պահլավունին, Հովհաննես Սարկավազ Իմաստասերը և Կիլիկիայի հայոց թագավորության շրջանի այնպիսի նշանավոր դեմքեր, ինչպիսիք են Ներսես Շնորհալին, Գրիգոր Տղան, Ներսես Լամբրոնացին:

**XIII-XVIII դարերում** հայ գրականությունն առավելապես ընդունեց աշխար-

հիկ բնույթ: Եթե V-XII դարերում լեզուն գրաբարն էր, ապա այժմ գրաբարին փոխարինում է միջին հայերենը: Պատմագրության, տաղերգության հետ մեկտեղ զարգացավ նաև առակագրությունը (Մխիթար Գոշ, Վարդան Այգեկցի), ստեղծվեցին հայրենները և ժողովրդական խաղիկները: Մատենագիրներից առավել հայտնի են Կիրակոս Գանձակեցին և Ստեփանոս Օրբելյանը: Տաղերգուները բազմաթիվ են, առավել հայտնիներից են Ֆրիկը, Հովհաննես Երզնկացին, Կոստանդին Երզնկացին, Հովհաննես Թլկուրանցին, Մկրտիչ Նաղաշը, Նաղաշ Հովնաթանը, Պաղտասար Դպիրը և Սայաթ-Նովան:

**XVIII դարի վերջերից** հայ հին և միջնադարյան գրականությանը հաջորդեց գրապատմական մի նոր շրջափուլ և կոչվեց **նոր շրջանի** հայ գրականություն: Փոխվեց գրականության լեզուն՝ միջին հայերենին և վերականգնված գրաբարին հաջորդեց աշխարհաբարը, փոխվեցին գեղարվեստական գրականության նյութն ու հերոսը: Ընդունված է նոր շրջանի հայ գրականության հիմնադիր համարել Խաչատուր Աբովյանին, ում «Վերք Հայաստանի» վեպը նոր ժամանակների ոգին արտահայտող աշխարհայացքի առաջին արտահայտությունն է: Աբովյանին հաջորդեցին և նրա գործը շարունակեցին Միքայել Նալբանդյանը, Ռափայել Պատկանյանը և շատ այլ գրողներ:

Ահա նոր շրջանից դասագրքում ընդգրկված են Աբովյանի, Նալբանդյանի և Պատկանյանի ստեղծագործությունները: Նոր շրջանի հայ գրականության մյուս ներկայացուցիչներն ընդգրկված էին 8-րդ դասարանի դասագրքում: Իսկ 7-րդ դասարանի դասագրքում զետեղված էին **նորագույն շրջանը** ներկայացնող առանձին հեղինակներ: Նոր և նորագույն շրջանների սահմանաբաժանը 1918 թվականն է, երբ վերականգնվեց հայոց պետականությունը:

Համաշխարհային գրականությունն այս դասագրքում ներկայացված է Վիլյամ Շեքսպիրի «Համլետ» ողբերգությամբ:

Ինչպես 7-րդ և 8-րդ դասարաններում, այնպես և այստեղ բացատրվում են անմիջականորեն գրական երկերի հետ կապված տեսական տարաբնույթ հարցեր:

### ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչ շրջանների է բաժանվում հայ գրականությունը:
2. Հայ գրականության ո՞ր շրջանները և ինչ հեղինակներ են ուսումնասիրվում 9-րդ դասարանում:
3. Ինչ ենթաշրջանների է բաժանվում հայ հին և միջնադարյան գրականությունը:
4. Ովքե՞ր են ապրել և ստեղծագործել՝
  - ա) V դարում,
  - բ) VI-IX դարերում,
  - գ) X-XII դարերում,
  - դ) XIII-XVIII դարերում:

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ 362-440



*Մեսրոպ Մաշտոցը բացառիկ դեմք է հայ ժողովրդի պատմության մեջ: Նա ստեղծեց հայոց գրերը, որոնք ահա 16 դարից ավելի առանց փոփոխության ծառայում են ժողովրդին: Կազմակերպելով կրթական ու թարգմանական գործ՝ նա զարգացման նոր հուն դուրս բերեց հայ ժողովրդին:*

**ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԵՎ ՀԱՅՈՑ ԳԻՐԸ:** Հայկական բարձրավանդակում հայ ժողովուրդն ապրում է հազարամյակներ շարունակ: Այդ ընթացքում նա ստեղծել է իր պետական կազմավորումներն ու արքայատոհմերը՝ Վանի թագավորությունից մինչև Երվանդյաններ, Արտաշեսյաններ, Արշակունիներ, Բագրատունիներ և Արծրունիներ:

Այդ ընթացքում հայ ժողովուրդն ստեղծել է նաև իր քաղաքակրթությունը, ինչը պահպանվել է դիցաբանության, սեպագիր արձանագրությունների, հնագույն քաղաքների, ամրոցների, տաճարների, բանահյուսության ձևով: Նորագույն պեղումներն ու հայտնագործությունները վկայում են, որ մարդը Հայկական բարձրավանդակում ապրել է անհիշելի ժամանակներից: Այս ընթացքում ձևավորվել է հայոց լեզուն՝ հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանող ինքնուրույն լեզուներից մեկը:

Հնագույն ժամանակներում ստեղծվել են տարբեր տեսակի գրանշանների՝ ժայռապատկերներ, պատկերագրեր, սեպագրեր, գաղափարագրեր և այլն:

Չորրորդ դարի վերջին հայ գրերի ստեղծումը դարձավ պետական անհրաժեշտություն: Հայ եկեղեցու դիրքի ամրապնդումն ու ինքնուրույնությունը պահանջում էին հոգևոր սպասարկումը կատարել ազգային լեզվով, մանավանդ որ այս ժամանակը զուգահեյում է հայոց պետականության թուլացման և անկման հետ:

387 թվականին Հայաստանը բաժանվեց Հռոմի և Պարսկաստանի միջև, իսկ 428-ին վերացավ հայոց թագավորությունը: Ահա պատմական այս իրավիճակում ծայրահեղ անհրաժեշտությամբ զգացվեց հայերեն գրեր և այդ գրերով ստեղծված գրականություն ունենալու պահանջը: Հայ գրեր ունենալու անհրաժեշտությամբ մտահոգված էին ինչպես Հայաստանի արքա Վռամ-շապուհ Արշակունին, այնպես և հայոց վեհափառ Սահակ Պարթևը: Այդ պատասխանատու գործը նրանք վստահում են ժամանակի ամենազարգացած մարդկանցից մեկին՝ Մեսրոպ Մաշտոցին:

**ՆԱԽԱՄԱՇՏՈՑՅԱՆ ԳԻՐ:** Գրի ծագումը տարբեր ժողովուրդներ վերագրել են աստվածներին: Հայոց գրի աստվածը Տիրն էր: Տիրը դպրության աստվածն էր, իսկ դպրություն բառն ունի հետևյալ իմաստները՝ գիր, այբուբեն, գրագիտություն, գրականություն, մատենագրություն:

Ըստ ավանդության՝ Տիրը Հայկ Նահապետի որդին է, նրա անունով է կոչվել հայոց չորրորդ ամիսը՝ Տրե: Տիր աստծու անունից է նաև հայոց մեջ տարածված Տրդատ (Տիրիդատ) անունը: Տիր աստվածը կատարել է գրողի և դպիրի դեր: V դարի հայոց պատմիչ Ագաթանգեղոսը նրան բնորոշում է «Քրմական գիտության դպիր», նա եղել է նաև երազահան: Ըստ ավանդության՝ Տիր աստծու պաշ-

տամունքի վայրը՝ մեհյանը, գտնվել է Զվարթնոց տաճարի տեղում: Քրիստոնեությունը ընդունելուց անմիջապես հետո առաջինն ավերում են Տիր աստծու տաճարը:

Գրի աստված ունեցող ժողովուրդը բնականորեն պետք է ունենար իր ինքնուրույն դպրությունը և ինքնուրույն գիրը: Ահա այս հարցում հայագետները միակարծիք չեն: Նրանց մի մասը ժխտում է նախամաշտոցյան գրի առկայությունը, որովհետև այդ գրով գրականություն չի հայտնաբերվել (Մանուկ Աբեղյան, Հրաչյա Աճառյան, Հակոբ Մանանդյան, Ստեփանոս Մալխասյան, Էդուարդ Աղայան և ուրիշներ): Իսկ նախամաշտոցյան հայ գրի գոյությունը հաստատողները հայ և հույն պատմիչների երկերից բերում են բազմաթիվ համոզիչ վկայություններ, որոնցից մեկը մաշտոցյան գրին նախորդող դանիելյան այբուբենն է, մյուսը՝ Մաշտոցի կողմից հայերեն տառերն ստեղծելուց անմիջապես հետո գրավոր հայոց լեզվի բարձր զարգացածությունը: Կան նաև այլ վկայություններ: Այդ տեսակետը պաշտպանում են Վարդան Արևելցին (13-րդ դարի հայ պատմիչ), Ղևոնդ Ալիշանը, Իսահակ Հարությունյանը, Մկրտիչ Էմինը, Նիկողայոս Մառը, Լեոն, Հովսեփ Օրբելին և ուրիշներ:

Հայոց գրերի գոյության մասին վկայություններ են թողել հույն պատմիչները: Փիլիստրատոսը (2–3-րդ դարեր) ակնարկում է հայոց տառերի մասին, Հիպոլիտոսը 234–235 թվականներին վերաբերող իրադարձությունների մեջ դպրություն ունեցող ժողովուրդների շարքում հիշատակում է նաև հայերին:

Ըստ Խորենացու՝ հայոց արքա Վռամշապուհը տեղյակ էր դանիելյան հայոց այբուբենի գոյության մասին: Արքայի հրամանով այդ այբուբենը ներկայացնում են Սահակ Պարթևին և Մեսրոպ Մաշտոցին: Այդ տառերով Մաշտոցը գրաճանաչություն է սովորեցնում իր աշակերտներին և համոզվում, որ դրանք չեն կարող «վանկ առ վանկ ճիշտ արտահայտել հայերեն բառերի հնչյունները»:

Կորյունը դանիելյան այբուբենի մասին գրում է, որ այդ գրերը «ուրիշ դպրություններից թաղված և հարություն առած հանդիպեցին»: Որո՞նք էին ուրիշ դպրությունները. ամենայն հավանականությամբ՝ հունարենն ու ասորերենը, որոնք քրիստոնեության գաղափարներով հույն և ասորի քարոզիչների ուղեկցությամբ մտան Հայաստան և հին աստվածների հետ մեկտեղ ոչնչացրեցին մեհյաններում պահվող հայոց գիրն ու գրականությունը, հողին հավասարեցրեցին ամբողջ հայ հեթանոսական մշակույթը:

Այս պայմաններում հունարենի և ասորերենի ներգործությամբ դանիելյան գրերը շարքից դուրս են գալիս, չօգտագործվելով մոռացվում են՝ «թաղվում»: Ահա հայոց գրեր ստեղծելու ժամանակ դանիելյան այբուբենը հիշվում է, հարություն առնում, որով փորձում են մանուկներ կրթել և հիմնավորել գրավոր հայերենը:

Հայոց հին այբուբենի գոյության մասին պատմում է նաև Ագաթանգեղոսը, ամենայն հավանականությամբ նկատի ունենալով դանիելյան կոչված գիրը, որի գրության արվեստին տիրապետել է նաև ինքը: Դպիրներն այդ գրով արձանագրել են տանջանքի ենթարկվող Գրիգոր Լուսավորիչի խոսքը և ներկայացրել Տրդատ թագավորին:

Վարդան Արևելցին գրում է, որ հին հայոց գրի գոյությունը հաստատվում է նրանով, որ հայ հեթանոս թագավորների անուններով գտնվել են հայատառ դրոշմ ունեցող դրամներ: Համանման մի վկայություն թողել է նաև հայագետ Ղուկաս Ինճիճյանը:

Քրիստոնեություն ընդունելուց հարյուր տարի անց, երբ համեմատաբար հանդարտվել էր հեթանոսների և քրիստոնյաների բախումը և քրիստոնեությունը դարձել էր ազգային գաղափարախոսության նախադրյալ, երբ Հայաստանը կանգնած էր պետական ինքնուրույնությունը կորցնելու ակնհայտ վտանգի առջև, ահա կարիք զգացվեց ազգային գրի ու գրականության:

Բայց հին այբուբենը (դանիելյան գիրը) արդեն հնացել էր, խզվել էր կապը և անհրաժեշտ էր կանգնել հինը նորոգել, կանգ ստեղծել նորը: Պատահական չէ, որ ըստ մատենագիրների, երբ դանիելյան այբուբենը հասնում է Սահակ Պարթևին և Մեսրոպ Մաշտոցին, նրանք ուրախանում են: Փորձ է արվում վերականգնելու անցյալի խզված կապը, բայց ապարդյուն, ուստի պետք էր մտածել նոր գիր ստեղծելու մասին:

Այս ամենով հանդերձ նախամաշտոցյան գրի գոյության մասին է խոսում նաև հետևյալ իրողությունը: Հայտնի է, որ անմիջապես մաշտոցյան այբուբենից հետո բարձր թռիչքի հասավ հայ մատենագրությունը, ինչի հիմքը գրավոր հայերենն էր: Բարձր թռիչքի համար V դարը կոչվեց Ոսկեդար: Եթե մինչև մաշտոցյան այբուբենը մենք չունենայինք մշակված հայոց լեզու, ոչ միայն որպես բանավոր հաղորդակցության միջոց, այլև գրավոր խոսք, ապա դժվար թե անմիջապես մաշտոցյան այբուբենից հետո գրավոր հայերենը հասներ այդպիսի կատարելության: Այդպես է, քանի որ անմիջական անցումով կամ կտրուկ արագությամբ հազիվ թե բանավոր հայերենը վերածվեր այնպիսի գրավոր խոսքի, որով **«Աստվածաշունչ»** թարգմանվեր և այն հետագայում համարվեր *«թարգմանությունների թագուհի»*, որով գրվեին փիլիսոփայական, ճարտասանական, պատմագիտական, քերականագիտական աշխատություններ, հորինվեին հոգևոր բանաստեղծություններ:

Ճիշտ է, այդ լեզվով ստեղծվել և բանավոր փոխանցվել էին բանահյուսական հարուստ գանձեր, հնարավոր է նաև «Աստվածաշունչ» մատյանի առանձին հատվածների թարգմանություններ, որոնք դարձյալ փոխանցվել են բանավոր հաղորդմամբ, բայց առանց կանոնակարգված գրավոր լեզվի դա ըստ ամենայնի հնարավոր չէր, ինչը վերստին վկայում է նախամաշտոցյան հայոց այբուբենի գոյության մասին:

Բացառված չէ, որ օգտագործված լինեն նաև ուրիշ ժողովուրդների տառեր հայերեն գրելու համար (արամեական կամ հունական այբուբեններ):

Նախամաշտոցյան այբուբենի գոյությունը չընդունող Հրաչյա Աճառյանը Մեսրոպ Մաշտոցին անվարան հռչակում է *«հայ մատենագրության հայրն ու հիմնադիրը»*:

Նախամաշտոցյան գիրն ու գրականությունը ժխտողների հիմնական փաստարկը հետևյալն է՝ եթե եղել է հայոց գիր, ինչո՞ւ այդ գրով ստեղծված որևէ պատահիկ մեզ չի հասել, քանի որ դժվար թե քրիստոնեությունն իսպառ ոչնչացրած լիներ հեթանոս հայերի մատենագրությունը: Եթե այդպիսի մի շատ փոքր պատահիկ անգամ պահպանված լիներ, ուրեմն չէր լինի նաև այս տարակարծությունը:

**ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԸ ԵՎ ՀԱՅ ԳՐԵՐԻ ԳՅՈՒՏԸ:** Մաշտոցի կյանքի ու գործունեության մասին գրել է նրա աշակերտ Կորյունը: Գրքի վերնագիրն է **«Վարք Մաշտոցի»**: Վարքը սուրբերի կենսագրությունն է, ինչը նշանակում է,

որ Մաշտոցը սրբացվել է: Մաշտոցի մասին գրել են նաև 5-րդ դարի մատենագիրներ Մովսես Խորենացին և Ղազար Փարպեցին: Հայոց գրերին ու Մաշտոցին անդրադարձել են նաև հետագա շրջանի մատենագիրները: Ընդհանուր առմամբ հիշվում է 33 սկզբնաղբյուր, որոնք ընդգրկում են 5-17-րդ դարերը:

Մեսրոպ Մաշտոցը ծնվել է 362 թվականին Տարոն գավառի Հացեկաց գյուղում: Գյուղի անունը հիշվում է նաև Հացիկ, Հացյաց ձևերով: Նրա հոր անունը Վարդան էր, Կորյունը նրան կոչում է երանելի Վարդան: Ենթադրվում է, որ Մաշտոցը ծագումով եղել է ազնվական:

Մեսրոպ Մաշտոցը կրթությունն ստացել է նախ Տարոնում, ապա Անտիոքում և վերջապես Էջմիածնում՝ Ներսես Մեծ վեհափառի մոտ: Տիրապետել է հունարենին, ասորերենին և պարսկերենին: Վաղարշապատ մայրաքաղաքում ծառայության է մտել հայոց Արշակունի թագավորների պալատում: Եղել է դիվանատան քարտուղար, զինվորական աստիճանավոր: «Նա տեղյակ ու հմուտ էր աշխարհական կարգերին, իր զինվորական արվեստով սիրելի էր դարձել իր զորականներին», – գրում է Կորյունը:

Մաշտոցը խորանում է քրիստոնեական հավատի մեջ, ուսումնասիրում է «Աստվածաշունչ»-ը:

394-395 թվականներին Մաշտոցն ապրել է ճգնավորի կյանքով. մեծ գործից առաջ նա հոգեպես մաքրագործվել է: Իր շուրջ համախմբված աշակերտների հետ Գողթնում և Սյունիքում զբաղվել է քարոզչությամբ: Այս կապակցությամբ Խորենացին գրում է. *«Երբ երանելի Մեսրոպն ուսուցանում էր, ոչ փոքր նեղություն էր կրում, որովհետև ինքն էր թե՛ կարդացողը և թե՛ թարգմանողը: Ուստի նա միտք դրեց հայոց լեզվի համար տառեր ստեղծել և, աշխատանքին անձնատուր լինելով, զանազան փորձերով չարչարվում էր»:*

Այս հարցով Մաշտոցը դիմում է Սահակ Պարթևին: Նրանք միասին հղանում են հայ ժողովրդի համար այբուբեն ստեղծելու գաղափարը: Այդ կապակցությամբ Վաղարշապատում ժողով են գումարում, որին մասնակցում են հայոց եպիսկոպոսները: Բոլորը միաբերան ողջունում են հայոց այբուբեն ունենալու պահանջը: Ժողովի նպատակների մասին նրանք պատմում են հայոց Վռամշապուհ արքային:

Արքան տեղյակ էր Դանիել անունով ասորի եպիսկոպոսի մոտ պահվող հայոց այբուբենի մասին: Ըստ Կորյունի՝ դանիելյան այբուբենը Միջագետքից Հայաստան է բերվել Վռամշապուհի թագավորության հինգերորդ տարում, այսինքն՝ 393-394 թվականներին: Այդ այբուբենով Մաշտոցը սովորեցնում է աշակերտներին, կազմակերպում է կրթության գործը: Սակայն ուսուցման ընթացքում պարզվում է, որ դանիելյան այբուբենը թերի է և հայոց լեզվի վանկային կապերն ամբողջությամբ չի արտահայտում: Ահա այս պայմաններում, գրերի հարցը վերջնականապես լուծելու նպատակով, Մաշտոցը մի խումբ աշակերտների հետ մեկնում է Միջագետք, հանդիպում Դանիել եպիսկոպոսին և, նախկինից ավելի բան չգտնելով, անցնում Ասորիք, լինում Եդեսիա, Սամոսատ և Ամիդ քաղաքներում, հանդիպում ժամանակի գիտուն մարդկանց:

Եդեսիայում նա ստեղծում է հայոց այբուբենը: Ըստ Կորյունի՝ Մաշտոցին *«Աստուց իսկապես պարզակեց գրեր ստեղծելու բախտը, և նա իր սուրբ աջով ծնունդ տվեց հայոց տառերին»:* Դարձյալ ըստ Կորյունի՝ Մաշտոցը հայոց

այբուբենն ստեղծել է մահից 35 տարի առաջ, այսինքն՝ 405 թվականին: Գրերն ստեղծելուց հետո նա դրանք «նշանակեց, անվանեց ու դասավորեց»։ Նշանակեց՝ գրեց-գծագրեց, տառանշանի վերածեց, անվանեց՝ անուն դրեց՝ Այբ, Բեն, Գիմ ..., դասավորեց՝ որոշեց տառերի շարային հերթականությունը:

Ըստ Խորենացու՝ Սամոսատում հանդիպելով գիտուն այրերից մեկին և նրանից էլ որևէ օգտակար բան չստանալով, Մաշտոցն «ապավինում է աղոթքի»։ Նա հայոց տառերը տեսնում է հոգու աչքերով, տեսիլքի մեջ. «Եվ աղոթքից վեր կենալով՝ ստեղծեց մեր նշանագրերը»։ Այսինքն, ըստ Խորենացու՝ հայոց գրերը Մաշտոցն ստեղծել է ոչ թե Եդեսիայում, այլ Սամոսատում:

Տառերն ստեղծելուց անմիջապես հետո աշակերտների հետ Մաշտոցն սկսում է թարգմանել «Աստվածաշունչ»-ը: Նախ թարգմանում է Սողոմոնի առակները. ծնվում է հայերեն առաջին նախադասությունը. «Ճանաչել զիմաստություն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ...»:

Մաշտոցյան այբուբենով գրված այս առաջին նախադասությունը փորագրված է Երևանի Մատենադարանի որմերին՝ Մաշտոցի արձանի թիկնապատին: Իսկ Դավիթ թագավորի որդի Սողոմոն Իմաստունի առակների այդ հատվածի ամբողջական թարգմանությունը հետևյալն է. «Ճանաչել իմաստությունն ու խրատը, իմանալ հանճարի խոսքերը, ընկալել խոսքի բարդ դարձվածքները, հասկանալ ճշմարիտ արդարությունը և ուղղել իրավունքը՝ պարզամիտներին խորագիտություն և երիտասարդներին միտք ու հանճար տալու համար, որպեսզի, դրանք լսելով, իմաստունն ավելի իմաստնանա, իսկ հանճարեղը առաջնորդություն ստանա, թափանցի առակների և խորին ասույթների մեջ, իմաստունների ճառերի և նրանց այլաբանությունների մեջ»:

Մայրաքաղաք Վաղարշապատի մատույցներում Մաշտոցին դիմավորում են հայոց արքան, վեհափառը, նախարարներ և եպիսկոպոսներ: Այդ օրը մեծ տոն էր հայոց երկրում: Գիրը դառնում է գրավոր հիշողություն և նոր կյանք հաղորդում հայ ժողովրդին: Մեսրոպ Մաշտոցի Վաղարշապատ մտնելու տեսարանը Կորյունը նմանեցնում է Սինա լեռից Մովսես մարգարեի վայրէջքին, ով բերում էր Աստծու շնորհած տասնաբանյա պատվիրանները: Այսինքն՝ Մաշտոցը դիտվում է որպես հայոց երթի առաջնորդ:

Այնուհետև Մաշտոցն սկսում է կրթական գործը, զարկ տալիս թարգմանական աշխատանքին և գրչությանը: Մաշտոցի աշակերտներից էին Կորյունը, Մովսես Խորենացին, Եղիշեն, Դավիթ Անհաղթը, Ղազար Փարպեցին և շատ ուրիշներ: Հայոց լեզվով Մաշտոցը նաև քարոզչություն է անում ժողովրդի մեջ՝ դուրս մղելով օտար և անհասկանալի լեզուները:

Ըստ Կորյունի՝ Մաշտոցը տառեր է հորինել նաև վրացերենի (414 թ.) և աղվաներենի համար (420 թ.): Նա նաև նպաստում է այդ երկրներում քրիստոնեության ամրապնդմանն ու կրթական գործի զարգացմանը:

420 թ. Սահակ Պարթևի նամակներով Մաշտոցը մեկնում է Բյուզանդիա, հանդիպում Թեոդոս ինքնակալին և թույլտվություն ստանում Բյուզանդիայի գերիշխանության ներքո գտնվող հայկական տարածքներում ևս կազմակերպելու երեխաների հայեցի կրթության գործը:

Բյուզանդական ինքնակալի կողմից Մաշտոցն արժանանում է մեծարանքների՝ նրան կարգում են եկեղեցու առաջին վարդապետների շարքը, որտեղ

մեծահռչակ Հովհան Ոսկեբերանն էր, նրան շնորհվում են անդուլ տքնողի, քարոզիչի և ուսուցչապետի տիտղոսներ:

Մաշտոցի այս առաքելությունը նպատակ ուներ գրով, կրթությամբ և քարոզչությամբ պահպանելու հայության այն հատվածը, որ Հայաստանի 387 թվականի բաժանումից հետո հայտնվել էր Բյուզանդիայի գերիշխանության ներքո:

Մաշտոցն այսպիսով դառնում է տարածաշրջանի ամենանշանավոր կրթական և քրիստոնեական գործիչը, ով արժանի փառքի է հասնում ոչ միայն Հայաստանում, այլև Բյուզանդիայում, Աղվանքում, Վրաստանում: Սա հիրավի կրթական և լուսավորական վիթխարի գործունեություն է, որ նշանակում է՝ Մաշտոցի պատմական դերը շատ ավելին է, քան սոսկ հայոց գրերի ստեղծումն է, ինչն իր հերթին ազգային մեծ հեղաշրջման սկիզբ ու նախադրյալ էր:

Ըստ պատմիչ Մովսես Կաղանկատվացու՝ Մաշտոցը ուխտ է գնացել նաև Երուսաղեմ՝ Քրիստոսի գերեզմանին: Վերադարձին իր հետ բերել է ոսկուց և արծաթից հյուսված մի խաչ՝ մեջը տեղադրված Քրիստոսի խաչից մի մաս:

Նա շրջագայում է ամբողջ Հայաստանում, ամենուր տարածում է լուսավորություն և ամրապնդում քրիստոնեությունը: Դրա համար նրան նաև ասում են Երկրորդ Լուսավորիչ: Սահակ Պարթևի մահից հետո մինչև իր մահը Մեսրոպ Մաշտոցն ստանձնում է նաև Էջմիածնի հայրապետական աթոռի տեղապահությունը:

Իր կյանքի հետագա օրերը նա անց է կացնում ճգնափոխությամբ ու աղոթքներով, թարգմանություններով ու քարոզներով:

Մեսրոպ Մաշտոցը վախճանվել է 440 թվականի փետրվարի 17-ին, Սահակ Պարթևի մահից վեց ամիս հետո: Վիճում են՝ ուր թաղել նրան՝ իր ծննդավայր Տարոնում, Գողթնում, ուր ճգնել և առաջին անգամ ուսուցչություն է արել, մայրաքաղաք և աթոռանիստ Վաղարշապատում՝ սուրբերի կողքին: Այս վեճերի մեջ հաղթում է քաջ հազարապետ Վահան Ամատունին, ում առաջարկով Մաշտոցի մարմինն ամփոփում են Օշականում: Երեք տարի անց սրբատաշ քարից եկեղեցի է կառուցվում, ուր և փոխադրում են նրա աճյունը:

Հայոց գրերի ստեղծումը հայ ժողովրդի կյանքում ունեցավ պատմական շատ մեծ նշանակություն:

Մաշտոցյան գրերից հետո ծաղկեց ամբողջ հայ մշակույթը, կրթական գործը, մատենագրությունը, նոր թափ ստացավ հոգևոր գործը: Գրերի գյուտով ամրապնդվեց հայ ժողովրդի ինքնագիտակցությունը: Եկեղեցու դիրքի ամրապնդումը նպաստեց հայապահպանմանը և հայագիտության զարգացմանը: Ձևավորվում են առանձին գիտաճյուղեր՝ պատմագրությունը, քերականագիտությունը, վարքագրությունը, իմաստասիրությունը, աստվածաբանությունը: Թարգմանություններն ուղեկցվում են նաև ինքնուրույն գրականության ստեղծմամբ՝ գրվում են շարականներ, ապաշխարանքի երգեր, քարոզներ, ճառեր:

**ՀԱՅՈՑ ԱՅՔՈՒԲԵՆԻ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ:** Մաշտոցյան տառերը դասավորությամբ ու թվաքանակով իրենց մեջ թաքցնում են յուրահատուկ քրիստոնեական խորհուրդ: Նախ տառերի թիվը 36 է, որի մեջ 3-ը Սուրբ Երրորդությունն է, իսկ 6-ը՝ աշխարհի արարչագործության օրերի թիվը, դարձյալ սուրբ թիվ: 3-ի և 6-ի գումարը 9 է՝ քրիստոնեության թվային համակարգում դարձյալ սրբազան խորհրդանշան: 36-ը նաև 33+3 է, ինչի մեջ թե՛ Քրիստոսի կյանքի տարիների թիվն է, թե՛ Սուրբ Երրորդությունը:

Հայոց այբուբենը Ա-ից սկսած, եռանկյունաձև հերթականությամբ դասավորելու դեպքում, ստեղծվում է այսպիսի պատկեր.

Ա  
 Բ Գ  
 Դ Ե Զ  
 Է Ը Թ Ժ  
 Ի Լ Խ Ծ Կ  
 Հ Ձ Ղ Ճ Մ Յ  
 Ն Շ Ո Չ Պ Ջ Ռ  
 Ս Վ Տ Ր Ց ՌԻ Փ Ք

Անկյունների (գագաթների) տառերն այս հավասարակողմ եռանկյան մեջ ունեն իրենց խորհուրդը: Ըստ այդմ Ա-ն՝ Արարիչ Աստված է, Ս-ն՝ Սուրբ Հոգի, Ք-ն՝ Քրիստոս: Ա գլխատառից մինչև Ս-ն յոթ տառ է, Ս-ից՝ Ք և Ք-ից Ա դարձյալ յոթ տառ է: Նշված տառերն առանձնացնելուց հետո յուրաքանչյուր կողմում մնում է վեց տառ: Իսկ վեցը, քրիստոնեական հավատալիքի համաձայն, աշխարհաստեղծման օրերի թիվն է: Աստված աշխարհն ստեղծեց վեց օրում, իսկ յոթերորդ օրը հանգստացավ ու սրբագործեց այն:

Թվաքանակով հայոց այբուբենը հավասար է 36-ի, որ նաև նշանակում է 3x12: Երեքը՝ դարձյալ նույն խորհրդանիշն է՝ Աստված, Սուրբ Հոգի և Քրիստոս, իսկ 12-ը առաքյալների թիվն է: Հայոց տառերը հայոց ոգու եռաշար առաքյալներն են: Պատահական ոչինչ չկա և չէր կարող լինել, պետք է միայն թափանցել Մաշտոցի աղոթքի մեջ տրված այս սրբազան գաղտնիքի խորքերը: Այս դեպքում պատկերը կլինի այսպիսին.

Ա Բ Գ Դ Ե Զ Է Ը Թ Ժ Ի Լ  
 Խ Ծ Կ Հ Ձ Ղ Ճ Մ Յ Ն Շ Ո  
 Չ Պ Ջ Ռ Ս Վ Տ Ր Ց ՌԻ Փ Ք

Ավելանում է ակնհայտ մի իրողություն՝ առաջին սյունակը մեջտեղից կարդացվում է ԽԱԶ:

Թվային արժեքով ևս հայոց տառերը պահպանում են սուրբ թվերի կարգը՝ խորհրդանշական չորս սյունակներում տեղ տալով ինը տառի, իսկ ինը 3x3-ն է, 3+3+3, նաև 6+3, 3+6:

Ա - 1	Ժ - 10	Ճ - 100	Ռ - 1000
Բ - 2	Ի - 20	Մ - 200	Ս - 2000
Գ - 3	Լ - 30	Յ - 300	Վ - 3000
Դ - 4	Խ - 40	Ն - 400	Տ - 4000
Ե - 5	Ծ - 50	Շ - 500	Ր - 5000
Զ - 6	Կ - 60	Ո - 600	Ց - 6000
Է - 7	Հ - 70	Չ - 700	Ի - 7000
Ը - 8	Ձ - 80	Պ - 800	Փ - 8000
Թ - 9	Ղ - 90	Ջ - 900	Ք - 9000

«Ես եմ Ալֆան ու Օմեգան»,– ասում է Քրիստոս, որ հունական այբուբենի առաջին ու վերջին տառերով նշանակում է՝ ես եմ սկիզբն ու վերջը: Նույնը նաև հայոց այբուբենում Այբից Քե, այսինքն՝ Արարիչ Աստծուց մինչև Քրիստոս:

Պատահական չէ, որ Գ-ն՝ որպես Գրիգոր Լուսավորիչի անվան սկզբնա-

տառ, երրորդն է (երեք թվի խորհուրդը), Է տառը, որպես էություն՝ Աստված յոթերորդն է (յոթ թվի խորհուրդը), Զ տառը՝ որպես լույսի բոց (ճրագի պատրույգ, վառվող մոմ), շարքում իններորդն է, թվային արժեքով՝ ինը հարյուր: Յ և Ն տառերը գտնվում են կողք կողքի՝ խորհրդանշելով Յիսուս Նազովրեցի, իսկ թվային գումարով հավասար են 700-ի (Յ=300+Ն=400):

Հայոց տառերի ձևի (գծագրության) մեջ առկա է հավերժության նշանի խորհուրդը, ինչը գործնականում հիմնավորվում է:

Հայոց տառերի մեջ կան շատ այլ չբացահայտված գաղտնախորհուրդառեղծվածներ: Դրանց մեջ տրոփում է Աստծու կենդանի, ապրող շունչը, որ տեսիլքի մեջ Մաշտոցին մղել է արարչագործության:

Հայոց տառերը սրբացվել են և ամբողջ միջնադարում պաշտվել, Դավթակ Քերթողից, Ներսես Շնորհալույց սկսած՝ գրվել որպես ծայրակապ ու շղթայակապ բանաստեղծություն: Նոր ժամանակներում՝ Օջականի մուտքի մոտ և Արա սարի լանջին հայոց գրերը դարձել են հուշակոթող ու հուշարձան, իսկ Էջմիածնի գանձարանում՝ ոսկեդրվագ և ադամանդակուռ ձուլվածք:

**ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ՇԱՐԱԿԱՆՆԵՐԸ:** Շարականը հոգևոր երգ է, օրիներգություն, որ կատարվում է կրոնական տոների և ժամերգությունների ժամանակ: Շարական բառը ստուգաբանվում է շար ականց, այսինքն՝ թանկարժեք քարերի (ակնեղենների) շարք:

Շարականների առաջին ստեղծողներից մեկը նաև Մեսրոպ Մաշտոցն էր: Շարականներն ունեին իրենց մեղեդին և կատարվում էին երգվելով: Դրանց ասում են նաև ապաշխարանքի երգեր, որովհետև բովանդակությունն ապաշխարանքն էր, զղջումի խոսքը, հոգու փրկության աղոթքը: Ահա Մեսրոպ Մաշտոցի շարականներից երկուսը՝ գրաբար և աշխարհաբար փոխադրությամբ.

\*\*\*

Ընդ առաւօտս կանխեցից  
Յանդիման լինել Քեզ՝  
Թագավոր իմ եւ Աստուած իմ:

Ընդ առաւօտս լուիցես  
Ձայնի իմում, Տէր,  
Թագաւոր իմ եւ Աստուած իմ:

Ես գքեզ աղաչեմ, Տէր,  
Նայեայ յաղօթս իմ,  
Թագաւոր իմ եւ Աստուած իմ:

\*

Առավոտները կանխեցի,  
Որ աչքիդ առաջ լինեմ միշտ,  
Իմ թագավոր և իմ Աստված:

Առավոտների հետ լտում ես Դու  
Իմ ձայնը, Տէր,  
Իմ թագավոր և իմ Աստված:

Այդ ես Քեզ եմ աղաչում, Տեր,  
Նայիր դու իմ աղոթքներին,  
Իմ թագավոր և իմ Աստված:

\*\*\*

Վտանգիմ ի բազմութենէ մեղաց իմոց,  
Աստուած խաղաղութեան, օգնեայ զիս:

Ալեկոծիմ հողմով անօրէնութեան իմոյ,  
Թագաւոր խաղաղութեան, օգնեայ զիս:

Ի խորս մեղաց ծովու տարութերեալ ծփիմ,  
Նաւապետ բարի, փրկեայ զիս:

\*

Վտանգվում եմ բազմությունից իմ մեղքերի,  
Խաղաղության Աստված, օգնիր ինձ:

Ալեկոծվում եմ հողմով իմ անօրենութեան,  
Խաղաղության թագավոր, օգնիր ինձ:

Ծով մեղքերի խորքում տարութեր ծփում եմ,  
Բարի նավապետ, փրկիր ինձ:

Մաշտոցը գրել է նաև թղթեր (սամակներ)՝ հասցեագրված իր ժամանակի հոգևոր գործիչներին: Կարևոր են նաև նրա ճառերն ու քարոզները: Այդ նյութերը մեզ են հասել «**Հաճախապատում լուսավոր ճառեր**» խորագրով: Այդ ճառերը թեև Ագաթանգեղոսը վերագրել է Գրիգոր Լուսավորիչին, բայց հայագետների հետազոտությունները հանգեցրել են այն համոզման, որ դրանց հեղինակը Մեսրոպ Մաշտոցն է:

Ճառերի և քարոզների այս հավաքածուն բաղկացած է 23 գլխից: Հաճախապատում են կոչվում հաճախակի, պարբերաբար օգտագործվելու համար: Դրանք վերնագրված են՝ «Սուրբ Երրորդության իմաստությունը», «Հավատք», «Աստվածապաշտություն՝ ընդդեմ մոլորյալների», «Ճշմարտության հաստատումը և կենարար խրատների առաջնորդությունն ու առաքինության փառաբանությունը», «Առաքինի վարքի մասին» և այլն: Հաճախապատում ճառերը գրված են պարզ, մատչելի լեզվով: Քրիստոնեական բարոյախոսության պարզ դասեր են՝ հասցեագրված հավատով հոգեպես ապաքինվել փորձող մարդկանց:

### ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչ դեր ունի գիրը ժողովուրդների կյանքում: Գրի ինչ տեսակներ են օգտագործել մեր նախնիները:
2. Ինչ գիտեք նախամաշտոցյան գրի և դանիելյան այբուբենի մասին:
3. Ո՞վ է Մեսրոպ Մաշտոցը: Ինչպե՞ս կրթութագրեք նրա տեղն ու դերը հայ ժողովրդի պատմության մեջ:

4. Երբ և որտեղ է ծնվել Մեսրոպ Մաշտոցը:
5. Համառոտ նկարագրե՞ք նրա գործունեությունը մինչև գրերի գյուտը:
6. Ինչ պայմաններում Մաշտոցը մտածեց գրեր ստեղծելու անհրաժեշտության մասին:
7. Երբ և որտեղ Մաշտոցն ստեղծեց հայոց գրերը (ըստ Կորյունի և ըստ Խորենացու):
8. Ինչպե՞ս եք գնահատում հայոց գրերի պատմական նշանակությունը:
9. Ներկայացրե՞ք հայոց այբուբենի թվային գաղտնիքները:
10. Ուրիշ ո՞ր ժողովուրդների համար է Մաշտոցն ստեղծել այբուբեն:
11. Ինչո՞ւ են Մեսրոպ Մաշտոցին բնորոշում որպես Երկրորդ Լուսավորիչ:
12. Ներկայացրե՞ք Մեսրոպ Մաշտոցի գրական գործունեությունը՝ որպես թարգմանիչ և բանաստեղծ:
13. Երբ է մահացել և որտեղ է թաղվել Մեսրոպ Մաշտոցը:

## ԿՈՐՅՈՒՆ

### Մոտ 380 – մոտ 450

Կորյուն վարդապետը 5-րդ դարի հայ մատենագրության, կրթական և մշակութային գործի գլխավոր դեմքերից է: Նա Մեսրոպ Մաշտոցի առաջին աշակերտներից է: Ուսանել է Վաղարշապատում, այնուհետև ուսումը շարունակել է Կոստանդնուպոլսում, իսկ Ասորիքում հմտացել հունարենի և ասորերենի մեջ: Հայաստան է վերադարձել 431 թվականին և զբաղվել գրական, թարգմանական գործունեությամբ: Նա սերտ կապերի մեջ էր Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի հետ:



«Վարք Մաշտոցի» գիրքը գրել է հայոց վեհափառ հայրապետի տեղապահ Հովսեփ Վայոցձորեցու (Հողոցմեցի) պատվերով՝ 443–451 թվականների միջակայքում: Այդ գիրքը հայ մատենագրության առաջին երկերից է, այսինքն՝ հայերեն գրված առաջին ինքնուրույն գրքերից մեկը: Կորյունի գիրքը մեզ է հասել 17-րդ դարի ընդօրինակությամբ:

Պատմությանը հայտնի է նաև **Փոքր Կորյունը**: Սա գիրք է՝ վերստեղծված ըստ Կորյունի «Վարք Մաշտոցի» աշխատության և խմբագրված Խորենացու «Հայոց պատմության» համապատասխան հատվածներով: Փոքր Կորյունը 6–8-րդ դարերի հորինվածք է:

## ՀԱՐՅԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ո՞վ է Կորյունը, ինչո՞վ է հայտնի:
2. Ո՞ւմ պատվերով է Կորյունը գրել «Վարք Մաշտոցի» գիրքը:
3. Ի՞նչ է նշանակում վարք, և ինչո՞ւ է Կորյունն իր գիրքը վերնագրել «Վարք Մաշտոցի»:
4. Ի՞նչ է Փոքր Կորյունը:

### ԿՈՐՅՈՒՆ

#### ՎԱՐՔ ՄԱՇՏՈՑԻ (Հատվածներ)

Մաշտոց էր անունն այն մարդու, որ հիշեցինք մեր խոսքի սկզբում, ում համար և մենք հոգ ենք տարել պատմելու: Նա Տարոն գավառից էր, Հացեկաց գյուղից, Վարդան անունով երանելի մարդու որդին: Մանկական հասակում նա կրթվել էր հելլենական դպրությանը, եկել, հասել էր Մեծ Հայաստանի Արշակունի թագավորների դուռը, կացել էր արքունի դիվանատանը՝ դառնալով արքայի տված հրամանի ծառայողը՝ ում Առավանի՝ մեր Հայոց աշխարհի հազարապետության ժամանակ: Նա տեղյակ ու հմուտ էր աշխարհական կարգերին, իր զինվորական արվեստով սիրելի էր դարձել իր զորականներին: Եվ այնտեղ հենց ջանալով ուշադրությամբ հետևում էր աստվածային գրքերի ընթերցանությանը, որով և շուտով լուսավորվեց ու թափանցեց, խորամուխ եղավ աստվածային հրամանների հանգամանքների մեջ, և ամեն պատրաստությամբ զարդարելով իրեն՝ իշխանների ծառայությունն էր կատարում:

Եվ շատ օրեր հենց այնտեղ նույն խնդրով զբաղվելուց հետո վեր կացավ, այնուհետև եկավ, հասավ Մեծ Հայաստանի սուրբ կաթողիկոսի մոտ, ում անունը Սահակ էր, ում էլ պատրաստ ու հավան գտավ նույն հոգսի վերաբերմամբ: Եվ նրանք միասին սիրով մեկտեղ գալով՝ առավոտ կանուխ մեծ աղոթքներով Աստծուն էին դիմում, որպեսզի բոլոր մարդկանց հասնի քրիստոսաբեր փրկությունը: Եվ այդ անում էին շատ օրեր:

Ապա ամենաբարի Աստծուց պարգևվեց նրանց՝ երանելի միաբանյալների աշխարհահոգ խորհուրդ ժողովել և հայ ազգի համար նշանագրեր գտնել:

Շատ հարցուփորձով ու որոնումով պարապեցին և շատ նեղություններ կրեցին. հետո և իրենց նախապես ուզած բանի մասին իմաց տվին Հայոց թագավորին, ում անունը Վռամշապուհ էր:

Այն ժամանակ արքան պատմեց նրանց մի մարդու՝ Դանիել անունով մի ազնվական ասորի եպիսկոպոսի մասին, որ հանկարծ գտել է հայերեն լեզվի ալփաբետներ - նշանագրեր: Եվ երբ արքան պատմեց նրանց Դանիելի գտածի մասին, արքային հոժարեցրին, որ հոգ տանի այն պիտույքի համար: Նա էլ Վահրիճ անունով մեկին հրովարտակներով ուղարկեց Հաբել անունով մի երեց մարդու մոտ, ով ասորի եպիսկոպոս Դանիելի մերձավորն էր:

Իսկ Հաբելն այդ որ լսեց, շտապով հասավ Դանիելի մոտ և նախ ինքը Դանիելից տեղեկացավ նշանագրերին և հետո նրանից առավ, ուղարկեց արքային՝ Հայոց երկիր: Նրա թագավորության հինգերորդ տարում հասցրեց նրան նշանագրերը: Իսկ արքան՝ սուրբ Սահակի և Մաշտոցի հետ միասին՝

նշանագրերն ստանալով Հաբեյից՝ ուրախացան:

Ապա երանելի հոգաբարձուներն իրենց հանկարծազուտ ուզածն առնելով՝ էլի խնդրեցին արքայից մատաղահաս մանուկներ, որոնց միջոցով կարողանային նշանագրերը գործադրել: Եվ երբ նրանցից շատերը սովորեցին, ապա թագավորը հրամայեց ամեն տեղ նույն նշանագրերով կրթել, որով և երանելին հասավ նույնիսկ վարդապետական գեղեցիկ աստիճանին և մոտ երկու տարի իր ուսուցչությունն արեց նույն նշանագրերով:

Իսկ երբ հասկացան, որ այդ նշանագրերը բավական չեն հայերեն լեզվի սիղոբաները՝ կապերն ամբողջությամբ արտահայտելու համար, մանավանդ որ նշանագրերն էլ իսկապես ուրիշ դպրություններից թաղված և հարություն առած հանդիպեցին, ապա դարձյալ երկրորդ անգամ նույն հոգսի մեջ ընկան և մի քանի ժամանակ մի ելք էին փնտրում:

Դրա համար երանելի Մաշտոցը արքայի հրամանով և սուրբ Սահակի համաձայնությամբ մի խումբ մանուկներ առավ հետը և, սուրբ համբույրով միմյանց հրաժեշտ տալուց հետո, գնաց Հայոց արքա Վռամշապուհի հինգերորդ տարում. և գնաց հասավ Արամի կողմերը, ասորոց երկու քաղաքները, որոնց առաջինը Եղեսիա է կոչվում և երկրորդի անունն է Ամիդ: Ներկայացավ սուրբ եպիսկոպոսներին, որոնց առաջինի անունը Բաբիլաս էր և երկրորդինը՝ Ակակիոս:

Նրանք կղերականների և քաղաքների իշխանների հետ միասին հանդիպեցին և շատ մեծարանքներ ցույց տալով հասնողներին՝ ընդունեցին, հոգ տանելով նրանց համար քրիստոնյաների կարգի համաձայն:

Իսկ աշակերտասեր ուսուցիչն իր հետ տարածներին երկու խմբի բաժանելով՝ ոմանց ասորական դպրության կարգեց Եղեսիա քաղաքում և ոմանց հունական դպրության կարգելով՝ այնտեղից ուղարկեց Սամուսատական քաղաքը:

Եվ նա իր ընկերների հետ սկսեց սովորական աղոթքներն ու տքնությունները և արտասովորից պաղատանքները, խստամբերությունները, աշխարհահեծ հոգսերը, հիշելով մարգարեի ասածը, թե՛ «Երբ որ հեծե՞ծես, այն ժամանակ կապրես»:

Եվ այսպես նա շատ նեղություններ քաշեց իր ազգին մի բարի օգնություն գտնելու համար: Ամեն բան շնորհող Աստծուց իսկապես պարգևվեց նրան այդ բախտը. նա իր սուրբ աջով հայրաբար ծնեց նոր և սքանչելի ծնունդներ՝ հայերեն լեզվի նշանագրեր: Եվ այնտեղ շուտով նշանակեց, անվանեց ու դասավորեց, հորինեց սիղոբաներով – կապերով:



## ԲԱՌԱՐԱՆ

**հեղինական** – հունական

**դպրություն** – գիր, այբուբեն, գրագիտություն, գրականություն, մատենագրություն

**դիվանատուն** – գրասենյակ, պետական փաստաթղթեր պահելու տեղ, պահոց

**հազարապետ** – հազար զինվորից բաղկացած զորամասի պետ, այդպես՝ տասնապետ, հարյուրապետ. հազարապետ նաև նշանակում է արքունիքի գործակալ, տնտեսական գործերի կառավարիչ

**քրիստոսաբեր** – Քրիստոսի ուսմունքից եկող

**միաբանյալներ** – միևնույն ուխտի շուրջ միավորվածներ

**աշխարհահոգ** – աշխարհի հոգսը քաշող  
**ալփաբետ** – այբուբեն  
**նշանագիր** – այբուբեն, գրային նշան  
**եպիսկոպոս** – կրոնական հոգևոր աստիճան և կոչում, որ հաջորդում է վարդապետի աստիճանին ու կոչմանը, թեմի հոգևոր առաջնորդ  
**հոժարեցնել** – համաձայնեցնել, հոժար դարձնել  
**պիտույք** – առարկա, կարիք, պահանջ, պետք  
**հրովարտակ** – թագավորի գրավոր դիմումը ժողովրդին՝ կարևոր նշանակություն ունեցող իրադարձության առիթով  
**հանկարծագյուտ** – հանկարծ, անսպասելի, անմիջապես գտնված  
**սիդոբա** – վանկ  
**Արամի կողմերը** – Ասորիք  
**կղերական** – հոգևորական  
**պաղատանք** – խնդրանք, աղաչանք, թախանձանք  
**խստամբերություն** – ճգնություն, խիստ  
**աշխարհահեծ** – ընդհանուր հեծեծանքներ  
**հեծեծել** – վշտից հառաչել, ողբալ, սգալ

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ՄԱՍԻՆ

Երբ երանելի Մեսրոպն ուսուցանում էր, ոչ փոքր նեղություն էր կրում, որովհետև ինքն էր թե կարդացողը և թե թարգմանողը, և եթե մեկ ուրիշն էր կարդում, երբ ինքն այնտեղ չէր լինում, ժողովրդին անհասկանալի էր մնում՝ թարգմանիչ չլինելու պատճառով: Ուստի նա միտքը դրեց մի հնար գտնել, հայոց լեզվի համար տառեր ստեղծել և, աշխատանքի անձնատուր լինելով, զանազան փորձերով չարչարվում էր:

Մեսրոպը ապավինում է աղոթքի: Եվ տեսնում է ո՛չ երազ քնի մեջ, ո՛չ տեսիլք արթնության մեջ, այլ սրտի գործարանում նրա հոգու աչքերին երևում է աջ ձեռք՝ քարի վրա գրելիս, այնպես որ քարը գծերի հետքը պահում էր, ինչպես ձյունի վրա: Եվ ոչ միայն երևաց, այլ բոլոր գրերի հանգամանքները նրա մտքում հավաքվեցին... Եվ աղոթքից վեր կենալով՝ ստեղծեց մեր նշանագրերը...

Եկավ Մեսրոպը, բերելով մեր լեզվի նշանագրերը: Նա Վռամշապուհի և մեծն Սահակի հրամանով ընտրությամբ երեխաներ ժողովեց, ուշիմ, առողջակազմ, լավ ձայնով և երկար շնչառությամբ: Բոլոր գավառներում դպրոցներ հիմնեց և սովորեցրեց:

Մեսրոպը վրաց աշխարհ գնալով՝ նրանց համար էլ, իրեն տրված երկնային շնորհով, ստեղծում է նշանագրեր (այբուբեն)...

Մեսրոպը իջնում է Աղվանք: Նա նշանագրեր ստեղծեց այն կոկորդաձայն, կոշտ, խժական կոպիտ լեզվի համար...

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ  
 «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»

Երանելի Մաշտոցն անվերջ հոգալով տրտմում էր՝ տեսնելով Հայաստան աշխարհիս մանկանց ջանքերը, երբ նրանք անպատմելի ծախսերով հեռագնաց ճանապարհներով և բազմաժամանակյա դեգերումներով իրենց օրերն էին մաշում ասորական գիտության դպրոցներում: Եկեղեցական արարողություն-

ները և Սուրբ գրքի ընթերցանությունները Հայաստանի ժողովրդի վանքերում և եկեղեցիներում կատարվում էին ասորերեն, որից էլ ոչինչ չէին հասկանում կամ օգտվում այսպիսի մեծ երկրի բնակիչները: Եվ երանելի այր Մաշտոցն այս մասին երկար ժամանակ խորհում էր ու լալիս իր ներսում, չէ՞ որ կային հայերեն լեզվի նշանագրեր, որոնցով հնարավոր էր սեփական ձայնով և ոչ թե մուրացածո լեզվով եկեղեցիներում շահել ամբողջ բազմության սրտերը:

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ  
«ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Համառոտ պատմե՞ք Կորյունից բերված հատվածների բովանդակությունը:
2. Գրերի ստեղծման հարցով ո՞ւմ է դիմում Մաշտոցը:
3. Գրերի ստեղծման ժամանակ ո՞վ էր Հայաստանի արքան:
4. Ո՞վ էր Դանիել եպիսկոպոսը, և ի՞նչ եք հասկանում դանիելյան նշանագրեր (այբուբեն) ասելով:
5. Մեկնաբանե՞ք Կորյունի հետևյալ արտահայտությունը. «...Նշանագրերն էլ (դանիելյան այբուբենը) իսկապես ուրիշ դպրություններից թաղված և հարություն առած հանդիպեցին»:
6. Ինչպե՞ս է Կորյունը նկարագրում հայոց այբուբենի ստեղծումը Մաշտոցի կողմից:
7. Ինչպե՞ս է Մովսես Խորենացին ներկայացնում Մաշտոցի կողմից հայոց այբուբենի ստեղծումը:
8. Ի՞նչ է գրել Ղազար Փարպեցին Մեսրոպ Մաշտոցի մասին:
9. Մեսրոպ Մաշտոցին և գրերի գյուտին են նվիրված Ատոմ Յարճանյանի (Սիամանթո) «Սուրբ Մեսրոպ» և Պարույր Սևակի «Եվ այր մի՛ Մաշտոց անուն» պոեմները: Գտե՞ք և կարդացե՞ք դրանք, տեսրի մեջ դ՛ուրս գրեք Մաշտոցին բնութագրող արտահայտություններ և հատվածներ:

## ՀԱՅՈՑ ԳՐԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: ԳՐԵՐԻ ԳՅՈՒՏԻՆ

**ՀԱՋՈՐԴՈՂ ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄԸ:** Գրերի պատմական նշանակությունը նույնն է, ինչ Հայկ Նահապետի կողմից Հայոց հայրենիքն ստեղծելը: Հայ ժողովրդի պատմության դժվարին ճանապարհին մաշտոցյան այբուբենը նաև փոխարինեց հայրենիքին, որովհետև հայոց գիրը սերնդեսերունդ պահպանեց հայրենիքի հիշողությունը և հայրենիք վերստեղծեց:

Գրերի գյուտից անմիջապես հետո ծայր առավ **թարգմանական գործը:** Մաշտոցի վեց տասնյակի հասնող աշակերտները դարձան թարգմանիչներ, հոգևոր գործիչներ, պատմիչներ ու վարքագիրներ: «Աստվածաշունչ» մատյանի թարգմանությամբ հիմք դրվեց ոչ միայն մատենագրության, այլև հայ հոգևոր բանաստեղծության: Այդ գրքի թարգմանությամբ սկզբնավորվեց հայոց քրիստոնեական քաղաքակրթությունը:

«Աստվածաշունչ»-ին հաջորդում է հոգևոր, կրոնական գրականության թարգմանությունը: Նյութերն ի մի են բերվում «**Վարք սրբոց**» («Սուրբերի վարքը»), «**Ճառընտիր**» («Ընտիր ճառեր»), «**Հայսմավուրք**» ժողովածուներում: Հայսմավուրքը գիրք է, ինչը տոնացույցի հաջորդականությամբ ընդգրկում է

սուրբերի և վկաների վարքերն ու վկայաբանությունները: [Հայսմավուրք (յայսմավուրք)=հ(յ)+ այսմ+ավուրք, այսինքն՝ այս օրերի]:

Թարգմանվում են նաև գիտական, ուսումնական գրքեր, որոնցից հատկապես հիշարժան է Դիոնիսիոս Թրակացու «**Քերականության արվեստ**» ձեռնարկը, որով ոչ միայն լեզու էին ուսուցանում, այլև ճարտասանություն ու գեղագիտություն: Գրվեցին Թրակացու աշխատության բազմաթիվ մեկնություններ: Թարգմանվում են նաև փիլիսոփայական, պատմագիտական երկեր, առակներ ու իմաստախոսություններ: Թարգմանական գրականության մնայուն հուշարձաններից են «**Պիտոյից**» գիրքը (օգտագործվել է որպես ճարտասանության ձեռնարկ), Տիմոթեոս Կուզի «Հակաճառություն...» դավանաբանական աշխատությունը:

Թարգմանություններին զուգընթաց ստեղծվում է նաև **սրբախոսական ինքնուրույն գրականություն**: Դրանք հիմնականում վարքեր, վկայաբանություններ և ներբողյաններ են: Կորյունի «**Վարք Մաշտոցի**» գրքից բացի, ստեղծվել են Գրիգոր Լուսավորիչի (Ագաթանգեղոս), Սահակ Պարթևի (Խոսրով, չի պահպանվել), Հռիփսիմյան կույսերի, Վարդան Մամիկոնյանի բարեպաշտ դուստր Շուշանիկի, Սանդուխտ կույսի, Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների վարքագրությունները:

Ստեղծվում է **հայ հոգևոր բանաստեղծությունը**՝ Մեսրոպ Մաշտոց, Սահակ Պարթև, Մովսես Խորենացի, Հովհան Մանդակունի: Եզնիկ Կողբացին, Դավիթ Անհաղթը հանդես են գալիս **իմաստասիրական** գրքերով: Եզնիկ Կողբացին իր «**Եղծ աղանդոց**» գրքում հերքում է հեթանոսական, պարսկական, հունական աղանդները և գիրքն ամփոփում քրիստոնեական հավատն ամուր պահող խրատներով:

Դավիթ Անհաղթը, ով հրապարակային փիլիսոփայական վեճերում հաղթանակների հասնելու շնորհիվ է ստացել Անհաղթ պատվանունը, ըստ վկայությունների՝ Խորենացու քրոջ որդին էր, մեծ համբավի է հասել ինչպես Հայաստանում, այնպես և Բյուզանդիայում: Նրա գրչին են պատկանում «**Փիլիսոփայության սահմանումները**» երկը, ինչպես նաև հույն փիլիսոփաներ Պորփյուրի և Արիստոտելի առանձին աշխատությունների մեկնությունները:

Մեսրոպ Մաշտոցի բաց արած ճանապարհով հետագա տարիներին ընթացավ ամբողջ հայ գրականությունը, իսկ Մաշտոցի կերպարը մեծարվեց բազմաթիվ գրական ստեղծագործությունների մեջ:

Պատմագրությունը, որ այս տարիներին զուգակցված էր գրականությանը և բանահյուսությանը, ասպարեզ մղեց այնպիսի երևելի անունների, ինչպիսիք են Ագաթանգեղոսը, Փավստոս Բուզանդը, Մովսես Խորենացին, Եղիշեն, Ղազար Փարպեցին և ուրիշներ:

**ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԸ** (IV-V դարեր) համաշխարհային ճանաչման արժանացած պատմիչ է: Նրանից մեզ է հասել «**Պատմություն**» վերնագրով գիրքը: Ագաթանգեղոս անունը նշանակում է բարի հրեշտակ կամ ավետաբեր: «Պատմության» առաջաբանում Ագաթանգեղոսն իր մասին տեղեկացնում է, որ ինքը ծնվել է Հռոմ մեծ քաղաքում, տիրապետում է լատիներենին, հունարենին, անտեղյակ չէ նաև նշանագրերի (հայոց նախամաշտոցյան այբուբենի) արվեստին, եկել է Արշակունիների արքունիք և Տրդատ Մեծ արքայի հրամանով կոչված է «գրի

առնել ժամանակների դեպքերը»: Նա իրեն համարում է ականատես և ականջալուր պատմիչ, ով ամեն ինչ շարադրել է հունական ճարտասանության օրինակով: Խորենացին Ագաթանգեղոսին հիշում է «Տրդատի հաջող քարտուղար» արտահայտությամբ: Ըստ այս տվյալների՝ Ագաթանգեղոսն ապրել է 3–4-րդ դարերում և իր «Պատմություն»-ը գրել է հունարեն: Հայագիտությունն այն կարծիքի է, որ Ագաթանգեղոսն ազգությամբ հայ է, իր գիրքը գրել է հայերեն և ապրել ու ստեղծագործել է 4–5-րդ դարերում: Իրեն Տրդատ Մեծի ու Գրիգոր Լուսավորիչի ժամանակակիցն է համարում խոսքին ավելի վստահություն ներշնչելու նպատակով: Եվ քանի որ այն ժամանակ դեռևս մաշտոցյան այբուբենը չկար, ուստի իրեն համարում է հունագիր: Ագաթանգեղոսի գիրքը թարգմանվել է հունարեն, արաբերեն, ասորերեն, լատիներեն, վրացերեն, ղպտերեն, սլավոներեն, իտալերեն, ֆրանսերեն, եթովպերեն, շվեդերեն, անգլերեն...

Գիրքը բաղկացած է առաջաբանից և չորս գլուխներից, որոնց մեջ Ագաթանգեղոսը պատմում է Հայաստանում քրիստոնեության մուտքի մասին:

Պարսկաստանում Սասանի որդի Արտաշիրը սպանում է պարթևների թագավոր Արտավան Արշակունուն և գրավում իշխանությունը: Հայոց Խոսրով թագավորն իր Արշակունի ազգակցի պատիվը փրկելու համար արշավում է Տիգրն, ավերում պարսից երկիրը և լուծում «Արտավանի արյան վրեժը»: Այս արշավանքները տևում են տասնմեկ տարի:

Պարթև Անակը եղբոր հետ տեղափոխվում է Հայաստան, կեղծավորությամբ շահում Խոսրով արքայի վստահությունը և հերթական արշավանքից առաջ սպանում նրան: Հայոց զորքը հետապնդում է փախուստի դիմած չարագործներին և սպանում նրանց: Փրկվում են միայն Անակի երկու որդիները, որոնցից մեկին փախցնում են Պարսկաստան, մյուսին՝ Հունաստան: Պարսից թագավորն իր հերթին արշավում է Հայաստան և կոտորում թագավորական տոհմը: Փրկվում է միայն մանուկ արքայազն Տրդատը, ում տանում են Հռոմ:

Անակի որդի Գրիգորը մեծանում է Կեսարիայում և դաստիարակվում քրիստոնեական հավատքով: Տրդատը դաստիարակվում է որպես զինվորական և աչքի ընկնում հերոսությամբ: Հերթական հաղթանակից հետո Հռոմում Տրդատն օժվում է հայոց արքա, վերադառնում հայրենիք և վերականգնում խախտված թագավորությունը: Գրիգորը, դայակներից տեղեկանալով իր հոր կատարած գործերի մասին և թաքցնելով իր քրիստոնեական հավատը, մտնում է Տրդատի մոտ ծառայության:

Մի շրջագայության ժամանակ Եկեղյաց գավառի Երիզա ամրոցում Տրդատը Գրիգորին հրամայում է պսակներ և ծառերի մատղաշ ճյուղեր դնել Անահիտ աստվածուհու բազիլին: Գրիգորն այստեղ բացահայտում է իր քրիստոնյա լինելը և հրաժարվում կատարել թագավորի հրամանը, քանի որ Անահիտը հեթանոս աստվածուհի էր:

Արքայի հրամանով Գրիգորին տանջանքների են ենթարկում, նա դիմաճանում է հավատի շնորհիվ: Տրդատն իմանում է, որ Գրիգորն Անակի որդին է և կարգադրում է նրան բանտարկել Արտաշատ քաղաքի բերդի ներքին զնդանում՝ Խոր Վիրապում: Այստեղ Գրիգորը մնում է 13–15 տարի: Նրան, երազում ստացած հրահանգի համաձայն, խնամում է մի այրի՝ որպես սնունդ օրական տալով մեկ նկանակ (կլոր հաց, բլիթ):

Այդ ժամանակ Բյուզանդիայի Դիոկղետիանոս ինքնակալը ցանկանում է ամուսնանալ: Նրան ներկայացնում են թագավորական տոհմից սերված սքանչելատեսիլ Հռիփսիմեին: Ինքնակալը հավանում է Հռիփսիմեին և հարսանիքի պատրաստություն տեսնում: Բայց Հռիփսիմեն շատ այլ կույսերի հետ մեկտեղ Գայանեի գլխավորությամբ փախչում է Հայաստան, հասնում Վաղարշապատ:

Դիոկղետիանոսը դիմում է հայոց Տրդատ թագավորին՝ գտնել կույսերին, մահապատժի ենթարկել, իսկ Հռիփսիմեին կամ ետ ուղարկել, կամ պահել: Կույսերին գտնում են: Հայոց Տրդատ թագավորը տարվում է Հռիփսիմեի գեղեցկությամբ և ցանկանում ամուսնանալ: Քրիստոնյա կույսը մերժում է հեթանոս արքայի առաջարկը և փախչում պալատից: Նրան բռնում և մահապատժի են ենթարկում, սպանում են յոթանասուն կույսերից երեսուներկուսին, նաև Գայանեին իր խմբի հետ: Նահատակ կույսերի թիվը հասնում է երեսունյոթի:

Այս դեպքից վեց օր հետո հայոց արքան դուրս է գալիս որսորդության: Բայց պիղծ դևը նրան խփում, կառքից վայր է գցում, և նա վայրի խոզի կերպարանք է ընդունում: Դիվահար են լինում նաև քաղաքի բոլոր մարդիկ և արքայի մերձավորները: Կույսերին սպանելու համար նրանք ենթարկվում են Աստծու պատժին:

Թագավորի քրոջը՝ Խոսրովիդուխտին, Աստծուց տեսիլ է երևում, ըստ որի՝ արքային և մյուս պատուհասավածներին կարող է փրկել Խոր Վիրապում փակված Գրիգորը: Գրիգորին բերում են, և նրա աղոթքներով դիվահարները մարդկային կերպարանք են ընդունում: Նրանք հավատում են Աստծու զորությանը և դարձի գալիս՝ դառնում քրիստոնյաներ: Նահատակության տեղում ամփոփում են նաև կույսերի մարմինները, նրանց ընկած տեղում կառուցում վկայարաններ, իսկ հետագայում դրանք փոխարինվում են եկեղեցիներով:

Այսքանից հետո Տրդատ արքան քրիստոնեությունը Հայաստանում հռչակում է ոչ միայն ազատ, այլև պետական կրոն: Դա 301 թվականն էր: Հաջորդում է հեթանոս աստվածների՝ Տիրի, Անահիտի, Արամազդի, Նանեի, Վահագնի, Աստղիկի, Վանատուրի և մյուսների տաճարների կործանումը: Դրանց տեղերում կառուցվում են քրիստոնեական սրբատեղիներ: Ավարտվում է հեթանոս քուրմերի ժամանակը, որոնց որդիներին Գրիգորը քրիստոնյա է դարձնում և լծում նոր կրոնի քարոզչությանը: Գրիգորը, այդուհետև սուրբ Գրիգոր Լուսավորիչը, Կեսարիայում ձեռնադրվում է «քահանայապետ», «մեծ արքեպիսկոպոս», որ նույն վեհափառ հայրապետն է: Հայաստան վերադառնալիս Եփրատի վտակ Արածանի գետում նա մկրտում է հայոց արքային և ամբողջ ժողովրդին: Կյանքի վերջում Գրիգոր Լուսավորիչը ճգնում է Դարանաղյաց գավառի Մանյա Այրք կոչված վայրում: Վայրը այդպես էր կոչվում Հռիփսիմյանց խմբից կույս Մանեի անունով, ով ճգնել ու վախճանվել էր այդ քարայրում: Գրիգոր Լուսավորիչին հաջորդում է նրա որդի Արիստակեսը և այդուհետև հովվապետական աթոռը փոխանցվում է ժառանգաբար մինչև Սահակ Պարթև, քանզի նա որդի չունեի:

Ազգաթանգեղոսը վավերական պատումով կերտել է Տրդատ արքայի, նրա կնոջ՝ Աշխեն թագուհու, Գրիգոր Լուսավորիչի և շատ շատերի պատմական կերպարները:

**ԵՂԻՇԵՆ** (410/415–470/475) հայտնի է «**Վարդանի և հայոց պատերազմի մասին**» («Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին») պատմագիտա-

կան աշխատությամբ, ինչն ունի նաև գեղարվեստական մեծ արժեք: Գիրքը գրված է ծաղկուն, գրավիչ լեզվով, պատկերավոր նկարագրություններով և իմաստալից ասույթներով:

Գիրքը Եղիշեն գրել է Մամիկոնյան Դավիթ երեցի պատվերով՝ որպես Մամիկոնյան տոհմի փառաբանություն: Ըստ գրքում թողած իր վկայությունների՝ ինքը՝ պատմիչը, մասնակցել է Ավարայրի ճակատամարտին. «*Ես ինքս նույն տեղում պատահեցի և տեսա ու լսեցի...*»: Ավարայրի ճակատամարտը տեղի է ունեցել 451 թ., իսկ Եղիշեն իր պատմությունն ավարտել է 464-ին: Ավարայրի ճակատամարտի մասին գրել է նաև Ղազար Փարպեցին, նա ապրել է ավելի ուշ և օգտագործել դեպքերին ականատես Եղիշեի պատմությունը:

Եղիշեն ուրվագծում է Ավարայրի ճակատամարտին նախորդող պատմաքաղաքական իրադրությունը: Հայաստանն արդեն բաժանվել էր երկու մասի: Պարսկական մասում դադարել էր Արշակունիների իշխանությունը: Երկիրը կառավարում էր պարսից արքայի նշանակած մարզպանը: Այդ ժամանակ մարզպան էր Վասակ Սյունին (իշխել է 438-451 թթ.):

Պարսից Հազկերտ II-ի օրոք քրիստոնեության դեմ հալածանքները սաստկանում են: Նախ ուժեղանում և անօրինական չափերի է հասնում հարկահանությունը: Հաջորդում է մեծ վեզիր, հազարապետ Միհրներսեհի նամակը, որով նա կոչ է անում հրաժարվել քրիստոնեությունից և վերադառնալ կրակապաշտության: 449 թ. Արտաշատ մայրաքաղաքում հավաքվում են հայոց նախարարներն ու եպիսկոպոսները և պատասխան նամակով մերժում հավատափոխության առաջարկը. «*Այս հավատից մեզ ոչ ոք չի կարող խախտել*»: Ի պատասխան մերժումի՝ հայոց նախարարներին, այդ թվում նաև մարզպետ Վասակ Սյունին և սպարապետ Վարդան Մամիկոնյանին, կանչում են պարսից արքայի մոտ: Պարսից արքան սպառնալիքով ստիպում է հավատափոխ լինել: Գաղտնի քրիստոնյա պարսից պալատականներից մեկի խորհուրդով հայերը կեղծ ուրացություն են ընդունում՝ ներքուստ հավատարիմ մնալով քրիստոնեական ուխտին:

Հազկերտ II-ը հայ նախարարներին հայրենիք է ճանապարհում այրուձիով և յոթ հարյուր մոզերով, ովքեր պիտի գային և ուժով հավատափոխ անեին հայ ժողովրդին: Սահմանային Անգղ գյուղաքաղաքում, երբ նրանք փորձում են քանդել եկեղեցու դռները, Ղևոնդ երեցը, անտեղյակ նախարարների մտադրությանը, յուրայինների հետ հարձակվում է մոզերի վրա և ջարդում ու փախցնում նրանց: Բացահայտվում է նաև նախարարների նվիրվածությունը քրիստոնեությանը:

Հազկերտ II-ը, ով այդ ժամանակ պատերազմների մեջ էր, կարգադրում է ժամանակավորապես թուլացնել քրիստոնյաների դեմ ուղղված ճնշումը: Վասակը, ըստ Եղիշեի, սկսում է երկդիմի քաղաքականություն վարել, իսկ Վարդանն ամուր էր կանգնած իր հավատին: Հայերը կարողանում են հաղթել երկիր ներխուժած պարսիկներին և կազմակերպել ինքնապաշտպանությունը: Այս ընթացքում մարզպետ Վասակ Սյունին, ըստ Եղիշեի, դավաճանում է հայոց ուխտին, իսկ Վարդանն առաջնորդում է հայրենասիրական շարժումը: Նրանց շուրջ ձևավորվում են երկու ուժեր՝ վարդանանք (Վարդանի կողմնակիցները) և վասակյանք (Վասակի կողմնակիցները): Հասունանում է ապստամբության պահը, և Ավարայրի ճակատամարտից առաջ Վարդանն իմաստուն և սրտառու խոսքով դիմում է զորքին. «*Արդ, աղաչում եմ ձեզ, ո՛վ իմ քաջ նիզակակիցներ...*

*Չերկնչենք ու չվախենանք հեթանոսների բազմությունից և ո՛չ էլ մահացու մարդու ահռելի սրի դեմ թիկունքներս դարձնենք... իսկ եթե հասել է ժամանակը՝ մեր կյանքը սուրբ մահով ավարտելու այս պատերազմում, ընդունենք ուրախ սրտով, միայն թե արհուրոյան ու քաջության մեջ վախկոտություն չխառնենք...»:*

Վարդանի ճառը և Ավարայրի ճակատամարտի նկարագրությունը Եղիշեի գրքի բարձրակետն է:

451 թ. մայիսի 26-ին Ավարայրի դաշտում, Տղմուտ գետի ափին սկսվում է ճակատամարտը: Ճակատագրական պահը Եղիշեն այսպես է ներկայացնում. «*Իսկ կորովի Վարդանն իր քաջ նիզակակիցներով մեծ կոտորած արեց այնտեղ, ուր և հենց ինքն էլ արժանի եղավ ստանալու նահատակության պսակը*»: Հայոց զորքը կռվում է ջերմեռանդ, ոչ ոք չի մտածում կյանքը փրկելու մասին, այլ միայն՝ հաղթանակի: Հայերից զոհվում է 1036, պարսիկներից՝ 3544 զինվոր:

Իսկ Վասակը, ըստ Եղիշեի, իր զորքերի հետ մեկտեղ թաքնված կանգնել էր պարսից բանակում:

Եղիշեն շարունակում է՝ ոչ թե մի կողմը հաղթեց և մյուս կողմը պարտվեց, այլ քաջերը քաջերի դեմ ելան, և երկու կողմն էլ պարտվեց: Հայերը նահանջում են իրենց լեռները և շարունակում կռվել: Հազկերտ II-ը թուլացնում է ճնշումը քրիստոնյաների հանդեպ, իսկ Վասակ Սյունիին մահապատժի է ենթարկում:

Քրիստոնեական հավատի համար նահատակության ուղին են ընտրում սուրբ քահանաները: Եղիշեն փառաբանում է նաև հայ փափկասուն կանանց, ովքեր, կորցնելով նախարար ամուսիններին, հպարտությամբ տարան իրենց չարչարանքի խաչը: Նրանք մոռանում են իրենց կանացի տկարությունը և առաքինի հերոսներ դառնում հոգևոր պատերազմի մեջ:

Եղիշեն ստեղծել է պատմական կերպարներ՝ Վարդան, Վասակ, Հազկերտ II: Տեսանելի է նաև իր կերպարը:

Վարդան Մամիկոնյանը Ներսես Մեծ վեհափառ հայրապետի ծոռն էր, Սահակ Պարթևի թոռը՝ աղջկա որդին: Այսինքն՝ նա ոչ միայն սպարապետական տոհմի ներկայացուցիչ էր, այլև հոգևոր: Վարդան Մամիկոնյանն իր ժամանակի ռազմաքաղաքական խոշոր գործիչ էր, նրա համար հավատը հայրենիք էր, հայրենիքը՝ հավատ:

Եղիշեն՝ որպես Մամիկոնյան տոհմի պատմիչ, մշտապես բացասական երանգով է ներկայացնում Վասակ Սյունիին, ով Սյունյաց իշխանն էր ու Հայաստանի մարզպանը: Հույս կար վերականգնելու հայոց թագավորությունը, ինչն իր հերթին նախադրյալ կարող էր հանդիսանալ Վասակի և Վարդանի հակամարտության: Ավելացնենք նաև՝ ի տարբերություն Եղիշեի կերտած հրեշավոր Վասակի, նույն Վասակի մասին շատ դրական է արտահայտվել Կորյունը՝ նրան համարելով «*քաջ, խելացի, հանճարեղ և կանխագետ, աստվածային իմաստության շնորհքով օժտված մի մարդ*», ով նպաստել է քրիստոնեության տարածմանը և հնազանդ եղել պատվիրանների:

Եղիշեն հրաշալի տիրապետում է գեղարվեստական խոսքի վարպետությանը: Առատ են պատկերավորության միջոցներն ու իմաստախոսությունները. «*Չհասկացված մահը մահ է, հասկացված մահը՝ անմահություն*», «*Կույրը զրկվում է արեգակի ճառագայթներից, իսկ տգիտությունը զրկվում է կատարյալ կյանքից: Լավ է աչքով կույր լինել, քան մտքով կույր: Ինչպես որ հոգին մեծ է մարմնից,*

այնպես էլ մտքի տեսողությունը մեծ է մարմնի տեսողությունից»: «Ամբողջ մարմնի կենդանությունը հոգին է, իսկ մարմինն ու հոգին կառավարողը միտքն է»:

Եղիշեի մատյանը ոգևորել է շատ գրողների՝ սկզբնաղբյուր դառնալով գեղարվեստական տարատեսակ երկերի համար. այդ թվում՝ Ներսես Շնորհալուն (**«Նորահրաշ պասկավոր...»**), Ղևոնդ Ալիշանին (**«Պլպուլն Ավարայրի»**), Ռաֆայել Պատկանյանին (**«Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը»**), Հովհաննես Հովհաննիսյանին (**«Վարդանանց օրը»**, **«Տղմուտ»**, **«Սյունյաց իշխան»**), Դեբենիկ Դեմիրճյանին (**«Վասակ»**, **«Վարդանանք»**) և ուրիշների:

**ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ** (440/443–6–րդ դարի սկիզբ) Ոսկեդարի վերջին պատմիչն է: Նա ունի ստուգապատում պատմիչի համարում, հայտնի է **«Հայոց պատմություն»** և **«Թուղթ Վահան Մամիկոնյանին: Ստախոս արեղաների մեղադրությունը»** գործերով:

Ծնվել է Արագածոտն գավառի Փարպի գյուղում: Մանկության տարիներից մտերիմ է եղել ապագա մարզպան Վահան Մամիկոնյանի հետ: Նրանք միասին են մեծացել ու կրթվել: Նրանց ուսուցիչը Մաշտոցի աշակերտ և հայտնի հոգևորական Ադան Արծրունին էր: Փարպեցին կրթությունը շարունակել է Բյուզանդիայում: 484–486 թթ. ճգնել է Սյունիքի քարայրներում **«բոլոր կրոնավորներից ամենից հռչակավոր մի մարդու հետ, ում անունն էր Մովսես»**: Ենթադրվում է, որ խոսքը Մովսես Խորենացու մասին է: Այնուհետև նա նշանակվել է Վաղարշապատի վանքի վանահայր: Նա բարեկարգել է վանքը և հիմնել է մատենադարան: Հրդեհը վնասում է եկեղեցու փայտակերտ մասը, ինչն էլ առիթ է հանդիսանում Փարպեցու դեմ ուղղված հալածանքների: Նա ստիպված է լինում փախչել Ամիդ: Այս ընթացքում սաստկանում են նրա դեմ ուղղված զրպարտությունները: Ահա այսքանից հետո Փարպեցին ստիպված է լինում Վահան Մամիկոնյանին հասցեագրելու հիշյալ **«Թուղթ...»**-ը, բացատրելու իրողությունները, ինչից հետո նա վերստին վստահության է արժանանում, վերադառնում է հայրենիք և նույն Վահան Մամիկոնյանի պատվերով շարադրում է **«Հայոց պատմություն»**-ը:

Փարպեցին իր գիրքը համարում է երրորդ պատմություն Ագաթանգեղոսից ու Բուզանդից հետո: Այդպես է, որովհետև Փարպեցին անմիջապես շարունակում է Բուզանդին և գրքի առաջին մասում շարադրում է Հայաստանի պատմության 387–428 թթ. իրադարձությունները: Պատմության երկրորդ մասը նվիրված է Ավարայրի ճակատամարտին, երրորդը՝ 481–484 թթ. Վահանանց պատերազմին: Փաստորեն Փարպեցու շարադրանքն ընդգրկում է շուրջ 100 տարվա պատմություն, որից ավելի կարևորը Վահանանց պատերազմն է, ինչը նաև նրա բերած նորությունն է:

Պարսկական գերությունից ազատվում են Վարդան Մամիկոնյանի եղբայր, նույնպես Ավարայրի նահատակ Հմայակ Մամիկոնյանի որդիները՝ Վահանը, Վասակը և Արտաշեսը: Նրանց կրտսեր եղբայր Վարդը դեռևս մնում է գերության մեջ:

Նորից խռովություն է ընկնում, և նորից հանուն հավատի ու հայրենիքի հայերը ելնում են պարսիկների դեմ: Աստիճանաբար հասունանում է ճակատագրական պահը: Վահան Մամիկոնյանը շատ լավ գիտակցում է, թե ինչ է

կատարվել հայոց աշխարհի հետ, ինչպես են հալածվել արժանավոր մարդիկ և նրանց փոխարինած անարժաններն անպատիվ են արել նաև երկիրը, որովհետև եղել են տիրադավ և օտարին հաճոյացող: Վահան Մամիկոնյանը պայքարի գլուխ է կանգնում արդարության ու ազգային արժանապատվության բարձր պահանջով. «Ճանաչե՛ք մարդկանց՝ լավին ու վատին և յուրաքանչյուրից պահանջե՛ք գործ, ոչ թե կատակաբանություն: Գործին նայե՛ք ըստ վաստակի հատուցելու համար և ոչ թե ըստ լեզվի խաբեության»:

Ապստամբության դրոշ պարզած հայերն իրենց մարզպան են կարգում Սահակ Բագրատունուն, սպարապետ՝ Վահան Մամիկոնյանին: Վահանի մեջ հորեղբոր՝ Ավարայրի հերոս Վարդան Մամիկոնյանի խրոխտ ոգին էր, ով իր հերթին ասում է՝ ավելի լավ է կռվով ճշտել ապրելու արժանապատվությունը, քան մշտապես արհամարհված տեսնել ազգն ու եկեղեցին: Այս ոգով էլ նա գնում է սխրանքի և քաջագործություններ կատարում: Փարպեցին հիացմունքով և խնդությամբ է նկարագրում իր հերոսի գործունեությունը, ով «առյուծի պես» ճեղքում է պարսից զորքը:

Վահանի հերոսական արշավանքը պսակվում է Նվարսակի դաշնագրով, ըստ որի՝ պարսից տերության առջև դրվում են հետևյալ պահանջները՝ հայերը պետք է շարունակեն դավանել քրիստոնեություն, մարդկանց ճիշտ ճանաչել, իրարից զանազանել տոհմիկին ու անտոհմիկին, այսինքն՝ քաջ ու օգտակար մարդկանց չխառնել անպիտանների հետ և վերջապես մարդկանց ճանաչել այնպես, ինչպես կան և ոչ թե չարախոսների ներկայացմամբ:

Այսքանից հետո Վահանը կարգվում է հայոց մարզպան, ետ ստանում Մամիկոնյանների ժառանգական կալվածքներն ու հայոց սպարապետությունը:

Ճշմարտախոս և իրատես պատմիչ լինելով՝ Փարպեցին շարադրում է գրելու արվեստի և մարդ լինելու արվեստի մի ամբողջ տեսություն: Նրա համար ամեն ինչի հիմքն ու չափանիշը ճշմարտությունն է: Ճշմարտություն գրելու մեջ, ապրելու մեջ, ստեղծելու մեջ, գնահատելու մեջ: Ի վերջո, այս ամենը վերածվում է պատմական ճշմարտության, ինչը նրա գրական ժառանգությունն է:

### ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչ եք հասկանում հայոց գրերի պատմական նշանակություն ասելով:
2. Ինչ եք հասկանում Ոսկեդար ասելով: Թվարկե՛ք Ոսկեդարի հայ մատենագրության հիմնական դեմքերին:
3. Ո՞վ է Ագաթանգեղոսը, և ինչի՞ մասին է նրա «Պատմություն»-ը:
4. Ո՞վ է Եղիշեն, և ինչի՞ մասին է նրա «Վարդանի և հայոց պատերազմի մասին» գիրքը:
5. Ո՞վ է Ղազար Փարպեցին, ի՞նչ երկեր է գրել և ինչի՞ մասին են դրանք:

## ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒՋԱՆԴ 4-5-րդ դարեր



Փավստոս Բուզանդի «Հայոց պատմություն» աշխատությունն ունի և՛ պատմագիտական, և՛ գրական-գեղարվեստական նշանակություն: Բուզանդը շատ հետաքրքրական պատմող է: Նրա գիրքը գրույցների շարք է, որ վերաբերում է պատմական դեպքերին ու դեմքերին:

Փավստոս Բուզանդի կյանքն ու ստեղծագործությունը պատված են առեղծվածներով: Այդ առեղծվածները վերաբերում են նրա ազգային պատկանելությանը, ապրած ժամանակին և գրքի գրության լեզվին:

Նրա գրքի գլուխները կոչվում են դպրություններ: Երրորդ դպրության վերջում կա այսպիսի արտահայտություն. «Փավստոս Բուզանդ մեծ ժամանակագիր-պատմագիր, որ հունաց ժամանակագիր էր»: Այսինքն՝ Բուզանդը համարվում է հույների ժամանակագիր: Ոմանք նրան նույնացնում են իր գրքում հիշատակված ազգությամբ հույն Փավստոս եպիսկոպոսին:

Փաստերն ապացուցում են, որ Բուզանդը ազգությամբ հայ է, գրել է հայերեն և ապրել է 4-5-րդ դարերում: Իրենց աշխատություններում նրան հիշատակել են Խորենացին, Փարպեցին, 6-րդ դարի հույն պատմիչ Պրոկոպիոսը:

Նրա գրքի գլուխները խորագրված են «Բուզանդարան պատմություններ»:  
Նա շարունակել է Ագաթանգեղոսին, ով իրենից առաջ գրել է Հայաստանում քրիստոնեության մուտքի, Տրդատ Մեծ արքայի և Գրիգոր Լուսավորիչի գործունեության մասին մինչև նրանց մահը: Փավստոս Բուզանդի գիրքն ընդգրկում է 319-384 թվականների 65 տարվա պատմությունը՝ Տրդատ Մեծի որդի Խոսրով Կոտակից մինչև Հայաստանի առաջին բաժանմանը հաջորդող տարիները:

Խոսրով Կոտակին հաջորդում են Արշակունի մյուս թագավորները՝ Տիրանը, Արշակ Երկրորդը, Պապը, Վարազդատը, Արշակ Երրորդը և Խոսրով Չորրորդը: Այդ ժամանակ Պարսկաստանի թագավորը Շապուհ Երկրորդ Երկարակյացն էր:

Արքաներից բացի Բուզանդը պատմում է նաև հայոց վեհափառների ու նախարարական տների մասին: Հատկապես մանրամասն է խոսում Մամիկոնյան սպարապետական տոհմի մասին:

Բուզանդի գիրքը պատմագիտական աշխատություն է՝ գեղարվեստական գրականությանը բնորոշ ազատ և անկաշկանդ շարադրանքով: Նրա ոճին բնորոշ են առասպելախառն, հրաշապատում զրույցները: Գիրքն ունի իր պատմական կերպարները և նրանց գործունեությամբ պայմանավորված դիպաշարը:

Խոսրով Կոտակը հայտնի է որպես շինարար: Նա հիմնադրել է Դվին քաղաքը: Դվինից մինչև Գառնի անտառներ է տնկել, որոնք այսօր էլ դեռ կան և հայտնի են Խոսրովի անտառ անունով:

Տիրան թագավորին հոգևոր առաջնորդ Հուսիկը նախատում է անբարեպաշտ կյանք վարելու, այսինքն՝ քրիստոնեությունից հեռանալու համար և մի տոնական օր արքային արգելում է եկեղեցի մտնել, ինչի համար, բրածեծ անելով, նրան սպանում են: Հաջորդ տողերից պարզվում է, որ ժողովուրդը քրիստոնեությունն

ընդունել է պարտադրաբար՝ նաև հարկերից խուսափելու համար:

Հետաքրքրական է Տիրանի պատմությունը. նա ուներ մի աննման նժույգ և Սյունյաց տոհմից մի դավաճան սենեկապետ՝ Փիսակ անունով:

Ահա նժույգը. «Այն ժամանակ Տիրան թագավորը մի ձի ուներ, որի վրա բոլորը զարմանում էին: Այդ ձին մուգ շագանակագույն և պուտպուտիկ էր, քաջությամբ լի, հոյակապ, բոլոր ձիերից մեծ և բարձր, տեսքով բոլորից գեղեցիկ ու սիրուն, որի նման ուրիշը չկար»:

Դեսպան գնալիս Փիսակը Ատրպատականի մարզպան Շապուհ Վարազին հայտնում է Տիրանի նժույգի մասին: Տիրոջ իրավունքով մարզպանը պահանջում է այդ հրաշքը: Տիրանի համար դժվար էր հրաժարվել իր նժույգից, այդ իսկ պատճառով համանման, բայց մեծությամբ քիչ փոքր մի ձի է գտնում և Փիսակի ձեռքով ուղարկում Շապուհ Վարազին: Փիսակը նորից է մատնում իր տիրոջը և չարախոսում նրան: Պատմիչն այս սենեկապետին համարում է տիրադավ, տիրասպան:

Շապուհ Վարազն իր հերթին պարսից Ներսես թագավորին լարում է Տիրանի դեմ: Շապուհ Վարազը՝ բարեկամ ձևանալով, բայց չարամիտ դիտավորությամբ, երեք հազար մարդով գալիս է հայոց արքային հյուր:

Տիրանը ցանկանում է նրանից գաղտնի պահել որսի տեղերը, բայց Փիսակն իր տիրոջը մատնում է երրորդ անգամ: Տիրանի կողմից խորամանկությամբ վստահություն ձեռք բերելով՝ Շապուհ Վարազը մի հարմար պահի նրան կապում և Դալարիք գյուղում շիկացած ածուխով աչքերը կուրացնում է: Դալարիք գյուղը դրանից հետո կոչվում է Ածուխ: Հայոց արքան անարգվում է, իսկ Բուզանդը նրա կերպարի մեջ մեղք է տեսնում, որովհետև նա էլ սպանել էր եկեղեցու երկու սուրբ հայրերի՝ Հուսիկին ու Դանիելին: Այսինքն՝ պատմիչի կողմից արդարացվում է արքային հասած պատիժը:

Նորից խառնակություն է ընկնում: Հայոց աշխարհում իրար են բախվում պարսից և հռոմեական զորքերը: Կուրացած արքան գերության մեջ է, երկիրը՝ անտեր: Հռոմի օգնությամբ հայերը դուրս են քշում պարսիկներին:

Մի ձիու համար պատերազմ հրահրելու պատճառն իմանալով՝ պարսից արքան մորթագերծ է անում Շապուհ Վարազին: Ազատ են արձակում կուրացած Տիրանին, մյուս գերիներին: Հայոց աշխարհի վրա թագավոր է կարգվում Տիրանի որդի Արշակ Երկրորդը:

Սկսվում է Արշակ Երկրորդի և Ներսես Մեծի գործունեության շրջանը: Երկիրը խաղաղվում է ու բարեկարգվում: Նորոգվում է հայոց թագավորությունը:

Ներսեսը կրթվել էր Կեսարիայում, զինվորական պաշտոն էր զբաղեցնում, Արշակ թագավորի սիրելի սենեկապետն էր և հիմա նշանակվում է վեհափառ հայրապետ: Շարունակվում է Գրիգոր Լուսավորիչի տոհմի գահակալությունը: Ներսեսը ձեռնադրվում է Կեսարիայում: Այդ պահին Սուրբ Հոգին աղավնու կերպարանքով իջնում է նրա գլխին: Նա բարեկարգում է եկեղեցիները և շարունակում ժողովրդին հավատով կրթել:

Հայաստանի բոլոր գավառներում նա հիմնում է դպրոցներ, ապահովություն է տալիս չքավորներին, զանազան տեղերում կառուցում է աղքատանոցներ, դարմանում հիվանդներին, մխիթարում հաշմանդամներին:

Արշակ Երկրորդը կառուցում է Արշակավան քաղաքը, ուր ապրելու են գալիս իրենց տերերից փախած մարդիկ: Դա շարժում է նախարարների և Ներսես Մեծ

վեհափառի դժգոհությունը: Վերջինիս անեծքով քաղաքը կործանվում է:

Այս հատվածում Բուզանդը շարադրում է մեկը մյուսից հետաքրքրական գրույցներ Արշակի և Նրա եղբայրների որդիներ Գնելի, Տիրիթի և Գնելի կնոջ՝ Փառանձեմի մասին, ով ամուսնու սպանվելուց հետո դառնում է Արշակ Երկրորդի կինը:

Այս շրջանում Արշակ Երկրորդի և Շապուհի հարաբերությունները դեռևս ճշգրտվում էին, բայց ամեն ինչ ընդունում է պատերազմական բնույթ: Սկսվում է հայ-պարսկական 34-ամյա պատերազմը: Պատերազմական ծանր ընդհարումներին հաջորդում են հաշտության, խաղաղության կոչերը: Դրանից հետո Արշակ Երկրորդն իր քաջարի սպարապետ Վասակ Մամիկոնյանի հետ ներկայանում է Շապուհին, ով վերջիններիս հետ վարվում է շատ նենգաբար:

Արշակ Երկրորդին հաջորդում է Նրա որդի Պապ թագավորը: Սպարապետը Մուշեղ Մամիկոնյանն էր:

Պապը ետ է նվաճում բոլոր բերդերը, որոնք գրավել էին պարսիկները: Վերականգնվում է երկրի խաղաղությունը: Մուշեղն ասպետական նկարագրի տեր սպարապետ էր և բարոյականության բարձր սկզբունքները պահպանում է նաև պատերազմների ժամանակ: Այդպես նա ետ է ուղարկում Շապուհի գերեվարված կանանցը, պատերազմի դաշտում բռնում, պատժում, բայց ազատ է արձակում թշնամի աղվանների Ուռնայր թագավորին՝ ասելով. *«Շնորհակալ եղիր, որ թագավոր մարդ ես, գլխիդ թագ ես կրում. ես թագավոր մարդու չեմ սպանի, մինչև անգամ եթե շատ նեղն էլ ընկնեմ»:*

Այս արարքների համար Պապին փորձում են տրամադրել Մուշեղի դեմ, բայց Մուշեղի ազնվությունն ու նվիրվածությունը հարթում է ամեն ինչ: Միաբանված ուժերով հայերը հաղթանակներ են տանում պարսիկների դեմ, միավորում երկրի տարածքները: Բուզանդը ոգևորված փառաբանում է Մուշեղին որպես նվիրված հայրենասեր և հավատարիմ սպարապետ: Նույն կերպ նա փառաբանում է Ներսես Մեծ վեհափառին, ով երկրում շարունակում էր հաստատել քրիստոնեական կարգ ու կանոն: Բայց Պապ թագավորի հանդեպ Բուզանդը խտրական է, որովհետև նա փորձեց սահմանափակել եկեղեցու իրավունքները: Պապի ու Ներսեսի ներհակությունը թուլացնում է երկիրը: Ներսես վեհափառի մահից հետո Պապը փորձում է վարել ինքնուրույն պետական քաղաքականություն, ինչը դուր չի գալիս Հռոմին: Պապը նաև Հռոմից պահանջում է հայոց տարածքները՝ Կեսարիան, Ուռհան և ուրիշ տասը քաղաքներ, հակառակ դեպքում սպառնում է պատերազմով գրավել: Այս ամենն առիթ է դառնում Պապի դավադիր սպանության:

Այս էր վիճակված այս վերջին ուժեղ հայոց արքային, ում հաջորդեց *«մի ոմն Վարազդատ»*՝ հռոմեական դրածո: Թույլ էին նաև Արշակ Երրորդ և Խոսրով Չորրորդ հայոց արքաները: Ահա նրանց թագավորության օրոք Հայաստանը վերջնականապես թուլացավ և 387 թվականին բաժանվեց Հռոմի ու Պարսկաստանի միջև:

Արշակ Երրորդը չի կարողանում ղեկավարել երկիրը: Նախարարների դժգոհությունը հաշվի առնելով՝ Շապուհը Հայաստանի մի մասի վրա թագավորեցնում է մանուկ Խոսրով Չորրորդին, իսկ Արշակ Երրորդը քաշվում գնում է հռոմեացիների կողմերը: Երկու թագավոր, երկու ենթակայություն, դրանով իսկ լուծվում է երկու ախոյան երկրների՝ Հռոմի և Պարսկաստանի միջև տատանվող Հայաստանի ջլատման, վերացման ծրագիրը:

«Մեր երկուսի միջև ընկած է այս հզոր ու հարուստ թագավորությունը, լավ կլիսի, որ այս միջոցով թուլացնենք ու խանգարենք այս թագավորությանը. նախ երկու մասի բաժանենք այս երկու Արշակունի թագավորներով, որոնց նշանակեցինք, հետո կաշխատենք նրանց էլ թուլացնել, աղքատացնել և մեր ծառայության ենթարկել, որպեսզի մեր միջև չկարողանան գլուխ բարձրացնել», – այսպես են պայմանավորվում Հայաստանի երկու արքայաները: Դրանից հետո պատմիչը շարունակում է. «...այնուհետև հայոց թագավորությունը բաժանվեց, ցրվեց, նվազեց, իր նախկին մեծությունից ընկավ»: Կիսված Հայաստանից թշնամիները շարունակում են խլել սահմանային շատ գավառներ...

Հայոց երկրի այս լարված ու ողբերգական պատմությունը Բուզանդը շարադրել է նույնքան լարված նկարագրություններով: Բոլոր պատմական դեմքերը կերպավորված են գեղարվեստական բարձր վարպետությամբ: Բուզանդն ստեղծում է ոչ միայն պատմական, այլև հոգեբանական կերպարներ: Իսկ առանձին դրվագներում իրական դեպքերն ստանում են գեղարվեստական այնպիսի լուծում, որ ասես մի ինքնուրույն նորավեպ կամ պատմվածք լինեն՝ Տիրանի ձիու պատմությունը, Շապուհի կողմից Արշակին փորձության ենթարկելու, բանտարկված Արշակին Դրաստամատի՝ տեսակցության գնալու, Մուշեղ Մամիկոնյանի քաջագործությունների, Պապի սպանության...

Տիրանի ձիու պատմության դրվագում Բուզանդն ստեղծել է տիրադավ ու ստոր մարդու մի այնպիսի կերպար, ինչպիսին Փիսակն է: Անունն իսկ բնութագրում է նրան՝ նրան բնորոշող մակդիրներով՝ *շնաբերան, կատաղախոս, տիրամատնիչ, աշխարհավեր, անօրեն...*

Բուզանդը հրաշալի պատմող է: Այս տեսակետից նրա ոճին շատ բնութագրական է զրույցի գրական տեսակը, ինչը շատ նպատակահարմար է կարճ դիպաշարերի համար: Զրույցից անբաժան է չափազանցությունը, ինչը վերածվում է հրաշապատումի:

Բուզանդի հրաշապատում ոճի ակունքը «Աստվածաշունչ»-ն է: Ահա, օրինակ, բարեպաշտ Դանիել եպիսկոպոսի կերպարը. «Առանց կոշիկները հանելու՝ ոտքով քայլելով անցնում էր գետերի ջրերի վրայով, և կոշիկները չէին թրջվում», ձմեռ ժամանակ «ձյունը հանկարծակի ցամաքում էր նրա առաջ, սև հողը բացվում էր»: Հեռու տեղ գնալու համար՝ «Սլանում անցնում էր փայլակի նման. կարծես թե թռչելով իսկույն այնտեղ էր լինում, ուր կամենում էր գնալ: Մեռածներին հարություն էր տալիս, հիվանդներին բժշկում և դեռ սրանցից ավելի մեծ հրաշքներ էր գործում, որ նույնիսկ գրով հնարավոր չէ նկարագրել»:

Բուզանդը վարպետ է նաև գեղարվեստական ամբողջությունը լրացնող մանրամասների մեջ. օրինակ, Հռոմի ինքնակալը պարսիկների բանակի իրադրությունը շոշափելու համար «շինականի կերպարանքով՝ իբրև կաղամբ վաճառող», թաքուն անցնում է թշնամու թիկունքը:

Բուզանդի գիրքը պատմական հերոսների մի պատկերասրահ է, իրական դեպքերի հետ միախառնված հրաշապատումի, հեքիաթի մի գրավիչ համաձուլվածք, հաջորդական դիպաշարերի մի ճույլ շղթա: Բուզանդի գիրքն սկզբնաղբյուր է ծառայել նաև մեր հետագա պատմավիպասանության համար (Բաֆֆի, Ս. Զորյան և ուրիշներ):

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ո՞վ է Փավստոս Բուզանդը և ի՞նչ է գրել:
2. Ո՞վ է Փավստոս Բուզանդին նախորդող պատմիչը, ինչի մասին է նա գրել: Բուզանդը շարունակել է նրան, թե՛ ոչ:
3. Ինչի մասին է Փավստոս Բուզանդի «Հայոց պատմություն»-ը:
4. Հայոց ո՞ր արքաների գործունեության շրջանն է պատկերված Փավստոս Բուզանդի «Հայոց պատմություն» գրքում:
5. Ինչպե՞ս է Բուզանդը ներկայացնում հայոց Տիրան թագավորին: Ինչո՞ւ նա կուրացվեց:
6. Ինչպե՞ս է Բուզանդը ներկայացնում հայոց Պապ թագավորին: Ո՞ւմ որդին էր նա: Ինչպե՞ս կգնահատեք Պապ թագավորին որպես պետական գործիչ:
7. Հայոց գահին ովքե՞ր հաջորդեցին Պապ թագավորից հետո, և պատմաքաղաքական ի՞նչ պայմաններում Հայաստանը բաժանվեց երկու մասի:
8. Հայաստանն իրար մեջ կիսելու կապակցությամբ ի՞նչ են իրար հետ պայմանավորվում երկու թշնամի պետությունները:

## ԱՐՇԱԿ ԵՎ ՇԱՊՈՒԿ

### **Շապուհ թագավորի մասին, թե ինչպե՞ս այդ ժամանակ դադարեցրեց պատերազմը Հայոց Արշակ թագավորի դեմ և նենգությամբ իր մոտ կանչեց հաշտության համար**

Ապա Պարսից Շապուհ թագավորը մեծ աղաչանքներով, ընծաներով ու հրովարտակներով Արշակ թագավորին սիրով իր մոտ կանչեց, որ այնուհետև իրար մեջ սեր և խաղաղություն ու մեծ բարեկամություն հաստատեն: Իսկ Արշակ թագավորը թեպետև ուզում էր պատերազմ տալ, բայց Հայոց աշխարհի ամբողջ զորքը այս բանին չէր համաձայնվում: Ուստի նա կամա-ակամա սիրտ արեց խոնարհությամբ հրովարտակ ուղարկել Պարսից Շապուհ թագավորին: Իր կողմից էլ նրան հաշտության ընծաներ ուղարկեց:

### **Թե ինչպե՞ս Շապուհ թագավորը կրկին Հայոց Արշակ թագավորին կանչեց, և ինչպե՞ս նա գնաց ու միանգամայն կորավ**

Սրանից հետո Պարսից Շապուհ թագավորը դարձյալ պատգամ ուղարկեց Հայոց Արշակ թագավորին և ասաց. «Եթե ես և դու իրար հետ հաշտ ենք, ապա եկ, միմյանց հետ տեսակցենք և այնուհետև իբրև հայր և որդի լինենք միմյանց, իսկ եթե չես ուզում ինձ տեսնել, ուրեմն պատերազմ ես ուզում մեր երկուսի միջև»: Արշակը նրանից խնդրեց ուխտի հավատարիմ երդում, որ, կասկածանք չունենալով, գնա: Շապուհը Պարսից թագավորության հավատարիմ երդման օրինակով բերել տվեց աղ, կնքեց վարազագիր մատանիով և ուղարկեց Արշակին, ասելով, որ եթե այդ երդումից հետո էլ չգա, ապա թող պատրաստվի պատերազմի:

Երբ Հայոց աշխարհի բոլոր մարդիկ այս տեսան ու լսեցին, ապա ստիպեցին, բռնադատեցին, շտապեցրին իրենց Արշակ թագավորին, որ վեր կենա,

գնա ներկայանա Պարսից Շապուի թագավորին: Այնուհետև Հայոց Արշակ թագավորը կամա-ակամա վեր կացավ, վերցրեց իր հետ Հայոց զորավար-սպարապետ Վասակին՝ իր դայակին, ճանապարհ ընկավ Հայոց աշխարհից Պարսից աշխարհը, Պարսից Շապուի թագավորի մոտ: Գնաց, ներկայացավ Պարսից Շապուի թագավորին: Երբ նրանց տեսան, երկուսին էլ՝ Արշակ թագավորին և Վասակ սպարապետին բռնեցին և ազատ պահում էին ազնվական թիկնապահ զորքերի մեջ: Եվ Շապուի թագավորը կանչեց Արշակ թագավորին ու խիստ նախատեց նրան: Դրանից հետո նրան դարձյալ թիկնապահների գնդին հանձնեցին, որ պահեն:

**Թե ինչպես Շապուիը վիուկներին ու քաղղեաներին հարցնելով՝ փորձում է Արշակի միտքը և բանտարկում նրան Անհուշ բերդում կամ ինչպես հրամայում է չարաչար մահով սպանել հայոց Վասակ սպարապետին**

Ապա Պարսից Շապուի թագավորը կանչում է վիուկներին, աստղահմաներին ու քաղղեաներին, նրանց հետ խոսում է ու ասում. «Ես շատ անգամ կամեցա սիրել Հայոց Արշակ թագավորին, բայց նա ինձ միշտ անարգեց: Ես նրա հետ խաղաղության դաշն կապեցի, և նա երդվեց քրիստոնեական կրոնի գլխավոր սրբության վրա, որին ավետարան են ասում: Ես բյուր բարիքներ կամեցա նրան անել, ինչպես հայրը որդուն, իսկ նա բարիքի դեմ չարիք հատուցեց ինձ: Ես Տիգրան քաղաքի եկեղեցու քահանաներին կանչեցի, կարծելով, թե նրանք նենգությամբ նրան երդվեցրին և ինձ ստել տվին: Երբ ես նրանց նախատում էի, ինչպես մահապարտների, ինձ ասաց նրանց գլխավորը՝ Մարի քահանան: Ասում էին. «Մենք նրան արդարությամբ երդվեցրինք, իսկ եթե նա իր երդումը դրժեց, ապա նույն ավետարանը նրան էլի ձեր ոտքը կբերի»: Ես նրանց չլսեցի և հրամայեցի նրանց յոթանասունին մի փոսի մեջ մորթոտել, իսկ նրանց հավատակիցներին հրամայեցի սրի քաշել: Այն ավետարանը, որի վրա Արշակ թագավորը երդվեց, որ և նրանց քրիստոնեական կրոնի գլխավոր գիրքն է, շղթաներով կապեցի և գտնվում է իմ գանձարանում: Բայց միտքս եկան Մարի քահանայի խոսքերը. և հիշեցի, որ նա ասում էր. «Մեզ մի՛ սպանիր. ես գիտեմ, որ նույն ավետարանը Արշակ թագավորին կբերի քո ոտքը»: Ահա նրա ասած խոսքերն իսկությամբ կատարվեցին: Որովհետև Հայոց Արշակ թագավորն ահա երեսուն տարի է, որ Արյաց հետ պատերազմ է մղում, և ոչ մի տարի մենք չկարողացանք հաղթել, իսկ այժմ ինքն իր ոտքով էլել էլել է ինձ մոտ: Բայց եթե գիտենայի, թե այսուհետև նա հնազանդության անկեղծ ուխտով կմնա իմ պայմանին, ապա շատ մեծարանքներով նրան խաղաղությամբ կուղարկեի իր աշխարհը»:

Քաղղեաները նրան պատասխան տվեցին և ասացին. «Այսօր մեզ ժամանակ տուր, վաղը քեզ կպատասխանենք»: Հաջորդ օրը բոլոր քաղղեաներն ու աստղահմանները հավաքվեցին եկան և ասացին թագավորին. «Հիմա որ Հայոց Արշակ թագավորը ելել է քեզ մոտ, ինչպես է քեզ հետ խոսում, ինչ լեզու է բանեցնում կամ ինչպես է իրեն պահում»: Թագավորն ասաց. «Նա իրեն համարում է ինչպես մեկն իմ ծառաներից. ուզում է իմ ոտքի հո-

ըր դառնալ»: Նրանք ասացին թագավորին. «Դե՛, արա ինչ որ քեզ ասում ենք. նրանց այստեղ պահիր, մարդիկ ուղարկիր Հայոց աշխարհը, բերել տուր այնտեղից՝ Հայաստանի սահմաններից մոտ երկու բեռ հող և մի ամանով ջուր: Հետո հրամայիր, որ քո սենյակի հատակի կեսի վրա շաղ տան Հայաստանից բերած հողը. ապա դու ինքդ Հայոց Արշակ թագավորի ձեռքից կբռնես, նախ կտանես սենյակի այն տեղը, որտեղ բնական գետինն է և նրան հարցուփորձ կանես: Հետո նրա ձեռքը բռնած, հայկական հող շաղ տված տեղը կտանես և կլսես, թե ինչ է խոսում. և այն ժամանակ կիմանաս, թե երբ նրան արձակելու լինես Հայաստան, քո ուխտն ու դաշինքը կպահի՛, թե՛ ոչ: Որովհետև եթե հայկական հողի վրա խիստ լեզվով խոսի, իմացիր, որ Հայոց աշխարհի հասնելուն պես հենց նույն օրը նույն լեզուն կբանեցնի, նույն պատերազմը կնորոգի քեզ հետ, նույն ճակատամարտերը, նույն թշնամությունը կշարունակի»:

Պարսից թագավորը քաղղեաններից այս լսելով՝ մարդիկ ուղարկեց Հայաստան՝ արագավազ ուղտերով հողի և ջրի, որ գան և նրա համար պարգեն հմայքը: Քիչ օրերից հետո եկան ու բերեցին այն, ինչի որ նա նրանց ուղարկել էր: Ապա Շապուհ թագավորը հրաման է տալիս իր սենյակի հատակի կեսի վրա շաղ տալ Հայաստանից բերած հողը և վրան ջուր ցանել, իսկ մյուս կեսը թողնել բնիկ երկրի նույն հողը: Եվ Հայոց Արշակ թագավորին բերել տվեց իր առաջ ու հրամայեց մյուս մարդկանց հեռացնել և, նրա ձեռքից բռնած, ճեմելով շրջում էր: Սենյակում երթևեկելիս, երբ ճեմում էին պարսկական հողի վրա, ասաց նրան. «Արշակ թագավոր Հայոց, դու ինչնո՞ւ ինձ թշնամի եղար. ես քեզ որդու նման սիրեցի, կամեցա աղջիկս քեզ կնության տալ և քեզ ինձ որդի դարձնել, իսկ դու իմ դեմ խստացար, ինքնակամ, հակառակ իմ կամքի, ինձ թշնամի դարձար և ահա ամբողջ երեսուն տարի է ինձ հետ պատերազմեցիր»:

Արշակ թագավորը ասում է. «Մեղանչեցի և հանցավոր եմ քո առաջ. որովհետև ես եկա, քո թշնամիներին հաղթեցի ու կոտորեցի և հույս ունեի քեզանից կյանքի պարգև ստանալ. բայց իմ թշնամիներն ինձ մոլորեցրին, քեզանից վախեցրին և փախչել տվին: Եվ երդումս, որով քեզ երդվեցի, ինձ քո առաջը բերեց ու ահա եկա քո առաջ և քո ձեռքում եմ. ինչպես ուզում ես վարվիր ինձ հետ, եթե կամենում ես, սպանիր, որովհետև ես շատ հանցավոր եմ քո առաջ, մահապարտ եմ»:

Շապուհ թագավորը նրա ձեռքից բռնած շրջում է ճեմելով.



անմեղ ձևանալով նրան բերում է հայկական հող շաղ տված հատակի վրա: Իսկ երբ Արշակն այն տեղն է հասնում, հայկական հողի վրա ոտք է դնում՝ սաստիկ ըմբոստանալով, հպարտանալով խոսքը փոխում է, սկսում է խոսել և ասել. «Հեռո՛ւ ինձանից, չարագործ ծառա, որ տերերիդ վրա տեր ես դարձել, և ես չեմ ների քեզ ու քո որդիներին իմ նախնիների վրեժը և Արտավան թագավորի մահը: Որովհետև այժմ դուք՝ ծառաներդ, մեր՝ ձեր տերերի բարձն եք հափշտակել, բայց ես թույլ չեմ տա այդ, մինչև դարձյալ մենք մեր տեղը չգրավենք»:

Շապուհը, դարձյալ նրա ձեռքից բռնած, տանում էր պարսկական հողի վրա. այն ժամանակ Արշակը զղջում էր ասածների համար, խոնարհվում էր, սաստիկ ափսոսում: Իսկ երբ ձեռքից բռնած տանում էր հայկական հողի վրա՝ առաջվանից ավելի խիստ էր խոսում: Նորից հեռացնում էր այդ հողի վրայից, սկսում էր խոսքերով ապաշխարել: Առավոտից մինչև երեկո շատ անգամ փորձեց նրան, որ երբ հայկական հող շաղ տված հատակի վրա էր տանում, խստանում, ամբարտավանանում էր, իսկ հենց որ կանգնում էր հատակի բուն գետնի վրա, զղջում էր:

Երբ եղավ երեկո՝ Պարսից թագավորի ընթրիքի ժամը, սովորությունն այնպես էր, որ Հայոց թագավորի համար բազմելու տեղ էին պատրաստում այնտեղ՝ նրա հետ, նրա մոտ, նրա տախտի վրա: Օրենք էր, որ Պարսից թագավորն ու Հայոց թագավորը մի տախտի վրա էին բազմում, մի գահի վրա: Իսկ այն օրը նախ պատրաստեցին բոլոր այնտեղ գտնված թագավորների բազմոցների շարքը և ամենից վերջը, բոլորից ներքև Արշակի բազմելու տեղը պատրաստեցին, որի հատակին հայկական հող էին շաղ տվել: Նախ, երբ բոլորը բազմեցին ըստ իրենց աստիճանների, հետո բերեցին բազմեցրին Արշակ արքային՝ նա մի պահ այդպես նստած մնաց ուռած-փքված, հետո ոտքի կանգնեց ու ասաց Շապուհ թագավորին. «Իմն է այդ տեղը, որտեղ դու բազմել ես, վեր կաց այդ տեղից, որ ես այդտեղ բազմեմ, որովհետև մեր տոհմի տեղն է եղել այդ, իսկ եթե իմ երկիրը հասնեմ, քեզանից խիստ վրեժխնդիր կլինեմ»:

Այն ժամանակ Պարսից Շապուհ թագավորը հրաման է տալիս բերել շղթաներ և գցել Արշակի պարանոցը, իսկ ոտքերին ու ձեռքերին դնել կապանքներ և տանել նրան Անդամըն բերդը, որին ասում են Անհուշ բերդ, և կապած պահել այնտեղ մինչև մեռնի:

Հաջորդ օրը Շապուհ թագավորը հրամայեց իր առջև բերել Վասակ Մամիկոնյանին՝ Մեծ Հայքի գորավար-սպարապետին: Սկսեց նրան անարգել: Որովհետև Վասակը փոքր էր մարմնով, Պարսից Շապուհ թագավորը ասաց նրան. «Աղվես, այդ դո՛ւ էիր այն խանգարիչը, որ այսքան տարի մեզ չարչարեցիր, դո՛ւ էիր, որ այսքան տարի կոտորում էիր արիներին. հիմա ինչպե՛ս ես, որ քեզ աղվեսի մահով սպանեմ»:

Պատասխան տալով՝ Վասակն ասաց. «Այժմ դու ինձ տեսնելով մարմնով փոքր, իմ մեծության չափը զգացի՞ր, որովհետև մինչև այժմ ես քեզ համար առյուծ էի, իսկ այժմ՝ աղվես: Բայց մինչ ես Վասակն էի, հսկա էի. մի ոտքս մի լեռան վրա էր, մյուս ոտքս՝ մեկ այլ լեռան վրա. երբ աջ ոտքիս վրա էի հենվում, աջ լեռն էի գետին տանում, երբ ձախ ոտքիս վրա էի հենվում, ձախ լեռն էի գետին տանում»:

Շապուհ թագավորը հարցրեց և ասաց. «Դե, ասա, իմանանք, այդ ինչ լեռներ են, որ դու գետին էիր տանում»: Վասակն ասաց. «Երկու լեռներից մեկը դու էիր, մյուսը՝ Հունաց թագավորը. քանի որ Աստված հաշտ էր մեզ հետ, քեզ էլ էի գետին տանում, Հունաց թագավորին էլ, քանի որ մեր հոր՝ Ներսեսի օրհնությունը մեզ վրա էր, և Աստված մեզ ձեռքից չէր թողել: Քանի որ մենք նրա խոսքը լսում էինք և նրա խրատով էինք շարժվում, կարողացանք քեզ խրատ տալ, մինչև որ մենք ինքներս բաց աչքերով խորխորատի մեջ ընկանք: Հիմա ինչ ուզում ես արա»: Ապա Պարսից թագավորը հրամայեց՝ Հայոց Վասակ զորավարի մորթը հանել, խոտով լցնել և տանել նույն Անդամըն բերդը, որ Անհուշ է կոչվում, որտեղ բանտարկեցին և Արշակ թագավորին:



## ԲԱՌԱՐԱՆ

**կամա-ակամա** – ուզած-չուզած, ստիպված, կամքին հակառակ

**վարազագիր մատանի** – մատանի, որի վրա փորագրված է լինում վարազ (վայրի խոզ)՝ պարսից թագավորների զինանշանը

**բռնադատել** – պարտադրել, ստիպել, բռնի ուժ գործադրել

**մահապարտ** – մահվան դատապարտված, նաև կամավոր մահն աչքի առաջ ունեցող

**թիկնապահ** – բարձրաստիճան անձանց պաշտպանությունն ապահովող մարդ

**վիուկ** – չարք, դյուխ

**քաղդեա (քաղդեաներ, քավդեայք)** – աստղահմա, աստղերով, աստղաբաշխական դիտումներով գուշակություններ անող

**անարգել** – վիրավորել, անպատվել, ստորացնել

**դրժել** – խոստումը խախտել, դավաճանել, ուրանալ

**ուխտ** – երդում, խոստում, դաշինք, պատգամ, միաբանություն (կրոնական)

**մեղանչել** – մեղք գործել, հանցանք գործել

**Արտավան թագավոր** – Պարսկաստանի Արշակունյաց արքայատոհմի վերջին ներկայացուցիչը, ում 226 թվականին սպանեց Արտաշիր Սասանյանը: Հայ Արշակունիները բարձր են պահում իրենց տոհմակից պարսիկ Արշակունիների պատիվը և դրա համար կռվում են պարսիկ Սասանյանների դեմ՝ փորձելով լուծել Արտավանի սպանության վրեժը: Դա է պատճառը, որ Արշակ Երկրորդը Շապուհի հետ խոսելիս և նրա գահը նկատի ունենալով՝ ասում է. «Իմն է այդ տեղը..., որովհետև մեր տոհմի տեղն է եղել այդ...»:

**ապաշխարել** – գղջալ, մեղքերի թողություն խնդրել, մեղքը քավել

**վրեժխնդիր լինել** – վրեժ լուծել

**խորխորատ** – խոր տեղ, անդունդ, վիհ, փոխաբերաբար՝ վտանգ, փորձանք, աղետ

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Պատմաքաղաքական ինչ պայմաններում է Արշակ Երկրորդ թագավորը ներկայանում Շապուհ արքային:
2. Ո՞ր նշանավոր սպարապետն է Արշակ Երկրորդի հետ մեկտեղ մեկնում Պարսկաստան:
3. Ինչ խորամանկություններ է բանեցնում Շապուհը Արշակ Երկրորդին նսեմացնելու համար:
4. Ո՞րն է հայրենի երկրի հող ու ջրի խորհուրդը:
5. Ինչո՞ւ է Արշակ Երկրորդն իրեն ավելի զորեղ զգում հայրենի հող ու ջրի վրա: Հունական դիցաբանությունից այս կապակցությամբ հիշե՞ք Անթեյի և Իկարուսի առասպելը:
6. Ինչ նկատառումով է Արշակ Երկրորդը Շապուհի գահը մատնանշելով՝ ասում. «Իմն է այդ տեղը..., որովհետև մեր տոհմի տեղն է եղել այդ...»:
7. Ինչպե՞ս է Վասակ Մամիկոնյան սպարապետը ներկայանում Շապուհի փորձությանը և ինչ է կատարվում նրա հետ:
8. Որտե՞ղ է բանտարկվում հայոց Արշակ Երկրորդ արքան:

### **Հայոց Արշակ թագավորի մահվան մասին, թե ինչպե՞ս մեռավ Խուժաստան երկրում, Անդամը՞ն բերդում ինքն իր ձեռքով, և Դրաստամատը եղավ նրա մահվան պատճառը**

Այն ժամանակները դեռևս կենդանի էր Հայոց Արշակ թագավորը Պարսից թագավորության իշխանության երկրում, Խուժաստանի կողմերում, Անդամը՞ն բերդում, որին ասում են Անհուշ բերդ: Այս ժամանակ պարսիկները դադարեցրին պատերազմները հայերի հետ, որովհետև Քուշանաց Արշակունի թագավորը, որ նստում էր Բալխ քաղաքում, պատերազմ սկսեց պարսից Շապուհ թագավորի դեմ, որ Սասանի տոհմից էր: Եվ Շապուհ թագավորը Պարսից բոլոր զորքերը գումարեց ու տարավ նրա դեմ պատերազմելու, նույնպես և Հայոց աշխարհից գերության տարած բոլոր հեծելազորքն իր հետ պատերազմի տարավ, մինչև անգամ Հայոց Արշակ թագավորի ներքինուն: Հայոց Արշակ թագավորի այդ ներքինին հավատարիմ պաշտոնյա էր, մեծ իշխանության տեր, շատ սիրված ու պատիվների արժանացած. նրա անունն էր Դրաստամատ:

... Այս Դրաստամատը պատահեց այն ճակատամարտում, որի մեջ քուշանները հաղթեցին Պարսից Շապուհ թագավորին: Դրաստամատն այնտեղ անպատմելի քաջություններ գործեց, Շապուհ թագավորի համար այնչափ կռվեց, որ կարողացավ նրան մահից ազատել և քուշաններից շատերին և շատ ախոյանների գլուխներ բերեց նրա առջև: Պարսից Շապուհ թագավորին էլ փրկեց, երբ նրան պատերազմի խառնուրդի մեջ թշնամիները շրջապատել ու նեղն էին զցել: Իսկ երբ Պարսից Շապուհ թագավորը դարձավ, եկավ Ասորեստան, մեծ շնորհակալություն հայտնեց ներքինի Դրաստամատին նրա ծառայությունների համար. և ասաց նրան

Պարսից Շապուհ թագավորը. «Խնդրիր դու ինձանից ինչ որ ուզում ես, քո խնդրածը կտամ, չեմ մերժի»:

Դրաստամատն ասաց թագավորին. «Ես քեզանից ոչինչ չեմ ուզում, բացի միայն նրանից, որ հրաման տաս ինձ՝ գնամ իմ իսկական տիրոջը՝ Հայոց Արշակ թագավորին տեսնեմ: Եվ միայն մեկ օրվա համար, երբ ես նրա մոտ գնամ, հրաման տուր նրան կապանքներից արձակել, և ես իրավունք ունենամ լվանալ նրա գլուխը, օծել, ազնիվ զգեստ հագցնել, նրա համար սեղան պատրաստել, նրա առաջ խորտիկներ դնել, գինի տալ և ուրախացնել նվագարաններով. ճիշտ մեկ օր»:

Շապուհ թագավորն ասաց. «Դժվար բան խնդրեցիր, որովհետև այն ժամանակից ի վեր, որ Պարսից թագավորությունը կանգուն է, և այն բերդը կոչվել է Անհուշ, չի եղել որևէ մարդ, որ համարձակված լինի թագավորներին հիշեցնել, թե թագավորները որևէ մեկին այնտեղ բանտարկել են, չի հիշատակվել որևէ մարդ, որին բանտարկել են այն բերդում, ո՛ր մնաց թագավոր մարդը և իմ հավասարը՝ հակառակորդը, որ կապված է այն բերդում: Այնինչ դու անհանգստացրիր մեզ: Դու ահա մահդ աչքդ առար և հիշեցրիր Անհուշը՝ անհիշելին, որ Արյաց թագավորության մեջ սկզբից ի վեր չի պատահել այսպիսի բան: Բայց որովհետև մեծ է քո՝ ինձ ցույց տված ծառայությունը, թող կատարվի խնդիրդ. գնա՛, ինչ որ խնդրեցիր, տալիս եմ: Բայց դու պետք է քո սեփական օգուտը մտածեիր, երկրներ, գավառներ կամ գանձեր խնդրեիր: Բայց երբ դու այդ խնդրեցիր, թող այդ բացառություն լինի Արյաց թագավորության օրենքից: Գնա՛, քեզ տվեցի այն, ինչ որ դու ինձանից խնդրեցիր քո ծառայության փոխարեն»:

Եվ նրան տվեց մի հավատարիմ թիկնապահ ու հրովարտակ՝ արքունական մատանիով կնքված, որ ելնի գնա Անդմըշն բերդը և ինչպես որ կամենա, ինչպես որ խնդրեց, այնպես էլ վարվի կապյալ Արշակի հետ, որ Հայաստանի թագավոր էր եղել մի ժամանակ: Եվ Դրաստամատն արքունական հրովարտակով թիկնապահի հետ գնաց Անհուշ բերդը, տեսավ իր իսկական տեր Արշակին, արձակեց երկաթե կապանքներից, ձեռնակապերից ու ոտնակապերից և անուրներից, նրա գլուխը լվաց, նրան լողացրեց. նրան ազնիվ զգեստներ հագցրեց, սեղան սարքեց նրա համար, նրան բազմեցրեց, նրա առաջ թագավորավայել ընթրիք դրեց, գինի դրեց առաջը, ինչպես թագավորների կարգն է, նրան զվարթացրեց, մխիթարեց և նվագարաններով ուրախացրեց:

Երբ աղանդերի հերթը հասավ, նրա առաջ դրեցին միրգ, խնձոր, վարունգ և դանակ տվին, որպեսզի կտրի և ուտի, ինչպես կամենում է: Դրաստամատն էլ ոտքի կանգնած՝ նրան շատ ուրախացնում էր և մխիթարում:

Երբ նա խմեց, գինին գլուխն ընկավ, հարբեց ու հպարտացավ. «Վայ ինձ, Արշակիս. որտեղից ուր ընկա և ի՛նչ օրի հասա» ասելով՝ դանակը, որ բռնել էր ձեռքին, որով միրգը պիտի կտրեր, խրեց իր սիրտը և իսկույն մեռավ հենց նստած տեղում:

Դրաստամատը երբ այս տեսավ, վրա ընկավ, դանակը քաշեց հանեց մարմնից և խրեց իր կողը: Նա էլ նույնպես նույն ժամին մեռավ:



## ԲԱՌԱՐԱՆ

**Ներքինի** – արհեստականորեն ամլացված տղամարդ, այդպիսիները պալատներում ծառայում էին կանանոցում և իրենց հատուկ տեղն ունեին պետության պաշտոնակարգի մեջ

**ախոյան** – թշնամի, հակառակորդ, նաև մրցակից

**օծել** – հոտավետ հեղուկ քսել մարմնին, օծվում է նաև կառուցված եկեղեցին, որի հիմքին մեռն են լցնում, մեռնով օծվում է երեխան մկրտվելիս, հոգևորականը՝ ձեռնադրվելիս

**խորտիկ** – ընտիր կերակուր, սառը ուտելիք

**նվազարան** – երաժշտական գործիք, նվագելու գործիք

**ձեռնակապ** – ձեռքի կապանք

**ոտնակապ** – ոտքի կապանք

**անուր** – պարանոցը սեղմող օղակ, լծասարքի օղակաձև մասը, լուծ

**աղանդեր** – մրգեղեն, քաղցրեղեն, ընդեղեն

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ո՞վ էր Դրաստամատը:
2. Ի՞նչ հերոսություն էր գործել Դրաստամատը, որ Շապուհը բացառության կարգով նրան թույլատրեց թափանցել Անհուշ բերդ և տեսակցել Արշակ Երկրորդին:
3. Ի՞նչ վիճակում է Դրաստամատը տեսնում հայոց թագավորին և ի՞նչ է անում նրա վիճակը մեկ օրով թեթևացնելու համար:
4. Ի՞նչպե՞ս է Բուզանդը նկարագրում հյուրասիրության տեսարանը:
5. Ի՞նչ է ասում և ի՞նչպե՞ս է կյանքին վերջ տալիս հայոց Արշակ Երկրորդ թագավորը:
6. Արշակ Երկրորդի ինքնասպանությունից հետո ի՞նչ է անում Դրաստամատը:
7. Ի՞նչպիսի՞նք արքա էր Արշակ Երկրորդը: Լրացրե՛ք ձեր իմացությունները նրա մասին և քննարկե՛ք հարցը դասարանում:

# ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ

## 410/415–485/490

Մովսես Խորենացին 5-րդ դարի հայ մատենագրության ամենանշանավոր դեմքն է. մեծարվել է «տիեզերահռչակ», «քերթողահայր», «պատմահայր» բնութագրումներով: Նա ստեղծել է հայ ժողովրդի քննական ամբողջական պատմությունը: Նրա «Հայոց պատմություն»-ն ունի համաշխարհային գիտական արժեք: Այն ճանապարհի գիրք է հայ ժողովրդի համար, քանի որ ստեղծվել է «Աստվածաշունչ» մատյանի նմանությամբ և նույն դերն ունի մեր ժողովրդի ազգային գիտակցության մեջ, ինչ «Հին կտակարան»-ը՝ մարդկության:



Մովսես Խորենացին ծնվել է Տարոն գավառի Խորեան (Խորեն, Խորենք, Խորոնք) գյուղում 410–415 թվականների միջակայքում: Այստեղից էլ Խորենացի:

Նա Մաշտոցի առաջին աշակերտներից էր, նրա մոտ Վաղարշապատում կրթվելուց հետո ուսուցչի ցուցումով 435 թվականին ուղևորվել է Ալեքսանդրիա՝ հունարեն սովորելու և «իսկական ճեմարանում կատարելագործվելու» համար: Ուսուցիչները դժգոհում էին հոգևոր գրականության առաջին շտապ արած թարգմանություններից, իսկ նոր թարգմանությունների համար ավելի խոր իմացություններով զինված գործիչներ էին անհրաժեշտ: Ճանապարհորդությունը երկար է տևել: Նա նախ գնացել է Եդեսիա, աշակերտել գիտուն մարդկանց, այնտեղից մեկնել Ալեքսանդրիա՝ ժամանակի գիտակրթական գլխավոր կենտրոններից մեկը:

Խորենացին իրեն հիշում է «լավ աշակերտների» մեջ:

Վերադարձին նա եղել է Իտալիայում, Աթենքում և այնտեղից 442 թվականին վերադարձել հայրենիք: Նա ուսանել է լեզուներ, ճարտասանություն, թարգմանական գործ, քերականություն և քերթողական արվեստ:

Երբ Խորենացին վերադարձավ Հայաստան, արդեն մահացել էին նրա ուսուցիչները՝ Սահակ Պարթևը և Մեսրոպ Մաշտոցը: Այդ կորուստը Խորենացին ծանր է տանում, որովհետև ինչպես նրան, այնպես և նրա հետ վերադարձածներին վատ են ընդունում: Հիմնական պատճառներից մեկն այն էր, որ Պարսկաստանը, թշնամի լինելով Բյուզանդիային և փակելով հունական կրթության, մշակութային և հույն հոգևոր գործիչների ճանապարհը, իր ազդեցության գոտում գտնվող Հայաստանում խրախուսում էր ասորի հոգևորականների գործունեությունը:

Ահա Խորենացին հայրենիք էր վերադարձել հունական բարձր գիտության նվաճումներով զինված, ինչն էլ դեմ է առնում տեղում իրենց հեղինակությունը հաստատած ասորի և նրանց հարող հայ հոգևորականների դիմադրությանը, ովքեր Խորենացուն և նրա նմաններին համարում էին «անհաստատ և որևէ պիտանի արվեստից զուրկ մարդիկ»:

Տգետ և ինքնահավան ուսուցիչներն անգամ ծաղրում, արհամարհում ու հալածում են Խորենացուն, որովհետև դա մի ժամանակ էր, երբ «գլխավոր մարդիկ հալածվում էին, հայտնի անձերը բանտարկվում և դեպի օտարություն էին արքայություն ազնվականները»:

Իրեն և ժողովրդին պատուհասած դառնությունների մասին Խորենացին գրում է **«Հայոց պատմություն»**-ը եզրափակող **«Ողբ»** գլխի մեջ:

Ինչպես Խորենացու **«Ողբ»**-ից, այնպես էլ Փարպեցու **«Թուղթ»**-ից պարզ է դառնում, որ կիրթ ու գիտուն մարդկանց հանդեպ կար անհանդուրժողականություն: Փարպեցու **«Թուղթ»**-ն ասես Խորենացու **«Ողբ»**-ի շարունակությունը լինի: Ահա իր այդ գրության մեջ Փարպեցին հիշատակում է, որ Սյունիքի քարայրներում երկու տարի ճգնել է *«հռչակավոր մի մարդու հետ, ում անունն էր Մովսես»*:

Այնուհետև այս հռչակավոր Մովսեսի կրած չարչարանքների մասին Փարպեցին ավելացնում է. *«Երանելի փիլիսոփա Մովսեսը, որ, արդարև, մինչդեռ ապրում էր իր մարմնական կյանքը, արդեն երկնային զորականներին էր քաղաքակից, չէ՞ որ տեղից տեղ հալածվեց հայոց այդ արեղանների ձեռքով: Չէ՞ որ նրա լուսավորող և տգիտահալած գրքերն անգիտությունից կեղծ էին համարում նրանք և էլի ուրիշ բաներով խայտառակեցին: Սակայն հետո այլոց տված ամոթանքից մի խաբեական եպիսկոպոսություն մահադեղի պես խմեցրին այդ սուրբին և խեղդեցին: Եվ թե նա վախճանի ժամին ինչ ահավոր նզովքի գիր է թողել քահանայության գլխավորների վրա, գիտեմ, որ դուք լավ տեղյակ եք... Նա իր կյանքը անչափ անհանգիստ աշխատությունների և գիշեր-ցերեկ հայոց աշխարհը լուսավորող վաստակի վրա դրեց: Նրա ոսկորները գերեզմանից հանել տվեցին և գետը թափեցին: Հրեշտականման այն Տերին նույն այդ անհանգիստ հալածանքներով մահու հասցրեցին և դեռ հիմա էլ անհագ քինախնդրությամբ մեռածի հետ են կռիվ տալիս»*:

Ինչ է պարզվում: Պարզվում է, որ Մովսեսը, ով տվյալների համընկնումով Մովսես Խորենացին է, ճգնել է Սյունիքի քարայրներում, ճանաչվել որպես առաքելական մարդ, երանելի փիլիսոփա, լուսավորող ու տգիտահալած գրքերի հեղինակ, հայոց աշխարհը լուսավորող վաստակի տեր, հրեշտականման մի հոգևորական: Սակայն տգետ արեղաները նրան հալածել են, գրքերը կեղծ ու մոլոր համարել և միայն հասկացող մարդկանցից ամոթանք ստանալով՝ ծերության օրերին եպիսկոպոսություն են տվել և լռեցրել: Չարամիտ մարդկանց նրա գոյությունը հանգիստ չի թողել նաև մահից հետո, նրա ոսկորները գերեզմանից հանել և գետն են լցրել, իսկ հիմա էլ շարունակում են կռիվ տալ հիշատակի հետ: Իսկ *«ահավոր նզովքի գիր»*-ն ըստ ամենայնի Խորենացու **«Ողբ»**-ն է:

Խորենացու հանդեպ հալածանքները շարունակվել են մինչև Գյուտ վեհափառը (գահակալել է 461-471 թթ.), ով Խորենացու դասընկերն էր: Ահա նա էլ Խորենացուն տանում է Մայր աթոռ և եպիսկոպոս ձեռնադրում: Գյուտին ևս մեղադրել և աքսորել են, ինչից հետո Խորենացու հանդեպ հալածանքները նոր թափ են առել: Այդ մասին գրել է նաև ինքը թե՛ **«Հայոց պատմության»** սկզբում, թե՛ երկրորդ և երրորդ գրքերի վերջին գլուխներում: Խորենացին այստեղ ևս նույն վիրավորված, ըստ արժանիքների չգնահատված, նեղացած մարդն է:

Իսկ 482 թ. Սահակ Բագրատունու զոհվելուց հետո նա կորցրել է հովանավորին և դարձյալ անպաշտպան մնացել հալածանքների դիմաց:

Խորենացին ապրել է մինչև խոր ծերություն և վախճանվել 485-490 թթ. միջակայքում:

**«Հայոց պատմություն»** գրքով նա *«անմահ հիշատակ է թողել սերունդներին»*: Խորենացու անունով մեզ են հասել մի շարք աշխատություններ, որոնցից գլխա-

վորը «**Հայոց պատմություն**»-ն է: Նա եղել է նաև բանաստեղծ ու թարգմանիչ:

«**Հայոց պատմություն**»-ը նրան պատվիրել է Հայաստանի մարզպան Սահակ Բագրատունին (մարզպան է եղել 481-482 թվականներին) և երկու հիմնական պահանջ է դրել նրա առջև՝ համառոտագրություն և ճշգրտություն:

Խորենացին իր գիրքը հենց այդ թվականներին էլ գրել է, երբ մոտավորապես 70 տարեկան էր: Եվ խոսքի սեղմությունը, և՛ գիտական ճշգրտությունը եղել են Խորենացու գլխավոր սկզբունքները:

Խորենացու «Հայոց պատմության» հավաստիության և նրա ապրած ժամանակի շուրջ ծագել են բանասիրական վեճեր:

Խորենացին գրում է, որ հայոց Արտաշես արքայի օրոք գյուղերի և ագառակների սահմանները նշվել են քարե սյուներով: 19-րդ դարում, երբ գտնված չէին այդ սյուները, կասկածամիտ հայագետները հարց էին տալիս՝ իսկ ո՞ր են հապա Խորենացու հիշատակած այդ սյուները: Հետագայում հայտնաբերվեց այդպիսի ութ սահմանաքար: Ուրեմն Խորենացին ճիշտ էր:

Հայագետներից ոմանք Խորենացուն համարում են ոչ թե 5-րդ դարի, այլ ավելի ուշ շրջանի պատմիչ, ինչը ևս տարբեր փաստարկներով հերքվում է:

Բանավեճերն այսօր էլ շարունակվում են, բայց Խորենացին որպես վավերական, հավաստի ու վստահելի պատմիչ հաստատուն մնում է Ոսկեդարի իր ժամանակի մեջ և շարունակում զբաղեցնել հայ և համաշխարհային գիտական միտքը:

### **«ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ:**

Մովսես Խորենացու «**Հայոց պատմություն**»-ը բաղկացած է երեք գրքից: Առաջին գիրքը վերնագրված է «**Հայոց մեծերի ծննդաբանությունը**», ընդգրկում է հայոց պատմությունն ամենասկզբից մինչև Ք.ծ.ա. 132 թվականը: Երկրորդ գիրքը՝ «**Միջին պատմություն մեր նախնիների**», ներկայացնում է հայոց պատմությունը Ք.ծ.ա. 132 թվականից մինչև 318 թվականը: Երրորդ գիրքը՝ «**Մեր հայրենիքի պատմության ավարտը**», ընդգրկում է 318-428 թթ. իրադարձությունները:

**ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ:** Խորենացին պարսավում է մեր առաջին թագավորներին, ովքեր չմտահոգվեցին «*իրենց ժամանակները գրով և պատմությամբ հաստատելու*» մասին:

Այստեղ էլ նա ասում է իր հայտնի խոսքը. «*Որովհետև թեպետ մենք փոքր ածու ենք և շատ սահմանափակ թվով, բայց և այնպես մեր աշխարհում էլ քաջության շատ գործեր կան գործված՝ գրելու և հիշատակելու արժանի, որ նրանցից ոչ ոք հոգ չտարավ գրի առնելու*»: Դրա փոխարեն նա դրվատում է նախնի մատենագիրներին, ովքեր ծանր աշխատանքով տարբեր լեզուներով ստեղծեցին պատմական գրվածքներ, որոնցից ինքը օգտվում է մեր ժողովրդի պատմությունը շարադրելու համար:

Մեր ժողովրդի ծննդաբանությունը Խորենացին սկսում է ջրհեղեղից հետո՝ Նոյի որդի Հաբեթից, ում հաջորդում են Գամերը, Թիրասը, Թորգոմը, Հայկը, Արամանյակը, Արամայիսը, Ամասիան, Գեղամը, Հարման, Արամը, Արա Գեղեցիկը: Այս ազգաբանությունը Խորենացին համարում է հավաստի. «*Եվ սա ճշմարիտ է, ոչ ոք չկասկածի*»:

Ահեղ և երևելի առաջին աստվածներն աշխարհին մեծամեծ բարիքներ

պատճառեցին: Նրանցից առաջացան հսկաները, ովքեր հղանում են աշտարակաշինության գաղափարը, ինչը սխալ նախաձեռնություն էր, այդ իսկ պատճառով Աստուծու ցասումը կործանում է աշտարակը: Ձևավորվում են 72 ազգեր՝ իրենց առանձին լեզուներով և ցրվում աշխարհով մեկ:

Աշտարակաշինությանը մասնակցում էր նաև մեր նախնին՝ Հապեթոսյան (Հաբեթյան) Հայկը՝ *«Անվանի և քաջ նախարար, հաստ աղեղով և հզոր նետածիգ»*: Ահա այստեղից էլ սկիզբ է առնում Հայկ Նահապետի գործունեությունը, ով հաղթելով Բելին, դառնում է մեր հայրենիքի՝ Հայոց աշխարհի հիմնադիրը:

Այնուհետև Հայկից առաջացած սերունդներով Խորենացին նշում է հայոց նախարարական տոհմերի ծագումնաբանությունը:

Հաջորդում են Հայկյան Արամի քաջագործությունները: Նա տիրում է *«Նինոսի Ասորեստանին և Նինվեին, թշնամիներին շամփրում պատին, մնացածներին սպանում ու փախցնում»*: Ահա այս Արամի անունով էլ, ըստ Խորենացու, օտարները մեր երկիրը կոչում են Արմենիա:

Արամին հաջորդում է նրա որդին՝ Արա Գեղեցիկը, Շամիրամի հետ կապված ողբերգական սիրո պատմությամբ: Արան Հայաստանի խորհրդանշանն էր, Շամիրամը՝ Ասորեստանի: Շամիրամի սերը Արայի հանդեպ խարդավանք էր Հայաստանին տիրելու համար: Արայի և Նուարդի սիրո ու նվիրվածության մասին հայտնի էր բոլորին: Այսինքն՝ Արան իր հայոց երկրի նվիրյալն էր ու պաշտպանը: Կռվի ժամանակ Արան նահատակվում է: Նրա մարմինը դնում են բարձր աշտարակի վրա, որպեսզի հարալեզները՝ շան տեսք ունեցող ոգիները, նրան հարություն տան, կենդանացնեն: Այստեղից հայոց դիցաբանության մեջ Արան հայտնի է որպես մեռնող և հարություն առնող բնության աստված:

Պատմությունը չի լռում նաև Շամիրամի մասին: Նա Հայաստանում կառուցում է Վան (Շամիրամակերտ) քաղաքը, բացում ջրանցքներ, հիմնում այգիներ և, ի վերջո, սպանվում է իր Նինուաս որդու ձեռքով: Սպանվելուց առաջ նա իր հուռույթները նետում է Վանա ծովի մեջ և ասում. *«Հուռույթ Շամիրամա ի ծով»*: Իսկ ըստ առասպելի՝ *«Շամիրամը Նիորեից առաջ քար դարձավ»*:

Խորենացին մեծ հայրենասեր էր: Շարունակելով հայոց ազգաբանությունն ու տոհմաբանությունը՝ նա գրում է. *«Ահա այժմ ես զվարճանում եմ ոչ փոքր ուրախություն զգալով, որ հասնում եմ այն տեղը, երբ մեր բնիկ նախնիի սերունդները թագավորական աստիճանի են հասնում»*: Նրա համար ընդունելի ու սիրելի են մեր բոլոր բնիկ արքաները, ովքեր շենացրել են Հայաստանը, որը, ըստ Երեմիա մարգարեի, հայտնի է նաև *«Արարատյան թագավորություն և Ասքանազյան գունդ»* անուններով:

Խորենացին ներկայացնում է հայրենաշեն հայոց արքաներին: Անսահման է նրա հիացմունքը Տիգրան Մեծի հանդեպ: Նա հուժկու է, անվանի և հաղթող, նա *«մեր բնակության սահմաններն ընդարձակելով՝ հասցրեց մինչև հին բնակության սահմանների ծայրերը: Մեր ազգը բարձրացրեց և մեզ, որ օտարների լծի տակ էինք, դարձրեց շատերին լուծ դնողներ և հարկապահանջներ»*:

Հայոց արքաներից Խորենացուն սիրելի է հատկապես երեք անուն. *«Ես սիրում եմ ըստ քաջության այսպես կոչել՝ Հայկ, Արամ, Տիգրան, որովհետև քաջերի սերունդները քաջեր են, իսկ նրանց միջև եղածներին ով ինչպես ուզում է թող կոչի»*:

Ըստ Խորենացու՝ Տիգրան Մեծի որդիներից էր Վահագն Վիշապաքաղը,

ում աստվածային էությունը ներկայացնում է **«Վահագնի ծնունդը»** օրհներգով: Այդ կապակցությամբ գրում է. *«Մենք մեր ականջով լսեցինք, ինչպես այն ոմանք երգում էին փանդիռով»:*

Ահա այստեղից Խորենացին անցնում է առասպելների երկրորդ շարքին և պատմում **«Տիգրան և Ածդահակ»**-ը:

Խորենացին ոչ միայն առասպելներ էր գրի առնում, այլև դրանց մասին հայտնում էր իր կարծիքը: Ըստ նրա՝ հունական առասպելները պերճ ու ողորկ են, ճշմարիտ իրողություններ են բովանդակում, իսկ պարսկականները սուտ են, շինծու, անմիտ, անհանճար ու անզարդ: Այստեղ ակնհայտ երևում է Խորենացու հիացմունքը հունական մշակույթի հանդեպ:

**ԵՐԿՐՈՐԴ ԳՐՔՈՒՄ** Խորենացին շարադրանքն սկսում է Ալեքսանդր Մակեդոնացուց, ներկայացնում հայոց Երվանդյան, Արտաշեսյան հարստությունները, անցնում Հայաստանում Արշակունյաց արքայատոհմի հաստատմանը և հասնում մինչև Տրդատ Մեծ՝ մինչև քրիստոնեության ընդունումը:

Այս գլխում Խորենացին ի մի է բերում հնագույն առասպելների չափածո պատառիկներ, որոնք վերաբերում են Արտաշեսին, Սաթենիկին, Արտավազդին:

Արշակունիներից առաջինը Վաղարշակն էր, ով նորոգում և ամրապնդում է հայոց թագավորությունը: Հաջորդում են Արշակունի մյուս արքաները:

Տրվում է Մամիկոնյան տոհմի ծագման և Հայաստանում քրիստոնեության մուտքի պատմությունը:

Այստեղ Խորենացին յուրովի է ներկայացնում Տրդատ Մեծի կերպարը: Խորենացին Տրդատին սուրբ է համարում, ով տեսնելով, որ քրիստոնեություն ընդունելու համար ժողովուրդը դիմադրում է իրեն, թողնում է թագավորությունը և գնում Գրիգոր Լուսավորիչի պես Մանյա այրում ճգնելու: Նրան ետ են կանչում թագավորությունը շարունակելու, նա ետ չի վերադառնում, իսկ հակառակորդները նրան թունավորում են:

Այս դեպքի կապակցությամբ Խորենացին գրում է. *«Այստեղ ես ամաչում եմ ասել ճշմարտությունը»* և մեղադրում է հայ ժողովրդին՝ *«որ իր սիրտը չողղեց և որի հոգին Աստծուն հավատարիմ չմնաց»:*

**ԵՐԿՐՈՐԴ ԳՐՔՈՒՄ** Խորենացին պատմում է իր ժամանակ և դրանից քիչ առաջ կատարված իրադարձությունների մասին: Պատմության այս մասը ծանոթ է Փավստոս Բուզանդից:

Հայաստանի բաժանումն ու պետականության կորուստը Խորենացու համար ամեն ինչի վերջն է: Այդքանից հետո էլ ինչ էր մնում պատմահորը, եթե ոչ արցունքներով ողբալու հայոց աշխարհի դառնապատիր բախտը, թվարկելու բոլոր այն թերությունները, որոնք հասցրեցին հայոց պետականության անկմանը:

Խորենացու **«Հայոց պատմություն»**-ը հայ ժողովրդի ծննդաբանության, գոյաբանության, ազգաբանության, մշակութաբանության ամենամեծ հուշարձանն է: Պատմական իրադարձությունների և հայ մարդու նկարագրի ու կերպարի վերլուծությամբ, կռահումներով ու առաջադրություններով այն ազգային գաղափարախոսության հիմք է և ճանապարհի գիրք՝ բացված հայ ժողովրդի բոլոր սերունդների առջև:

Խորենացին որքանով որ ստուգապատում պատմիչ է, նույնքան էլ տիրապետում է խոսքը գեղարվեստորեն ու գեղեցիկ շարադրելու վարպետությանը: Նա հստակ տարբերակում է առասպելն ու պատմությունը: Նրա ստեղծագործության ակունքները եղել են ոչ միայն մատենագիրների աշխատությունները, այլև ժողովրդական գրույցները, գուսանների երգերը, որոնք ինքն անձամբ էլ լսել:

Իր գրքում նա ստեղծել է բազմաթիվ տպավորիչ կերպարներ, որոնք և՛ առասպելական են, և՛ իրական: Անսպառ են բնության գեղեցիկ նկարագրությունները, պատկերավոր խոսքը, բանաստեղծական ներշնչանքը: Խորենացին շատ ուշադիր է իր ոճի հանդեպ և այդ կապակցությամբ ստեղծում է արվեստի մի ամբողջ տեսություն:

## **ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԾՆՆԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ՀՍ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ**

**Նոյ  
Հաբեթ  
Գամեր  
Թիրաս  
Թորգոմ  
Հայկ  
Արամանյակ  
Արամայիս  
Ամասիա  
Գեղամ  
Հարմա  
Արամ  
Արա Գեղեցիկ**

### **ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ**

1. Ո՞վ է Մովսես Խորենացին, էրբ և որտեղ է ծնվել:
2. Ո՞ւմ է աշակերտել Մովսես Խորենացին և որտեղ է կրթություն ստացել:
3. Ինչպե՞ս ընդունեցին Մովսես Խորենացուն հայրենիք վերադառնալուց հետո:
4. Ո՞վ է Մովսես Խորենացուն պատվիրում գրելու «Հայոց պատմություն»-ը և ի՞նչ պահանջ է դնում նրա առջև:
5. Ի՞նչ կառուցվածք և բովանդակություն ունի Մովսես Խորենացու «Հայոց պատմություն»-ը:
6. Ներկայացրե՛ք Խորենացու «Հայոց պատմության»  
ա) առաջին գրքի,  
բ) երկրորդ գրքի,  
գ) երրորդ գրքի  
ընդգրկումը և համառոտ բովանդակությունը:
7. Ինչո՞ւ են հետնորդները Մովսես Խորենացուն տվել «տիեզերահռչակ», «քերթողահայր», «պատմահայր» բնորոշումները:
8. Հիշե՛ք և անգիր արե՛ք Հայկին նախորդող և հաջորդող մեր նախնիների անունները:


# ՀԱՅԿ ԵՎ ԲԵԼ

(Կրճատումներով)

## ՀԱՅԿԻ ԱՊՍԱՄԲՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Այս Հայկը վայելչակազմ էր, թիկնավետ, գեղագանգուր մազերով, վառվռուն աչքերով, հաստ բազուկներով: Սա քաջ և երևելի հանդիսացավ հսկաների մեջ, դիմադրող այն բոլորին, ովքեր ձեռք էին բարձրացնում բոլոր հսկաների և դյուցազունների վրա տիրապետելու: Սա խրոխտանալով ձեռք բարձրացրեց Բելի բռնավորության դեմ այն ժամանակ, երբ մարդկային ազգը սփռվում տարածվում էր բոլոր երկրի լայնության վրա, բազմամբոխ հսկաների, անչափ կատաղիների և ուժավորների մեջ: Որովհետև այս ժամանակ ամեն մի մարդ, խելագարված, սուրն ընկերոջ կողն էր կոխում, ձգտում էին մեկը մյուսի վրա տիրելու, և Բելին պատահմամբ հաջողվեց բռնանալ և բոլոր երկիրը գրավել: Հայկը չկամենալով նրան հնազանդվել, Բաբելոնում Արամանյակ որդին ծնելուց հետո, չվեց դեպի Արարադի երկիրը, որ գտնվում է հյուսիսային կողմերում, իր որդիներով, դուստրերով և որդիների որդիներով, որ զորավոր մարդիկ էին, թվով մոտ երեք հարյուր հոգի, և ուրիշ ընդոծիներով, նրան հարած եկվորներով և բոլոր տունուտեղով: Գնում բնակվում է մի լեռան ստորոտում՝ դաշտավայր տեղում, որտեղ ապրում էին սակավաթիվ մարդիկ սկզբում ցրվածներից: Հայկը, նրանց իրեն հնազանդեցնելով, այնտեղ կալվածում շինում է բնակության տուն և տալիս է ժառանգություն Կադմոսին՝ Արամանյակի որդուն: Սա արդարացնում է ասված անգիր հին զրույցները:

Իսկ ինքն իր մնացած մարդկանցով և տունուտեղով շարժվում է դեպի հյուսիս-արևմուտք և գալիս բնակվում է մի բարձրավանդակ դաշտում և այս լեռնադաշտի անունը կոչում է Հարք, այսինքն թե՛ այստեղ բնակվողները հայրեր են Թորգոմի տան սերունդի: Շինում է և մի գյուղ, որն իր անունով կոչում է Հայկաշեն: Այստեղ էլ պատմության մեջ հիշվում է, թե այս դաշտի հարավային կողմում, մի երկայնանիստ լեռան մոտ սկզբից ապրելիս են եղել սակավաթիվ մարդիկ, ովքեր կամովին հնազանդել են դյուցազնին: Այս էլ արդարացնում է ասված անգիր զրույցները:



Տիտանյան Բելն իր թագավորությունն ամենքի վրա հաստատեց, ապա իր որդիներից մեկին հավատարիմ մարդկանց հետ ուղարկեց հյուսիսի կողմը Հայկի մոտ, որ նա հնազանդության գա և խաղաղությամբ ապրի: «Դու ցուրտ սառնամանիքների մեջ բնակվեցիր, ասում է, սակայն տաքացրո՞ւ և մեղմացրո՞ւ քո հպարտ բնավորության ցուրտ սառնությունը և, ինձ հնազանդելով, խաղաղ ապրիր՝ որտեղ որ կհաճես իմ երկրում բնակության տեղ ընտրել»:

Հայկը Բելի պատգամավորներին ետ է դարձնում՝ խստությամբ պատասխանելով: Ուղարկված պատգամավորները վերադառնում են Բաբելոն:

Այն ժամանակ Տիտանյան Բելը զորք է ժողովում նրա դեմ և հետևակ զորքի մեծ բազմությամբ գալիս հասնում է հյուսիս, Արարադի երկիրը, Կադմոսի տան մոտ: Կադմոսը փախուստ է տալիս Հայկի մոտ, իրենից առաջ արագագնաց մարդիկ ուղարկելով: «Իմացած եղիր, ասում է, ո՛վ մեծո՞ր դյուցազունների մեջ, որ Բելը դիմում գալիս է քո վրա հավերժական քաջերով և երկնադեզ հասակով մրցող հսկաներով: Եվ ես լսելով, որ նա մոտեցել է իմ տանը՝ փախա և ահա տագնապած գալիս եմ քեզ մոտ: Ուրեմն շտապիր մտածել, ինչ որ անելու ես»:

Իսկ Բելը հանդուգն ու անճոռնի ամբոխի զորությամբ, ինչպես մի հեղեղ, որ զառիվայրից ներքև է վիժում, շտապում էր հասնել Հայկի բնակության սահմանները՝ վստահ լինելով զորավոր մարդկանց քաջության և ուժի վրա: Այս ժամանակ ուշիմ և խոհեմ հսկան, գեղազանգուր մագերով, վառվռուն աչքերով, շտապով հավաքում է իր որդիներին և թոռներին, քաջ և աղեղնավոր մարդկանց, թվով շատ նվազ, և ուրիշ մարդկանց, որ ձեռքի տակ ուներ, գնում հասնում է մի ծովակի ափ, որի ջրերն աղի են և մանր ձկներով հարուստ: Եվ իր զորքերը կանչելով՝ ասում է նրանց. «Երբ մենք դուրս կգանք Բելի ամբոխի դեմ, աշխատենք այն տեղին պատահել, որտեղ կանգնած կլինի Բելը քաջերի խուռն բազմության մեջ, որպեսզի կամ մեռնենք և մեր աղխը Բելի ծառայության տակ ընկնի, կամ մեր մատների հաջողությունը նրա վրա ցույց տանք, նրա ամբոխը ցրվի, և մենք հաղթություն տանենք»:

Եվ ամբողջ ասպարեզներ դեպի առաջ անցնելով՝ հասնում են բարձրագույն լեռների միջև մի դաշտաձև տեղ: Եվ ջրերի հոսանքի աջ կողմում բարձրավանդակի վրա ամուր դիրք գրավելով, գլուխները վեր բարձրացնելով՝ տեսնում են Բելի բազմաթիվ ամբոխի անկարգ հրոսակը, որ հանդուգն հարձակումով ցիրուցան վազվզում էին երկրի երեսի վրա, իսկ ինքը՝ Բելը, մեծ ամբոխով հանդարտ կանգնած էր ջրի ձախ կողմում մի բլրակի վրա՝ իբրև դիտանոցում: Հայկը ճանաչեց սպառազինված ջոկատի խումբը, որտեղ Բելը մի քանի ընտիր և սպառազինված մարդկանցով ամբոխի առաջն էր անցել, և երկար տարածություն կար նրա և ամբոխի միջև:

Նա կրում էր եզրանշաններ ունեցող երկաթե գլխանոց, թիկունքի և լանջի վրա՝ պղնձե տախտակներ, սրունքների և թևերի վրա՝ պահպանակներ, մեջքին կապել էր գոտի, որի ձախ կողմից կախված էր երկսայրի սուրը. աջ ձեռքում բռնել էր հսկայական նիզակը, իսկ ձախում՝ վահան, նրա աջ և ձախ կողմում ընտիր զորականներ էին:

Հայկը տեսնելով պինդ սպառազինված Տիտանյանին և նրա աջ ու ձախ

կողմի ընտիր մարդկանց՝ կանգնեցնում է Արամանյակին երկու եղբայրներով աջ կողմը, Կադմոսին իր ուրիշ երկու որդիներով ձախ կողմը, որովհետև աղեղ և սուր գործածելու մեջ կորովի մարդիկ էին, ինքը կանգնեց առջևից և մյուս բազմությունը կանգնեցրեց իր ետևում, դասավորեց մոտավորապես եռանկյունաձև և հանդարտ առաջ շարժվեց:

Երբ երկու կողմի հսկաներն իրար մոտեցան, երկրի վրա ահագին դղրոյուն բարձրացրին իրենց գրոհներով և իրար վրա ահ ու սարսափ գցեցին իրենց հարձակումների ձևերով: Այնտեղ երկու կողմից ոչ սակավ հաղթանդամ մարդիկ սրի բերանի հանդիպելով՝ թավալվում ընկնում էին գետին և կռիվն անորոշ էր մնում՝ երկու կողմերն էլ անպարտելի մնալով: Այս անսպասելի տարակուսական դիպվածը տեսնելով՝ Տիտանյան արքան զարհուրեց և ետ քաշվելով սկսեց բարձրանալ այն բլուրը, որտեղից իջել էր, որովհետև մտածում էր ամբոխի մեջ ամրանալ մինչև բոլոր զորքը հասնի, որպեսզի երկրորդ անգամ ճակատամարտ տա:

Աղեղնավոր Հայկն այս բանը հասկանալով՝ իրեն առաջ է նետում, մոտ է հասնում արքային, պինդ քաշում է լայնալիճ աղեղը, երեքթևյան նետը դիպցնում է նրա կրծքի տախտակին, և սլաքը, շեշտակի թափ անցնելով նրա թիկունքի միջով, գետին է խրվում. այս կերպով, գոռոզացած Տիտանյանը կործանվում, ընկնում է գետին և շունչը փչում: Իսկ ամբոխն այս մեծ քաջությունը տեսնելով՝ փախչում է, ամեն մեկն իր երեսը դարձած կողմը:

Բայց ճակատամարտի տեղը շենացնում, դարձնում է դաստակերտ և անունը դնում է Հայք՝ հաղթական պատերազմի պատճառով. սրանից գավառն էլ մինչև այժմ կոչվում է Հայոց ծոր: Իսկ այն բլուրը, որտեղ Բելն ընկավ քաջ զորականների հետ, Հայկը կոչեց Գերեզմանք, որին այժմ ասում են Գերեզմանակ: Բայց Բելի դիակը դեղերով զմռսելով՝ Հայկը հրամայում է տանել Հարք և թաղել մի բարձրավանդակ տեղում՝ ի տես իր կանանց և որդիների: Իսկ մեր աշխարհը մեր նախնի Հայկի անունով կոչվում է Հայք:

ՀԱՅԿԻՑ ՍԵՐՎԱԾ ՑԵՂԵՐԻ ԵՎ ԶԱՎԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ,  
ԵՎ ԹԵ ՆՐԱՆՑԻՑ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐՆ ԻՆՉ ԳՈՐԾԵՑ

Սրանից հետո Հայկը դառնում է իր բնակության տեղը, իր Կադմոս թոռանը շատ բան է պարգևում պատերազմի ավարից և անվանի մարդիկ՝ իր ընդոծիներին: Նրան հրամայում է իր առաջին տանը բնակություն հաստատել, իսկ ինքը գնում դադարում է Հարք կոչված դաշտում: Սա տարիներ ապրելով՝ մեռնում է, ամբողջ ազգը հանձնելով իր Արամանյակ որդուն:

Սա իր եղբայրներից երկուսին՝ Խոռին և Մանավազին, իրենց բոլոր աղխով թողնում է Հարք կոչված տեղում, ինչպես նաև Մանավազի որդուն՝ Բագին: Սրանցից Մանավազը ժառանգում է Հարքը, իսկ նրա որդին՝ Բագը, ժառանգում է աղի ծովի արևմտյան, հյուսիսային ափերը և գավառն ու ծովը կոչում է իր անունով: Ասում են, որ սրանցից են առաջ եկել Մանավազյան և Բզնունյաց նահապետությունները, նաև Որդունի կոչվածը, որոնք վերջերս, սուրբ Տրդատից հետո, մեկը մյուսին ոչնչացրին պատերազմով: Իսկ Խոռը բազմանում է հյուսիսային կողմերում, շեներ է հիմնում և, ասում են, որ նրանից սկսած մինչև այժմ

շարունակվում է Խոռոխոռունիների ցեղի մեծ նախարարությունը, քաջ և անվանի մարդիկ, որոնք այժմ էլ մեր ժամանակ երևելի են:

Իսկ Արամանյակը, բոլոր բազմությունն առնելով, չվում է դեպի հյուսիս-արևելք և գնում իջնում է մի խոր դաշտավայր, բարձրագագաթ լեռներով շրջապատված, որի միջով մի կարկաչասահ գետ էր անցնում...



## ԲԱՌԱՐԱՆ

**գեղազանգուր** – գեղեցիկ գանգուրներ

**վայելչակազմ** – գեղեցիկ կազմվածք ունեցող

**թիկնավետ** – լայն թիկունքով, թիկնեղ, լայնաթիկունք

**դյուցազուն** – դյուցազն (դից + ազն), աստվածածին հսկա

**խրոխտանալ** – հպարտ կեցվածք ընդունել, խիզախել, հանդգնել

**սփռվել** – ցրվել, ցրիվ գալ, տարածվել

**բազմամբոխ** – հավաքված բազմություն, խումռն ժողովուրդ

**Բաբելոն** – երկիր, որի տիրակալը Բեելն էր

**Արարադի երկիր** – հայոց հայրենիքը Հայաստանից բացի կոչվել է նաև Արարատի (Արարադի) երկիր (Ուրարտու), Բիայնա (Վանի թագավորություն), Ասքանազյան գունդ, Թորգոմա տուն, Հայկազանց երկիր, Հայոց աշխարհ, Հայք, Արմենիա

**ընդոծին** – նույն ընտանիքի անդամներ, նույն ընտանիքում մեծացած, բնիկ

**երկայնանիստ** – երկար դիրք ունեցող

**երկնադեզ** – չափազանց մեծ

**գառիվայր** – դեպի ցած թեքված, բարձրից ցած իջնող

**գնում հասնում է մի ծովակի ափ, որի ջրերն աղի են և մանր ձկներ են պարունակում** – նկատի ունի Վանա լիճը, որի մեջ բազմանում է տառեխ ձուկը, Վանա լիճը կոչվել է նաև Բզնունյաց ծով

**վիժել** – այստեղ՝ հեղեղի թափվելը, հոսելը

**խումռն** – խառը, խռնված, իրար գլխի հավաքված

**աղխ** – նահապետական գերդաստան, ծառաներով ու աղախիններով հանդերձ, տոհմապետի գերդաստանը

**ասպարեզ** – մեկ թափով ձիու վազելու տարածությունը, տարածություն

**բարձրավանդակ** – բարձրադիր հարթություն, սարահարթ

**հրոսակ** – ավազակային խումբ, ասպատակ

**դիտանոց** – դիտելու տեղ, դիտարան, աշտարակ, որտեղից դիտում են շրջակայքը

**սպառազինված** – ոտքից գլուխ զինված, կատարելապես զինված

**երկսայրի (երկսայր)** – երկճյուղ, երկու սրածայր ճյուղերի բաժանված

**կորովի** – հոգով և մարմնով ուժեղ, քաջ, հզոր, կտրիճ

**լայնալիճ աղեղ** – աղեղը կորացրած փայտ է, որի ծայրերը միանում են ձիգ լարով: Կորացրած փայտի և լարի միջև եղած տարածությունը կոչվում է լիճ: Լայնալիճ աղեղ, այսինքն՝ մեծ աղեղ, որպիսին կարող էին գործածել միայն շատ ուժեղ մարդիկ:

Հայկը Խորենացու ամենասիրած հերոսն է, որովհետև հայոց հայրենիքի հիմնադիրն է: Խորենացին հիացմունքով է ներկայացնում Հայկի կերպարը. «Այս Հայկը վայելչակազմ էր, թիկնավետ, գեղազանգուր մազերով, վառվռուն աչքերով, հաստ բազուկներով: Սա քաջ և երևելի հանդիսացավ հսկաների մեջ, դիմադրող այն բոլորին, ովքեր ձեռք էին բարձրացնում բոլոր հսկաների և դյուցազունների վրա տիրապետելու»:

Հայկը և Բելը, ով հայտնի է նաև Նեբրովթ անունով, Նոյի թռռան թռռներն էին Հաբեթի և Քամի սերունդներից: Հայկը չի կամենում Բելին հնազանդվել և Բաբելոնից գնում է Արարատի (Արարադի) երկիրը, որ հյուսիսում էր: Նրա հետ էին իր որդիները, դուստրերը և նրանց ժառանգները, ովքեր մոտ 300 հոգի էին: Նրանց հետ էին նաև «ուրիշ ընդօժիններ և նրանց հարած եկվորներ»:

Նա նախ բնակություն է հաստատում «մի լեռան ստորոտում՝ դաշտավայր տեղում, որտեղ ապրում էին սակավաթիվ մարդիկ»: Հնազանդեցնելով նրանց՝ այստեղ բնակեցնում է թռռանը՝ Արամանյակի որդի Կադմոսին: Մնացած մարդկանցով Հայկը շարժվում է հյուսիս-արևմուտք, հաստատվում «մի բարձրավանդակ դաշտում և լեռնադաշտի անունը կոչում է Հարթ», որ նշանակում է «այստեղ բնակվողները հայրեր են Թորգոմի տան սերունդի»: Շինում է մի գյուղ՝ Հայկաշեն և իրեն ենթարկում այստեղ բնակվող սակավաթիվ մարդկանց:

Հայկի ինքնուրույնությունը դուր չի գալիս Տիտանյան Բելին, ով նրան հնազանդության է կոչում. «Դու ցուրտ սառնամանիքների մեջ բնակվեցիր, – ասում է Բելը, – սակայն տաքացրո՞ւ և մեղմացրո՞ւ քո հպարտ բնավորության ցուրտ սառնությունը և, ինձ հնազանդելով, խաղաղ ապրիր՝ որտեղ որ կհաճես իմ երկրում բնակության տեղ ընտրել»: Հայկը մերժում է: Բելը «հավերժական քաջերով և երկնադեզ հսկաներով» նախ հարձակվում է Կադմոսի վրա և նրան փախուստի մատնում, ապա շարժվում է Հայկի վրա: Հայկն իր քաջերով դուրս է գալիս Վանա լճի ափ և ասում՝ կամ հաղթենք ու ազատ ապրենք, կամ մեռնենք և մեր տոհմը Բելի ծառայության տակ ընկնի:

Հայկը եռանկյուն սեպածև դասավորում է իր մարդկանց, և ինքն առջևից հարձակվում սպառազեն Բելի վրա: Սկզբում երկու կողմերն էլ անպարտելի են մնում: Բելի համար այս վիճակն անսովոր էր և ետ է մղվում: Դա տեսնում է Հայկը, առաջ է նետվում և լայնալիճ աղեղից արձակած երեք թևանի նետով այնքան ուժգին է խոցում նրա կուրծքը, որ «սլաքը, շեշտակի թափով անցնելով նրա թիկունքի միջով, գետին է խրվում»: Տապալված Բելին տեսնելով՝ նրա գործը փախուստի է դիմում:

Բելը չար ուժի մարմնացում էր: Նա ոչ միայն Բաբելոնի թագավորն էր, այլև կրոնական առաջնորդը: Նրա Նեբրովթ անունն առաջացել է «marad» բառից և նշանակում է՝ «նա ապստամբեց»: Այսինքն՝ նա ժողովրդին ապստամբ դարձրեց Աստծու դեմ, արհամարհեց Աստծուն, վերածվեց բռնակալի, ինչի համար էլ պատժվեց Հայկի ձեռքով:

Այստեղից՝ Հայկը ազատության ձգտող բարի ուժերի մարմնավորումն է, Բելը՝ չար:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչպիսիք է Հայկը: Ինչպե՞ս է Մովսես Խորենացին նկարագրում նրան:
2. Ինչո՞ւ է ըմբոստանում Հայկը Բելի դեմ և ի՞նչ գործողություններ է ձեռնարկում:
3. Ինչպե՞ս է Մովսես Խորենացին նկարագրում Հայկի կողմից հայոց հայրենիքի հիմնադրումը:
4. Ո՞վ էր Բելը և ի՞նչ էր ուզում Հայկից:
5. Ովքե՞ր էին Կադմոսը, Արամանյակը, Խոռը, Մանավազը:
6. Ի՞նչ խոսքերով է Հայկը դիմում յուրայիններին՝ ընդդեմ Բելի ելնելու համար:
7. Հայկի և Բելի պատերազմը: Նկարագրե՛ք, թե ինչպե՞ս է Խորենացին ներկայացնում երկու կողմերի ընդհարումը և ինչպիսի՞ ելք է ունենում այն:
8. Հիշե՛ք Հարթ, Հայկաշեն, Հայք, Հայոց ծոր, Գերեզմանք անունները և մտապահե՛ք դրանց ծագումն ու նշանակությունը: Բացատրե՛ք, թե դրանցից յուրաքանչյուրն ի՞նչ է նշանակում:
9. Տարբեր ժամանակներում ի՞նչ անուններ է ունեցել հայոց հայրենիք Հայաստանը:
10. Խոսե՛ք Հայկի որդիների տարածման, Հայաստանը բնակեցնելու և նրանցից նախարարական տոհմեր ստեղծվելու մասին:

## ԱՐԱ ԳԵՂԵՑԻԿ ԵՎ ՇԱՄԻՐԱՄ

ԱՐԱՅԻ ԵՎ ՆՐԱ ՄԱՀՎԱՆ ՄԱՍԻՆ ՇԱՄԻՐԱՄԻՑ՝ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԵՋ

Արան Նինոսի վախճանվելուց քիչ տարիներ առաջ խնամակալ դարձավ իր հայրենիքին, Նինոսից նույնպիսի շնորհի արժանանալով՝ ինչպես և իր հայր Արամը: Բայց այն վավաշոտ և անառակ Շամիրամը, շատ տարիներից ի վեր նրա գեղեցկության մասին լսած լինելով, ցանկանում էր նրան տեսնել, բայց հայտնի կերպով չէր համարձակվում որևէ բան անել: Իսկ Նինոսի վախճանվելուց կամ Կրետե փախչելուց հետո, ինչպես համոզված եմ, Շամիրամն իր ախտը համարձակ պատվելով՝ Արա Գեղեցիկի մոտ պատգամավորներ է ուղարկում ընծաներով ու նվերներով, և շատ աղաչանքներով ու պարզների խոստումով խնդրում է գալ Նինվե իր մոտ, և կամ իրեն կին առնել ու բոլորի վրա թագավորել, կամ նրա ցանկության կամքը կատարել ու մեծամեծ նվերներով խաղաղությամբ իր տեղը դառնալ:

Երբ պատգամավորները շատ անգամ երթևեկություն կատարեցին, և Արան չհամաձայնեց, ապա Շամիրամը, սաստիկ չարանալով, պատգամավորությունը դադարելուց հետո առնում է իր զորքի բազմությունը և շտապում է գնալ հասնել Հայոց երկիրը՝ Արայի վրա, բայց որքան դեմքից կարելի էր գուշակել, շտապում էր ոչ այնքան նրան սպանել կամ հալածել, որքան նվաճել կամ իր ձեռքը գցել, որպեսզի իր ցանկության կամքը կատարի. որովհետև մոլեգին ցանկությունից նա տռփանքով սիրահարվել էր Արայի մասին եղած պատմություններին՝ որպես թե նրան տեսնելիս լիներ: Փոխով գալիս հասնում է Արայի դաշտը, որ նրա անունով կոչվեց Այրարատ: Ճակատը պատրաստելիս նա իր զորապետերին պատվեր է տալիս, եթե

դեպքը բերի, ջանալ կենդանի պահել Արային: Կռվի ժամանակ Արայի զորքը ջարդվում է, Արան էլ ընկնում է պատերազմի մեջ Շամիրամի կտրիճներից: Հաղթությունից հետո տիկինը դիակապուտներ է ուղարկում ճակատամարտի տեղը՝ դիակների մեջ փնտրելու իր ցանկալի տարփածուին: Արային գտնում են մեռած քաջամարտիկների մեջ: Հրամայում է նրան տանել դնել ապարանքի վերնատունը:

Երբ Հայոց զորքը պատրաստվում էր նորից պատերազմելու Շամիրամ տիկնոջ հետ՝ Արայի մահվան վրեժն առնելու համար, Շամիրամն ասում է. «Ես իմ աստվածներին հրամայեցի նրա վերքերը լիզել, և նա կկենդանանա»: Միևնույն ժամանակ նա հույս ուներ կախարդական

ոյությունները Արային կենդանացնել, սեփական ցանկությունից ցնորված: Բայց երբ դիակն սկսեց նեխել, հրամայեց զցել նրան մի մեծ վիհի մեջ ու ծածկել. իսկ իր սիրեկաններից մեկին զարդարելով ու ծածուկ պահելով՝ նրա մասին այսպիսի լուր է տարածում. «Աստվածներն Արային լիզելով ու կենդանացնելով՝ մեր փափագն ու ցանկությունը կատարեցին. ուստի այսուհետև նրանք ավելի ևս արժանի են մեզանից պաշտվելու և փառավորվելու, իբրև մեզ ուրախացնողներ և մեր կամքը կատարողներ»: Նաև մի նոր արձան է կանգնեցնում աստվածների անունով և մեծամեծ զոհերով պատվում է նրան, ցույց տալով, իբր թե աստվածների այս զորությունը կենդանացրեց Արային: Այսպիսի լուրեր տարածելով Հայոց աշխարհում և բոլորին համոզելով՝ հուզմունքը խաղաղեցնում է:

Արան տարիներ ապրելով՝ ծնեց Կարդոսին:



## ԲԱՌԱՐԱՆ

**Արա, Արա Գեղեցիկ** – Հայկի սերունդից հայոց արքա, Արամի որդին: Մարմնավորում է հեթանոս հայերի հավատալիքները մեռնող և հառնող աստծու, բնության զարթոնքի, նաև ընտանեկան առաքինության և ողջամտության մասին: Շարունակել է Ասորեստանի դեմ ուղղված հայոց ազատագրական պայքարը: Արա Գեղեցիկի և Շամիրամի առասպելը ձևավորվել է Ք.ծ.ա. 2-րդ հազարամյակում, հիշեցնում է Օգիրիսի և Իզիդայի, Թամնուզի և Իշտարի, Ադոնիսի և Աֆրոդիտի (Աստարտե) առասպելները: Արա Գեղեցիկի անունով են կոչվել Այրարատ, Արա լեռ տեղանունները:

**Նինոս** – Ասորեստանի թագավորը

**Արամ** – Արամ աշխարհակալ, Արա Գեղեցիկի հայրը

**Շամիրամ (Շամնուրամաթ, Շամիրամովթ, Սամիրամաթ, Սեմիրամիս, Սեմիրամիդա)** – Ասորեստանի թագուհի, Շամշիադադ V-ի (Ք.ծ.ա. 823–811) կինը, ամուսնու մահից հետո մանկահասակ որդու՝ Ադադնիրար III թագավորի խնամակալուհին (Ք.ծ.ա. 810–806):

Պատմական այս անձնավորության շուրջ ստեղծվել են բազմաթիվ առասպելներ, որոնցից մեկն էլ գրի է առել Խորենացին: Ըստ հույն պատմիչների՝ Շամիրամը համարվել է սիրո և պտղաբերության ասորական Դերկետո աստվածուհու (այլ տարբերակով՝ Աստարտա) դուստրը: Իբր մորից լքված մանկահասակ Շամիրամին լեռներում կերակրել են աղավնիները և խնամել հովիվները: Ըստ այդմ՝ Սեմիրամիդա հունարեն նշանակում է լեռնային աղավնի: Հավանական է նաև անվան Սեմի դուստր բացատրությունը: Ըստ ավանդազրույցի՝ Շամիրամն ամուսնացել է Բաբելոնի արքա Նինոսի խորհրդական և Ասորիքի կուսակալ Օննեսի հետ, այնուհետև դարձել Նինոսի կինը: Նինոսի մահից հետո որդու՝ թագաժառանգ Նինուասի խնամակալուհին էր: Վարել է պատերազմներ, կառուցել քաղաքներ, պաշտպանական ամրություններ, ջրանցքներ: Նրան է վերագրվում Բաբելոնի կախվող այգիների հիմնադրումը, թեև կառուցվել է 6-րդ դարում Նաբուգոդոնոսոր III թագավորի օրոք և համարվում է հին աշխարհի յոթ հրաշալիքներից մեկը:

Ըստ ավանդազրույցների՝ Շամիրամը վարել է շվայտ կյանք, վատնել արքունական գանձերը, ինչի համար հալածվել է որդուց, վերածվել աղավնու և դարձել աստվածուհի: Ըստ մեկ այլ տարբերակի՝ հալածվել և սպանվել է Նինուաս որդու կողմից կամ վերածվել քարե արձանի:

**Կրետե** – կղզի Միջերկրական ծովում

**պատգամավոր** – այստեղ՝ ներկայացուցիչ, հիմնական նշանակությունը՝ ժողովրդի կողմից ընտրված պետական մարմնի անդամ

**Նինվե** – Ասորեստանի մայրաքաղաքը

**մոլեգին** – անզուսպ, կատաղի, սաստիկ

**տռփանք** – բուռն ցանկություն, բուռն սեր՝ փափագ, տենչ, տարփանք, կիրք

**փութոյ** – շտապ, հապճեպ, եռանդով, ժրաջանությամբ

**կտրիճ** – քաջ, արի, խիզախ. պետք է տարբերել կտրիչ (կտրող սարք) բառից. կտրիճ–ը գրվում է ճ–ով, կտրիչ–ը՝ չ–ով

**դիակապուտ** – դիակ կողոպտող, դիակ գողացող, դիակի վրայից զգեստներ, արդուզարդ թալանող

**տարփածու** – սիրեկան, սիրուհի, ցանկալի, տենչալի, սիրահար, երկրպագու

**քաջամարտիկ** – քաջ կռվողներ, խիզախ զինվորներ

**ցնորվել** – խելագարվել, խելքը գցել, ցնդել

**վիհ** – անդունդ, խոր փոս, խորխորատ, հոր

**Կարդոս** – Արա Գեղեցիկի որդին՝ ծնված իր սիրելի կին Նուարդից

Արա Գեղեցիկի և Շամիրամի մասին պատմող ապքը Մովսես Խորենացու գրի առած գեղեցիկ առասպելներից մեկն է: Արա Գեղեցիկի և Շամիրամի կերպարներին իրենց բանաստեղծություններում, բալլադներում և պոեմներում անդրադարձել են Վահան Տերյանը, Եղիշե Չարենցը, Կոստան Զարյանը: Նաիրի Զարյանը գրել է «Արա Գեղեցիկ» դիցապատմական ողբերգությունը:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ո՞վ էր Արա Գեղեցիկը: Ի՞նչ գիտեք նրա մասին:
2. Ո՞վ էր Արայի հայրը, ո՞վ էր Արայի կինը, և ո՞վ էր Արայի որդին:
3. Ինչպե՞ս է Մովսես Խորենացին ստուգաբանում Այրարատ տեղանվան առաջացումը:
4. Ո՞վ էր Շամիրամը, ի՞նչ գիտեք նրա մասին, այլ կերպ ինչպե՞ս է հնչում նրա անունը և ի՞նչ բացատրություններ ունի:
5. Ի՞նչ առաջարկ է անում Շամիրամը Արա Գեղեցիկին և ի՞նչ պատասխան է ստանում:
6. Արա Գեղեցիկից մերժվելուց հետո ի՞նչ է ձեռնարկում Շամիրամը:
7. Ինչպե՞ս է ավարտվում պատերազմը, և Արային վերակենդանացնելու համար ի՞նչ միջոցների է դիմում Շամիրամը:
8. Արային վերակենդանացնելու նպատակով որտե՞ղ են դնում նրա մարմինը և ովքե՞ր պետք է նրան նոր կյանք պարգևեին:
9. Ովքե՞ր են հետագայում գեղարվեստական նոր կյանք պարգևել «Արա Գեղեցիկ» առասպելին:

## ՏԻԳՐԱՆ ԵՎ ԱԺԴԱՀԱԿ

ՏԻԳՐԱՆԻ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԷՐ ԱՄԵՆ ԲԱՆՈՎ

Անցնենք այսուհետև գրելու Տիգրանի և նրա գործերի մասին: Որովհետև սա մեր թագավորներից ամենահզոր և ամենախոհեմն էր և նրանցից բոլորից քաջ: Նա Կյուրոսին աջակից եղավ Մարաց իշխանությունը տապալելու, հույներին էլ ոչ քիչ ժամանակ նվաճելով՝ իրեն հնազանդեցրեց, և մեր բնակության սահմաններն ընդարձակելով՝ հասցրեց մինչև հին բնակության սահմանների ծայրերը. բոլոր իր ժամանակակիցներին նախանձելի եղավ, իսկ հետո եկողներին ցանկալի թե՛ ինքը և թե՛ իր ժամանակը:

Եվ ի՞նչ իսկական մարդը, ով համակրում է արիական բարքի և խոհակաՆության, չի զվարճանա սրա հիշատակությամբ և չի ձգտի նրա նման մարդ լինել: Նա տղամարդկանց գլուխ կանգնեց և ցույց տալով քաջություն՝ մեր ազգը բարձրացրեց, և մեզ, որ օտարների լծի տակ էինք, դարձրեց շատերին լուծ դնողներ և հարկապահանջներ. ոսկու և արծաթի, և պատվական քարերի, և զգեստների, և զանազան գույների ու գործվածքների հարստություններ տղամարդկանց և կանանց համար առհասարակ բազմացրեց, որոնցով տգեղները գեղեցիկների նման սքանչելի էին երևում, իսկ գեղեցիկներն այն ժամանակի համեմատ ոչուցազունների էին նմանում: Հետևակ կռվողները ձիավոր դարձան, պարսերով կռվողները՝ հաջող աղեղնավորներ, կոպալներով կռվողները զինվեցին սրերով ու տեգավոր նիզակներով. մերկերը պատսպարվեցին վահաններով և երկաթե զգեստներով: Եվ երբ նրանք մի տեղ հավաքվեին, միայն նրանց արտաքին տեսքն ու նրանց պահպանակների ու զենքերի փայլը բավական էին թշնամիներին հալածելու և վանելու: Նա խաղաղություն և շենություն բերեց, բոլորին լիացրեց յուղով և մեղրով:

Այս և այսպիսի ուրիշ շատ բաներ բերեց մեր աշխարհին այս խարտյաչ և

մազերի ծայրը գանգուր Երվանդյան Տիգրանը՝ գունեղ երեսով, քաղցր նայվածքով, ուժեղ սրունքներով, գեղեցիկ ոտներով, վայելչակազմ և թիկնավետ, կերակուրների և ըմպելիքների մեջ պարկեշտ, ուրախությունների մեջ օրինավոր, ում մասին մեր հները, որոնք փանդիռներով երգում էին, ասում էին, թե մարմնի ցանկությունների մեջ էլ չափավոր է եղել, մեծիմաստ և պերճախոս և լի բոլոր հատկություններով, որ պիտանի են մարդուն: Եվ այս գրքում ինչ կա ինձ ավելի սիրելի, քան սրա մասին եղած գովեստներն ու պատմությունը երկարել: Նա, ամեն բանի մեջ արդարադատ և հավասարասեր կշեռք ունենալով, ամեն մեկի կյանքը կշռում էր իր մտքի լծակով. չէր նախանձում լավագույններին, չէր արհամարհում նվաստներին, այլ աշխատում էր ընդհանրապես ամենքի վրա տարածել իր խնամքի զգեստը:

Սա սկզբում դաշնակից լինելով Աժդահակին, որ Մարացի էր, նրան կին է տալիս իր Տիգրանուհի քույրը, ում թախանձանքով խնդրում էր Աժդահակը: Որովհետև Աժդահակը մտածում էր՝ այսպիսի ազգականության շնորհիվ կամ հաստատուն սեր պահպանել Տիգրանի հետ, կամ այս կերպով հեշտությամբ դավաճանորեն սպանել: Որովհետև նրա միտքը կասկածի մեջ էր, երբ մի անսպասելի մարգարեություն նրան ցույց տվեց առաջիկայում նրան պատահելիքը:

ԱԺԴԱՀԱԿԻ ԵՐԿՅՈՒՂԻ ԵՎ ԿԱՍԿԱԾԱՆՔԻ ՄԱՍԻՆ ԿՅՈՒՐՈՍԻ ԵՎ  
ՏԻԳՐԱՆԻ ՍԻՐՈ ԵՎ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ

Բայց նրա այս մտածմունքների առիթն էր մտերմական դաշնակցությունը, որ Կյուրոսն առաջարկեց Տիգրանին. և շատ անգամ, երբ Աժդահակն այս բանը հիշում էր, քունը փախչում էր նրանից, և անդադար նա խորհրդակիցներին այսպիսի հարց էր տալիս. «Ինչպիսի՞ հնարքներով մենք պիտի կարողանանք քանդել սիրո կապը պարսիկի և բազմաբյուրավոր հայի միջև»: Եվ այսպիսի շփոթ մտածմունքների ժամանակ առաջիկա դեպքերը նրան հայտնվում են երազի մեջ՝ նախատեսությամբ, այս կերպ, ինչպես ասում է պատմողը:

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԱԺԴԱՀԱԿԸ, ԿԱՍԿԱԾԱՆՔՆԵՐԻ ՄԵՋ ԼԻՆԵԼՈՎ,  
ԻՐԵՆ ՊԱՏԱՀԵԼԻՔ ԴԻՊՎԱԾԸ ՏԵՄՆՈՒՄ Է ԱՔԱՆՉԵԼԻ ԵՐԱԶՈՎ

Այդ օրերում ոչ փոքր վտանգ էր սպառնում Մարացի Աժդահակին Կյուրոսի և Տիգրանի միաբանությունից: Ուստի և մտքերի սաստիկ ավեկոծությունից՝ գիշերը քնի մեջ տեսիլքով երևաց նրան այն, ինչ որ արթուն ժամանակ ոչ աչքով էր տեսել երբևէ և ոչ ականջով լսել: Ուստի քնից վեր թռչելով՝ չի սպասում խորհրդակցության ժամին սովորական կարգով, այլ իսկույն, մինչդեռ գիշերվան բավական ժամեր դեռ կային, կանչում է խորհրդակիցներին և տրտում երեսով գետնին նայելով՝ սրտի խորքերից հառաչանք է արձակում: Երբ խորհրդակիցները պատճառը հարցնում են, նա ժամերով ուշացնում է պատասխանը և վերջապես հեծկլտանքով սկսելով՝ բաց է անում սրտում ծածուկ պահած խորհուրդներն ու կասկածը, նաև սարսափելի տեսիլքը:

«Ո՛վ սիրելիք, ասում է նա, երազումս թվում էր, թե ես մի անծանոթ երկրում եմ գտնվում, մի լեռան մոտ, որ երկրի վրա երկար բարձրացած էր, և որի

գագաթը թվում էր սաստիկ սառնամանիքով պատած, և կարծես ասելիս լինեին, թե այս Հայկազանց երկրումն է: Եվ երբ ես երկար նայում էի այդ լեռան, մի ծիրանազգեստ կին երևաց ինձ երկնագույն քողով, բարձր լեռան գագաթին նստած, խոշոր աչքերով, բարձրահասակ, կարմիր այտերով, որ բռնված էր ծնունդի երկունքով: Երբ ես երկար նայում էի այս երևույթին և հիացման մեջ էի, հանկարծ կինը երեք զավակ ծնեց, կատարյալ դյուցազուններ՝ հասակով և բնությամբ: Առաջինն առյուծ հեծած՝ սլանում էր դեպի արևմուտք, երկրորդն ինձ (կենդանի) հեծած դեպի հյուսիս էր դիմում, իսկ երրորդը վիթխարի վիշապ սանձած՝ արշավակի մեր տերության վրա էր հարձակվում:

Այս խառն երազների մեջ մեկ էլ ինձ թվաց, թե կանգնած եմ իմ արքունի ապարանքի վրա. տեսնում էի նրա կտուրը բազմաթիվ գեղեցիկ շատրվաններով զարդարված, մեզ պսակող աստվածներին հրաշալի տեսքով այնտեղ կանգնած, և ինձ՝ ձեզ հետ միասին նրանց զոհերով ու խունկերով պատվելիս: Երբ հանկարծ վեր նայեցի, տեսա, որ այն վիշապ հեծած մարդը կարծես արծվի թևերով սլանալով՝ վրա հարձակվեց և մոտենալով ուզում էր աստվածներին կործանել: Իսկ ես՝ Աժդահակս, մեջ ընկնելով, այն հարձակումն ինձ վրա ընդունեցի, սքանչելի դյուցազնի հետ կռվի բռնվելով: Նախ նիզակների տեգերով իրար մարմինները խոցոտելով՝ արյան վտակներ վար հոսեցրինք և ապարանքի արեգակի նման փայլող երեսն արյան ծով դարձրինք: Հետո ուրիշ զենքերով կռվեցինք ոչ սակավ ժամեր:

Բայց ինչ անօգուտ է խոսքս երկարեցնել. որովհետև գործի վերջն իմ կործանումը եղավ: Տազնապից սաստիկ քրտինքը կոխեց, և քունս փախավ, և այլևս կենդանի չեմ թվում: Որովհետև այս երևույթների երազն ուրիշ բան չի նշանակում, քան այն, որ Հայկազյան Տիգրանի կողմից բռնի հարձակում պիտի կատարվի մեզ վրա: Բայց ո՞վ ձեզանից, աստվածների օգնությունից հետո, խոսքով ու գործով մեզ բարիք խորհելով չի հուսա մեզ թագավորակից լինել»:

Եվ խորհրդակիցներից շատ օգտակար առաջարկություններ լսելով՝ շնորհակալությամբ պատվում է նրանց:

ԽՈՐՀՐԴԱԿԻՑՆԵՐԻ ԽՈՍՔԵՐԸ, ՀԵՏՈ ԵՎ ԻՐ ՄՏԱԾԱԾ ՄԻՋՈՑԸ ԵՎ  
ԱՆՄԻՋԱԿԱՆ ԳՈՐԾԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

«Ձեզանից, ո՞վ սիրելիներ, – ասում է Աժդահակը, – շատ հանճարեղ և իմաստուն բաներ լսելուց հետո՝ կասեմ և ես, ինչ որ աստվածների օգնությունից հետո մտածում եմ իբրև օգտակար միջոց: Որովհետև թշնամիներից զգուշանալու և նրանց մտադրություններին ծանոթանալու համար ոչ մի բան այնքան մեծ օգնություն չի բերում, քան երբ մեկը թշնամուն կորուստ պատրաստի՝ սիրո միջոցով նրան դավելով: Եվ այս ամենը մենք այժմ հնարավորություն չունենք կատարելու ոչ գանձերի միջոցով և ոչ պատրողական խոսքերով, այլ միայն այն կերպով, որ ես մտադիր եմ գործադրել: Իմ խորհուրդը կատարելու՝ որոգայթ սարքելու միջոցն է նրա քույր Տիգրանուհին, գեղեցկագույնն ու խոհեմը կանանց մեջ: Որովհետև այսպիսի խնամիական ազգականությունները համարձակ երևակայության միջոցով ընդարձակ հնարավորություն են ստեղծում թաքուն կերպով դավեր լարելու կամ նրա մտերիմներին գանձեր ու պատիվ

խոստանալով՝ հրամայել նրան հանկարծակի սպանել սրով կամ թույների միջոցով, կամ նրա մտերիմներին ու կուսակալներին գանձերով նրանից բաժանել և այս կերպով նրան, իբրև մի անզոր տղայի, մեր ձեռքը գցել»:

Բարեկամների այս խորհուրդն ազդու համարելով՝ գործի են ձեռնարկում: Աժդահակն իր խորհրդակիցներից մեկին մեծ գանձ տալով՝ ուղարկում է Տիգրանի մոտ մի թղթով, որ հետևյալ բովանդակությունն ուներ:

ԱԺԴԱՀԱԿԻ ԹՈՒՂԹԸ, ՏԻԳՐԱՆԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԻԳՐԱՆՈՒՀՈՒՆ ՄԱՐԱՍՏԱՆ ՌԻՂԱՐԿԵԼԸ

«Քո սիրելի եղբայրությունդ գիտի, որ այս աշխարհի կյանքում աստվածները մեզ չեն պարգևել ավելի օգտակար բան, քան սիրելիների բազմություն, իհարկե իմաստուն և հզորագույնների, որովհետև այս դեպքում դրսից խռովություններ չեն համարձակվում ծագել, և եթե պատահեն, իսկույն կընկճվեն, իսկ ներսում նրանք կհալածվեն, քանի որ այսպիսի չարությունը ոչ ոքից չի կարող մուտք գործել: Արդ՝ տեսնելով բարեկամությունից առաջ եկող այս օգուտը, ես կամեցա ավելի հաստատուն դարձնել ու խորացնել մեր մեջ եղած սերը, որպեսզի երկուսս էլ բոլոր կողմերից ապահովվելով՝ ամբողջ և հաստատ պահենք մեր տերությունները: Եվ այս բանը կկատարվի, եթե ինձ կնության տաս քո քույր Տիգրանուհուն՝ մեծ

հայոց օրիորդին. թերևս նրա համար նաև բարի համարես, որ թագուհիների թագուհի լինի: Ողջ եղիր, մեր թագակից և սիրելի եղբայր»:

Պատգամավորը գալիս է, գեղեցիկ օրիորդի վերաբերյալ գործը կատարում է, որովհետև Տիգրանը համաձայնում է իր քույր Տիգրանուհուն Աժդահակին կնության տալ: Դեռ չգիտենալով նրա կողմից սարքված դավաճանությունը՝ քրոջն ուղարկում է թագավորավայել կարգով: Աժդահակը նրան կին առնելով՝ ոչ միայն իր սրտում թաքցրած նենգության, այլև Տիգրանուհու գեղեցկության պատճառով իր կանանց մեջ առաջին է դարձնում, իսկ ներքուստ նյութում է չարություն:



ԹԵ ԻՆՉՊԵՍ ՆԵՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՏՆԻ ԴԱՐՁԱՎ, ԵՎ  
ՊԱՏԵՐԱԶՄՆ ՍԿՍՎԵՑ, ԵՎ ԱԺԴԱՀԱԿԻ ՄԱՀՆ ԱՅՐ ԿՌՎՈՒՄ

Սրանից հետո, երբ Աժդահակը Տիգրանուհուն տիկնության մեջ հաստատեց, իր թագավորության մեջ ոչինչ չէր գործում առանց նրա հավանության, այլ ամեն բան կարգադրում էր նրա ասածի պես և հրամայում էր, որ բոլորը նրա հրամանին հնազանդեն: Այս այսպես կարգադրելով՝ սկսում է այնուհետև մեղմով խաբեությանը նրան գրավել: «Դու չգիտես, – ասում է նա, – որ քո եղբայր Տիգրանը նախանձել է, որ դու Արյաց տիկին ես դարձել, նրան գրգռում է նրա կինը՝ Զարուհին: Ինչ կլինի սրա հետևանքը, եթե ոչ, որ նախ ես կմեռնեմ և հետո Զարուհին Արյաց վրա տիկին կդառնա և աստվածուհիների տեղը կբռնի: Ուրեմն քեզ մնում է ընտրել այս երկուսից մեկը՝ կամ լինել եղբայրասեր և հանձն առնել խայտառակ կործանում Արյաց առաջ, կամ քո բարին հասկանալով՝ մի օգտակար բան մտածել և առաջիկա անցքերի մասին հոգավ»:

Այս խորամանկության մեջ թաքցրած էր և սպառնալիք, թե Տիգրանուհին կմեռնի, եթե մարապարսկացու ցանկության համաձայն չվարվի: Իսկ խորագետ գեղեցկուհին, այս դավաճանությունը հասկանալով, սիրալիր խոսքերով է պատասխանում Աժդահակին և մտերիմների միջոցով շտապով եղբորը հայտնում է Աժդահակի նենգությունը:

Աժդահակն այնուհետև գործի է ձեռնարկում, պատգամավորների ձեռքով առաջարկելով Տիգրանին, որ բարեկամական տեսակցության համար գա երկու թագավորությունների սահմանագլուխ մի տեղում, իբրև թե մի կարևոր գործ ու խոսելիք կա, որ չի կարելի կատարել գրի և պատվիրակության միջոցով, այլ միայն անձամբ դեմ առ դեմ պատահելով: Սակայն Տիգրանը, պատվիրակության դիտավորությունը գիտենալով, Աժդահակի խորհուրդներից ոչ մի բան ծածուկ չի թողնում, այլ գրով հայտնում է, ինչ որ նրա սրտի խորքում կար: Երբ այսպիսով չարությունը հայտնի դարձավ, այլևս ոչ մի խոսքով, ոչ մի խորամանկությամբ չէր կարելի չարությունը քողարկել:

Եվ Հայոց թագավորը զորք է ժողովում Կապադովկիայի սահմաններից, Վրաց և Աղվանից ընտիրները՝ որքան որ կային, և Մեծ ու Փոքր Հայքի բոլոր ընտիրները, և բոլոր զորությամբ դիմում է Մեդացոց կողմերը: Վտանգը հարկադրում է Աժդահակին Հայկազունի դեմ ելնել պատերազմով ոչ փոքր բազմությամբ: Հակառակության գործը ձգձգվում էր մինչև հինգ ամիս, որովհետև արագ ու առողջ գործը հիվանդանում էր, քանի որ Տիգրանը մտածում էր իր սիրելի քրոջ՝ Տիգրանուհու մասին: Նա աշխատում էր այնպիսի մի հնար գտնել, որ Տիգրանուհին փրկվելու ճար գտնի: Երբ այս հաջողվում է, մոտենում է կռվի ժամը:

Բայց գովում են իմ քաջամարտիկ նիզակավորին, որ բոլոր անդամներով համաչափ էր, մեկը մյուսին ամեն կերպ պատշաճեցրած, կատարյալ գեղեցիկ հասակով, առույգ և ուժի կողմից իրեն հավասարը չունեցող: Եվ ինչո՞ւ են խոսքս երկարեցնում. կռվի ժամանակ Աժդահակի երկաթե ամուր զրահն ինչպես ջուր ճեղքելով՝ Աժդահակին շամփրում է իր նիզակի ընդարձակ տեգին, և ձեռքը ետ քաշելիս՝ նրա թոքի կեսն էլ գենքի հետ դուրս է բերում: Բայց կռիվն սքանչելի էր, որովհետև քաջերը քաջերի հանդիպելով՝ ոչ մեկը մյուսին շուտով թիկունք չէր դարձնում, ուստի պատերազմը երկարում է բավական ժամեր, մինչև գործին վերջ է դնում Աժդահակի մահը: Այս բարեբախտ դիպվածը նոր փառք է ավելացնում Տիգրանին:



## ԲԱՌԱՐԱՆ

**Տիգրան** – խոսքը հայոց Տիգրան Առաջին կամ Տիգրան Երվանդյան (Ք.ծ.ա. 560–524) արքայի մասին է, ում Խորենացին շփոթել է Տիգրան Երկրորդի կամ Տիգրան Մեծի (Ք.ծ.ա. 95–55) հետ

**Աժդահակ** (Աստիագես, Ք.ծ.ա. 585–550) – Մարաստանի թագավոր, ում դեմ ապստամբել է Տիգրան Երվանդյանը, ինչն էլ դարձել է Մովսես Խորենացու ավանդազրույցի նյութ

**մարեր, մեդացիներ** – հնագույն ժողովուրդ: Երկիրը՝ Մարաստան, Մեդիա, գտնվել է Իրանական բարձրավանդակի հյուսիս-արևմուտքում, մայրաքաղաքը՝ Եկբատան: Իր հզորությանն է հասել Ք.ծ.ա. 7-րդ դարում:

**Կյուրոս** – Կյուրոս II Մեծ (ծննդյան թիվն անհայտ է, մահացել է Ք.ծ.ա. 529–530 թվականների միջակայքում) Պարսից արքա: Աքեմենյան արքայատոհմի հիմնադիրը: Աժդահակի թոռը՝ դստեր որդին: Ապստամբել է Աժդահակի դեմ և հաղթել: Ստեղծել է մեծ տերություն՝ Հնդկաստանից մինչև Բաբելոն: Իրեն է ենթարկել Հայաստանը: Նրա մտերիմներից էր Տիգրան Երվանդյան հայոց թագաժառանգը:

**օտարի լծի տակ լինել** – օտար իշխանությունների ենթակա լինել՝ այստեղից բխող բոլոր հետևանքներով՝ հարկեր վճարել, զորք տրամադրել, հնազանդ լինել և այլն

**հետևակ կռվողներ** – ձի չունեցող զինվորներ, ոտքով գնացողներ

**պարսերով կռվողներ** – պարս կամ պարսատիկ՝ թշնամու վրա քար նետելու ձեռքի գործիք (զենք)

**աղեղնավորներ** – նետ ու աղեղով կռվողներ

**կոպալ** – գավազան, մահակ, հաստ գլխով ամուր փայտ

**տեգ** – նիզակի ծայրի սուր երկաթը, որով խոցում են, սլաք

**նիզակ** – փայտե երկար կոթով խոցող զենք

**սրունք** – ոտքի ծնկից մինչև թաթն ընկած մասը

**պարկեշտ** – բարոյապես զուսպ, չափավոր, լրջախոհ, իր արժանիքները չցուցադրող, համեստ վարքագիծ ունեցող մարդ

**փանդիռ** – եռալար ժողովրդական երաժշտական գործիք

**մեծիմաստ** – մեծ իմաստ ունեցող, խորամիտ, խորագետ

**պերճախոս** – ճարտարախոս, գեղեցկախոս, պերճ լեզու ունեցող

**բազմաբյուրավոր** – բյուր՝ 10 000, անթիվ, խիստ շատ, **բազմաբյուրավոր՝** տասնյակ հազարներից բաղկացած

**ալեկոծություն** – փոթորիկ

**տեսիլք** – ցնորք, ցնորական պատկեր՝ երևույթ

**տրտում** – տխրությամբ լցված

**Հայկազանց երկիր** – Հայաստան

**ծիրանազգեստ** – ծիրանի՝ ծիրանագույն զգեստ հագած

**ինձ** – կատվազգի մի քանի գիշատիչ կենդանիների՝ հովազի, ընձառյուծի ընդհանուր անվանումը

**արշավակի** – արշավելով, սրընթաց

**սակավ** – քիչ, պակաս, նվազ, ուշ-ուշ

**դավել** – դավաճանել, դավ նյութել

**պատրողական խոսք** – պատրանքով մոլորեցրած խոսք, պատրանքներով սնված խոսք, խաբեական խոսք

**թուղթ** – նամակ, նաև՝ հրովարտակ, ուղերձ, հուշագիր

**խռովություններն ընկճել** – տարերային ապստամբությունը զսպել, դավադրությունը խեղդել

**օրհորդ** – հնում թագավորական կամ իշխանական տոհմին պատկանող աղջիկ: Հայոց օրհորդ՝ թագավորի քույր կամ դուստր: Բառը բաղկացած է օրհ+որդ արմատներից. օրհ՝ իշխան, որդ՝ որդի, զավակ

**արիներ** – հնդեվրոպական լեզուներով խոսող ժողովուրդներ, որոնց մեջ են հայերը, պարսիկները, մարերը. պարսիկներն իրենց համարել են արի, իսկ մյուսներին ոչ արի, անարի (օտարացել)

**մարապարսկացի** – Պարսկաստանում ապրող մար

**Կապադովկիա** – Հայաստանի արևմտյան և Հռոմեական ինքնակալության, այնուհետև Բյուզանդիայի արևելյան սահմանային կողմը

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչ գիտեք հայոց Տիգրան Առաջին թագավորի մասին: Իրականում ո՞վ էր Աժդահակին ժամանակակից հայոց արքան՝ Տիգրան Առաջինը, թե՞ Տիգրան Երկրորդը:  
Ե՞րբ են նրանք գահակալել, և ինչո՞ւ է Խորենացին այդքան փառաբանում Տիգրան Մեծին:
2. Պատմությունից ճշտե՛ք, թե ո՞վ է եղել Կյուրոսը, ովքե՞ր էին մարերը, ո՞վ էր Աժդահակը:
3. Ինչպե՞ս է Մովսես Խորենացին ներկայացնում Տիգրան Մեծին:
4. Ինչն է Աժդահակին մտատանջությունների մեջ գցում, ի՞նչ երազ է տեսնում նա և ո՞ւմ է պատմում:
5. Ինչպե՞ս են երազահանները մեկնաբանում Աժդահակի երազը, ի՞նչ է նա ձեռնարկում:
6. Ինչ բովանդակություն ուներ Տիգրանին հասցեագրված Աժդահակի թուղթը (նամակը):
7. Ո՞վ էր Տիգրանուհին, ո՞ւմ կինն է նա դառնում, ի՞նչ քայլի է նրան դրդում Աժդահակը, և ինչպե՞ս է վարվում նա՝ օգնելու եղբորը՝ խուսափելու վտանգից:
8. Ինչ էր Տիգրան թագավորի կնոջ անունը:
9. Ինչ պատասխան է տալիս Տիգրանն Աժդահակի պատվիրակներին:
10. Տիգրանը Տիգրանուհուն փրկելուց հետո ի՞նչ դատաստան է տեսնում Աժդահակի հետ:
11. Համեմատե՛ք Հայկ Նահապետի կռիվը Տիտանյան Բելի և Տիգրանի կռիվը Աժդահակի դեմ:

## ԱՐՏԱՇԵՍ ԵՎ ԱՐՏԱՎԱԶԴ

ԱԼԱՆՆԵՐԻ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ ՄԵԶ ՎՐԱ ԵՎ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ:  
ԱՐՏԱՇԵՍԻ ԽՆԱՄԻԱՆԱԼԸ ՆՐԱՆՑ ՀԵՏ

Այս ժամանակներն ալանները բոլոր լեռնականների հետ միաբանելով, Վրաց աշխարհի կեսն էլ իրենց կողմը ձգելով՝ մեծ բազմությամբ գալիս սփռվում են մեր աշխարհում: Արտաշեսն էլ ժողովում է իր զորքերի բազմությունը, և տեղի է ունենում պատերազմ երկու քաջ ու աղեղնավոր ազգերի միջև: Ալանների ազգը փոքր-ինչ ետ է նահանջում և մեծ Կուր գետն անցնելով՝ հյուսիսային կողմից բանակ է դնում գետի ափին: Արտաշեսն էլ գալով բանակում է գետի հարավային կողմում. գետը բաժանում է երկուսին:

Բայց որովհետև Հայոց զորքերն Ալանների թագավորի որդուն բռնելով Արտաշեսի մոտ են բերում, Ալանների թագավորը հաշտություն է խնդրում՝ խոստանալով Արտաշեսին տալ ինչ որ ուզի, առաջարկում է նաև երդումով դաշինք անել, որպեսզի ալանների երիտասարդներն այնուհետև չասպատակեն Հայոց աշխարհը: Երբ Արտաշեսը չի համաձայնում պատանուն ետ տալ, պատանու քույրը գալիս է գետի ափը՝ մի մեծ բարձրավանդակ տեղ, և թարգմանների միջոցով ձայն է տալիս Արտաշեսի բանակը.

*Քեզ եմ ասում, քաջ տղամարդ Արտաշես,  
Որ հաղթեցիր ալանների քաջ ազգին.  
Ե՛կ լսի՛ր ալանների գեղայնա դասերս խոսքերին  
Եվ տուր պատանին:  
Որովհետև օրենք չէ, որ քենի համար դյուցազները  
Ուրիշ դյուցազուն զարմերի կենդանությունը ջնջեն  
Կամ իբրև ծառա ստրուկների կարգում պահեն,  
Եվ երկու քաջ ազգերի մեջ  
Մշտնջենավոր թշնամություն հաստատեն:*

Այս իմաստուն խոսքերը լսելով՝ Արտաշեսը գնաց գետի ափը և տեսնելով գեղեցիկ կույսին ու լսելով նրանից իմաստուն խոսքեր՝ նրան ցանկացավ:

Մարդ են ուղարկում ալանների թագավորի մոտ, որ ալանների արքայազուն օրիորդ Սաթենիկին կնության տա Արտաշեսին: Ալանների թագավորն ասում է.

*Եվ ռորտեղից քաջ Արտաշեսը պիտի տա  
Հազար հազարներ ու բյուր բյուրեր  
Քաջերի սերունդ այս կույսի՝  
Ալանների արքայազն օրիորդի համար:*

Վիպասանները երգելիս այս տեղն առասպելաբանում են՝ ասելով.

*Հեծավ արի Արտաշես արքան գեղեցիկ սև ձին,  
Եվ հանելով ոսկեօղ շիկափոկ պարանը,  
Եվ անցնելով գետն իբրև սրաթև արծիվ,  
Եվ նետելով ոսկեօղ շիկափոկ պարանը,*

*Ձգեց մեջքը Ալանաց օրհորդի,  
Եվ շատ ցավեցրեց փափուկ օրհորդի մեջքը,  
Արագաբար իր բանակը հասցնելով:*

Իրապես այսպես է եղել: Որովհետև ալանների մոտ հարգի է կարմիր կաշին, Արտաշեսը բավական կաշի և շատ ոսկի է տալիս որպես վարձ և տիկին է առնում օրհորդ Սաթենիկին: Այս է, որ ասում են ոսկեօղ շիկափուկ պարան: Նույնպես հարսանիքի մասին երգում են առասպելաբանելով.

*Ոսկի անձրև էր տեղում  
Արտաշեսի փեսայության ժամանակ.  
Մարգարիտ էր տեղում  
Սաթենիկի հարսնության ժամանակ:*



Որովհետև մեր թագավորները սովորություն ունեին՝ դահլիճի դուռը իբրև փեսա հասնելիս դրամներ շաղ տալ, նույնպես և թագուհիներն առագաստի սենյակում՝ մարգարիտ: Երգի իսկական իմաստն այս է:

Սա Արտաշեսի կանանց մեջ առաջինը դառնալով՝ ծնում է Արտավազդին և ուրիշ շատ զավակներ:

Արտավազդը՝ Արտաշեսի որդին, չափահաս դառնալով, դուրս եկավ մի քաջ, ինքնահավան և հպարտ մարդ:

#### ԱՐՏԱՇԵՍԻ ՄԱՀՎԱՆ ՄԱՍԻՆ

Արտաշեսը հիվանդացավ: Արտաշեսի մահը վրա է հասնում: Որքան բազմություն մեռավ Արտաշեսի մահվան ժամանակ. նրա սիրելի կանայք, հարճերը և մտերիմ ծառաները բազմատեսակ շքեղ պատիվներ մատուցեցին դիակին, քաղաքակիրթ ազգերի կարգով և ոչ թե բարբարոսների նման: Նրա դագաղը ոսկեղեն էր, գահը և անկողինը բեհեզից և մարմինը պատող պատմունճանը ոսկեթել, գլուխը թագ դրած, ոսկյա զենքն առջևը: Գահը շրջապատում էին որդիներն ու ազգականների բազմությունը և սրանց մոտ զինվորական պաշտոնյաները, նահապետները, նախարարական գնդերը և ընդհանրապես զորականների վաշտերը, ամենքը զինված, որպես թե պատրաստվում են պատերազմի: Առջևից պղնձե փողեր էին հնչեցնում, իսկ ետևից սևազգեստ ծայնարկու կույսեր և լալկան կանայք, բոլորից վերջը՝ ռամիկների բազմությունը: Եվ այսպես տանելով թաղեցին: Նրա գերեզմանի վրա կամավոր մահեր էին լինում, ինչպես վերն ասացինք: Արտաշեսը թագավորեց քառասուն և մեկ տարի, այսպես սիրելի լինելով մեր աշխարհին:

ԱՐՏԱՎԱԶԴԻ ԹԱԳԱՎՈՐԵԼԸ, ԻՐ ԵՂԲԱՅՐՆԵՐԻՆ ՈՒ ՔՈՒՅՐԵՐԻՆ  
ՀԱԼԱԾԵԼԸ ԵՎ ՆՐԱ ՄԱՀԸ՝ ԱՅԼԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ ՀԱՆԴԵՐԶ

Արտաշեսից հետո թագավորում է նրա Արտավազդ որդին և Այրարատից բոլոր եղբայրներին հալածում է, որպեսզի Այրարատում թագավորի կալվածքում, չապրեն. միայն Տիրանին պահում է իրեն փոխանորդ, որովհետև ինքը որդի չուներ: Նա քիչ օրեր թագավորելուց հետո մի անգամ անցնում էր Արտաշատ քաղաքի կամուրջով՝ Գինա ակունքների մոտ կինճեր և վայրի էջեր որսալու: Հանկարծ ինչ-որ ցնորքից շփոթվում, խելագարվում է, ձիուց վայր է ընկնում մի խոր փոսի մեջ և այնտեղ խորասուզվում, անհետանում է:

Նրա մասին Գողթնի երգիչներն այսպես են առասպելաբանում: Արտաշեսի մահվան ժամանակ հեթանոսական սովորությամբ շատ կոտորածներ էին լինում. սրա վրա Արտավազդը նեղանում է և ասում է հորը.

*Երբ դու գնացիր,  
Ու բոլոր երկիրը քեզ հետ տարար,  
Ես այս ավերակների վրա  
Ինչպե՞ս թագավորեմ:*

Սրա համար նրան անիծելով՝ Արտաշեսն այսպես է ասում.

*Թե դու հեծնես որսի գնաս  
Ազատն ի վեր, դեպի Մասիս,  
Քաջքերը քեզ բռնեն տանեն  
Ազատն ի վեր, դեպի Մասիս.  
Այնտեղ մնաս, լույս չտեսնես:*

Պառավները սրա մասին զրուցում են, թե արգելված մնում է մի քարանձավի մեջ, երկաթե շղթաներով կապված, երկու շուն կրծում են նրա շղթաները, և նա ջանք է անում դուրս գալ և աշխարհին վերջ տալ, բայց, ասում են, դարբինների կռանահարության ձայնից կապանքներն ամրանում են: Ուստի դեռ մինչև այժմ էլ դարբիններից շատերն առասպելին հետևելով՝ կիրակի օրերը երեք կամ չորս անգամ կռանով խփում են սալին, որպեսզի Արտավազդի շղթաներն ամրանան: Բայց իսկական իրողությունն այնպես է, ինչպես վերն ասացինք:

Ոմանք ասում են, թե հենց սրա ծնվելու ժամանակ մի պատահար է հանդիպել. և կարծում են, թե Աժդահակի սերունդից կանայք նրան կախարդել են, ինչի պատճառով Արտաշեսը նրանց շատ չարչարեց: Այս մասին նույն երգիչներն առասպելի մեջ այսպես են ասում.

*Վիշապագունքը մանուկ Արտավազդին գողացան  
Եվ նրա տեղ դրեցին դև:*

Բայց ինձ ճիշտ է թվում այն լուրը, թե նա ծնունդից ի վեր մոլորությամբ է ապրել, մինչև որ նույն մոլորությամբ մեռել է:



## ԲԱՌԱՐԱՆ

**ալաններ** – հնագույն ժողովուրդ, որ ապրում է Հայաստանի հյուսիս-արևելքում, Կուր գետի ձախ ափին, Նրանց հետնորդները ժամանակակից օսերն են, որոնք ապրում են Հյուսիսային Կովկասում

**բանակել** – զորքի դիրքավորվելը պատերազմից առաջ, զորքի իջևանելը, դադար առնելը

**աղեղնավոր** – աղեղով զինված

**տեղ** – տեղում, անձրև, ոսկի տեղ՝ ոսկի անձրև

**ասպատակել** – արշավել ավարառության համար, **ասպատակ** – հեծյալ հրոսակ

**բարձրավանդակ** – բարձր դիրքում գտնվող հարթություն, հարթավայր, սահարթ

**գեղաչա** – գեղեցիկ աչքեր ունեցող

**քեն** – ոխ, թշնամանք, վրեժխնդրություն

**շիկափոկ պարան** – շիկագույն փոկից՝ կաշվից հյուսված պարան

**բարբարոս** – վայրենի, վայրագ, գռեհիկ, անտաշ, կոպիտ, ոչ քաղաքակիրթ

**բեհեզ** – վուշի նուրբ գործվածք

**պատմունճան** – երկար ու լայն թիկնոցանման վերնազգեստ, որ հագնում էին արքաները, բարձրաստիճան իշխանավորները, ինչպես նաև կրոնավորներն ու դատավորները

**կինճ** – վայրի խոզ, վարագ

**կռան** – միջին մեծության մուրճ, կռնահարություն՝ կռանով հարվածել սալին

**սալ** – հարթ մակերևույթով մեծ տափակ և ամուր քար, զնդան

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ո՞վ էր Հայոց Արտաշես արքան: Ի՞նչ մեծագործություններով է նա հայտնի: Տեղեկատու բառարաններից գտե՞ք տվյալներ նրա մասին:
2. Ովքե՞ր էին ալանները: Ո՞վ էր Սաթենիկը:
3. Սաթենիկի եղբայրը գերի էր Արտաշեսի մոտ: Այդ կապակցությամբ ի՞նչ է ասում Սաթենիկն Արտաշեսին:
4. Երբ Արտաշեսը ցանկանում է կնության առնել Սաթենիկին, այդ կապակցությամբ ի՞նչ է ասում Արտաշեսին Սաթենիկի հայրը՝ ալանների թագավորը:
5. Ի՞նչպե՞ս է Արտաշեսը տիրանում Սաթենիկին:
6. Նկարագրե՞ք Արտաշեսի և Սաթենիկի հարսանիքը:
7. Արտաշեսի մահվան և թաղման ժամանակ ի՞նչ է կատարվում:
8. Ի՞նչ է ասում Արտավազդը հոր թաղման ժամանակ, և մեռած հոր ոգին ի՞նչ է պատասխանում նրան:
9. Ի՞նչ է կատարվում Արտավազդի հետ, և ինչո՞ւ էին դարբինները կիրակի օրերին երեք կամ չորս անգամ կռանով խփում սալին:
10. Այսօր ովքե՞ր են ալանների ժառանգորդները և որտե՞ղ են ապրում:

Խորենացին ոչ միայն պատմիչ էր՝ փաստեր և ժամանակագրություն շարադրող, այլև գրող, գեղարվեստական խոսքի վարպետ: Նա հրաշալի է

կերտում իրական և առասպելական հերոսներին: Ստեղծում է հրաշալի նկարագրություններ, բնության գեղեցիկ տեսարաններ, նրա խոսքն ունի գեղարվեստական պատկերավորություն, բանաստեղծական շունչ: Խորենացին նաև խոշոր արվեստաբան է ու գրականության տեսաբան:

Այս կապակցությամբ ավելացնենք, որ նրա ժառանգության անբաժան մասն են **շարականները**: Խորենացին 5-րդ դարի հոգևոր բանաստեղծության առաջնակարգ ներկայացուցիչներից մեկն է: Ահա նրա շարականներից մեկը՝ գրաբար և աշխարհաբար: Շարականը նվիրված է Մարիամ Աստվածածնին: Շարականի մեջ Լույսը Քրիստոսի խորհրդանշանն է:

Ուրախ լեր Աստուածածին,  
Յոյս եւ փրկութեան մայր,  
գ-Քեզ ընդունող լոսոյ  
Մեծացուցանեմք:

գ-Քեզ, լուսոյ մայր եւ կոյս,  
գ-Քեզ, գանձդ կենաց,  
Աստուածային ճայնիվ ցնծութեամբ  
Մեծացուցանեմք:

Մայր սուրբ անարատ լոսոյն,  
Հրեշտակային օրհնութեամբ պատուեալ,  
գ-Քեզ, ընդունող լոսոյ,  
Մեծացուցանեմք:

\*\*\*

Ուրախացիր, Աստվածածին,  
Հոյս և փրկության մայր,  
Քեզ՝ լույսի ծնող,  
Մեծարում ենք:

Քեզ՝ լույսի մայր և կոյս,  
Քեզ՝ կյանքի գանձ  
Աստվածային ճայնով ցնծությամբ  
Մեծարում ենք:

Անարատ լույսի սուրբ մայր,  
Հրեշտակային օրհնությամբ պատվված,  
Քեզ՝ լույսի ծնող,  
Մեծարում ենք:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Պատմիչ Խորենացին նաև բանաստեղծ էր: Ինչ բնույթի բանաստեղծություններ է գրել նա, գրական ինչ տեսակի են պատկանում այդ երկերը:
2. Խորենացու «Հայոց պատմություն»-ից դուրս գրեք հատվածներ՝ հագեցած գեղարվեստական պատկերավորությամբ, հերոսների կերպավորման արվեստով:

# ՈՂԲ

(Կրճատումներով)

ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ՑԵՂԻՑ ԵՎ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵ-  
ՏՈՒԹՅԱՆ՝ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻ ՏՈՀՄԻՑ ԴԱԴԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ողբում եմ քեզ, Հայոց աշխարհ, ողբում եմ քեզ, բոլոր հյուսիսային ազգերի մեջ վեհագույնդ, որովհետև վերացան թագավորդ ու քահանայդ, խորհրդականդ և ուսուցանողդ. վրդովվեց խաղաղությունը, արմատացավ անկարգությունը, խախտվեց ուղղափառությունը, հիմնավորվեց տգիտությամբ չարափառությունը:

Խղճում եմ քեզ, Հայաստանյայց եկեղեցիդ, բեմիդ բարեգարդությունից անշքացած, քաջ հովվից և հովվակցից զրկված: Այլևս չեմ տեսնում քո բանավոր հոտը դալար տեղում և հանգիստ ջրերի մոտ սնվելիս և ոչ էլ փարախի մեջ ժողովված՝ գայլերից զգուշանալու համար, այլ ցիրուցան եղած անապատներում և գահավեժ տեղերում:

Ավանդ այս զրկանքներին, ավանդ այս թշվառ պատմությանը: Ինչպե՞ս դիմանամ այս ցավերին, ինչպե՞ս ամրապնդեմ միտքս ու լեզուս և հայրերիս իմ պարտքը հատուցանեմ այս խոսքով իմ ծնունդի և սնունդի փոխարեն: Որովհետև նրանք ինձ ծնեցին և սնուցեցին իրենց տված ուսումով և ուրիշների մոտ ուղարկեցին կատարելագործվելու: Եվ մինչ նրանք սպասում էին մեր դարձին, որ փառավորվեն իմ ամենհմաստ արվեստով և լիակատար պատրաստությամբ, և մենք էլ, Բյուզանդիայից շտապ-շտապ դիմելով, հույս ունեինք հարսանիքներում պարել խիզախ և արագ շարժումներով և առագաստի երգեր երգել, այժմ, այդ ուրախության փոխարեն, գերեզմանի վրա ողբեր եմ ասում՝ ողորմելի հառաչելով. նույնիսկ չհասա տեսնելու նրանց աչքերի փակվելը, լսելու նրանց վերջին ձայնը և օրհնությունը:

Այսպիսի վշտով խեղդվում եմ, մեր հոր կարոտով մաշվում: Ո՞ր է այն քաղցր աչքերի հանդարտությունն ուղիղների համար և ահավորությունը չարերի համար. ո՞ր է այն զվարթ շրթունքների ժպիտը լավ աշակերտների հանդիպելիս, ո՞ր է այն բարյացակամ սիրտը, որ արբանյակներ էր գրավում. ո՞ր է երկայն ճանապարհները հեշտացնող հույսը, նեղություններից հանգստացողը. կորսվ՞ ժողովուրդը, ծածկվե՞ց նավահանգիստը, լքե՞ց օգնականը, լռե՞ց խրախուսիչ ձայնը:

Ո՞վ այսուհետև պիտի հարգի մեր ուսումը, ո՞վ պետք է ուրախանա իր աշակերտի առաջադիմությամբ, ո՞վ հայրական զվարճությունը պիտի արտահայտի՝ մասամբ իր որդուց հաղթվելով: Ո՞վ պետք է զսպի առողջ վարդապետության հակառակ դուրս եկողների հանդգնությունը, որոնք ամեն բանով քանդված ու քայքայված՝ շատ ուսուցիչներ են փոփոխում և բազմաթիվ գրքեր, ինչպես ասաց հայրերից մեկը, ամեն բանի նրանք հավասարապես դժվարանում են, և իրենց համար չար օրինակ են դարձնում մեզ ծաղրելն ու արհամարհելը, իբրև անհաստատ և որևէ պիտանի արվեստից զուրկ մարդկանց: Ո՞վ պետք է նրանց պապանձեցնի սաստելով և մեզ սփոփի գովելով և չափ դնի խոսքի և լռության:

Երբ մտածում եմ այս բաների մասին, իմ մեջ հառաչանք և արտասուք են ծագում, ինձ թելադրում են տխրալից և սգավոր խոսք ասել: Եվ չգիտեմ, ինչպե՞ս հորինեմ իմ ողբը և կամ ո՞ւմ արտասվեմ. արդյոք իմ թշվառ մանուկ

թագավորին, որ վատթար խորհրդակցությամբ իր ցեղով հանդերձ դեն գցվեց և նախքան մահով մեռնելն անարգաբար աթոռից կործանվեց, թե ինձ, ում գլխից վերցվեց փառավորող գեղեցիկ կենցաղօգուտ պսակը. արդյոք իմ հո՞րն ու քահանայապետին, այն վսեմ միտքը, լի կատարյալ խոհականությամբ, որով կառավարում էր և բարեկարգում, և սանձերը բուռը հավաքած՝ ուղղություն էր տալիս ընթացքին և սանձահարում էր օտարոտի մտքեր հայտնող լեզուները, թե՛ ինձ, նրա հոգու խանդից զրկվածիս ու տնանկիս. արդյոք իմ ծնողին, այն վարդապետության աղբյուրը, որ ոռոգում էր արդարությունը և իբրև հեղեղ դուրս էր քշում ամբարշտությունը, թե՛ ինձ, նրա խրատները խմելու ծարավից ցամաքածիս ու թառամածիս. արդյոք մեր աշխարհին արդեն եկամ՞ աղետները, թե՛ ապագայում սպասվելիքները:

Ո՛վ մեզ այս բաներում ճառակից կլինի՝ մասնակցելով մեր տրտմությանը, ո՞վ մեզ կընկերանա՝ ցավակցելով մեր ողբին կամ արձանների վրա փորագրելու:

Ուսուցիչները՝ տխմար ու ինքնահավան, իրենք իրենցից պատիվ գտած և ոչ Աստծուց կոչված, փողով ընտրված և ոչ Սուրբ Հոգով. ոսկեսեր, նախանձոտ, թողած հեզությունը, որի մեջ Աստված է բնակվում, և գայլ դարձած գիշատում են իրենց հոտերը:

Կրոնավորները՝ կեղծավոր, ցուցամոլ, սնափառ, պատվասեր, քան աստվածասեր:

Վիճակավորները՝ հպարտ, դատեր սիրող, դատարկախոս, ծույլ, գիտություններն ու վարդապետական գրվածքներն ասող, առևտուր և կատակերգություններ սիրող:

Աշակերտները՝ սովորելու մեջ ծույլ, սովորեցնելու մեջ փութաջան, ովքեր դեռ չսովորած՝ աստվածաբան են:

Ժողովրդականները՝ ամբարտավան, ստահակ, մեծախոս, աշխատանքից խուսափող, արբեցող, վնասագործ, ժառանգությունից փախչող:

Զինվորականները՝ անարի, պարծենկոտ, զենք ատող, ծույլ, ցանկասեր, թուլամորթ, կողոպտիչ, գինեմոլ, հելուզակ, ավազակների բնութենակից:

Իշխանները՝ ապստամբ, գողերին գողակից, կաշառակեր, կծծի, ժլատ, ագահ, հափշտակող, աշխարհ ավերող, աղտեղասեր, ծառաներին համախոհ:

Դատավորները՝ տմարդի, սուտ, խաբող, կաշառակեր, իրավունքը չպաշտպանող, անհաստատ, հակառակող:

Եվ առհասարակ սերն ու ամոթն ամենքից վերացած:

Եվ ինչ է այս բոլորի ապացույցը, եթե ոչ այն, որ Աստված մեզ անտես է արել, և տարրերը փոխել են իրենց բնույթը. գարունը՝ երաշտ, ամառը՝ սաստիկ անձրևային, աշունը՝ ձմեռ դարձած, ձմեռը՝ սաստիկ ցուրտ, մրրկալից և երկարատև: Քամիները՝ բուքեր բերող, խորշակի փոխված, ցավեր տարածող. ամպերը՝ կայծակներ թափող, կարկտաբեր. անձրևներն՝ անժամանակ և անօգուտ. եղանակը՝ դաժան, եղյամ բերող. ջրերի անօգուտ ավելանալը և չափից դուրս պակասելը. երկրի պտղաբերությունը՝ նվազած, անասունների աճելությունը՝ պակաս, այլև երկրաշարժներ և սասանումներ: Եվ այս բոլորի վրա ամեն կողմից խռովություն, համաձայն այն խոսքի, թե ամբարիշտներին խաղաղություն չկա:

Որովհետև մեզ տիրեցին խստասիրտ ու չար թագավորներ, ովքեր ծանր, դժվարակիր բեռներ են բարձում, անտանելի հրամաններ են տալիս: Կառա-

վարիչները կարգ չեն պահպանում, անողորմ են, սիրելիները դավաճանված են, թշնամիները՝ զորացած. հավատը ծախվում է այստեղի ունայն կյանքի համար: Ասպատակություններ են գալիս անհատնում, շատ տեղերի վրա, տները գերվում են, ստացվածքները՝ հափշտակվում, գլխավոր մարդիկ կապվում են, հայտնի անձեր բանտարկվում են, դեպի օտարություն են աքսորվում ազնվականները, անթիվ նեղություններ են կրում ռամիկները, առնվում են քաղաքներ, քանդվում են ամրոցներ, ավերվում են ավաններ, հրդեհվում են շինություններ, անվերջ սովեր և հիվանդություններ և բազմատեսակ համաճարակներ: Աստվածապաշտությունը մոռացված է, դժոխքի ակնկալություն...



## ԲԱՌԱՐԱՆ

**բարեզարդություն** – գեղեցկություն, վայելչազարդություն, բարոյամբ զարդարված

**անշուք** – շքեղություն չունեցող, խղճուկ

**փարախ** – ոչխարների հանգստանալու տեղ՝ գոմ կամ բաց տեղ. եկեղեցի՝ իբրև հավատացյալների հոտի ապահով հանգրվան

**արբանյակներ գրավել** – իր շուրջը պտտվողներ՝ հետևորդներ, կողմնակիցներ ունենալ

**առազաստի երգեր** – ամուսնական երգեր, հարսանիքի երգեր

**սփոփել** – վիշտը ցրել, փարատել, մխիթարել, հուսադրել, ոգեպնդել, բուժել

**անարգաբար** – ստորաբար, **անարգ**՝ ստոր, նվաստ, անպատիվ, չնչին

**կենցաղօգուտ** – կենցաղի, կյանքի համար օգտակար

**վիճակավոր** – ունևոր, վիճակ՝ թեմ ունեցող, թեմական, հոգևոր դասին պատկանող

**փութաջան** – ջանասեր, եռանդուն

**ստահակ** – խարդախ, նենգ, վատ, ստոր, լկտի, սուտ բաների հակված

**հելուզակ, ելուզակ** – ավազակ, հարստահարիչ, կեղեքիչ

**ամբարիշտ** – անգույթ, դաժան, վայրագ, անհաշտ, կռվասեր

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Պատմական ի՞նչ իրադարձությունների կապակցությամբ է Խորենացին գրել «Ողբ»-ը:
2. Պատմիչն ո՞ւմ է դիմում իր խոսքը և ի՞նչ է ասում:
3. Ինչպե՞ս է Խորենացին բնորոշում ուսուցիչներին, կրոնավորներին, վիճակավորներին, աշակերտներին, ժողովրդականներին, զինվորականներին, իշխաններին, դատավորներին:
4. Ինչո՞ւ այսպիսի տխուր ավարտ ունեցավ Խորենացու «Հայոց պատմություն»-ը:
5. Համեմատե՞ք Խորենացու ժամանակները մեր ժամանակների հետ. ի՞նչ ընդհանրություններ ու տարբերություններ եք տեսնում:

## ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Հայոց գրի ստեղծման և Ոսկեդարի հայ մատենագրության վերաբերյալ

1. Բնութագրե՞ք Մեսրոպ Մաշտոցին որպես իր ժամանակի պետական, գիտական, կրթական և հոգևոր առաջնակարգ գործիչ:
2. Պատմաքաղաքական ինչ պայմաններում Մաշտոցն ստեղծեց հայոց գիրը և ինչ դեր ու նշանակություն ունեցավ այն հայ ժողովրդի հետագա կյանքում:
3. Ինչո՞ւ ենք գրերի գյուտին հաջորդող հարյուրամյակը բնորոշում որպես հայ մատենագրության Ոսկեդար:
4. Մեկ առ մեկ սեղմ ներկայացրե՞ք Ոսկեդարի հայ մատենագիրներին՝
  - ա) Ագաթանգեղոս,
  - բ) Փավստոս Բուզանդ,
  - գ) Մովսես Խորենացի,
  - դ) Եղիշե,
  - ե) Ղազար Փարպեցի:

## ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ

Հայ ժողովրդի հանճարը դարերի ընթացքում երկնել է այնպիսի մի բացառիկ ստեղծագործություն, ինչպիսին «Սասնա ծռեր» դյուցազներգությունն է:

«Սասնա ծռեր»-ը ժողովրդական բանավոր ստեղծագործություն է, այսինքն՝ բանահյուսական երկ: Այն ոչ թե հորինել է մեկ հոգի, այլ ամբողջ մի ժողովուրդ: Դարերի ընթացքում պատմվելով՝ այն հարստացել է, ստեղծվել են բազմաթիվ պատումներ և հասել մինչև մեր ժամանակները: «Սասնա ծռեր» դյուցազներգությունը Միավորված ազգերի կազմակերպության գիտության և մշակույթի հանձնաժողովի (ՅՈՒՆԵՍԿՕ) կողմից ճանաչվել է համամարդկային մշակութային արժեք:



«Սասնա ծռեր»-ի մասին դեռևս 16-րդ դարում առաջին արձագանքները պահպանվել են պորտուգալացի ճանապարհորդների գրառումներում: Թռուցիկ արձագանքներ եղել են նաև հայագիտության մեջ: Բայց դյուցազներգության հայտնաբերումն ու արժեքի գիտակցումն սկսվել է ավելի ուշ:

19-րդ դարում նախ բանահավաք Գարեգին Սրվանձտյանը, ապա հայագետ Մանուկ Աբեղյանը գրի առան դյուցազներգության առաջին պատումները: Գ. Սրվանձտյանն այն լսեց Մուշի գավառում և 1874 թվականին հրատարակեց «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» վերնագրով: Մ. Աբեղյանի գրառումը «Դավիթ և Մհեր» վերնագրով լույս է տեսնում 1889 թվականին: Հետագա տասնամյակների ընթացքում՝ մինչև 1960-ական թվականները, տարբեր սերունդի բանահավաքներ գրի են առել նորանոր պատումներ, որոնց թիվը հասնում է 160-ի: Այդ պատումներն առանձին հատորներով լույս են տեսել 1936-2000 թվականներին:

Դյուցազներգությունը պատմում էին ժողովրդական մարդիկ, որոնց ասում են **ասացող**: Ասացողները եղել են տաղանդավոր անհատներ, ովքեր հիշել ու վերարտադրել են դյուցազներգությունը, իսկ առանձին հատվածներ նաև երգել: Տարբեր ասացողների կողմից պատմվելով՝ դյուցազներգության առանձին ճյուղերը փոխվում են, ստեղծում իրենց տարբերակները: Այդ առանձին տարբերակներին ասում են **պատում**:

1939 թվականին «Սասնա ծռեր» դյուցազներգության 1000-ամյակի կապակցությամբ մինչ այդ գրի առնված 60 պատումներից ստեղծվում է **համահավաք, միասնական, ամբողջական բնագիրը՝ «Սասունցի Դավիթ»** վերնագրով: Այն իրականացնում են Մանուկ Աբեղյանը, Գևորգ Աբովը և Արամ Ղանալանյանը: Խմբագիրն էր Հովսեփ Օրբելին: Գիրքը լույս է տեսնում 1939 թվականին, հետագա տարիներին արժանանում է նորանոր հրատարակությունների, ինչպես նաև թարգմանվում աշխարհի տարբեր ժողովուրդների լեզուներով:

**Դյուցազներգությանն** ասում են նաև **էպոս**: Կան այլ բնորոշումներ և՛ **հերոսավեպ, դյուցազնավեպ, ժողովրդական վեպ, ասք, վիպասք, վիպերգ, վիպասանություն**:

Այսպիսի երկերն ստեղծվում են տվյալ ժողովրդի կյանքում պատմական հիշարժան իրադարձությունների կապակցությամբ: **«Սասնա ծռեր»**-ն ստեղծվել է 8-10-րդ դարերում, երբ հայ ժողովուրդը գտնվում էր արաբական լծի ներքո և ազատագրական պայքար էր մղում՝ վերականգնելու իր անկախությունն ու պետական ինքնուրույնությունը: Բոլոր հերոսներն այս հիմնական գաղափարի կրողներն են:

Ունենալով ժողովրդական ծագում՝ դյուցազներգություններն ընդհանուր առմամբ հեղինակ չեն ունենում: Այդպիսին է **«Սասնա ծռեր»**-ը, այդպիսին են հնդկական (**«Մահաբհարատա»**, **«Ռամայանա»**), ասորական (**«Գիլգամեշ»**), ֆրանսիական (**«Ռուլանդի երգը»**), գերմանական (**«Նիբելունգների երգը»**), իսպանական (**«Սիդի երգը»**), ֆիննական (**«Կալեվալա»**), ռուսական (**«Իլյա Մուրոմեց»**), արևելյան (**«Քյորոլլի»**), կիրգիզական (**«Մանաս»**) վիպաաքերը: Կան նաև դյուցազներգություններ, որոնք մեզ են հասել հեղինակային մշակումներով: Այդպիսիք են հունական, պարսկական, վրացական ժողովրդական ստեղծագործությունները՝ Հոմերոսի **«Իլիական»**-ն ու **«Ոդիսական»**-ը, Տիրդուսու **«Շահ նամե»**-ն, Շոթա Ռուսթավելու **«Վազրենավոր»**-ը:

Որպես օրենք՝ դյուցազներգությունների հերոսներն օժտված են գերբնական ուժով:

Դյուցազներգությունները հիմնականում ունենում են պատմողական բնույթ, գործողություններն ընթանում են արագ ու նպատակային, օգտագործվում է չափազանցությունը՝ որպես բնական վիճակ: Ինչպես հեքիաթներում, անպակաս են հրաշքները: Խոսում են ոչ միայն մարդիկ, այլև կենդանիները. **«Սասունցի Դավիթ»**-ի մեջ՝ Քուռկիկ Ջալալին: Շատ առատ են երկխոսությունները: Անպակաս է երգիծանքը:

**«Սասունցի Դավիթ»** համահավաք բնագիրը բաղկացած է **չորս ճյուղից՝ «Սանասար և Բաղդասար», «Մհեր», «Դավիթ», «Փոքր Մհեր»**: Սա մեկ տոհմի հերոսների պատմություն է, ովքեր հաջորդաբար շարունակում են հայրենաշինության իրենց գործը:

Հերոսների և դեպքերի շարքն այսպիսին է:

Հայոց Գագիկ թագավորի դուստր Ծովինարը ժողովրդին Բաղդադի խալիֆի ճշումներից ազատելու նպատակով համաձայնում է դառնալ նրա կինը: Գնալուց առաջ նա ծովի միջից բխող աղբյուրից երկու ավի ջուր է խմում. մեկը՝ լրիվ, մյուսը՝ կիսատ: Այդ ջրից նա հղիանում է և ծննդաբերում Սանասարին ու Բաղդասարին: Խալիֆը ցանկանում է սպանել երեխաներին, բայց դա որոշում է անել այն ժամանակ, երբ երեխաները դառնան տասը տարեկան: Տասը տարի Բաղդադում մնալուց հետո, երբ խալիֆը դահիճներին ուղարկում է տղաներին սպանելու, վերջիններս փախչում են:

Սանասարը և Բաղդասարը հիմնադրում են Սասնա տունը՝ Սասունը, որ կոչվում է նաև Ջոջանց տուն: Սանասարը ծովի տակից հանում է Քուռկիկ Ջալալին, Թուր Կեծակին և Խաչ Պատերազմին:

Սանասարն ամուսնանում է Քառսուն-Ճուղ-Ծամ Դեղձուն Ծամի հետ, ունենում է երեք որդի՝ Մհեր, Հովհան (Հովան) և Վերգո:

Սասնա դյուցազունները գնում են Բաղդադ, սպանում խալիֆին, ազատում իրենց մորը և գալիս հայոց աշխարհ:

Սանասարի ժառանգական իրավունքը շարունակում է Մհերը (Մեծ Մհեր): Մեծ Մհերն աչքի է ընկնում ուժով և հերոսությամբ: Նա երկու կես է անում առյուծին և դրա համար էլ կոչվում Առյուծաձև (առյուծ ձևող, պատռող) Մհեր: Նա դուրս է անում Մըսրա Մելիքի հարկահաններին և Հայաստանն անկախացնում: Նրա օրոք է կառուցվում Մարութա վանքը, որ հայտնի է նաև Մարաթուկ անունով, ինչը Սուրբ Աստվածածին եկեղեցին է: Մհերը գնում է Մըսր և երկար տարիներ մնում այնտեղ՝ Մըսրա Մելիքի մահից հետո դառնալով նրա կնոջ՝ Իսմիլ Խաթունի ամուսինը: Նրանցից ծնվում է Փոքր Մըսրա Մելիքը: Ի վերջո, Մհերը թողնում է օտարությունը, վերադառնում Սասուն և ուխտի համաձայն իր ու կնոջ՝ Արմաղանի մահվան գնով լույս աշխարհ բերում Դավիթին:

Դավիթը մնում է առանց ծնողների, մեծանում է նախ Մըսրում, ապա՝ Սասունում: Նա ավելի հզոր էր, քան իր հայրն ու պապը: Նա երկրից վնդում է Մըսրա Մելիքի հարկահաններին, վերաշինում հոր կառուցած եկեղեցին, պատերազմի ժամանակ հաղթում Մըսրա Մելիքին և ամրապնդում երկրի անկախությունը:

Դավիթն ամուսնանում է Խանդութ խանումի հետ, ծնվում է Մհերը (Փոքր Մհեր): Յոթ տարվա բաժանումից հետո, չճանաչելով որդուն՝ Փոքր Մհերին, Դավիթը կռվում է նրա հետ, որի հետևանքը լինում է հոր անեծքը որդուն:

Դավիթն սպանվում է իրենից սերված աղջկա ձեռքով, ում մայրը Չմշկիկ Սուլթանն էր: Դավիթը խոսք էր տվել ամուսնանալ նրա հետ, բայց խոստումը չէր կատարել («էրթմնակոտոր» էր եղել), դրա համար էլ դաժանորեն պատժվում է՝ հատուցելով կյանքով:

Փոքր Մհերն իր հերթին կատարում է մեծ քաջագործություններ: Նա շարունակում է կռվել երկրի անկախության համար, սպանում է Մըսրի հարկահաններին: Նա նաև լուծում է հոր մահվան վրեժը:

Փոքր Մհերն ամուսնանում է Գոհարի հետ, բայց հոր անեծքով մնում է անժառանգ: Հողն այլևս չէր կարողանում պահել նրան: Կնոջ մահից հետո նա փակվում է Վանա քարի մեջ, որին ասում են նաև Ագռավաքար:

Փոքր Մհերը թեև փակված է, բայց անմահ է և դեռ պիտի դուրս գա լույս աշխարհ:

Գլխավոր հերոսների այս շղթան լրացնում են բազմաթիվ այլ հերոսներ՝ Քեռի Թորոսը, ով գործում է չորս ճյուղերում, Սասունն անվանակոչող Ծերունին, արտատեր Պառավը, Հովհանի կին Սառյեն, Չմշկիկ Սուլթանը, նրա աղջիկը, Բաղդադի խալիֆը, Մըսրա Մելիքը, Իսմիլ խաթունը, հարկահան Կոզբադինը, փահլևաններ, ժողովրդի ներկայացուցիչներ և շատ ուրիշներ:

Դյուցազներգությունն իր հիմքում պատմական և առասպելական իրողությունների համադրությունն է: Այդտեղ թե՛ հայոց պատմության արաբական տիրապետության շրջանն է և այդ գերիշխանության դեմ ուղղված հայ ժողովրդի ազատագրական պայքարը, թե՛ հնագույն հայոց առասպելաբանությունն է («Վահագնի ծնունդը», «Արտաշես և Արտավազը»), թե՛ արևելյան ժողովուրդների (Ասորեստան, Հնդկաստան, Իրան) մշակույթի պատմական և առասպելական անդրադարձներն են:

Ամբողջ դյուցազներգությունը հագեցած է մեկ հիմնական գաղափարով, ինչը հայրենասիրությունն է: Դրա համար են ծնվում, ապրում, գործում և մեռ-

Նում բոլոր հերոսները: Այդպես էլ պետք է լիներ, որովհետև հայ ժողովուրդը դարեր շարունակ հերոսական ու անհավասար կռիվ է մղել իր հայրենիքն ու արժեքները պահպանելու համար: Հայրենասիրությունը Սասնա հերոսների գործունեության գերակա նպատակն է: Նրանց գործունեության մնացած բոլոր բնագավառները բխում են դրանից կամ ուղղված են դրան:

Ջրի պաշտամունքն առանձնահատուկ տեղ ունի դիցազներգության մեջ: Նախ ջրով է հղիանում Ծովինարը. ծովը ետ է գնում, և մի աղբյուր է բացվում շատ համեղ ջրով: Դա սուրբ ու զորավոր ջուր էր: Այդպես Սուրբ Հոգուց հղիացավ Մարիամը և ծնեց Հիսուսին: Իսկ Ծովինար անունը նշանակում է ծովերի (ջրերի) թագուհի:

Երբ Սանասարն ու Բաղդասարը որոշում են Սասնա Տունը կառուցել, արդեն 17 տարեկան տղաներ, տեսնում են զորավոր բարակ ջուրը, որ կտրում էր «*ահագին գետը*».

*– Էդ ջուր ազնանցորդու ջուր է.  
Ով որ էդոր ական ջուրըն խմե,  
Էդպես կտրիճ կըլնի,  
Էնոր մեջքըն գետին տվող չիլնի:*

Ահա այս «*ազնանցորդու*» զորեղ ջրի ականքին էլ նրանք կառուցում են Սասնա տունը:

Ջրի հատակից է Սանասարը դուրս բերում հեքիաթային ձին, զենքն ու գրահը: Խմելով ծովի հատակի աղբյուրների ջուրը, օծվելով այդ ջրով՝ նա հզորանում, խոշորանում և դառնում է հսկա դիցազն: Մեծ Մհերն ու Դավիթը կռվի գնալիս Կաթնաղբյուրից էին ջուր խմում, այդ ջրով լողանում և ուժեղանում: Ջրի մեջ լողալիս էր նաև, որ Դավիթը նետահարվեց ու սպանվեց:

Դիցազներգությունը լի է բազմաթիվ խորհրդանշաններով, որոնցից են պահպան խաչը՝ Խաչ Պատերազմին, Քուռկիկ Ջալալին, Թուր Կեծակին, այսինքն՝ կայծակե թուրը, առյուծը, որին կիսում է Մեծ Մհերը, հոր անեծքը որդուն, հողը, որ Մհերին չի կարողանում պահել, Մհերի Դուռը, այդտեղից երբեմն-երբեմն դուրս եկող Մհերը, խոր փոսը՝ սատանայական ստորգետնյա ուժի մարմնավորումը, որտեղ թաքնվում է Մըսրա Մելիքը՝ որպես դև, որպես չարք:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչ է դիցազներգությունը: Դիցազներգությունն ուրիշ էլ ինչ բնորոշումներ ունի:
2. Ո՞րն է հայ ժողովրդական դիցազներգությունը: Ե՞րբ է այն ստեղծվել և ո՞ւմ կողմից:
3. Ե՞րբ և ովքեր են առաջինը գրի առել դիցազներգությունը:
4. Ինչ եք հասկանում ասացող և պատում ասելով:
5. Ինչ եք հասկանում համահավաք բնագիր ասելով: Ովքեր են այն ստեղծել և ինչի հիման վրա:
6. Ինչպե՞ս է վերնագրված հայ ժողովրդական դիցազներգությունը, և ինչ վերնագիր է ստացել համահավաք բնագիրը:

7. Թվարկե՞ք ուրիշ ժողովուրդների դյուցազներգություններ:
8. Ինչպիսի՞ն են լինում դյուցազներգության հերոսները:
9. Քանի՞ ճյուղ ունի «Սասնա ծռեր» դյուցազներգությունը:
10. Թվարկե՞ք դյուցազներգության գլխավոր հերոսներին և սեղմ ներկայացրե՞ք նրանց գործունեությունը:
11. Թվարկե՞ք դյուցազներգության կին հերոսներին:
12. Թվարկե՞ք դյուցազներգության երկրորդական հերոսներին:
13. Ինչպե՞ս է ավարտվում դյուցազներգությունը:
14. Ի՞նչ դեր ունի ջրի պաշտամունքը դյուցազներգության մեջ:
15. Ի՞նչ խորհրդանշաններ կան դյուցազներգության մեջ:

Դյուցազներգության մեջ շատ է օգտագործված գրաբարյան *զ* նախդիրը: Ճիշտ ընթերցելու համար անհրաժեշտ է իմանալ հետևյալ օրենքը: Երբ *զ* նախդիրը գրվում է ճայնավորից առաջ, կարդացվում է *զ՝* զարքա, զարուն, զօղորմի: Երբ *զ* նախդիրը գրվում է բաղաձայնից առաջ, կարդացվում է *ըզ՝* զքո-ըզքո, զծի-ըզծի, զտներ-ըզտներ, զմեր-ըզմեր:

## ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ

(Հատվածներ)

ՃՅՈՒՂ ԱՌԱՋԻՆ

**ՍԱՆԱՍԱՐ ԵՎ ԲԱՂԴԱՍԱՐ**

**ԿՌԻՎ ԲԱՂԴԱԴԻ ԽԱԼԻՑԻ ԴԵՄ**

13

Էնոնց ընկեր տղաներից մեկ գնաց, ասաց.

– Թագավոր բարկացեր է ձեր վերա,  
Ձեզի քաղքից դուրս տի հանի:

Սանասար Բաղդասարին ասաց.

– Աղբեր, էստեղ մեզ տուն չիլնի,  
Էրթանք, մեր տուն շինենք:

Էնքան ջանք թափեցինք էնտեղ,  
Ու մեր էն ավերակն էնպես մնաց կիսատ:

Ասաց.– Դու գիտես, աղբեր, էրթանք:

Լուսուն ոչ դու հաց պատրաստիր,

Ոչ ես գինի լնում, իտամ.

Առավոտուն չէրթանք իրեն էրևանք:

Թագավոր քնուց զարթնեց, ոչ էն կա, ոչ էն.

Էդ հետ կանչեց զէտնք:

Էկին թագավորի առաջ:

– Թագավոր,– ասին,– մեր մեղքն ինչ է,

Որ դու մեզի քաղքից դուրս կ'անես:  
 Ասաց.- Ո՛րդիք, խոսք է, բերնես գնացեր է,  
 Ձեզի պիտի դուրս անամ:  
 Էստեղեն գնացեք ձեր սենեկ,  
 Ու միտք արեք, տեսնենք՝  
 Որ կողմ կ'ուզեք, տամ ձեզի,  
 Գնացեք, էստեղ նստեք:  
 Տղեկներն էլ միտք արին,  
 Թե.- Էրթանք էստեղ, որ նշանգահ թալեր ենք:  
 Էրթանք, էստեղ նստենք:

Մնացին գիշերն իրենց սենեկի մեջ:  
 Բարի լուսըն որ բացվեց,  
 Էկին թագավորի առաջ կայնան:  
 Ու թագավոր հարցուց.- Որդի՛ք.  
 Ո՞ր կողմ ուզեցիք, որ դուք նստեք:  
 Ասին.- Թագավոր ապրած կենա,  
 Մենք, ուղղորդ է, հեր ու մեր չունենք,  
 Համա քենե պահենք, Աստրծուց ինչ պահենք,  
 Ջանք մեկ ավերակի տվեր ենք մի քիչ.  
 Հետո թորկեր, էկեր ենք էստեղ:

Ու պատմեցին էսոր, ասին.  
 - Էս օրինակ մեկ աղբերակ.  
 Էդ աղբրի կուշտ հիմք ենք թալե.  
 Կը խնդրենք, որ թողնես մեզի,  
 Էրթանք մեր տուն շինենք, տնավորվինք:  
 Թեաթորոս թագավոր վերուց, ասաց.  
 - Ախրը, որդի՛ք, էս առաջ ձեզ հարցուցի,  
 Թե ձեզ ինչ կա՝ հեր, մեր.  
 Ու դուք ասիք, թե՛ բան չկա. ոչ տուն, ոչ տեղ:  
 Հիմի քանի որ էդպես է, ասաց.  
 - Կ'էրթաք, հազար բարին,  
 Գնացեք ձեր տուն ու բերդ շինեք:  
 Սանասար ու Բաղդասար դարձան, ասին.  
 - Թագավոր, ապրած կենաս,  
 Մեկ բան էլ կը խնդրենք քենե,  
 Մենք մենակ չենք կարնա էստեղ նստինք.  
 Կը խնդրենք՝ մեկ քանի տուն աղքատ,  
 Մեկ քանի տուն հարուստ տաս մեզի,  
 Գան հետ մեզի, մեզի մոտ տուն շինեն,  
 Որ իրիկնեց ժողովվինք մեկտեղ,  
 Ջրուցենք մեզի մեր քաղքի մեջ:  
 Թագավորի սիրտ կոչաց վեր էսոնց.



Էտու էնոնց քառսուն տուն.–  
Հեյ գիտի տուն...  
Ամեն մեկուն մեկ էջ ու մեկ ճախարակ:

Առավոտուն իր վազիրին ճամփեց քաղքի մեջ,  
Էդ քառսուն տուն էտու քոչել.  
Էնոնց համար էտու հիսուն բեռ ալուր,  
Հետներ էդիր ուտելիք:  
Էլան, բարձան զիրենց տներ:  
Աղբերներն էլ թագավորին կաց-բարով ասին,  
Ու հետ իրենց քոչին գնացին:  
Գնացին, սարերն էլան,  
Հասան վեր իրենց աղբերակին,  
Ու վեր իրենց բերդի հիման:  
Սանասար ասաց Բաղդասարին.  
– Առաջ զմեր բերդ շինենք,  
Թե չէ՝ գէղա աղքատ-ուղքատի տներ:  
Բաղդասար պատասխանեց.  
– Առաջ շինենք գէդոնց տներ,  
Ու նոր շինենք զմեր բերդ.  
Էդ խեղճ մարդեր չեն կարնա  
Արևուն առջև կենա:  
Ու սկսեցին զտներ:

Սանասար էնքան զորեղ էր,  
Որ օր տասըն տան տեղ կը փորեր,  
Էն մեկելն էլ զփետեր կը բերեր,  
Ու բանվածքըն էրկուսով կը շինեին:  
Էրկու աղբեր չորս ալուր մեջ լման  
Ջքառսուն տների պատեր շարեցին,  
Էդա ջոջ սարերի գերաններ  
Կտրեցին, բերին առանց թփռելու,  
Թալեցին վերան, ծածկեցին, պրծան:

Ու քոչեր նստեցուցին տների մեջ:  
Տղեկներ, որ զտներ կը շինեին,  
Օրեն մեկի տուն հաց կ'ուտեին,  
Վիր տուն որ հաց կ'ուտեին,  
Էնոր տաշտ ու մաղ կը կախեին:

Երբ որ քոչեր իրենց տներ նստան,  
Տղեկներ կրկին ըսկըսեցին ըզբերդ շինել:  
Սանասար ջոջ քարափներ շալկեց, էբեր.  
Ջոջ-ջոջ քարեր էլ իր աղբեր էբեր:

Գնացին հետո քաղաք,  
 Վարպետ ու բանվորներ բերին:  
 Վարպետ տեսավ բերած քարեր,  
 Ասաց.– Ես չեմ կարնա շինել:  
 Սանասար գնաց քաղաք,  
 Ուրիշ մեկ վարպետ էլ էբեր:  
 Էս վարպետ էլ որ տեսավ էն ջոջ քարեր,  
 Ասաց.– Սանասար, էս ինչպե՞ս տի շարենք,  
 Ես չեմ կարնա էս քարափներ իրար տալ:  
 – Ապա ո՞վ կարնա, հարցուց Սանասար:  
 Վարպետ պատասխանեց.  
 – Մարդ չի կարնա իրար տալ:  
 – Ապա ի՞նչպես տի շարենք:  
 – Ես չեմ գիտի, ասաց վարպետ:  
 Էն ժամանակ Սանասար վերուց, ասաց.  
 – Դե՛, դու, վարպետ, լարեր կապի՛, տեղեր շտկի՛,  
 Ինձի ասա, ես քար դնեմ իր տեղ:  
 Էսպես իրենց բերդ շինեցին:  
 Ջոջ-ջոջ քարեր կը բերեին հրեշալի,  
 Վարպետների հետ էլ մեկտեղ կը բանեին:  
 Էնոնք էնքան զորեղ էին,  
 Որ քարե սան քարե սուն զարկին, ձագ թալեցին:  
 Մեկ տարի բոլոր էնոնք էսպես աշխատեցին,  
 Մեկ տարին որ լրացավ,  
 Նոր էնոնց բերդն ու տուն էկավ գլուխ:  
 Դարձան, փոքրիկ էկեղեցի մ'էլ շինեցին:  
 Մնաց բերդի ու տան անուն:  
 Ու չեն գիտի, թե ինչ դնեն էդոր անուն:

14

Ապա Սանասարն ասաց Բաղդասարին.  
 – Շատ աղեկ, մենք մեր տուն պրծանք,  
 Մեր տան անուն ի՞նչ տի դնենք:  
 Բաղդասար ասաց...  
 ... – Լավն էն է, որ էրթաս,  
 Մեկ ալևոր մարդ գտնես, բերես,  
 Էստեղ հացկերություն անի,  
 Էլնի, բերդին անուն դնի, էրթա:  
 Առավոտուն լուս որ բացվեց,  
 Սանասար էլավ, գնաց ման էկավ,  
 Սիպտակմորուս պապիկ մի տեսավ.  
 Վեցկին լծեր էր մեջ օստնին,  
 Հետ հոտաղին վար կ'աներ:  
 ... – Տարավ տուն, հացկերություն արին,

Նստան, զրուցեցին չոր իրիկուն:  
 Ասաց.– Պապիկ, դու գիտե՞ս  
 Ինչի համար ենք քեզ բերե:  
 Ասաց.– Հայ կանաչ կտրիճ,  
 Բա ես գիտեմ, ես ինչ գիտեմ՝  
 Ինչի համար եք ինձ բերե:  
 Սանասար ասաց...  
 ... – Պապիկ, ես քեզ բերի էստեղ,  
 Որ դու անուն դնես մեր բերդին:  
 Մեր տան անուշ անուն մի դիր,  
 Տեսնենք՝ ինչ տի դնես տան անուն:  
 Հավլորն ասաց.– Թող ըլնի:  
 Ապա դարձավ, հարցուց, ասաց.  
 – Ձեր հոգուն մեռնիմ, տղաներ,  
 Ինչ անուն կ'ուզեք, ինչ անուն դնեմ:  
 Էնոնք ասին.– Հավլոր պապի,  
 Մեր ուզածով չէ. դու քեզ համար ինչ կ'ուզես դիր:  
 Հետո հավլորն ասաց.  
 – Հիմի մութն է, առավոտուն էլնենք, ման գանք,  
 Ես իրիշկեմ, էնոր գորա անուն մի գտնենք:

Քնեցին: Առավոտուն էլան վե,  
 Լվացվան, աղոթք արին.  
 Հավլոր կուշտ հաց կերավ,  
 Էլավ գնաց բակի մեջ մեկ ֆռաց, ֆռաց,  
 Խորոտ ու գեշ մտիկ էտու,  
 Դարձավ, ասաց,– Ես չեմ տեսնա՝  
 Ձեր տուն քանի մ'է, որ անուն դնեմ:  
 Սանասար ասաց.– Պապիկ,  
 Արի ես քեզ շալկեմ,  
 Մեր բերդի չորս բոլոր ման ածեմ,  
 Դու տես, նոր անուն դիր:  
 Շալկեց, էլավ դուրս, բերդի բոլոր ֆռաց,  
 Հավլորն աշեց էն տան չորս բոլոր,  
 Տեսավ՝ սար մի կո՛ շարած վեր իրարու:  
 Առավոտուն արևմտյան դռնեն էլավ,  
 Բերդի բոլոր պըտըտեցուց,  
 Իրիկուն նոր պրծավ, էկավ մոտ էն դուռ,  
 Էկան կայնան դռան առջև:  
 Իրենք էլ էսպես են մտածե.  
 «Հավլորի գալուն պես էլնենք դիմաց,  
 Ինչ խոսք էնոր բերնեն էլնի,  
 Մեր բերդի անուն էն թող ըլնի»:  
 Ասին.– Պապիկ, ինչ կ'ասես:

Հավվոր նայեց դարգահի վերա,  
Էդոր վերին հարկեր տեսավ,  
Քարեր հանած էդա բարձր հարկեր,  
Տեսավ քարափներ պատ շարած,  
Զարմացած մնաց, հարցուց, ասաց.  
– Էդոր անուն դնեմ:  
Աստված ձեր տուն շինի,  
Ես ինչ անուն դնեմ էս տան:  
Աստված բարի տա ձեզ,  
Դուք ինչքան ուժ ունեք,  
Որ վեր հաներ եք էս մեծ-մեծ քարեր.  
Վա՛, էս ինչ սասուն քարեր են,  
Դուք էն սասուն քարեր  
Ինչպե՞ս հաներ եք էն վերին տեղ,  
Ու քարե սան սուն եք զարկե.  
Էս տուն չեք շինե դուք,  
Ապա սասուն մ'եք շինե:  
Վա՛, քանի սասուն բերդ մի.  
Էս տուն չէ, էս սասուն է:

Սանասարն ասաց.– Բավ է, պապիկ,  
Էլ ձեն մի հանի, էլ անուն մի դնի.  
Ա՛յ պապի, անուն դրվավ,  
Անուն էղավ Սասուն:  
Քանց էդա ավել էլ ինչ անուն:  
Որ դու ասիր՝ սասուն քարեր,  
Քարե սան սուն եք զարկե,  
Մեր բերդի անուն էղավ Սանսուն, Սասուն:  
Մեր բերդի անուն՝ Սասնա տուն:  
Ու էն բերդի անուն կոչվավ Սասուն,  
Էն տան անուն մնաց Սասնա տուն...

15

...Ինչ էր էնոնց սովորություն, արվեստ:–  
Էրկու աղբեր ցերեկ սարեր ման կը գային.  
Կ'էրթային, կը հասնեին չորի ծովափ,  
Որս կ'անեին, իրիկուն կը գային տուն:  
Ավուր մեկին Սանասար ասաց Բաղդասարին.  
– Հա՛յ աղբեր, էրթանք ծովու բերան,  
Մեկ լավ ձի մեզ համար գտնենք, բերենք:  
Հրեղեն էին, գիտեին, որ ծովու ձի կա:–  
Էլան, գնացին ծովու պռուկ.  
Էրկուս նստան էնտեղ:

Սանասար ասաց Բաղդասարին.  
– Աղբեր, արի մեզ տանք վեր էս ծովուն,  
Տեսնենք՝ մարդ կը խրվի՞ մեջ:  
Բաղդասար դարձուց, ասաց.  
– Աղբեր, հոգին քաղցր է.  
Ես ինձ չեմ թալի ծով:  
Սանասար աղբորն ասաց.  
– Լավ, դու կայնի էստեղ, ես կ'էրթամ.  
Թե ես չըխրվա էս ծովի մեջ, դու էլ արի.  
Թե ես խրվա, խեղդվա, դու էլ մի՛ գա,  
Դու էստեղ ողջ կը մնաս:  
Սանասար սիրտ արավ,  
Մեկ Աստծու անուն էտու,  
Ջինք շալապուտիկ արավ, էթալ ծով:  
Աստծու հրամանքով ծով բացվեց,  
Սանասարի աչից առջև էղավ չոր գետին,  
Բաղդասարի աչից ծով կ'էրևար:  
Բաղդասար մնաց էնտեղ ծովու պռուկ,  
Համա կը լար, կ'ասեր.  
«Վայ, իմ աղբեր գնաց ծովու մեջ կորսրվավ,  
Իմ աղբեր գնաց ծով, խեղդըվավ»:  
Որ էլ գէնի չտեսավ,  
Ուշքըն գնաց կըսկըծու,  
Ընկավ ծովու բերան:

Սանասար ծովու մեջ որ մտավ,  
Ինչ չոր գետնի վերա գնաց:  
Գնաց, հասավ ծովու տակ մեկ պարտեզ,  
Տեսավ՝ քոշք ու սարայ մի կա էնտեղ.  
Հավուզ մի կա մեջ էն պարտեզին.  
Էն քոշք ու սարայի առջև ջուր կը թալի:  
Տեսավ Ծովային ձին, Քուռկիկ Ջալալին,  
Էնտեղ կապուկ, թամք սադաֆին վերան պատրաստ,  
Կեծական Թուր վերան կախած:  
Նայեց՝ էկեղեցի մի կա էնտեղ:  
Ինչ մտավ էկեղեցին,  
Ակահ գնաց, թավալեց, ընկավ:  
Մեջ քնուն էրազ տեսավ,  
Մայր Աստվածածին էկավ էրազ, ասաց.  
«Հեյ, Սանասար, էլի վեր:  
Խաչ Պատերազմին կո՞ էստեղ է.  
Էլի՛, յոթ ծունր աղոթք առջև արա.  
Արժան ըլնիս, քեզ կը հասնի,  
Դնես վեր քո աջ թևին, որ դարբ չառնի:

Ծովային ձին, Քուռկիկ Ջալալին,  
 Էնտեղ թամբաժ, սանձըն բերան զարկած,  
 Էրկնուց իջած Թուր Կեծակին վերան կախած.  
 Թե արժան ես, կ'առնես, կը հեծնես:  
 Էստեղ մեկ պահարան կա, բաց.  
 Մեջըն շապիկ զրեհին.  
 Ջրեհի քամարն ի մեջքին.  
 Գլխու գուտն զրեհին,  
 Ջրեհի կոշիկն ի ոտին,  
 Ծանրիկ գուրզ փահլւանին,  
 Ամուր նիզակ, նետ ու աղեղ,  
 Փող պղլորին, պինդ վահան.  
 Ամեն էստեղ է, կ'առնես:  
 Էն դարբասի աղբրի մեջ էլ կըլողանաս,  
 Կը ջոջանաս, կը զորանաս, կտըրճանաս,  
 Քո ուժ կ'ըլնի քան յոթ,  
 Մեկն յոթ կը հավելանա, կը լցվիս.  
 Կ'երթաս քո մուրազին կը հասնիս»:  
 Սանասար քնուց զարթնեց, էլավ, ասաց.  
 «Էն ինչ էրազ էր, ես տեսա.  
 Տեսնես՝ ուղղորդ է, թե՞ սուտ է»:  
 Գնաց էնտեղ, ինչ շանց էտա,  
 Էն պահարան էբաց, տեսավ էնտեղ՝  
 Ինչ էրազի մեջ տեսեր էր:  
 Տեսավ մեկ զրեհի գուտ էնտեղ.  
 Էրկու լիտր բամբակ դներ մեջ,  
 Դներ գլուխ՝ չկայներ.  
 Մեկ զրեհի մեջկապ էնտեղ,  
 Յոթ փաթ էկավ բոլոր մեջաց.  
 Մի ջուխտ զրեհի կոշիկ էնտեղ,  
 Մեկ մեկ լիտր բամբակ դներ մեջ,  
 Հագներ, հալա ջոջ էր:  
 Էկեղեցուց էլավ դուրս,  
 Գնաց, մտավ էն դարբասի հավուզ, լողացավ.  
 Աղբրի ջուր խմեց, քնեց.  
 Քնեց մի քիչ, Աստծու շնորհք առավ.  
 Ջոջացավ, զորացավ, կտըրճացավ,  
 Լցվավ, դարձավ հրեղեն:  
 Վեր էլավ, էն գեստեր կապեց ամեն:

Ըզզրեհի շապիկ հագավ.  
 Ըզզրեհի քամար կապեց,– քամար մեջքով էր,  
 Ըզզրեհի գուտըն էդի գլուխ.– գլխով էր.  
 Ըզզրեհի կոշիկ հագավ,– ոտքով էր.

Ամեն գեստեր, զենքեր առավ:  
 Յոթ ծունր աղոթք արավ,  
 ԶԹուր Կեծակին կապեց վեր իր:  
 Հրեշտակները ըզԽաչ Պատերազմին  
 Դրին վեր աջ թևին,  
 Որ դարբ չառնի Սանասարին:  
 Էլավ, սիրտ առավ, որ ձին հեծներ:  
 Քուռկիկ Ջալալին դարձավ, ասաց.  
 – Հողածին, ինչ կանես, քո միտն ինչ է:  
 Ասաց.– Քե կը հեծնեմ:  
 Ասաց.– Քե կը տամ արեգական, կ'էրեմ:  
 Ասաց.– Ծովային եմ, ինձ կըտամ քո փորի տակ:  
 Ասաց.– Քե կը տամ գետին, կ'էրթաս անդունդք:  
 Ասաց.– Ծովային եմ, ինձ կը տամ քո քամակ:  
 Թռավ քամակ, հեծավ ըզձին,  
 Որ կը տար արեգական՝ էրեր,  
 Ինք էտու ձիու փորի տակ.  
 Որ կը տար գետին՝ էրթար անդունդ,  
 Ինք էտու ձիու քամակ:  
 Ձին քիչ մ'էլ թռավ վեր-վեր,  
 Դես փախավ ու դեն փախավ,  
 Կայնավ վեր հետին ոտներին,  
 Փրփուր էտու վեր բերնին,  
 Չկարցավ ըզՍանասար ձգեր գետին:  
 Խելացացավ, կայնավ, հնազանդեց,  
 Ասաց.– Ես քո ձին, դուն իմ տեր:

Սանասար քեց ըզձին, բաղչով կ'էրթար,  
 Էլի ճամփին ծով բացվեց,  
 Մեկ էլ տեսավ ծովու էրես,  
 Դուրս էլավ, որ գա աղբոր մոտ:  
 Աղբեր գետին նստած կը լար.  
 Տեսավ՝ մեկ սար էլեր սարի վերա, կը գա:  
 Ասաց. «Էն գազան ինձ կ'ուտի.  
 Էն ըզիմ աղբեր քաշեց ի ծով,  
 Ըզիս էլ տի տանի, քաշի ծով»:  
 Չճանչեցավ, վախեցավ, լալով փախավ:  
 Սանասար կանչեց, ասաց.– Բաղդասար, մի՛ փախի:  
 Գնաց, հասավ Բաղդասարին, ասաց.  
 – Ա՛յ տղա, ինչի՞ կը լաս:  
 Ասաց.– Է՛յ, ես չլամ, բա ո՞վ տի լա.  
 Ես եմ իմ մեկ աղբեր.  
 Իմ աղբեր զինք էթալ ծով գնաց, խեղդըվավ.  
 Ես էլ մնացի էստեղ մենակ:

Ապա ես չլամ, ո՞վ լա:  
 Սանասար ասաց.– էյ, տղա՛,  
 Մկա քո աղբեր տեսնես՝ կը ճանչենա՞ս:  
 – Ապա չե՞մ ճանչենար:  
 Ասաց.– Ես քո աղբերն եմ:  
 – Իմ աղբեր էդքան ջոջ չէր.  
 Քանց իս մեկ լար մի ջոջ էր:  
 Իմ աղբեր էդ ձին ո՞ւտ գտավ.  
 Իմ աղբեր էդա զենքեր ո՞ւտ գտավ:  
 Հասավ աղբոր գլուխ պաչեց, ասաց.  
 – Բաղդասար, ես քո աղբերն եմ,  
 Սանասարն եմ, մի՛ վախենար, մի՛ լար:  
 Բաղդասարն էլ Սանասարի գլուխ պագավ.  
 Ասաց.– Աղբեր, քանի դու կ'երևայիր,  
 Ես կ'իրիշկեի քեզի.  
 Երբ դու չերևացիր, ես նստա, լացի:  
 Էնոնք իրար գլուխ պագին,  
 Մեկտեղ էլան, գնացին տուն:



## ԲԱՌԱՐԱՆ

- էդ հետ կանչեց** – այդ ժամանակ կանչեց  
**նշանգահ** – նշան արած տեղ, նշան  
**թորկել** – թողնել  
**աղբերակ** – աղբյուրի ակ  
**թալել** – գցել  
**կոչալ** – գուրծով լցվել  
**լման** – լրիվ, ամբողջ  
**թփռել** – ճյուղերը պոկել  
**վեցկի (վեցկու)** – վեց զույգ եզ կամ գոմեշ լծած գուրծան  
**օստին** – անջրդի արտ  
**ճիվ** – ոտք, թև, ձեռուտոտ  
**իրիշկել** – նայել  
**գորա** – համապատասխան  
**կո** – ահա  
**դարգահ** – դարպաս, մեծ դուռ  
**սասուն քարեր** – շատ մեծ, հսկայական քարեր  
**վաթան** – հայրենիք  
**շալապուտիկ** – գլուխկոնձի  
**ակահ գնալ** – ուշագնաց լինել  
**ինչ չոր գետնի վրա գնաց** – ինչ-ն այստեղ պետք է հասկանալ ինչպես, ոնց  
 որ, կարծես  
**քոջք** – պալատ, ապարանք  
**սարայ** – պալատին (տանը) կից շինություն

**հավուզ** – ջրավազան, լողավազան, ավազան

**թամք սադաֆին** – սադաֆինյա թամբ

**դարբ** – զարկ, հարված

**քամար** – գոտի

**գուրզ** – երկաթե ելուստներով մեծ, ծանր ու կարճ գավազան, որ գործածում էին իբրև զենք՝ այն նետելով թշնամու վրա կամ դրանով խփելով

**փահլևան** – այստեղ՝ ուժեղ, քաջ ու հաղթանդամ մարդ, նաև՝ լարախաղաց, ըմբիշ

**մուրազ** – երազանք, նպատակ, իղձ, ցանկություն

**փող պղլորին** – գալարափող, ռազմի փող

**ուղղորդ** – ճիշտ, ուղիղ

**զրեհ** – զրահ

**զրեհի գուտ** – սաղավարտ

**փաթ** – պտույտ, շրջան, անգամ

**գեստեր** – զգեստներ

**խելացացավ** – խելոքացավ

**լար** – այստեղ՝ երկարության չափ

**ուստ** – որտեղից

Սանասարն ու Բաղդասարը Բաղդադի խալիֆի մոտից փախչելիս 17 տարեկան էին: Նրանք գալիս են հայրենիք և ցանկանում իրենց համար տուն շինել: Սակայն մի պահ հուսահատվում են վայրի կյանքից և փորձում ծառայության մտնել որևէ իշխանի կամ թագավորի մոտ: Դիմում են Մուշի Մուշեղ թագավորին, Արզրումի (Կարին, էրզրում) ամիրային, բայց վերջինները, իմանալով, որ նրանք Բաղդադի խալիֆի որդիներն են, զգուշանալով՝ հրաժարվում են ընդունել:

Հաջորդ անգամ այլևս չեն ասում, թե իրենք ովքեր են և ծառայության են մտնում Մանազկերտի Թևաթորոս թագավորի մոտ: Որոշ ժամանակ մնալուց հետո, տեսնելով նրանց ուժը, շատերը սարսափում են: Թագավորն ստիպված է լինում նրանց հրաժեշտ տալ՝ տղաների խնդրանքով նրանց հետ դնելով քսան տուն աղքատ և քսան տուն հարուստ մարդկանց: Ահա այս ժողովրդի հետ Սանասարն ու Բաղդասարը գալիս են իրենց նշան արած տեղը և կառուցում Սանա քաղաքն ու ամրոցը: Սանասարի առջև ծովը բացվում է, և նա ծովի տակից ձեռք է բերում իր զենքն ու զրահը, Քուռկիկ Ջալալին, ինքն էլ, աղբյուրի ջուրը խմելով, հզորանում է և ուժեղանում:

### ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ո՞ր ճյուղից է այս հատվածը: Ընդհանուր գծերով ներկայացրե՞ք ամբողջ ճյուղի բովանդակությունը:
2. Ներկայացրե՞ք դասագրքում զետեղված հատվածների բովանդակությունը:
3. Սանասարն ու Բաղդասարն սկզբում ո՞ւմ համար են կառուցում իրենց քաղաքի տները:
4. Քառասուն ընտանիքի համար տները եղբայրները քանի՞ օրում են կառուցում:
5. Ինչպիսի՞ քարերով են կառուցում իրենց ամրոցը:
6. Ի՞նչ ժամկետում է կառուցվում ամրոցը:
7. Ո՞վ է դնում նորաշեն բնակավայրի անունը:



8. Ինչ է նշանակում **սասուն** բառը, որ դառնում է հատուկ անուն: «Ու քարե սան սուն եք զարկե» տողում կամ սասուն բառի հնչյունական և իմաստային կազմությունը:
9. Տեղեկատու գրականությունից օգտվելով՝ խորացրեք ձեր իմացությունները Սասուն, Սասնա բերդ, Սասնա տուն տեղանունների մասին: Պատմական Հայաստանի դր մասում է գտնվում Սասունը:
10. Որտեղից է Սանասարը ձեռք բերում Քուռկիկ Ջալալին, Թուր Կեծակին և Խաչ Պատերազմին:
11. Երբ Սանասարը նետվում է ծովի մեջ, ինչ է կատարվում այդ պահին. Սանասարի առջև ծովը բացվում է, իսկ ափին նստած Բաղդասարի աչքին ծով էր երևում: Ինչ հրաշք է սա: Ինչ ապրումներ է ունենում Բաղդասարը:
12. Ինչ տեսավ Սանասարը ծովի տակ՝ պալատ, պարտեզ և էլ ինչ...
13. Ինչ երազ է տեսնում Սանասարը ծովի տակ քնած պահին: Ինչպե՞ս է նա ձեռք բերում Խաչ Պատերազմին, ռազմի փողն ու վահանը:
14. Ինչպե՞ս կմեկնաբանեք այս տողերը.

*Աղբրրի ջուր խմեց, քնեց.  
Քնեց մի քիչ, Աստծու շնորհք առավ.  
Ջոջցավ, զորացավ, կտրրճացավ,  
Լցվավ, դարձավ հրեղեն:  
Վեր էլավ, էն գեստեր կապեց ամեն:*

15. Ինչ են իրար հետ խոսում Սանասարն ու Քուռկիկ Ջալալին: Ինչպե՞ս է Սանասարը սանձում Քուռկիկ Ջալալին:
16. Երկխոսությունն այն է, երբ գործող հերոսներն ուղղակի խոսում են իրար հետ: Առանձնացրեք այդպիսի հատվածներ Սանասարի և Բաղդասարի, Սանասարի և Սասունի անունը դնող Ծերունու, Սանասարի և Քուռկիկ Ջալալիի զրույցներից:
17. Ամբողջացրեք ձեր ընթերցած նյութը. թվարկեք այս ճյուղի բոլոր հերոսներին և սեղմ ներկայացրեք նրանց գործողությունները:

Դյուցազներգության երկրորդ ճյուղում պատմվում է Սասնա մյուս հսկայի՝ Սանասարի որդի Մհերի (Մեծ Մհեր) մասին: Նա ևս հաղթական կռիվներ է մղում և շենացնում Սասունը:

Մհերից և Արմաղանից ծնվում է Դավիթը: Դավիթի ծնունդի ժամանակ նրա հայրն ու մայրը, ըստ իրենց ուխտի, մահանում են: Դավիթը մատնվում է որբության: Քանի որ նա ծնողներ չունի, նրան ուղարկում են Մըսր՝ Իսմիլ խաթունի մոտ: Սակայն մանուկ Դավիթը հրաժարվում է նրա կաթից և սնվում Սասունից բերած մեղր ու կարագով:

Մըսրա Մելիքը նրա եղբայրն էր, որովհետև նրա հայրը ևս Մեծ Մհերն էր: Սա նշանակում է, որ Սասնա տան զորությունն անցել էր թշնամուն: Դավիթին մենք տեսնում ենք որպես հովիվ: Նա վերաջինում է վանքը, երկրից վռնդում Խոլբաշու զորքերին, Մըսրա Մելիքի հարկահաններին: Նա մենամարտում է Մըսրա Մելիքի հետ և վերջնականապես ջնջում նրան երկրի երեսից: Նա ամուսնանում է Խանդութի հետ, ծնվում է Փոքր Մհերը:

Դավիթը միամիտ, ուժեղ, հայրենասեր, բարի, արդարամիտ հերոս է: Նրա կերպարը համապատասխանում է այդպիսի հերոսների հանդեպ ժողովրդի ունեցած պատկերացումներին:

«Սասունցի Դավիթ» ճյուղի մեջ ժողովուրդը խտացրել է դյուցազներգության ամենագլխավոր հատկանիշերը: Այն, ինչ առկա է մյուս հերոսների գործունեության մեջ՝ մանկությունից մինչև հաղթական պատերազմներ, այստեղ ի մի է բերված Դավիթի կերպարի մեջ: Դա է պատճառը, որ երբեմն այս ճյուղի վերնագրով կոչվում է ամբողջ դյուցազներգությունը:

«Սասունցի Դավիթ» ճյուղից ներկայացվում են հատվածներ «Մանուկ Դավիթը Մըսրում», «Դավթի և Մելիքի մենամարտը», «Դավթի մահը» գլուխներից: Առաջինում երևում է Դավիթի միամտությունը, երկրորդում՝ ուժն ու հզորությունը, երրորդում պատկերված է Դավիթի և որդու՝ Փոքր Միերի կռիվը:

ՃՅՈՒՂ ԵՐՐՈՐԴ  
**ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ**  
**ՄԱՆՈՒԿ ԴԱՎԻԹԸ ՄԸՍՐՈՒՄ**

15

Մելիք իշխաններ կանչեց պալատ,  
Էլավ, հայտնեց, ասաց.– Իշխաններ, ի՞նչ կ'ասեք.  
Էդա Դավիթ հիմիկվանե ձեռ կը թալի իմ գուրգ,  
Իմ մարդիկ կը սպանի:  
Մարդու մեկ բարեխիղճ էր, ասաց.  
– Թագավոր ապրած կենա,  
Դավթի խելք չի հասնի, խելք ջո՛ւր է, տղա է:  
– Չէ,– ասաց,– իր խելք իմից, քոնից շա՛տ է:  
Չէ, է՛նոր տի զարկեմ:  
– Թագավոր ապրած կենա,– ասաց,–  
Կուզե՛ս, քելե փորձ մի անենք:  
Թե որ Դավիթ տղա չ'էլավ,  
Էլք զիմ գլուխ, զԴավթի գլուխ զարկեք:  
Մելիք ասաց.– Ի՞նչ փորձ անենք:  
Ասաց.– Բերեք սինի մի ոսկի մի կողմ դնենք,  
Սինի մի կրակ էն մեկել կողմ.  
Դավիթ դնենք էդ կրակի, ոսկու արանք:  
Թե որ կրակ վերցուց՝  
Խելք չի հասնի, տղա է,  
Թե որ ոսկին վերցուց,  
Գնա, գլուխ զարկի:

Բերին, զԴավիթ դրին սեղանի մոտ.  
Ոսկին մի կողք լցրին, կրակ մի կողք:

Դրին Դավթի առջև, ասին.  
 – Դավիթ, *ան, ան, ո՞ր մեկ կուզես:*  
 Դավիթ իր ձեռ պարզեց ոսկուն,  
 Հրեշտակ ձեռնեն բռնեց, տարավ դեհ կրակ:  
 Իր մատ որ կրակին կըպավ, կրակ կպավ մատին.  
 Մատ էրելով՝ տարավ բերան, լեզուն էլ էրեց:  
 Տղան վըժժաց, էլաց:  
 Կրակ բերնեն դուրս հանեցին:  
 Իսմիլ խաթուն Դավթին գրկեց, էլաց:  
 Դավիթ էլ էլաց:  
 Իսմիլ խաթուն ասաց.– Որդի՛, Մելիք,  
 Դու հո տեսա՛ր, էնոր ըսպանել մեղք է:  
 Դու կ'ասեիր՝ թե իր չարությունեն արավ.  
 Ապա տեսա՛ր՝ միամիտ է,  
 Չը հասկացա՛վ, ձեռ տարավ, դրավ վեր կրակին,  
 Հալա լեզուն էլ էրեց, էլավ թլոր:  
 Բարեխիղճ մարդն ասաց.  
 – Թագավոր ապրած կենա,  
 Իմ խոսք ճիշտ է, ճիշտ չէ՛:  
 Ասաց.– Հա՛, շատ ճիշտ էր քո խոսք:  
 Անխելքություն արավ, խելք չի՛ հասնի:



## ԲԱՌԱՐԱՆ

**քելե** – այստեղ՝ արի (եկ). «քելե փորձ մի անենք»՝ արի (եկ) մի փորձ անենք  
**Թե որ Դավիթ տղա չ'ելավ** – տղա, այստեղ՝ միամիտ, երեխա, անմեղ  
**սինի** – սկուտեղ  
**դեհ** – դեպի  
**հալա** – այստեղ՝ դեռ, անգամ, մինչև անգամ  
**թլոր** – թլվատ, թլիկ, կակազ

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչպե՞ս են ստուգում մանուկ Դավիթի միամտությունը:
2. Ինչո՞ւ է Դավիթը կոչվում Թլոր Դավիթ:
3. Դյուցազներգության մյուս մասերից գտե՛ք այլ հատվածներ, որոնք ներկայացնում են Դավիթի միամտությունը: Օրինակ՝ դռան ճեղքից ներս ընկած ճառագայթի հետ գոտեմարտելու տեսարանը, երբ Դավիթը կարծում է, թե ճառագայթը կենդանի ուժ է: Այդպիսի հատվածներ կան նաև «Դավիթը հովիվ» մասում:

## ԴԱՎԻԹԻ ԵՎ ՄԵԼԻՔԻ ՄԵՆԱՄԱՐՏԸ

15

Ձենով Հովան գիշերն երազ տեսավ.  
Մըսրա աստըղ շողին կը տար,  
Սասնա աստըղ կը խավարեր:  
Հովան քնուց էլավ, ասաց.– Կընիկ, վեր էլի, վեր,  
Տեսա՛ Մըսրա աստըղ շողին կըտար,  
Սասնա՛ աստըղ կը խավարեր –  
Դավիթ մեր ձեռքեն գնաց:  
Սառյեն ասաց.– Աստված քո տուն ավրի,  
Դու քուն քեզ համար կը քնես,  
Էրազ խալխին կը տեսնես:  
Ձենով Հովան էլի քնավ:  
Մեկ էլ էրազ տեսավ.  
Մըսրա աստըղ շատ էր պայծառ.  
Սասնա աստըղ խավարեր էր, հա՛, կը հանգչեր:  
Հովան քնից էլավ, ասաց.– Կընիկ, վեր էլի, վեր:  
Ես տեսա՛ Մըսրա աստըղ շատ էր պայծառ,  
Սասնա աստըղ հա՛ կը հանգչեր:  
Սառյեն ասաց.– Քո տուն ավրի,  
Դու ինչի՞ չես քնի, այ՛ մարդ.  
Չը թողիր, որ էսօր քնեմ:  
Ձենով Հովան մեկ էլ քնավ:  
Քնավ, մեկ էլ էրազ տեսավ.  
Տեսավ՝ Մըսրա աստըղ էկավ,  
Ու Սասնա աստըղ կուլ էտու:  
Ասաց.– Կընիկ, վեր էլի, Դավիթ ըսպանեցին:  
Սառյեն ասաց.– Ինչի՞ չես քնի դու, այ՛ մարդ,  
Ով գիտի՛ զոր կընկա ծոց է պառկե Դավիթ.  
Ով գիտի՛ զորտեղ քե՛ք կ'անի:  
Ձենով Հովան ըռկավ,  
Քացի մ'էզար կընկան:  
Կնիկն էլավ ճրագ վառեց:  
Ձենով Հովան ասաց.– Իմ գրահներ բեր:  
Կընիկ բերեց: Ձենով Հովան էլավ.  
Յոթ գոմշի կաշի փաթեց իրեն վերա,  
Յոթ գոմշի շղթա փաթեց իրեն վերա,  
Որ բռռալեն չը պատռվի:  
Հագավ իր զենք-զրահ,  
Գնաց, գոմի դռներ էբաց:  
... Ձենով Հովան պագեց Սևուկ ծիու գլուխ,  
Ասաց.– Սև՛ ձի,  
Երբ տի տանես ինձ հասցնես Դավթի կովին:

Սև ձին ասաց.

– Որ դու կարնաս քեզ վեր իմ քամակին բռնես՝  
Մեկ ոտ թալես զանգուն,  
Զուր մեկել ոտ շուռ տաս մեկել զանգուն,  
Կը հասցնեմ Դավթի կռվին:  
Էլավ, հեծնի Հովան Սև ձին,  
Մի ոտ էդիր զանգուն,  
Զուր մեկել ոտ շուռ էտու մեկել զանգուն,–  
Սև ձին հրեղեն էր–  
Լեռա սարի գլուխ կայնավ:  
Քուռկիկ Զալալին զՁենով Հովան տեսավ,  
Խրխնջալեն էկավ մոտիկ:  
Ձենով Հովան վախցավ, ասաց.  
– Դավիթ սպանված է, ձին փախե, էկե էստեղ:  
Կանգնեց Ձենով Հովան, կանչեց.  
Ձեն ընկավ սար ու ձոր.  
Ասաց.– Դավիթ, ո՞ր ես,  
Հիշա՛, Մարութա բարձր Աստվածածին,  
Հիշա՛ զԽաչ Պատերազմին,  
Ինչ վեր քո աջ թևին,  
Ու թափ տուր քեզ...

Կանչեց...

Հովանի ձեն հասավ, ընկավ Դավթի ականջ.  
Դավիթ ասաց.– Հայ-հայ,  
Հրողբերս է էկե էստեղ.  
Ինձ կը կանչի.  
Յա՛, Մարութա բարձրիկ Աստվածածին,  
Խաչ Պատերազմին, վեր իմ աջ թևին:  
Ասաց, զինք թափ էտու:  
Էրկաթե օղ ու շղթաներ թռան երկինք,  
Ջաղցի քարեր բլան, թռան,  
Էնոնց ամեն կտոր քառսուն մարդ ըսպանեց:  
Դավիթ թռավ, կանգնավ հորի բերան, ասաց.  
– Մըսրա՛ Մելիք, էլ դու բեբախտություն չ'անես:  
Լուսուն տղամարդո՛ւ նըման կռվենք...

16

... Մըսրա Մելիք ասաց.

– Դավիթ, կըռիվ զոռովեն անենք, թե՛ հերթով:  
Դավիթ ասաց.– Ինչպես քո ջան կուզի:  
Մըսրա Մելիք ասաց.  
– Կուզեմ հերթով անենք.  
Իրեք դարբ մեկ զարկի,

Իրեք դարբ մեկել զարկի:  
Առաջ ղվ տի զարկի:  
Դավիթ ասաց.– Առաջ դո՛ւ զարկ,  
Տարիքով մեծ դո՛ւն ես:  
Դավիթ ձիուց էկավ տակ.  
Գնաց, կանգնեց մեջ դաշտին:  
Ասաց.– Մըսրա՛ Մելիք, քո դարբեր զարկ:  
Մըսրա Մելիք իր գուրգ առավ,  
Քըշեց, գնաց մինչև Ֆարկին.  
Իրեք ավուր ճամփա՛ն անցավ,  
Քըշեց էկավ հասավ Դավթին,  
Գո՛ւրգ մի զարկեց Դավթին:  
Ինչպես շո՛ւն մի օռնա՛ գետին պոռթեց,  
Ինչպես քառսուն ջուխտ գոմեշներ լծես,  
Գութան վարես՝ գետին պոռթա,  
Թոզ ու դուման էրկիր-էրկինք բռնեց,  
Օր ու գիշեր էդ թոզ չիջավ գետին:  
Մելիք ասաց.– Է՛, Դավիթ, հող էիր,  
Հող դարձուցի:  
Դավիթն ասաց.– Մելիք, դեռ ես կենդանի եմ:  
Էդ մեկ, մեկ էլ զարկի:  
Մելիքն ասաց.– Հա՛, տնավեր,  
Էս մեկ անգամ ճամփաս մոտ էր.  
Թափ չը մնաց մեջ իմ գուրգին:  
Ասաց, դարձավ, մեկ էլ քըշեց:

Գընաց, հասավ չուր Դիարբեքիր  
Ու էնտեղից քըշեց, էկավ Դավթի վերա:  
Էկավ՝ իր գուրգ թալեց Դավթին:  
Ինչպես առյուծ օռնա՛ գետին պոռթեց,  
Ինչպես հեղեղ ավերի, գետին պոռթեց.  
Թոզ ու դուման էրկիր-էրկինք բռնեց,  
Արեգական էրեսն առավ:  
Էրկու գիշեր ու էրկու օր էդ թոզ կանգնեց Դավթի վերա:  
Մելիք ասաց.– Դավիթ, հալա կենդանի՞ ես:  
Հող էիր, քեզ հող դարձուցի:  
Դավիթն ասաց.– Մելիք, կենդանի՛ եմ.  
Էսիկ էրկու, մեկ էլ զարկի:  
– Հայ-հայ,– ասաց Մելիք,–  
Իմ ձիու մանգզիլ քի՛չ էր.  
Թափ չը մնաց մեջ իմ գուրգին:

Նորեն Մելիք դարձավ, գընաց,  
Քըշեց, հասավ Մըսր քաղաք:

Ու Մըսրից քըշեց, էկավ Դավթի վերա:  
Էկավ, գուրզ մ'էլ զարկեց:  
Ինչպես զարնան ամպ գոռգոռա՝ էրկիր պոռթեց.  
Ինչպես էրկրաշարժ մի զարկի՝ էրկիր պոռթեց:  
Թող ու դուման էրկիր-էրկինք բռնեց,  
Արեգական էրեսն առավ.  
Իրեք ցերեկ, իրեք գիշեր  
Էդ թող կանգնեց Դավթի վերան:  
Մելիք ասաց.- Մեռավ Դավիթ.  
Հող էր Դավիթ, հող դարձուցի:  
Ինչ թող-դուման գետնեն էլավ,  
Դավիթ, իր ձին էլան, իրենց տեղ կանգնեցին:

Դավիթ ասաց.- Մելիք, դու քո դարբեր պրծար:  
Հերթ ինձ հասավ:  
- Էյ,- ասաց.- տնավեր, մեկ էլ էրթամ:  
- Չէ, չէ,- ասաց,- դու ո՞ր տ'էրթաս:  
Հերթ իմն է. աշխարհ հերթով է, թե՞ զոռով:  
Մելիքի մեր էկավ, ասաց.  
- Դավիթ, Մելիք քո աղբերն է.  
Բերախտություն չ'անես:  
- Հա՛, մարե՛, չե՛մ անի բերախտություն.  
Իրեք դարբ տի զարկեմ Մելքին:  
Մելիք ասաց.- Դավիթ, քեզնե կը խնդրեմ.  
Յոթ սհաթ ժամանակ տաս ինձ:  
Թող ես էրթամ, վրանի տակ պառկեմ,  
Դու գաս ու ինձ զարկես:  
Ասաց.- Գընա՛, պառկի՛,  
Մենակ թե ինձ ասա, Մելիք,  
Ինչո՞վ զարկեմ. թրո՞վ զարկեմ, թե՞ իմ գուրզով:  
Մելիք իր մտքի մեջ ասաց.  
«Ջանըմ, էդ գուրզ որ ինձ զարկի՛  
Էդ գուրզին դիմանա՞լ կ'ըլնի»:  
Ասաց.- Դավիթ, թրո՞վ զարկի:

17

Գընաց Մելիք վրանի տակ, ասաց.  
- Ես իրեք դարբ Դավթին զարկի,  
Դավթին ըսկի բան մի չ'էղավ.  
Հիմի Դավիթ կը գա, հստեղ ինձ կը զարկի:  
Մելիքի մեր ասաց.  
- Մելիք, արի՛ մտի մեջ էդ հորին:  
Մելիք մտավ մեջ հորին:  
Քառսուն գոմշու կաշի բերին քաշին վերան,

Քառսուն ջաղացի քար դրին վերան,  
վերմակ քաշին քարի վերան:  
Մելիք մեջ էն հորին հանգիստ նստեց, ասաց.  
– Հիմի հերթ Դավթինն է:  
Դավիթ գիտի, թե էն ինչ արեր է.  
Կը գա, կը տեսնա ջաղացի քար,–  
Չէ որ հորու բերնին դրած էսպես բարձրացեր է–  
վերմակ քաշած քարի վերա:  
Գիտի, որ էնքան Մելիքի ջանդաք չի:  
Ապա Մելիքի մեր էնտեղ կայնուկ է:  
Դավիթ չ'ասաց՝ զՄելիք հանեք դուրս, տեսնեմ:

Հեծավ Դավիթ Քուռկիկ Ջալալին,  
Գնաց հասավ չուր Ծովասար.  
Քաշեց իր Թուր Կեծակին,  
Քըշեց իր Քուռկիկ Ջալալին,  
Էկավ, որ տի զարկեր՝  
Իսմիլ խաթուն ...  
Դավթի առաջ վազեց, ասաց.  
– Դավիթ, ...  
Դու իմ կաթի խաթեր էդ զարկ ինձի բախշի:  
Դավիթ ասաց,– Մարե՛, ինչի՞ դուն չուր հիմիկ,  
Մելիքի զարկ կը գար մեջ իմ գլխուն,  
Մեկ մ'էլ չ'ասիր՝ Մելիք, զարկ մի ինձի բախշի:  
Դավիթ իր թուր իջեցուց, տարավ, բերեց  
Բարձրացուց էդ թուր, համբուրեց,  
Դրեց ճակատին, ասաց.– Մարե՛,  
Էս մեկ զարկ քո խաթեր:

Մեկ էլ դարձավ, գնաց Դավիթ,  
Իր ձին քըշեց էկավ. էկավ, որ տի զարկեր՝  
Մելիքի քուր վազեց էնոր առաջ, ասաց.  
– Դավիթ, դու որ պստիկ էիր՝  
Էս քեզ շատ եմ գրկեր, պահեր, խաղցուցեր եմ,  
Էդա մեկ թուրն էլ ինձ բախշի:  
Դավիթ էդ թուր իջեցուց, տարավ, բերեց,  
Բարձրացուց էդ թուր, համբուրեց,  
Դրեց իր ճակատին, ասաց.  
– Էս մեկ զարկ էլ քո խաթեր:  
Մընաց մեկ զարկ, մեկ Աստված, մեկ ես–  
Յա կը սպանեմ, յա կը թողում:

Դավիթ դարձավ,  
Գընաց, հասավ Սասնա սարեր,

Քըշեց, էկավ Մելքի վերա:  
Որ տի հասներ հորի բերան՝  
Իսմիլ խաթուն իր հետ բերած կնիկներուն,  
Էդա ազապ աղջիկներուն,  
Էդա շավար քաշողներուն ասաց.  
– Շնուտ, շավար քաշեք,  
– Շնուտ, փողեր փչեք,  
– Շնուտ, թմբուկ զարկեք,  
– Շնուտ, ձեր քաֆկիրներ բռնեցեք ձեր ձեռ,  
– Խաղացեք, խորոտ խաղացեք,  
– Դավիթ որ գա՝ ազապ տըղա է,  
Կ'իրիշկի ձեզի, զարկ թո՛ւլ կը զարկի,  
Մելիք չի՛ սպանի:

Աղջիկներ էլան,  
Շավար քաշեցին,  
Փողեր փչեցին,  
Թմբուկներ զարկին,  
Էլան, խաղ կ'անեն:  
Ապա Դավիթ գիտի.  
– Էդա ինձի՛ համար կ'անեն,– ասաց,–  
Կ'ուզեն ինձի շըշկըռացնեն:  
Կանչեց, ասաց.  
– Յո՛ւ Մարութա բարձրիկ Աստվածածին,  
Յո Խաչ Պատերազմին, ինչ վեր իմ աջ թևին:  
Կանչեց, զարկեց Թուր Կեծակին:

Կըտրեց քառսուն ջաղացի քար,  
Կըտրեց քառսուն գոմշու կաշին,  
Կըտրեց հըրեշ Մըսրա Մելքին,  
Կըտրեց ճակտից, ոտքերուց դուրս էլավ  
Ու յոթ գազ էլ մտավ գետին,  
Գնաց հասավ սև ջուր:  
Թե հրեշտակ իր թև չ'աններ առջև,  
Սև ջուր տ'էլներ, աշխարք առներ:  
Մըսրա Մելիք կանչեց, ասաց.  
– Դավիթ, ես էստեղ եմ,  
Մեկ էլ զարկի:  
Դավիթ ասաց.– Մըսրա՛ Մելիք, քեզի թա՛փ տուր:  
Մըսրա Մելիք զինք թափ էտուր,  
Մեկ կտոր ընկավ էստեղ, մեկե՛լ՝ էստեղ:  
Մըսրա Մելիք խատա՛վ:  
Դավիթ ասաց.– Մարե՛,  
Վերմակ բացե՛ք, տեսնեմ Մելիք:

Ասին.– Գնա՛, մենք կը բանանք:  
 Դավիթ զձին քըշեց, էկավ կանգնեց,  
 Ձեռ էթալ, վերմակ բացեց,  
 Տեսավ քառսուն ջաղցի քարեր,  
 Ամենն էլ թրի առջև կտրտված.  
 Իր ձեռ էթալ, քարեր վերուց. գցեց:  
 Տեսավ քառսուն գոմշու կաշիք՝  
 Ամեն կտոր–կտոր արած:  
 Մելիքի մեր կռացավ էդ հորի վերան,  
 Կանչեց.– Մելիք, Մելիք, Մելիք:  
 Մելիք ձեն չ'էտու:  
 Մելիքի մեր ու քիր նստան էնտեղ, վերան լացին:  
 Ապա մեր դարձավ Դավիթին, ասաց.  
 – Դավիթ, սպանեցիր Մըսրա Մելքին,  
 Վնան չը կա, դու էլ իմ տղան ես:  
 Արի՛, էտոր կնիկ դու ա՛ռ,  
 Մըսրա թագավորություն մնա՛ քեզի,  
 Սասուն զաթի քոնն է:  
 Դավիթ ասաց.  
 – Ես մորե որ ծնվեր եմ՝ անարա՛տ եմ,  
 Ես իմ հալալ լեշ հարամ լեշերու չեմ խառնի:  
 Կուզես արի, քե կը տանեմ մոտ ինձ, Սասուն:  
 Ասաց.– Չէ՛, Դավիթ, չեմ գա Սասնա էրկիր:  
 Ասաց.– Որ չես գա մեր Սասնա էրկիր,  
 Գընա՛, Մըսր տվեր եմ քե, ապրի:

Դավիթ ձիու գլուխ շրջեց,  
 Էլավ, գընաց մեջ գորքերին.  
 Ինչ գորք, գորական մնացե՛  
 Կանչեց, հրամայեց, ասաց.  
 – Ամենիդ իրավունք կը տամ.  
 Ուր տեղեն էկեր եք՝ էլեք, գնացեք ձեր տեղ,  
 Էլեք գնացեք ու ձեր տներ նստեք,  
 Դուք ինձ համար աղո՛թք արեք,  
 Իմ հորն ու մորն էլ օղորմի՛ տվեք.  
 Հանդարտ կացեք,  
 Մեկ էլ չ'էլնեք ու գաք վեր Սասնա:  
 Մեկ էլ որ զենք առնեք մեր դեմ,  
 Թե որ դուք կռվի գաք վեր մեզ՝  
 Քառսուն գազ խոր հորում ըլնեք,  
 Թե ջաղացի ջոջ քարի տակ,  
 Տ'էլնի ձեր դեմ Սասնա Դավիթ,  
 Տ'էլնի ձեր դեմ Թուր Կեծակին:

Էդա զորք Դավթին օրհնեց,  
Համա դժար կը հավատար, թե Մելիք սպանուկ է:  
– Հա՛, Դավիթ,– կ'ասեն,–  
Մեռնենք մենք քո գլխուն,  
Ո՛ւր էլ գնաս՝ Աստված հետ քեզ,  
Աստված քո բան միշտ աջողի,  
Աստված քեզ ջանսաղություն տա,  
Աստված քո հոր ու մոր արքայություն տա:  
Իսմիլ խաթուն առավ իր զորք, գընաց Մըսր.  
Էն էկած թագավորներ, փաշեք ու զորքեր  
Էլան, ցրվեցան չորս կողմն աշխարհին,  
Դավթի արած կտրճություն ամեն տեղ պատմեցին,  
Ասին.– Դավիթ իր հոր ուխտ արավ՝  
Մըսրա Մելիք սպանեց,  
Սասուն ազատեց:





## ԲԱՌԱՐԱՆ

**խալիս** – այստեղ՝ ուրիշներ, օտարներ, նշանակում է նաև ժողովուրդ, հանրություն

**ըռկել** – պոռոշ կախել, խռովել, նեղանալ, զայրանալ, վիրավորվել

**փաթել** – փաթաթել

**զանգու** – ասպանդակ, թամբից կախված և հեծնելիս ու վարելու ժամանակ հեծյալի ոտքերը դնելու տեղ

**էն դիր** – այն ժամանակ

**մկա** – հիմա

**քյահլան** – նժույգ, ընտիր ձի

**մեյդան** – հրապարակ, ասպարեզ

**Ֆարկին** – Նփրկերտ քաղաքի անունը, գտնվում է Սասունից հարավ-արևմուտք, Դիարբեքիից հյուսիս-արևելք

**մանգզիլ** – ձիու վազքի ասպարեզ, տարածություն

**բեբախտություն** – անբախտություն, նենգություն

**թոզ ու դուման** – փոշի, դուման՝ մշուշ. այստեղ՝ փոշու ամպ

**սհաթ (սահաթ)** – ժամ, ժամանակ, պահ

**ըսկի** – ամենևին, հեչ

**ջանդաք (ջանդակ)** – մարմին

**յա** – այստեղ՝ կամ, նաև ձայնարկություն է՝ համարժեք հեյ-ին

**շավար (շավար քաշող)** – քամանչայի վրա նվագող

**քաֆկիր** – քափը (փրփուր) քաշելու շերեփ

**ազապ** – չամուսնացած

**զազ** – այստեղ՝ երկարության պարսկական չափ = 112 սմ

**խատնել** – հատնել, վերջանալ, մեռնել

**զաթի** – առանց այդ էլ

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ո՞ր ճյուղից է այս հատվածը: Ընդհանուր գծերով ներկայացրեք ամբողջ ճյուղի բովանդակությունը:
2. Ներկայացրեք այս հատվածի բովանդակությունը:
3. Ձենով Հովանն ի՞նչ երազ է տեսնում Դավիթի վրա և ի՞նչ է անում: Իր հզոր ձայնից չպատռվելու համար ինչպե՞ս է ամրացնում իրեն:
4. Դավիթը Մսրա Մելիքի դավադրությամբ որտե՞ղ էր այդ պահին հայտնվել: Ձենով Հովանի կանչով ի՞նչ է հիշում և ի՞նչ է անում:
5. Դավիթի և Մելիքի մենամարտի ժամանակ ո՞վ է առաջինը հարվածում: Նկարագրեք Մսրա Մելիքի երեք հարվածները:
6. Դավիթի հարվածների ժամանակ Մելիքը որտե՞ղ է թաքնվում:
7. Ո՞ւմ է բաշխում Դավիթն իր առաջին ու երկրորդ զարկերը:
8. Երրորդ զարկից հետո ի՞նչ է կատարվում Մելիքի հետ:
9. Մելիքին սպանելուց հետո ի՞նչ է առաջարկում Իսմիլ խաթունը Դավիթին, և ի՞նչ է պատասխանում Դավիթը:
10. Ի՞նչ է ասում Դավիթը Մսրա զորքին:

...- Թե որ էդ տղան Դավթի տղան է,  
 Էնոր մոտեն նշան մի, զորությոն մի տ'էլնի:  
 Էլան զտղեն բարուրեցին,  
 Գութնի շղթաներ բնդի տեղ փաթթեցին վեր էնոր,  
 Տղան էր՝ ինչ էլաց ու ճմլտկաց մեջ ճղորին,  
 Էն շղթաներ կտոր-կտոր էղան:  
 Դեհ, Դավթից ու Խանդութից  
 Մանդր տղա հո՛ չ'ըլներ...  
 Տեսան որ՝ Ազնանցորդի՛ է:  
 Համա տղան, որ կը լողկըցուցեն,  
 Տեսան՝ մեկ ձեռք խուփ է:  
 Ինչ ճար արին-չարին,  
 Տղի ձեռք չբացվավ,  
 Քաղաք քաղքով չեն կարնա՛ էնոր ձեռք բանա,  
 ... Թորոս առավ ըզտղան, տեսավ.  
 Զմանուկի ձեռք մաժեց, մատներ բացվան,  
 Տեսավ, կաթ մի արուն ձեռքի մեջ.  
 Ասաց.- Հայ, հայ, թե քար էտոր մուտ տա, մուտ տա,

Հո՛ղ չի կարենա պահի,  
 Զաշխարք արեր է կաթ մի արուն,  
 Դրեր է մեջ ձեռքին:  
 Թե որ էդի մնաց,  
 Էդոր մոտեն զարմանալի բան տ'էլնի:  
 Մնաց էրկու-իրեք օր,  
 Խանդութ տղան էտու կնքել,  
 Անուն էդիր Միեր:  
 Ինչ խալխի տղեք տարով կը ջոջանային,  
 Միեր օրով կը ջոջանար,  
 Ինչ ամսով, Միեր՝ ժամով:  
 Մնաց ժուկ մ' ու ժամանակ մի՛  
 Քեռի Թորոս էլավ, առավ զՄիեր,  
 Առավ զԽանդութ խանում,  
 Էկան, էլան Սասուն:



Տարին որ թամամավ,  
 Միեր էլավ, գնաց մեջ քաղքին ման կը գար:  
 Զոջ գետ մի Սասնու քաղքի առջևեն կ'էրթար.  
 Միեր վեց էլից կամուրջ կապեց վեր էն գետին:  
 Որ մարդիկ կ'էրթային՝  
 Վեր կամրջին ինի կ'էրթային,  
 Միեր կ'էրթար, մարդեր կը տփեր, կ'ասեր.

– Շան որդիք, ես կամուրջ կապեր եմ,  
Ձեզ համար եմ կապե.  
Ինչի վեր կամրջին կ'էրթաք,  
Մարդիկ կը դառնային, գային,  
Ջարկեին, ջրով անցնեին:  
Միեր կ'էրթար, կը տփեր, կ'ասեր.  
– Շան որդիք, ես կամուրջ կապեր եմ,  
Ձեզ համար եմ կապե,  
Դուք ինչի կը տաք ջրին,  
Ջուր գծե տանի, մեղք ընկնի իմ վիզ:  
Քաղքցիք էկան մոտ Քեռին գանգաւ:  
Քեռի Թորոս զՄիեր խրատեց:

### 3

Յոթ տարին լրացավ, Դավիթ չ'էկավ:  
Միեր իր մորն ասաց.  
– Իմ մեր, իմ հեր ո՞ւր է.  
... Գնացե Գյուրջիստան էրկիր,  
Քառսուն փահլւաններուն պսակի, գա.  
Մեկ ոսկե բազբանդ էլ տվե,  
Որ իրեն տղա ըլնի՝ կապեմ թեին,  
Ճամփեմ գնա էնոր առջև:  
Միեր ասաց.– Ես տ'էրթամ իմ հոր գտնեմ:  
Մերն էլ էբեր ոսկե բազբանդ,  
Կապեց Միերի թեին,  
Գյուրջիստանի ճամփան նշանց էտու:  
Միեր գնաց ախոռ, ձի մի հանեց,  
Ջենքեր առավ, հեծավ, ընկավ ճամփա:

Էկավ մեջ դաշտին, իրիշկեց՝  
Տեսավ թուխմորուս մարդ մի,  
Խորոտ աղջիկ մի առե ձիու զավակ, կուգա.  
Միեր կանչեց.– Էյ, մարդ,  
Դու միրուքավոր մեկ մի, էդ ջահել աղջիկ  
Քե վայել է, որ առեր, կը տանես:  
Էդ աղջիկ տի տաս ինձի:  
Ասաց.– Տղա՛, դու գյադա մի,  
Քեզի վայել է, ինձի վայել չէ:  
Ասաց.– Էնդուց ինձի վայել է,  
Ես ազապ, էն ազապ:  
Դավիթ արավ, որ անցներ,  
Միեր ձեռ էթալ, ասաց.  
– Չեմ իտա, տ'առնեմ քո մոտեն:

Էնտեղ Դավթի սիրտ էլավ, ասաց.  
– Հայ-հոյ, հայ-հոյ, իրիշկեցեք.  
«Շատ ծովեր են մտե.  
Իմ ձիու ճանճեր չեն թացվե.  
Հիմիկ մեկ բարակ առու են տեսե,  
Չի թողնի, որ ես անցնեմ:  
Շատ սարեր, քարեր են ման էկե,  
Իմ առջև դեմ կանգնող չէր էղե,  
Մեկ բարակ բատան են տեսե,  
Շատ են մոտեն վախեցե»:  
Դավիթ որ պրծավ, Միեր ասաց.

– Գյուվա բարակ առուն են են,  
Գյուվա բարակ բատան են են:  
Ձիուց վեր էլի, ես դու կայնենք կուշտի:  
Դավիթ ձիուց վեր էկավ, ասաց.– Կայնի,  
Էս աղջիկ տանեմ էնտեղ,  
Նոր ես դու կռվենք:  
– Էլի տար,– ասաց Միեր:  
Տարավ, աղջիկ էդիր սարի գլուխ,  
Ինք դարձավ էկավ էնտեղ:  
Դավիթ, Միեր մտան կուշտի:  
Էնպես զարկվան, կռվան իրարու հետ,  
Փոշին էլավ էրկնուց էրես բռնեց,  
Քրտինք իջավ գետին, ցեխ արեց:  
Էնոնց գուրզի զորությունից  
Քամին զարկեց Դավթի թաշկինակ տարավ,  
Տարավ, թալեց առջև Խանդուբի դռան:

Խանդուբ խանում էլավ դուրս,  
Իրիշկեց, փոշին աշխարք բռներ է:  
Տեսավ էնտեղ մեկ թաշկինակ.  
Առավ, հոտ արավ, ասաց.  
«Ըհը, էս Դավթի թաշկինակն է»:  
Տեսավ՝ գրգռոց ընկե դաշտ:  
Էլավ, ձին հեծավ, քեց գնաց.  
Տեսավ՝ թոզ-դուման կ'էլնի,  
Ինչ որ էրկու սար  
Կը գան, դիպնեն իրար,  
Էնպես էն Դավիթ, Միեր առած իրար,  
Արընի մեջ լող կը տան:  
Մարդ չէր կարենա մոտենա:  
Խանդուբ խանում առավ կանչի, ասաց.

«Դավիթ, դու մի՛ զարնի,  
Դավիթ, դու մի՛ զարնի,  
Մեր նորեղուկ մեկ տակ մանուկին»:

Դավիթ ինք չի զարնի,  
Համա կուզի իր հոգին փրկի,  
Իր ահու կը զարնի Մհերին:  
Մհեր դարձավ, ասաց.  
– Մարե՛, դու հոգ մի՛ անի,  
Էնոր զարկեր կը նմանի Ծովասարու քամի,  
Որ կը հասնի իմ մազերուն:

Խանդուք խանում դոր ասաց.

«Մհեր, դու մի՛ զարնի,  
Մհեր, դու մի՛ զարնի,  
Մեր թուխմորուս Դավթին»:

Մհեր իսկի չը լսավ:  
Խանդուք խանում դոր երգեց.

«Սարե՛ր, հըմդաթ էկեք,  
Ձորեր, հըմդաթ էկեք,  
Հեր, տղեն մե-մեկից բաժանեք»:

Սարեր, ձորեր հըմդաթ կը գան,  
Սարեր, ձորեր հըմդաթ չեն իգա:  
Խանդուք խանում կանչեց.

«Օրհնյա՛լ, բարերար Աստված,  
Քո հրամանքն էր շատ.  
Հրաման էնես՝ Գաբրիել հրեշտակ վար իջներ,  
Հեր, տղեն մե-մեկից ետ կտրեր»:

Աստծու հրամանքով Գաբրիել հրեշտակ վար իջավ,  
Ձեռ էտու, հեր-տղան ետ կտրեց իրարուց,  
Ինչ որ էրկու աքլոր կռվեն, մեկ էրթա, ետ կտրի:

Դավիթ դարձավ, ասաց.  
– Ա՛յ տղա, դու ինձի տի սպանեիր,  
Իմ կտրիճի ձեռնեն ինչպե՛ս տի պրծնեիր:  
Ասաց.– Քո կտրիճն ո՞վ է:  
Ասաց.– Իմ կտրիճն է՛ն է,  
Ինչ ոսկի բազբանդ կո վեր թևին:

Տղան իրիշկեց վեր իր թևին,  
Տեսավ՝ ոսկի բազբանդ կապած է.  
Լացեց, հասավ Դավթի ձեռք պագեց, ասաց.  
– Իմ հեր դո՞ւն ես, ես քե մեղա:  
Դավիթ կանչեց, ասաց.  
– Մհեր, որ դու հետ ինձի կռիվ արիր,  
Ինձ ամաչեցրիր,  
Կանչեր եմ քաղցրիկ Աստված,  
Անմահ ըլնիս, անժառանգ:

... Կնիկ, ես տ'էրթամ Չմշկիկ Սուլթանի մոտ,  
Էրթում արի յոթ օր, գնաց յոթ տարի.  
Ես էրթմսակոտոր եմ էլե,  
Կնիկ, ես գնացի...

... Չմշկիկ Սուլթան տեսավ՝  
Դավիթ եկավ առջև իրեն սարին, ասաց.  
– Դավիթ, դու երդում էիր արե յոթն օր,  
Քո էրդում տարար յոթ տարի,  
Ես մնացի առանց մարդ,  
Քո ճամբան կ'իրիշկեմ:  
Ասաց.– Դեհ, քո պատրաստություն տես,  
Ելնենք մեյդան, կռվենք:  
Էն էլ ասաց.– Մեկ ժամ ժամանակ տու,  
Ջիմ շորեր հագնեմ, զենքեր կապեմ, գամ:  
Դավիթ կապեց գ-Քուռկիկ Ջալալին  
Վեր Չմշկիկ Սուլթանի դռան, ասաց.  
– Ձին էստեղ թող մնա,  
Ես էրթամ գետ, լողանամ,  
Չուր, քո շորեր հագնես, գաս:

Դավիթ շորեր էհան,  
Մտավ գետ, մեջ ջրին լողանա:  
Էդ ջրի ափ եղեգնուտ էր,  
Չուր Չմշկիկ Սուլթան կրգար  
Էնոր աղջիկ առավ նետ-աղեղ,  
Էկավ էդ եղեգներու մեջ պահ մտավ:  
Դավիթ որ լողանալու հետ էր,  
Էդ աղջիկ գողտուկ էլավ՝  
Թունավոր նետով էգար Դավթին.  
Որ էգար մեջքին, ծակեց,  
Սրտեն ինի էտու դուրս:  
Որ զարկեց՝ Դավիթ բռռաց,  
Էնոր մոտեն յոթ գոմշու ձեն էլավ,

Գնաց հասավ Սասուն,  
Քեռի Թորոս լսեց Դավթի ձեն,  
Ասաց.– Տղեններ, ելեք,  
Մեր Դավթին զարկեցին:  
Քեռի Թորոս, Ձենով Հովան, Ճնճափորիկ,  
Խոր Մանուկ, Խոր Գուսան ժողվին իրար:  
Ձենով Օհանն էլ Սասունու բռնաց.  
– Դավիթ, կո մենք էկանք:  
Ու էկան Դավթին օգնության:  
Էկան, հասան էն ջրի մոտ:  
Քեռին հարցուց Դավթին.  
– Տղա՛, Դավիթ, քեզի ո՞վ զարկեց:  
Ասաց.– Չեմ գիտի ով զարկեց.  
Էն եղեգնուտեն մեկ մի էլավ, զարկեց:

Գնացին եղեգնուտի մեջ,  
Փնտրեցին, գտան, տեսան՝  
Մեկ չինի աչքերով աղջիկ.  
Ինչ Դավիթ բռնացեր էր, մեռեր էր ահու:  
Էդ աղջիկ Չմշկիկ Սուլթանի աղջիկն էր:  
Դավիթ որ իմացավ՝ ասաց.  
– Իմ ցեց իմ անձից է,  
Էդ իմ սերմն էր, որ ինձի սպանեց:  
Դավիթ էդ խոսք ասաց,  
Ու ինքն էլ էնտեղ մեռավ,–  
Արև էտու ձեր որդոց:

Էն մեռավ, ձին էնտեղ ծռավ,  
... Գնաց, կանգնավ առջև Խանդութ խաթունի դռան:  
Խանդութ խանումն էլ էլավ, իրիշկեց,  
Տեսավ ձին էկե, տեր հետ չը կա...  
... Էս անգամ Խանդութ էլավ բերդի գլուխ  
Ու էնտեղեն իրեն թալեց...  
... Բերին, էրկուսին էլ պատանքեցին,  
Էլան էրկսի նշան էլ կապեցին իրարու,  
Քառասուն տերտերով, քառասուն վարդապետով,  
Քառասուն էլ սարկավագով,  
Քաղքի ժողովուրդն էլ բոլորը հետ.  
Լալով, գոռալով, ժամով–պատարագով,  
Տարան էրկուս մեկտեղ Ծովասար,  
Մարութա վանք թաղեցին,  
Յոթն օր սուգ կապեցին...



## ԲԱՌԱՐԱՆ

**բինդ** – փաթաթան, **բինտ** – վիրակապ

**ճղոր** – օրորոց

**իմալ** – ինչպես, ինչպիսի

**մուտ տալ** – մուտք տալ, ներս առնել

**ժուկ** – կարճ ժամանակ, պահ

**վեց էլից կամուրջ կապեց** – վեց հենման կետով կամուրջ կապեց

**ինի** – ներս, մեջ

**Գյուրջիստան** – Վրաստան

**բազբանդ** – ապարանջան, ձեռքի դաստակից վեր՝ կրելու թանկարժեք շղթա

**թուխմորուս** – սև մորուքով

**գյադա** – վիրավորական դիմելաձև՝ լակոտ, ոչնչություն, նաև տղա

**բատան** – ցանկապատ, պարիսպ, չափառ

**գյուվա** – իբր, իբր թե

**կուշտի կպնել** – ըմբշամարտ

**հըմդաթ** – օգնություն

**լաճ** – տղա

**դոր** – այստեղ՝ նրան, **դոր ասաց** – նրան ասաց

**էրթմնակոտոր** – երդումը կոտրել, երդումնազանց լինել, երդումնադրուժ,

ուխտադրուժ

**իրիշկել** – նայել

**չուր** – մինչև

**էզար** – զարկեց

**չինի աչքեր** – շեղ աչքեր

**ցեց** – այստեղ՝ կեղեքում, հոգետանջություն, բուն իմաստով՝ բրդեղենի, մուշտակեղենի, հացահատիկի, կահույքի ուտիճ, նաև մաշկի հիվանդություն

**թալել** – նետել, գցել, շարտել

**վարդապետ** – կուսակրոն քահանա, հոգևորականին տրվող գիտական աստիճան, նաև ուսուցիչ, առաջնորդ, կա նաև ծայրագույն վարդապետ

**սարկավազ** – քահանայից կրտսեր եկեղեցական պաշտոնյա, քրիստոնեական համայնքի տնտեսական գործերի վարիչ

**Ծովասար** – Սասնա լեռնաշղթայի գագաթներից (բարձրությունը՝ 3355 մ): Սեղանաձև գագաթի տեսքով կոչել է նաև Սեղանսար: Երկու ձևով էլ հիշատակվում է «Սասնա ծռեր»-ում: Ծովասարի գագաթին գտնվում է Կռնկի լճակը:

**Մարութա վանք** – սասունցիների աղոթատեղին՝ Սուրբ Աստվածածին վանքը Մարութա սարում: Մարութա լեռ, Մարաթուկ՝ գագաթ Սասնա լեռներում (բարձրությունը՝ 2967 մ): «Սասնա ծռեր»-ում հիշատակվում է որպես հայոց սրբազան լեռներից մեկը:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչպիսին էր Դավիթի որդի Միերը ծնված պահին: Ինչպե՞ս են ստուգում և համոզվում, որ նա Դավիթի որդին է:
2. Ինչպե՞ս է Քեռի Թորոսը մեկնաբանում Միերի փակ ափի միջի մի կաթիլ արյան խորհուրդը:
3. Ինչպե՞ս էր մեծանում Միերը: Քանի՞ տարեկան էր, երբ գետի վրա կամուրջ կապեց:
4. Դավիթը չէր տեսել որդուն: Յոթ տարի առաջ դուրս էր եկել Սասունից: Ո՞ր էր գնացել և ինչո՞ւ:
5. Քանի՞ տարեկան էր Միերը, երբ գնաց հորը որոնելու: Ի՞նչ տվեց Խանդուբ խանումը, որ Միերը կապեր թևին:
6. Ճանապարհին, առանց իրար ճանաչելու, ի՞նչն է առիթ դառնում Դավիթի ու Միերի վեճի ու կռվի համար:
7. Ինչպե՞ս է Խանդուբ խանումն իմանում, որ հայր ու որդի կռվում են իրար հետ և ի՞նչ է անում կռիվը դադարեցնելու համար:
8. Ինչպե՞ս են հայր ու որդի ճանաչում իրար: Ի՞նչ է ասում հայրը:
9. Սասունցի Դավիթի անեծքը Միերին՝ «Անմահ ըլնիս, անժառանգ» և Արտաշեսի անեծքը որդուն՝ Արտավազդին, նման են իրար...
10. Ի՞նչ է նշանակում «Էրթմակոտոր» լինել: Ո՞ւմ է այցելում Սասունցի Դավիթը:
11. Ո՞վ սպանեց Դավիթին և ինչո՞ւ:
12. Դավիթի մահից հետո ինչպե՞ս է կյանքին վերջ տալիս Խանդուբ խանումը:
13. Որտե՞ղ թաղեցին Սասունցի Դավիթին և նրա կին Խանդուբ խանումին:
14. Ի՞նչ է չափազանցությունը: Թարմացրե՞ք ձեր իմացություններն այս օրինակներով.

*Թե խալիս տարով կը ջոջնան,  
Էտնք օրով ջոջացան:*

*... Սանասար մեկ սիլա կպցուց դահճի էրեսին.  
Գլուխ թռավ, ջանդակ մնաց կայնուկ:*

*Դավիթ չը գնաց, չ'անցավ թրի տակով,  
Կըշտով անցավ.  
Ճկութ քսվավ ի ջադու քար՝  
Քարեն կրակ էլավ:*

Դուրս գրե՞ք այսպիսի օրինակներ ձեր կարդացած հատվածներից:

ՃՅՈՒՂ ՉՈՐՐՈՐԴ  
ՄՆԵՐԻ ԱՄՈՒՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՐՋԸ

4

... Միեր էլավ, էբարձ Գոհարի մարմին,  
Առեց, տարավ Սասնա տուն.  
Էկավ, տեսավ՝ հորողբեր մեռած,  
Գերեզման շինեց, զԳոհար Խանդուփի կուշտ թաղեց...  
... էլավ, որ տ'էրթար,  
Տեսավ՝ ոտքեր չէր դադրի վեր հողին,  
Դարձավ, գնաց վեր մոր գերեզմանին, կանչեց.

«Մերիկ, վեր էլի, մերիկ, վեր էլի...»:

... Մոր գերեզմանեն ձեն էկավ, ասաց.  
«Ո՛րդի, վինչխ անեմ,  
... Բոլ է ման գաս վեր աշխարքին,  
Բոլ է ման գաս...  
Քո տեղ Ագռավու քարն է,  
Գնա Ագռավու քար»:

Միեր էնքան էլաց,  
Էլ ձեն չ'էլավ մոր գերեզմանեն,  
Դոր գնաց վեր հոր գերեզմանին,  
Էլաց, ասաց.

«Հերիկ, վեր էլի, հերիկ, վեր էլի...»:

... Հոր գերեզմանեն ձեն էկավ, ասաց.  
«Որդի՛, վինչխ անեմ,  
... Բոլ է ման գաս վեր աշխարքին  
Բոլ է ման գաս...  
Քու տեղ Ագռավու քարն է,  
Աշխարք ավերի, մեկ էլ շինվի,  
Որ գետին քո ձիու առջև դիմանա.  
Աշխարք քոնն է»:

Էնքան էլաց, էլ ձեն չ'էլավ հոր գերեզմանեն,  
Էդ մեկ խոսք էլավ:

Միեր գնաց, հասավ Ոստանու կապան.  
... Դարձավ Աստծուց խնդրեց՝  
Որ կամ կռիվ մի տա իրեն,  
Կամ իրեն ամանաթ առնի:

Աստված յոթ ձիավոր հրեշտակ ճամփեց  
Հետ Միերին կռվելու:  
Կես օրվեն չուր իրիկուն կռվան.  
Միեր Թուր Կեծակին կը թալեր,  
Հրեշտակներուն չէր բռնի.  
Ձիու ոտ չէր դադարի վեր հողին,  
Որ զուտքեր կը թալեր՝ կ'էրթար մեջ հողին.  
Հող առջև թուլացեր էր,  
Չէր դադրի առջև Միերին:  
Միեր ասաց. «Հայ-հոյ, զո՛ր է,  
Գետինն էլ հալնորցեր է,  
Իմ ձիու ոտաց տակ չի դիմանա»:  
Օր կեսօր էր, քանի քշեց,  
Ձին թաղվավ չուր իրիկուն:  
Զձին առավ, քաշեց էկավ,  
Հասավ Վանա մոտ սարի մի տակ:  
Մեկ քար մի պատահավ էդոր:  
Էդ քարին Վանա քար կ'ասեն:  
Ասաց. «Կանգնի՛, իմ թուր զարնեմ էդ քարին,  
Թե կտրեց, ես չեմ մեղավորցեր,  
Թե չը կտրեց, մեղավորցեր եմ»:  
Թուր որ էզար քարին,  
Քար էրկու կողմեն փեղկվավ,  
Ինք, իր ձին գնացին մեջ.  
Քար էկավ, իրար կպավ:

Քեռի Թորոս կսկծուց մեռավ,  
Որ իմացավ Միերի փակվել:

## ՎԵՐՁԵՐԳ

Կ'ասեն՝ տարին էրկու անգամ  
Էդ քար իրարուց կը բացվի.  
Մեկ անգամ Վարդևորին,  
Մեկ անգամ՝ Համբարձման:  
Որ քար կը բացվի, Միեր  
Քառսուն ավուր ճամփա մեկ ժամվա կ'էրթա.  
Քառսուն օր վեր քարերին կ'էրթա.  
Ինչ հողի վերան ընկնի՝ ձին կը խանդկի,  
Չը կարնա քելի, ետ կը դառնա:  
Կ'ասեն՝ մեկ Համբարձման գիշեր  
Հովիվ կ'էրթա էդ քարի առաջ,

Միերի քար իրարուց կը բացվի,  
 Հովիվ ներս կը մտնի, կը տեսնի՝  
 Հսկա մարդ մի էդտեղ նստած.  
 Հովիվ կը հարցու.  
 – Միեր, դու ե՞րբ տ’էլնիս էդտեղեն:  
 Միեր կը դառնա՝ կ’ասի.  
 – Ես որ էլնեմ էստեղեն,  
 Հողն ինձ չի պահի:  
 Քանի աշխարք չար է,  
 Հողն էլ դալբցեր է,  
 Մեջ աշխրքին ես չեմ մնա:  
 – Որ աշխարք ավերվի, մեկ էլ շինվի,  
 Եբոր ցորեն էղավ քանց մասուր մի,  
 Ու գարին էղավ քանց ընկուզ մի,  
 Էն ժամանակ հրամանք կա, որ էլնենք էդտեղեն:  
 Հովիվ որ դուրս կ’էլնի,  
 Քար կը գա, կը հասնի իրարու:  
 Ուրբաթե ուրբաթ,– կասեն,–  
 Ջուր կը գա, կաթի էդ քարեն...  
 ... Ու ամեն ճամփորդ՝ ուրբաթ օրեր  
 Կը լսի Քուռկիկ Ջալալու խրխնջոցն էդ քարեն:

Հիշենք զօղորմին Ծովինարին,  
 Քառսուն օղորմի Սանասարին:  
 Հիշենք զօղորմին Բաղդասարին,  
 Քառսուն օղորմի Դեղձուն Ծամին:  
 Հիշենք զօղորմին Քեռի Թորոսին,  
 Քառսուն օղորմի Ձենով Հովանին:  
 Հիշենք զօղորմին Ջոջ Միերին,  
 Քառսուն օղորմի Արմաղանին:  
 Հազար օղորմի էն Թառլան Դավթին,  
 Քառսուն օղորմի Խանդուբ խանումին:  
 Հիշենք զօղորմին Պստիկ Միերին,  
 Քառսուն օղորմի Գոհար խանումին:  
 Հիշենք զօղորմին, քառսուն օղորմի,  
 Մեր փիր վարպետին, որ մեզի պատմեց:  
 Հիշենք զօղորմին, հազար օղորմի  
 Ականջ արողի հոր ու մոր հոգուն:



## ԲԱՌԱՐԱՆ

**դադրել** – այստեղ՝ կանգնել, հոգնել  
**վինչխ** – ինչպես, ոնց  
**բոլ** – բավական

**ամանաթ** – գրավ, **ամանաթ առնել** – գրավ վերցնել

**հալևորացեր է** – ծերացել է

**աստվոր (աստնվոր)** – երկրային, աշխարհային, վաղանցուկ, ժամանակավոր

**Վանա քար** – Վանա բերդից արևելք գտնվող լեռնագոտու արևմտյան ծայրը

**Ոստնա կապան** – Ոստան՝ գյուղ Վանա լճի հարավային ափին, նաև բերդ, որ Վանա լճի հետ կապվում է ժայռավոր կիրճով՝ կապանով

**խանդկել** – խրվել

**ղալբ** – խարդախ

**փիր վարպետ** – գլխավոր, հիմնական, իմաստուն, տարեց վարպետ

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Միերն ինչ է ասում իր մոր և հոր գերեզմանին, և ծնողներն ինչ պատասխան են տալիս իրենց որդուն:
2. Ինչ է կատարվում Միերի հետ հրեշտակների հետ կռվելիս:
3. Տարին քանի անգամ և երբ է Միերը դուրս գալիս Վանա քարի միջից:
4. Հովվի հարցին՝ «Դու երբ տ'ելիս էդտեղեն», Միերն ինչ է պատասխանում:
5. Ինչ իմաստ է բովանդակում դյուցազներգության չորրորդ ճյուղը:
6. Տարածական-աշխարհագրական ինչ շրջանակ են ընդգրկում դյուցազներգության մեջ կատարվող գործողությունները: Ուրվագծե՞ք քարտեզը:
7. Կազմե՞ք դյուցազներգության գլխավոր հերոսների տոհմածառը, ավելացրե՞ք մյուս հերոսներին և ցույց տվե՞ք ժառանգորդական կապերը:

«Սասնա ծռեր» դյուցազներգությունը ոգևորել է մեր շատ գրողների, ովքեր այդ նյութով գրել են ինքնուրույն պոեմներ: Դրանցից են Հովհաննես Թումանյանի «Սասունցի Դավիթը» (1902), Ավետիք Իսահակյանի «Սասնա Միեր»-ը (1917-1937), Եղիշե Չարենցի «Սասունցի Դավիթը» (1933): «Սասունցի Դավիթը» ճյուղը թատերգության են վերածել Հակոբ Օշականը (քնարախաղ)՝ կրելով Թումանյանի ակնհայտ ազդեցությունը, Վահան Թոթովենցը, Վաղարշ Վաղարշյանը: Այն արձակ վերապատմել է Նաիրի Զարյանը:

«Սասնա ծռեր»-ը ժամանակին ցանկանում էր մշակել Դանիել Վարուժանը: Փոքր Միերի կերպարը ոգևորել է Հրանտ Մաթևոսյանին:

Դյուցազներգության նյութով ստեղծված բոլոր գործերի մեջ լավագույնը Հ. Թումանյանի պոեմն է: Բնույթով այն պատմողական է: Թումանյանի օրոք տպագրվել է միայն պոեմի առաջին մասը. ավարտվում է Դավիթի ու Մելիքի մենամարտով ու Դավիթի հաղթանակով:

Պոեմը գրելիս Թումանյանն օգտվել է իր ժամանակ հայտնի պատումներից: Պոեմի երկրորդ մասը գրել է 1904-ին, այն մնացել է անավարտ: Պահպանվել է 80 տող՝ նվիրված է Դավիթի ու Խանդուրի սիրուն:

Իր «Սասունցի Դավիթը» պոեմի համար 1910-ական թվականներին Թումանյանը թվարկում է դյուցազներգության 16 հրատարակություն, որոնք օգտագործել է:

# ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹԸ

XIV

Էսպես երգով,  
Զոռով-գորքով  
Գոռ Կոզբադին մըտավ Սասուն.  
Օհան լըսեց՝ կապվեց լեզուն:  
Աղ ու հացով,  
Լաց ու թացով  
Առաջն ելավ,  
Խընդիրք արավ.  
– Ինչ որ կուզես՝ առ, տա՛ր, ամա՛ն.  
Վարդ աղջիկներ, կանայք Սասման,  
Դառը դադած դեղին ոսկին,  
Միայն թե գըթա մեր խեղճ ազգին,  
Մի՛ կոտորիր, մի՛ տար մահու,  
Վերև՝ աստված, ներքևը՝ դու...  
Ասավ, բերավ շարան-շարան  
Վարդ աղջներ, կանայք Սասման:  
Ու Կոզբադին կանգնեց, ջոկեց,  
Մարագն արավ, դուռը փակեց,  
Քառսուն կոյս աղջիկ, սիրուն, արմաղան,  
Քառսուն կարճ կընիկ, որ երկանք աղան,  
Քառսուն էլ երկար, որ ուղտեր բառնան,  
Մըսրա Մելիքին ղարավաշ դառնան:  
Դեզ-դեզ կիտեց դեղին ոսկին.  
Սև սուգ կալավ հայոց ազգին:

XV

Հեյ, ո՛ր ես, Դավիթ, հայոց պահապան,  
Քարը պատըռվի – դո՛ւրս արի մեյդան:  
Քանդած հոր վանքը որ շինեց նորից,  
Ցած իջավ Դավիթ Մարութա սարից,  
Ժանգոտած, անկոթ մի շեղքիկ գըտավ,  
Գընաց՝ պառավի շաղգամը մըտավ:  
Պառավն էր. եկավ՝ անեծք, աղաղակ.  
– Վայ, խելան՝ Դավիթ, շաղգամի տեղակ  
Դու կըրակ ուտես, ցավ ուտես, – ասավ, –  
Քու աչքն աշխարքում մենակ ի՛նձ տեսավ.  
Կորեկըս արիր գետնին հավասար,  
Էս էր մընացել ձըմեռվան պաշար,  
Էս էլ կըտրում ես,  
Էլ ո՛նց ապրեմ ես:

Թե կըտրիճ ես դու, աղեղդ ան գընս՛,  
 Քու հոր աշխարքին տիրություն արս՛,  
 Քու հոր գանձը կէր,  
 Թողել ես անտեր,  
 Մըսրա թագավոր ղըրկել է՝ տանի:  
 – Էլ ի՛նչ ես վըրես բարկանում, նանի՛,  
 Էդ ի՛նչ ես ասում, ես չեմ հասկանում,  
 Մըսրա թագավոր մեր ի՛նչն է տանում:  
 – Մըսրա թագավոր մեր ի՛նչն է տանում...  
 Մըսրա թագավոր քու աչքն է հանում,  
 Դանդալոջ Դավիթ, ղըրկել է հըրեն,  
 Եկել են Սասմա քաղաքի վըրեն  
 Բադին, Կոզբադին,  
 Սյուդին, Չարխադին,  
 Թալան են տալի բովանդակ Սասուն.  
 Քառսուն բեռ ոսկի խարաջ են ուզում,  
 Քառսուն կոյս աղջիկ սիրուն, արմաղան,  
 Քառսուն կարճ կընիկ, որ երկանք աղան,  
 Քառսուն էլ երկար, որ ուղտեր բառնան,  
 Մըսրա Մելիքին դարավաշ դառնան:  
 – Ի՛նչ ես, այ պառավ, էլ ի՛նձ անիծում.  
 Տոյց տուր մի տեսնեմ – որտե՛ղ են ուզում:  
 – Որտե՛ղ են ուզում... Մահըս տանի քե՛զ.  
 Դո՛ւ պետք է է՛ս հոր զավակը լինե՛ս...  
 Եկել ես՝ էստեղ շաղգամ ես լափում...  
 Ոսկին Կոզբադին ձեր տանն է չափում,  
 Աղջիկներ փըլեկ մարագն են լըցրած:  
 Շաղգամը թողեց Դավիթ ու գընաց:  
 Տեսավ՝ Կոզբադին իրենց տան միջին,  
 Չափում է ոսկին թեղած առաջին,  
 Սյուդին, Չարխադին պարկերն են բըռնել,  
 Ձենով Օհանն էլ շըլինքը ծըռել,  
 Կանգնել է հեռու, ձեռները ծոցին:  
 Տեսավ, աչքերը արնով լըցվեցին:  
 – Վեր կաց, Կոզբադին, հեռո՛ւ կանգնիր դու,  
 Իմ հոր ոսկին է – ես եմ չափելու:  
 – Կոզբադին ասավ.– Է՛յ, Ձենո՛վ Օհան,  
 Կըտաս – տո՛ւր խարջը էս օխտը տարվան,  
 Թե չէ՛ կըզնամ, միրուքըս վըկա,  
 Մըսրա-Մելիքին կըպատմեմ, կըգա,  
 Ձեր Սասմա երկիր քար ու քանդ կանի,  
 Տեղը կըվարի, բոստան կըցանի:  
 – Կորե՛ք, անզգամ դուք Մըսրա շընե՛ր,  
 Բա չե՛ք իմացել դուք Սասմա ծըռե՛ր...

Մեռած եք կարծում դուք մեզ, թե՛ շրվաք,  
Կուզեք մեր երկիր դրնեք խարջի տան...  
Բարկացավ Դավիթ, չափը շրպըրտեց,  
Տըվավ Կոզբաղնի գըլուխը ջարդեց,  
Չափի փըշրանքը պատն անցավ, գընաց,  
Մինչև օրս էլ դեռ գընում է թըռած:  
Ու ելան՝ թափած ոսկին թողեցին,  
Հայոց աշխարքից փախան գընացին  
Բադին, Կոզբադին,  
Սյուդին, Չարխադին:

#### XVI

– Վայ, վայ, հորեղբայր, ինչ ասեմ ես քեզ.  
Մենք ունենք էստեղ դեղին ոսկու դեզ,  
Դու արել ես ինձ քաղաքի ծառան,  
Դու թողել ես ինձ օտարի դըռան...  
Հորեղբայրն ասավ.– Ա՛յ խենթ, խելագար,  
Ոսկին պահել եմ Մելիքի համար,  
Որ քաղցըր լինի աչքը մեզ վըրա:  
Չըտըվիր, հիմի որ գորք առնի՝ գա,  
Սասմա քար ու հող հեղեղի, տանի,  
Ո՞վ դեմը կերթա, ո՞վ կըռիվ կանի:  
– Դու կայց, հորեղբայր, թող գա, էս կերթամ,  
Կերթամ, էս նըրան պատասխան կըտամ:  
Ու մութ մարագի դըռանը զարկեց,  
Փակած աղջիկներ հանեց, արձակեց:  
– Գընացե՛ք,– ասավ,– ազատ ապրեցե՛ք,  
Սասունցի Դավթին արև խընդրեցե՛ք:

#### XXIV

Սև ձին քաշեց Ձենով Օհան,  
Չախը դըրավ ասպանդակին,  
Աջն էլ մինչև շուռ տար վըրան,  
Կանգնեց Սասմա սարի գըլխին:  
Տեսավ՝ Դավթի նըժույզն անտեր  
Սարերն ընկած խըրխընջալով,  
Ներքև Մըսրա գորքը չոքած,  
Ինչպես անծեր ծըփուն մի ծով:  
Օխտը գոմշի կաշի հագավ,  
Որ չըպատռի իրեն զոռից,  
Կանգնեց Օհան, ամպի նըման  
Գոռաց Սասմա սարի ծերից:  
– Հե՛յ-հե՛յ, Դավիթ, որտեղ ես դու,  
Հիշիր Խաչը քո աջ թևի,

Սուրբ Տիրամոր անունը տո՛ւր,  
Ու դուրս արի լույսն արևի...

Ձենը գընաց դըմբդըմբալով՝  
Դավթի ականջն ընկավ հորում.  
– Հայ-հայ, ասավ,– հորեղբայրս է,  
Սասմա սարից ինձ է գոռում:

Ո՛վ Մարութա Աստվածածին,  
Ո՛վ անմահ Խաչ պատարագի,  
Ձեզ եմ կանչել, հասնք Դավթին...  
Կանչեց, տեղից ելավ ոտքի,

Էնպես զարկեց ջաղացքարին՝  
Քարը եղավ հազար կըտոր,  
Կըտորները երկինք թըռան  
Ու գընում են մինչև հսօր:

Ելավ հորից, կանգնեց ահեղ,  
Սարսափ կալավ դև Մելիքին:  
– Դավիթ ախպեր, եկ դեռ հստեղ,  
Սեղան նըստենք, խոսենք կարգին...

– Էլ չեմ նըստիլ ես քու հացին,  
Դու տըմարդի, վախկոտ ու նենգ.  
Շո՛ւտ, զենքըդ առ, հեծիր քու ձին,  
Դո՛ւրս եկ մեյդան, կըռիվ անենք:

– Կըռիվ անենք,– ասավ Մելիք,–  
Իմն է միայն զարկն առաջին:  
– Քոնն է, զարկիր,– կանչեց Դավիթ,  
Գընաց, կեցավ դաշտի միջին:

Ելավ, կանգնեց Մըսրա-Մելիք,  
Իր գուրզն առավ, հեծավ իր ձին,  
Քըշեց, գընաց մինչ Դիարբեքիր  
Ու էստեղից եկավ կըրկին:

Երեք հազար լիդր է քաշում  
Հըսկայական իր մըկունդը.  
Եկավ, զարկեց. կորավ փոշում  
Ու երերաց երկրի գունդը:

– Երկիր քանդվեց կամ ժաժք եղավ,–  
Ասին մարդիկ շատ աշխարքում:

– Չէ,–ասացին,– արնի ծարավ  
Հըսկաներն են իրար զարկում:

– Մեռավ Դավիթ էս մի զարկից,–  
Ասավ Մելիք իրեն զորքին:

– Կենդանի եմ,– ամպի տակից  
Գոռաց Դավիթ Մըսրա–Մելքին:

– Հայ–հայ, մոտիկ տեղից եկա,  
Տես, որտեղից հիմի կըգամ:  
Ու վերկացավ, կանգնեց հըսկան,  
Իր ձին հեծավ երկրորդ անգամ:

Երկրորդ անգամ քըշեց Հալար  
Ու բաց թողեց ձին Հալարից.  
Բուք վեր կացավ, տեղ ու տարափ,  
Արար աշխարհի դողաց թափից:

Եկավ, զարկեց. զարկի ձենից  
Մոտիկ մարդիկ ողջ խըլացան:  
– Գընաց Դավիթ Սասմա տանից,–  
Գուժեց գոռոզ Մըսրա արքան:

– Կենդանի եմ,– կանչեց Դավիթ,–  
Մին էլ արի, հերթն ինձ հասավ:  
– Հայ–հայ, մոտիկ տեղից եկա,–  
Կանչեց Մելիք ու վեր կացավ:

Երրորդ անգամ հեծավ իր ձին,  
Գընաց մինչև հողը Մըսրա,  
Ու էստեղից, գուրզը ձեռին  
Քըշեց, եկավ Դավթի վըրա:

Եկավ, զարկեց բոլոր ուժով,  
Ծանըր զարկով հըսկայական,  
Փոշին ելավ Սասմա դաշտից,  
Բըռնեց երեսն արեգական:

Երեք գիշեր ու երեք օր  
Փոշին կանգնեց ամպի նըման,  
Երեք գիշեր ու երեք օր  
Բոթը տըվին Դավթի մահվան:

Երբ որ անցավ երեք օրը,  
Էն ամպի պես կանգնած փոշում

Կանգնեց Դավիթ, ինչպես սարը,  
Գըրգուռ սարը մեզ-մշուշում:

– Մելիք,– ասավ,– ումն է հերթը:  
Սարսափ կալավ գոռ Մելիքին,  
Մահվան դողը ընկավ սիրտը  
Ու տապ արավ գոռոզ հոգին:

Գընաց, խորունկ մի հոր փորեց,  
Իջավ, մըտավ վիհն էն խավար,  
Վըրեն քաշեց քառսուն կաշի  
Ու քառասուն ջաղացի քար:

Մըռնչալով ելավ տեղից  
Էն առյուծի առյուծ որդին,  
Իր ձին հեծավ ու փոթորկեց,  
Խաղաց, շողաց Թուր-Կայծակին:

Առաջ վազեց մազերն արծակ  
Մելքի պառավ մայրը ջադու.  
– Դավիթ, մազըս ան ոտիդ տակ,  
Եդ մի զարկը ինձ բաշխիր դու:

Երկրորդ անգամ թուրը քաշեց.  
Էս անգամ էլ եկավ քուրը.  
– Դավիթ, եթե կուզես,– կանչեց,–  
Իմ սըրտին զարկ երկրորդ թուրը...

Վերջին զարկի ժամը հասավ,  
Եկավ Դավիթ երրորդ անգամ,  
– Էս մի զարկն ու աստված,–ասավ,–  
Էլ մարդ չըգա, պետք է որ տամ:

Ասավ, ելավ ու փոթորկեց,  
Թըռավ, ցոլաց Դավթի հուր ձին,  
Ձին փոթորկեց, փայլատակեց  
Ու ցած իջավ Թուր-Կեծակին:

Անցավ քառասուն գոմշի կաշին,  
Անցավ քառսուն քարերը ցած,  
Միջից կըտրեց ժանտ հըրեշին,  
Օխտը գազ էլ դենը գընաց:

– Կենդանի եմ, մին էլ արի,–  
Գոռաց Մելիք հորի տակից:  
Դավիթ լըսեց, շատ զարմացավ  
Իրեն զարկից, Թուր-Կայծակից...

– Մելիք, ասավ,– թափ տուր մի քեզ:  
Ու թափ տըրվավ Մելիքն իրեն,  
Միջից եղավ ճիշտ երկու կես,  
Մեկն ընկավ դեսն ու մյուսը դես:

Էս որ տեսավ Մըսրա բանակ,  
Ջուր կըտըրվեց ահ ու վախից:  
Դավիթ կանչեց.– Մի՛ վախենաք,  
Ականջ արեք հալա դեռ ինձ:

Դուք ըռանչպար մարդիկ, ասավ,–  
Ջուրկ ու խավար, քաղցած ու մերկ.  
Հազար ու մի կըրակ ու ցավ,  
Հազար ու մի հոգսեր ունեք:

Ինչ եք առել նետ ու աղեղ,  
Եկել թափել օտար դաշտեր,  
Չէ՞ որ մենք էլ ունենք տուն–տեղ,  
Մենք էլ ունենք մանուկ ու ծեր...

... Դարձեք եկած ճանապարհով,  
Ձեր հայրենի հողը Մըսրա.  
Բայց թե մին էլ զենք ու զոռով  
Վեր եք կացել դուք մեզ վրա,

Հորում լինեք քառսուն գազ խոր  
Թե ջաղացի քարի տակին,–  
Կելնեն ձեր դեմ, ինչպես էսօր,  
Սասմա Դավիթ, Թուր–Կայծակին:

Էն ժամանակ աստված գիտի,  
Ով մեզանից կըլնի փոշման.  
Մենք, որ կելնենք ահեղ մարտի,  
Թե՞ դուք, որ մեզ արիք դուշման...



## ԲԱՌԱՐԱՆ

**գոռ** – հպարտ, ինքնավստահ, գոռոզ, սնապարծ

**դադել (դատել)** – աշխատել, վաստակել, աշխատանքով ստեղծել

**արմաղան** – գեղեցիկ, հազվագյուտ, նաև՝ նվեր, ընծա

**երկանք** – երկու աղացաքարերից բաղկացած ձեռքի աղորիք, որով ցորեն են աղացել

**դարավաշ** – աղախին

**շեղբիկ, շեղբ** – դանակի, դաշույնի կտրող մասը, դանակի բերան

**դրկել** – ուղարկել

**նանի** – մայր

**դանդալոշ** – տկարամիտ, տխմար, ապուշ, հիմար

**հրեն** – ահա

**փըլել** – փուլ եկած, քանդված, ավերված

**թեղել** – կուտակել, դիզել

**խարջ** – հարկ, տուրք, ծախս

**օխտ** – յոթ

**մարագ** – խոտանոց, հարդանոց, չոր անասնակեր պահելու տեղ

**ասպանդակ** – թամբից կախած և հեծնելիս ու վարելու ժամանակ հեծյալի ոտքերը դնելու տեղ, ասում են նաև զանգու

**դըմբդըմբալ** – դղրդալ

**կալել** – տիրել, բռնել

**տմարդի** – ապերախտ, երախտամոռ, ցած, ստոր, վատ, նսեմ մարդ

**լիդր** – ծանրության չափ

**մկունդ** – մեծ գեղարդ, նիզակ

**ժածք** – երկրաշարժ

**գույժ** – վատ լուր, գուժել պատերազմ, մահ, երկրաշարժ, վթար, աղետ

**բոթ** – գույժ, վատ լուր, մահվան բոթ

**Գրգուռ** – սարի անուն է

**տապ անել** – թաքնվել

**վիհ** – անդունդ, խորխորատ, խոր ու երկար փոս

**ժանտ** – դաժան, անողոք, անգութ, զզվելի, մահաբեր, դառը, անողորմ

**հալա** – դեռևս

**ըռանչպար (ռանչպար)** – հողագործ, ընդհանրապես՝ աշխատավոր

**դուշման** – թշմամի

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Հ. Թումանյանը «Սասնա ծռեր» դյուցազներգության դր ճյուղն է վերածել պոեմի:
2. Հ. Թումանյանն ամբողջությամբ է մշակել նախընտրած ճյուղը, թե՛ մասամբ:
3. Ի՞նչ ծրագրեր ուներ Հ. Թումանյանը «Սասունցի Դավիթ» պոեմի ամբողջացման կապակցությամբ:
4. Համեմատե՛ք Սասունցի Դավիթի և Մըսրա Մելիքի մենամարտի հատվածները: Որքանո՞վ են իրար նման կամ իրարից տարբեր ժողովրդական դյուցազներգությունը և Թումանյանի պոեմը:
5. Հիշե՛ք, ովքե՞ր են մշակել «Սասնա ծռեր» դյուցազներգությունը կամ գրել այդ նյութով:

## ՀՈՄԵՐՈՍ

Հոմերոսը հույն գրող է:

Տրոյական պատերազմի և նրա հերոսներից մեկի՝ Ոդիսևսի մասին տա-րածված բանահյուսական նյութերից նա ստեղծել է «**Իլիական**» և «**Ոդիսսական**» պոեմները, որոնք հույն ժողովրդի դյուցազներգությունն են:

Ո՛վ էր Հոմերոսը, և ինչի մասին են այս պոեմները: Հոմերոսի մասին կենսագրական տեղեկություններ չեն պահպանվել: Մեզ հասել են միայն նրա պոեմները, որոնցից էլ ենթադրություններ են արվում նրա մասին: Ըստ այդ ենթադրությունների՝ Հոմերոս անունը, որպես հասարակ բառ, իբր նշանակել է կոյր կամ հարմարեցնող: Սակայն սրանք գիտականորեն հիմնավորված բացատրություններ չեն: Հավանական է համարվում, որ Հոմերոսն ապրել և ստեղծագործել է Ք.ծ.ա. 9-րդ դարում: Այդ ենթադրության հիմքն այն է, որ նրա գրական ազդեցությունն ակնհայտ է 8-րդ դարի բանաստեղծ Հեսիոդոսի պոեմների վրա: «**Իլիական**»-ում պատկերվում է Տրոյական պատերազմը, իսկ «**Ոդիսական**»-ում Տրոյական պատերազմի շարունակությունից ու ավարտից հետո ներկայացվում է գլխավոր հերոսներից մեկի՝ Ոդիսևսի վերադարձը հայրենի երկիր՝ Իթակե, որի թագավորն էր նա:

«**ԻԼԻԱԿԱՆ**»: Տրոյա (կամ Իլիոն) քաղաք-պետության արքայազն Ալեքսանդրը, ով ունի նաև Պարիս անունը, փախցնում է քայացիների (հույների) Միկենեի արքայազն և Սպարտայի թագավոր Մենելայոսի կնոջը՝ Հեղինեին: Հեղինեն ծնվել էր աստվածներից. նրա հայրն աստվածների աստված Զևսն էր, իսկ մայրը՝ Լեդան: Նա ուներ առասպելական գեղեցկություն: Ահա այս գեղեցկուհուն առևանգում է Ալեքսանդրը, ինչն էլ դառնում է Տրոյական պատերազմի պատճառ:

Այս պատերազմին, ըստ Խորենացու, մասնակցել է նաև հայոց Զարմայր նահապետը և զոհվել (այդ մասին է Ռափայել Պատկանյանի «**Զարմայր նահապետի մահը**» պոեմը):

Հեղինեին փախցնելուց տասը տարի անց քայացիները պատերազմ են հայտարարում տրոյացիներին: Իր հերթին այդ պատերազմը ևս տևում է տասը տարի: Միասին՝ քսան տարի: Բայց ժամանակն այստեղ երբեք չի թուլացնում Հեղինեի գեղեցկության հմայքը: Նա մտում է հավերժ գեղեցկուհի, ում համար արժեր պատերազմել: Պրիամոսի խորհրդականները՝ տարիք առած մարդիկ, տեսնելով Հեղինեին, նշելով՝ «Որ այսպիսի կնոջ համար տառապում են շատ տարիներ», նաև ավելացնում են. «Ճշմարտապես անմահական աստվածուհու դեմք ունի նա»:

Պոեմն սկսվում է Աքիլեսին պաշարած զայրույթով: Նա և քայական բանակի զորահրամանատար Ագամեմնոնը վեճի մեջ են, որովհետև Ագամեմնոնը խլել է Աքիլեսին ընծա տրված գերուհուն: Դրանից վրդովված՝ վերջինս լքում է ռազմադաշտը:

Այս ընթացքում շարունակվում են երկու կողմերի ռազմական բախումները: Ալեքսանդրն առաջարկում է ճակատամարտը փոխարինել իր և Մենելայոսի մենամարտով: Երկու կողմերը զենքերը վայր են դնում և հետևում երկու հերոսների կռիվին: Այն պահին, երբ Մենելայոսը պետք է սպաներ Ալեքսանդրին, սիրո աստվածուհի Աֆրոդիտեն փրկում է նրան: Սա նշանակում է, որ Աֆրոդիտեն հովանավորում էր Հեղինեի և Ալեքսանդրի սերը:

Դեմ դիմաց են կանգնում երկու հակադիր ուժեր: Աքայացիների զորքերի

հրամանատարը Մենելայոսի եղբայր Ագամեմոնն էր՝ Միկենեի և Արգոսի արքան: Նրանց կողմից կռվում էին առասպելական հերոս Աքիլեսը, նրա ընկեր Պատրոկլեսը, հնարամիտ Ոդիսևսը, սխրագործություններով աչքի ընկած Դիոմեդեսը, Այաքսները և ուրիշ քաջազուններ:

Հիմա՝ պատերազմի տասներորդ տարում, աքայացիները պաշարել են Տրոյան:

Տրոյացիների արքան Պրիամոսն է: Նրա մի որդին Ալեքսանդրն է, իսկ մյուսը՝ Հեկտորը, ով նաև բանակի հրամանատարն է: Այստեղ գլխավոր դեմք է նաև Էնիասը: Երկու կողմերին հովանավորում են աստվածները: Երկու կողմերն էլ փոխադարձ հաջողություններով շարունակում են պատերազմը:

Պատերազմի հուզիչ դրվագներից մեկն Աքիլեսի ընկերոջ՝ Պատրոկլեսի մահն է, ում սպանում է Հեկտորը: Զայրացած Աքիլեսը մարտի է նետվում ընկերոջ վրեժը լուծելու համար և սպանում է Հեկտորին: Հեկտորի հայրն անասելի ողբի մեջ է, մեծ դժվարությամբ նա կարողանում է Աքիլեսից փրկագնել որդու դիակը, ում թաղման տեսարանով էլ ավարտվում է «**Իլիական**»-ը:

«**Իլիական**»-ն ամբողջությամբ ռազմական տեսարանների նկարագրությունն է: Այստեղ հերոսների կյանքի իմաստը պատերազմն է և հաղթանակը: Պատերազմն ասես խաղ կամ վտանգներով լեցուն զվարճալի զբաղմունք լինի գեղեցկությանը տիրանալու համար, բայց այդ խաղն էլ ունի հաղթողներ և պարտվողներ:

«**ՈՂԻՍԱԿԱՆ**»: Ոդիսևսն իր հնարամտությամբ վերջ է դնում պատերազմին: Նա Տրոյական պատերազմի գլխավոր հերոսներից մեկն է: «**Իլիական**»-ում Հեղինեն նրան տալիս է «*բազմահնար ու հանճարեղ*» բնորոշումը: Ահա Ոդիսևսի խորհուրդով պատրաստում են փայտե մի մեծ ձի, որի մեջ թաքնվում են աքայացի զինվորներ, և այն դնում են Տրոյայի դարպասների առջև: Տրոյացիները փայտե ձին ներս են տանում: Զինվորները դուրս են գալիս թաքստոցից, սպանում պահակազորին, բացում դարպասները, ինչն էլ վճռում է պատերազմի ելքը: Հեղինեն, որ արդեն իսկ հիասթափվել էր Ալեքսանդրից, վերադարձվում է օրինական ամուսնուն:

Տասը տարի Ոդիսևսը մասնակցել է Տրոյական պատերազմին: Տասը տարուց էլ ավելի ժամանակ է անցնում, մինչև նա կարողանում է վերադառնալ Իթակե, որտեղ նրան սպասում էր հավատարիմ կինը՝ Պենելոպեն: Ոդիսևսի բացակայության ժամանակ ծնվել էր նրա որդին՝ Տելեմաքոսը, ով 20 տարեկան երիտասարդ էր:

Ոդիսևսի ճակատագիրը տնօրինում են աստվածները: Նրան խանգարում է ծովերի արքա Պոսեյդոնը, որովհետև Ոդիսևսը կուրացրել էր նրա որդուն՝ մեկաչքանի հսկա կիկլոպ Պոլիթեմեսին:

Այնքան հզոր էր հայրենասիրական ոգին Ոդիսևսի մեջ, որ նա մերժում է անգամ հավերժ երիտասարդ, անմահ ու մշտական սիրո մեջ ապրելու Օգիգիա կղզու հավերժահարս Կալիպսոյի առաջարկը: Աստվածների կամքով նա թույլտվություն է ստանում վերադառնալու հայրենիք: Մի քանի օր հաջող նավարկելուց հետո Պոսեյդոնը, փոթորիկ բարձրացնելով, խափանում է նրա ճանապարհը: Նավը խորտակվում է, և ալիքները Ոդիսևսին ասի են հանում Սքերիոս կղզում: Այդտեղ նրան գտնում է փեակների արքա Ալքինոոսի դուստր Նավզիկեն (Նավսիկես): Խնջույքի ժամանակ Ոդիսևսը Ալքինոոսին պատմում է իր մասին:

Այստեղից հայտնի է դառնում, որ նա հայտնվել է մոռացության երկրում, ուր ճաշակում էին Լոտոսի պտուղներ և կորցնում հիշողությունը: Հայտնի է դառնում նաև, թե ինչպես է նա հնարամտորեն կուրացրել կիկլոպ Պոլիթեմեսին, քանի որ նա խժռում էր իր ուղեկիցներին, և փրկել իրեն ու մյուսներին: Քամիների աստված Էոլոսը հաջող նավարկության համար նրան տալիս է քամիներով լցված մի պարկ. ընկերները, կարծելով թե դրա մեջ գանձ կա, բաց են անում տոպրակը և ենթարկվում նավաբեկության: Ողիսևը հայտնվում է կախարդուհի Կիրկեի կղզում, ով նրա ուղեկիցներին խոզ է դարձնում: Ողիսևը փրկվում է և մեկ տարի մնում նրա մոտ: Կիրկեի խորհուրդով Ողիսևը հասնում է Հադես՝ ստորգետնյա թագավորության մատույցները: Այստեղ նա հանդիպում է գուշակ Տիրեսիասին և գրուցում իր մոր՝ Անտիկլեայի ուրվականի հետ: Նա նաև Իթակե անվտանգ վերադառնալու խորհուրդներ է ստանում: Ապա նա հայտնվում է հուշկապարիկների (սիրենների) կղզու մոտ, որոնք կախարդիչ երգերով գրավում էին նավաստիներին և կործանում: Ողիսևը խցանում է բոլոր նավաստիների ականջները և կարգադրում իրեն ամուր կապել կայմին: Նա լսում է դյուբիչ երգը, տառապում հուշկապարիկներին մոտենալու ցանկությունից, բայց նավը լողում է առաջ, և նա փրկվում է: Այնուհետև նա անցնում է Սկիլա և Քարիբդա հրեշների միջով, որոնք խժռում են նրա ընկերներից մի քանիսին: Թրինակիա կղզում նրա ուղեկիցները մորթում են արևի աստված Հելիոսի սրբազան ցուլերին, ինչի համար Զևսը կործանում է բոլորին, փրկվում է միայն Ողիսևը և ընկնում Օգիգիա կղզին:

Ալքինոոս արքան, այս ամենը լսելով, որպես պատերազմի հերոս՝ պատվով ճանապարհ է դնում Ողիսևսին: Վերջինս գիշերով հասնում է Իթակե: Նրա հովանավոր Աթենաս Պալաս աստվածուհին այստեղ նրան կերպարանափոխում է, դարձնում ծեր մուրացիկ: Ողիսևը հանդիպում է որդուն՝ Տելեմաքոսին, ով գնացել էր իրեն որոնելու, և նրան հայտնում է իր ով լինելը: Հայր ու որդի գտնում են իրար: Մուրացիկի ծպտված արտաքինով նա ներկայանում է Պենելոպեին և ասում, որ Ողիսևը ողջ է: Ողիսևսի ոտքերը լվանալիս նրա դայակը ոտքի սպիից ճանաչում է նրան:

Ողիսևսի բացակայության ընթացքում 108 փեսացուներ խնդրում էին Պենելոպեի ձեռքը: Պենելոպեն նախ մերժում էր, ապա ձգձգում պատասխանը, և դա հիմնավորում նրանով, որ ինքը Ողիսևսի հոր՝ Լաերտեսի համար դիապաստառ (վարչամակ) է գործում: Ցերեկը նա գործում էր, գիշերը՝ քանդում: Ի վերջո, Ողիսևսի խորհուրդով Պենելոպեն փեսացուների համար մրցույթ է հայտարարում: Ողիսևսի աղեղից նրանք պետք է նետ արձակեին, և այդ նետը պետք է անցներ տասներկու օղակների միջով: Փեսացուներից ոչ ոք չի կարողանում անգամ լարել այդ աղեղը: Այդ ժամանակ ծպտված Ողիսևը բոլորի ծաղրական խոսքերի ներքո լարում է աղեղը, նետն անցկացնում բոլոր օղակների միջով, վերակերպավորվում որպես իրական Ողիսևս և որդու հետ մեկտեղ կոտորում իրենց սանձարձակություններ թույլ տված բոլոր փեսացուներին: Նա հաղթում է նաև ոտքի ելած փեսացուների հարազատներին և կնոջ ու որդու հետ մեկտեղ թագավորում իր հայրենիքում: Ողջ էր նաև նրա հայրը:

**«Իլիական»-ը** և **«Ողիսական»-ը** մարդկության մանկության շրջանում ստեղծված գրական հուշարձաններ են: Այստեղ աստվածները, կիսաստ-

վածները և երկրային հզոր մարդիկ կողք կողքի են: Այս պոեմների հիմքում ընկած են հույների հնագույն շրջանի ամբողջ դիցաբանությունը, բանահյուսությունը և պատկերացումներն աշխարհի մասին:

Ե՛վ ռազմական տեսարանների մեջ, և՛ առանձին կերպարների գործունեության ու ճակատագրի մեջ, և՛ Ոդիսևսի թափառումների ու հայրենիք վերադառնալու անկասելի ցանկության մեջ ոչինչ պատահական չկա: Ամեն ինչ խորհրդանշան է, խորհուրդ է և իմաստ: Հույներն ու տրոյացիները տարիներ շարունակ կռվում էին գեղեցկությունը նվաճելու համար:

**Գեղեցկություն.** ահա գլխավոր խորհրդանշաններից մեկը, որը մարդկային կյանքի զգացական-բանական հիմքն է: Բազմակողմանի կյանք և արկածներ, որոնք ապրում է մարդը և գեղեցկությանը տիրանալու ճանապարհին փորձությունների ենթարկվում:

Ոդիսևսը, ամեն տեսակի գայթակղություններ մերժելով և փորձություններ հաղթահարելով, երազում էր վերադառնալ հայրենիք: Հայրենիք. ահա գլխավոր խորհրդանշաններից մյուսը, որը մարդկային կյանքի իրական հիմքն է:

**Գեղեցկություն,** որին պետք է տիրանալ ու հանուն նպատակի պատերազմել, **կյանք,** որը պետք է ապրել ու փորձությունների ենթարկվելով՝ իմաստնանալ, և **հայրենիք,** դեպի ուր պետք է գնալ բոլոր դժվարություններն ու գայթակղությունները հաղթահարելով. ահա սրանք են պոեմների հիմնական խորհրդանշանները:

Որոշակի խորհրդանշական իմաստներ ունեն աստվածների գործողությունները, հերոսների արարքները: Դրանք հանգեցնում են մի ընդհանուր բարոյախոսության, ըստ որի՝ իր գործողությունների մեջ մարդը չպետք է շեղվի այն ուղիղ ճանապարհից, որ նրա համար նախանշում են աստվածները: Սխալվելու դեպքում նա պետք է պատժվի, որ նշանակում է՝ կամ վերադառնալ ուղիղ ճանապարհի, կամ հեռանալ կյանքից: Այդպես էր, որպեսզի սուտն ու կեղծիքը չամրանար մարդկային հարաբերությունների մեջ, և մարդիկ ու աստվածներն ապրեին հաշտ ու համերաշխ:

Այսպիսով՝ «**Իլիական**»-ի մեջ պատկերվում է աքայացիների պատերազմն ընդդեմ տրոյացիների: Պատերազմը մղվում էր հանուն Հեղինեի, ում առևանգել էր Տրոյայի թագաժառանգ Ալեքսանդր Պարիսը: Պատերազմն ավարտվում է աքայացիների հաղթանակով:

«**Ոդիսական**»-ի մեջ ներկայացվում է տրոյական պատերազմի հերոս Ոդիսևսի վերադարձն իր հայրենիք՝ Իթակե կղզի: Ոդիսևսը, ենթարկվելով բազմապիսի փորձությունների և դիմանալով տարբեր գայթակղությունների, ի վերջո կարողանում է վերադառնալ հայրենիք, ուր նրան սպասում էին հավատարիմ կինը՝ Պենելոպեն, 20-ամյա որդին՝ Տելեմաքոսը, և մահամերձ հայրը՝ Լաերտեսը:

Այս պոեմների արժեքը շատ բարձր է: Դրանք համայն մարդկության գանձարանն են և համարվում են մարդկության մանկության տարիների պատկերացումների արգասիք: Թարգմանված են նաև հայերեն: Այդ պոեմների նյութով ստեղծվել են հետաքրքրական շարժանկարներ:

Պատկերացում տալու համար գրական այդ կոթողի մասին՝ ներկայացնում ենք մեկ հատված: Ամբողջը կամ ամբողջի սեղմ շարադրանքը կարող եք կարդալ հայերեն թարգմանությամբ:

## ՈՂԻՍԱԿԱՆ

ՈՂԻՍԵՎՍԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

ԿԻԿԼՈՊԱԿԱՆ

Պատասխանեց նրան այնժամ և խոսք ասաց Ողիսևսը ամենիմաց.  
«Իշխանագոր դու Ալքինոոս, որ գերհռչակ ես մարդկանց մեջ և անվանի,  
Որքան, այո, հաճելի է այժմ ինձ համար երգը լսել վեհ երգիչի,  
Որպիսին է սա իսկապես, որն իր ծայնով աստվածներին է նմանվում:  
Եվ ես ահա մտածում եմ. չկա սխրանք ավելի վեհ և սրտատենչ,  
Քան բերկրանքը հոգեզվարճ, որ թնդում է ամենուրեք ողջ ազգի մեջ,  
Երբ խնջույքի մասնակիցներն, իրար կողքի, տան մեջ նստած,  
Երգն են լսում վեհ երգիչի, մինչ սեղանն է նրանց առաջ ծանրաբեռնված  
Մսեղենով և քաղցր հացով, իսկ մատրոշակն համեղ գինին պերճ գավաթից  
Հանում է լի և պրտըտվում ամենուրեք, որ բաժակներն հապճեպ լցնի:  
Այդ է, այո, ինձ իմ սրտում թվում վսեմ, բարձր մի գործ:  
Մինչ հորդորեց քեզ սիրտը քո՝ հարցնել իմ հեգ տառապանքի, վշտի մասին,  
Որպեսզի այժմ էլ առավել ես հեկեկամ ու վշտագին ջայլանք անեմ:  
Բայց ես ավանդ, որը պատմեմ քեզ սկզբից կամ որն ասեմ վերջ ի վերջո,  
Բյուրաբազում աղետներ են ինձ շնորհել աստվածները երկնաբնակ:  
Ահավասիկ՝ նախ ձեզ հայտնեմ անունը իմ, որ այդ հաստատ դուք իմանաք,  
Քանի որ ես, խուսափելով իմ օրհասից աղետալի, ձեր հյուրն եմ արդ,



Թեպետ հիմա, առանց այդ էլ, ես ապրում եմ ապարանքում այս հեռագույն:  
 Ես եմ ահա Ողիսևը Լաերտածին, մարդկության մեջ գերազդեցիկ,  
 Բյուր խորամանկ հերյուրանքով փառաբանված, և փառքն է իմ հասել երկինք:  
 Ապրում եմ ես Իթակեում, որ նշմարվում է շատ հեռվից, հայտերևակ.  
 Նրա վրա Ներիտ լեռն է անտառաշատ և անվանի:  
 Շուրջը նրա բազմաբազում և մերձընդմերձ կան կղզիներ մարդաբնակ.  
 Դուլիքիոնը, Սամեն, Զակինթն անտառախիտ: Իսկ Իթակեն ծովապարփակ  
 Հարթավայր է մի լայնալիր և հեռավոր է չափազանց.  
 Գտնվում է արևմուտքում, բայց կղզիներն ուղղված են դեպ արևելք:  
 Խիստ քարքարուտ է Իթակեն, թեև սնում է պնդակազմ պատանիներ:  
 Ես չգիտեմ մի այլ երկիր ավելի լավ և վեհագույն, քան սիրելի  
 Իմ Իթակեն: Բայց արգելեց և ինձ պահեց անդ Կալիպսո աստվածուհին  
 Խոր անձավում ցանկանալով, որ իր համար ես ամուսին դառնամ այնտեղ:  
 Իր տանը ինձ պահեց նաև կախարդ Կիրկեն, հեռու կղզու մեջ Էական.  
 Եվ նա նույնպես կամենում էր անդ իր համար ինձ ամուսին դարձնել մի կերպ,  
 Բայց նա բնավ չկարեցավ ինձ համոզել և սիրտը իմ իր կողմ թեքել:  
 Եվ ոչ մի բան սրտին այնքան հաճելի չէ, որքան երկիրը հայրենի  
 Ու ծնողներն, եթե նույնիսկ օտար երկրում մարդ ապրում է պերճապաճույճ  
 Ապարանքում, սակայն հեռու իր ազնվագույն ծնողներից:  
 Իսկ հիմա քեզ պատմեմ պիտի դարձի մասին իմ չարաղետ,  
 Որն ինձ համար դեռ Տրոյայից ետ դառնալիս, Զևան հորինեց...



## ԲԱՌԱՐԱՆ

**գերահռչակ** – շատ հռչակված, շատ հայտնի

**սիրատենչ** – սեր տենչացող, սիրո ձգտող

**մատռվակ** – գինի մատուցող

**հապճեպ** – արագ

**հեզ** – թշվառ, խեղճ

**ջայլանք անել** – ողբ անել, **ջայլ** – հանգուցյալի վրա սգացող կանանց խումբ

**Լաերտածին** – Լաերտի որդի, Լաերտից ծնված, Լաերտես–Լաերտը Ողիսևսի հայրն էր

**հայտերևակ** – հայտնի, երևացող

**ծովապարփակ** – ծովով շրջապատված

**պնդակազմ** – ամուր կազմվածքով

**պերճապաճույճ** – պերճանքով, շքեղությամբ զարդարված

**չարաղետ** – չարությամբ և աղետներով լի

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ո՞վ է Հոմերոսը և նրա է ապրել:
2. Ինչի հիման վրա է Հոմերոսը շարադրել «Իլիական»-ը և «Ոդիսական»-ը:
3. Ինչի մասին է «Իլիական»-ը: Թվարկե՞ք և բնութագրե՞ք գլխավոր հերոսներին:
4. Ինչի մասին է «Ոդիսական»-ը:
5. Ո՞վ է Ոդիսևսը: Բնութագրե՞ք նրան:
6. Որտեղից ո՞ր էր վերադառնում Ոդիսևսը:
7. Ներկայացրե՞ք Ոդիսևսի թափառումների «քարտեզը»:
8. Ովքեր էին նրան սպասում:
9. Ինչի մասին է «Ոդիսական»-ից բերված հատվածը:
10. Սասունցի Դավիթը և Ոդիսևսը քանի՞ տարի չէին տեսել իրենց մինուճար որդիներին և ինչո՞ւ:
11. Քանի՞ տարեկան էին որդիները՝ Փոքր Միերն ու Տելեմաքոսը, ովքեր գնացին իրենց հայրերին որոնելու: Ի՞նչ ընդհանրություններ կան հայրերի և որդիների կերպարների միջև:
12. Ի՞նչ հիմնական խորհրդանշական գաղափարներ են ընկած «Իլիական», «Ոդիսական», «Սասնա ծռեր» դյուցազներգությունների հիմքում:

## ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԵՌԵՐՆ ՈՒ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հայ միջնադարյան գրականությունը, հատկապես պատմագրությունն ու տաղերգությունը, համաշխարհային մշակույթի անբաժան մասն է: Ընդգրկելով հսկայական ժամանակաշրջան՝ այդ գրականությունը դարերի ընթացքում ձևավորել է իր յուրահատուկ **սեռերն ու տեսակները**:

**Սեռը** գրականության համեմատաբար ավելի մեծ և ընդգրկուն խմբավորում է: Սեռերը երեքն են՝ քնարական (լիրիկա), պատմողական (էպոս) և թատերգական (դրամա): Դրանց հիմքում ընկած է գեղարվեստական պատկերը՝ ըստ պատումի ու կառուցվածքի յուրահատկության:

**Քնարական սեռի** հիմքում ընկած է պատկեր-ապրումը, ինչը խոսքին հաղորդում է խոհական, զգացմունքային բնույթ և ըստ այդմ ձևավորում երկի բովանդակությունն ու կառուցվածքը:

**Պատմողական սեռի** հիմքում ընկած է պատկեր-գործողությունը, ինչի շնորհիվ ստեղծվում են դիպաշար և կերպարներ: Երկը ստեղծվում է գործողությունների հաջորդականությամբ:

**Թատերգական սեռի** հիմքը պատկեր-ներկայացումն է, հերոսները ցուցադրվում են բեմում և գործողությունն առաջ են տանում մենախոսության և երկխոսության միջոցով: Ստեղծվում է թատրոն:

Հայ միջնադարյան գրականությանն առավելապես բնորոշ են քնարական և պատմողական սեռի երկերը, որոնք էլ ժամանակի ընթացքում ստեղծել են իրենց հիմնական տեսակները: **Տեսակը (ժանրը)** գրական երկերը միավորում է ըստ ձևի և բովանդակության որոշակի ընդհանրությունների:

Քնարերգության փոխարեն հայ միջնադարի համար առավել ընդունելի է **տաղերգություն** եզրույթը: **Տաղը** որպես բանաստեղծության բնորոշում շատ ընդհանուր է և իր մեջ բովանդակում է այնպիսի տարատեսակներ, որպիսիք են **մեղեդին, գանձը, խրատը, գանգատը, բանքը**, ինչպես նաև **ողբն ու գովքը**: Տաղն այս բոլորի հավաքական բնորոշումն է: Ավելացնենք նաև, որ տաղ բառով միջնադարում բնորոշվել է նաև **պոեմը**, ասել են նաև **վիպասք, վիպասանություն**: Տաղեր հորինողին ասում են **տաղերգու**: Տաղեր գրել են միջնադարի բոլոր բանաստեղծները:

Այս շրջանում ստեղծվեց նաև հոգևոր երգի մի այնպիսի տեսակ, ինչը **չարականն** է: Շարական նշանակում է շար ականց, այսինքն՝ թանկագին քարերի շարք, այլ կերպ՝ թանկարժեք խոսք, որ համարժեք է ադամանդաշարի. ադամանդաշար խոսք, խոսքի ադամանդաշար:

Շարականները նվիրված են եղել եկեղեցու սուրբերին, հոգևոր-կրոնական տոներին և երգվել են եկեղեցական տարբեր արարողությունների ժամանակ: Շարականներ են գրել Մեսրոպ Մաշտոցը, Սահակ Պարթևը, Մովսես Խորենացին, Կոմիտաս Աղցեցի վեհափառը, Սահակ Չորափորեցին, Խոսրովիդուխտ Գողթնացին, քույր և եղբայր Սահակադուխտ և Ստեփանոս Սյունեցիները և շատ ուրիշներ:

Հոգևոր երգերից բացի, դեռևս 7-րդ դարում սկիզբ առավ **աշխարհիկ բանաստեղծությունը**, որի լավագույն նմուշներից մեկը Դավթակ Քերթովի «Ողբ

**Ջվանշիր մեծ իշխանի մահվան առթիվ»** պոեմն է: Ողբի յուրաքանչյուր քառատող տունն սկսվում է հայոց այբուբենի հերթական տառով՝ Այբից Քե:

Հայոց տաղերգությունը բուն զարգացում ապրեց հատկապես 10-18-րդ դարերում ասպարեզ հանելով համաշխարհային մեծության մի այնպիսի գրական հսկայի, որպիսին Գրիգոր Նարեկացին է: Նա գրել է տաղեր և **«Մատյան ողբերգության»** հանճարեղ պոեմը, իր բնորոշումով՝ աղոթամատյանը:

Նարեկացու հանճարը լուսավորեց ամբողջ միջնադարը: Իրենց խոսքը հնչեցրին միջնադարյան արվեստն ու մշակույթն ստեղծած այնպիսի անուններ, ինչպիսիք են Գրիգոր Մագիստրոս Պահլավունին, Հովհաննես Սարկավազ Իմաստասերը, Ներսես Շնորհալին, Ֆրիկը, Հովհաննես Երզնկացին, Կոստանդին Երզնկացին, Հովհաննես Թլկուրանցին, Մկրտիչ Նաղաշը, Գրիգորիս Աղթամարցին, Նաղաշ Հովնաթանը, Պաղտասար Դպիրը, Պետրոս Ղափանցին:

Միջնադարի մեծությունների շարքը փակում է Սայաթ-Նովան, ով արդեն աշուղական արվեստի հանճարեղ ներկայացուցիչ էր:

Անունների այս հարստությունն իր հետ բերեց գրական տեսակների, ոճերի բազմազանություն:

Բուն զարգացում ապրեց **պոեմը**, ինչին, արդեն գիտենք, միջնադարում ասում էին տաղ, վիպասանություն, վիպերգ: Քնարական պոեմի գլուխգործոց է Գրիգոր Նարեկացու **«Մատյան ողբերգության»** վերնագրված աղոթամատյանը: Այդ գրքի ազդեցությամբ ծնվեց Ներսես Շնորհալու **«Հիսուս Որդի»**-ն, գրվեցին նաև բազմաթիվ այլ երկեր: Պատմողական պոեմներ գրեցին Հովհաննես Սարկավազ Իմաստասերը, Ներսես Շնորհալին, Հովհաննես Թլկուրանցին:

Միջնադարում լայնորեն տարածված գրական տեսակ էր **ողբը**: Սկիզբ առնելով աստվածաշնչյան ողբերից, տեղայնանալով և ազգայնանալով Մովսես Խորենացու «Ողբ»-ով, հասավ Նարեկացու **«Ողբերգության մատյան»**-ին, Շնորհալու **«Եղեսիայի ողբ»**-ին և տարածվեց գրեթե բոլոր տաղերգուների ստեղծագործությունների մեջ:

Միջնադարում առավել տարածված գրական տեսակներից էին նաև **գովքը, գանգատը**: Գովքերը նվիրվում էին Հիսուս Քրիստոսին, Աստվածամորը: Գանգատն ընդդիմության, դժգոհության խոսքն է, ինչն ունի և՛ ազգային, և՛ հանրային, և՛ մարդկային բովանդակություն:

Գանգատը լիակատար արտահայտություն է գտել հատկապես Ֆրիկի տաղերում, որոնց մեջ նա բողոքում էր կյանքի անարդարությունների դեմ:

Աշխարհիկացող միջնադարն ստեղծում է պոեզիայի համապատասխան տեսակներ՝ տաղի կողքին **խաղ (խաղիկ)**, քարոզի կողքին **հայրեն**: Խաղը տաղից տարբերվում է իր աշխարհիկ բնույթով ու բովանդակությամբ: Պատահական չէ, որ Սայաթ-Նովայի բանաստեղծությունները կոչվում են խաղ: Նաև ինքը՝ Սայաթ-Նովան, գիտակցված ձևով է խաղն օգտագործել տաղի փոխարեն: Իսկ **հայրենը** ժողովրդական կամ անհատական սկիզբ ունեցող փոքր բանաստեղծությունն է: Հայրենի մի տարատեսակ է **անտունին**, ունի միմիայն ժողովրդական ծագում: Հայրեններ գրել են Ֆրիկը, Հովհաննես Երզնկացին, Նահապետ Քուչակը: Շատ են նաև ժողովրդական համարվող հայրենները:

Միջնադարում լայնորեն տարածված էին ձեռագրերի **հիշատակարանները**, դրանք կից էին լինում ինչպես չափածո, այնպես և արձակ գործերին:

Հիշատակարաններում հեղինակը տեղեկություններ է հաղորդում իր մասին, ներկայացնում տվյալ երկի գրության շարժառիթները, բնութագրում իր ժամանակը: Դրանք արժեքավոր են տվյալ երկի բովանդակությունը բացահայտելու առումով, ինչպես նաև ունեն ինքնուրույն գեղարվեստական արժեք:

Միջնադարում բանահյուսական տեսակներից տարածված էր **հանելուկը**: Հանելուկը որոշակի պատասխան պահանջող նկարագրական հարցում է: Տրվում են առարկայի, երևույթի, իրադարձության բնութագրական հատկանիշերը, պետք է կռահել, թե ինչի մասին է խոսքը: Հանելուկներ հավաքել և մշակել է Ներսես Շնորհալին:

Միջնադարում թեև իշխում էր տաղերգությունը, բայց պահպանվեց ու յուրովի զարգացավ նաև **գեղարվեստական արձակը**:

Պատմագրական երկերն ինչպես 5-րդ դարում, հետագա դարերում ևս մացին որպես գեղարվեստական արձակի սկզբնաղբյուրներ: Այդպիսին են Սեբեոսի, Հովհան Մամիկոնյանի, Մովսես Կաղանկատվացու, Ղևոնդի, Թովմա Արծրունու, Հովհաննես Դրասխանակերտցու, Ուխտանեսի, Ստեփանոս Տարնեցի Ասողիկի, Արիստակես Լաստիվերցու, Մատթեոս Ուռհայեցու, Կիրակոս Գանձակեցու, Ստեփանոս Օրբելյանի, Առաքել Դավրիժեցու և այլոց պատմությունները: Այդ գրքերում հատկապես զարգացած է **առասպելախոսությունն ու հրաշապատումը**:

Միջնադարյան արձակի ամենազարգացած տեսակն **առակն** է, առաջացել է *առ ակն*, այսինքն՝ աչքի առջև արտահայտությունից: Առակներն ունենում են դիպաշարային մաս, որտեղ պատմվում է որևէ դեպք, իրադարձություն, եղելություն և խրատաբարոյախոսական մաս, ուր բացահայտվում է այդ պատմության իմաստը: Առակը որպես առանձին առարկա՝ **առակավարժություն**, դասավանդվում էր հոգևոր դպրոցներում: Նպատակը եկեղեցու ապագա քարոզիչներին նաև առակներ պատմելով՝ ժողովրդի վրա ներգործելու արվեստ սովորեցնելն էր: Ըստ ավետարանիչների՝ Քրիստոսը ևս իր քարոզները համեմել է բազմաթիվ առակներով: Առակը հատկապես մեծ զարգացում ապրեց 12-13-րդ դարերում՝ առաջ մղելով այնպիսի նշանավոր առակագիրների, որպիսիք են Մխիթար Գոշը և Վարդան Այգեկցին:

Արձակի մյուս տեսակը **մանրավեպն** է կամ այլ կերպ՝ **մանրապատումը, գրույցը**: Տարածված էին նաև **սրբախոսական վարքերն ու վկայաբանությունները**՝ նվիրված եկեղեցու սուրբերին, ինչպես նաև **ուղեգրությունները** և այլն:

Միջնադարում **չզարգացավ թատրոնը**, որովհետև հայ եկեղեցին թատրոնը համարում էր յուրովի սատանայություն և դեմ էր դրա գոյությանը: Այս կապակցությամբ պետք է իմանալ հետևյալը:

Հեթանոսական շրջանում Հայաստանում կար թատրոն: Տիգրանակերտ և Արտաշատ մայրաքաղաքներում ներկայացվում էին թատերական ստեղծագործություններ: Բ.ծ.ա. 53 թ. Արտաշատի թատրոնում բեմադրվել է Եվրիպիդեսի «**Քաջոսուկիներ**» ողբերգությունը: Թատրոնի գոյության մասին վկայություններ կան նաև 5-րդ դարում: Մովսես Խորենացին «**Ողբ**»-ի մեջ, քննադատելով վիճակավորներին, ասում է՝ նրանք ատում են գիտությունն ու վարդապետական գրվածքները, բայց դրա փոխարեն սիրում են առևտուր և կատակերգություններ: Սա նշանակում է, որ 5-րդ դարում Հայաստանում եղել է թատրոն, և որ թատրոն հաճախելը, այն էլ կատակերգություններ դիտելը, համարվել է անպատվաբեր:

Հայ առաքելական եկեղեցին մերժեց թատրոնը: Թատրոնը համարվել է սատանայության վայր և օտարվել: Այդ ոգով է գրված «Վասն անօրեն թատերաց դիվականաց» ճառը, որ ստեղծել են հոգևոր հայրերը: Դյութերի ու գուշակների կախարդանքից խուսափելու հետ մեկտեղ նրանք խորհուրդ էին տալիս հեռու մնալ թատրոնից: Թատրոնը համարում էին կործանարար խեղկատակություն, աշխարհիկ անիմաստ զվարճանք: Այստեղից էլ թատերգությունների իսպառ բացակայությունը հայ միջնադարում:

Հակառակ հայոց եկեղեցու վճռական արգելքների՝ կաթոլիկ եկեղեցին թատրոնը թույլատրեց: Միջնադարյան եվրոպական մշակույթն անհնարին է պատկերացնել առանց թատերգությունների ու թատրոնի:

Հիշատակենք Շեքսպիրի ողբերգություններն ու կատակերգությունները, նախաշեքսպիրյան և ետշեքսպիրյան թատրոնի գոյությանը (Ջոն Հեյվուդ, Քրիստոֆեր Մարլո, Բեն Ջոնսոն) Անգլիայում, Սերվանտեսին, Լոպե դե Վեգային, Կալդերոնին՝ Իսպանիայում, Կոռնելին, Ռասինին, Մոլիերին՝ Ֆրանսիայում:

Շեքսպիրից հետո թատրոնն այնպիսի զարգացում ապրեց Անգլիայում, որ մարդիկ ավելի շատ թատրոն էին գնում, ուր իշխում էին ազատ բարքեր, քան եկեղեցի: Դա էլ պատճառ է դառնում, որպեսզի եկեղեցին դեմ դուրս գա թատրոնին: 17-րդ դարում Անգլիայում արեցին ճիշտ այն, ինչ հայ իրականության մեջ արվել էր 5-րդ դարում: Դեռ ավելին՝ անգլիական պառլամենտը 1642 թ. սեպտեմբերի 2-ի որոշմամբ փակում է թատրոնները և արգելում ներկայացումները: Այդ որոշումը վերահաստատվում է 1647-ին: Շեքսպիրի մահից 28 տարի անց քանդվում են հանրահայտ «Գլորուս» թատրոնի, այնուհետև նաև մյուս թատրոնների շենքերը:

Դրան հակառակ նույն ժամանակաշրջանում թատերական արվեստը լուրջ հաջողությունների հասավ Ֆրանսիայում: Ահա ֆրանսիական դասականապաշտ ուղղության թատերական երկերի թարգմանությամբ էլ սկիզբ է առնում հայ թատրոնը: Ռասինի «Գոթաղիա» ողբերգության թարգմանության առաջաբանում թարգմանիչը գրում է՝ հայ գրականությանը «ի թատրոնակաց, այն, զուրկ է բնավին»: Ահա հայ կաթոլիկների ջանքերով վերսկսվում է հայ թատրոնի գործունեությունը:

Բազմաթիվ գործեր թարգմանվում և բեմադրվում են Մխիթարյան միաբանությունում: Թատրոնը թափանցում է նաև Կոստանդնուպոլիս, Թիֆլիս և աստիճանաբար իր լիարժեք տեղը գրավում հայ մշակութային կյանքում՝ ծնունդ տալով Արսեն Բագրատունու, Մկրտիչ Պեշիկթաշլյանի, Պետրոս Դուրյանի, Հակոբ Պարոնյանի, ապա նաև Գաբրիել Սունդուկյանի և մյուսների թատերգություններին:

1827-ին Երևանում հեղինակի ներկայությամբ բեմադրվել է Ալեքսանդր Գրիբոյեդովի «**Խելքից պատուհաս**» դրաման: Ազգային թատերգությունների հետ մեկտեղ թարգմանվում և բեմադրվում են նաև ռուս և եվրոպացի հեղինակների գործերը:

Միջնադարյան գրականության մասին բարձր հիացմունքով են արտահայտվել հայ և այլազգի գրողներն ու ուսումնասիրողները՝ Խաչատուր Աբովյանը, Րաֆֆին, Հովհաննես Թումանյանը, Վալերի Բրյուսովը, Միսաք Մեծարենցը, Եղիշե Չարենցը, Էդուարդաս Մեծելայտիսը, Պարույր Սևակը...

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ է գրական սեռը, որոնք են սեռի տարատեսակները: Թվարկե՛ք և բնութագրե՛ք:
2. Ի՞նչ է տաղը և տաղերգությունը: Թվարկե՛ք տաղի տարատեսակները:
3. Ի՞նչ տարբերություն կա հոգևոր և աշխարհիկ բանաստեղծության միջև: Ի՞նչո՞ւ ենք մի դեպքում օգտագործում տաղ եզրույթը, իսկ մյուս դեպքում՝ խաղ:
4. Ի՞նչ է շարականը: Ի՞նչպե՞ս է այդ եզրույթը ստուգաբանվում: Ո՞վքե՞ր են շարականներ գրել:
5. Երբվանի՞ց է ձևավորել աշխարհիկ բանաստեղծությունը: Ո՞վ է առաջին ներկայացուցիչը և ի՞նչ երկ է գրել:
6. Ի՞նչպե՞ս էին միջնադարում բնորոշում պոեմը: Ո՞վքե՞ր են պոեմներ գրել:
7. Ի՞նչպե՞ս կբնորոշե՞ք ողբը որպես գրական տեսակ: Ո՞վքե՞ր են գրել:
8. Որպես գրական տեսակներ բնութագրե՛ք գովքը, գանգատը, հայրենը, անտունին:
9. Ի՞նչ են իրենցից ներկայացնում ձեռագրերի հիշատակարանները:
10. Ի՞նչ է հանելուկը: Ո՞վ է հավաքել և մշակել:
11. Թվարկե՛ք հայ միջնադարյան պատմիչների անունները:
12. Ի՞նչ է առակը, ի՞նչ կառուցվածք ունի, ի՞նչպե՞ս է առակ բառը ստուգաբանվում, ո՞վքե՞ր են գրել:
13. Արձակի ի՞նչ տեսակներ կարող եք թվարկել:
14. Ի՞նչո՞ւ միջնադարում հայ իրականության մեջ չզարգացավ թատրոնը:

## ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Հայ միջնադարյան քնարերգությունն ունի երկու ակունք՝ բանահյուսական-ժողովրդական և գրային-գրքային: Բանահյուսական-ժողովրդականը **Գողթան երգերն** են, որոնք պահպանվել են Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ: Կոչվում են Գողթան երգեր, որովհետև ստեղծվել են հայոց Գողթան գինեվետ գավառում: Բանահյուսական-ժողովրդական ծագում ունեն նաև հետագայում ստեղծված աշխատանքային, հարսանեկան, ռազմի, լայաց բանաստեղծությունները: Այդ բանաստեղծությունները նաև երգվել են հնագույն գուսանների և ասացողների կողմից:

Հայ միջնադարյան քնարերգության երկրորդ ակունքը «Աստվածաշունչ»-ն է, որի մեջ զետեղված սաղմոսների, ողբերի ներշնչանքով 5-րդ դարի մեր առաջին մատենագիրները հորինեցին **հոգևոր երգեր**, որոնց ասում են նաև **ապաշխարանքի երգեր**: Այդպիսիք գրել են Մեսրոպ Մաշտոցը, Սահակ Պարթևը, Մովսես Խորենացին, Հովհան Մանդակունին և ուրիշներ:

Հայ միջնադարյան տաղերգությունը դասագրքում առանձին գլուխներով ներկայացված է Գրիգոր Նարեկացու, Ներսես Շնորհալու, Նահապետ Քուչակի և Սայաթ-Նովայի ստեղծագործությամբ: Սակայն այս շրջանում ապրել են նաև շատ այլ երևելի դեմքեր, որոնց մասին ևս պետք է ունենալ որոշակի պատկերացում: Այդ շարքի մեջ են Դավթակ Բերթողը, Կոմիտաս Աղցեցին, Ստեփանոս

Սյունեցին, Գրիգոր Մագիստրոս Պահլավունին, Հովհաննես Սարկավագ Իմաստասերը, Գրիգոր Տղան, Ներսես Լամբրոնացին, Ֆրիկը, Հովհաննես Երզնկացին, Կոստանդին Երզնկացին, Խաչատուր Կեչառեցին, Հովհաննես Թլկուրանցին, Առաքել Սյունեցին, Առաքել Բաղիշեցին, Մկրտիչ Նաղաշը, Գրիգորիս Աթամարցին, Ներսես Մոկացին, Նաղաշ Հովնաթանը, Պաղտասար դպիրը, Պետրոս Ղափանցին և շատ այլ նշանավոր տաղերգուներ:

**ԴԱՎԹԱԿ ՔԵՐԹՈՂԻ** (7-րդ դար) անունը և նրա «**Ողբ Ջվանշիր մեծ իշխանի մահվան առթիվ**» պոեմը պահպանվել է 7-րդ դարի պատմիչ Մովսես Կաղանկատվացու «**Պատմություն Աղվանից աշխարհի**» գրքում: Դավթակ Քերթողը եղել է ճարտասան և վարժ ստեղծագործող: Ջվանշիրն Աղվանքի մեծ իշխան է եղել 637-670 թթ. և սպանվել պարսիկների ձեռքով: Դավթակ Քերթողի ողբը պոեմ է. յուրաքանչյուր տուն սկսվում է հայոց այբուբենի հերթական տառով՝ Այբից Քե:

Ջվանշիր իշխանը հանուն քրիստոնեական հավատի և երկրի անկախության, ինչպես Վարդան և Վահան Մամիկոնյանները, կռվել է պարսիկների դեմ, ինչով և սիրելի է հայ մատենագիրներին: Դավթակ Քերթողն ստեղծել է պատմողական մի ողբ՝ լի հույզով ու զգացմունքով: Նա օգտագործել է այնպիսի ոճ ու բանաստեղծական միջոցներ, որով դյուցազներգություններ էին հորինում: Բանաստեղծն ազգերին ու ցեղերին, բոլոր հողածիններին իրեն ողբակցելու է կանչում: Հաջորդում են մի կողմից գովքի ու փառաբանության, մյուս կողմից՝ թշնամու դեմ նզովքի տողեր: Դավթակի ողբը շատ անկեղծ է, զգացվում է, որ նա մտերիմ է եղել Աղվանքի մեծ իշխանի հետ և հիմա, նրա բացակայությամբ, կյանքը կորցրել է իմաստը: Պոեմի մեջ պարզ երևում է նաև բանաստեղծի կերպարը:

**ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍ ՊԱՀԼԱՎՈՒՆԻՆ** (մոտ 990-1080) իր ժամանակի ամենանշանավոր դեմքերից է: Եղել է պետական գործիչ, մանկավարժ, բանաստեղծ: Պահլավունիների տոհմը նշանակալի դեր է կատարել 11-րդ դարի հայ հոգևոր-քաղաքական կյանքում: Գրիգորի որդիներից մեկը Գրիգոր Բ Վկայասեր անվամբ օծվել է հայոց վեհափառ հայրապետ: Վեհափառներ են եղել նաև նրա թոռները՝ Գրիգորը Գ Պահլավունին, Ներսես Շնորհալին, Գրիգոր Տղան: Այս տոհմից են սերվել Կիլիկիայի բանաստեղծական դպրոցի այնպիսի նշանավոր դեմքեր, ինչպիսիք են Ներսես Շնորհալին, Գրիգոր Տղան, Գրիգոր Քարավեժը:

Մագիստրոսի ստեղծագործության մեջ հիշարժան է «**Հազարատողյան առ Մանուչե**» պոեմը, որով առաջին անգամ հանգը մտնում է հայ պոեզիայի մեջ:

**Հանգը** բանաստեղծական տողերը կապակցող հնչյունական ներդաշնակությունն է, որ ունի կշռույթը կարգավորող դեր: Մինչ այդ հանգը բնորոշ չի եղել հայ բանաստեղծությանը, իսկ դրանից հետո արմատավորվեց, զարգացավ և հասավ մինչև մեր օրերը:

Գրիգոր Մագիստրոս Պահլավունու «**Հազարատողյան առ Մանուչե**» պոեմն ունի որոշակի պատմություն: Կոստանդնուպոլսում Մագիստրոսը վեճի մեջ է մտնում արաբ աստվածաբան Մանուչեի հետ: Մանուչեն թերազնահատում է «Աստվածաշունչ»-ը և գովաբանում մուսուլմանների «Ղուրան»-ը, առավելություն համարելով նաև այն, որ «Ղուրան»-ը գրված է չափով ու հանգով:

Մագիստրոսը գրագ է գալիս Մանուչեի հետ, ասելով՝ այն, ինչ քո Մահմեդն արել է քառասուն տարում, ես կանեմ չորս օրում: Եվ, իրոք, խոստացած ժամկետում Մագիստրոսը «Աստվածաշունչ»-ը հիմնական բովանդակությամբ դարձնում է չափածո ու հանգավոր: Պարտվելով՝ համաձայն գրագի, արաբ աստվածաբանը փոխում է դավանանքը և դառնում քրիստոնյա:

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԳ ԻՄԱՍՏԱՍԵՐԸ** (մոտ 1045/1050–1129) իր ժամանակի զարգացած հոգևոր գործիչներից է: Եղել է ուսուցիչ, զբաղվել գիտությամբ, գեղագիտությամբ, պատմագրությամբ: Գրական ասպարեզում առավել հայտնի է որպես արվեստի տեսաբան: Դրա արտահայտությունը նրա «**Բան առ ձագն, որ կոչի սարեկ**» պոեմն է: Գրված է երկխոսության ձևով: Զրուցում են հեղինակը՝ որպես բանաստեղծ ու երգիչ, և սարյակը՝ որպես երգիչ: Օգտագործված է դիմառնությունը, ինչի շնորհիվ սարյակը մարդկային լեզվով խոսում է հեղինակի հետ:

Բանաստեղծը դիմում է արթուն և զվարթուն, հսկող և բարբառող, կանչող և կարկաչող սարյակին, որպեսզի սա իրեն ծանոթացնի երգեցողության իր քաջ արվեստի հետ: Թռչունը բնության մարմնավորումն է, նա ուսուցչի չի աշակերտել, բայց նրա երգն ավելի կատարյալ է ուսում ստացած մարդու համեմատ: Վերջինս իրեն համարում է կարծեցյալ բանաստեղծ և ընդունում իր պարտությունը: Այդպես է, որովհետև մարդը շեղվել է բնական և աստվածային ճանապարհից:

Ուսուցիչ դարձած թռչունն իր աշակերտ դարձած վարդապետ բանաստեղծին ցույց է տալիս դարձի ճանապարհը. «*Արդ՝ կացի ի բնականին, որի պարզն է հայտնություն*»: Այսինքն՝ վերադարձի բնական վիճակին, մի հեռացի բնությունից և այն քեզ հայտնություն կպարզկի:

Պոեմը ճշմարիտ ճանապարհից շեղված մարդու ու մարդկության և նրա հետ շեղված արվեստի՝ բանաստեղծության ու երաժշտության մասին է: Ավելի ընդհանուր ձևով՝ խոսքը մարդու և նրա հոգևոր արժեքների կորուստի մասին է: Փրկությունը վերադարձն է դեպի սկիզբ՝ դեպի Աստված և դեպի Բնություն:

**ՖՐԻԿԸ** (1236–1310–ական թթ.) միջնադարի մեծ դժգոհներից մեկն է, արդարության տառապած ձայնարկուն և հավատի համոզված քարոզիչը: Երիտասարդ տարիներին Ֆրիկը եղել է աշխարհական, կյանքի վերջին տարիներին դարձել է հոգևոր քարոզիչ: Սկզբում եղել է ունևոր, հետո սնանկացել է: Պարտքի դիմաց ստիպված է եղել գրավ դնել որդուն, ում հետո չի կարողացել փրկագնել: Ինքը ևս եղել է գերության մեջ, ազատվել և ապրել է հուսահատ ու տառապալից կյանք: Որդու կորուստի ցավն ամբողջ կյանքում հոգեպես տանջել է նրան:

Ֆրիկ անվան վերաբերյալ կան մի քանի վարկածներ: Ֆրիկ միջին հայերենում նշանակել է խանձված դեռահաս ցորեն: Այս բացատրությունն առավելապես պայմանավորված է բանաստեղծի դառը ճակատագրով: Մանավանդ, որ ինքն էլ գրում է. «*Ո՛չ ծըլիմ, ոչ բուսանիմ, զերդ զաղընձած սերմ եմ գերիս*»: Ֆրիկ բառը լատիներեն ունեցել է նաև խենթ իմաստը: Թլկուրանցին իրեն խև էր համարում: Ֆրիկը ցավից իրեն կարող էր խև, խենթ համարել ու այդ բառը դարձնել գրական անուն: Ֆրիկ անունը կարող է առաջացած լինել նաև Ֆրեդերիկ անվան սղոմից:

Ֆրիկի ստեղծագործությունը հարուստ է հավատի ու խրատական, անձնական ու հասարակական բովանդակություն ունեցող տաղերով և հայրեններով: Այս տեսակետից հատկապես առանձնահատուկ են նրա «**Ընդդեմ Ֆալաքին**» և «**Գանգատ ամենագոր Աստծուն**» տաղերը:

Ֆալաքը ճակատագիրն է, ինչի դեմ ընդվզում է բանաստեղծը և անձնական բողոքը դարձնում հանրային դժգոհություն: Ըստ նրա՝ վատերը երկրի տերեր են դարձել, իսկ ուղղամիտ մարդիկ հալածվում են, անգետը որոշում է իմաստունի բախտը: Վիճակն այսպես դժվարացել է, որովհետև երկրում իշխում են անօրեն թաթարները, ովքեր զուրկ են պահում բոլորին, իսկ գողերին մեծավոր են կարգում:

Սրա շարունակությունն ասես լինի «**Գանգատ**»-ը. այստեղ Ֆրիկն իր վրդովմունքն է հայտնում աշխարհի դրվածքի հանդեպ և քննադատում առկա բնական, հանրային, մարդկային և ազգային անհավասարությունը: Նա նախ ընդվզում է աշխարհաստեղծման առասպելի դեմ, թե ինչպես մեկ Ադամից ու Եվայից կարող են աշխարհում այսքան ազգեր ստեղծվել: Իսկ հանրային կյանքի անկատարությունը մերկացնում է այս տողերով.

*Մեկն ի պապանց պարոնորդի,  
Մեկն ի հարանց մուրող լինի.  
Մեկին հազար ձի ու ջորի,  
Մեկին ո՛չ ուլ մի, ո՛չ մաքի:*

Ֆրիկն այն բանաստեղծն է, ով առաջինն է գրաբարից անցել միջին հայերենի: Դա եղել է գիտակցված քայլ, որովհետև այդ կապակցությամբ գրել է. «*Ֆրրիկն հանցեղ պարզ է խոսել, որ ամենայն մարդ իմանա*», այսինքն՝ Ֆրիկն այնպես պարզ է խոսել, որ ամեն մեկին հասկանալի լինի:

Ֆրիկը ժողովրդական բանաստեղծ է թե՛ իր խոսքի բովանդակությամբ և թե՛ լեզվով:

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՎ ԿՈՍՏԱՆԴԻՆ ԵՐԶՆԿԱՑԻՆԵՐ**: Երզնկան՝ Եկեղյաց գավառի կենտրոնը, միջնադարում շատ զարգացած քաղաք էր: Նույն քաղաքում գրեթե միաժամանակ ապրում էին երկու նշանավոր բանաստեղծ՝ Հովհաննեսը (1250-ական թվականներ -1326) և Կոստանդինը (մոտ 1250-1314/1328): Քաղաքում նրանց տարբերում էին ըստ հասակի՝ Հովհաննեսը կարճահասակ էր (այստեղից Պլուզ մականունը), Կոստանդինը՝ բարձրահասակ (բոյով):

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԶՆԿԱՑԻՆ** գրել է հավատի, սիրո տաղեր, հայրեններ, շարականներ, ներբողներ, գիտաճանաչողական պոեմ:

Առավել ուշագրավ է նրա «**Տաղ Երզնկացի Հովհաննեսի ասացյալ**» սիրերգը. պատկերում է հոգևոր ճանապարհն ընտրած հայ երիտասարդի և մուսուլմանուհի Աշայի սիրո պատմությունը: Աշան իր գեղեցկությամբ խելքից հանում է տղային, նրան խնձոր է նետում: Տղայի մայրը դիմադրում է, թե՛ «*Աշան տաճիկ է անօրեն*», իսկ տղան գերված է նրանով: Աղջիկը պայման է դնում՝ նախ մզկիթ մտնել (այսինքն՝ հավատափոխ լինել) և դրանից հետո միայն տիրանալ իրեն: Տղան մերժում է այս առաջարկը, որից հետո աղջիկն է դարձի գալիս և ասում՝ գնա՛, եկեղեցի կառուցի՛ր, ուր թող մեզ պսակեն,

օրինեն, և թող քո սրտի ուզածը լինի:

Սա շարժուն, կենսուրախ, սրամիտ երկխոսություններով ու անցումներով հարուստ մի ծավալուն երկ է. կա դիպաշար, կան կերպարներ, կան նաև ընտանիք-որդի-տարբեր կրոնների ներկայացուցիչների ամուսնության հոգեբանական վիճակներ:

**ԿՈՍՏԱՆԴԻՆ ԵՐՋՆԿԱՅԻՆ** սիրո մեծ երգիչ է, նրա ստեղծագործությունը հարուստ է գարնան և հոգևոր զարթոնքի երգերով, վարդի ու բլբուլի սիրավեպի դրվագներով: Գարնան պայծառ գույների մեջ նրա համար սեր է ամեն ինչ.

*Սեր է ծառն ու սեր ծաղիկն, ու սեր հավուն ձայնն ի ծառին,  
Սեր է վարդն ու սեր պլպլուն՝ սիրով նըստել ի վերայ վարդին...*

Սերը աշխարհի առողջությունն է, այդ իսկ պատճառով նրա ստեղծագործությունը լի է «**Տաղ սիրո**», «**Տաղ սիրո ազնիվ**» վերնագիրն ունեցող բազմաթիվ գործերով:

Կոստանդին Երզնկացին առաջիններից էր, որ գրական երկի մեջ կերտեց իր՝ բանաստեղծի կերպարը: Ոմանք չարախոսում են նրան, նախանձում նրա բանաստեղծական տրվածքին, և նա ասում է, որ իր գրելու ձիրքը՝ որպես աստվածային պարգև, երկնքից է իր վրա իջել:

Կոստանդին Երզնկացին պատասխան է տալիս նաև հոգու և մարմնի վեճին և այդ կապակցությամբ գրում.

*Հոգիս խիստ հոժար, բանից իմաստնոց լըսել.  
Մարմինս է հեշտասեր, զի աշխարհես է ինք ծընել.  
Ի երկուքին միջին մում եմ՝ ի մեջ հըրոյն վառել,  
Անհիմն ու անհաստատ եմ՝ անհանգիստ ի շուրջ եկել:*

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹԼԿՈՒՐԱՆՑԻՆ** (մոտ 1300–1380) սիրային քնարերգության և վիպական տաղերի մեծ վարպետ է:

Սիրո կենարար շունչը Թլկուրանցու գրեթե բոլոր տաղերի հիմքն է: Ըստ նրա՝ սիրո մարմնավորում հանդիսացող աղջկա հենց միայն տեսքը «*բժիշկ է հիվանդին*»: Նա շատ ճոխ ու շքեղ պատկերներով է ուրվագծում գեղեցկուհու արտաքինը: «*Նիստ, որ նայեմ երեսդ ի վեր*»,– ոգևորված ասում է նա: Թլկուրանցին առաջինն է, որ Քուչակից, Հովնաթանից և Սայաթ-Նովայից առաջ օգտագործում է բառագեղանկարչության բոլոր հնարավորությունները: «*Ով քեզ սիրե, ո՞նց մեռանի*»,– ոգևորված բացականչում է նա: Այս տեսակետից գլուխգործոց է «**Դու ես գարնանային վարդ ու բուրաստան**» սկիզբն ունեցող տաղը.

*Դու ես գարնանային վարդ ու բուրաստան,  
Աչքերդ է ծովեր, խումար ու մեստան,  
Քո ծոցդ է դըրախտ, մրգաց անդաստան,  
Դու ինձ դատավոր, արա՛ դատաստան,  
Սիրով մի սպանաներ, ճեղատ էֆենտի:*

Թլկուրանցին երգել է նաև անցողիկ կյանքի երգը, փառաբանել կյանքը հայրենիքին նվիրողներին: Այս տեսակետից նշանավոր է նրա «**Տաղ քաջի Լիպարտին**» պոեմը:

Լիպարտիոն պատմական անձ է, Կիլիկիայի հայոց թագավորության վերջին գորավարներից մեկը: Պոեմի հիմքում ընկած է պատմական եղելություն. 1370 թ. Տարսունի մամլուք ամիրա Մանչակ Շահարոլին հարձակվում է Կիլիկիայի Սիս մայրաքաղաքի վրա: Լիպարտին ամեն կերպ պաշտպանում է քաղաքը, բայց, ի վերջո, պարտվում է և նահատակվում: Դյուցազներգությունների ոգով Թլկուրանցին կերտել է այս քաջ և հայրենասեր հերոսի կերպարը:

Թլկուրանցու վիպական մյուս տողերից հիշարժան են «**Գեղ մի կայր՝ Նարեկ ասեն**»՝ նվիրված Գրիգոր Նարեկացուն և «**Տաղ սրբոյն Ալեքսիանոսի**»՝ նվիրված ճգնավոր Ալեքսիանոսի վարքին:

Թլկուրանցին կերտում է հրաշագործ Նարեկացու կերպարը: Նարեկ գյուղում վարդապետի աթոռն էր: Գյուղն ուներ Գորգ անունով տանուտեր, ով ապրել էր հարյուր տարի, բայց եկեղեցի չէր մտել: Եկեղեցի չմտնելու համար վարդապետը հանդիմանում է նրան: Գորգը արդարանում է: Վարդապետը նզովում է նրան՝ մարմինը հողում չի հանգչի: Այս խոսքից մեկ տարի անց Գորգը մեռնում է: Նրան տանում են թաղելու, բայց հողը չի ընդունում, մարմինը դուրս է նետում: Վարդապետի նզովքը կատարվում է: Գորգի հարազատները թախանձագին դիմում են վարդապետին: Նա խոսում է մեռյալի հետ և վերստին նախատում նրան: Գորգը մի պահ կենդանանում և թողություն է խնդրում իր մոլորության համար: Վարդապետը ներում է նրան և թողություն է տալիս. «*Գորգ, հանգի՛ր ի մեջ հողին*»:

Շարունակության մեջ Թլկուրանցին պատմում է Նարեկացու սուրբ լինելու մեկ այլ պատմություն: Նարեկացու համբավը հասնում է Սիս: Երեք վարդապետ գալիս են Նարեկացուն տեսության և պարզելու ճշմարտությունը: Նարեկացին հյուրերին առաջնորդում է իր խուցը: Երեք աղավնի է բռնում, մաքրում, խորովում և դնում հյուրերի առաջ: Հյուրերը հիշում են, որ օրը պահք է՝ մսեղեն չի կարելի ուտել: Նարեկացին դիմում է նրանց՝ այդ դեպքում հրաման սովեք, թող թռչեն: Երեք վարդապետները զարմացած նայում են իրար՝ մտածելով՝ ինչպե՞ս պիտի թռչեն տապակած աղավնիները: Այդ պահին Նարեկացին ինքն է առաջ գալիս, հիշում է Տեր կենդանին, աջը վեր է բարձրացնում, որից հետո աղավնիները կենդանանում են, յոթ անգամ պտտվում Նարեկացու գլխավերևում և ճախրանքով հասնում իրենց երամին: Վարդապետները Նարեկացու ոտքերն են ընկնում և շտապում Սիս՝ լուր տալու հայրապետին, թե՛ ճշմարիտ է, որ Նարեկացին հոգի է տալիս մեռածին:

Իր հերթին Թլկուրանցին ավելացնում է՝ «*Հոգով սուրբ էր Նարեկացին*»:

**ՄԿՐՏԻՉ ՆԱՂԱՇԸ** (մոտ 1400–1470-ական թթ.) հոգևոր և ազգային խոշորագույն գործիչ է: Կառուցել և նորոգել է բազմաթիվ եկեղեցիներ՝ դրանք դարձնելով հավատի ամուր ամրոցներ:

Նրա ստեղծագործությունը հարուստ է գարնան և սիրո երգերով, ժամանակի բարոյական դասերով: Լինելով բարեգործ ու գթառատ անձնավորություն՝ նա անդրադարձել է ազահության ախտին («**Վասն ազահության**»):

Ըստ նրա՝ աշխարհի սկզբից ի վեր ինչ չարիք որ գործվել է՝ պատճառը ազահությունն է: Ազահության պատճառով Կայենը սպանեց Աբելին, արքաները չարություն գործեցին, անգամ հոգևորականները դարձան ընչաքաղց:

Նաղաշը նաև առաջիններից է, ով անդրադարձավ պանդխտության ծանր երևույթին: «**Վասն դարիպի**» վերնագրով նա ունի մի քանի տաղ:

**ՆԱՂԱՇ ՀՈՎՆԱԹԱՆ** (1661–1722): Հովնաթանյանների տոհմը շուրջ 200 տարի հայ մշակույթին տվել է նկարիչներ, բանաստեղծներ, երգիչներ: Նաղաշ Հովնաթանն ինքն իր մեջ միավորում է արվեստի այդ երեք կողմերը: Իր ծննդավայր Շոռոթ գյուղում ունեցել է նկարչական արվեստանոց: Երևանում մասնակցել է եկեղեցիների բարենորոգումների աշխատանքներին: Հրավիրվել է Թիֆլիս՝ որպես արքունական նկարիչ ու երգիչ:

Նաղաշ Հովնաթանի տաղերն ունեն սիրո, վայելքի և երգիծական կամ, ինչպես ինքն է ասում, ծիծաղական բովանդակություն: Դրանց մի մասը երգվել է նրա հորինած եղանակներով: Կենսուրախ ու թեթև մի շունչ է ավելացնում Հովնաթանը հայ միջնադարյան գրականությանը: Նրա տաղերը ոչ միայն երգվել, այլև ընթերցվել են ժողովրդական հավաքույթներում:

Նաղաշ Հովնաթանի սիրո երգերին բնորոշ է անմիջականությունը: Նրա ստեղծագործության մեջ մեկընդմիջտ լուծված է հոգու և մարմնի երկփեղկվածության հարցը: Ամեն ինչ սկսվում է գեղեցկուհու արտաքին գովաբանությունից: Նա ոչ միայն կնոջ արտաքին դիմանկարի վարպետ է, այլև ստեղծում է տղամարդու և կնոջ սիրային փոխհարաբերության հոգեբանական որոշակի վիճակներ: Այս ընթացքում ձևավորվում է նաև իր՝ հեղինակի կերպարը՝ որպես առաջին ազատ արվեստագետի կերպար հայ իրականության մեջ: Սիրո տաղերից առանձնահատուկ հմայք ունի «**Գուրջիստանա գոզալներ**»-ը, որ երգվում է առ այսօր:

Հովնաթանի ուրախության երգերի համար առիթ են հանդիսացել կառուցվող եկեղեցին, նորաշեն ջրաղացը, ժողովրդական տոնակատարությունները: Ուրախության տաղերից մեկն ունի այսպիսի կրկներգ.

*Եկեք, եղբարք իմ, ցնծալով,  
Ուրախությամբ և պարելով,  
Ծափս ծափի հարկանելով:*

Ուրախությունն առանց սրամիտ խոսքի ու ծիծաղի չի լինի: Այս տեսակետից Հովնաթանի երգիծական բանաստեղծությունները նրա ուրախության ու խնջույքի երգերի պարզ շարունակությունն են: Ծաղրում է մանկավարժին, ով «*Կուզե որ դասն գութնով վարի*». պատահական և անգրագետ մարդկանց, ովքեր ցանկանում են դառնալ հոգևորական:

Նաղաշ Հովնաթանի տաղերգությունը հայ միջնադարյան պոեզիայի շեն ու շքեղ ավանդույթների բնականոն շարունակությունն է: Միաժամանակ իր արվեստով նա ճանապարհ բացեց Սայաթ-Նովայի համար:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ովքեր են հայ միջնադարյան քնարերգության ներկայացուցիչները:
2. Ո՞վ է Դավթակ Քերթողը: Ներկայացրե՛ք:
3. Ո՞վ է Գրիգոր Մագիստրոս Պահլավունին: Ներկայացրե՛ք:
4. Ի՞նչ բովանդակություն ունի Հովհաննես Սարկավազ Իմաստասերի «Բան առ ձագն, որ գոչի սարեկ...» պոեմը:
5. Ո՞վ է Ֆրիկը: Որո՞նք են նրա ստեղծագործության բնութագրական գծերը:
6. Ո՞վ է Հովհաննես Երզնկացին: Ի՞նչ բովանդակություն ունի նրա «Տաղ Երզնկացի Հովհաննեսի ասացեալ» բանաստեղծությունը:
7. Ո՞վ է Կոստանդին Երզնկացին: Ի՞նչ բնույթի ստեղծագործություններով է հայտնի:
8. Ո՞վ է Հովհաննես Թլկուրանցին, ի՞նչ է գրել: Ներկայացրե՛ք նրա «Տաղ քաջին Լիպարտի» և «Գեղ մի կայր՝ Նարեկ ասեն» պոեմները:
9. Ո՞վ է Մկրտիչ Նաղաշը և ի՞նչ ստեղծագործություններով է հայտնի:
10. Ներկայացրե՛ք Նաղաշ Հովնաթանին և բնութագրե՛ք նրա ստեղծագործությունը:

# ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

## 951–1003

Գրիգոր Նարեկացու ստեղծագործությամբ հայ գեղարվեստական մտածողությունը մտնում է միանգամայն նոր փուլ: Տաղերով և «Մատյան ողբերգության» պոեմով նա գեղարվեստական խոսքին հաղորդում է մարդկանց վրա ներգործելու տիրական ազդեցություն: Դա կենդանի խոսք է, որ թափանցում է մարդու հոգու խորքը, ապրեցնում է նրան և ապաքինում: Նարեկացին ճշմարիտ հավատացյալ էր և հավերժական փառք նվաճեց իր աստվածային հանճարով:



Գրիգոր Նարեկացու հռչակը տարածվել է նրա մահից հետո: 12-րդ դարում նա դասվել է հայ եկեղեցու սուրբերի շարքը: Գրվել է նրա վարքը:

Գրիգոր Նարեկացին ծնվել է 951 թվականին Անձնացյաց գավառում: Մանուկ Գրիգորը վաղ է զրկվել մորից: Հայրը՝ Խոսրով Անձնացին, ժամանակի նշանավոր և համարձակ հոգևոր գործիչներից էր, հասել է եպիսկոպոսի աստիճանի, գրել է **«Պատարագի մեկնություն»** աշխատությունը: Իր համարձակության համար նա խիստ քննադատության է ենթարկվել եկեղեցու հայրերի կողմից և նզովվել:

Գրիգորն ուներ ավագ եղբայրներ՝ Սահակ և Հովհաննես, ովքեր կրթված մարդիկ էին: Երեք եղբայրների կյանքն անցել է Նարեկա վանքում, որտեղ և ուսում են ստացել: Հովհաննեսը օգնել է Գրիգորին՝ ավարտին հասցնելու **«Մատյան...»**-ը: Այնքան մեծ է եղել նրա հռչակը, որ հետագայում դարձել է Նարեկա վանքի առաջնորդ: Իսկ վանքի վանահայրն ու ուսուցչապետը մեծ հռչակի հասած գիտնական և փիլիսոփա Անանիա Նարեկացին էր, ով Գրիգորի մոր ազգականներից էր. Գրիգորի մայրը և Անանիան երկու եղբայրների ժառանգներ էին: Անանիա Նարեկացին գրել է հոգևոր աշխատություններ: Իր ուսուցչին Գրիգոր Նարեկացին համարել է *«հոգեզարդ և մտավարժ փիլիսոփա»*:

Նարեկա վանքը գտնվել է Ռշտունյաց գավառի Նարեկ գյուղում՝ Վանա լճի հարավ-արևելքում: Նարեկա վանքը եղել է ժամանակի ճարտարապետական կոթողներից մեկը: Ըստ ավանդության՝ սրբակրոն Գրիգորը ճգնել է Վանա լճի մերձակա քարանձավներից մեկում, որտեղից հրաշալի տեսարան է բացվել դեպի լիճը, դեպի Աղթամար և Արտեր կղզիները: Այստեղ էլ նա երկնել է իր տաղերն ու **«Մատյան...»**-ը:

Գրիգոր Նարեկացին կրոնական բարձր աստիճանի չի հասել, եղել է վարդապետ: Իր մասին նա այսպես է գրել. *«Ես՝ Գրիգոր կրոնավոր քահանա, ետին բանահյուսաց և կրտսեր վարժապետաց»*: Նարեկացու հոր հանդեպ պաշտոնական եկեղեցու բացասական վերաբերմունքը հավանաբար ազդել է նաև նրա որդիների ճակատագրի վրա:

Նարեկացին զբաղվել է ոչ միայն ընթերցանությամբ ու ստեղծագործելով, այլև եղել է ուսուցիչ ու քարոզիչ:

Նարեկացու ճիրքը հայտնի էր ժամանակակիցներին, որոնք և նրան պատվիրել են գրելու առանձին երկեր՝ **«Սողոմոնի «Երգ երգոցի» մեկնություն»**-ը, **«Ապարանից Սուրբ Խաչի պատմություն»**-ը:

Գրիգոր Նարեկացու կյանքը խաղաղ չի անցել: Պաշտոնական եկեղեցու վարդապետության դեմ ուղղված թոնդրակյան շարժման տարիներն էին: Ինչպես Անանիա Նարեկացուն և նրա հորը՝ Խոսրով Անձևացուն, այնպես և նրան կասկածել են որպես թոնդրակեցի, համարել հերձվածող, անհավատ, հավատուրաց: Այս կապակցությամբ Անանիա Նարեկացին գրում է **«Հակաճառություն ընդդեմ թոնդրակեցիների»** գրությունը և ժխտում իր հանդեպ եղած մեղադրանքը, իսկ թոնդրակեցիներին համարում Աստծուց նզովվածներ: Այդպես է վարվում նաև Գրիգոր Նարեկացին՝ գրելով **«Թուղթ»** (նամակ) Մոկաց Կճավա վանքի վանահորը և նրան հայտնում է իր բացասական վերաբերմունքը թոնդրակյան շարժման հանդեպ՝ վերջիններին համարելով դևեր, մարդադեմ գազաններ, կախարհներին գերազանցող աղանդավորների կաճառ:

Նարեկացին՝ որպես տաղերի ու **«Մատյան...»**-ի հեղինակ և քրիստոնեության գաղափարախոս, էապես չէր կարող հարել եկեղեցու դեմ ուղղված աղանդին:

Գրիգոր Նարեկացին վախճանվել է 1003 թվականի փետրվարի 27-ին: Թաղվել է Նարեկա վանքի Սուրբ Սանդուխտ եկեղեցու հարևանությամբ: Նրա գերեզմանի վրա հետագայում կառուցվել է մատուռ-դամբարան և դարձել ուխտատեղի: Մինչև 1915 թվականը դեռևս պահպանվում էր:

Նարեկացու կյանքն ու հիշատակն ուղեկցվել են նրա կերպարը սրբագործող ավանդություններով: Դրանց մեջ նա երևում է որպես սքանչելագործ, հրաշագործ: Նրա աղոթքով հարություն է առնում նորապսակ երիտասարդը, կենդանանում են անշնչացած եզները, տապակած աղավնիները թև են առնում ու թռչում, երկնքում թևածող աղավնիներն առանց վախի իջնում են նրա պարզած ափի մեջ: Նա եղել է անվարձ հովիվ կամ իր վարձը բաժանել է ժողովրդին: Գավազանի մեկ հարվածով նա կարողացել է ժայռերից ջուր բխեցնել: Այդպիսի ավանդություններից մեկը **«Գեղ մի կայր՝ Նարեկ կասեն»** վերնագրով դեռևս 14-րդ դարում մշակել է Հովհաննես Թլկուրանցին:

Նարեկացուց մեզ հասել է բավականին հարուստ ժառանգություն. տաղեր՝ մեղեդիներ, գանձեր (քարոզներ), հորդորակներ (փոխեր), ներբողներ, նաև թուղթ, մեկնություն և **«Մատյան ողբերգության»** պոեմը:

Նարեկացու ստեղծագործությունները միջնադարում արտագրվել են, իսկ 17-րդ դարից սկսած՝ արժանացել տասնյակ հրատարակությունների: **«Մատյան...»**-ի մեկնաբանությամբ (լուծմունք) հայագիտությունն զբաղվել է դեռևս 13-րդ դարից սկսած: Հետագայում նարեկացիագիտությունը դարձավ հայագիտության զարգացած ուղղություններից մեկը (Մինաս Ամիրեցի, Հակոբ Նալյան, Գաբրիել Ավետիքյան, Արշալույս Ղազինյան, Պողոս Խաչատրյան և ուրիշներ): Նրա երկերը գրաբարից փոխադրվեցին և՛ արևելահայ, և՛ արևմտահայ գրական լեզուների:

Իր բոլոր գործերի մեջ հեղինակը ներկայանում է որպես խոնարհ քրիստոնյա, որպես գրի հանճարեղ, բայց համեստագույն մշակ: Նարեկացու խոսքը լեցուն է քրիստոնեական բազմապիսի խորհրդանշաններով, որոնց ակունքը **«Աստվածաշունչ»**-ն է: Նրան ստեղծագործական ազդակ են հաղորդել նաև 5-րդ դարի հայ գործիչների ու մատենագիրների՝ Մեսրոպ Մաշ-

տոցի, Սահակ Պարթևի, Մովսես Խորենացու, Հովհան Մանդակունու և այլոց ապաշխարանքի (զղջման, թողության) երգերը, 8-րդ դարի բանաստեղծ և աստվածաբան Ստեփանոս Սյունեցու շարականներն ու քարոզները:

Գրիգոր Նարեկացին գեղարվեստական ավանդույթի և նորարարության մի յուրօրինակ արտահայտություն է. որքան ավանդապահ, նույնքան էլ ավանդախախտ, այսինքն՝ նորարար, որքան միտված դեպի անցյալը՝ Սուրբ Գիրք, 5-րդ դարի մատենագրություն, նույնքան էլ դեպի իր ժամանակի մարդը, իսկ առավել չափով՝ դեպի ապագան:

Նարեկացուն մեկնաբանելն ու հասկանալը որքան կարևոր, նույնքան էլ նախնական պահանջ է. մերձենալու համար նրան պետք է հոգով զգալ և բանականությամբ հասու լինել մտքի թռիչքներին: Առանց **«Աստվածաշունչ»** անհնար է նրան վերծանել:

Նարեկացու ստեղծագործությունները թարգմանվել են աշխարհի տարբեր ժողովուրդների լեզուներով և արժանացել բարձր գնահատականի: Նա համարվել է ամենաժամանակակիցը ժամանակակիցների մեջ:

### **ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՄԱՍԻՆ**

Սրա [Խ. Աբովյանի արձանի] նման մի կոթող էլ կա, որ թերևս մի օր հայությունը բարձրացնի Վանա ծովի ափերին, Նարեկա ժայռերի վրա, որ նա էլ երկնքին պատմի, «ի խորոց սրտի» Աստծու հետ խոսի ու դեպի վեր ուղղի «Ձայն հառաչանաց հեծության սրտի ողբոց աղաղակի»... Եվ կատարյալ կլինի: Թող լսեն և երկինքը, և երկիրը: Եվ պետք է լսեն, որովհետև այստեղ արդեն հայի լեզուն չէ, որ խոսում է, բերանը չէ, որ պատմում է, կրակված սիրտն է, որ այրվում է երկիրը բռնած, տանջված հոգին է, որ մռնչում է մինչև երկինք:

Այո՛, հիրավի, հայ հանճարը կարողացել է խոսել մարդկային սրտի ամենանվիրական և ամենաքնքուշ զգացմունքների հետ և կարողացել է հասնել մինչև Նարեկացին, որ ապաշխարողի կերպարանքով իր գլուխը բարձրացրել է մինչև երկինք ու զրույց է արել Աստծո հետ երես առ երես:

*Հովհաննես Թումանյան*

Գրական հսկա, պանծալի Նարեկացի, սրբության իղձին կրակով վառված անշեջ մորենի, մեծ աղոթասաց բանաստեղծ:

Նարեկը ալեկոծություն մըն է. հոգեկան վրդով մրրիկ մը և ալեկոծություն մը, ուր բառերն ու կշռույթները ալիքներու բախումին չափազանցությունը՝ անոնց ինքնակործան շարժումները՝ անոնց իրարահալած խաղացքն ու անկումներն ունին:

Նախնի մատենագիրներ մեզնե՛ շատ ավելի լավ կ'ըմբռնեին լսելության և առոգանության գեղեցիկը, գիտեին վեհաշուրթ արտասանել բառերը ու լսել անոնց վեհանդորր ծայնը: Նախնի մատենագիրը գիտեր ծովաձայն հնչեցնել բառերը: Գիտեր ծիծաղախիտ ժպտեցնել բառերը:

*Միսաք Մեծաբենց*

Իմ կարոտած սրտի համար ո՛չ մի ուրիշ հեքիաթ չկա,  
Նարեկացու, Քուչակի պես լուսապսակ ճակատ չկա,  
Աշխարհի անցիր, Արարատի նման ճերմակ գագաթ չկա...  
Ինչպես անհաս փառքի ճամփա՝ ես իմ Մասիս սա՛րն եմ սիրում:

*Եղիշե Չարենց*

Գրիգոր Նարեկացին համաշխարհային մշակույթի տաճարի գանձարանի բանաստեղծ է:

*Միխայիլ Դուդին, ռուս բանաստեղծ*

Վշտակոծ հոգու իսկական տարեգիր, ով հանճարի իր մատները դնում է մարդու և մարդկության վերքին:

*Լև Օզերով, ռուս բանաստեղծ*

Զգացի դրամատիկական տազնապ, որ հասանելի է միայն նրան, ով ցանկանում է ընդգրկել ու ըմբռնել կյանքի, ճակատագրի, տիեզերքի բոլոր գաղտնիքները: Այն բանաստեղծը, ով հաղորդակցվում է աստղերի հետ, հողի վրա այնքան ընթերցող ունի, որքան լուսատուներ կան երկնքում: Այդպիսին է հիմա մեծ Գրիգոր Նարեկացու ճակատագիրը, ում գիրքը դրված է իմ սեղանին՝ համաշխարհային քնարերգության մեծագույն գոհարների կողքին:

*Էդուարդաս Մեծելայտիս, լիտվացի բանաստեղծ*

Սերունդների հոգեկան դրոշմը վրան «Մատյան ողբերգության» գիրքն ազդում է հոգու և մտքի վրա կամ պարզապես ամրապնդում է հիվանդի հավատքն ու կամքը: Ես չգիտեմ գրական մեկ այլ ստեղծագործություն, որ այնպիսի հոգեկան աղետարշ գալարքների ծնունդ լինի, ինչպիսին Նարեկացու «Մատյան...»-ն է:

*Լյուկ Անդրե Մարսել, ֆրանսիացի հայագետ*

Նարեկացու համար գրելը աստվածապաշտությանը համազոր սրբազան գործողություն է եղել, հավատի ու համոզմունքի գրավոր դրսևորում:

*Պողոս Խաչատրյան*

### ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչ կարող եք ասել Գրիգոր Նարեկացու մասին, ինչպե՞ս կբնորոշեք նրան:
2. Երբ է ծնվել և որտե՞ղ է ապրել Գրիգոր Նարեկացին:
3. Ովքե՞ր էին Գրիգոր Նարեկացու ծնողները, եղբայրները:
4. Ո՞վ է Անանիա Նարեկացին և ինչո՞վ է հայտնի:
5. Ինչ ստեղծագործություններ է գրել Գրիգոր Նարեկացին:
6. Ինչո՞ւ նա դասվեց հայոց եկեղեցու սուրբերի շարքը: Ինչ ավանդություններ են պահպանվել նրա սուրբ վարքի մասին:

7. Որո՞նք են Նարեկացու ստեղծագործության ակունքները:
8. Ի՞նչ վերաբերմունք ունեն Նարեկացին թոնդրակյան շարժման նկատմամբ:
9. Մտաբերե՞ք և պատմե՞ք Հովհաննես Թլկուրանցու «Գեղ մի կայր՝ Նարեկ կասեն...» տաղը:
10. Ե՞րբ և որտե՞ղ է մահացել ու թաղվել Գրիգոր Նարեկացին:
11. Հայ գրողներն ի՞նչ կարծիքներ են հայտնել Նարեկացու մասին:
12. Օտարազգի գրողներն ինչպե՞ս են գնահատել Նարեկացուն:

Նարեկացու գեղարվեստական մտածողությունն արտակարգ հարուստ է աշխարհի ընկալման ու վերարտադրման մի յուրահատկությամբ, ինչը կոչվում է **հակադրություն**: Նա միշտ հակադրում է երկու եզրեր՝ ավելի ցայտուն ու արտահայտիչ դարձնելու իր ասելիքը: Հակադրությունը Նարեկացու ամենից շատ նախընտրած խոսքի պատկերավորման ձևերից մեկն է: Այդ հակադրությունը կատարյալ աստվածային ուժի և անկատար մարդկային գոյության միջև է, ունի այսպիսի ձևակերպում.

*Քեզ՝ փառք անճառ գովեստներով,  
Եվ ինձ՝ մոխիր լիզելու անարգական պատիժ...*

Ահա հակադրությամբ գրված հատվածներ «Մատյան ողբերգության» պոեմից.

*Մի եղեց ինձ երկնել եւ ոչ ծնանել,  
Ողբալ եւ ոչ արտասուել,  
Խորիել եւ ոչ հառաչել,  
Ամպել եւ ոչ անձրեւել,  
Ընթանալ եւ ոչ հասանել,  
Ինձ ձայնել եւ քեզ ոչ լսել...*

Քանի որ այս հատվածները գրաբար հասկանալի են, թողնում ենք բնագրով: Ահա նաև մեկ այլ հատված՝ աշխարհաբար փոխադրությամբ.

*Հանգստի ժամին նա միշտ լինում է տանջահար, հոգնած,  
Խրախճանքի մեջ՝ տխուր ու տրտում,  
Դեմքով միշտ ժպտուն, բայց մտքով խոցված,  
Տեսքը՝ ծիծաղկոտ, աչքը՝ ողբի մեջ,  
Արտաքուստ թեև ձևանում է շատ հանգիստ, սիռիված,  
Բայց արտասուքը լուռ վկայում է կսկիծը սրտի...*

Այս հակադրությունն առկա է նաև Նարեկացու տաղերի և «Մատյան...»-ի միջև, ինչն էլ դրանք ճիշտ հասկանալու հնարավորություն է տալիս: Ըստ այդմ **Նարեկացու տաղերը ուրախության երգեր են, տոնական երգեր, ցնծության երգեր, իսկ «Մատյան...»-ը ողբերգ է, ողբասացություն է**: Տաղերում փառաբանում է Աստծուն, «Մատյան...»-ում Աստծուն փառաբանելու հետ մեկտեղ ողբում է մարդու անկատարությունը:

Նարեկացու տաղերի ընդհանուր թիվը հասնում է 41-ի:

Նարեկացու տաղերը համատեղում են աշխարհի ընկալման ամբողջական



պատկերը, այսինքն՝ հոգևորը և բնականը: Բնականն այլ կերպ կարող է արտահայտվել «աշխարհիկ» բառով: Դրանք ունեն բովանդակային միասնական առանցք, սկսվում են Հիսուս Քրիստոսի ծնունդով ու հայտնությամբ և շարունակվում հարությանբ ու համբարձմամբ: Հոգևորի և բնականի միասնությամբ ներկայանում է Մարդը, ով թե՛ Փրկիչն է, թե՛ ժամանակն իրենով մարմնավորող անհատը: Այդ կերպարը ձևավորվում է բնության ու զարթոնքի մեջ՝ որպես կյանքի սկիզբ, ավետիս և ուրախություն:

**Ողբ և ցնծերգ.** ահա միջնադարը և, առաջին հերթին, Գրիգոր Նարեկացուն բնորոշող բովանդակային երկու հենասայունները, որպես ազգային կյանքի, քրիստոնեական հավատի և աշխարհիկ կենսասիրության արտահայտություն:

Նարեկացու գրեթե բոլոր տաղերը ցնծության այս ծավալվող երգի առանձին նվագներն են: Բոլորը միասին դառնում են համանվագ և հնչում որպես բնության և հոգու ձայները ներդաշնակող երգեհոնային խոր երաժշտություն: Գունային արտահայտությամբ դա ասես ուրախ գույներով ծնունդ ավետող մանրանկարների մի շարք լինի՝ շրջանակված բնանկարի կենդանի զարդանախշերով: Այդպիսին են նաև «Վարդավառին», «Հարության» տաղերը:

Նարեկացու տաղերը նվիրված են եկեղեցական 18 տոների՝ Զրորինյաց, Աստվածածնի, Ծննդյան, Տյառնընդառաջի, Հարության, Համբարձման, Հոգեգալստյան, Վարդավառի, Խաչի և այլն: Մի բան ակնհայտ է. Նարեկացին իր խոսքը ոչ թե ծանրացնում է աստվածաշնչյան վկայություններով, այլ Քրիստոսի կյանքի դրվագները ներկայացնում է բարձր տրամադրություն արտահայտող ցնծերգերով և դրանք մշտապես շարժման մեջ դնում բնության տեսարանների նկարչագեղ պատկերներով: Դա այդպես է, որովհետև տաղերի մեջ Նարեկացին տոնական վիճակներ է պատկերում:

Նարեկացին ունի այսպիսի մի արտահայտություն՝ «զվարթարար գովք», ինչը շատ դիպուկ բնորոշում է տաղերի էությունը: Այդ տոնական վիճակներին հարմարեցված են ոչ միայն Նարեկացու պատկերային մտածողությունը, այլև խոսքի արտահայտչաձևերը՝ գույների ժպտուն խաղը, հնչյունների քաղցրանվագ ձայնը, ծիծաղաձայն երգը: Դրա լավագույն արտահայտությունը «Մեղեդի ծննդի» («Մեղեդի ծննդյան») տաղն է. Նարեկացին փառաբանությամբ ներկայացնում է Տիրամոր գեղեցկատեսիլ կերպարը:

## ՄԵՂԵԴԻ ԾՆՆԴԻ

Աչքն ծով ի ծով ծիծաղախիտ  
ծաւալանայր յառաւօտուն,  
երկու փայլակնաճեւ արեգական նման.  
շողն ի ժմին իջեալ յառաւօտէ լոյս:  
Յայտեն նռնենի սարդիատունկ  
գեղաշիտակ ծայրից ծաղկանց,  
որոյ սիւնն ի սրտին նուսխայօրէն  
կարկաջայր սաթքերունի սէր:  
Ձեռացն եղիշոյ կամարակապ կապէր,  
ասիճաղ պատիճաղ, ստղի խտղի երգով:  
Հիւսէր գելելելսն ընդ միմեանս,  
հանդարտիկ խաղայր, թիկնէթեկին ճեմէր:  
Բերանն երկթերթի, վարդն ի շրթանց կաթէր,  
լեզուին շարժողին քաղցրերգանայր տաւիղն:  
Ի ծամին խեղեփին հազրէ զի նոյն սէր  
հոգիագգեստեալ գեղն ի գինւոյն գոյն:  
Վարսիցն երամից զարդ, երամից զարդ,  
ոլորս են առեալ եռահիւսակն բոլորեալ այտիւք:  
Ծոցն լուսափայլ, կարմիր վարդով լցեալ,  
ծղիքն ծիրանի մանուշակի հոյլք:  
Խնկեալ ի կնդրկէ բուրվառ հրով աստուածայնով լցեալ.  
ձայն քաղցրանուագ, որ ի նմանէ հնչէր:  
Գեղեցիկ պատմուճանան զարդարեալ էր,  
ի կապուտոյ, ի ծիրանոյ, ի բեհեզոյ, ի յորդանէ,  
ոսկեշողէր գոյնն:  
Գօտին արծաթափայլ ոսկէտտուն,  
կամարակապ յականց, յականց շափիւղայ,  
մանրամասն յօրինուածով պճնեալ:  
Անձինն ի շարժել մարգարտափայլ գեղով  
ոտիցն ի գնալ շողն ի կաթել առնոյր:  
Այն թագաւորին, այն նորածին Փրկչին,  
զքեզ պսակողին փառք յաւիտեանս. ամէն:

## ՄԵՂԵԴԻ ԾՆՆԴՅԱՆ

Աչքերը ծով ծավալվել են  
ծիծաղախիտ ծովի վրա առավոտյան՝  
երկու փայլակնաճև արեգակի նման,  
ինչպես շողն է իջնում լոյս առավոտից:  
Նռնենի այտերը նման են ծաղիկներին  
գեղաշիտակ սարդի տունկի,

որի ցողունով դեպի սիրտը ծաղկի  
կարկաչում է սերը ծաղկուն:  
Ողորկ թևերը կապում էր կամարակապ,  
ներդաշնակ, գեղգեղուն, հեշտալի երգով:  
Միմյանց էր հյուսում ելևէջները,  
հանդարտիկ շարժվում էր, թիկնեթեկին ճեմում:  
Բերանն երկթերթի, վարդն էր շրթներից կաթում,  
լեզուն նման էր քաղցրանվագ տավիղի:  
Հազրեով զարդարուն ծամի հյուսքերի  
գեղը կենսատու ունի գինու գույն:  
Գեղեցիկ վարսերը, գեղեցիկ վարսերը  
եռահյուս բոլորել են այտերը:  
Ծոցն լուսափայլ, կարմիր վարդով լցված,  
դաստակներն՝ ծիրանի մանուշակի փնջեր:  
Խնկում էր կնդրուկից բուրվառն հրով աստվածային լցված,  
քաղցրանվագ ձայն էր նրանից հնչում:  
Գեղեցիկ, կապույտ, ծիրանի, բեհեզյա  
և որդան կարմիր ոսկեշող գույներով  
փայլուն պատմուճանով զարդարված էր:  
Գոտին արծաթափայլ, ոսկետտուն,  
շափյուղա ակներով, ակներով կամար  
մանրամասն հորինվածով պճնված էր:  
Երբ նա շարժվում էր մարգարտափայլ գեղով,  
ոտքերից քայլելիս շող էր կաթկթում:  
Այն թագավորին, այն նորածին Փրկչին,  
քեզ զարդարողին փառք հավիտյանս. ամեն:



## ԲԱՌԱՐԱՆ

**Ժիծաղախիտ** – ժիծաղով լի, ժիծաղախիտ ծով՝ լուսափայլ, լուսապայծառ, արևով ու լույսով ողողված ծով

**փայլակնաձև** – կայծակի լույսի նմանվող

**գեղաշիտակ** – գեղեցիկ ու շիտակ, ուղղաբերձ

**սարդիատունկ, սարդի տունկ** – սարդենի, դափնի, նան՝ դափնեվարդ

**նուսխայորեն** – դեղի նման

**թիկնեթեկին** – վայելչորեն թիկունքը շարժելով

**հազրե** – հազրեվարդ՝ ծաղիկի տեսակ, տերևներից և ծաղիկից բուրավետ յուղ է ստացվում, ասում են նաև խնկունի

**բուրվառ** – մետաղյա անոթ, ինչի մեջ կրակ են լցնում, և խունկը մեջը գցելով, թափահարում՝ խնկարկում

**բեհեզյա** – բեհեզից՝ վուշի բարակ թելերից գործված նուրբ կտոր

**որդան կարմիր** – կարմիր ներկ, ստացվում է որոշ բույսերի վրա ապրող մանր միջատներից

**ոսկետտուն** – ոսկեգույն տտուն՝ տուտ, պոչ ունեցող, ոսկեգույն պոչով, ծայրով

**շափյուղա** – կանաչ կամ կապույտ թանկագին քար

Այս տաղն ամբողջությամբ ցնծության երգի վերածված գեղազարդ ու գունազարդ գեղարվեստական պատկեր է: Տոնական կենսուրախ տրամադրությունն ակնհայտ է ամեն ինչի մեջ՝ բառակազմի, հնչյունների, պատկերների, համեմատությունների ու մակդիրների, գույների ու լուսավոր բարձր ապրումների:

Ահա այս ցնծության մեջ է գոյանում «ծ» հնչյունների «ծիծաղաձայն» բաղաձայնությամբ: Այլ հոգեվիճակի դեպքում դրանք կամ չէին լինի, կամ այլ կլինեին:

Բացվող, ծավալվող պատկերներով և նկարագրություններով Նարեկացին ներկայացնում է Աստվածամոր ծով աչքերը, որոնք փայլակնաձև երկու արեգակի նման ծավալվել են ծիծաղախիտ ծովի վրա այնպես, ինչպես լույս առավոտի շողն է իջնում, նռնենի այտերը նման են ծաղիկների, ողորկ թևերը ներդաշնակ երգ են, որ հանդարտիկ շարժվելիս միմյանց են հյուսում ելևէջները, երկթերթի բերանից վարդ է կաթում, իսկ լեզուն, որով խոսում է, կարծես «քաղցրանվագ տավիղ» լինի, գինեգույն ծամի հյուսքերը զարդարված են ծաղիկներով և եռահյուս բոլորել են այտերը, լուսափայլ ծոցը լցված է կարմիր վարդով, իսկ դաստակներին մանուշակների փնջեր են, հնչում է նրա քաղցրանվագ ձայնը, ոսկեշող գույներով փայլում է պատմունճանը, որով զարդարված է, արծաթափայլ գոտին ոսկե ծայր ունի և պատված է թանկարժեք քարերով: Նրա գեղեցկությունը մարգարտափայլ է, քայլելիս նրանից շող է կաթկթում, իսկ նրան անզուգական դարձնող ամենամեծ զարդը նորածին մանուկն է՝ Փրկիչը: Վերջում բանաստեղծը փառք է տալիս Փրկիչին, ով աշխարհ է գալիս որպես երկնային հավիտենական թագավոր:

Համաշխարհային ամբողջ արվեստը և հատկապես պոեզիան, գեղանկարչությունը և քանդակագործությունը լի են Տիրամոր և նորածին Քրիստոսի պատկերներով: Նարեկացու այս մեղեդին այդ շարքում լավագույններից է՝ առանձնահատուկ ու եզակի մի գլուխգործոց:

**ԱՐՎԵՍՏԸ:** Նարեկացու արվեստը շատ հարուստ է:

«Մեղեդի ծննդի» տաղում նրա ստեղծած այս շքեղ ու ճոխ բառանկարը կարելի է համեմատել Քրիստոսի ծնունդն ավետող Թորոս Ռուսիկի մանրանկարի հետ:

Ի տարբերություն և ի հակադրություն 5-րդ դարից մեզ ավանդված ազգային ողբի և ողբերգական տրամադրությունների՝ այս տաղում Նարեկացին բերում է մարդկության Փրկիչի ծննդյան ցնծերգը: Ողբը Աստծուն մերձենալ ցանկանալու և չհասնելու աղերսագին աղաղակներով նա պետք է շատրվաներ «Մատյան ողբերգության» պոեմում:

«Մեղեդի ծննդի» տաղում Նարեկացին կիրառել է «ծ» հնչյունի բաղաձայնությամբ:

*Աչքն ծով ի ծով ծիծաղախիտ  
ծաւալանայր յառաւօտուն...  
... Ծոցն լուսափայլ, կարմիր վարդով լցեալ,  
ծղիքն ծիրանի մանուշակի հոյլք:*

**Բաղաձայնությամբ** (ալիտերացիա) այն է, երբ բաղաձայն հնչյունների ներդաշնակ կուտակումով բանաստեղծն ստեղծում է որոշակի տրամադրություն: Իսկ

**առձայնույթը** (ասոնանս) ստեղծվում է ձայնավոր հնչյունների կուտակումով: Այս երկուսը միասին կոչվում են **բանաստեղծական հնչյունաբանություն:**

Ահա նաև «վ» և «ջ» հնչյունների վառվռուն, շողշողուն բաղաձայնույթը «Վարդավառին» տաղում.

Գոհար վարդն վառ առեալ  
ի վեհից վարսիցն արփենից:  
Ի վեր, ի վերայ վարսից  
ծաւալէր ծաղիկ ծովային:

...Շուշան շողէր հովտին,  
շողշողէր դէմ արեգականն...  
...Շուշան շաղով լցեալ  
շող-շաղով եւ շար մարգարտով:

Նարեկացին նաև **շղթայակապի** մեծ վարպետ է: Շղթայակապն այն է, երբ հաջորդ տողը կամ տունը սկսվում է նույն բառով, որով ավարտվում է նախորդ տողը կամ տունը («Տիրոջ քառասունօրյա գալուստը», «Տաղ սուրբ խաչի», «Ղազարի հարության առթիվ») և այլն:

Նարեկացու պոեզիան հարուստ է պատկերային միասնան ձևերի **թվարկում-ներով, կրկնաբերման** տարբեր տեսակներով, պատկերավորման տարբեր միջոցների՝ առավելապես **մակդիրի** և **համեմատության** առատ օգտագործմամբ:

Նարեկացուց սկսած՝ հայ պոեզիայի հիմնական զարդանախշերը դառնում են ծառն ու ծաղիկը, թանկագին քարերը: Իսկ Նարեկացու համար այս ամենի սկիզբն աստվածաշնչյան «Երգ երգոց» պոեմն էր, ինչի մեկնությունն էր գրել և յուրացրել պատկերակերտման արվեստը: «Երգ երգոց»-ը լի է ծառերի, ծաղիկների, բույսերի, պտուղների, թանկագին քարերի, կենդանիների, թռչունների, բնության այլևայլ երևույթների անուններով, տարատեսակ գույների ցուլանքով: Նարեկացու ստեղծագործության մեջ այս ամենն ստացել է ն տեղային երանգավորում, ն պահպանել սկզբնաղբյուրի հավաստիությունը:

Անհնար է Նարեկացու արվեստը պատկերացնել առանց **բառաստեղծումների:** Ոչ միայն բարդ, այլև պատկերավոր բառերի ստեղծումն ասես նրա տարերքը լինի: Այդ բառերն արտահայտում են կամ գործողություն, կամ որպիսություն, այսինքն՝ կամ բայ են, կամ ածական: «Մեղեդի ծննդի» տաղում այդ բառերն են՝ **ծիծաղախիտ, փայլակնաձև, սարդիատունկ, գեղաշիտակ, թիկնեթեկին, երկթերթի, քաղցրերգանայր, հոգիազգեստյալ, եռահյուսակ, քաղցրանվագ:** Այս բառերից շատերը բնագրում կիրառված են որպես մակդիրներ, ինչպես՝ **ծով ծիծաղախիտ, փայլակնաձև արեգակ, սարդիատունկ գեղաշիտակ** (գեղաշիտակ սարդի տունկ) և այլն:

Նարեկացու ավանդույթները հետագայում յուրացրել ու շարունակել են Ներսես Շնորհալին, միջնադարի գրեթե բոլոր բանաստեղծները, նոր ժամանակներում՝ Միսաք Մեծարենցը, Ատոմ Յարճանյանը (Սիամանթո), Հովհաննես Թումանյանը, Վահան Տերյանը, Եղիշե Չարենցը, Հովհաննես Շիրազը, Պարույր Սևակը և շատ ու շատ ուրիշներ:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչո՞ւ է այս տաղը վերնագրված «Մեղեդի ծննդի» («Մեղեդի ծննդյան»), ո՞ւմ ծնունդն է ավետում բանաստեղծը:
2. Ինչպիսի՞ տրամադրությամբ է գրված «Մեղեդի ծննդի» տաղը և ինչո՞ւ:
3. Ինչպե՞ս կրնորոշեք ցնծերգը և ողբերգը Նարեկացու ստեղծագործության մեջ:
4. Եկեղեցու ո՞ր հիմնական տոներին են նվիրված Նարեկացու տաղերը:
5. Ցույց տվե՛ք հակադրության օրինակներ Նարեկացու այս տաղում և մյուս ստեղծագործությունների մեջ:
6. Ի՞նչ են բաղաձայնայթը և առձայնայթը: Բերե՛ք համապատասխան օրինակներ Նարեկացու այս և մյուս տաղերից:
7. Պատկերավորման ի՞նչ միջոցներ է կիրառել Նարեկացին իր ստեղծագործություններում: Ի՞նչ է շղթայակապը, ի՞նչ են թվարկումներն ու կրկնաբերումները:
8. Բնության ի՞նչ պատկերներով է Նարեկացին զարդարել իր խոսքը:
9. Ի՞նչ նոր բառեր է ստեղծել և օգտագործել Նարեկացին «Մեղեդի ծննդի» տաղում: Դ՞ուրս գրե՛ք դրանք:
10. Դ՞ուրս գրե՛ք «Մեղեդի ծննդի» տաղի բոլոր մակդիրները և բացատրե՛ք դրանց իմաստները:
11. Ովքե՞ր են շարունակել Նարեկացու գրական ավանդույթները:

# ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ

1101/1102–1173



*Ներսես Շնորհալին Գրիգոր Նարեկացուց հետո հայ միջնադարյան պոեզիայի հաջորդ նշանավոր դեմքն է: Շնորհալու ստեղծագործության մեջ միավորվում են գեղարվեստական մտածողության երկու հիմնական կողմերը՝ հոգևոր-քրիստոնեական և ժողովրդական-աշխարհիկ: Ներսես Շնորհալին իր ժամանակի ամենազարգացած մարդկանցից էր՝ հոգևոր ու ազգային գործիչ, բանաստեղծ ու երաժիշտ: Նա հարգված ու գնահատված էր ոչ միայն հայ թագավորների ու իշխանների կողմից, այլև բյուզանդական արքունիքում:*

Ներսես Շնորհալին ապրել և գործել է Կիլիկիայում, ուր 1080–1375 թվականներին ստեղծվեց հայոց պետություն: Ահա այստեղ էլ ձևավորվեց Կիլիկիայի մշակույթը, ինչը հարազատորեն բխում էր մայր երկրի ավանդույթներից:

Ներսես Պահլավունին՝ ապագա Շնորհալին, հայտնի է նաև Ներսես Դ Կլայեցի, Ներսես Երգեցող անուններով: Նա սերում էր Պահլավունիների նախարարական տոհմից: Նրա պապը նշանավոր բանաստեղծ, գիտնական և գործիչ Գրիգոր Մագիստրոս Պահլավունին էր:

Ներսես Շնորհալին ծնվել է 1101 (ըստ որոշ վկայությունների՝ 1102) թվականին Կիլիկիայի Ծոփք նահանգի Տլուք գավառի Մարաշի շրջանի Ծովք դղյակում՝ Սև լեռան վրա: Սև լեռը կոչվում էր նաև Ամանոս:

Ներսես Շնորհալին կրթությունն ստացել է ժամանակի հռչակված եպիսկոպոս, Քեսունի Կարմիր վանքի վանահայր Ստեփանոս Մանուկի մոտ: Այստեղ էլ ստացել է Շնորհալի պատվանունը, որ տրվում էր վանքի օժտված սաներին:

1113 թվականին նրա եղբայր Գրիգորը ձեռնադրվում է հայոց վեհափառ հայրապետ: 1166-ին եղբոր կողմից վեհափառ է ձեռնադրվում արդեն Ներսես Շնորհալին և գահակալում մինչև իր մահը՝ 1173 թվականի օգոստոսի 13-ը: Որպես հոգևոր գործիչ Շնորհալին վարել է կենտրոնաձիգ պետական քաղաքականություն, նպաստել Կիլիկիայի Ռուբինյան հարստության ամրապնդմանը:

Այս տեսակետից շատ կարևոր է նրա «**Թուղթ ընդհանրական**» գրությունը, ինչով հանդես եկավ անմիջապես վեհափառ հայրապետ դառնալուց հետո: Այդ գրությունը նամակ է՝ ուղղված բոլորին, բոլոր խավերի բնակչությանը: Շնորհալին շատ լավ գիտակցում էր, որ երկիր կառուցել, պետականություն հաստատել նշանակում է կառուցել հանրային կյանքը, որպեսզի ամեն ոք հստակ գիտակցի իր տեղն ու պարտականությունը: Իր այս աշխատությամբ Շնորհալին հանդես է գալիս որպես հանրային կյանքի ճարտարապետ, որպես ժողովրդի բարոյական դաստիարակ: Նա տարբերակում է հետևյալ դասերը՝ *հոգևորականներ, իշխաններ, զինվորներ, քաղաքացիներ, գյուղացիներ, կանայք* և բոլորին ճիշտ ապրելու, ճիշտ գործելու դասեր է տալիս:

Շնորհալին իր ժամանակի ամենազարգացած մարդկանցից էր՝ ոչ միայն հոգևոր գործիչ, այլև բանաստեղծ ու երաժիշտ:

Նրանից պահպանվել է հարուստ գրական ժառանգություն՝ պոեմներ, տաղեր, շարականներ, թղթեր, հանելուկներ, մեկնողական երկեր: Հատկապես մեծ է նրա դերը պոեմի զարգացման գործում: Առավել հայտնի է նրա «Ողբ Եղեսիոյ» հայրենասիրական պոեմը: Նրա շարականների ու տաղերի թիվն անցնում է 100-ը: Դրանք հոգևոր երգեր են՝ նվիրված Քրիստոսին, քրիստոնեական տոներին, ծեսերին, սուրբերին:

Շնորհալին գրել է պարզ ու մատչելի, որպեսզի հասկանալի լինի բոլորին: Այս տեսակետից կարևոր են նաև նրա հանելուկները, որոնց թիվը հասնում է 300-ի: Հանելուկները նա հավաքել է ժողովրդից և մշակել է մարդկանց ուրախություն պարզակերու համար: Շնորհալու հանելուկներն ընդգրկում են մարդու կյանքն ու միջավայրը ներկայացնող գրեթե բոլոր ոլորտները՝ «Աստվածաշունչ»-ից մինչև առօրյա կյանք: Դրանք այլաբանորեն ասված սրամիտ իմաստախոսություններ են՝ իրենց որոշակի լուծումներով:

Նրա լավագույն շարականներից մեկն սկսվում է «Առաւօտ լուսոյ» տողով:

Շարականը, ինչպես արդեն հայտնի է, հոգևոր բանաստեղծության տեսակ է, որը նաև երգվում է եկեղեցական արարողությունների ժամանակ: Շարականներն ունենում են ներբողային, ձոներգային բովանդակություն և էությանը աղոթք են:

«Առաւօտ լուսոյ» շարականը ներկայացվում է գրաբար և աշխարհաբար:

## ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Այս Ներսեսը իմաստությամբ ավելի էր լցված, քան այն ժամանակ շատերը ոչ միայն հայ վարդապետների մեջ, այլև հույների և ասորիների: Այնքան իմաստուն էր, որ նրա իմաստության համբավը տարածվեց բոլոր ազգերի մեջ...

Նա քաղցր եղանակով գրեց սուրբ պատարագի քարոզը, նույն խոհականությամբ՝ շարականների տները և երկու գանձ...

Լեզվի հարցում նրա կամքն այսպես էր. «Եթե հնարավոր լինի, ոչ ոք ո՛չ գինարբուքների և ո՛չ էլ այլ ուրախությունների ժամանակ չպետք է աշխարհաբար լեզվով խոսի, այլ միայն գրաբար...

Եվ քանի որ Ներսեսն ամեն բանի մեջ հանճարեղ էր, գրքերից գրեց նաև խորիմաստ առակներ և հանելուկներ, որպեսզի սուտ զրույցների փոխարեն ասեն գինարբուքներում և հարսանիքներում:

*Կիրակոս Գանձակեցի, 13-րդ դարի պատմիչ*

Նարեկացի, Շնորհալի, Նաղաշ Հովնաթան,  
Ինչքան հանճար, խելք ես տեսել - էլի՛ կտեսնես.

*Եղիշե Չարենց*

Քեսունի Կարմիր վանքում Ներսեսն առել է եկեղեցական ուսումը, որ հետո էլ նա կատարելագործել և ընդարձակել է անդուլ ջանքով: Նրա ուսած առարկաները եղել են՝ Սուրբ Գիրք, սուրբ հայրերի գրվածքներ, եկեղեցու և սուրբերի պատմություններ, դավանաբանություն, հայկական մատենագրու-

թյուն ու թարգմանություններ թե՛ եկեղեցական, թե՛ արտաքին գիտությունների, հմտացել է եկեղեցական կանոններին ու կարգերին, սովորել է եկեղեցական երաժշտություն և տոմարագիտություն, վայելուչ շարադրություն գրաբար լեզվով, այլև վայելչագրություն «ի զանազան կերպս»:

Նա նույնիսկ ծերության օրերին, ազատ ժամանակին արտագրել է գրքեր, որոնցից մի քանիսը հասել են մեզ:

*Մանուկ Աբեղյան*

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Որտեղ և երբ է ծնվել Ներսես Շնորհալին:
2. Ո՞ր տոհմից է սերում Շնորհալին, և որտեղ է ստացել Շնորհալի պատվանունը:
3. Հոգևոր ինչ բարձր աստիճանի է հասել Ներսես Շնորհալին:
4. Ինչ բովանդակություն ունի Շնորհալու «Թուղթ ընդհանրական» գրությունը:
5. Գրական ինչ տեսակներով է ստեղծագործել Շնորհալին:
6. Այլաբանական իմաստ արտահայտող ինչ գործեր է հավաքել և մշակել Շնորհալին:
7. Ովքեր ինչ կարծիք են հայտնել Շնորհալու մասին:

## ԱՌԱԽՕՏ ԼՈՒՍՈՅ



Առաւօտ լուսոյ՝  
Արեգակն արդար  
Առ իս լոյս ծագեա՛մ:



Բղխումն ի Հօրէ,  
Բղխեա՛ ի հոգւոյս  
Բան քեզ ի հաճոյս:



Գանձդ ողորմութեան,  
Գանձիդ ծածկելոյ  
Գտող՝ զիս արա:



Դ՛նուն ողորմութեան  
Դաւանողիս բաց,  
Դասեցո՛ վերնոցն:



Երբեակ միութիւն,  
Եղելոց խնամող,  
Եւ ինձ ողորմեա:



Ջարթիր, Տէր՝ յօգնել,  
 Ջարթո՛ գթմրեալս՝  
 Զուարթնոց նմանիլ:



Է՛դ Հայր անսկիզբն,  
 Էակի՛ց Որդի,  
 Է՛ միշտ Սուրբ Հոգի:



Ը՛նկա՛լ զիս, գթա՛ծ,  
 Ը՛նկա՛լ, ողորմա՛ծ,  
 Ը՛նկա՛լ, մարդասէր:



Թազաւոր փառաց,  
 Թողութեանց տուող,  
 Թո՛ղ ինձ գյանցանս:



Ժողովո՛ղ բարեաց,  
 Ժողովե՛ա՛ եւ զիս  
 Ժողովս անդրանկաց:



Ի քէ՛ն, Տէր, հայցեմ,  
 Ի մարդասիրէդ՝  
 Ինձ բժշկութիւն:



Լէր կեանք մեռելոյս,  
 Լո՛յս՝ խաւարելոյս,  
 Լուծանո՛ղ ցաւոյս:



Խորհրդո՛ց գիտող,  
 Խաւարիս շնորհեա  
 Խորհո՛րդ լուսաւոր:



Ծնունդ Հօր ծոցոյ,  
 Ծածկելոյս ստուերաւ  
 Ծագեա՛ զլոյս փառաց:



Կենարա՛ր փրկիչ,  
 Կեցո՛ գմեռեալս,  
 Կանգնեա՛ զգլորեալս:



Հաստեա՛ հաւատով,  
Հաստատեա՛ յուսով,  
Հիմնեցո՛ւ սիրով:



Ձայնիւ աղաչեմ,  
Ձեռքս պաղատիմ,  
Ձիր բարեաց շնորհեմ:



Ղամբարամբ լուսոյ,  
Ղեկավար ճարտար,  
Ղօղեալս ամրացո՛:



Ճառագայթ փառաց,  
Ճանապարհ ինձ ցոյց՝  
Ճեպել ի յերկինս:



Միածինըդ Հօր,  
Մոյծ զիս յառագաստ  
Մաքուր հարսանեացդ:



յՈրժամ գաս փառք  
յԱհագին աւուրին,  
Յիշեմ զիս, Քրիստո՛ս:



Նորոգող հնութեանց,  
Նորոգեա եւ զիս,  
Նորոգ զարդարեմ:



Շնորհատու բարեաց,  
Շնորհեմ զքաւութիւն,  
Շնորհեմ զթողութիւն:



Ուրախացո՛, Տէր,  
Ոգւոյս փրկութեամբ,  
Ոյր վասն եմ ի սուգ:



Չար մշակողին,  
Չար սերմանց նորին  
Չորացո՛ զպտուղ:



Պարգեւի՛չ բարեաց,  
Պարգեւեմ ինոց  
Պարտեացս թողութիւն:



Ջո՛ր շնորհեա աչացս՝  
Ջերմ հեղուլ արտօսը՝  
Ջնջել գյանցանըս:



Ռետի՛նըդ քաղցու,  
Ռամ հոգւոյս արբո,  
Ռահ ցոյց ինձ լուսոյ:



Սէր անուն Յիսուս,  
Սիրով քո ճմլեա՛  
Սիրտ իմ քարեղէն:



Վասն գթութեանդ,  
Վասն ողորմութեանդ,  
Վերստին կեցո՛:



Տենչալւոյդ տեսւեամբ,  
Տո՛ր ինձ յագենալ,  
Տէր Յիսուս Քրիստոս:



Րաբո՛նդ երկնաւոր,  
Րոտեա՛ զաշակերտս  
Րամից երկնայնոց:



Յօղ արեան քո, Տէր,  
Յօղեա՛ ի հոգիս,  
Յնծասցէ անձն իմ:



Իիծեալս մեղօք,  
Իիծեալ՝ աղաչեմ,  
Իիսեա՛ յիս բարիս:



Փրկի՛չ բոլորից,  
Փութա գիս փրկել  
Փորձութեանց մեղաց:



Քաւիչ յանցանաց,  
Քաւեա՛ զօրհնաբանս,  
Քեզ երգել զփառս:

## ԱՌԱՎՈՏ ԼՈՒՍՈՒ

Առավոտ լույսի՝  
Արդար արեգակ,  
Ինձ վրա լույս ծագեցրու:

Բխումն Հորից,  
Բխիր հոգուս մեջ  
Խոսք՝ քեզ հաճելի:

Գանձդ ողորմության,  
Քո ծածուկ գանձը  
Գտնող ինձ արա:

Դուռը ողորմության  
Դավանողիս առաջ բաց,  
Դասիր վերինների հետ:

Երրյակ միություն,  
Եղածներին խնամող,  
Եվ ինձ ողորմյա:

Զարթնիր, Տեր, օգնելու,  
Զարթնեցրու թմրյալներին,  
Որ հրեշտակներին նմանվեն:

Անսկիզբ է Հայրը,  
Գոյակից է Որդին,  
Է միշտ Սուրբ Հոգին

Ընկալիր ինձ, գթած,  
Ընկալիր, ողորմած,  
Ընկալիր, մարդասեր:

Թագավոր փառքերի,  
Թողությունների տվող,  
Թողություն տուր հանցանքներիս:

Ժողովող բարիքների,  
Ժողովիր և ինձ  
Ժողովում անդրանիկների:

Քեզնից եմ, Տէր, հայցում,  
Մարդասերիցդ,  
Ինձ բժշկություն:

Եղիր կյանք՝ մեռյալիս,  
Լոյս՝ խավարյալիս,  
Վերացնող՝ ցավերիս:

Խորհուրդների գիտակ,  
Խավարիս շնորհիւր  
Խորհուրդ լուսավոր:

Ծնունդ Հոր ծոցի,  
Ստվերով ծածկվածիս վրա  
Ծագեցրու լույսը փառքերիդ:

Կենարար փրկիչ,  
Ապրեցրու մեռնողիս,  
Կանգնեցրու գլորվողիս:

Ստեղծիր հավատով,  
Հաստատիր հուսով,  
Հիմնեցրու սիրով:

Ձայնովս աղաչում եմ,  
Ձեռքերովս՝ պաղատում,  
Բարիքների ձիրք շնորհիւր:

Ջահերով լույսի,  
Ճարտար ղեկավար,  
Ամրացրու տատանվողիս:

Ճառագայթ փանջի,  
Ճանապարհ ցույց տուր ինձ՝  
Ճեպելու երկինք:

Միածինդ Հոր,  
Մտցրու ինձ առագաստը  
Մաքուր քո հարսանյաց:

Երբ որ գաս փառքով  
Ահեղ դատաստանի օրը,  
Հիշիր ինձ, Քրիստոն:

Նորոգող հնությունների,  
Նորոգիր և ինձ,  
Նորից զարդարիր:

Շնորհատու բարիքների,  
Շնորհիր քավություն,  
Շնորհիր թողություն:

Ուրախացրու, Տէր,  
Հոգուս փրկությամբ,  
Ազի մեջ եմ ես:

Չար մշակողի,  
Նրա չար սերմերի  
Պտուղը չորացրու:

Պարգևիչ բարիքների,  
Պարգևիր դու իմ  
Պարտքերին թողություն:

Ջուր շնորհիր աչքերիս,  
Որ հեղեն ջերմ արցունք,  
Ջնջեն հանցանքներս:

Խեժդ քաղցրության,  
Հոգուս ծարավը հագեցրու,  
Ցույց տուր լույսի ճանապարհ:

Սեր անուն Հիսուս,  
Սիրով քո ճմլիր  
Սիրտն իմ քարեղեն:

Շնորհիվ քո գթության,  
Շնորհիվ քո ողորմության՝  
Վերստին ապրեցրու:

Քո տենչալի տեսքով  
Տուր ինձ հագենալ,  
Տեր Հիսուս Քրիստոս:

Ուսուցիչդ երկնավոր,  
Աշակերտիդ կցիր  
Երկնայինների երամին:

Ցողն արյան Քո, Տէր,  
Ցողի՛ր հոգուս վրա,  
Որ ցնծա անձն իմ:

Հյուծված եմ մեղքերից,  
Հյուծված աղաչում եմ՝  
Հյուսի՛ր իմ մեջ բարին:

Փրկի՛չ բոլորի,  
Փութա՛վ ինձ փրկել  
Փորձությունների մեղքերից:

Քավի՛չ հանցանքների,  
Քավի՛ր օրհնաբանողիս մեղքերը՝  
Քեզ փառքեր երգելու:



## ԲԱՌԱՐԱՆ

**դավանող** – որևէ կրոնի, անառարկելի ու անփոփոխ ճշմարտության, այսինքն՝ դավանանքի հետևող, հավատամք ունեցող

**Երրյակ միություն** – եռյակ միություն՝ Հայր, Որդի և Սուրբ Հոգի

**ողորմել** – խղճալ, գթալ, կարեկցել

**փութալ** – շտապել

**օրհնաբանել** – օրհնանքի խոսք ասել, խոսքով կամ երգով օրհնել, նաև՝ փառաբանել, գովերգել

**Ծայրակապ (ակրոստիքոս)**: «Առաւօտ լուսոյ» շարականի բնագրի յուրաքանչյուր տան երեք տողերն սկսվում են հայոց այբուբենի հերթական տառերով՝ Այբից Քե (աշխարհաբար փոխադրության մեջ չի պահպանվել): Բանաստեղծություն գրելու այն ձևը, երբ յուրաքանչյուր տողի առաջին տառերը վերևից ներքև կարդալով արտահայտում են որոշակի իմաստ, կոչվում է **ծայրակապ (ակրոստիքոս)**: Այդպես հեղինակները գրում են հայոց այբուբենը, իրենց կամ ուրիշների անունները: Բանաստեղծություն գրելու այդ ձևը շատ տարածված էր միջնադարում:

«Առաւօտ լուսոյ» շարականը Շնորհալին գրել է բերդապահ զինվորների համար, որ գիշերներն արտասանեն և սպասեն արշալույսին, նաև այբուբենն անգիր անեն:

«Առաւօտ լուսոյ» շարականը բաղկացած է 36 տնից, քանի որ Մեսրոպյան այբուբենն ունի այդքան տառ: Յուրաքանչյուր տուն բաղկացած է երեք տողից՝ նկատի ունենալով Հայր, Որդի և Սուրբ Հոգի եռամիասնությունը:

Շարականն ամբողջովին լույսի պաշտամունք է, աստվածային լույսի փառաբանություն՝ որպես մարդկանց օգնական հզոր մի ուժ: Այդ զգացողությամբ նա գրում է.

*Ջարթնի՛ր, Տէր, օգնելու,  
Ջարթնեցրու թմրյալներին,  
Որ հրեշտակներին նմանվեն:*

Իր բնույթով այս շարականն աղոթք է. հեղինակը մարդկության անունից թողություն է խնդրում իր մեղքերի համար և հոգու փրկություն հայցում.

*Ծնունդ Հոր ծոցի,  
Ստվերով ծածկվածիս վրա  
Ծագեցրու լույսը փառքերիդ:*

*... Ձայնով աղաչում եմ,  
Ձեռքերով՝ պաղատում,  
Բարիքների ձիրք շնորհիր:*

Մարդը ձգտում է աստվածային լույսերի մեջ նորոգվել, մաքրագործվել, դուրս գալ իրեն պաշարած սուգից, «փորձությունների մեղքերից» և մերձենալ «Երկնայինների երամին», այսինքն՝ հրեշտակներին:

### ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչի՞ մասին է «Առաւօտ լուսոյ» շարականը:
2. Ինչ է ծայրակապը: «Առաւօտ լուսոյ» շարականի (բնագրի) յուրաքանչյուր տուն տառերի ինչ հաջորդականությամբ է գրված:
3. Փորձե՞ք ձեր անվան տառերով գրել բանաստեղծություն, որ լինի ծայրակապ: Դրա համար վերից վար ուղղահայաց գրե՞ք ձեր անունը, ապա առաջին տառերով գտե՞ք հարմար բառ ու արտահայտություն, որ ամբողջությամբ՝ մյուս տողերի հետ իմաստ արտահայտի:

Շնորհալու ստեղծագործության մեջ առանձին հետաքրքրություն է ներկայացնում «**Հաւատով խոստովանիմ**» շարականը, ինչն ամբողջությամբ հոգու մաքրագործման մի ջերմեռանդ ու հոգեբուխ աղոթք է.

Մի հիշիր մեղքերս նախկին ի սեր քո սուրբ անվան,  
Ջնջիր ձեռագիրն իմ հանցանքների  
Եվ գրիր անունս կյանքի գրքի մեջ:  
Ամենքին ողորմացող Տէր,  
Ողորմյա բոլոր քեզ հավատացողներին  
Յուրայիններին և օտարներին, ծանոթներին և անծանոթներին,  
Ողջերին և մեռածներին,  
Թշնամիներին և ինձ ատողներին շնորհիր թողություն,  
Որ իմ դեմ հանցավոր եմ  
Եվ ետ դարձրու նրանց չար մտքերից, որ ունեն իմ դեմ,  
Թող քո ողորմությանն արժանի լինեն.  
Եվ ողորմյա Քո ստեղծածներին և ինձ՝ բազմամեղիս:

Աղբյուր դարձրու իմ սրտի արտասուքն ապաշխարության,  
Քո սուրբ երկյուղն աչքերիս պահապան դիր,  
Որ բերանս չխոսի ստություն:  
Գաղտնիքների քննող,

Մեղա քեզ կամա և ակամա,  
Գիտությամբ և անգիտությամբ թողություն շնորհիր մեղավորիս,  
Քանզի մկրտության սուրբ ավագանից մինչև այսօր  
Մեղանչել եմ Քո աստվածության առաջ  
Իմ զգայարաններով և մարմնիս բոլոր անդամներով,  
Եվ ողորմյա Քո ստեղծածներին և ինձ՝ բազմամեղիս:

Շնորհալին կերպավորում է նաև հավատի նահատակներին: Այս տեսակետից ուշագրավ են «**Ղևոնդյաններին**», «**Սուրբ կույս Հռիփսիմեին**» շարականները: Հավատի ու հայրենասիրության ոգին շարունակվում է նաև «**Նորահրաշ պսակավոր...**» շարականում, ինչի մեջ փառաբանվում են քաջ նահատակ սուրբ Վարդանը և վարդանանք:

Այս լուսավոր հոգիների ոգեկոչմանն է նվիրված Շնորհալու լավագույն տաղերից մեկը, ինչի մեջ հզոր կրկներգով մեռյալների հիշատակն է կենդանացնում Տիրոջ առաջ.

Երբ մահվան հրեշտակը փչի յուր փողը խիստ,  
Վերջին դատաստանին կանչի տղա ու ծեր  
Այդ ահասաստ օրը հիշիր ամենքին, Տեր,  
Հիշիր մեռյալներին, որ քնած են հանգիստ:

Երբ պերճ Արևելքից ոսկյա փառքովդ միշտ  
Փողփողա քո դեմքը՝ ցրելու մութուստվեր,  
Այդ ահասաստ օրը հիշիր ամենքին, Տեր,  
Հիշիր մեռյալներին, որ քնած են հանգիստ:

Գաղտնյաց գիրքը բացած, երբ բազմես դու ի նիստ.  
Եվ երբ սարսափանքից դողան տղա ու ծեր,  
Այդ ահասաստ օրը հիշիր ամենքին, Տեր.  
Հիշիր մեռյալներին, որ քնած են հանգիստ:

Ահա նաև Շնորհալու հավաքած և մշակած հանելուկներից մեկը (պատասխանը՝ **ցորեն**).

Տեսա իմ հոգուս հոգին,  
Որ մեռավ և հողում թաղվեց.  
Դարձյալ իմ սիրո համար  
Ինքը հարություն առավ և շատ արդյունք տվեց.  
Իր կամքով նա սրահարվեց  
Եվ քարով խիստ քարկոծվեց,  
Դժոխքի կրակի մեջ մտավ  
Եվ նոր կյանք առած՝ ետ դարձավ...

**ՊՈՆԵՄՆԵՐԸ:** Շնորհալին շատ մեծ դեր ունի պոեմի զարգացման գործում: Դրանք պատմողական, ուսուցողական, պատմական երկեր են:

«**Վիպասանություն**» պոեմում, օգտվելով հայ մատենագիրներից, Շնորհալին շարադրել է հայ ժողովրդի պատմությունը սկզբից մինչև իր օրերը:

«**Ողբ Եդեսիոյ**» պոեմում ներկայացնում է պատմական իրադարձություն. 1144 թ. դեկտեմբերի 23-ին Մոսուլի Զանգի աթաբեկը գրավում է Եդեսիան (Ուռհա): Քաղաքում պաշարվածների մեջ էր նաև Շնորհալու եղբոր որդին, ով փրկվելով հանդիպում է հորեղբորը, պատմում ամեն ինչ և նրան խնդրում գրել այդ մասին: Պոեմը Շնորհալին գրել է անմիջական տպավորություններով:

**Դիմառնության (անձնավորման)** կիրառությամբ Եդեսիա քաղաքը ներկայացվում է որպես որբևայրի մի կին, ով և պատմում է գլխին եկած չարաչար պատմությունը ու իր հետ ողբակցելու է հրավիրում քրիստոնյա քաղաքներին ու եկեղեցիներին՝ Երուսաղեմին, Հռոմին, Կոստանդնուպոլսին, Ալեքսանդրիային, դիմում է Հայաստանյայց եկեղեցուն՝ Վաղարշապատին, այնուհետև փառքից ընկած Անիին և, ի վերջո, ամբողջ աշխարհին: Վշտահար և սգակիր քաղաքին այլ բան չի մնում, քան թշնամուն պատժել նույն վիճակին ենթարկվելու նզովքով:

Պոեմն ավարտվում է հիշատակարանով. Շնորհալին պատմում է գրության շարժառիթների մասին.

Ինչ որ եղել էր, պատեցի խոսքով՝ տալով անցքերը մեր ժամանակի,  
Գրեցի ոչ թե գիտուն այրերի, այլ անգետների ու ջահելների համար,  
Եվ սա ինձնից գրել պահանջեց սիրով իմ արյունակից եղբորս որդին,  
Ով, լինելով մանուկ պատանի, արդեն լավ գիտեր իմաստը գրի:  
Արդ, ընդունիր խոսքս հասարակ և ընթերցիր որպես գիտակ,  
Ո՛չ առավել և ո՛չ նվազ, այլ ոտք և չափ պահպանելով:

Մյուս պոեմներից են «**Հիսուս որդի**», «**Երկնքի և նրա զարդերի մասին**»:

«**Հիսուս որդի**» պոեմի գրական ազդակը գալիս է Գրիգոր Նարեկացու «Մատյան...»-ից, Շնորհալին այն բնորոշել է որպես «Աղոթքների խոսք»: Պոեմի հերոսներն են՝ Հիսուս Քրիստոսը, ով փառաբանվում է, և ինքը՝ բանաստեղծը, ում, որպես անարժան մեկի, նսեմացնում է Աստծու առաջ: Սակայն այս նսեմացումը խոնարհության ձևով ներքուստ վեհացման խորհուրդ ունի: Շնորհալու ասածն այս է.

Անձիս աղտից լըվա ինձ, Տե՛ր,  
Մաքուր դարձրու սպիտակ ձյունից...

Այս նույն ոգով է գրված նաև «**Հավատի խոսք**» պոեմը, որ յուրովի նախորդի լրացումն ու շարունակությունն է:

«**Երկնքի և նրա զարդերի մասին**» պոեմն ունի ուսուցողական, ճանաչողական բովանդակություն: Շնորհալին գիտական բացատրություն է տալիս արեգակի, լուսնի, աստղերի դերին ու նշանակությանը: Տիեզերքի ճանաչողությանը նվիրված այս պոեմը Շնորհալին գրել է իր ընկեր և բարեկամ բժշկապետ Մխիթար Հերացու պատվերով:

Շնորհալու պատկերային համակարգի բոլոր նախադրյալները վերցված են բնությունից՝ թռչուններ, ծաղիկներ, թանկարժեք քարեր: Առատ են բաղաձայնությունները, կրկնաբերումները, ծայրակապով գրված բանաստեղծությունները (102 տաղից 63-ը գրված են այդպես):

Նա արդեն գրում է հանգով ու չափով: Հանգ, չափ, տուն՝ սրանք չափաբերված և կայուն կշռույթ ունեցող բանաստեղծության գործոններն են: Իր պապ Գրիգորը Մագիստրոսի «Հագարտողյան առ Մանուչե» պոեմից հետո Շնորհալու ստեղծագործությունն այս ասպարեզում ուղենշային է և պիտի ունենար իր հետևորդները:

### ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչ բովանդակություն ունի Շնորհալու «Հավատով խոստովանիմ» շարականը:
2. Հավատի նահատակներին նվիրված ինչ շարականներ է գրել Շնորհալին: Թվարկե՞ք վերնագրերը և ասացե՞ք, թե որ շարականը ում է նվիրված:
3. Ինչպե՞ս է Շնորհալին մեծարում հավատի ու հայրենիքի համար ընկածներին «Երբ մահվան հրեշտակը...» տաղում:
4. Ինչ է հանելուկը, ինչո՞ւ է Շնորհալին գրել հանելուկներ, հիշե՞ք դրանցից մեկը:
5. Թվարկե՞ք Շնորհալու գրած պոեմները և սեղմ բնութագրե՞ք դրանք:
6. Ե՞րբ և ինչո՞ւ է Շնորհալին գրել «Ողբ Եղեսիոյ» պոեմը: Ինչի՞ մասին է այն:
7. Ինչ տեղեկություններ է մեզ հայտնում Շնորհալին պոեմի հիշատակարանում: Հիշե՞ք, ինչ է հիշատակարանը:
8. Ինչպե՞ս կբնութագրեք Շնորհալու արվեստը:

# ՀԱՅՐԵՆՆԵՐ

## ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿ 15-րդ դարի վերջ – 1592



**Հայրենը** հայ միջնադարյան քնարերգության ամենաբուռն զարգացում ապրած և գեղարվեստական բարձր արժեքներ ստեղծած գրական տեսակներից մեկն է: Հայրենները կոչվել են նաև **անտունիներ**: Արձակ երկերում որպես չափածո մեջբերումներ հայտնի են նաև **կաֆա** բնորոշումով:

Հայրեններն ստեղծվել են 10-17-րդ դարերում: Դրանք ունեն և՛ ժողովրդական-բանահյուսական ծագում, և՛ անհատական: Հայրեններ գրել են Ներսես Շնորհալիկն, Ֆրիկը, Հովհաննես Երզնկացին, Հովհաննես Թլկուրանցին, Վարդան Բերդաձորցին, Խաչատուր Կեչառեցին և ուրիշներ:

Հայրենների մի մասը տպագրվել է Նահապետ Քուչակի անունով: Սակայն կա նաև տեսակետ, ըստ որի՝ այդ գործերի հեղինակը Նահապետ Քուչակը չէ, այլ դրանք վերագրվել են նրան: Ուսումնասիրողներից մեկն այն կարծիքն է հայտնում, որ Նահապետ Քուչակը ժողովրդական բանահյուսություն «ժողովող է», այսինքն՝ բանահավաք և ոչ թե հեղինակ: Անգամ բանահավաք լինելը շատ մեծ կարևորություն է տալիս Նահապետ Քուչակի գործին:

Քանի դեռ բանասիրական վեճերը վերջնական լուծում չեն ստացել, Նահապետ Քուչակը մնում է որպես հայրենների պայմանական հեղինակ:

**ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿԻ** մասին քիչ բան է պահպանվել, նրա ինքնությունը պարուրված է անորոշությամբ: Քուչակի թոռան մի հիշատակարանից՝ գրված 1637 թվականին, պարզվում է, որ իր պապը եղել է աշուղ Նահապետ Քուչակը և իր գործի մեջ եղել է վարպետ: Երկար ժամանակ պահպանվել է Նահապետ Քուչակի տապանաքարը իր ծննդավայր Խառակոնիս գյուղի Սուրբ Թեոդորոս վանքի բակում, ինչից պարզվում է, որ նա մահացել է 1592 թվականին:

Գերեզմանաքարի գրությունն ամբողջությամբ այս է. «Սա արև Քուչակ թվ ՌԻՍԱ ձղ Քս»: «Արև Քուչակ» արտահայտությունը պետք է նշանակի կենսատու աղբյուր, արև ու ջերմություն պարզևող: ՌԻՍ = 1041+551=1592 (մահվան թվականը): «ձղ Քս»-ը ուղղակի վերծանությամբ պետք է նշանակի՝ ձ=80, դ=90 Քս=Քրիստոս: Այսինքն՝ 80-90 տարեկանում հանգավ ի տեր:

Հայտնի է նաև, որ նրա գերեզմանը եղել է ուխտատեղի: Եթե Քուչակն անհայտ կամ պատահական մեկը լիներ, նրա գերեզմանը ժողովուրդը չէր սրբացնի:

Նահապետ Քուչակը ժամանակին հայտնի է եղել Չիչակ անունով:

Քուչակի անունը 16-րդ դարի տաղերգուների շարքում առաջինը հիշատակել է Ղևոնդ Ալիշանը: Այնուհետև նրա անունը շրջանառության մեջ է դրել Վարազա վանքի միաբան, վարդապետ Արիստակես Տեվկանցն իր կազմած «**Հայերգ**» (1882) ժողովածուի մեջ: Իր հրատարակած հայրենների շարքի կապակցությամբ նա գրում է, թե դա մականունով Քուչակ, ծնունդով խառակոնիսցի «Նահապետ վարպետ»-ինն է: Այստեղ զետեղված են գործեր՝ վերցված 1583 թվականի մի ձեռագրից:

Բանաստեղծություններից մեկի մեջ կան այսպիսի տողեր.

*Ես Քուչակն եմ վանեցի  
Ի գեղէն Խառակոնիսայ.  
Լցեր եմ հարիւր տարին,  
Էլ չի գար մտքիկս ի վերայ...*

Ենթադրվում է, որ սա Նահապետ Քուչակն է, որ ծնվել է Վանի Խառակոնիս գյուղում և ապրել է այնքան երկար, որ արդեն թուլացել է հիշողությունը: Ըստ ավանդության՝ Քուչակն իր խաղերով հիվանդների էր ապաքինում, վերք էր բուժում, թախիծ էր փարատում: Իր երգերով նա բուժել է սուլթանի կնոջը և գյուղում եկեղեցի է կառուցել: Որպես աշուղ ոչ միայն հորինել է հայրեններ, այլև ստեղծել է դրանց երաժշտությունը, ինքն էլ կատարել է իր երգերը և ունեցել ունկնդիրների լայն շրջանակ: Հայրեններ հորինել է նաև թուրքերեն, և նրա համբավը հասել է մինչև Կոստանդնուպոլիս:

Քուչակի հայրենները պահպանվել են ոչ միայն գրավոր, այլև բանավոր. սերնդեսերունդ դրանք փոխանցել են աշուղները և հետո է միայն գրի առնվել:

Քուչակի անունով հայտնի հայրեններն ունեն խորապես անհատական դրոշմ, այնպես որ դրանք ժողովրդական լինել չեն կարող: Այդ հայրենների հեղինակը որոշակի անհատն է, ով միաժամանակ և՛ հայրենների հեղինակն է, և՛ աշուղ է ու սիրահար:

Հայրենները Քուչակին պատկանելու վերաբերյալ կան տարբեր վկայություններ՝ 1892 թ. բանասեր Կարապետ Կոստանյանը գրել է, որ Նահապետ Քուչակը ժողովրդական երգերից առած կտորների ժողովող է, ոչ թե հեղինակ: Արշակ Չոպանյանը 1902-ին այն կարծիքի էր, որ դրանք «*Քուչակի անձնական ստեղծագործությունն են*»: 1940-ին Չոպանյանը վերանայեց իր տեսակետը և հայրենները համարեց «*վերագրված Նահապետ Քուչակ վարպետ աշուղին*»: Մանուկ Աբեղյանը նշում է, որ հայտնի ձեռագրերից ոչ մեկը չի տալիս Նահապետ Քուչակի անունը և կասկածի է ենթարկում Տեվկանցի տեսակետը: Պարոյր Սևակն իր հերթին «**Հայրենի կարգավ**» (1957) գրքի գրախոսության մեջ ընդունել է Քուչակի՝ հայրենների հեղինակ լինելու հանգամանքը, իսկ «**Սայաթ-Նովա**» (1963) մենագրության մեջ՝ ժխտել:

**Հայրենը** իմաստային, պատկերային և զգացմունքային շատ մեծ խտացում ունեցող փոքրածավալ ստեղծագործություն է: Հայրենը՝ որպես գրական տեսակ, ունի չափական և հնչյունական կշռույթի կայուն կառուցվածք: Չափական կառուցվածքն արտահայտվում է բարդ ոտքերով և կիսատողերով, հնչյունականը՝ ներքին հանգի, վերջնահանգի առկայությամբ: Կան նաև բառերի, արտահայտությունների կրկնաբերումներ:

Հայրենները հիմնականում չորս տողանի բանաստեղծություններ են՝ կազմված 14-16 վանկանի տողերից: Իրենց բնույթով դրանք նման են քառյակների: Հայրենը կարող է նաև տողաքանակի տատանումներ ունենալ երկուսից մինչև ութ տողի սահմաններում:

«Հայրեն» եզրույթին տրվել են տարբեր բացատրություններ: Հավանական պետք է համարել այն տեսակետը, ըստ որի՝ հայրենն առաջացել է «հայերեն» բառի սղումից, քանի որ որպես գեղարվեստական ստեղծագործություն ունեցել է յուրահատուկ հայկականություն: Հայրեն եզրույթը բացատրվում է հայերեն ասել, հայոց լեզվով ասել, երգել իմաստով: Ունի նաև հայրենի, հայրենական իմաստ:

Իրենց իմաստային ընդգրկումով հայրեններն ունեն տարբեր բովանդակություն՝ սիրային, իմաստասիրական, խրատական, բարոյախոսական, պանդխտության: Առավել տարածված են սիրային և իմաստասիրական հայրենները:

Հայրենները գրված են շատ բարձր արվեստով: Հայրենները երբեմն ունեն շատ արագ զարգացող **ներքին գործողություն**: Պատկերավորման միջոցներից տարածված են **չափազանցությունը, իմաստային աստիճանավորումը, համեմատությունը**: Կա գունային մտածողություն, որով աշխարհը, աղջկա դեմքն ու հագուստները պատկերվում են վառ գույներով: Շատ ներդաշնակ է չափական և հնչյունական կշռույթը: Հայրենները նաև ժողովրդական մտածողության գանձարան են:

## ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿԻ ՄԱՍԻՆ

Քուչակ Նահապետն ու Սայաթ-Նովան եթե երգում են իրենց սերն ու սիրուհին, երգում են ամբողջ աշխարհի առաջ, եթե դիմում են իրենց յարին՝ պատմելու նրա սերն ու գեղեցկությունը, խոսում են լուրջ ու հանդիսավոր, ժամանակներին ու ժողովուրդներին ի լուր: Խոր գիտեն, որ իրենք հասարակ մահկանացուներ չեն:

*Հովհաննես Թումանյան*

Ով էլ լինի պատմական Նահապետ Քուչակը և որ տարիներին էլ ապրած լինի, նրա տաղերը մնում են որպես հայ քնարերգության ամենագեղեցիկ մարգարիտներ: Միջնադարյան բոլոր քնարերգուների մեջ Քուչակն առանձնանում է իր անմիջականությամբ և ներշնչանքի բնականությամբ:

*Վալերի Բրյուսով, ռուս բանաստեղծ*

Գաղափարի մեջ կ'ընտրեմ Պայրընը կամ Նիցցեն [Նիցշե], բայց արվեստին մեջ կը նախընտրեմ Քուչակը:

*Դանիել Վարուժան*

Հետազոտողների մեջ ժամանակ առ ժամանակ ցանկություն է առաջանում հզոր հեղինակներից մեկի ստեղծագործությունը վերագրել ուրիշներին: Այդպես վարվեցին Հոմերոսի հետ: Այդպես վարվեցին նաև Շեքսպիրի հետ:

Բայց... դա մեկ մարդ է, սակայն ուժեղ մարդ, մեկ ծայն է, սակայն հզոր ծայն, ոչ երգչախումբ: Ես ասում եմ՝ չեմ հավատում, թե մի քանի աշուղ են: Դա մեկ Նահապետ է:

*Լև Օզերով, ռուս բանաստեղծ և քննադատ*

Նահապետ Քուչակի «Հարյուր ու մեկ հայրեն»-ը դարձել է իմ սեղանի գիրքը: Այն իմ գրադարանում դրված է անտիկ քնարերգուներ Սաֆոյի, Կատուլլուսի, Հորացիուսի, Օվիդիուսի գրքերի կողքին: Ինչո՞ւ: Շատ պարզ. ես մի տեսակ կարոտում եմ իսկականին, բնականին, մարդկայինին:

*Էդուարդաս Մեծելայտիս, լիտվացի բանաստեղծ*

## ՕԳՏԱԿԱՐ Է ԻՄԱՆԱԼ

### ԽԱՌԱԿՈՆԻՍ

Նահապետ Քուչակի ծննդավայր Խառակոնիս գյուղը հիշվում է դեռևս հնագույն արձանագրություններում: Այն գտնվում էր Վանա լճից արևելք ընկած Արճակ լճի ափին: Գյուղի տներն օղակաձև շարված էին եկեղեցու շուրջը: Տներն իրար կպած էին, և տանիքներով կարելի էր անցնել մի տնից մյուսը: Տյառնընդառաջի տոներին տանիքներին խարույկ էին վառում: Ժողովրդական ուրախությունների ժամանակ խառակոնիսցիները հայրեն էին ասում ու երգում: Այնտեղ էր գտնվում Նահապետ Քուչակի գերեզմանը: Նրա մասին ժողովուրդն ավանդություններ էր պատմում, ուխտի գնում նրա շիրիմին և մատաղներ անում:

Ըստ պահպանված ավանդությունների՝ Քուչակը եղել է հրաշագործ:

Մեծ եղեռնից առաջ Խառակոնիսն աշխույժ կյանքով ապրող գյուղ էր, ուներ 450 տուն և 2.300 բնակիչ: Բռնագաղթից առաջ Արճակ լճի ջրերը բարձրացել և հասել էին գյուղի տներին: Խառակոնիսցիները մտադիր էին գյուղը տեղափոխել, բայց դրա փոխարեն թուրքական հալածանքներից ստիպված եղան հեռանալ իրենց տուն ու տեղից:

### ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ է հայրենը:
2. Ե՞րբ է ձևավորվել հայրենի գրական տեսակը, և ովքե՞ր են գրել հայրեններ:
3. Ո՞վ է Նահապետ Քուչակը և ե՞րբ է ապրել:
4. Ի՞նչ բանասիրական վեճեր կան նրա՝ հայրենների հեղինակ լինելու հարցի շուրջ:
5. Բնութագրե՞ք հայրենի կառուցվածքային առանձնահատկությունները:
6. Ի՞նչ գիտեք Քուչակի ծննդավայր Խառակոնիսի մասին:
7. Արվեստի ինչպիսի՞ հատկանիշեր են բնորոշ հայրեններին:
8. Ովքե՞ր և ի՞նչ կարծիքներ են հայտնել Նահապետ Քուչակի և հայրենների մասին:

## ՀԱՅՐԵՆՆԵՐ

1

Երբ սերն ի աշխարհս եկավ, եկավ իմ սիրտս բնակեցավ.  
Հապա իմ սրտես ի դուրս՝ հերկրե հերկիր թափեցավ,  
եկավ ի գլուխս ելավ, ի ըղեղս ելավ թառեցավ.  
Աչիցս արտասուք ուզեց, նա արյուն ի վար վաթեցավ...

2

Ես աչք ու դու լույս, հոգի, առանց լույս՝ աչքն խավարի.  
Ես ձուկ ու դու ջուր, հոգի, առանց ջուր՝ ձուկն մեռանի.  
Երբ զձուկն ի ջրեն հանեն՝ ՚ի ի այլ ջուր ձգեն, նա ապրի,  
Երբ զիս ի քենե զատեն, քան զմեռնելն այլ ճար չի լինի:

3

Ո՞ր էիր, ուսկի՞ց եկիր, անծանոթ, ըզիս սիրեցիր,  
Կրակն ի թեզնիքդ ունիր, ի ծոցիկս ի վար թափեցիր,  
Քո սերդ ալ ոսկի արիր, իմ սրտիս քուրան հալեցիր.

Դարձար, զան հալխա արիր՝ ՚ի իմ սրտիս ականջն անցուցիր:

4

Քանի՞ ու քանի՞ ասեմ. «Վարդն մի՛ սիրեր, փուշ ունի.  
Գնա՛, մանուշակ սիրե, փուշ չունի, անուշ հոտ ունի:  
Վարդն բացված մի՛ սիրեր, որ գա ի ծոցդ թառամի.  
Վարդն պուլպուլիկ սիրե, որ գա ի ծոցդ ու բացվի»:

5

Երբ որ ես պզտիկ էի, կանչեին ինձ ոսկի տղա.  
Մեծացա՛, սիրու տեր եղա, երեսիս գույնն կու գնա.  
– Մանկտիք, ձեր արենն ասեմ, որ սիրուն՝ քարն չի դիմա.  
Սիրուն՝ քար՝ ՚ի երկաթ պիտի, պողպատե դռնակն ի վերա:

6

Ես այն հավերուն էի, որ գետինն կուտ չուտեի.  
Թռչ՛ի երկնոքն երթ՛ի, թե սիրո ակնատն չընկնեի.  
Ակնատն ի ծովուն միջին էր լարած՝ ՚ի ես չգիտեի,  
Ամեն հավ ոտոքն ընկեր, ես ոտոքս ու թևս ավելի:

7

Կանգնիմ ես ի քո դիմաց լամ, որ իմ հուրն զքեզ չէրէ.  
Մանուկ՝ սիրո տեր արիր, հանեցիր ի մարդկութենե.  
Ջանա՛ շուտով ճար արա, զիս ի քո գիրկն ժողովե.  
Թե չէ կըսպանեմ ես զիս, զան ուզեն զարյունս ի քենե:

8

– Լուսին, պարծենաս, ասես. «Լուս կուտամ ես աստընվորիս»:  
Ահա հողեղեն լուսին ի գրկիս՝ ՚ի երեսն երեսիս.

Թե չես ավտալ այս գերուս, յետ տանեմ զփեշ կապայիս,  
Վախեմ՝ սիրո տեր լինիս, լուս պակաս տաս աստընվորիս:

9

Այս ծովական գիշերս ի բուն՝ ես երկու շրջան մանեցի.  
Խոշ յարս այլ ի միտս ընկավ, թեզ մ'ելա զջահրաս վերուցի.  
Փարչիկ մ'այլ գինի առի, խոշ յարիս դուռն գնացի.  
– Խոշ յար, ան, զդուռն բաց, ձյուն եկեր, ոտվիս կու մըսի:

10

Երնեկ ես անոր կուտամ, որ առեր յուր յարն է փախեր,  
Ոնց որ զկամուրջն անցեր, ջուրն ելել զկամուրջն է տարեր.  
Ձնիկ-եղեմնիկ եկեր, զոտվընուն հետքն է կորուսեր,  
Առեր ի պաղչան մտեր, ցորեկով զդնչիկն է պագեր:

11

Երեկ ցորեկով բարով տանեին մեկ յար մի ճորով:  
Ջնա ճորով է տարած, կամ խաբած է զինքն դրամով.  
Սերն որ դրամով լինի, զինքն էրել պիտի կրակով.  
Սերն խնձորով պիտի ու տրիեմ-տրիեմ շեքերով:

12

– Քանի՞ ու քանի՞ ասեմ՝ մի՛ երթալ ի սերն կնկան,  
Որ նա չավերե զանունդ ու լինիս ի փողոց նման:  
Էն որ թողեր գյուր հալալն ու եկել քեզ ի երևան,  
Կարող է զքեզ սիրե, ու մեկ ելանե քեզ փոխան:

13

Հավատն է անառիկ բերդ՝ ով առնե զնա հայրենիք.  
Թեպետ թշնամիք ունի, որ բերեն շատ մրճեր ու նիգ.  
Թուման մի հեծել կանգնի ու լինի յինքն նետաձիգ,  
Նա զայն մասխարա դնե և թքնու զինչ ի խամաճիկ:

14

Մահալոքս ի վայր կուզ'ի, նա տեսա չոր գանգ մի պառկած.  
Ոտոքս ալ թապալ տվի, նա երեսս ի վեր ծիծաղաց.  
Դարձավ պատասխան երես. «Ի՞նչ կանես, կորիճ շփացած.  
Երեկ քեզի պես էի, այսօր զիս այս հալս է ձգած»:

15

Սրտիկս է եղեր դալամ, բաժնելու թղթեր կու գրե.  
Կանչեմ, ճի, իմ Աստված, զամենայն դարիպ դու պահե.  
Ղարիպ գնացած ունիմ, իմ տարտերս զիս կու լափե.  
Շալլա թե շուտով դառնա, թե չէ իմ հոգիս կու ելնե:





## ԲԱՌԱՐԱՆ

**ըղեղ** – ուղեղ

**վաթեցավ** – թափվեց

**թեզնիք (թեզանիք)** – հագուստի թևի այն մասը, որ ծածկում է ձեռքը, հագուստի թևին ավելացրած լրացուցիչ թև, թևնոց, հագուստի երկար թև

**հալխա** – օղակ

**պուլպուլիկ** – այստեղ՝ կոկոն, չբացված

**հավ** – հավք, թռչուն

**ակնատ** – թակարդ

**չերէ** – չայրի, **էրել** – այրել

**աստընվոր** – աշխարհ, երկրային, **աստընվորիս** – անցավոր, աշխարհային մարդ

**կապա** – հագուստի տեսակ, տղամարդու երկրափեշ զգեստ

**ծովական** – ծովային, այստեղ՝ ծովի պես անվերջ

**խոշ** – լավ, հաճելի, սիրելի

**թեզ** – արագ, շտապ

**ջահրա** – ջուլհակի գործիք

**փարչիկ** – գինու փոքրիկ կուլա

**այլ** – այստեղ՝ ալ, էլ

**անմ** – ձայնարկություն է

**ոտվիս** – ոտքերս, **զոտվընուն** – ոտքերի

**անոր** – նրան

**եղեմնիկ** – եղյամ

**պաղչա** – այգի, պարտեզ

**ցորեկ** – ցերեկ

**պագել** – համբուրել

**ճորով** – բռնի, հարկադրաբար

**տրիեմ-տրիեմ** – կշիռի չափ

**շեքեր** – շաքար

**նիգ** – երկաթե ձող, երկաթե լծակ ծանրություն բարձրացնելու համար

**թուման** – պարսկական ոսկեդրամ, ժամանակին համարժեք է եղել ռուսական տասը ռուբլու

**մասխարա** – ծաղրածու, խայտառակ, ծաղրի առարկա դարձած

**խամաճիկ** – տիկնիկ, ստրկամիտ, կամակատար

**մահալ** – թաղ, թաղամաս

**թապալ տալ** – թավալ տալ, թավալել, թավալվել

**երես** – տվեց

**շփացած** – երես առած

**հալ** – վիճակ

**ղալամ** – գրիչ

**ղարիպ** – պանդուխտ, նժդեհ, գաղթական, աստանդական, նաև՝ տարագիր, վտարանդի, հայրենագուրկ

**տարտ** – դարդ, ցավ

**շալլա (իշալլահ)** – Աստված տա

Ներկայացվող հայրեններից 1-12-ն ունեն սիրային բովանդակություն, 13-14-ը՝ իմաստասիրական, 15-րդը՝ պանդխտության:

Հայրենների հիմքը սերն է: Հայրեններն ստեղծողի համար սերը կեցության հիմքն է, սերը կյանք է, հավատ է, բարոյականության հիմքն է և ապրելու նպատակ: Հայրենները սիրո յուրահատուկ ավետարան են: Սերը մեծարվում, փառաբանվում է բոլոր ձևերով: Սիրո մասին խոսում է իրական մարդը, իրական է նաև հերոսուհին՝ *յարը, գոգալը, կաքավիկը, աղվորը, զալումը*: Շատ հայրեններում նրանք զրուցում են իրար հետ և հայրենը ստանում է երկխոսության բնույթ:

Հայրեններն արտակարգ հարուստ են հոգեբանական տարբեր վիճակներով՝ հանկարծակի կամ անակնկալ հանդիպում, սիրո կորուստ, հուսահատություն, խռովք, կարոտ, սիրո հպարտություն, սիրո հաղթանակ, երջանկություն ու վայելք: Սիրահարը տարված է իր գոգալով և առիթը չի կորցնում փառաբանելու նրան, պատկերելու նրա արտաքինը: Այդպես գեղանկարի նման ստեղծվում է գոգալի բառանկարը: Ձևավորվում է նաև քաղաքային այն միջավայրը, որտեղ ապրում են տղան ու աղջիկը, հստակ երևում են նրանց միջև ձևավորված հարաբերությունները: Սիրո հայրեններում մարդն անընդհատ սիրո մեջ է: Դա տոն է, որ միշտ մարդու հետ է, և սիրահարը միշտ էլ արտոնյալ է:

Պանդխտության հայրեններից շատերի մեջ դեռևս շարունակվում են սիրո հայրենների տրամադրությունները: Սիրահարը, հրաժեշտ տալով սիրած աղջկան կամ կնոջը, մեկնում է պանդխտության, կինը սպասում է նրա վերադարձին: Այստեղ ևս բազմազան են հոգեբանական վիճակները, իսկ պանդուխտ (ղարիք) դառնալը համարվում էր աղետ, ողբերգություն:

Հայրենների հեղինակը խոհուն մարդ է, ինչն ակնհայտ է հատկապես իմաստասիրական հայրեններում: Այս շարքում արծարծվում են մարդ և ժամանակ, մահ և անմահություն, կենսափորձ և իմաստություն, ուսում և անգիտություն, հոգի և մարմին, ինչպես նաև համանման շատ այլ հարցեր: Դրանք երբեմն հասնում են այնպիսի խորության, ինչը բնորոշ է Վիլյամ Շեքսպիրի հանճարին: Կարելի է համեմատել 12-րդ հայրենում խոսող գանգի և Շեքսպիրի «Համլետ» ողբերգության մեջ գերեզմանափորի ու գանգի տեսարանները:

Ըստ **առաջին հայրենի**՝ սերը նախ սրտի մեջ է ապրում, ապա սրտից տարածվում է աշխարհով մեկ, այնուհետև բույն է դնում մարդու գլխում, այսինքն՝ թափանցում է նրա գիտակցության մեջ: Այնքան է հուզում նրան, որ աչքերից արտասուք է ուզում, բայց արտասուքի փոխարեն արյուն է հոսում: Սիրտ և միտք, արտասուք և արյուն, հոգի և մարմին՝ ահա մարդն ամբողջությամբ, որ հիմնովին տրվում է սիրո: Որտեղ սերն է, այնտեղ մարդն է, որտեղ սեր չկա՝ անապատ է ու մահ:

Այսպես հայրենների հեղինակն ստեղծում է սիրո ավետարան, ինչը կարող էր սկսվել այս տողերով՝ «Ի սկզբանե էր Սերն, և Սերն էր առ Աստված, և Աստված էր Սերն...»:

**Երկրորդ հայրենը** կարող է ընկալվել որպես սիրո օրհներգ: Ասես մեկ մարմին, մեկ հոգի աստվածաշնչյան պատվիրանն է: Աչքի ու լույսի, ջրի ու

ձկան պարզ հարաբերությամբ ձևավորվում է սիրահարի ճակատագիրը: Համանման մեկ այլ հայրենում տղան աղջկան ասում է՝ քո սերը դարձել է արյուն և մտել է իմ երակների մեջ: Այսինքն՝ դու և քո սերն անբաժան եք ինձանից:

**Երրորդ հայրենում** կինն ասում է՝ անծանոթ, կրակը թեքերիդ միջից ծոցս թափեցիր, սերդ էլ ոսկի արեցիր և իմ սրտի քուրայում հալեցրիր: Սիրահարը սերն օղակ է անում և կնոջ սրտի ականջին է անցկացնում: Սրտի ականջն արդեն իսկ փոխաբերական արտակարգ գեղեցիկ պատկեր է:

**Չորրորդ հայրենում** սիրո խորհուրդն է՝ ինչ սիրել և ինչպես սիրել: Փշոտ վարդն անհասանելի սիրո խորհրդանշանն է, մանուշակը՝ հասանելի: Բայց իսկական սիրահարը վարդ պետք է սիրի և պետք է սիրի կոկոն վարդը, որ գա իր գրկում բացվի և ոչ թե բացված վարդը, ինչի թերթիկներն արդեն թափվում են:

**Հինգերորդ հայրենը** սիրո անդիմադրելի ուժն է ներկայացնում: Ոսկի տղան սիրահարվում և սիրո ապրումներից տառապում է, գույնը գցում. այդպես է, որովհետև սիրո զորությանն անգամ քարը չի դիմանա, էլ ո՞ր մնաց մարդը:

**Վեցերորդ հայրենը** սիրո անխուսափելիությունն է՝ որպես բնության պահանջ: Հպարտ անկախությունը, որ այստեղ պատկերված է երկնքում ազատ թևածող թռչունի տեսքով, ենթակա է բնության պահանջին: Թակարդ չընկնելու վտանգից խուսափելու համար ազատ թռչունն այնքան զգույշ է, որ անգամ գետնի վրա կուտ չի ուտում: Բայց պարզվում է, որ թակարդը ծովի մեջ էր լարած, եթե ուրիշ հավքերը միայն ոտքով էին թակարդն ընկնում, նա միանգամից և՛ ոտքով, և՛ թևով:

Հպարտ ազատությունն այսպես ենթակա է սիրո անակնկալ հարվածի և այնպիսի հարվածի, որ միանգամից է տապալում, այսինքն՝ սիրո տեր դարձնում:

**Յոթերորդ հայրենում** սիրո հրդեհով բռնկված սիրահարն է, ում հոգու գաղտնիքը բացահայտվել է և հապշտապ ցանկանում է միանալ իր սիրելիին: Վերջին տողի իմաստն այս է՝ իմ սերը դարձել է արյուն և հոսում է քո երակներով, ես, որ ինձ սպանեմ, քեզ մեղքի տակ կզցեմ, որովհետև կգան արյունս քեզանից կպահանջեն:

**Ութերորդ հայրենը** սիրած աղջկա գեղեցկության փառաբանությունն է: Լուսնին սիրահարը հակադրում է իր երկրային լուսնի գեղեցկությունը, ում հմայքին անգամ լուսինը չի դիմանա, ինչից էլ կթուլանա նրա լույսն այնպես, ինչպես սիրո հրդեհից դալկանում էր ոսկի տղան:

Այս կապակցությամբ ավելացնենք, որ սիրո հայրենները հեղեղված են գոգալի գեղեցկության պատկերներով: Նրա աչքերը նման են եղնիկի աչքերի, կամարից կախված կանթեղի, հոնքերն այնքան ազդեցիկ են, որ Շիրազ քաղաքը հիմքից կքանդեն: Մեկ այլ տեղ հոնքերը նմանեցվում են եկեղեցու կամարի: Շողում են ճակատը, դեմքն ու կիսադեմը: Քամին աղջկա մազերը տարուբերում է, նա պայծառ է կարմիր վարդի նման, բուրում է անուշ մեխակ ու դարչին: Սիրահարված տղան բացականջում է. «Մտիկ իմ յարին արեք, զինչ հագեր՝ ամենն է կանաչ», այսինքն՝ աղջիկը մշտական գարուն է: Մեկ այլ տեղ ասում է. «Աչքերդ է ծովեն առած, և ուներդ ի թուխ ամպեն»: Տեսքն ու

պատկերը վարդ են. *«Ուր որ դու կանգնած լինիս, չէ պատեհ վառեն մոմեղեն,  
// Ծոցուդ լույսը դուրս ծագե, գեմ ելնե մեռելն ի հողեն»:*

**Իններորդ հայրենը** մի ամբողջ վեպի տարողություն ունի: Զուլիակ տղան ամբողջ գիշեր աշխատել է՝ մանել է երկու շրջան: Հիշել է սիրած աղջկան և արագ հավաքել է մանածագործի իր հաստոցը: Մի փարչ էլ գինի է գնել և գնացել է սիրած աղջկան տեսակցության: Բայց աղջիկը վիրավորվել է, քանի որ տղան, գործով տարված, իրեն մի պահ մոռացել է: Այդ իսկ պատճառով աղջկա դուռը փակ է: Սիրահարը ուզում է շարժել սիրած աղջկա գուլթը և խնդրում է՝ ձյուն է եկել, ոտքերս մրսում են, դուռը բաց արա...

**Տասներորդ հայրենը** անմիջական սիրո փառաբանությունն է: Սիրահարները փախել են իրենց հետապնդող միջավայրից: Անցել են կամուրջը, և ջուրը քշել տարել է այն, որպեսզի ուրիշները չգան իրենց հետքով: Դեռ ավելին՝ ձյունը եկել և ծածկել է նրանց ոտնահետքերը: Սիրահարները մտել են այգի և սիրո երանության մեջ են: Այլ հայրեններից հայտնի ակնարկներից կարելի է ենթադրել, որ կամուրջը Եփրատ գետի վրա է, իսկ եղյամի նմանվող ձյունը հուշում է, որ դեռևս վաղ գարուն է, այգին թեև կանաչել է, բայց անակնկալ ցրտերը ձյան շղարշ են դրել գետնին: Վաղ գարունը հուշում է նաև կամուրջը քշած վարարած գետը:

**Տասնմեկերորդ հայրենը** ազնիվ, անշահախնդիր սիրո փառաբանությունն է ընդդեմ վաճառվող սիրո: Մաքուր, առաքինի, բնական ապրումների մեջ տեղ չունեն ծախսու հարաբերությունները: Նույն կերպ մեկ այլ հայրենի մեջ կարդում ենք. *«Պագ, որ դրամով լինի, չեմ իտար, թե աշխարհ ավերի, // Թե ինձ մուրատով կուզես, եկո պագ՝ հավասո՞ր անցանի»:* Սիրո գինը սերն. *«Պագիդ գին ինչ, նա ասաց՝ պագիս գին հոգիդ»:* Այստեղից էլ՝ նվիրված սիրո շարունակությունը.

*Հոգիս ալ հոգիդ ուզե, չէ չասեմ, հանեմ տամ ի քեզ.*

*Վախեմ թե աչերս ուզես, հապա ինչո՞վ նայիմ ի քեզ...*

**Տասներկուերորդ հայրենում** ևս քննադատվում է դավաճան սերը: Ասվում է՝ այն կինը, ով թողել է իր «հալալ» սերը և եկել քեզ մոտ, վաղն էլ քեզ կփոխի մեկ ուրիշի հետ, մաքուր անունդ կարատավորվի, և դու կնամանվես տրորված ու կեղտոտ փողոցի:

Այս և այլ հայրեններում երևում է նաև բնակավայրը, թաղամասը, ուր ապրում են սիրահարները, Եփրատ գետը, գետի ափի գյուղերն ու քաղաքները:

Անպակաս է նաև սիրային խաղը: Սիրահարն ասում է. *«Հնցեղ եմ ի քո դիմաց, գինչ կակազն ի դեմ ատենու // Եփրատ գետն ի մեր մեջն, ճար չունիմ ի դեմ քեզ գալու»:* Աղջիկն զգում է, որ տղան ճիշտ չի խոսում, իրեն մոռացել է և պատճառ է բռնում, թե Եփրատը չի կարողացել անցնել նրան հանդիպելու համար: Զգայուն աղջիկն ի պատասխան տղայի ինքնաարդարացման ասում է. *«Գնա, սուտ ասաց ես դուն, // Երեկ եմ անցել զԵփրատ»:*

Հայրեններում սերն ազատ է, անսահման է, անընդհատ է և ազնիվ հարաբերության մեջ հասանելի: Սերը կյանք է և ուրախություն, ոչ թե ողբ ու տառապանք: Ազատ և անարգել սերը ոչ միայն տարիք, այլև սահման չի ճանաչում, չի հանդուրժում կաշկանդվածություն, ձևականություն:

Սիրային առնչության, տղայի ու աղջկա հանդիպման ձևերը ևս տարբեր են՝ նրանք հանդիպում են ոչ միայն գաղտնի, այլև եկեղեցու բակում, զրուցում են իրար հետ, անգամ նամակներ են փոխանակում ու ծաղիկներ նվիրում:

### ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Բովանդակությամբ ինչ բնույթի են լինում հայրենները:
2. Հայրենները եթե դառնան սիրո ավետարան, ամեն ինչի սկիզբն ինչը կհամարվի: Այս տեսանկյունից ինչպե՞ս կմեկնաբանեք «Երբ սերն ի աշխարհս եկավ...» հայրենը:
3. Ինչպե՞ս է փառաբանվում սերը «Ես աչք ու դու լույս, հոգի...» հայրենում:
4. Ինչ պատկերների միջոցով է սերը ներկայացված «Ո՛ր էիր, ուսկից եկիր...» հայրենում: Ինչպե՞ս կբացատրեք սերն օղակ անել և սրտի ականջին անցկացնել պատկերը:
5. Ինչ պատկերներ են կիրառված «Քանի՞ ու քանի՞ ասեմ...», «Երբ որ ես պզտիկ էի...», «Ես այն հավերուն էի...», «Կանգնիմ ես ի քո դիմաց լամ...», «Լուսին, պարծենաս, ասես...» հայրեններում:
6. Վերլուծե՛ք «Այս ծովական գիշերս ի բուն...» հայրենը: Ինչպե՞ս են կերպավորված ջուլիակ սիրահարը և նրան սպասող, բայց նրանից նեղացած աղջիկը:
7. Ինչպիսի՞ սեր է փառաբանվում «Երնեկ ես անոր կուտամ...», «Երեկ ցորեկով բարով տանեին...», «Քանի՞ ու քանի՞ ասեմ...» հայրեններում:
8. Ինչ իմաստ են արտահայտում «Հավատն է անառիկ բերդ...» և «Մահալոքս ի վայր կուգ՛ի...» հայրենները:
9. Ինչ է պանդխտությունը, և ինչո՞ւ են գրվել պանդխտության հայրեններ:
10. Ինչ կասեք հայրենների արվեստի մասին: Առանձնացրե՛ք պատկերավորման միջոցները:

## ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ 1722–1795



Սայաթ-Նովան միջնադարի վերջին բանաստեղծն է։ Բացառիկ ուժի և հմայքի տեր մի անուն, ով որքան միջնադարին է, նույնքան՝ լեզվով, ոգով, կերպարով, նոր ժամանակներինը։ Պատահական չէ, որ նրանով հետաքրքրվեցին, նրան գնահատեցին 20-րդ դարի ամենամեծերը՝ Հովհաննես Թումանյանը, Եղիշե Չարենցը, Նիկոլ Աղբալյանը, Պարույր Սևակը։ Այսօր էլ նա շարունակում է մնալ անգերազանցելի երաժիշտ ու բանաստեղծ։ Սայաթ-Նովան եզակի գեղարվեստական արժեք է, աշուղական ձևի մեջ մարմնավորված ժողովրդական հանճարի բացառիկ արտահայտություն։

Շատ ու շատ մեծությունների նման Սայաթ-Նովան այսօր էլ իր կյանքի ու ստեղծագործության գաղտնիքներով շարունակում է մնալ առեղծված։ Դա վերաբերում է և՛ նրա ծննդյան թվականին, և՛ կյանքի հանգամանքներին, և՛ առանձին խաղերի մեկնաբանություններին։

Սայաթ-Նովան իր իսկական անուն ազգանունով եղել է Հարություն (Արուֆին) Սայադյան։ Ըստ առաջին կենսագիր Գևորգ Ախվերդյանի՝ Սայաթ-Նովան ծնվել է 1712 թվականին։ Իսկ ըստ Սայաթ-Նովայի կյանքի և ստեղծագործության վերջին հետազոտող Պարույր Սևակի հիմնավոր փաստարկումների՝ բանաստեղծը ծնվել է 1722 թվականին։ Այս թվականն էլ այժմ համարվում է ընդունված։

Սայաթ-Նովան ծնվել է Թիֆլիսում, կիսաճորտի ընտանիքում։ Թիֆլիսն այդ ժամանակ հայաշատ քաղաք էր. 20.000 բնակչից 14.500-ը հայեր էին, հայ էր քաղաքագլուխը, հայոց լեզուն ընդունված էր ոչ միայն կենցաղում, այլև արքունիքում։

Սայաթ-Նովայի հայրը՝ մահտեսի Կարապետը, ծնունդով Կիլիկիայի Ադանա քաղաքից էր, տեղափոխվել էր Հալեպ, այնտեղից՝ Թիֆլիս, ուր և ամուսնացել էր Սանահին գյուղից Թիֆլիսի Հավլաբար թաղամասում հաստատված Սառայի հետ։ Այս կապակցությամբ բանաստեղծը գրում է.

*Սայաթ-Նովու վաթանիցըն հարց կու տան.  
Մեկը կոսե Հինդն է, մեկը՝ Համադան...  
Վաթանըս Թիֆլիսն է, կողմը՝ Վրաստան.  
Մերըս հավլաբարցի է, Հերըս՝ Հալաբու։*

Իսկ մեկ այլ տեղ ավելացնում է. «Սայաթ-Նովան ինքը հայ է՝ // Իր հավատին ամուր կանգնած»։ Տասներկու տարեկանում նա դարձել է ջուլիակի աշակերտ և իր արհեստի մեջ այնքան է առաջադիմել, որ շնորհիվ նրա հաջողությունների իր վարպետը պարգև է ստացել։ Տասնհինգ տարեկանում նա արդեն գրագետ էր, մնացածը լրացրել է ինքնակրթությամբ։ Սայաթ-Նովան հանճարեղ ինքնուս էր։ Նրա դպրոցը կյանքն էր, բազմալեզու ու խայտանկար Թիֆլիսը։ Դրա ապացույցը նրա ստեղծագործության լեզուն է, ինչը ոչ թե գրագիտության լեզու է, այլ փողոցի կենդանի խոսվածք՝ հայերենի, վրացերենի, թուրքերենի, պարսկերենի, արաբերենի տարբեր բարբառների մի խառնուրդ։

Ուսում ստացած գրագետ մարդը երբեք այդ լեզվով չէր գրի: Սայաթ-Նովան սովորել է գրել, կարդալ և հմտացել աշուղական արվեստի մեջ:

Տասնինը տարեկանում վրաց գորագնդի կազմում նա մասնակցել է Նադիր շահի հնդկական արշավանքներին: Այստեղ նա աչքի է ընկել երգիչի իր աստվածատուր շնորհքով, արժանացել վրաց թագաժառանգ Հերակլի համակրանքին, հրավիրվել պալատ և դարձել արքունական երգիչ:

Սայաթ-Նովան ունի բովանդակությամբ ու ձևով աշուղական պոեզիային պատկանող մի խաղ՝ «**Փառք Արարչին...**», ինչի մեջ պատմում է իր կենսագրությունը: Խաղի այդ տեսակը կոչվում է հյուսկեն (օտար բառով՝ վուղջութլամա), ինչի մեջ աշուղները երևակայաբար ներկայացնում են իրենց կյանքը մինչև հարյուր տարեկանը: Այս խաղը Սայաթ-Նովան գրել է 28 տարեկանում: Կարելի է ենթադրել, որ մինչև այդ տարիքն ընկած տվյալները ճիշտ պետք է լինեն, իսկ դրանից հետո եկողները (մինչև հարյուր տարեկանը) ենթադրական ու մտացածին: Ահա այդ խաղի այն երեք տները, որոնց բովանդակած կենսագրական տվյալները հավաստիություն կարող են ներշնչել.

*Ինը տարիս երբ որ անցավ, դեռ հայտնի չէր, թե ինչ էի,  
Տասը տարեկան էլ դարձա, դեռ գիժ ու միժ կը շրջեի,  
Տասնըմեկըս էլ լրացավ, դեռ էնքան էլ խելոք չէի,  
Տասնըներկու տարեկանում ինձ հանձնեցին ուստաքարին:*

*Տասնըերեք տարեկանում իմ արհեստում տըվի անցա.  
Տասնըչորսում իմ շնորհքով վարպետս պարգև ստացավ.  
Տասնըհինգում շատ քանք դրրի, գիր-ղալամին ընկերացա.  
Տասնըվեցս երբ բոլորեց, ճանաչեցի չարն ու բարին:*

*Տասնըյոթ տարիս լրացավ, դեռ ես չէի եղել դաստան,  
Տասնըութ տարիս երբ բոլորեց, տեսա ն՛ վարդ, ն՛ վարդաստան,  
Տասնըինը տարեկանում ման եկա Հաբաշ-Հինդուստան.  
Քըսան տարուց, էշխի ընկած, լալ կը ծախեմ սովդաքարին:*

Սայաթ-Նովա անունն ստացել է լավ երգելու համար, որ թարգմանաբար նշանակում է երգի որսորդ: Նրա գրական բուռն գործունեությունն ընդգրկել է 1753-1759 թվականները:

Պալատում նա եղել է 1742 (կամ 1744) թվականից մինչև 1752 թվականը: Պալատական դավերն ստիպել են նրան միառժամանակ հեռանալ այդ միջավայրից: Այդ կապակցությամբ նա գրում է «**Դուն էն գլխեն իմաստուն իս...**» և «**Յիս կանչում եմ լալանին**» խաղերը: 1754 թվականի գարնանից նա վերստին պալատում էր, բայց այլևս չդիմանալով իր շուրջ հյուսված խարդավանքներին՝ 1759-ին վերջնականապես հեռանում է այդ միջավայրից: Այսինքն՝ նորից նրան վտարում են: Պարույր Սևակը տեսակետ է հայտնում, թե Սայաթ-Նովային պալատից վտարել են 1760-ից հետո, ամենայն հավանականությամբ՝ 1762-ին: Բայց քանի որ Սայաթ-Նովայի ավագ որդու՝ Մելիքսեթի ծննդյան թվականը համարվում է 1760-ը, ուստի ավելի հավանական է 1759 թվականը:

1751-ին խաղերից մեկի մեջ իր մասին գրում է.

Դուն չասիս, թե էս խեղճ սագանդարն ո՞վ ա.  
Խոսքիս տերն իմ, հունարըս էլ գրրով ա.  
Արութիւնն իմ, ինձ կոսին Սայաթ-Նովա,  
Հենց բան կոսիմ, վուր ամբերում ձեն հանի:

Մեկ այլ առիթով շարունակվում է. «Սայաթ-Նովեն իմ, ուժըս ձենիս մեջն է»: Սրանք ինքնապաշտպանական տողեր են: Իրեն պաշարած դառնությունների մասին նա գրել է նաև «Արթար դատե...», «Ձեռը վի կալ...», «Իմ խիղճ գլուխ...» խաղերի մեջ.

Արթար դատե, չէ՞ վուր թաքավուր իս դուն,  
Վըրաստանում տեր ու գորավոր իս դուն.  
Մեկն ինձ կոսե՝ «Գընա, մաշված շոր իս դուն»,  
Մեկն էլ կոսե՝ «Մե հոտած ջըրհուր իս դուն...»:

Վո՞ւչ հարսնախոս ունիմ, վո՞ւչ էլ կողակից,  
Մեջլիսումն էլ նուր խաղք արին, ծաղրեցին.  
Յիս ռամիկ իմ, ինձի վուխչ-վուխչ թաղեցին.  
Ում առաջ էլ սրտիս ցավըն մաղեցի,  
Վուխչն ինձ ասին՝ «Մե անպատիվ հյուր իս դուն»:

Ահա և մյուսը.

Ձեռը վի կալ, վադ մարթութին չիմ ուզում.  
Էս աշխարում փարթամութին չիմ ուզում.  
Վադ բան ասիլ, յա վադութին չիմ ուզում,  
Յիս մարդ մարթ իմ՝ նամարդութին չիմ ուզում...  
Յիս ռամիկ իմ՝ թավադութին չիմ ուզում...

Պալատից Սայաթ-Նովայի վտարումը պայմանավորված էր ոչ միայն նրա ընդհարումով վրաց թավադների հետ, այլև վրաց Անտոն կաթողիկոսի: Վերջինս Սայաթ-Նովային գաղափարական մեղադրանք է ներկայացրել: Այդ կապակցությամբ բանաստեղծը գրում է. «Ուղղեցեք կրծքիս մահաբեր հրացանը, // Ինձ սուֆի են կոչում»:

**Սուֆին, սուֆիականությունը** կրոնական ուսմունք էր իսլամի մեջ, սկզբնական շրջանում ուղղված էր պաշտոնական իսլամի դեմ, հետագայում համապատասխանեցվել է պաշտոնական իսլամի պահանջներին: Ստեղծվել են բազմաթիվ միաբանություններ շեյխերի գլխավորությամբ: Այդպիսիք շատ կային նաև Սայաթ-Նովայի ժամանակ:

Պալատից վտարվելուց հետո Սայաթ-Նովան օժվում է քահանա և ստանում տեր Ստեփանոս անունը: Պալատական միջավայրին սովոր երգիչն ու բանաստեղծը Զաքաթալայի



Կախի բնակավայրում դառնում է ծխական քահանա: Որտեղից՝ ուր: Սա արտոր էր, որ ծանր ու հոգեմաշ ապրումների է դատապարտում սիրտն աշխարհի առջև բացած բանաստեղծին:

Նա ամուսնանում է սանահինեցի Մարմարի հետ և ունենում չորս երեխա: 1761-ին եղել է Պարսկաստանի Գիլան նահանգի Էնզելի նավահանգստային քաղաքի հայկական եկեղեցու քահանա: Այստեղ նա արտագրել է Գրիգոր Նարեկացու «**Մատյան ողբերգության**» պոեմը, ինչը ենթադրում է, որ նա խորացրել էր իր գրագիտությունը: 1768-ին՝ կնոջ մահից հետո, դարձել է կուսակրոն, ստացել վարդապետի աստիճան և մինչև կյանքի վերջը ծառայել Հաղպատի վանքում: Ծանր ու տխուր կյանք, ինչի վկայությունն այս տողերն են.

*– Հաղպատու լուսարար Սայաթ-Նովան իմ,  
Մե կանթեղիս վառելու ձեթ չունիմ:*

Ըստ ավանդական տեսակետի՝ Սայաթ-Նովան մահացել է 1795 թվականին՝ եկեղեցում ապաստանած ժողովրդի հետ մեկտեղ զոհ գնալով պարսից Աղա Մահմեդ խանի արշավանքներին:

Սայաթ-Նովան թաղվել է Թիֆլիսի Սուրբ Գևորգ հայկական եկեղեցում: Հովհաննես Թումանյանի և նկարիչ Գևորգ Բաշինջաղյանի նախաձեռնությամբ 1914-ին նրա գերեզմանին կառուցվել է մահարձան և մայիս ամսվա վերջին կիրակին հռչակվել Վարդատոնի օր: Այդ օրը վարդեր են դնում նրա գերեզմանին, հնչում են նրա երգերն ու բանաստեղծությունները:

Սայաթ-Նովայի թոռը՝ քահանա տեր Մովսեսը, 1848-ին պապի «**Դավթար**»-ը՝ բանաստեղծությունների ձեռագիր ժողովածուն, տրամադրել է թիֆլիսցի բժիշկ Գևորգ Ախվերդյանին: Ահա նա էլ 1852 թվականին լույս է ընծայել Սայաթ-Նովայի խաղերի ժողովածուն: Հետագայում հայտնաբերվել են նոր գործեր, որոնց ընդհանուր թիվը հասնում է 222-ի:

Սայաթ-Նովան եզակի դեմք է համաշխարհային գրականության մեջ, որովհետև միաժամանակ գրել է երեք լեզուներով՝ հայերեն, վրացերեն և թուրքերեն: Հայերեն նա գրել է Թիֆլիսի բարբառով: Նրա լեզուն, որն աշխարհաբար հայերենն է, հագեցած է արևելյան բառապաշարով:

Իր բուն կոչումով Սայաթ-Նովան եղել է աշուղ: Այդ բառը թարգմանվում է սիրահար (արմատը էշխ՝ սեր բառն է), իսկ ըստ էության նշանակում է բանաստեղծ, երաժշտություն հորինող և կատարող: Իր գործերին նա տվել է **խաղ** բնորոշումը՝ որպես աշխարհիկ երգ, դրանք տարբերակելով տաղից՝ որպես հոգևոր երգ: Այդ կապակցությամբ գրել է.

*Մեջլիսներու խաղըն դուն իս,  
Վանքերումըն տաղըն դուն իս...*

Այսինքն՝ խաղն ուրախ հանդեսի համար է, տաղը՝ վանքերի՝ որպես հոգևոր երգ: Խաղ եզրույթն ունի ժողովրդական ծագում՝ խաղ ասել (երգել), խաղալ (խաղ իմաստից բացի նշանակում է նաև պարել): Այս եզրույթով ենք բնորոշում նաև ժողովրդական խաղիկները:

Սայաթ-Նովան գրել է արևելյան բանաստեղծության այն ձևերով, որոնք կոչվում են գազել և մուխամազ:

**Գագելը** երկտող տներով բանաստեղծություն է՝ երկրորդ կիսատողի կրկնությամբ առաջին տան մեջ և մյուս տների երկրորդ տողերում: Այդ կրկնվող արտահայտությունը խոսքին հաղորդում է որոշակի իմաստային և հուզական ուղղվածություն:

**Մուխամազ** արաբերեն նշանակում է հնգապատկված, վերաբերում է և տան մեջ տողերի քանակին, և բանաստեղծության մեջ տների քանակին, որոնք պետք է լինեն հինգական: Սայաթ-Նովան միշտ չէ, որ պահպանել է այս պահանջը: Մուխամազն ունի կրկնաբերումների տարատեսակ ձևեր, որոնք խոսքին հաղորդում են ճոխություն, երաժշտականություն և կշռոյթային ամփոփվածություն:

Որպես բանաստեղծ Սայաթ-Նովան ձևավորվել է միջնադարյան հայ պոեզիայի և պարսկական ու աշուղական արվեստի ավանդույթներով: Նա ծանոթ էր Նարեկացու, Ֆրիկի, Նաղաշ Հովնաթանի ստեղծագործություններին, գիտեր **«Աստվածաշունչ»**-ը:

Սայաթ-Նովան սիրային քնարերգության խոշորագույն ներկայացուցիչ է: Սերը նրա համար կեցության հիմքն է և աշխարհի գեղեցկության իմաստը: Սիրո միջով էլ նա նայում է աշխարհին՝ բացահայտելով և իր՝ բանաստեղծի կերպարը, և իր ապրած կյանքի ու ժամանակի իմաստությունը:

Սայաթ-Նովայի սիրային խաղերի մեծ մասը գոզալի կերպարանքով մարմնավորված գեղեցկուհու գովքն է ու փառաբանությունը: Դրանք ասես գեղանկար լինեն՝ կնոջ արտաքին գեղեցկությունը զարդարող ճոխ մակդիրներով ու համեմատություններով:

Սայաթ-Նովայի սիրային քնարերգության հիմքում ընկած են մարդկային խոր հոգեբանական ապրումներ, որտեղ կա և սպասում, և կարոտ, և թախիծ, և հանդիպման բերկանք, և տառապանք: Այդ սիրո առարկան որքան տեսանելի է նրան, նույնքան էլ անհասանելի է: Գոզալը նրա համար **«ուրիշ յար»** է, նրա նմանը աշխարհում չկա: Իր սիրո խոստովանությունների մեջ բանաստեղծը շատ անմիջական է, նա այնքան հպարտ է իր գոզալի գեղեցկությամբ, որ ուզում է իր սիրո մասին աշխարհն իմանա:

## ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ՄԱՍԻՆ

Եվ ինչ գեղեցիկ է, ճշմարիտ, որ էսպես է մեր վիթխարի Սայաթ-Նովան՝ մի հոյակապ սիրահար է, բռնկած ու բռնված սիրո հրդեհով, նրա լույսի տակ էլ նկատում է աշխարհն ու իրերը, զգում է, որ էրվում է, վերջանում է ինքը, բայց մնում է արի ու բարի, անչար ու անաչառ, վեհ ու վսեմ, որպես աշխարհքի ու մարդու մեծ բարեկամը, հաստատուն սիրով և դեպի էն «զուլումը», որ իրեն կրակ տվեց ու միշտ մնաց անտարբեր, և դեպի նրանց, որոնք չորս կողմից տաքացան ու հրճվեցին էն կրակով, որի մեջ էրվում էր ինքը, և դեպի նրանց, որոնք հազար ու մի տեսակ իրեն վշտացրին կյանքում: Զայրացավ, բայց երբեք չհարացավ, ցավեց, բայց երբեք չանհիծեց:

*Հովհաննես Թումանյան*

Ոսկե բառեր, անգին քարեր, լալ ու գոհար շարել ես դու.–

Քեզ միայն քո յարն է վառել,– քանի՛ յարեր վառել ես դու:–

Ո՞ր շահն ունի այդքան ոսկի ու անգին քար, Սայաթ-Նովա, –  
Զի՛ ունեցել քեզ պես շռայլ խալիսը նոքար, Սայաթ-Նովա:

*Եղիշե Չարենց*

Սայաթ-Նովայի խաղերն ամենից շատ հիշեցնում են Շեքսպիրի սունետները:  
Սայաթ-Նովան զարմացնելու չափ նման է Շեքսպիրին:  
Կատարյալ է Սայաթ-Նովայի արվեստը:  
Սայաթ-Նովան ազգային է Գողթան երգիչների չափ:  
*Պարույր Սևակ*



## ԲԱՌԱՐԱՆ

- մահտեսի** – ուխտավոր, այն անձը, ով եղել է Երուսաղեմում, այցելել է Քրիստոսի գերեզմանին, ասում են նաև հաջի
- ուստաքար** – վարպետ, ում մոտ արհեստ են սովորում
- ղալամ** – գրիչ
- «**Քըսան տարուց էշխի ընկած, լալ կը ծախեմ սովդաքարին**» – այսինքն՝ սիրով տարված՝ աշուղություն են անում
- սազանդար** – սազ նվագող, երաժիշտ
- հունար** – հմտություն
- յա** – կամ
- մարդ մարթ իմ** – ազնիվ, շիտակ մարդ են

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Բնութագրե՛ք Սայաթ-Նովային:
2. Ե՞րբ և որտե՞ղ է ծնվել Սայաթ-Նովան:
3. Ըստ «Փառք Արարչին...» խաղի՝ ներկայացրե՛ք նրա կենսագրությունը մինչև 28 տարեկանը:
4. Որտե՞ղ է անցել Սայաթ-Նովայի կյանքի և գործունեության առաջին շրջանը:
5. Որտե՞ղ է անցել Սայաթ-Նովայի կյանքի և գործունեության երկրորդ շրջանը:
6. Որպես բանաստեղծ, երաժիշտ և կատարող ինչպե՞ս կբնորոշեք Սայաթ-Նովայի տեղն ու դերը հայ գրականության պատմության մեջ:
7. Ի՞նչ լեզուներով է ստեղծագործել Սայաթ-Նովան և ինչո՞ւ:
8. Ի՞նչ պալատական դավերի մեջ է ներքաշվել Սայաթ-Նովան և ի՞նչ խաղերով է արտահայտել իր վրդովմունքը:
9. Պալատից հեռանալուց հետո ի՞նչ էր անում Սայաթ-Նովան:
10. Ե՞րբ է մահացել Սայաթ-Նովան և որտե՞ղ է թաղվել:
11. Ո՞վ է Սայաթ-Նովայի ժառանգության առաջին ուսումնասիրողն ու հրատարակիչը:
12. Ի՞նչ տարբերություն էր Սայաթ-Նովան դնում տաղի և խաղի միջև:
13. Բնութագրե՛ք գազելն ու մուխամազը՝ որպես Սայաթ-Նովայի օգտագործած գրական տեսակներ:
14. Ովքե՞ր և ի՞նչ խոսքերով են գնահատել Սայաթ-Նովային:
15. Ովքե՞ր են հիմնադրել Վարդատունը և ի՞նչ է այն:

Աշխարհումըս ախ չիմ քաշի, քանի վուր ջան իս ինձ ամա.  
Անմահական ջըրով լիքըն օսկե փընջան իս ինձ ամա.  
Նըստիմ, վըրես շըվաք անիս՝ զարբաք վըրան իս ինձ ամա.  
Սուչս իմացի, էսենց սըպանե՝ սուլթան ու խան իս ինձ ամա:

Մեչկըտ սալբու-չինարի պես, ռանգըտ Փըռանգի ատլաս է,  
Լիզուտ շաքար, պըռոշըտ դանդ, ակռեքըտ մարքրիտ ալմաս է.  
Օսկու մեչըն մինա արած, աչկիրըտ ակնակապ թաս է.  
Պատվական անգին ջավահիր, լալ-Բադեշխան իս ինձ ամա:

Յիս էս դարդին վոնց դիմանամ՝ մական սիրտըս ունիմ քարած,  
Արտանունքս արուն շինեցիր, խիլքըն գըլխես ունիմ տարած,  
Նուր բաղ իս, նուր բաղչի մեչըն՝ բոլորքըտ վարթով չափարած.  
Վըրետ շուռ գամ բըլբուլի պես՝ սիրով սեյրան իս ինձ ամա:

Քու էշխըն ինձի մաստ արավ. յիս զարթուն իմ, սիրտս է քընած.  
Աշխարս աշխարով կըշտացավ, իմ սիրտըս քիզնից սով մընաց.  
Յար, քիզ ինչո՞վ թարիփ անիմ՝ աշխարհումըս բան չը մնաց.  
Կրակե, ծովեմեն դուս էկած, ռաշ ու ջեյրան իս ինձ ամա:

Ինչ կուլի մեկ հիդըս խոսիս, թե վուր Սայյաթ-Նովու յար իս,  
Շուղկըտ աշխարըս բըռնիլ է՝ արեգագի դեմըն փար իս.  
Հուտով հիլ, միխակ, դարիչին, վարթ, մանիշակ, սուսանբար իս,  
Կարմըրագուն՝ դաշտի ծաղիկ, հովտաց շուշան իս ինձ ամա:



## ԲԱՌԱՐԱՆ

**ջան** – այստեղ՝ հոգի, կյանք

**ամա** – համար

**փընջան** – թաս, բաժակ

**շվաք** – ստվեր, հովանի

**զարբաք** – ոսկեկար մետաքս

**սուչ** – մեղք, հանցանք

**սալբի** – նոճի

**չինար** – սոսի

**ռանգ** – գույն

**փռանգ** – ֆրանկ՝ ֆրանսիական, ընդհանուր իմաստով՝ եվրոպական

**ատլաս** – կերպաս (մետաքսե սատին)

**դանդ** – բաց վարդագույն շաքար

**ակռա** – ատամ

**մարքրիտ** – մարգարիտ

**ալմաս** – ալմաստ, ադամանդ

**մինա արած** – էմալած, **մինա** – էմալ, արծնապակի, դրա կապույտ և այլ երանգներով զարդարում էին ոսկե զարդերը

**ակնակապ թաս** – թանկարժեք քարերով զարդարված թաս  
**ջավահիր** – գոհար, ադամանդ  
**լալ-Բադեշխան իս ինձ ամա** – Բադեշխանի լալ ես ինձ համար, **լալ** – թանկագին քար, իսկ Բադեշխանը վայր է Հինդիկուշի լեռներում  
**մակամ** – միթե  
**էշխ** – սեր  
**մաստ արավ** – հարբեցրեց  
**թարիփ անել** – գովել, մեծարել  
**ռաշ** – հրեղեն ձի  
**ջեյրան** – եղջերու  
**հիդըս** – ինձ հետ  
**շովսքըտ** – շողքդ  
**փար** – պերճ, ճոխ, շքեղ  
**հիլ** – բուրավետ համեմունք

Ներկայացնում ենք այս խաղի աշխարհաբար փոխադրությունը ևս, ինչը կօգնի ավելի լավ հասկանալու բնագիրը:

Աշխարհումս անի չեմ քաշի, քանի որ ջան ես ինձ համար.  
Անմահական ջրով լիքը ոսկե փնջան ես ինձ համար.  
Նստեմ վրաս շվաք անես՝ մետաքս վրան ես ինձ համար.  
Մեղքս իմանցիր, հետո՛ սպանիր՝ սուլթան ու խան ես ինձ համար:

Մեջքդ՝ նոճի-չինարի պես, գույնդ ֆրանկի ատլաս է.  
Լեզուդ՝ շաքար, շուրթդ՝ մեղր, ակռեքդ մարգրիտ ավմաս է.  
Ոսկում արծնապակի արած, աչքերդ ակնակուռ թաս է.  
Պատվական անգին ադամանդ, լալ-Բադեշխան ես ինձ համար:

Ես էս ցավին ռնց դիմանամ, միթե սիրտ ունեմ քարացած,  
Արտանուքս արյուն շինիր, խելքս՝ գլխումս շվարած,  
Նոր պարտեզ ես՝ նոր այգու մեջ, բոլորքդ վարդով շուրջառած.  
Ման գամ շուրջդ բլբուլի պես՝ սիրով սեյրան ես ինձ համար:

Քո սերը ինձ արբեցրեց, ես արթուն եմ, սիրտս է քնած.  
Աշխարհս աշխարհով կշտացավ, իմ սիրտը քեզնից սով մնաց.  
Յան, էլ ինչո՞վ քեզ գովերգեմ՝ աշխարհումս բան չմնաց.  
Ծովից դուրս եկած հրեղեն նժույգ ու ջեյրան ես ինձ համար:

Ինչ կլինի հետս խոսես, եթե Սայաթ-Նովի յարն ես.  
Շողքդ աշխարհը բռնել է՝ արեգակից էլ դու վառ ես.  
Հոտավետ հիլ, մեխակ, դարչին, վարդ, մանուշակ, սուսանբար ես.  
Կարմրագույն դաշտի ծաղիկ, հովտաց շուշան ես ինձ համար:

(Փոխադրությունը՝ Իշխան Ստեփանյանի)

«Աշխարումըս ախ չի քաշի...» հայերեն գրված խաղը Սայաթ-Նովայի գլուխգործոցներից է, բնույթով զուգերգ՝ «Ինձ սիրեցիր, էշխըն ընգար...» գործի հետ մեկտեղ: Մեկի մեջ սիրտը բացում է գոգալը, մյուսի մեջ՝ սիրահարը:

Գոգալը պարզ խոստովանում է. «Ինձ սիրեցիր, էշխըն ընգար, խաղի դավթար իմ քիզ ամա»: Սայաթ-Նովան անընդհատ մահ ու գերեզման է փնտրում՝ այլևս չդիմանալով սիրո ցավին: Դրան ի պատասխան գոգալն ասում է. «Յիս քու մահըն վհնց կու խընդրիմ նուղլ ու շաքար իմ քիզ ամա»:

Գոգալը վախ ունի, թե սիրահարը իրեն կթողնի. «Թաք ուրիշ գոգալ չըսիրիս...», և ավելացնում է. «Թեգուզ աշխարըս պտուտ գաս՝ չիս տեսնի ինձ պես ազիզ»: Այնուհետև. «Թեգուզ անմահություն ուզիս, սիրով կու ճարիմ քիզ ամա»: Գոգալն այսպես բացում է իր սիրտը սիրահարի առջև և խոստովանում խոստումին հավատարիմ իր հաստատուն սերը.

*Քու դարդըն ինձն պառվեցուց. հմըն ասիմ, Սայաթ-Նովա,  
Մի՛ գրցի ձեռնեմեն ձիռըն՝ օսկե թաս իմ, Սայաթ-Նովա.  
Փռանգրստանու միչեն էլած՝ զար ատլասս իմ, Սայաթ-Նովա.  
Ծալե դավթարըտ, ղո՛ւթին դի՛ րանգ ու րուքար իմ քիզ ամա:*



## ԲԱՌԱՐԱՆ

**զար ատլաս** – ոսկե կերպաս

**դավթար** – տետր

**դութի** – տուփ, ծխախոտի տուփ, սնդուկ

**րանգ ու րուքար** – հույս ու ապավեն



Ահա գոգալի սիրո այս խոսքերին ի պատասխան Սայաթ-Նովան ստեղծում է «Աշխարումըս ախ չիմ քաշի...» խաղը՝ ասելով. «...Սուլթան ու Խան իս ինձ ամա», այսինքն՝ ինձ համար աշխարհի տերն ես, ամեն ինչ ես:

Սայաթ-Նովայի այս խաղն ամբողջությամբ փառաբանական սիրերգ է: Սիրո հրդեհի մեջ հայտնված սիրահարն անընդհատ սիրո նոր հավաստիացումներ է պահանջում գոգալից. «Ինչ կուլի մեկ հիդըս խոսիս, թե վուր Սայաթ-Նովու յար իս»:

Սայաթ-Նովան յուրաքանչյուր տողի մեջ փառաբանում է իր գոգալին, հիանում ու հպարտանում է նրանով: Այդ գոգալն ասես քայլող բնություն լինի. նրա մեջքը համեմատվում է ուղղաձիգ, բարակ նոճիի ու սոսիի հետ, նա ասես ծաղկած այգի է՝ վարդի տունկերով երիզված, իսկ ինքը՝ սոխակ, որ պտտվում է նրա շուրջը: Գոգալը

բուրավետ է ծաղիկների ու համեմունքների պես և նրա աչքին երևում է որպես դաշտի կարմրագույն ծաղիկ ու հովիտների ճերմակ շուշան:

Գոզալը համեմատվում է ոչ միայն բնության, այլև թանկագին քարերի հետ: Նա ասես ոսկե թաս լինի՝ լցված անմահական ջրով, նա ոսկեկար վրան է, որ իրեն պետք է հով անի, նրա ատամներն ասես մարգարիտ-ալմաստ լինեն, աչքերը զարդաքանդակի պես ոսկու մեջ են ընդելուզված, նա պատվական անգին քար է, Բաղեշխանի գոհար:

Կան նաև համեմատության այլ եզրեր, նրա լեզուն անուշ է շաքարի պես, շրթունքները վարդագույն քաղցրություն են, նա ասես ծովից դուրս եկած հրեղեն ձի լինի կամ եղնիկ:

Համեմատություններից բացի, այս խաղի մեջ Սայաթ-Նովան առատորեն օգտագործել է նաև մակդիրներ, ինչպես՝ *անմահական ջուր, զարբաբ վրան* և այլն: Ընդհանրապես Սայաթ-Նովայի լեզուն ճոխ է ու շքեղ և հագեցած է աշուղական պոեզիային բնորոշ արևելյան թանձր գույներով:

Ամբողջ տաղը գոզալի գովքն է ու փառաբանությունը, բայց այդ սիրո մեջ նա տխուր է.

*Յիս էս դարդին վոնց դիմանամ՝ մակամ սիրտըս ունիմ քարած.  
Արտասունքս արուն շինեցիր, խիլքըն գըլխես ունիմ տարած...*

Այնուհետև՝ հաջորդ տան մեջ.

*Քու էշխըն ինձի մաստ արավ. յիս զարթուն իմ, սիրտս է քընած.  
Աշխարս աշխարով կըշտացավ, իմ սիրտըս քիզնից սով մընաց:*

Ահա այսքանից հետո է, որ նա վերստին խնդրում է, որ գոզալը, ով արեգակի դիմաց ասես մի նոր արեգակ լինի, իր հետ խոսի, իրեն անընդհատ խոստովանի իր սերը:

Սայաթ-Նովայի այս խաղը բարձր ու մեծ սիրո օրհներգ է՝ արժանի թե՛ ստեղծողին, թե՛ գեղեցկուհուն՝ անկրկնելի գոզալին, ով եղել է իրական անձնավորություն, ըստ որոշ կարծիքների՝ նա վրաց արքայադուստր Աննա Բատոնիշվիլին է:



## ԲԱՌԱՐԱՆ

**նուղլ** – արևելյան քաղցրեղեն, շաքարի մի տեսակ

**թաք** – միայն

**ագիզ** – սիրելի, թանկագին

### ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Սայաթ-Նովայի «Աշխարումըս ախ չիմ քաշի...» խաղից բացի կարդացե՞ք նաև «Ինձ սիրեցիր, էշխըն ընգար...» գործը և պարզե՞ք՝ ինչ կապ կա դրանց միջև:
2. Ինչ է զուգերգը: Այս երկու խաղերի մեջ ովքե՞ր են միմյանց հետ խոսում և ինչ են ասում իրար:
3. Ինչպե՞ս է գոզալը խոստովանում իր սերը:
4. Ինչ ապրումներով է Սայաթ-Նովան բացահայտում իր սերը գոզալի հանդեպ:
5. Ինչի՞ հետ է գոզալին համեմատում Սայաթ-Նովան: Առանձնացրե՞ք համեմատությունները:
6. Առանձնացրե՞ք մակդիրները:

## ԲԱՆԱՍՏԵՂՇԱԿԱՆ ԱՐՎԵՍԸ

Լինելով սիրային քնարերգության խոշորագույն ներկայացուցիչ՝ Սայաթ-Նովան նաև իր սիրերգության գլխավոր հերոսն է, ներկա է իր խաղերի գործողություններին որպես մարդ-բանաստեղծ-երգիչ-աշուղ:

Սայաթ-Նովայի սիրային խաղերի մեծ մասը գոգալի կերպարանքով մարմնավորված գեղեցկուհու գովքն է ու փառաբանությունը: Դրանք **բառանկարներ** են՝ համարժեք գեղանկարների: Սայաթ-Նովայի պատկերները ոչ միայն խոսքով են ներգործում, այլև շատ տեսանելի են, որոնք կարող են վերածվել նկարաշարի:

Պատկերավորման հիմնական միջոցը համեմատությունն է: Այդ նպատակով բանաստեղծը դիմում է արևելյան գունեղանգին բնորոշ **զարդանախշերի**՝ ծառ ու ծաղիկ, թռչուններ ու կենդանիներ, անուշահոտ բույրեր ու վառ գույներ: Ծաղկած այգին թե՛ արևելյան պոեզիայի և թե՛ հայ միջնադարյան տաղերգության գլխավոր խորհրդանշաններից մեկն է՝ անպակաս նաև Սայաթ-Նովայի խաղերից: Գոգալը զբոսնում է ծաղկած այգում, այդտեղ է նաև նրա ու սիրահարի հանդիպման վայրը: Այս ծաղկունքի մեջ մի ծաղիկ էլ գոգալն է, ում ասում է. «*Հուտըտ աշխարըս բռնիլ է*»: Այդպես բառերի միջոցով տողերը վերածվում են զարդաքանդակի:

Բանաստեղծը կերտում է ոչ թե անշարժ դիմապատկեր, ինչպես կտավի վրա է, այլ շարժուն ու կենդանի մի էություն՝ դեմքի գծագրությամբ ու գույնով, աչքերի մոգական դյուբանքով, մազերի ճոխ թափվածքով, իրանի նրբագեղ դրվածքով, բերանի բացվածքով, շրթունքների խաղով, ճոխ հագուկապով, զարդեղենով ու քայլվածքով: Այդ գեղեցկուհուն նա դիմում է *գոգալ, գովելի, նազանի, յար, զուլում (անգույթ), բեմուրվաթ (անողորմ), ազիզ (սիրելի, թանկագին, հոգյակ)* բառերով:

Բանաստեղծի և գոգալի հարաբերության նախադրյալը ոգեղեն սերն է, այդ գեղեցկությամբ ապրելու անդիմադրելի պահանջը, այդ գեղեցկությամբ տարվելու, հիանալու, հպարտանալու ոգևորությունը: Այդ անկեղծ խանդավառությամբ են գրված «**Պատկիրքըտ դալամով քաշած...**», «**Դիրա ու ենգիդունյա**», «**Յիս կանչում իմ լալանին**», «**Էսօր իմ յարին տեսա...**», «**Ձենըտ քաղցր ունիս...**» խաղերը:

Բառերի թունդ զգացողություն ու ներգործություն առաջացնելու նպատակով Սայաթ-Նովան դիմում է բառապատկերային, բառահնչյունական խտացումների, շռայլ ու շքեղ կրկնաբերումների:

Համեմատությունների մի ամբողջ շքահանդես է «**Ձենըտ քաղցր ունիս...**» խաղը.

*Ղո՛ւմաշ ասիմ՝ շուրեղեն է, կու մաշվի,  
Սա՛լբի ասիմ՝ ախըր մին օր կու տաշվի,  
Ջե՛յրան ասիմ՝ շատ մարթ քիզիդ կու յաշվի,  
Բաս վո՛ւնց թարիփ անիմ, մարա՛ իս, գոգալ:*

Համեմատությունների այս տեղատարափը շարունակվում է հոգեբանական նոր ապրումներով. «*Գուզիմ թե համաշա դըռանըտ գամ ուխտ*»: Այս տեսակետից մի անթերի կատարելություն է «**Թամամ աշխար պըտուտ էկա...**» խաղը: Գովք ու

գեղեցկություն և հոգեբանական մի նոր վիճակ՝ «Էշխեմետ հիվանդացիլ եմ...»։ այսինքն՝ սիրուցդ հիվանդացել եմ, սիրո հիվանդ եմ, ում պետք է բուժել միայն սիրով։

Գոգալի կերպարանքն անընդհատ **վառ գույների** մեջ է. «Բարգ էրեսըտ՝ կըրակ նընգած օսկու նման ջիռանում է... // Ով չէ տեսի, տիստ է ուզում, ով տեսնում է՝ միռանում է»։

Սայաթ-Նովան վարդի ու բլբուլի սիրո երգիչ է, այդ պատկերները ոչ միայն անպակաս են նրա պոեզիայից, այլև ամբողջ ստեղծագործության պատկերային հիմքն են։

Այս ամենով հանդերձ **ինչ է սերը ըստ Սայաթ-Նովայի**. «Էշին վառ կըրակ է՝ էրվելով գու քա», սերը մարդուն կստիպի ինչ ասես անել, սերը հազար տեսակ ձևեր ունի, զորավոր է ամեն ինչից։ Սիրահարը մշտապես գերված, տարված, հիացած, խանդավառված է և ամեն կերպ փորձում է մոտենալ գոգալին, անընդհատ նայել ու խոսել նրա հետ.

*Հենց իմացար սոված էի, լի սեղանի համա էկամ,  
Քիզիդ խոսիլ էի ուզում՝ մողըտ դամի համա էկա,  
Ասի, քիզիդ լուսացընիմ, ուրախ ժամի համա էկա,  
Մոռացիլ իմ... լավ միտս չէ, թե ինչ բանի համա էկա...*

Սրանք հոգեբանական շատ նուրբ անցումներով գրված տողեր են. սիրեկանին գոգալի դուռն է բերել նրա հետ հոգեպես մերձենալու, նրա հետ հաճելի մի պահ անցկացնելու ցանկությունը։

Այգին մեկ տարի չտեսած բլբուլի պես սիրահարը կարոտից լաց է լինում, անգամ խանդի զգացումներ ունենում. «Դուն ուրիշի հիդ մի խոսի»։ Սիրո վերջնական նվիրումն ու անցողիկ կյանքի իմաստը Սայաթ-Նովային հասցնում են իր ոգեղեն տարերքի գագաթնակետին՝ ստեղծելով այսպիսի շքեղ ու խորիմաստ տողեր.

*Յիս էլ ուրիշ յար չիմ սիրի, աշխարումըս դուն իս իմըն.  
Թե մե շափաթ քիզ չիմ տեսնի, կու կըտրիմ քամանչիս սիմըն.  
Թեգուզ թաքավուրըն կանչե, թեգուզ Լողմանի հեքիմըն՝  
Վո՛ր մե դարդս կու հասկանան դուգունըս դադին կարոտ է։*

*Գիշեր-ցերեկ ման իմ գալի՝ էշխետ, յանա-յանա, գո՛գալ.  
Անգաճ արա, մատաղ իմ քիզ, մե քիչ կամանց գնա, գոգալ։  
Աշխարըս ո՛ւմն է մընացի, վուր ինձ ու քիզ մընա, գո՛գալ,  
Մակամ միռնվ Սայաթ-Նովան. անգաճըտ խաղին կարոտ է։*

Սիրահարի «մեղքն» անմնացորդ սիրո մեջ է, ինչն էլ սիրո ցավի տեր է անում նրան։ Սայաթ-Նովան գեղեցկությունը սեր է դարձնում՝ մարմնի մեջ վառում ոգու լույսը։ Այդքան բարձր նվիրում, գեղեցկուհու այդպիսի բացառիկացում, այդպիսի գովք ու փառաբանություն չի ստեղծել և ոչ մի հայ բանաստեղծ։ Սայաթ-Նովան եզակի է ու անփոխարինելի։

Սիրահար բանաստեղծի հետ մեկտեղ Սայաթ-Նովան ստեղծում է **մարդ բանաստեղծի կերպարը**։ Այս տեսակետից անզուգական են «**Դուն էն գլխեն իմաստուն իս...**», «**Աշխարըս մե փանջարա է...**» խաղերը։ Բերենք երկու տուն առաջինից.

Ամեն մարթ չի կանա խըմի՝ իմ ջուրն ուրիշ ջըրեն է.  
Ամեն մարթ չի կանա կարթա՝ իմ գիրըն ուրիշ գըրեն է:  
Բունհաթս ավագ չիմանաս՝ քարափ է, քարուկըրեն է՝  
Սելավի պես, առանց ցամքիլ, դուն շուտով խարաբ մի անի:

Քանի գուզե քամին տանե՝ ծովեմեն ավագ չի պակսի.  
Թեգուզ ըլիմ, թեգուզ չըլիմ՝ մեջլիսներուն սագ չի պակսի,  
Թե կու պակսիմ, քիզ կու պակսիմ՝ աշխարհս մե մագ չի պակսի.  
Սայաթ-Նովու գերեզմանըն Հինդ, Հաբաշ, Արաբ մի անի:

Գեղարվեստական այլազան միջոցներից առանձնացնենք նաև բանաստեղծական հնչյունաբանությունը: Սայաթ-Նովան **հանգի** վարպետ է: Նա հասնում է թե՛ **վերջնահանգի**, թե՛ **ներքին հանգի** անթերի հնչողության: Ներդաշնակության զգացողությունն ստեղծում է ոչ միայն հարուստ, լիաձայն հանգեր, այլև բարդ հանգեր, երբ ոչ թե հնչյուններ են հանգավորվում, այլ ամբողջական բառեր:

Ահա **հարուստ հանգեր՝** *լաց իս էլի-բաց իս էլի, տանն իս-պասն իս-հաս-նիս-բանն իս, մերանին-մեռանին, սուսանի-կես անի-տեսանի:*

Ահա և **բարդ հանգեր՝** *լալանին-լալ անին, յարանին-յար անին, զայանին-զայ-անին, մերանին-մեր անին, մասանին-մաս անին, դասե դաս-դասեդաս, թաք ավուր-թա քա վուր-թաքավուր, քարա սյուն-քար ասուն-քարասուն* և այլն:

Անսպառ են նաև հնչյունական կուտակումները՝ որպես **բաղաձայնույթ** և **առձայնույթ**: Օրինակ՝ «Արզ իս անում հազարին, // Հա զարբարին, հա զարին», (զ հնչյուն), «Հում կաթնակիր-Աթամի զաթ, նալաթ քու էյթիբարին» (թ հնչյուն), «Ուշկ ու միտկըս խառնվեցավ խուռըն-խուռըն խաղ հանելեն // Ափսուսալու հազար ափսուս, յիս էլ դադա դար ունենամ» (իս և ա հնչյուններ):

Այս ամենը նպաստում է **կրկնությունների** առատությանը. կրկնվում է հնչյունը (տառը), բառը, տողը, արտահայտությունը, կրկնաբառը, հանգաբառը, ուժեղանում է կրկնագրի նշանակությունը: Կրկնությունը մի յուրահատուկ խորհուրդ է հաղորդում խոսքի կշռույթին, այն դարձնում էլ ավելի ներգործող: Այս տեսակետից եզակի է «**Խաս դաշտերում...**» խաղը:

Սայաթ-Նովան հասնում է տողի չափերի՝ **բարդ ոտքի, կիսատողի, հատածի ու դադարի** կատարյալ ներդաշնակության: Կառուցվածքային ձևերից օգտագործում է միջնադարում ընդունված **շղթայակապը** (ինքն ասում է զինջիրլամա), ինչն ստեղծվում է տնից տուն, տողից տող փոխանցվող բառերով: Այդպիսի հնարներ են կիրառվել «**Անգաճ արա բարիթավուր**», «**Աստուճ խիալ արից**» և այլ տաղերում:

Սայաթ-Նովան ունի նաև **հանելուկ** կամ **գաղտնագիր** խաղեր, որոնք պահանջում են նրա խոսքի իմաստը կռահելու հմտություն: Այդպիսին են «**Մըտա էշի քուրեն**», «**Այբ Աստված սիրիս**», «**Այբբբիմըն կարթացիլ իմ**» խաղերը:

Սայաթ-Նովայի **պատկերային մտածողությունն արևելյան ճոխությամբ ու փարթամությամբ հանդերձ նաև շատ նուրբ է**: Գոզալը կին է իր հմայքների մեջ, իր զուգների ու շախուշուխի մեջ, բայց տենչալիորեն ցանկալի լինելով, երբեք չի վերածվում կրքահու, հրդեհ է, բայց ոչ մեղսակաթ ոգի: Այդ նրբությանը նա հասնում է իր խոսքի նկարեն զարդանախշերով, որոնք հյուսված են համեմատություններից, փոխաբերություններից, մակդիրներ-

րից, որոնց օրինակներով հեղեղված են նրա բոլոր խաղերը:

Սայաթ-Նովան **ստեղծեց** նաև **գրական ավանդույթ**. առաջին կիրառողը Գաբրիել Սունդուկյանն էր՝ շարունակելով Սայաթ-Նովայի աշխարհաբարը, այսինքն՝ Թիֆլիսի բարբառը, երկրորդը՝ Եղիշե Չարենցն էր, ով Սայաթ-Նովայի ճանաչմանը ստեղծեց իր «**Տաղարան**» շարքը:

Սայաթ-Նովան ապրող և հոգիներ գերող բանաստեղծ է նաև այսօր: Մեր առջև է՝ «*Մեր հին, բայց միշտ սիրելի, մեր ամենօրյա, բայց և տոնական, մեր ծանոթ, բայց և անզուգական Սայաթ-Նովան*» (Պարոյր Սևակ):



## ԲԱՌԱՐԱՆ

**դումաշ** – մետաքս

**թարիփ անել** – գովել, մեծարել, **թարիփ** – գովք

**մարա** – հեքիաթային վիշապ օձի գլխի անգին քար

**համաշա** – մշտապես

**թամամ** – ամբողջ

**բարգ (բարկ)** – վառ կարմիր

**ջիռանալ** – տաքանալ, **ջեռ** արմատից՝ ջեռուցում, ջերմոց, ջեռակ

**քիզիդ** – քեզ հետ

**սիմ** – երաժշտական գործիքի լար, ընդհանրապես՝ լար

**հեքիմ** – բժիշկ

**դուգունըս դաղին կարոտ է** – վերքս խարանի կարոտ է. վերքը կողքերից շիկացած երկաթով խարանում էին, որպեսզի չտարածվի և արագ բուժվի, **դուգուն** – խարան, **դաղ (դաղել)** – այրել

**յանա-յանա** – տեսակ-տեսակ

**բունիաթ** – հիմք

**մեջլիս** – հանդես, երաժշտական հանդես

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչ եք հասկանում, երբ ասում ենք՝ Սայաթ-Նովան ստեղծել է գոգալի բառանկարներ: Ինչ յուրահատկություններ ունեն Սայաթ-Նովայի բառանկարները և ինչպե՞ս կարելի է դրանք համեմատել գեղանկարների հետ:
2. Իր բառանկարների մեջ գոգալի կերպարն ստեղծելիս ի՞նչ զարդանախշեր է օգտագործել բանաստեղծը:
3. Նկարագրե՛ք Սայաթ-Նովայի կերտած գոգալի կերպարի արտաքինը:
4. Ինչ բառերով է Սայաթ-Նովան դիմում գոգալին:
5. Ինչ է համեմատությունը: Ցույց տվե՛ք Սայաթ-Նովայի համեմատությունների առանձնահատկությունները, ինչը ինչի հետ է համեմատում:
6. Հատկապես ի՞նչ գույներ է օգտագործում Սայաթ-Նովան գոգալի կերպարը կերտելու համար:
7. Ինչ է սերն ըստ Սայաթ-Նովայի: Իսկ ըստ ձե՞զ... Քննարկե՛ք, բանավիճե՛ք:
8. Հոգեբանական ի՞նչ նուրբ անցումների մեջ ենք տեսնում սիրահարին և գոգալին:

9. Ի՞նչ է իրենից ներկայացնում վարդի ու բլբուլի սիրավեպը և ինչպե՞ս է արտահայտվել Սայաթ-Նովայի խաղերի մեջ:
10. Ինչպե՞ս կրնու՞թազրեք Սայաթ-Նովային որպես սիրահար, բանաստեղծ և մարդ:
11. Հիշե՞ք, թե ի՞նչ է հանգը: Անդրադարձե՞ք Սայաթ-Նովայի հանգաբանությա-նը: Առանձնացրե՞ք հարուստ և բարդ հանգեր:
12. Սայաթ-Նովայի խաղերից առանձնացրե՞ք բաղաձայնայնության, առձայնայնության օրինակներ:
13. Կրկնության ի՞նչ ձևեր են բնորոշ Սայաթ-Նովայի խաղերին:
14. Ի՞նչ է շղթայակապը: Ցոյց տվե՞ք Սայաթ-Նովայի խաղերի օրինակով:
15. Ի՞նչ է նշանակում, երբ ասում ենք՝ Սայաթ-Նովան գրել է հանելուկ կամ գաղտնագիր խաղեր:
16. Ովքե՞ր շարունակեցին Սայաթ-Նովայի գրական ավանդույթները և ինչպե՞ս:

# ԽԱՀԱՏՈՒՐ ԱՐՈՎՅԱՆ

1809–1848

*Խաչատուր Աբովյանը հայ նոր գրականության հիմնադիրն է: Նա մեծ լուսավորիչ էր ու մանկավարժ: Նա փոխեց հայ գրականության զարգացման ընթացքը, բերեց նոր լեզու՝ աշխարհաբարը, նոր հերոս՝ ժամանակակից մարդը, նոր պատմական ժամանակաշրջան՝ արդիականությունը: Նա ամեն ինչ արեց, որպեսզի ժողովուրդն իրեն հետաքրքրող գիրք ունենա, և այդ գիրքն արտացոլի նրա կյանքը:*



Խաչատուր Աբովյանը ծնվել է 1809 թվականի հոկտեմբերի 15-ին Քանաքեռ գյուղում (ներկայումս մտնում է Երևանի կազմի մեջ):

Աբովյանների (Ապովենց) տոհմը հայտնի էր և շատ նշանավոր մարդկանց է տվել հայ ժողովրդին: Բնական է, որ այդ տոհմի զավակը պիտի ընթանար ուսման ճանապարհով: Դեռևս չծնված Խաչատուրին ծնողներն ուխտ են անում սվիրաբերել Էջմիածնի վանքին: Ինը-տասը տարեկան հասակում նա դառնում է Էջմիածնի վանքի սան:

1822 թվականին նրան կրթության են տանում Թիֆլիս: Աբովյանը նախ սովորում է վարդապետական վարժարանում, այնուհետև 1824-ին դառնում նորաբաց Ներսիսյան դպրոցի աշակերտ: Նրա սիրելի ուսուցիչն էր բանաստեղծ և մանկավարժ Հարություն Ալամդարյանը: 1826-ին ավարտելով դպրոցը՝ Աբովյանն անմիջապես ծառայության է անցնում Հաղպատի և Սանահինի վանքերում, զբաղվում ուսուցչությամբ:

1826-1828 թվականները ռուս-պարսկական, այնուհետև մինչև 1829 թվականը ռուս-թուրքական պատերազմների տարիներն են: Այդ ընթացքում պատմական մեծ իրադարձություններ են կատարվում՝ 1827 թվականին Արևելյան Հայաստանը Պարսկաստանի ենթակայությունից անցնում է Ռուսական ինքնակալության գերիշխանության ներքո: Աբովյանը պատմական այդ ժամանակի մեջ էր և կատարված իրադարձությունները տարիներ անց պիտի մարմնավորեր «**Վերք Հայաստանի**» վեպում:

1828 թվականին նա վերստին Էջմիածնում էր, իսկ 1829-ին՝ որպես ռուսերենի թարգմանիչ, միանալով Դորպատի համալսարանի պրոֆեսոր Ֆրիդրիխ Պարրոտի գիտական արշավախմբին, սեպտեմբերի 27-ին բարձրանում է Արարատի գագաթը: Այս հանդիպումը ճակատագրական է լինում Աբովյանի կյանքում. Պարրոտը խոստանում է օգնել, որպեսզի նա ուսումը շարունակի Դորպատում:

Աբովյանն ազատվում է Էջմիածնում հոգևոր ծառայությունից և 1830 թվականի հուլիսին մեկնում է Դորպատ (Դորպատը ներկայիս Էստոնիայի Հանրապետության Տարտու քաղաքն է): Կարգավորվում են նրա թոշակի, ճանապարհածախսի հարցերը, և նա հինգ տարի ուսանում է եվրոպական այդ քաղաքի համալսարանում: Սովորում է գերմաներեն, ֆրանսերեն, լատիներեն, խորացնում է ռուսերենի իմացությունը, ուսումնասիրում է գրականություն,

մանկավարժություն, փիլիսոփայություն, նաև բնագիտական և հասարակագիտական այլ առարկաներ: Լեզուների իմացության առումով ավելացնենք, որ Աբովյանը, բացի նշվածներից, տիրապետել է նաև անգլերենին, պարսկերենին, թուրքերենին, քրդերենին: Ծանոթ էր իտալերենին ու վրացերենին:

Վանքի երեկվա դպիրը դառնում է հանրագիտակ, այսինքն՝ տիրապետում է բազմատեսակ գիտելիքների: Նա ուսումնասիրում է նաև եվրոպական արհեստներն ու կենցաղը:

Քաղաքակիրթ և մշակութապես զարգացած եվրոպական միջավայրն իր հերթին հղկում ու բարեկրթում է Աբովյանին: Նրա ընթերցանության գրքերի հեղինակներն էին համաշխարհային հռչակի հասած գրողներն ու իմաստասերները՝ Շեքսպիրը, Վալտեր Սկոտը, Գյոթեն, Շիլլերը, Ժան-ժակ Ռուսսոն, Լեսինգը, Հեգելը, Կանտը: Զբաղվել է թարգմանությամբ՝ թարգմանելով ինչպես գերմաներենից հայերեն, այնպես էլ հայերենից գերմաներեն: Աբովյանն անձնապես ծանոթ էր ռուս բանաստեղծ Վասիլի Ժուկովսկուն, նամակագրական կապի մեջ էր նրա հետ:

1836 թվականի սկզբին Աբովյանը հրաժեշտ է տալիս Դորպատին, լինում Պետերբուրգում, հանդիպում ժամանակի հայտնի մարդկանց և վերադառնում Թիֆլիս, այնտեղից՝ Էջմիածին: Էջմիածինը գրկաբաց չի ընդունում լուսավորության իր առաքյալին, Աբովյանն ստիպված հրաժեշտ է տալիս Էջմիածնին, հրաժարվում է հոգևոր կոչումից և փորձում հնարավորություններն իրականացնել աշխարհիկ կյանքում:

Նա ցանկանում էր զբաղվել մանկավարժությամբ և տարբեր խավերի երեխաների համար հիմնել դպրոց: Դեռ պատանեկան տարիներից նա մի երազանք ուներ՝ «Ապրել և մեռնել հայրենիքի համար»:

Ահա գալիս է հայրենիքին ծառայելու սպասված պահը:

1837-ին նշանակվում է Թիֆլիսի գավառական դպրոցի տեսուչ և զբաղվում ուսուցչությամբ: Միաժամանակ մեկ տարի անց նա հիմնում է պանսիոն՝ գիշերօթիկ դպրոց, և շարունակում մանկավարժական աշխատանքը:

1839-ին Աբովյանն ամուսնանում է Էստոնիայից Թիֆլիս փոխադրված գերմանուհի Յոհաննա Էմիլիե Լոոզեի հետ, ով նրան օգնում է իր հիմնած դպրոցի գործերում:

1943-ից Աբովյանն իր ուսուցչական գործունեությունը շարունակում է Երևանում: Նրա ուսուցման արդյունավետ ձևերից մեկն այն էր, որ աշակերտներին տանում էր զբոսայցերի դեպի Հայաստանի պատմական հուշարձանները:

Իր մանկավարժական հայացքները Աբովյանը շարադրել է «**Պատմություն Տիգրանի**» վեպում՝ հիմքում դնելով բնական դաստիարակության պահանջը:

Շրջելով Հայաստանում՝ նա ավելի մոտիկից է տեսնում հայ ժողովրդի ծանր ու անպաշտպան վիճակը:

1848 թվականի մարտի 11-ին Աբովյանն իր դիմումի համաձայն ազատվում է Երևանի գավառական դպրոցի տեսուչի պաշտոնից, որպեսզի մեկնի Թիֆլիս և ստանձնի Ներսիսյան դպրոցի տեսուչի պաշտոնը:

Բայց կատարվում է անսպասելին:

1948 թվականի ապրիլի 2-ի վաղ առավոտյան Աբովյանը դուրս է գալիս տնից և այլևս չի վերադառնում: Մինչ այդ երկու օր շարունակ նա տխուր ապ-

րումների մեջ էր եղել: Նրան գտնելու հույսերը ոչ մի արդյունք չեն տվել:

Նրա անհայտացման շուրջ ժողովուրդը հյուսել է ավանդազրույցներ, ըստ որոնց՝ իբր նրան սև կառքով աքսորել են Սիբիր, իբր նրան տեսել են Արարատի լանջերին արտասվելիս, իբր նրան սպանել են:

Ինքնասպանության հավանաբար դիմել է՝ փորձելով իրեն նետել Քուռ գետը: Բայց ինքնասպանությամբ կյանքին վերջ տալու վարկածը թերևս պետք է բացառել, որովհետև **«Վերք...»**-ի «Հառաջաբան»-ում ինքը պարզ գրում է. *«Ջուրն ընկնիլ՝ էլ չէի կարող [այսինքն՝ փորձել է], չունքի Աստծո ահը մտքումս, անմեղ քոռփիս ձենը ականջումս էր, սերն ու ծնողական գուրթ՝ ջիգյարումս. ես դինջանայի, էթըմին ո՞վ պահեր»:* *«Աստծո ահն»* ունեցողը ինքնասպանություն չէր գործի, քանի որ դժոխք կզնար:

Այսպես թե այնպես, մեծ գրողն ու լուսավորիչը դարձավ կամ ռուսական ինքնակալության պաշտոնյաների հալածանքի զոհը, կամ այն տարիների խավարչտին Երևանում ծայր առած անձնական դրդապատճառների:

Աբովյանը հայ գրականությունը հարստացրել է բազմատեսակ ստեղծագործություններով, որոնցից գլխավորը **«Վերք Հայաստանի»** վեպն է: Այն լույս տեսավ Աբովյանի անհայտ բացակայությունից տասը տարի հետո՝ 1858-ին: Դաստիարակչական նշանակություն ունեն **«Պարապ վախտի խաղալիքը»** առակների ժողովածուն և **«Պատմություն Տիգրանի»** մանկավարժական վեպը: Գրել է նաև պատմվածքներ (**«Թուրքի աղջիկը»**, **«Առաջին սեր»**), թատերգություն (**«Ֆեոդորա կամ որդիական սեր»**), բանաստեղծություններ, պոեմներ, ինչպես նաև գիտական, ազգագրական ու մանկավարժական աշխատություններ:

Աբովյանն իր առաջին հայրենասիրական ու սիրային բանաստեղծությունները գրել է գրաբար: Դորպատյան օրագրերի վերջին էջերում արդեն իշխում է աշխարհաբարը:

Աբովյանը նոր մարդ էր իր աշխարհայացքով ու նկարագրով, ինչն էլ բնականորեն պետք է արտացոլվեր նրա ստեղծագործության մեջ: Այդ ամբողջ նոր մտայնությունն արտացոլվել է նրա **«Վերք Հայաստանի»** վեպում, իսկ գեղագիտական դիրքորոշումը՝ վեպի **«Հառաջաբան»**-ում:

Աբովյանն ասես մի նոր Խորենացի լիներ: Խորենացին դժգոհում էր մեր նախնիների անիմաստասեր բարքից, ովքեր գրի չառան մեր առաջին պատմությունները, և ինքն էր ուշացումով այդ բացը լրացնում: Այդպես է խոսում նաև **«Վերք...»**-ի ժողովրդական հերոսներից մեկը. *«Ախր մեր ազգը, որ խեղճ ա մնացել, թրի, կրակի եսիր, բոլորի պատճառն էս ա, որ մեզ մի ասող չի՛ ըլում, թե մենք ո՞վ ենք, մեր հավատն ինչ ա, ինչի՞ համար ենք եկել աշխարհ... Երկրումը ինչ պիտի անենք»:*

Ահա այս հարցերի պատասխանը հիմա արդեն պիտի տար նոր օրերի պատմավիպասանը, որովհետև ինչպես Խորենացին, այնպես էլ ազգապահպան մեր ամբողջ գրական ժառանգությունը ժողովրդի գիտակցությունից ջնջվել էր, օտարների ճնշմամբ խզվել էր հիշողության կապը, դեռ ավելին՝ աղավաղվել էր հայ մարդու ազգային կերպարը: Դրան էլ ավելանում էին պատերազմների հաջորդած դժվարությունները, հայերի վերաբնակչությանն ուղեկցող կորուստները, հեռանկարի անորոշությունները և այս անգամ արդեն ռուս իշխանավորների հարկային և այլ կարգի ճնշումները: Ի

պատասխան այդպիսի հարցումների՝ Աբովյանն Աղասու կերպարը ցանկանում էր «մշակել իբրև ժողովրդական վեպ»:

«**Վերք Հայաստանի**» վեպի առաջին տարբերակն Աբովյանը գրել է 1841-ին, հետագայում մինչև 1845 թվականը մշակել և ստեղծել է վերջնական տարբերակը:

Աբովյանը գիրքը վերնագրել է «**Վերք Հայաստանի**», որովհետև ի ցույց է դնում իր ժողովրդի դարավոր վերքերը՝ պետականության կորուստից ու ազգային արժանապատվության ոտնահարումից մինչև հայի ազգային նկարագրի կորուստը, ինչը ինքն այս գրքով ցանկանում է վերականգնել: Ահա այստեղից է նրա աղեկտուր թառանչը. «Վայ էն ազգին, որ աշխարքումս անտեր ա, // Վայ էն երկրին, որ թշնամու գերի ա...» և կոչը՝ «Շունչդ տուր, հոգիդ, բայց քո Հայրենիքը մի տար թշնամյաց...»:

«**Վերք Հայաստանի**» վերնագիրն ունի «**Ողբ հայրենասիրի**» ենթավերնագիր: Ինչո՞ւ վերք, ինչո՞ւ ողբ, երբ Աբովյանը նկարագրում է սպասված պահը՝ հայ ժողովրդի մի հատվածի ազատագրումը պարսկական բռնակալությունից և անցումը Ռուսաստանի գերիշխանության ներքո:

Վերք և ողբ՝ որովհետև գաղութային մի լուծը փոխարինվում է մեկ ուրիշ լուծով: Դրա համար էլ նոր կյանքի արշալույսին նահատակվում է այդ նոր կյանքի համար կռվող Աղասին: Եթե Աղասու հայրը՝ տանուտեր Օհանեսը, պարսկական ժամանակների խորհրդանշական կերպար էր և այդ ժամանակների հետ էլ գնաց (բանտից ազատվելու պահին, տեսնելով որդու մահը, նվաղում-մահանում է), ապա Աղասին, ըստ վեպի գաղափարական զարգացման, պետք է ապրեր և դառնար «ազատագրված» նոր Հայաստանի կառուցողը: Աբովյանն այդպես չի վարվում, որովհետև հստակ գիտակցում էր, որ մի գաղութատիրությունը փոխվում է մեկ այլ բռնատիրությամբ: Ահա այստեղից է հայրենասեր գրողի ողբը և գլխավոր հերոսի գործունեության անակնկալ ընդհատումը:

Իսկ ինչ վերաբերում է «Օրհնվի՛ էն սիսթը, որ ռսի օրհնած ոտը Հայոց լիս աշխարհը մտավ...» և համանման այլ տողերի, ապա դրանք պայմանավորված են



այն ծանր ճնշումներով ու հալածանքներով, որոնց մատնված էին հայերը պարսիկների օրոք: Այդ հատվածում, որպես օրինակ, հիշում է, թե ինչպես Ջանգվի կամուրջի վրայով կամ շուկայի հրապարակով անց կենալիս լուսահոգի հայրը իրեն «*նոտով-ձեռով է արել*», քանի որ հրապարակավ հայերեն խոսելը արգելվում էր, դժբախտության պատճառ դառնում, որովհետև հայերեն խոսելու համար պատժվում էին: Իսկ հիմա քրիստոնյա ռուսը շատ բանով թեթևացրել է հայոց վիճակը, գոնե այնքան, որ կարելի է առանց վախի խաչ հանել և հարագատի հետ մայրենի լեզվով խոսել:

Վեպն ունի իրական կերպարներ, որոնք, բնականաբար, ունեն իրենց նախատիպերը: Այս շարքում են Աբովյանի համար թանկ Աղասին, Հարությունը, Պետրոսը: Հերոս է նաև ինքը՝ Աբովյանը, ով անընդհատ ներկա է գործողություններին: Հիշատակենք նաև հայոց վեհափառ հայրապետ Ներսես Աշտարակեցուն, ռուսական բանակի գեներալ Մադաթովին, զորավար Պասկևիչին:

Աբովյանն իր երկը բնորոշել է «*պատմական վեպ*»: Այո, այն պատմական վեպ է թե՛ պատմական իրադարձություններով, թե՛ պատմական հերոսներով, թե՛ պատմական ճշմարտությամբ, ինչը վերաբերում է հայ ժողովրդի վիճակին:

Գրելով պատմական վեպ՝ Աբովյանը, սակայն, չի դարձել պատմության գերին, որովհետև նա նաև գեղարվեստական ճշմարտության տերն էր: Այդ իսկ պատճառով այս երկը գրված է այն ոճով, որով գրվում են դյուցազներգությունները՝ առատ են չափազանցությունները, ուժի ու հերոսության դրսևորումները:

Աբովյանն իր վեպը ծոնել է Հայկական մարզի վերջին կառավարիչ գնդապետ Գևորգ Սմբատյանին, ով աջակցել է գրողին և վեպի առաջին էջերը կարդալուց հետո նրան անվանել հայ Լոմոնոսով: Գևորգ Սմբատյանը եղել է Աբովյանի մանկության ընկերներից: Նրա վաղաժամ մահով Աբովյանը կորցնում է իր պաշտպաններից մեկին:

## ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՈՎՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Մինչև հիմա Անդրկովկասը չի տեսել այնպիսի ուսուցիչ, ով այնպիսի սիրով և այնպիսի զոհաբերությամբ նվիրված լիներ մանուկների դաստիարակության գործին, ինչպես որ Աբովյանն է...

*Կարլ Կոխ, գերմանացի գիտնական*

Այժմ ինչ պետք է անենք Խ. Աբովյանի արձանի համար: Դա մի տաղանդավոր գրողի արձան չէ, դա մի անհատի արձան չէ, դա հայ ժողովրդի վերքոտ սրտի արձանն է, որ կանգնելու է այնտեղ՝ Արարատի սրբազան դաշտում, սերունդներին ու դարերին ի տես, որ տեսնեն, թե քանի սուր կա ցցված նրա մեջ, քանի դարդ ու ցավ:

Պիտի կանգնի հավիտյան ու անլռելի պատմի աշխարհին հայի տանջանքն ու տենչանքը:

Թող լսեն և երկինքը, և երկիրը: Եվ պետք է լսեն, որովհետև այստեղ արդեն հայի լեզուն չէ, որ խոսում է, բերանը չէ, որ պատմում է, կրակված սիրտն է, որ այրվում է երկիրը բռնած, տանջված հոգին է, որ մռչում է մինչև երկինք:

*Հովհաննես Թումանյան*

Մեկը պիտի ծագեր հայ ժողովրդի հոգուց՝ մի առաքյալ, մի մարգարե, մի մեծ բանաստեղծ, որ ժողովրդին բերեր վերածնունդի իմաստուն պատգամներ, հրեղեն խոսքով խանդավառեր նրա սիրտը, ամրացներ նրա կամքը անձնազոհ հայրենասիրությամբ, լուսավորեր նրա բախտորոշ ճանապարհները դեպի ինքնագիտակցություն, ըմբոստացում, ազատություն:

Աբովյանը ազգային այդ վեհ միսիայի ընտրելագույն պատգամախոսն էր՝ ծնված իսկ Հայաստանի պատմական կենտրոնից՝ Արարատյան դաշտից, ժողովրդի դարավոր ընդերքից:

Աբովյանը խտացումը եղավ հայ ժողովրդի երազանքների, ձգտումների, ցավերի ու տառապանքի, նրա հոգու և իմաստության, նա եղավ հայ ժողովրդի լեզուն, սրտագին լեզուն:

Այնտեղ Հայաստան աշխարհն էր իր տարերային-տիտանային պեյզաժներով, որոնք դարձել են բնապաշտական, կոսմիկական երաժշտություն, օրատորիաներ:

*Ավետիք Իսահակյան*

## ԴԵՊԻ ԼՅԱՌԸ ՄԱՍԻՍ

Դեմը – դաշտն էր անծայր, իսկ հեռվում – Մասիսը,  
Լյառն այն վսեմ, որի ճանապարհով մի օր  
Բարձրացել էր ինքը և սառցանիստ  
Գեղեցկությամբ գերվել:– Եվ այժմ մենավոր  
Նա գնում էր կրկին դեպի հեռուն այն լուրթ,  
Դեպի լյառը անհաս ու վեհանիստ,–  
Դեպի գագաթը բարձր, որ իր ժողովուրդը  
Համարել է հավետ իր գոյության խորհուրդը,–  
Որ ճաշակե այնտեղ հավերժական հանգիստ...

*Եղիշե Չարենց*

Աբովյանն ինքն ապրիլի 2-ի լուսաբացին կամ գիշերը գիտակցաբար է տնից հեռացել, մտքում վճռած լինելով ո՛չ թե ինքնասպանություն, այլ փախուստ այն միջավայրից, որտեղ այլևս ոչ մի կռվան չուներ, և որտեղից նա «հույս չունեի երբևիցե կենդանի դուրս գալու», եթե հեղափոխության լուրը կայծակի նման չճեղքեր շրջապատի խավարը և չխոստանար ազատություն:

### ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Որտեղ և երբ է ծնվել Աբովյանը, որտեղ է ստացել նախնական կրթությունը:
2. 1926–1928 և 1929 թթ. ինչ պատերազմներ են տեղի ունեցել Ռուսաստանի մասնակցությամբ և այդ ընթացքում ու դրանից հետո պատմական ինչ փոփոխություններ են կատարվել:
3. Ո՞վ է ժամանում Էջմիածին, և ո՞ւմ գիտական արշավախմբի հետ է Աբովյանը բարձրանում Արարատ լեռան գագաթը:
4. Որտեղ է Աբովյանը շարունակում իր հետազոտ կրթությունը:

5. Որտեղ է գտնվում Դորպատը, և այսօր ինչպե՞ս է կոչվում այդ քաղաքը:
6. Ի՞նչ առակներ է ուսումնասիրում Աբովյանը Դորպատի համալսարանում և ինչպիսի՞ մարդ էր ուզում դառնալ:
7. Դորպատից վերադառնալուց հետո ի՞նչ գործունեություն է ծավալում Աբովյանը Թիֆլիսում և Երևանում:
8. Ինչպե՞ս է ավարտվում Աբովյանի կյանքի ուղին: Այդ կապակցությամբ ի՞նչ ավանդազրույցներ է ստեղծել ժողովուրդը:
9. Որո՞նք են Աբովյանի հիմնական գեղարվեստական ստեղծագործությունները:
10. Աբովյանի արձանի կապակցությամբ ի՞նչ է ասել Թումանյանը Նրա մասին:
12. Ինչպե՞ս է Աբովյանին բնորոշել Ավետիք Իսահակյանը:
13. «Դեպի լյառը մասիս» պոեմում ինչպե՞ս է Եղիշե Չարենցը գնահատում Աբովյանին և Նրա «Վերք...»-ը, իսկ վերջում ինչպե՞ս է պատկերում Աբովյանի անհայտ բացակայությունը:
14. Աբովյանի կյանքին ու գործունեությանն է նվիրված Ակսել Բակունցի «Խաչատուր Աբովյան» վեպը: Դորպատյան տարիների մասին պատկերացում կազմելու համար կարդացե՞ք համապատասխան գլուխը:

## ՎԵՊ

Վեպի գրական տեսակին մենք արդեն առիթ ունեցել ենք ծանոթանալու 8-րդ դասարանում: Այժմ կրկնենք և խորացնենք գիտելիքները:

Վեպը պատմողական գրական տեսակ է: Այն արձակ մյուս տեսակներից (պատմվածք, նորավեպ, վիպակ) տարբերվում է իր ծավալով և ներքին ընդգրկումով: Վեպերում կյանքը պատկերվում է լայնքով ու խորքով: Այդ իսկ պատճառով վեպերը կարող են գրվել մի քանի հատորով՝ Լև Տոլստոյ («Պատերազմ և խաղաղություն»), «Աննա Կարենինա»), Միխայիլ Շոլոխով («Խաղաղ Դոն»), Ռոմեն Ռոլան («Ժան Զրիստոֆ»), Հակոբ Օշական («Մնացորդաց»): Կարող են լինել վիպաշարեր՝ Օնորե դը Բալզակ («Մարդկային կատակերգություն»), Էմիլ Զոլա («Ռուգոն Մակարներ»), Մարսել Պրուստ («Ի խոյզ կորուսյալ ժամանակների»): Կարող է լինել վեպ-էպոպեա, ինչպիսին Դ. Դեմիրճյանի «Վարդանանք»-ն է, վեպ եռագրություն, ինչպիսին են Հակոբ Օշականի «Հարյուր մեկ տարվան» խորագրով ի մի բերված «Հաճի Մուրատ», «Հաճի Ապտովլահ», «Սյուլեյման էֆենտի» վեպերը և Ստեփան Զորյանի պատմավեպերը՝ «Պապ թագավոր», «Հայոց բերդը», «Վարազդատ»:

Վեպերն ունենում են բազմաթիվ հերոսներ, ճյուղավորվող գործողություններ:

Վեպի ենթատեսակներ թեև եղել են ավելի վաղ շրջանում, բայց համաշխարհային վիպագրության ակունքները գալիս են Ֆրանսուա Ռաբլեի «Գարգանտյուա և Պանտագրյուել», Սերվանտեսի «Դոն Կիխոտ» վեպերից: Վեպը բուն զարգացում է ապրել 18-19-20-րդ դարերում: Այսօր էլ այն ամենագործուն գրական տեսակներից է:

Հայ առաջին վեպը «Վերք Հայաստանի»-ն է, հեղինակի բնորոշմամբ՝ պատմական վեպ: Հայ վիպասանության խոշորագույն ներկայացուցիչներից են Րաֆֆին, Ծերենցը, Պերճ Պողոջանը, Մուրացանը, Շիրվանզադեն, Ավետիս Ահարոնյանը, Նար-Դոսը, Դերենիկ Դեմիրճյանը, Ստեփան Զորյանը, Կոստան Զարյանը, Հակոբ Օշականը, Շահան Շահնուրը, Սերո Խանզադյանը և ուրիշներ:

Համաշխարհային վիպագրության մեջ նշված անուններից բացի, մեծ վաստակ ունեն Դանիել Դեֆոն, Ջոնաթան Սվիֆտը, Ժան Ժակ Ռուսոն, Յոհան Վոլֆգանգ Գյոթեն, Վալտեր Սկոտը, Վիկտոր Հյուգոն, Ստենդալը, Գուստավ Ֆլոբերը, Նիկոլայ Գոգոլը, Ֆեոդոր Դոստոևսկին, Անատոլ ֆրանսը, Չարլզ Դիկենսը, Մարկ Տվենը, Ջեյմս Լոնդոնը, Ջեյմս Զոյսը, Ուիլյամ Ֆոլկները, Էռնեստ Հեմինգուեյը, Վիլյամ Սարոյանը, Ալբեր Կամյուն, Գաբրիել Գարսիա Մարկեսը և շատ ու շատ ուրիշներ:

Վեպն ունի իր տարատեսակները՝ պատմական, կենսագրական, ինքնակենսագրական, սիրային, արկածային, ճամփորդական, գիտաֆանտաստիկ, երգիծական, հոգեբանական, սոցիալական, ընտանեկան և այլն:

**ՊԱՏՄԱԿԱՆ** վեպի հիմնադիրը Վալտեր Սկոտն է, ով գրել է տասնյակ վեպեր՝ նվիրված եվրոպական միջնադարին: Դրանցից են «Քվենթին Դորվարթ»-ը, «Այվենհո»-ն: Պատմավեպեր գրել են Պուշկինը («Կապիտանի աղջիկը»), Հյուգոն («Իննսուներեքը»), Ֆլոբերը («Սալամբո»), Տոլստոյը («Պատերազմ և խաղաղություն»): Հայ գրողներից՝ Րաֆֆին, Ծերենցը, Մուրացանը, Դեմիրճյանը, Խանզադյանը և ուրիշներ:

**ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ** վեպերը նվիրված են լինում նշանավոր մարդկանց կյանքին: Այդպիսին են Անդրե Մորուայի բազմաթիվ վեպերը՝ նվիրված Շելլին, Բայրոնին, Բալզակին, Տուրգենևին, Ժորժ Սանդին, Հյուգոյին, հայր և որդի Դյումաներին: Պուշկինին, Լերմոնտովին, Դոստոևսկուն, Չեխովին նվիրված կենսագրական վեպերի հեղինակ է հայազգի ֆրանսագիր գրող Անրի Թրուայան:

**ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ** են Ժան Ժակ Ռուսոյի «Խոստովանանք», Ժան Պոլ Սարտրի «Բառեր» վեպերը, Լև Տոլստոյի, Լևոն-Ջավեն Սյուրմեյանի, Գուրգեն Մահարու, Ստեփան Զորյանի, Վահան Թոթովենցի, Ջապել Եսայանի առանձին երկեր:

**ՍԻՐԱՅԻՆ** են Գուստավ Ֆլոբերի «Տիկին Բովարի», Լև Տոլստոյի «Աննա Կարենինա», Գի դը Մոպասանի «Սիրելի բարեկամ», «Մահվան պես հզոր», Պերո Պռոշյանի «Սոս և Վարդիթեր» վեպերը:

**ԱՐԿԱԾԱՅԻՆ** վեպերն ունենում են հետաքրքրաշարժ, արագ և անսպասելի գործողություններ: Ունեն գիտաֆանտաստիկ և հետաքննական արձակի տարրեր: Առավել տարածված էր 19-րդ դարում: Արկածային վեպի լավագույն օրինակներ են Դանիել Դեֆոյի «Ռոբինզոն Կրուզո», Մարկ Տվենի «Թոմ Սոյերի արկածները», «Հեքլբերի Ֆիննի արկածները»: Համապատասխան վեպեր են գրել Վիկտոր Հյուգոն, Դյումա հայրը, Ֆենիմոր Կուպերը, Մայն Ռիդը, Ժյուլ Վերնը, հայ գրողներից՝ Րաֆֆին, Վախթանգ Անանյանը և ուրիշներ:

Ժամանակին հայերեն տպագրվել է «Արկածային վեպ»-երի մատենաշար:

**ՃԱՄՓՈՐԴԱԿԱՆ** դասական վեպ է Ջոնաթան Սվիֆթի «Գուլիվերի ճանապարհորդությունները»: Կան նաև ծովային վեպեր, որոնց հեղինակը Ֆենիմոր Կուպերն է:

**ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ** վեպեր են գրել Վոլտերը («Կանդիդ կամ լավատեսություն»), Ժան Պոլ Սարտրը («Սրտխառնուք»), Ալբեր Կամյուն («Օտարականը», «Ժանտախտ»):

**ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ** վեպի օրինակներ են Ժան Ժակ Ռուսոյի «Էմիլ կամ դաստիարակության մասին», Խ. Աբովյանի «Պատմություն Տիգրանի» երկերը:

**ՀՈՒՇԱԳՐԱԿԱՆ** վեպեր գրել են Ջովանի Զիակոմո Կազանովան, Ֆեոդոր Դոստոևսկին, Վիլյամ Սարոյանը և ուրիշներ:

**ԳԻՏԱՖԱՆՏԱՍՏԻԿ** գրականությանը բնորոշ է գիտական որևէ վարկածի երևակայական պատկերումը, հատկապես կապված ապագա զարգացումների կռահումների հետ: Ժյուլ Վերնը իր համապատասխան վեպերն ի մի բերեց «Արտասովոր ճանապարհորդություններ» խորագրով: Նշանավոր են Կոնան Դոյլի, Հերբերտ Ուելսի, Ռեյ Բրեդերիի, Կոբո Աբեի, Այզեկ Ազիմովի վեպերը:

**ԵՐԳԻԾԱԿԱՆ** են Էրազմ Ռոտերդամցու «Գովք հիմարության», Ֆրանսուա Ռաբլեի «Գարգանտյուա և Պանտագրյուել», Ուիլյամ Թեքերեյի «Մնափառության տոնավաճառ», Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ», Երվանդ Օտյանի «Ընտանիք, պատիվ, բարոյական», «Թաղականին կնիկը», «Միջնորդ տեր պապան» վեպերը:

**ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ** բնույթ ունեն Ջեյմս Ջոյսի «Ողիսևս», Ֆրանց Կաֆկայի «Դատավարություն», Նար-Դոսի, Ուիլյամ Ֆոլկների բազմաթիվ վեպերը:

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ** վեպեր են Վիկտոր Հյուգոյի «Թշվառներ»-ը, «Փարիզի Աստվածամոր տաճարը», Բալզակի, Զոլայի, Դիկենսի շատ վեպեր, Պոռչա-նի «Հացի խնդիր»-ը, «Ցեցեր»-ը և «Բղդե»-ն:

**ԸՆՏԱՆԵԿԱՆ** բնույթ ունեն Էմիլ Զոլայի «Ռուզոն Մակարներ» վիպաշարը, Թոմաս Մանի «Բուդենբրոքներ», Շիրվանզադեի «Քաոս» վեպերը:

## ԴԻՊԱՇԱՐ

Բոլոր պատմողական երկերին բնորոշ է դիպաշարը: Դիպաշարի միջոցով ստեղծվում են գործողություններ, որոնք նպաստում են կերպարների բացահայտմանը, ծավալմանն ու զարգացմանը: Հիմնական դիպաշարային գծից բացի, կարող են լինել երկրորդական դիպաշարային գծեր, դիպաշարային շեղումներ, որոնք, սակայն, անպայման լրացնում են հիմնական դիպաշարային գիծը: Դիպաշարն ունի բաղկացուցիչ հինգ մաս՝ նախադրություն, հանգույց, գործողության զարգացում, գագաթնակետ և լուծում:

**Նախադրությունը** նախապատրաստական փուլն է, այլ կերպ՝ երկի մուտքը:

**Հանգույցը** ներկայացնում է գործողությունների հիմնական դրվածքը: Երևում են հերոսները, ուրվագծվում են իրադարձությունները, նախնշվում են զարգացման գծերը:

**Գործողության զարգացում:** Դիպաշարի այս հատվածը երկի ամենածավալուն մասն է: Այստեղ բացվում ու զարգանում են գործողությունները, հերոսներն ամբողջացնում են իրենց հոգեբանական բացահայտումները, ճշտվում և ճշգրտվում են փոխադարձ հարաբերությունները և նախապատրաստվում է ճակատագրական պահը, ինչը հիմնականում վերածվում է բախումի:

**Գագաթնակետը** դիպաշարի զարգացման բարձրագույն աստիճանն է՝ ճակատագրական պահը: Այստեղ նախապես հոգեբանորեն և գաղափարապես զարգացած կերպարներն արդեն կանգնում են անխուսափելի բախումի կամ վճիռ կայացնելու անհրաժեշտության առջև:

**Լուծումը կամ հանգուցալուծումն** արդեն անխուսափելի բախումն է կամ դիրքորոշման ճշգրտումը:

«Վերք Հայաստանի» վեպում դիպաշարի համապատասխան մասերը հետևյալն են:

**Նախադրություն:** Բարեկենդանի նկարագրությունը: Աղասու կերպարի ուրվագծումը: Միջավայրը:

**Հանգույց:** Թագուհուն փախցնելու տեսարանը: Աղասու միջամտությունը, պարսիկ զինվորների սպանությունը և Աղասու փախուստը:

**Գործողության զարգացում:** Աղասին և Նրա շուրջ համախմբված երիտասարդները: Նրանց խմբի մեջ ընդգրկված մարդիկ, նրանց տեղաշարժերն ու գործողությունները: Աղասու հոր ձերբակալությունը: Ռուսական զորքի առաջընթացը: Հայաստանի աստիճանական ազատագրումը պարսիկներից:

**Գագաթնակետ:** Սա արդեն ռուս-պարսկական պատերազմի գլխավոր բախումն է, Երևանի բերդի գրավումը ռուսների կողմից, պարսիկների պարտությունն ու փախուստը: Այդ գործողություններին Աղասու և Նրա խմբի անդամների մասնակցությունը:

**Լուծում:** Աղասու սպանությունը և Աղասու հոր մահը:

Վեպն ունի նաև դիպաշարային ու քնարական շեղումներ, որոնք արտահայտվել են դիպաշարի հիմնական գծից հեռացող գործողություններով, բանաստեղծական միջամտություններով ու խորհրդածություններով:

«Վերք Հայաստանի»-ն ունի նաև առաջաբան («Հառաջաբան») և վերջաբան («Զանգի» հավելվածը), որոնք յուրովի նախապատրաստում և եզրափակում են վեպը:

Առաջաբանը և վերջաբանը պարտադիր կառուցվածքային մասեր չեն: Հատկապես առաջաբաններ գրվում են ըստ անհրաժեշտության (օրինակ՝ Րաֆֆու «Սամվել», Կոստան Զարյանի «Նավը լեռան վրա» վեպերի առաջաբանները): Իսկ վերջաբանները ճուլվում են լուծումին:

«Վերք Հայաստանի» վեպի առաջաբանն ամբողջ հայ նոր գրականության սկզբնավորման հրովարտակն է: Շատ պատկերավոր լեզվով Աբովյանն այստեղ անդրադառնում է ժամանակի գրականության համար խիստ կարևոր նշանակություն ունեցող երեք հիմնահարցի՝

1. լեզուն, որ գրաբարն էր՝ արքայական մի լեզու, բայց, դժբախտաբար, ժողովրդին անհասկանալի, այդ իսկ պատճառով պետք է անցնել աշխարհաբարի,
2. ստեղծագործության նյութը, ինչը պետք է լինի արդիական,
3. հերոսը, ով պետք է ընտրվի ժամանակակից կյանքից, որպեսզի հետաքրքրի ընթերցողին:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ է վեպը: Ի՞նչ կարող էք ասել վեպի մասին:
2. Ըստ ծավալի՝ վեպերն ինչպե՞ս ենք բնորոշում:
3. Վեպի ի՞նչ տարատեսակներ կան: Թվարկե՛ք և բերե՛ք համապատասխան օրինակներ:
4. Ի՞նչ է դիպաշարը: Ի՞նչ բնույթի երկերին է բնորոշ:
5. Որո՞նք են դիպաշարի բաղկացուցիչ մասերը՝ թվարկե՛ք և բնորոշե՛ք:
6. «Վերք Հայաստանի» վեպը ներկայացրե՛ք ըստ դիպաշարի բաղկացուցիչ մասերի:

## ՀԱՌԱՋԱԲԱՆ

Կրեսոս թագավորն Լիդացվոց, երբ Կյուրոս բոլոր աշխարքի տիրեց ու Նրա երկիրն էլ առավ, կռվումը ղոնշուն, սիրելի, բարեկամ, զորապետ՝ Նրան թողեց, ու էն անգին մարգարտի ու ջավահրե ամարաթներում մեծացած **Կրեսոսը**, որ իրանից բախտավոր աշխարքի երեսին էլ մարդ չէր համարում, ընկած մեկ պարսիկ զորականի առաջ, շունչը բերնին հասած՝ փախչում էր, որ իր գլուխն էլա պրծացնի, պարսիկը ետևիցը հասավ: Սուրը գլխին պսպղաց, աչքերը սևացավ, դեռ գլուխը չտված՝ հենց իմացավ, թե մահն, էն ա, հոգին առավ: Հենց ուզում էր, որ իր թուրը իր սիրտը կոխի, որ թշնամին իրան չսպանի, զորականը որ թուրը չի բարձրացրեց, թագավորի միամոր որդին, որ հոր մահը չտեսավ առաջին, քսան տարվա փակ լեզուն իսկույն կապը կտրեց, բաց էլավ, ու քսան տարվա լուռ սիրտը իր առաջին ձենը տվեց.

– Անօրեն, էդ ո՞ւմ ես սպանում, քաշիր թուրդ ետ, չէս տեսնում, որ առաջիդ **Կրեսոս** ա, աշխարքի տերն ա:

Ջորականի ձեռները թուլացան. թագավորն իր գլուխն ազատեց, քսան տարեկան լալ (մունջ) որդին իր հորը պրծացրեց:

Էսքան տարի ողորմելի թագավորազն իր կյանքն անց էր կացրել, ո՛չ ծնողաց էնքան սերը, էնքան գութն ու փափագը, որ Նրա ձենը մի լսեն, մի սիրտները հովանա, ո՛չ էն փառքն ու մեծությունը, ո՛չ էն պատիվն ու իշխանությունը, ո՛չ էն գանձն ու հարստությունը, ո՛չ աշխարքիս սերն ու վայելչությունը, ո՛չ էնքան սիրելյաց ու բարեկամաց սերն ու քաղցր զրիցը, ո՛չ ամպի ձենը, ո՛չ գետի ու թռչնոց էն անուշ եղանակը էնքան վախտ Նրա սրտին էն ներգործությունը չէին տվել, որ մեկ ծպտա էլա, ու իր հոր, իր ազիզ հոր մահը որ առաջին տեսավ, սիրտն էլ իր խուփը ետ քցեց, պապանձած լեզուն էլ իր կապը կտրեց, փակ բերանը իր կսկիծը հայտնեց, կարոտ, վերջին թելն ընկած հերը իր որդու ձենը լսեց, որ լսողի սիրտն էսօր էլ ա կրակ ընկնում, երբ մտածում ա, **թե որդիական սերն** էր, որ բնության դրած զնջիլը էսպես ջարդեց ու փշրեց:

Ո՛չ քսան, երեսուն տարուց ավելի ա, իմ ազիզ հեր, իմ սիրելի անգ, որ սիրտս կրակ ա ընկել, էրվում, փոթթվում ա. գիշեր-ցերեկ լացն ու սուգ իմ աչքիցս, անխն ու ռխը իմ բերնիցս չի պակասում, այ իմ արյունակից բարեկամք, որ մեկ միտքս ու մուրազս ձեզ պատմեի ու հետո հողը մտնեի: Ամեն օր գերեզմանս առաջիս տեսնում էի, ամեն սհաթ մահվան հրեղեն սուրը գլխիս պտտում էր, ամեն թոպեի ձեր սիրտն ու դարդը հոգիս էրում, մաշում էր. լսում էի ձեր քաղցր ձենը, տեսնում էի ձեր սիրուն երեսը, իմանում էի ձեր ազնիվ միտքն ու կամքը, վայելում էի ձեր ազիզ սերն ու բարեկամությունը, մտածում էի ձեր կորցրած փառքն ու մեծությունը, մեր առաջին, էն հիանալի թագավորաց, իշխանաց գործքն ու կյանքը, մեր Հայրենյաց, մեր սուրբ աշխարքի առաջվան սքանչելիքն ու հրաշքը, մեր ընտիր ազգի աննման բնությունը ու արած քաջությունները: **Մասիս** առաջիս էր կանգնած միշտ, որ մատով ցույց էր տալիս, թե ի՞նչ աշխարքի ծնունդ եմ ես. **դրախտը** մտքումս էր կենդանի, որ ինձ, երազում թե լուրջ, միշտ մեր երկրի անունն ու պատվականությունը իմ առաջս էր բերում. Հայկ, Վարդան, Տրդատ, Լուսավորիչ՝ քնած տեղս էլ ինձ ասում էին, որ ես իրանց որդին եմ. Եվրոպա թե Ասիա՝ ինձ անդա-

դար ձեն էին տալիս, թե Հայկա զավակն եմ ես, Նոյյան թոռը, Էջմիածնա որդին, դրախտի բնակիչը. դաշտում թե ժամում, չուում թե տան՝ էն քարերն էլ ուզում էին, որ սիրտս պոկեն, հանեն, ուրտեղ որ իմ ազգի ոտը կոխել ա ու էսօր էլ կոխում ա. շատ անգամ մեկ հայ տեսնելիս ուզում էի էլած շունչս էլ հանեմ նրան տամ, – բայց, անխ, լեզուս փակ էր, աչքս բաց, բերանս բռնած, սիրտս խոր, ձեռս պակաս, լեզուս կարճ. գանձ չունեի, որ գործով ցույց տայի ուզածս. անունս մեծ չէր, որ ասածս տեղ հասնի. մեր գրքերն էլ՝ **գրաբառ**, մեր նոր լեզուն էլ՝ **անպատիվ**, որ սրտիս հասրաթը խոսքով հայտնեի. հրամայել չէի կարող, խնդրեի, աղաչեի էլ՝ լեզուս մարդ չէր իմանալ, չունքի ես էլ էի ուզում, որ ինձ վրա չծիծաղին, չասեն՝ կոպիտ ա, հիմար ա, որ քերականություն, ճարտասանություն, տրամաբանություն չգիտի, ես էլ էի ուզում, որ ասեն. «Օ՛հ, **էնպես խոր**, խրթին շարադրել գիտի, որ սատանեն էլ միջիցը մեկ բառ չի կարող իմանալ, հասկանալ»: Ես էլ էի ուզում, որ իմ գլուխս ցույց տամ, որ ինձ վրա զարմանան ու ինձ գովեն, թե հայերեն շատ խոր տեղակ եմ: Ով մեկ լեզու գիտի, ես մեկ քանիսը գիտեմ. ինչ գիրք ասես, որ չեմ սկսել թարգմանիլ ու կիսատ թողալ. ոտանավոր, շարադրություն հո՛, էնքան եմ գրաբառ գլխիցս դուս տվել, որ մեկ մեծ գիրք էլ էն կդառնա:

Ես միջոցումը Աստված ինձ մեկ քանի երեխեք էլ հասցրեց, որ պետք է կարդացնեի: Սիրտս ուզում էր պատռի, որ էս էրեխեքանց ձեռքն էլ ինչ հայի գիրք տալիս էի, չէին հասկանում: Ռուսի, նեմեցի, ֆրանցուզի լեզվումը ինչ բան որ կարդում էին, նրանց անմեղ հոգուն էլ էին էնպես բաները դիր գալիս: Ուզում էի շատ անգամ մազերս պոկեմ, որ էս օտար լեզուքը ավելի էին սիրում, քանց մերը: Բայց պատճառը շատ բնական էր. էն լեզվըներումը նրանք կարդում էին երևելի մարդկանց գործքերը, նրանց արածներն ու ասածները, նրանք կարդում էին էն բաները, որ մարդի սիրտ կարող է գրավել, չունքի սրտի բաներ էին, ո՞վ չի սիրիլ: Ո՞վ չի ուզիլ լսիլ, թե սերը, բարեկամությունը, հայրենասիրությունը, ծնողը, զավակը, մահը, կռիվը ինչ զատ են, բայց մեր լեզվումը թե էսպես բաներ ըլին, թո՛ղ աչքս հանեն: Էլ ընչո՞վ էրեխին քո լեզուն սիրիլ տաս: Գեղըցու վրա ջավահիր ծախիր, հա՛, շատ լավ բան ա, ամա որ կարողություն չունի, մեկ կտոր ճաթի հետ էլ չի փոխիլ քո տված անգին քարը:

Էս հո էս. Եվրոպիումս էլ որ չէի կարդում բազի գրքերում, թե հայ ազգը պետք է որ սիրտ չի ունեցած ըլի, որ էնքան բաները գլխովս անց են կացել, մեկ մարդ էլա չի դուրս էկել, որ մեկ սրտի բան գրի, ինչ կա՝ եկեղեցու վրա ա, Աստծու ու սրբերի, բայց հեթանոս Հոմերի, Հորացի, Վիրգիլի, Սոֆոկլեսի գրքերը էրեխեքն էլ գլխատակներին ունեին, չունքի բոլոր աշխարհի բաներ են: Թե ասեի՝ բոլոր եվրոպացիք են անխելք, անհավատ, որ Աստծու բանը թողած էսպես ծռտի-մռտի բաների հետ էին ընկել, հիմարություն կըլեր: Թե չէ, մեր Նարեկը թողած՝ ախր ինչպես էին նրանք էն գրքերին հավանում: Լավ գիտում էի, որ մեր ազգը էնպես չէր, ինչպես նրանք ասում էին, ամա ինչ անես. անաղուն ջաղացի քարն էլ չի պտիտ գալիս, ո՞ւմ ասես:

Միտք էի անում, որ թե կտրիճ մարդ ասես, մեր միջումը հազարավորն են էլել ու էսօր էլ կան. թե խելոք խոսք ասես, մեր պառավներն էլ հազարը գիտեն: Թե աղ ու հաց ասես, սեր, բարեկամություն, քաջություն, երևելի անձինք ասես, մեր գեղըցոնց սիրտն էլ ա լիքը էսպես մտքերով: Առակ, մասալա, սուր-

սուր խոսքեր որ ուզենաս, հո էն հետին ռամիկ մարդը մեկի տեղակ հազարը կասի: Ախր ինչ պետք էր արած, որ մեր սիրտն էլ ուրիշ ազգեր իմանային, մեզ էլ գովեին, մեր լեզուն էլ սիրեին, մնացել էի տարակուսած: Լավ գիտեի, որ թե օսմանցվի, թե ղզլբաշի երկրումը ինչքան էնպես երևելի, խելոք, հունարով մարդ են էլել, ինչքան խանի, շահի, սուլթանի դռներին սիրեկան աշըղ, լավ խաղ ասող, ոտանավոր շինող մարդ են էլել, շատը հայ ա էլել: Մենակ Քեշիշ օղլին, Քյոռ օղլին բավական են, որ ասածս սուտ չի դուս գա: Թո՛ղ էսօր էլ մեկ մարդ Գրիգոր Թարխանովի հետ խոսա, նրա ասած խոսքերն, նրա էն ճարտար լեզուն, նրա էն հիանալի բոյն ու պատկերը, նրա հենց մեկ հունարը տեսնի, որ հարիր տեսակ զանազան մարդի ու ազգի լեզուն, շարժումնքը, նստիլ վեր կենալը էնպես ցույց կտա, որ քոռանամ, թե Եվրոպիոն էն ընտիր թեատրներումն էլ տեսած ըլիմ, ու վարժատան երես հո իր օրումը, կարելի ա, էն ժամանակն ըլի տեսած, որ այբբենը մեր միջումը գաբով էին բռնում, գյուլով վեր քցում, էն ժամանակը կիմանա, թե հայոց միջումը ինչ հունար կա:

Էսպես բաները մտածելով՝ օրս ու ումբրս մաշվել էր: Շատ անգամ ուզում էի իմ գլուխս մահու տամ: Չէի իմանում, թե սրա չարեն ինչ կըլի: Թո՛ղ լսողը չհավատա, ամա էս ցավն էնպես էր սիրտս առել, որ շատ անգամ գժվածի պես ընկնում էի սար ու ձոր, ման գալիս, մտածում, էլ ետ սիրտս լիքը տուն գալիս: Հենց էս էր պատճառը, որ մեկ օր էլ, ամառվան դաստուրի ժամանակին, աշակերտներս որ առավոտը թողի, ճաշիցը ետ ընկա էլի սարեսար: Ճարս կտրվեց, գնացի Նեմեցի Կոլոնիեն, մեկ նեմեց բարեկամի մոտ. նրանք էլ ինձ վրա ցավելով՝ իրեք օր չթողին գամ քաղաքը: Բայց քաղաքումն իմ սիրելի աշակերտները ու ծանոթ-բարեկամք իմ սուգս վաղուց էին արել: Հենց իմացել էին, թե Քունն եմ ընկել, չունքի ամեն առավոտ, ռիգուն գնում էի, լողանում: Էլի իմ, իմ ազիգ, իմ սիրելի աշակերտներն էին ընկել ետևիցս, որ բալքի մեկ բան էլա իմանան: Մեկ առավոտ փանջարումը նստած՝ էլի մտքիս հետ էի ընկել, որ նրանք առաջովս անց կացան: Որ չտեսա նրանց, հոգիս տեղըհան էլավ: Իմ ու նրանց էս օրվան իրար տեսնիլը ո՞վ կարա պատմիլ. ով սիրտ ունի, ինքը կիմանա: Բալքի թե գերեզմանումը էս ձեր սերը մտքիցս գնա, այ իմ սիրելի, իմ ազիգ բարեկամք. թե չէ, որքան էս կապուտ երկինքը գլխիս ա, շունչս՝ բերանումս, ձե՛զ, ձե՛զ սուրբ պետք է համարեմ ինձ համար, ձեր արևին մեռնիմ:

Բայց անխ, երբ ա երկինքը մեկ կերպի մնացել, որ մարդի սիրտը մնա: Հենց մի փոքր մտքիս արևը երևաց թե չէ, էլի սև-սև ամպերը գլխները բարձրացրին, էլի կայծակ ու որոտումն սրտումս մեյդան բաց արին: Ջուրն ընկնիլ էլ չէի կարող, չունքի Աստուծո ահը մտքումս, անմեղ քոռփիս ձենը անկաջումս էր, սերն ու ծնողական գուրժ՝ ջիգյարումս. ես դինջանայի, էթըմին ո՞վ պահեր:

Բանը հենց էս էր, որ ասում էի մտքումս, թե նստիմ, ինչքան խելքս կբերի, մեր ազգին գովեմ, մեր երևելի մարդկանց արած քաջությունները պատմեմ, էլի մտածում էի, թե ո՞ւմ համար գրեմ, որ ազգը լեզուս չի հասկանալ: Թեկուզ ռսերեն, նեմեցերեն յա ֆրանցուզերեն գրած, թեկուզ գրաբառ, տառը՝ կըլի որ հասկանային, բայց հարիր հազարի համար՝ թեկուզ իմ գրածը, թեկուզ մեկ քամու ջաղաց: Ախր որ ազգը էն լեզվովը չի խոսում, էն լեզուն չի հասկանում, սաքի հենց բերնիցդ էլ ոսկի վեր ածիր, ո՞ւմ պետք է ասես: Ամեն մարդ իր սրտի խարջ բան կուզի: Քո ղաբլու փլավն ինձ ինչ օգուտ, որ ես չեմ սիրում:

Ում հետ էլ որ խոսում էի, էն էին թանխա տալիս, թե մեր ազգը ուսումնասեր չի՛, կարդալը նրա համար գին չունի, բայց ես տեսնում էի, որ էս մեր կարդալ չսիրող ազգը Ռոպէնսոնի պատմությունը, Պոլնձե քաղաքի հիմար գիրքը ձեռնեձեռ էր ման ածում: Էս էլ լավ գիտեի, որ ինչ երևելի ազգեր կան, բոլորն էլ էրկու լեզու ունին՝ **հին ու նոր**: Ախր թե լուսավորյալ լեզուն լավ ա, ու քարերն էլ պետք է տրաքին ու հասկանան, էլ տոնլուդ, նշան, պատիվ ո՞ւր են տալիս դիլբանդին: Էն լեզվազետ իմաստունը թող գնա, կանգնի, գոռա, ջանը դուս գա, լսողը թող ինքը հասկանա, լուսավորյալ գլուխն ափսոս չի՛, որ ցավի:

Միտք էի անում, որ գիժն էլ էս չի՛ անիլ: Էլի էսպես, մտքիս հետ ընկած՝ շատ անգամ որ դոնաղ էի գնում յա քաղաքովն անց կենում, ուշ ու միտքս հավաքում էի, թե տեսնիմ խալխը խոսալիս, քեֆ անելիս ինչ բանից ա ավելի հազ անում: Շատ անգամ տեսնում էի, որ մեյդանում, փողոցում մեկ քոռ աշըղի էսպես են հայիլ-մայիլ մնացել ու կանգնել, ականջ դնում, փող բաշխում նրան, որ բերնընդերի ջուրը գնում էր: Մեջլիս ու հարսանիք հո, առանց սազանդարի էրբ հացը կուլ կերթար: Ասածները թուրքերեն էր, շատը մեկ բառ էլա չէր հասկանում, ամա լսողի, տեսնողի հոգին գնում էր դրախտը, ետ գալիս:

Միտք արի, միտք արի, մեկ օր էլ ասեցի ինձ ու ինձ. արի՛, քո քերականություն, ճարտասանություն, տրամաբանություն ծալի՛ր, դրաղ դիր ու մեկ աշըղ էլ դու դառ, ինչ կըլի՛ կըլի, խանչալիդ քարը հո վեր չի՛ ընկնիլ, գառ վարաղդ հո չի՛ գնալ: Մեկ օր էլ դու վեր կընկնիս, կմեռնիս, մեկ ողորմի ասող էլ չէն ունենալ:

Մեկ բարիկենդանի, աշակերտներս որ բաց թողի, սկսեցի, ինչ որ երեխությունիցս լսած կամ տեսած բան գիտեի, տակ ու գլուխ անիլ: Վերջը իմ ջիվան

**Աղասին** միտս ընկավ, նրա հետ հարիր քաջ հայի տղերք էլ իրանց գլուխը բարձրացրին, ու ամենն էլ ուզում էին, որ իրանց ոտը գնամ: Մյուսները մեծ-մեծ մարդիկ էին, շատն էլ դեռ հլա սաղ-սալամաթ, փառք Աստուծո, Աղասին՝ աղքատ ու մեռած, նրա սուրբ գերեզմանին դուրբան: Ասեցի՝ կեղծավորություն չանեմ, նրան ընտրեցի: Սիրտս էկել էր, բերնիս հասել: Տեսնում էի, որ էլ հայի գիրք ձեռն առնող, էլ հայի լեզուն խոսող քիչ ա գտնվում: Մեկ ազգի պահողն էլ **լեզուն ա ու հավատը**, թե սրանց էլ կորցնենք, վայն էկել ա մեր օրին: Հայոց լեզուն առաջիս փախչում էր Կրեսոսի նման. երեսուն տարվա փակ բերանս Աղասին բաց արեց:

Մեկ երես բան դեռ չէի գրել, որ իմ մանկական սիրելի բարեկամ ու ազնիվ հայազգի պարոն դոքտոր



**Աղաֆոն Սմբատյանը** ներս մտավ: Ուզում էի թուղթս ծածկեմ, էլ չկարացի: Ինձ համար Աստված էր նրան էն սհաթին դրկել, նրա ջանին մեռնիմ: Զոռ արեց, որ կարդամ. բարեկամիցը ինչ պետք է թաքցրած: Սիրտս դողում էր կարդալիս. մտքումս ասում էի, թե հենց հմիկ, որդե որ ա, գլուխը կպտտի, ունքերը կկիտի մյուսների նման ու իմ ավամախության վրա մտքումս էլա հո կծիծաղի, որ երեսիս չասի: Բայց փիսը ես էի, որ նրա ազնվական հոգին դեռ լավ չէի ճանաչել: Վերջացնելիս, որ հենց էն ա, թուրն էկել էր, ոսկորին դեմ առել, որ չասեց՝ «Թե էդպես կշարունակեք, շատ հիանալի բան կդառնա»,– ուզում էի վրա թռչիմ, բերանը, էն քաղցր բերանը համբուրեմ:

Նրա սուրբ բարեկամության եմ պարտական, որ մունջ լեզուս բաց արեց: Նա գնաց թե չէ, կրակը ջանս առավ: Սհաթի տասն էր առավոտի: Էլ հաց, կերակուր միտքս չէկան: Ճանճը առաջովս անց կենալիս ուզում էի սպանեմ, էնպես էի վառվել: Հայաստան հրեշտակի պես առաջիս կանգնել, ինձ թե էր տալիս: Ծնող, տուն, երեխայություն, ասած, լսած բաներ՝ էնպես էին կենդանացել, որ էլ աշխարքը միտքս չէր գալիս: Ինչ խուլ, կորած, մոլորած մտքեր ունեի, բուլոր բացվել, ետ էին եկել: Նոր էի իմանում, որ գրաբառ ու ուրիշ լեզվներ մինչև էն սհաթը միտքս փակել, բխովել էին: Ինչ որ ասում էի կամ գրում մինչև էն հաղաղը, գողացած կամ հնարած բաներ էին, էնդուր համար հենց մեկ երես բան գրում էի թե չէ, յա քունս էր տանում, յա ձեռս բեզարում: Գիշերվան մինչև սհաթի հինգը ո՛չ հացի մտիկ արի, ո՛չ չայի. չիբուխն էր իմ կերակուրը, գրիլը՝ իմ հացը: Տանցոնց խնդրելուն, նեղանալուն, խռովելուն էլ չէի մտիկ անում: Երեսուն թաբաղեն, էն ա, լցվելով էր, որ բնությունը իր պարտքը պահանջեց, աչքերս գնաց: Սաղ գիշերը ինձ էնպես էր երևում, թե նստած գրում եմ. երանի կըլեր ինձ, թե էն մտքերը ցերեկն էին միտս ընկել:

Սիրելի կարդացող, չնեղանաս, որ բանն էսքան երկարացրի: Էնդուր համար եմ էստոնք հիշում, որ իմանաս, թե ազգի **սերը** ինչ լազաթ ունի, ինչ զորություն: Էն առավոտը իմ դուշմանի տանը ո՛չ ետ գա, ինչ որ ես տեսա: Աչքս բաց եմ անում իմ խեղճ, դարիբ գերմանացի կողակցի ձենն ա ընկնում անկաջս: Տեսիմ, իմ միայնակ որդին դռշին առած էն արտասունքն ա վեր ածում, որ քարեր կմղկտան: Ծառա ու դարավաշ էլ մեկ պուճախում են փետացել, կանգնել, ինձ ցավելով մտիկ անում: Ո՞ւմ սիրտը էս սհաթին չէր ճաքիլ: Գժվածի պես վեր թռա, երեխիս եմ նայում, փառք Աստուծո, սաղ ա. կողակցիս եմ աղաչում, սիրտը չի՛ կարում ետ բերիլ: Ի՞նչ էր պատահել, չէի իմանում:

– Անաստված, ինձ սպանեցիր հո, էս ինչ բան բերիր գլխիս,– վերջապես լսեցի:

Ծառեքն էլ մեկ կողմից են ինձ ղնամիշ անում: Վերջապես իմանամ, որ սաղ գիշերը անդադար դելն եմ տվել, գոռացել, ամի քաշել, խոսացել, ու ինչ որ հարցրել են տանըցիք, միշտ էլ գերմաներեն ո՛չ, հայերեն պատասխան տվել ու հազար տեսակ վայրիվերո բան ասել, էլ ետ իմ կոճվն սկսել: Մինչև սհաթի ինը, էս հալումն ընկած՝ ես իմ քեֆն եմ արել, նրանք՝ իրանց սուգն, ու ինձանից ձեռք վերցրել: Էն առավոտը, սաղ շաբաթ ու ամիս, էսօր էլ մուրագս հենց էն ա էլել, որ գնամ, ընկնիմ մեկ իշխանի ոտք, ասեմ, ինձ մեկ կտոր հաց տա, ու ես՝ գիշերցերեկ ընկնիմ գեղեգեղ ու մեր ազգի արած բաները հավաքեմ, գրեմ:

Թո՛ղ ինձ այսուիետև տգետ կանչեն. լեզուս բաց ա էլել, ի՛մ ընտիր, ազիզ, ի՛մ սրտի սիրեկան ազգ: Թո՛ղ տրամաբանություն գիտեցողը իրան համքյարի

համար գրի, ես՝ քո կորած, շվարած որդին, քեզ համար:

Ո՛վ թուր ունի, առաջ իմ գլխիս խփի, իմ սիրտս խրի, ապա թե ո՛չ՝ քանի բերնունս լեզու կա, փորումս՝ սիրտ, ես լեղապատառ ձեն կտամ:

– Էդ ո՛ւմ վրա եք թուր հանել, հայոց մեծ ազգին չե՞ք ճանաչում:

Թաք ըլի **դու, դու**, իմ պատվական ազգ, քո որդու արածը, քո որդու խակ լեզուն սիրես, ընդունիս, ինչպես հերը իր մանուկի կմկմալը, որ աշխարքի հետ չի՛ փոխիլ: Երբ որ կմեծանամ, խրթին լեզվով էլ կխոսանք: Աղասին քո փոքր որդին ա, սրանից դիա մեծ, դիա անվանիքը շատ ունիս: Ինձ մի սիրտ տո՛ր, արևիդ մատաղ գնամ, տե՛ս, թե ինչ ձևով եմ գնում, նրանց բերում, առաջիդ կանգնացնում, որ դու էլ զարմանաս, թե էնպես որդիք ունեցողը աշխարքումն էլ ինչ դարդ կանի: Երեսս ոտիդ տակը: Տո՛ր էդ սուրբ ձեռդ էլ մի համբուրեմ, որ ինձ ներես, ու գնանք մեր սիրուն Աղասու մոտ:



## ԲԱՌԱՐԱՆ

**Կրեսոս թագավորն Լիդացվոց** – Լիդիա՝ պետություն Առաջավոր Ասիայում Ք.ծ.ա. 685–546 թթ.: Կրեսոս թագավորն իշխել է Ք.ծ.ա. 560–546 թթ.: Նրա որդու համր լինելու և հանկարծակի լեզուն բացվելու մասին վկայել է հույն պատմիչ Հերոդոտոսը:

**Կյուրոս** – Լիդիան գրավել է պարսից Կյուրոս թագավորը, իշխել է Ք.ծ.ա. 559–530 թթ.

**դոնշուն** – զորք

**ջավահիր** – գոհար, ադամանդ, թանկարժեք քար

**ամարաթ** – ապարանք, դղյակ, պալատ

**էլա** – գոնե, անգամ, գեթ

**էլավ** – եղավ

**լալ, մունջ** – համր

**թագավորազն** – թագավորի զավակ

**զրից** – զրույց

**ծպտալ** – ծայն հանել

**ազիզ** – սիրելի, թանկագին, հարազատ

**խուփ** – կափարիչ, փակ

**զնջիլ** – շղթա, կապանք

**էրվել** – այրվել

**փոթոթվել** – խանձվել, խորովվել, սաստիկ այրվել

**մուրազ** – երազանք, ցանկություն, իղձ, փափագ, բաղձանք, ուխտ

**կարդացնել** – սովորեցնել, ուսուցանել

**նեմեց** – գերմանացի

**ֆրանցուզ** – ֆրանսիացի

**դիր գալ** – դուր գալ

**ճաթ** – կորեկի հաց

**բազի** – երբեմն, որոշ, մի քանի, մի տեսակ, **բազի գրքեր** – մի տեսակ գրքեր

**Հոմեր, Հոմերոս** – Ք.ծ.ա. 9-րդ դարի հույն գրող, «Իլիական»-ի և «Ոդիսական»-ի հեղինակը

**Հորացի, Հորացիոս (Քվինտոս Հորացիոս Փլակուս, Ք.ծ.ա. 65–8)** – հռոմեացի բանաստեղծ

**Վիրգիլ, Վերգիլիոս (Պուբլիոս Վերգիլիոս Մարո, Ք.ծ.ա. 70–19)** – հռոմեացի բանաստեղծ

**Սոֆոկլես (Ք.ծ.ա. 496–406)** – հույն թատերգակ: «Էդիպ արքա», «Անտիգոնե»  
և շատ այլ ողբերգությունների հեղինակը

**անադուն ջրաղաց** – աղուն, այսինքն՝ աղալու ցորեն չունեցող ջրաղաց

**գեղըցոնց** – գյուղացիների

**մասալա** – զրույց, առած-ասացվածք

**ռամիկ** – գյուղացի, հասարակ մարդ

**օսմանցի** – թուրք, տաճիկ

**ղզլբաշ** – պարսիկ, բառացի՝ կարմիր գլուխ

**Քեշիշ օղլի** – հայ աշուղ (18-րդ դար), Կոստանդնուպոլսում դարձել է պալատական բանաստեղծ

**Քյոռ օղլի** – կիսալեգենդար հայ աշուղ և ժողովրդական վրիժառու, Արովյանը գերմաներեն է թարգմանել նրա մի քանի գործ: Քյոռ օղլի բառացի թարգմանությամբ՝ կույրի տղա

**Գրիգոր Թուրխանով (Թուրխանյան)** – ծնունդով երևանցի, 1830–1840-ական թթ. Հայկական մարզի գավառապետ և բանաստեղծության սիրահար

**հարիր** – հարյուր

**թեստր** – թատրոն

**հունար** – շնորհք, ձիրք, վարպետություն, հմտություն

**այբբեն** – այբուբեն

**գաբ** – փայտե կարթ, կեռ

**գյուլլա** – հրացանի գնդակ

**ումբր** – կյանք

**ամա** – բայց, սակայն, իսկ, թեպետ

**դաստուր** – դասավանդում, դաս տալ

**Նեմեցի կոլոնիեն** – Թիֆլիսում ապրող գերմանացիների գաղութը (ավանը)՝ հիմնադրված 1819-ին

**իրեք** – երեք

**րիգուն** – իրիկուն

**փանջարա** – պատուհան

**բալքի** – թերևս, գուցե

**սաքի** – թեկուզև, թեկուզ, կարծես, դիցուք, իբր թե

**թանխա տալ** – մատնանշել, վկայակոչել, սուտ խոստում տալ, հույս տալ

**Ռոպենսոնի պատմություն** – անգլիացի Դանիել Դեֆոյի «Ռոբինզոն Կրուզոյի կյանքը և զարմանալի արկածները» վեպը, ինչը թարգմանվել էր հայերեն

**պղնձե քաղաքի հիմար գիրքը** – խոսքը «Հազար ու մեկ գիշերներ» գրքի մասին է, որ դեռևս 10-րդ դարում արաբերենից թարգմանվել էր հայերեն: «Հիմար գիրք» է ասում, որովհետև պարզունակ էր և կրոնական

**տոնլուղ** – աշխատավարձ, թոշակ

**դիլբանդ** – թարգման, թարգմանիչ

**ջանը դուրս գա** – հոգին դուրս գա, հոգնել, տանջվել

**ղոնաղ** – հյուր

**յա** – կամ, կամ թե չէ. **յա քաղաքն անց կենում** – կամ քաղաքն անց կենում

**խալխ** – ժողովուրդ, ամբոխ, մարդկային բազմություն

**հայիլ-մայիլ մնալ** – հիանալ, զմայլվել, սքանչանալ

**սազանդար** – սազ նվագող, երաժիշտ, նվագաձու

**խանչալ** – սուր, թուր, դաշույն

**զառ վարազ** – ոսկեփոշի, ոսկեջուր

**բարեկենդան** (Աբովյանը գրում է **բարիկենդան**) – մեծ պահքին նախորդող շաբաթվա տոն, անցնում է կերուխումի, մրցումների ու խաղերի մեջ

**ջիվան** – ջահել, մատաղ, պատանի

**սաղ-սալամաթ** – ողջ առողջ

**դուրբան** – մատաղ լինել

**Աղաֆոն Սմբատյան** – Աբովյանի բարեկամը, բժիշկ, Հայկական մարզի կառավարիչ, գնդապետ Գևորգ Սմբատյանի եղբայրը

**սհաթ** – ժամ, ժամանակ, պահ, հիմա

**որդե որ ա** – ուր որ է

**ախմախություն** – հիմարություն, տխմարություն

**փիս** – վատ

**բխովել** – կապել, կապանք դնել, շղթայել

**հադադա** – ժամանակ, միջոց, պահ, անմիջապես, իսկույն

**բեզարել** – հոգնել

**չայ** – թեյ

**չիբուխն էր իմ կերակուրը** – այսինքն՝ ծխելը

**տանցոնց** – տնեցիների

**թաբաղա** – երկծալ, մեծադիր թերթ

**դուշման** – թշնամի

**դարիբ կողակից** – օտար, պանդուխտ. Աբովյանի կինը՝ Յոհաննա Էմիլիե Լոոգեն ծագումով գերմանացի էր

**իմ միայնակ որդին դոշին առած** – Աբովյանի Վարդան անունով նորածին որդուն գրկած

**մղկտալ** – աղիողորմ լաց լինել, մորմոքալ

**դարավաշ** – սպասուհի, աղախին, ճորտ

**ծառեք** – ծառաներ

**դնամիշ անել** – հանդիմանել, կշտամբել

**դելն տալ** – զառանցել, անկապ խոսել

**համքյար** – արհեստավոր, իր նման մեկը

**խրթին** – դժվար, բարդ, կնճռոտ

**դհա** – էլ ավելի, առավել, շատ

**դարդ** – վիշտ, հոգս

«**Վերք Հայաստանի**»-ի «**Հառաջաբան**»-ը ոչ միայն այս վեպի, այլև ամբողջ հայ նոր գրականության համար ունի հրովարտակի, հռչակագրի նշանակություն:

Աբովյանն այստեղ խոսում է ժողովրդին հասկանալի լեզվով և սրտամոտ բովանդակությամբ գիրք ստեղծելու մասին: Այդ նպատակով նա օգտագործում է Լիդիայի Կրեսոս թագավորի համր որդու լեզուն հանկարծակի բաց-

վելու ավանդությունը՝ ցանկանալով ասել, որ ահա բացվել է իր լեզուն, և նա իր ժողովրդի համար պետք է գրի իր այս վեպը:

Այստեղ Աբովյանն իր հայրենասիրական բուռն տարերքի մեջ է: Ինչպես Կրետոսի համր որդին աղաղակեց, երբ տեսավ իր հոր վրա բարձրացված մահացու սուրը, այնպես էլ Աբովյանը, տեսնելով իր ժողովրդի անհուսալի վիճակը, աղաղակում է. *«Էդ ո՞ւմ վրա եք թուր հանել, հայոց մեծ ազգին չե՞ք ճանաչում»:*

Աբովյանն այն կարծիքի չէ, թե հայ ժողովուրդն ընթերցասեր չէ, չի սիրում գիրք կարդալ: Ո՛չ,– ասում է նա,– ժողովուրդը սիրում է կարդալ, բայց չկա իրեն հասկանալի լեզվով գրված որևէ բան: Դեռ ավելին՝ Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» գիրքը թողած՝ իրենց հասկանալի լեզվով գրված երկրորդական գրքեր էին կարդում, աշուղների հանդեսներին մասնակցում: Ահա այս իրադրության մեջ Աբովյանը դառնում է ժողովրդական շահերի պաշտպան, և ինքն իրեն որոշում. *«Արի՛, քո քերականություն, ճարտասանություն, տրամաբանություն ծալի՛ր, դրադ դի՛ր ու մեկ աշըղ էլ դու դառ...»:* Այսինքն՝ գրիր ժողովրդին և հասկանալի, և սիրելի գործեր:

Ահա այս որոշումը կայացնելուց հետո նա մտածում է իր գրելիք նյութի մասին՝ ի՞նչ գրել: Մտաբերում է իր մանկության տարիների հիշողությունները, ի վերջո, նրա առջև է կանգնում Աղասու կերպարը:

Այս կապակցությամբ պետք է իմանալ, որ Աղասին գրական կերպար է՝ մի քանի նախակերպարների հավաքական ամբողջության, ում հերոսական բնավորության որոշ կողմեր Աբովյանը վերցրել է առանձին հայ քաջերի գործունեությունից: Այդ նախակերպարներից մեկի մասին Աբովյանը տեղեկացնում է, որ նա իր ժամանակակիցն է, ծնունդով քանաքեռցի, նաև իրեն ազգական, անունն էլ՝ Աղասի: Ահա նրա քրոջը ևս փորձել են առևանգել, որպեսզի տանեն պարսից սարդարի հարեմի համար, և նա, առաջ գալով, սուրը քաշել ու սպանել է պարսիկ զինվորներից մեկին, մյուսներին վիրավորել: Նա կարողացել է փրկվել՝ փախչելով «ռուսի հողը», վերադարձել է ռուսների հետ պատերազմի ժամանակ: Քրոջը կարողացել են մեծ գումարով փրկագնել, իսկ ծնողները երկարամյա բանտարկությունից հետո սարսափելի մահով մեռել են բանտում:

Ահա այս պատմությունն էլ նա սկսել է շարադրել՝ մշտապես մտածելով՝ ճի՞շտ է անում արդյոք, թե՞ ոչ: Հոգեկան այս տատանումների ժամանակ նրան է այցելում բարեկամներից մեկը: Անականակալի գալով՝ Աբովյանը նախ փորձում է իր թղթերը նրանից թաքցնել, ապա վստահություն ձեռք բերելով՝ նրա համար կարդում է իր գրածը և, արժանանալով դրվատանքի, ոգևորվում:

Այս պահից սկսած՝ նա մոռանում է ամեն ինչ, ընկնում է ստեղծագործական բուռն տարերքի մեջ և շարունակում շարադրանքը: Այնքան ինքնամոռաց էր նա այդ պահին, որ տնեցիներին թվում է, թե նրա հետ ինչ-որ բան է պատահել, այսինքն՝ խելքը գցել է: Մինչդեռ Հայաստանը պահապան հրեշտակի պես կանգնած էր նրա գլխին և ուժ էր տալիս:

Այդ ոգևորությամբ նա շարունակում է. *«Թող ինձ այսուհետև տոգտ կանչեն, լեզուս բաց ա էլել, իմ ընտիր, ազիզ, իմ սրտի սիրեկան ազգ: Թող տրամաբանություն գիտեցողը իրան համքյարի համար գրի, ես՝ քո կորած, շվարած որդին, քեզ համար... Թաք ըլի դո՛ւ, դո՛ւ, իմ պատվական ազգ, քո որդու արածը, քո որդու խակ լեզուն՝ սիրես, ընդունիս, ինչպես հերը իր մանուկի*

*կմկմալը, որ աշխարքի հետ չի փոխիլ»:*

Մինչ Աբովյանը՝ աշխարհաբարն արդեն մտել էր գրական շրջանառության մեջ. տպագրվել էին գրքեր, գրական երկեր, բայց Աբովյանին ենք համարում աշխարհաբարի հիմնադիրը, որովհետև այդ լեզվով գրվեց գրապատմական մեծ շրջադարձ ազդարարող **«Վերք Հայաստանի»** վեպը: Բացի դա՝ Աբովյանի օգտագործած արարատյան բարբառն ընկավ գրական հայերենի հիմքում:

Նաև ավելացնենք՝ Աբովյանն ամենևին դեմ չէր գրաբարին, տարբեր առիթներով փառաբանել է գրաբարի հարստությունն ու գեղեցկությունը: Բայց, դժբախտաբար, ժողովուրդը հեռացել էր իր մայր լեզվից, ուստի անհրաժեշտ էր գրականության լեզու դարձնել հենց ժողովրդական կենդանի բարբառը:

Այսպիսով, Աբովյանը գրեց ժողովրդին հասկանալի աշխարհաբարով՝ հիմք ընդունելով արարատյան բարբառը, բերեց կյանքից ծնված հերոսներ և պատկերեց նոր նյութ, ինչը վերաբերում է Արևելյան Հայաստանի ազատագրմանը պարսկական լծից և Ռուսական ինքնակալության գերիշխանության ներքո անցնելուն:

### **ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ**

1. Ինչպիսի՞ պատկերով է Աբովյանն սկսում «Հառաջաբան»-ը: Բաց արեք հանրագիտարանը և ուսումնասիրե՛ք՝ ովքե՞ր էին Կրեստն ու Կյուրոսը, որ երկիրն էր Լիդիան:
2. Իր հոգեկան վիճակը ցույց տալու և ժողովրդի հանդեպ նվիրվածությունն արտահայտելու համար ինչպիսի՞ նկարագրությունների է դիմում Աբովյանը:
3. Վերարտադրե՛ք այն հատվածը, որտեղ Աբովյանը նկարագրում է ընթերցանության համար հաճելի գրքերը:
4. Ի՞նչ երևելի հայերի անուններ է հիշատակում Աբովյանը և ինչո՞ւ. դրանով ի՞նչ է ուզում ասել:
5. Ի՞նչ վերաբերմունքով է Աբովյանը խոսում իր աշակերտների մասին:
6. Ինչո՞ւ էր Աբովյանը ցանկանում մի աշուղ էլ ինքը դառնալ:
7. Ո՞ւմ է հիշում Աբովյանը, որպեսզի դարձնի «Վերք Հայաստանի» վեպի հերոս: Ի՞նչ կարող եք ասել վեպի գլխավոր հերոսի նախակերպարի մասին:
8. Ի՞նչ ապրումներով էր Աբովյանը համակված վեպի շարադրանքից առաջ: Ինչպե՞ս է Աբովյանը ներկայացնում իր ստեղծագործական հոգեվիճակը:
9. Առանձնացրե՛ք և ներկայացրե՛ք այն հատվածները, որտեղ Աբովյանը խոսում է հայոց լեզվի, գրաբարից աշխարհաբարի անցնելու անհրաժեշտության հարցերի մասին:
10. Դ՞ուրս գրեք պատկերավոր արտահայտություններ. օրինակ՝ «Մեկ ազգին պահողն էլ լեզուն ա ու հավատը, թե սրանց էլ կորցնենք, վայն էկել ա մեր օրին», «Հայոց լեզուն առաջիս փախչում էր Կրեստսի նման. երեսուն տարվա փակ բերանս Աղասին բաց արեց», «Հայաստանը հրեշտակի պես առաջս կանգնել, ինձ թև էր տալիս»: Շարունակե՛ք...

## ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ 1829–1866



*Միքայել Նալբանդյանը 19-րդ դարի հայ գրականության առանցքային դեմքերից մեկն է: Նրա ժողովրդասիրական-ազատասիրական գաղափարներն ուղենիշ դարձան գրական-հանրային կյանքի զարգացման համար: Նրա տիրական ազդեցությունը տասնամյակներ շարունակ պահպանվել է հայ գրականության վրա:*

Միքայել Նալբանդյանը ծնվել է Նոր Նախիջևանում 1829 թվականի նոյեմբերի 14-ին: Ռուսաստանի հայաբնակ այդ քաղաքում ծաղկում էին արհեստներն ու առևտուրը: Նալբանդյանի հայրը՝ Ղազարը, դարբին էր և պայտար, այստեղից էլ նրանց Նալբանդյան ազգանունը (նալ - պայտ):

1839-1845 թվականներին Նալբանդյանը սովորել է տեղի Գաբրիել Պատկանյանի դպրոցում: 1847-ին Նալբանդյանը դառնում է առաջնորդարանական գործերի գրագիր: Վեց տարի այս գործին լինելով՝ հնարավորություն է ունենում շրջագայելու հարավային Ռուսաստանի հայաշատ վայրերում և ճանաչելու հայրենակիցների կյանքն ու կենցաղը:

Նալբանդյանը եռանդուն խառնվածք էր: Շատ շուտով նա գործուն գաղափարական մասնակցություն է ունենում Նոր Նախիջևանի միահեծան քաղաքագլխի դեմ ծավալված երկարատև պայքարին:

1852 թվականին Նալբանդյանը խզում է կապերը հոգևոր դասի հետ, մեկնում Պետերբուրգ, որտեղ քննություն հանձնելով՝ ձեռք է բերում հայոց լեզվի ուսուցիչ աշխատելու իրավունք: 1853-ին աշխատանքի է անցնում Մոսկվայի Լազարյան ճեմարանում: Նա հանդես է գալիս ի պաշտպանություն աշխարհաբարի և աշխարհաբարով էլ ուսուցանում է իր սաներին:

Հետագա ուսումը Նալբանդյանը շարունակում է Մոսկվայի համալսարանի բժշկական բաժանմունքում՝ որպես ազատ ունկնդիր:

Մոսկովյան կյանքի տարիները մեծապես նպաստում են Նալբանդյանի աշխարհայացքի ձևավորմանը: Միաժամանակ նա ծանոթանում է նաև ռուս առաջադեմ գրողների ու հանրային գործիչների հետ:

1858 թվականից Նալբանդյանը թղթակցում է Մոսկվայում լույս տեսնող «**Հյուսիսափայլ**» ամսագրին, տպագրում բազմաթիվ գեղարվեստական ու հրապարակագրական նյութեր, այդ թվում՝ իր հանրահայտ «**Կոմս Էմանուելի հիշատակարան**»-ը:

1853 թվականին նա ստիպված է լինում թողնել ուսումը և բուժման նպատակով մեկնել արտասահման: Այդ ընթացքում նաև շրջագայում է Եվրոպայի նշանավոր քաղաքներում, ձեռք բերում նոր ծանոթություններ:

1860 թվականին Նալբանդյանը մեկնում է Կոստանդնուպոլիս, Փարիզ, Լոնդոն, ճանապարհին լինում Իտալիայի քաղաքներում և հանդես գալիս հողվածներով ու զեկուցումներով՝ հանուն ազգային առաջընթացի:

1861 թվականին ուղևորվում է Հնդկաստան՝ Կալկաթա, զբաղվելու Մասեհ

Բաբաջանի 1794–1795 թվականների կտակների հարցով, որով նա Նոր Նախիջևանին էր ավանդել իր անշարժ գույքը: Այդ միջոցներով Նալբանդյանի ծննդավայրում կարող էին կառուցել կրթական-բուժական հաստատություններ: Նալբանդյանը կարողանում է կտակով նախատեսված գումարի մի մասը ստանալ և իրավական երաշխիքներ վերցնել հաջորդ մասը ևս ձեռք բերելու վերաբերյալ:

Վերադարձին Նալբանդյանը լինում է նույն քաղաքներում՝ Կոստանդնուպոլիս, Փարիզ, Լոնդոն, և ընդլայնում իր գաղափարական ազդեցության շրջանակները: Նա մտերմանում է ռուս մեծ գրողներ Գերցենի, Տուրգենևի, Օգարյովի և նրանց շրջանակի մարդկանց հետ: Գերցենը նրա մասին այսպես է արտահայտվել. «... անշահախնդիր նվիրված, միամտորեն մինչև սրբություն նվիրված ոսկի հոգի...»:

Վերստին լինելով Իտալիայում՝ 1862-ին նա վերադառնում է Ռուսաստան, բերած գումարը հասցնում Նոր Նախիջևան, հաշվետու լինում համաքաղաքացիների առջև, որից հետո հեղափոխական գործունեության համար ռուս ժանդարմները նրան ձերբակալում են և բանտարկում Պետերբուրգի Պետրոպավլովյան ամրոցում: Ազատության երգիչը ռուս գրողների գաղափարական զինակից լինելու մեղադրանքով հայտնվում է վանդակների ետևում: Անգամ այս պայմաններում նա շարունակում է ստեղծագործական բուն գործունեությունը՝ գրում է գրքեր և ուսումնասիրություններ:

1865 թվականին Նալբանդյանին աքսորում են Սարատովի նահանգի Կամիշին քաղաքը, ուր և վախճանվում է 1868 թվականի ապրիլի 12-ին: Նրա դին տեղափոխում են Նոր Նախիջևան և թաղում Սուրբ Խաչ եկեղեցու բակում:

Նալբանդյանի վաղաժամ մահը մեծ հարված էր ինչպես հայ գրականությանը, այնպես և ազատության համար մղվող պայքարի գործին:

## ՕԳՏԱԿԱՐ Է ԻՄԱՆԱԼ

### ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆ

Նոր Նախիջևան քաղաքը հիմնադրել են Ղրիմից գաղթած 12.000 հայերը, ովքեր ավելի վաղ Ղրիմ էին տեղափոխվել Հայաստանից: Նոր Նախիջևանը հիմնադրվել է Դոնի Ռոստովից ոչ շատ հեռու, Դոն գետի աջ ափին՝ Ռուսաստանի կայսրուհի Եկատերինա Երկրորդի 1779 թվականի նոյեմբերի 14-ի հրովարտակով:

Քաղաքի շուրջ հիմնվեցին հայկական գյուղեր՝ Չալթր, Մեծ Սալա, Սուլթան Սալա, Նեսվիտա:

Տասը տարի շարունակ հայությունն ազատված էր հարկերից, ապրում էր ինքնավար կյանքով, ուներ կրթական, մշակութային օջախներ: Ծաղկում էին արհեստներն ու գյուղատնտեսությունը: 18-րդ դարի վերջում կառուցվեց Սուրբ Խաչ եկեղեցին:

Նոր Նախիջևանի ծնունդ են այնպիսի երևելի հայորդիներ, որպիսիք են գրողներ Միքայել Նալբանդյանը, Գաբրիել Պատկանյանը, Ռաֆայել Պատկանյանը, նկարիչ Մարտիրոս Սարյանը, քաղաքական գործիչներ Ալեքսանդր Մյասնիկյանը, Սարգիս Սրապիոնյանը (Լուկաշին) և ուրիշներ... Այժմ Նոր Նախիջևանը Դոնի Ռոստով քաղաքի մի առանձին շրջանն է:

**ԱՆԱԿՆԿԱԼ ՀԱՆԴԻՊՈՒՄ  
ՊԵՏՐՈՊԱՎԼՈՎՅԱՆ ԱՄՐՈՑՈՒՄ  
(Կրճատումներով)**

Այս ամբողջի օդում՝ մգլահամ ու ճնշող՝  
Ստվերներ են շրջում օրհասական,-  
Եվ անցյալի մռայլ ոտնաձայնն է հնչում  
Ինչպես մահվան քայլերգ հերոսական...  
Ուրուների նման արնակարմիր ու վեհ,  
Հայացքներում վճիռ ու տառապանք անգո՛  
Տեսլանում են ահա մարտիրոսներն իմ դեմ՝  
Եղերական ու սուրբ կերպարանքով:-  
Այսպես, շարան-շարան, ստվերներ հի՛ն,  
Հին անուններ – այնքան հերոսական,  
Դեմքեր – ն՛ պարզ, ն՛ քիչ, ն՛ սիրելի –  
Ահա կանգնում են իմ մտքի առաջ:  
Սերունդներ են ամբողջ, մի վեհ բանակ,  
Շռնդալով անցնող հաղթական երթ,  
Հերոսության, փառքի մի ճանապարհ անհաս,  
Հիմա դարձած անցած օրերի երգ...  
... Իմ ուղեղի միջով հիմա նրանք  
Ահա անցնում են լուռ, խստաբարո,  
Խարազանի հետքեր մարմինների վրա,  
Բայց աչքերում վճիռ մի չմարող:  
...Այս քարերի վրա, այս պատերի,  
Որոնց նայել են այդ մարդիկ մի օր –  
Հայացքների նրանց ու խոհերի  
Անանց հետքերն են ես փնտրում սիրով:  
Վաղուց արդեն թողել, հեռացել են նրանք,  
Որոնք ինձ հետ մտան բակն այս ահի,-  
Անխոս նայում են ես այս պատերին մռայլ,  
Շուրջս մութն է արդեն ու ամայի:  
Հրաժեշտ են տալիս արդեն նրանց,  
Շուռ են գալիս արդեն, որ գնամ ետ –  
Երբ իջնում է հանկարծ ուսիս վրա,  
Անակնկալ՝ իջնում է մի ծանր ձեռք:-

Ետ են նայում, վերև... Թեքված ուսիս՝  
Մի մարդ՝ դեմքով հեռու, անիրական,-  
Մտերմական ձայնով ասում է ինձ.  
– Դուք ինձ մոռացել եք, բարեկամ...

Բարձրահասակ է. ջղուտ. աչքերը սև.  
 Բակենբարդներ ունի, փոքրիկ մորուս:  
 Ես դրտեղ եմ նրան արդյոք տեսել.  
 Կյանքում արդյոք, տենդում, թե գրքերում:  
 Վշտանման ժպիտ մի աչքերում՝  
 Նայում է նա, նայում՝ հայացքն հառած.  
 – Ինչ է,– ասում է.– չե՞ք մտաբերում  
 Տարիներում այն մուֆ իմ բարբառած  
 Շռնդալից երգերն ըմբոստության մասին:–  
 Մաքառելով անցա ուղին ես իմ,  
 Պայքարելով այն սև բռնության դեմ,–  
 Եվ պարծանքով կասեմ, որ բարեկամ էի  
 Ես Հերցենի, պոետ Օգարևի հետ...  
 – Ա՛,– զարմանում եմ ես, ճանաչելով նրան.  
 Պարզում թերևս, որ նրան գրկեմ.–  
 Նա ողջունում է ինձ ու հեռանում արագ –  
 Ամայի բակն է լոկ լռում իմ դեմ...

*Եղիշե Չարենց*

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ո՞վ է Միքայել Նալբանդյանը, երբ և որտե՞ղ է ծնվել:
2. Ի՞նչ ծագում ունի Միքայել Նալբանդյանի ազգանունը:
3. Ի՞նչ գիտեք Նոր Նախիջևան քաղաքի մասին:
4. Որտե՞ղ է կրթվել Նալբանդյանը, ուսումը որտե՞ղ է շարունակել:
5. Աշխատանքային ի՞նչ գործունեություն է ծավալել Նալբանդյանը:
6. Ո՞ր ամսագրին է թղթակցել Նալբանդյանը:
7. Իր արտասահմանյան շրջագայությունների ժամանակ ո՞ր քաղաքներում է եղել Նալբանդյանը և ի՞նչ գործունեություն է ծավալել:
8. Ինչո՞ւ Նալբանդյանը մեկնեց Հնդկաստան: Ի՞նչ գիտեք Նալբանդյանի ջանքերով Մասեհ Բաբաջանի կտակների իրականացման մասին:
9. Ո՞ր ռուս գրողների հետ է մտերմանում Նալբանդյանը, ինչպե՞ս է նրան բնութագրել ռուս մեծ գրող Գերցենը:
10. Ինչո՞ւ են ձերբակալում և քստորում Նալբանդյանին:
11. Ե՞րբ և որտե՞ղ է նա մահացել, որտե՞ղ է թաղվել:
12. «Անակնկալ հանդիպում Պետրոպավլովյան ամրոցում» չափածո նովելում ինչպե՞ս է Ե. Չարենցը տեսիլքի մեջ տեսնում Պետրոպավլովյան ամրոցը, այնտեղի կալանավորներին և վերջիններիս մեջ՝ Միքայել Նալբանդյանին, ում անունը թեև չի տալիս, բայց նկարագրում է նրան:

Նալբանդյանի առաջին բանաստեղծությունները տպագրվել են 1851 թվականին՝ Թիֆլիսում լույս տեսնող «Արարատ» հանդեսում: Դրանցից երեքը գրված էին գրաբար, մեկը՝ աշխարհաբար: Դրանից հետո նա գրել է շատ բանաստեղծություններ, վեպեր, հրապարակագրական և գիտական ուսումնասիրություններ:

**«Իտալացի աղջկա երգը»** բանաստեղծությունը Նալբանդյանը գրել է 1859 թվականին Գերմանիայի Մայնի Ֆրանկֆուրտ քաղաքում: Այն մեր երկրի օրհներգն է, եղել է նաև Հայաստանի Առաջին Հանրապետության (1918–1920) օրհներգ: Երաժշտությունը գրել է երգահան Բարսեղ Կանաչյանը:

Ինչո՞ւ է կոչվում **«Իտալացի աղջկա երգը»**: Հարցի պատասխանը հետևյալն է: Իտալացի աղջիկը եղբոր համար մետաքսյա եռագույն դրոշ է գործում, որպեսզի եղբայրը ազգային հերոս Զուզեպե Գարիբալդիի բանակում հանուն Իտալիայի ազատագրման կռվի Ավստրիայի դեմ: Ահա, տեսնելով իտալացի աղջկա այս հայրենասիրական արարքը՝ Նալբանդյանը նույն ոգով ցանկանում է ոտքի հանել նաև հայ մայրերին ու քույրերին, որպեսզի Հայաստանի ազատագրման համար նրանք չխնայեն իրենց որդիների և եղբայրների կյանքը:

Հետաքրքրական կենսագրական փաստ է կապված այս բանաստեղծության հետ: 1859 թվականի արտասահմանյան ճամփորդության ժամանակ Նալբանդյանը հանդիպել է նկարչական ձիրքով օժտված մի իտալուհու: Պահպանվել է ակնհայտ գեղեցկությամբ օժտված այս տիկնոջ նկարը և նամակը՝ հասցեագրված Նալբանդյանին: Նամակից թափանցիկորեն զգացվում է, որ նրանց միջև առաջացել է մտերմական ջերմ կապ: Ահա մի քանի տող. *«Մեկ ամիս է արդեն, որ զուրկ եմ քո մխիթարական նամակներից, որոնք միակ սփոփանքն են կազմում առօրյա վշտերիս: Ո՛հ, եթե ես կարողանայի ակնկալիք միայնությունս մխիթարել իմ սրտի եղբոր տեսությամբ: Դու կարող ես այժմ երևակայությամբ տեսնել քո քրոջը իր արվեստանոցում, ուր այցի եկած էիր, և հույս ունենանք, որ նորից կգաս տեսնելու: Ես գիտեմ անձնատուր լինելով ցնորքների՝ կարծել, թե ներս մտնողը եղբայրս է: Ո՛հ, ինչ խոր ես դրոշմված դու իմ սրտի ու մտքի մեջ, ինչ պարզ եմ քեզ տեսնում... Երջանիկ օրեր, որ այլևս երբեք չեն վերադառնալու, ինչ շուտ անցան...»*:

**«Իտալացի աղջկա երգը»** ամենայն հավանականությամբ ներշնչված է այս տիկնոջ հանդեպ Նալբանդյանի տածած զգայուն վերաբերմունքից: Բնավ բացառված չէ, որ վեհ գաղափարներով ներշնչված՝ նրանք երկար զրուցել են իրենց հայրենիքների ազատագրության մասին, ինչն էլ ընկած է հիշյալ բանաստեղծության հիմքում: Գուցե իտալացի աղջիկը հենց այդ տիկինն է կամ իր հայրենակցուհիներից մեկը, ում մասին նա կարող էր պատմած լինել Նալբանդյանին: Միջանկյալ ասենք, որ այս բանաստեղծության նախապատմության մասին կան նաև այլ ենթադրություններ:

Հայրենիքի ոգին անմեռ է Նալբանդյանի ստեղծագործության մեջ. այդ ոգին նա դարբնում էր՝ հայացք ուղղելով և՛ ներկա օրվան, և՛ անցյալին: **«Հիշենք»** վերնագրված բանաստեղծության մեջ նա առաջ է քաշում որոշակի ծրագիր և ասում. *«...Վաղճից մարմնացել ու տեսանելի // Դարձել է Հայոց լուծը անողոք: // Մեր հույսը սակայն մեր վրա լինի. // Այսինքն ազգի մեր ընդհանրության...»*: Այս մտայնությունը ևս հոգեհարազատության եզր է, որ շարունակեցին հետագա շրջանի բանաստեղծները:

Նալբանդյանի սույն բանաստեղծությունն ավարտվում է հիշողության լարը չկորցնելու այսպիսի պատգամով.

Էլ Հայկ, Տիգրանին հիշենք մենք, եղբարք,  
Նորոգենք նոցա փառքը սուրբ անվան.  
Գուցե այս կերպով մի ստույգ նոր կյանք  
Առնու խեղճ, այրի, մայրն Հայաստան:

**«Իտալացի աղջկա երգը»** բանաստեղծության առաջին մասում, դիմելով եղբորը, խոսում է քույրը (1–9–րդ տներ), ապա քրոջը պատասխանում է ազատագրական կռվի պատրաստ եղբայրը (12–14–րդ տներ), իսկ վերջում բանաստեղծի եզրափակիչ խոհն է իր հայրենիքի մասին (16–18–րդ տներ):

## ԻՏԱԼԱՅԻ ԱՂՋԿԱ ԵՐԳԸ

«Մեր հայրենիք, թշվառ, անտեր,  
Մեր թշնամուց ոտնակոխ,  
Յուր որդիքը արդ գանչում են,  
Հանել յուր վրեժ, քեն ու ոխ:

Մեր հայրենիք շղթաներով  
Այսքան տարի կապկապած,  
Յուր քաջ որդոց սուրբ արյունով  
Պիտի լինի ազատված:

Ահա՛, եղբայր, քեզ մի դրոշ,  
Որ իմ ձեռքով գործեցի,  
Գիշերները ես քուն չեղա,  
Արտասուքով լվացի:

Նայիր նորան, երեք գունով,  
Նվիրական մեր նշան,  
Թ՛ող փողփողի թշնամու դեմ,  
Թ՛ող կործանվի Ավստրիան:

Ինչքան կին մարդ, մի թույլ էակ,  
Պատերազմի գործերում  
Կարե օգնել յուր եղբորը,  
Զանց չարեցի քո սիրուն:

Ահա՛ իմ գործ, ահա՛ դրոշ,  
Շուտ ձի հեծիր քաջի պես,  
Գնա՛ փրկել մեր հայրենիք,  
Պատերազմի վառ հանդես:

Ամենայն տեղ մահը մի է,  
Մարդ մի անգամ պիտ մեռնե.



Բայց երանի՛, որ յուր ազգի  
Ազատության կըզոհվի:

Գնա՛, եղբայր, Աստված քեզ հույս,  
Ազգի սերը քաջալեր,  
Գնա՛, թեև չեմ կարող գալ,  
Բայց իմ հոգին քեզ ընկեր:

Գնա՛ մեռիր դու քաջի պես,  
Թող չտեսնե թշնամին  
Քո թիկունքը, թող նա չասե  
Թե վատ է իտալացին»:-

Ասաց. տվեց օրհորդը  
Յուր եղբորը մի դրոշ,  
Մետաքսից էր, ազնիվ գործած,  
Ուր երեք գույն կա որոշ:

Եղբայրն առավ և ողջունեց  
Յուր սիրական քնքուշ քույր,  
Առավ զենքը, սուր, հրացան,  
Հեծավ յուր ձին սևաթույր:

- Քուրիկ,- գանչեց քաջ պատանին,-  
Մնաս բարյավ, սիրական  
Այս դրոշակին պիտի նայի  
Ամբողջ բանակ իտալյան:

Նա սուրբ է ինձ, երբ մկրտված  
Արտասուքով ու կնքած,  
Դու հանձնեցիր ինձ հիշատակ,  
Հայրենիքի նվիրված:

Թե մեռանիմ, դու մի՛ սգար.  
Իմացի՛ր որ տարեցի  
Դեպի մահու արքայություն  
Իմ հետ քանի թշնամի:-

Ասաց. վազեց դեպի հանդես  
Ավստրիացոց հանդիման,  
Յուր արյունով գնել հավերժ  
Ազատություն իտալյան:

Ո՛հ, իմ սիրտը կտրատվում է  
Տեսանելով այսպես սեր  
Դեպի թշվառ մի հայրենիք,  
Որ ոտնակոխ եղած էր:

Սորա կեսը, կեսի կեսը,  
Գեթ երևեր մեր ազգում.  
Բայց մեր կանայք... ո՛ր եղիշե,  
Ո՛ր մեր **տիկնայք փափկասուն:**

Ո՛հ... արտասուք ինձ խեղդում են,  
Այլ չեմ կարող բան խոսել.  
Զէ... թշվառ չէ Իտալիան,  
Եթե կանայք այսպես են:



## ԲԱՌԱՐԱՆ

**յուր** – իր

**զանչում են** – կանչում են

**փողփողալ** – ծածանվել, տատանվել

**կարե** – կարող է

**զանց անել** – անտեսել, անուշադրության մատնել, հաշվի չառնել, հրաժարվել

**սևաթույր** – սև գույնի

**մկրտված** – օծված

**մեռանել** – մեռնել

**տարեցի** – տարա

**իտալյան** – իտալական

**սորա** – սրա

**գեթ** – գոնե, թեկուզ, նույնիսկ, անգամ

## ՕԳՏԱԿԱՐ Է ԻՄԱՆԱԼ

### ՏԻԿՆԱՅՔ ՓԱՓԿԱՍՈՒՆՔ

Փափկասուն՝ փափկակենցաղ, նուրբ, քնքուշ, բարձրաշխարհիկ: Նալբանդյանը նկատի ունի 5-րդ դարի պատմիչ Եղիշեի «Վարդանի և Հայոց պատերազմի մասին» գիրքը, ինչի մեջ Հայաստանի փափկասուն կանայք հանուն հայրենիքի ու հավատի պատրաստ էին զոհաբերել ամեն ինչ: Նալբանդյանը կոչ է անում այս օրինակով դաստիարակել նոր սերունդին:

Իր գրքի յոթերորդ եղանակում (գլխում) Եղիշեն գրում է.

«Իսկ երանելի առաքինիների, կապվածների և պատերազմում ընկածների կանանց ամբողջ Հայոց աշխարհում ես հաշվել չեմ կարող, որովհետև չիմացածներս ավելի շատ են, քան իմացածներս: Հինգ հարյուրի չափ անուն-անուն ճանաչում եմ, ո՛չ միայն նրանց, ովքեր ավագագույններից էին, այլև շատերին կրտսերագույններից:

... Իրենց աչքերով տեսան իրենց կայքերի հափշտակությունը և իրենց ականջներով լսեցին իրենց սիրելիների վշտերն ու չարչարանքները. նրանց գանձերն առան, թագավորական արին, և ամենևին զարդեր չմնացին նրանց երեսների վրա:

Հայոց աշխարհի փափկասուն տիկիները, որոնք փափուկ կյանքով ու քնքուշ մեծացել էին բազմոցների ու գահավորակների մեջ, շարունակ բոքիկ ու ոտքով էին գնում աղոթատները, առանց ձանձրանալու ուխտելով և խնդրելով, որ կարողանան դիմանալ այն մեծ նեղությանը: Ովքեր իրենց մանկությունից հորթերի ուղեղներով և երեւելի փափուկ մտով էին սնվել, մեծ ուրախությամբ խոտեղեն կերակուր էին ընդունում ... և ամենևին չէին հիշում իրենց սովորական փափուկ կյանքը: Նրանց մարմինների մորթը սև գույն ստացավ, որովհետև ցերեկն արևակեզ էին լինում և ամբողջ գիշերներն էլ գետնի վրա էին քնում: ... Մոռացան իրենց կանացի տկարությունը և առաքինի տղամարդիկ դարձան հոգևոր պատերազմի մեջ. կռիվ բաց արին ու մարտնչեցին ծայրագույն մեղքերի դեմ, կտրեցին և դեն գցեցին նրա մահաբեր արմատները: ... Խոնարհությամբ հաղթահարեցին ամբարտապանությունը և միևնույն խոնարհությամբ հասան երկնավոր բարձրությանը: Այն այրիները, որ նրանց մեջ կային, նորից առաքինության հարսներ դարձան և իրենց վրայից վերցրին այրիության նախատինքը: Իսկ կապվածների կանայք ... հաղորդակից եղան սուրբ կապվածների չարչարանքներին. իրենց կյանքում նմանվեցին մեռած քաջ նահատակներին և հեռվից մխիթարիչ վարդապետներ եղան բանտարկվածներին»:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչի՞ մասին է «Իտալացի աղջկա երգը» բանաստեղծությունը:
2. Ինչ նախապատմություն ունի «Իտալացի աղջկա երգը» բանաստեղծության ծնունդը:
3. Ո՞վ և ո՞ւմ համար է եռագույն դրոշ գործում:
4. Ո՞ւմ դեմ պիտի կռվեր իտալացի աղջկա եղբայրը և հանուն ինչի՞:
5. Քույրն ի՞նչ խոսքերով է ոգևորում եղբորը:
6. Ի՞նչ բառերով է եղբայրը պատասխանում քրոջ կոչերին:
7. Ինչո՞ւ է Նալբանդյանը հիշում հայոց փափկասուն տիկնանց:
8. Որտեղի՞ց է գալիս «Տիկնայք փափկասունք Հայոց աշխարհի» արտահայտությունը և ի՞նչ իմաստ է պարունակում: Այդ մասին ի՞նչ է գրել 5-րդ դարի պատմիչ Եղիշեն:
9. Դ՞ուրս գրեք բանաստեղծության մեջ օգտագործված հնաբանությունները և փոխեք նորաբանություններով:
10. «Իտալացի աղջկա երգը» բանաստեղծությունը Հայաստանի Հանրապետության խորհրդանշաններից ո՞ր մեկն է: Ի՞նչ կարող եք ասել այդ մասին: Ո՞վ է երաժշտության հեղինակը:

**«Ազատություն»** բանաստեղծությունը 1859-ին տպագրվել է «Հյուսիսափայլ» ամսագրում: Ստեղծագործական ազդակները գալիս են ռուս բանաստեղծ Նիկոլայ Օգարյովի նույն վերնագիրն ունեցող քերթվածից:

Նալբանդյանի «Ազատություն» բանաստեղծությունը հենց ազատասիրական գաղափարների համար արգելվել է: Հակառակ արգելքներին՝ արտասանությամբ ու երգով տարածվել է թե՛ Արևելյան, թե՛ Արևմտյան Հայաստանում և ձեռք բերել մեծ ժողովրդականություն:

## ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

Ազատ Աստվածն այն օրից,  
Երբ հաճեցավ շունչ փչել,  
Իմ հողանյութ շինվածքին  
Կենդանություն պարգևել՝  
Ես անբարբառ մի մանուկ  
Երկու ձեռքս պարզեցի  
Եվ իմ անզոր թևերով  
Ազատությունն գրկեցի:

Մինչ գիշերը անհանգիստ  
Օրորոցում կապկապած  
Լալիս էի անդադար,  
Մորս քունը խանգարած,  
Խնդրում էի նորանից  
Բազուկներս արձակել,  
Ես այն օրից ուխտեցի  
Ազատությունը սիրել:

Թոթով լեզվիս մինչ կապերը  
Արձակվեցան, բացվեցան,  
Մինչ ծնողքս իմ ձայնից  
Խնդացին ու բերկրեցան,  
Նախկին խոսքն որ ասացի  
Չէր հայր, կամ մայր, կամ այլ ինչ.  
Ազատությո՛ւն, դուրս թռավ  
Իմ մանկական բերանից:

«Ազատությո՛ւն,– ինձ կրկնեց  
Ճակատագիրը վերևից,–  
Ազատությո՛ւն դու զինվոր  
Կամիս գրվիլ այս օրից:  
Ո՛հ, փշոտ է ճանապարհդ,  
Քեզ շատ փորձանք կըսպասե.  
Ազատություն սիրողին  
Այս աշխարհը խիստ նեղ է»:

«Ազատություն, – գոչեցի, –  
Թող որոտա իմ գլխին  
Փայլակ, կայծակ, հուր, երկաթ,  
Թող դավ դնե թշնամին,  
Ես մինչ ի մահ, կախաղան,  
Մինչև անարգ մահու սյուն  
Պիտի գոռամ, պիտի կրկնեմ  
Անդադար. ազատություն»:



## ԲԱՌԱՐԱՆ

**հաճենալ** – բարեհաճել, ցանկանալ, կամենալ

**հողանյութ շինվածք** – մարդու մարմինը: Նախնական պատկերացումների համաձայն՝ մարդը ստեղծվել է հողից և դառնում է հող: Ըստ «Աստվածաշունչ» մատյանի՝ «Եվ Աստված հողի փոշուց շինեց մարդուն. և նրա ռունգների մեջ կենդանության շունչ փչեց և մարդը կենդանի հոգի եղավ»:

**անբարբառ** – խոսել չիմացող, լեզուն չբացված, բարբառել, չկարողացող

**նորանից** – նրանից

**բազուկներ** – ձեռքեր

**ուխտել** – երդվել

**ծնողք** – ծնողներ

**խնդալ** – ուրախանալ, ցնծալ, ճխալ, ծիծաղել

**բերկրել** – ուրախանալ, հրճվել, բավականություն զգալ

**կամիս գրվիլ** – կամենում ես գրվել

**փայլակ** – կայծակի լույսը, փայլ, ցուլք

**անարգ** – ստոր, նվաստ, անպատիվ

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ե՞րբ և որտե՞ղ է տպագրվել «Ազատություն» բանաստեղծությունը:
2. Ինչ՞ո՞ւ է ժամանակին արգելվել «Ազատություն» բանաստեղծությունը և ինչպե՞ս է այն տարածվել:
3. Ինչպե՞ս է ազատության գաղափարը Նալբանդյանը մարմնավորել այս բանաստեղծության մեջ:
4. Ինչպե՞ս է ներկայացնում ազատության համար աշխարհ եկող մանկան ծնունդը:
5. Երբվանից է նա ուխտել ազատությունը սիրել:
6. Երբ բացվել է նրա լեզուն, ո՞րն է եղել նրա առաջին խոսքը:
7. Ճակատագիրը վերևից ինչպե՞ս է արձագանքել նրան, և ինչպիսի՞ն է աշխարհը ազատություն սիրողների համար:
8. Հանուն ազատության ինչի՞ է պատրաստ բանաստեղծության քնարական հերոսը:
9. Ի՞նչ է ազատությունն ըստ ձեզ: Ո՞րն է ազատության ձեր պատկերացումը: Ի՞նչ տարբերություն կա ազատության և ամենաթողության միջև:

«Ապոլլոնին» բանաստեղծությունը Միքայել Նալբանդյանը գրել է 1859-ին, տպագրվել է 1865-ին:

Նալբանդյանը խոսքն ուղղում է Ապոլլոնին: Իսկ ո՞վ է Ապոլլոնը: Ապոլլոնը հունական դիցարանի գլխավոր աստվածներից մեկն էր, գերագույն աստված Ջևահի և դիցուհի Լետոյի որդին: Ծնվել է Դելփոս կղզում: Եղել է մուսաների աստվածը, այստեղից էլ նրա Մուսագատես մականունը, որ նշանակում է մուսաների առաջնորդ: Ապոլլոնը պաշտվել է որպես ճանապարհների, ճանապարհորդների և ծովագնացների պահապան, խափանել է աղետները, համարվել է արեգակնային լույսի, մարգարեությունների և գուշակությունների աստվածը, Ջևահի կամքը մարդկանց հայտնողը: Նրա պատվին կառուցվել է Դելփյան տաճարը, ճանաչվել է որպես Դելփյան պատգամախոս: Նրան նվիրաբերում էին դափնի և արմավենի: Նրա պատվին անցկացվում էին մարզական մրցույթներ:

Ահա բանաստեղծը դիմում է Ապոլլոնին՝ որպես մուսաների հովանավոր, և նրան է հայտնում իր քաղաքացիական դիրքորոշումը, որովհետև պետք է իր քնարով երգի ազատություն, և դա է կամավոր ընտրած բանաստեղծի իր ճանապարհը:

## ԱՊՈԼԼՈՆԻՆ

Դու, Ապոլլոն, որ տվիր  
Ինձ այս քնար հոգեմաշ,  
Այո՛, գոհ չեմ քեզանից.  
Տրտնջում է և աշխարհ:

Իբրև պատիժ ինձ տվիր,  
Տրտում սրտիս մխիթար,  
Թե՛ զգալով չարչարվիլ  
Ու չքանալ վայրապար:

Ա՛ն նորան հետ, ինձ պետք չէ,  
Տո՛ւր ուրիշի, ում կամիս.  
Քեզ մի անգամ ասել եմ,  
Հիշի՛ր եթե միտք ունիս:

Կյանքիս գարունն է անցել,  
Ինձ ուշացած է քնար.  
Օտար աշխարհի պանդխտիլ  
Ինձ մնում է մշտահար:

Բայց դու, որ քեզ մարդ տկար  
Աստված գանչեց ու խնկեց,  
Մի՛ կարծեր թե միջաբեկ,  
Պիտ պաղատիմ դեպի քեզ:

Ես կընդունիմ կամակար,  
Թե բախտ անգութ ռխերիմ  
Մատռվակե թույն, լեղի  
Յուր սափորից, ինձ բաժին:

Բայց ո՛չ երբեք պիտ սողամ  
Ոտքիդ տակում, ինչպես շատ  
Մարդիկ, որ չեն իմանում,  
Թե էակներ են ազատ:



## ԲԱՌԱՐԱՆ

**վայրապար** – գուր, իզուր, ապարդյուն, անմիտ, անիմաստ, աննպատակ, պատահաբար, անզգույշ, նաև՝ վայրենի պար, խոլապար

**նորան** – նրան

**ում կամիս** – ում կամենում ես

**մշտահար** – մշտնջենական, մշտապես, շարունակաբար

**միջաբեկ** – մեջտեղից բեկված, կոտրված

**պաղատել** – խնդրել, աղաչել, թախանձել, աղերսել, թախանձագին խնդրել

**կամակար** – իր կամքով, հոժարակամ, հոժարությամբ, կամավոր կերպով

**մատռվակե** – խմողներին գինի մատուցել, **մատռվակ** – գինի մատուցող

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչո՞ւ է բանաստեղծությունը վերնագրված «Ապոլլոնին»: Ո՞վ էր Ապոլլոնը, և ինչո՞ւ է Նալբանդյանը դիմում նրան:
2. Ի՞նչ է ասում բանաստեղծը մուսաների հովանավոր աստծուն: Որպես բանաստեղծ՝ գո՞հ է իրեն վիճակված բախտից:
3. Ինչպե՞ս է Նալբանդյանը ներկայացնում բանաստեղծի կերպարը. բանաստեղծը հպարտ է իրեն վիճակված բախտով, թե՞ դժգոհ:

«**Մանկության օրեր**» բանաստեղծությունն առաջին անգամ տպագրվել է 1860 թվականին «Հյուսիսափայլ» ամսագրում: Այն հայ քաղաքացիական պոեզիայի լավագույն էջերից մեկն է և նախորդ՝ «Ապոլլոնին» բանաստեղծության անմիջական շարունակությունը: Այստեղ ևս բանաստեղծը խոսքն ուղղում է մուսաների հովանավոր աստծուն և հստակորեն ներկայացնում բանաստեղծի իր քաղաքացիական դիրքորոշումը:

Նա հիշում է մանկության ու պատանեկության անհոգ օրերը, որոնց հաջորդում է գիտակցությունը՝ ազգի վիճակի ծանր մտահոգություններով: Հայաստանը որպես պետություն չկար, հայ ժողովուրդը ցաքուցրիվ էր եղել, աստիճանաբար հեռանում էր հայրենիքի գաղափարից և հայրենասիրական ոգուց: Ահա իրենով Նալբանդյանն օրինակ է ծառայում և ժողովրդին կոչ անում թոթափելու ստրկական լուծը: Բանաստեղծը վերջնականապես ճշտել է իր հայրենասիրական պայքարի ուղին, և Ապոլլոնի տված քնարը միմիայն այդ նպատակին պիտի

ծառայի: Հակառակ դեպքում նա պատրաստ է անգամ քնարը ետ վերադարձնել, որովհետև սիրային քնարերգության ժամանակ չէ, այլ բուն պայքարի: Հաջորդում են մարտական տողեր, երբ քնարը պետք է փոխարինել սրով:

Չմոռանանք, ժողովրդի մեջ արդեն ուժեղացել էր ազատագրական պայքարի ոգին. և ուր որ է պիտի պայթեր Զեյթունի ապստամբությունը (1862)՝ ընդդեմ թուրքական բռնակալության: Հայ ժողովուրդը բռնությունների էր ենթարկվում նաև ռուսական ինքնակալության կողմից:

Նալբանդյանն, ահա, կոչ է անում ազգային-ազատագրական պայքարի և քնարը փոխում սրով, որովհետև դրա ժամանակն էր:

## ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՕՐԵՐ

Մանկության օրեր, երագի նման  
Անցաք գնացիք, այլ չեք դառնալու.  
Ո՛հ դուք երջանիկ, ճի անհոգ օրեր,  
Ընդունակ միայն ուրախացնելու:

Ձեզանից հետո եկավ գիտություն  
Յուր ծանր հայացքով աշխարհի վերա,  
Ամեն բան ընկավ մտածության տակ,  
Բոպե չմնաց ազատ կամ ունայն:

Գիտակցությունը հաջորդեց սորան.  
Ազգի վիճակը ծանրացավ սրտիս...  
Ապուլուն տվեց ինձ յուր քնարը,  
Որպես փարատիչ տրտում ցավերիս:

Ավանդ. այդ քնարը իմ ձեռքում հնչեց  
Նույնպես լալագին, նույնպես վշտահար,  
Ինչպես իմ սիրտն էր, իմ զգացմունքը.  
Ուրախացուցիչ չգտա մի լար:

Ես այն ժամանակ միայն զգացի,  
Որ այդ ցավերից ազատվելու չեմ,  
Որչափ իմ ազգս կըմնա ստրուկ  
Օտարների ձեռք, անխոս, տխրադեմ:

Մանկության օրեր, ինչնու այդպես շուտ  
Թռաք գնացիք, անդարձ հավիտյան.  
Ես այն ժամանակ անհոգ ու ազատ  
Կարծում էի ինձ աշխարհի իշխան:

Գերության շղթան ինձ զգալի չէր,  
Եվ ոչ բռնության անգութ ճանկերը.

Ձեզանից հետո ծանրացան նոքա,  
Ո՛հ, անիծում եմ ես այս օրերը:

Լճու կաց, դու քնար, այլ մի հնչեր ինձ,  
Ապուլլոն, հեն առ դարձյալ դու նորան,  
Տնոր մի այլ մարդու, որ ընդունակ է  
Ջոհ բերել կյանքը սիրած աղջկան:

Ես պիտի դուրս գամ դեպի հրապարակ  
Առանց քնարի, անգարդ խոսքերով.  
Ես պիտի գոչեմ, պիտի բողոքեմ,  
Խավարի ընդդեմ պատերազմելով:

Ներկա օրերում այլ ինչ սև քնար,  
Սուր է հարկավոր կտրիճի ձեռքին.  
Արյուն ու կրակ թշնամու վերա,  
Այս պիտի լինի խորհուրդ մեր կյանքին:

Թող պատգամախոսը հնացած Դելֆի  
Յուր եռոտանու վերա փրփրի.  
Թող միջին դարու գաղափարներով  
Ամբոխը խաբել ճգնի աշխատի:

Թող նա թարգմանե **գրպարտությունը**,  
Թող մխիթարվի ծովի ափերում,  
Մեք ազատության ենք միայն թարգման,  
Միայն այս խոսքս ունինք բերանում:

«Ո՛վ Հայր, ո՛վ դու Հայր, որ երկնքումս ես,  
Խնայիր թշվառ մեր անտեր ազգին.  
Մի տար զոհ գնալ թշնամիների».  
Նա այլ չէ լսում դելֆյան հարցուկին:



## ԲԱՌԱՐԱՆ

**այլ չեք դառնալու** – այլևս չեք դառնալու

**վերա** – վրա

**ունայն** – դատարկ, պարապ

**սորան** – սրան

**լալագին** – թախծոտ, տխուր, վշտոտ, վշտահար

**ուրախացուցիչ** – ուրախացնող

**անզուրթ** – անխիղճ, խիղճ չունեցող, դաժան, անհոգի

**նոքա** – նրանք

**նորան** – նրան

**անզարդ խոսքեր** – պարզ, ուղիղ խոսքեր, առանց բանաստեղծական պատկերավորման

**Դեկլիայան պատգամախոս մեք** – խոսքը վերաբերում է Ապոլլոնին

### ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ե՞րբ է Նալբանդյանը գրել «Մանկության օրեր» բանաստեղծությունը, որտե՞ղ է այն տպագրվել և ո՞ր ստեղծագործության տրամաբանական շարունակությունն է:
2. Ո՞ւմ է իր խոսքն ուղղում բանաստեղծը:
3. Ինչպե՞ս է զարգանում բանաստեղծությունը. ինչպիսի՞ն էին մանկությունը, պատանեկության (ուսումնառության) տարիները:
4. Հասունացող տարիքի հետ մեկտեղ ամրապնդվում է գիտակցությունը և ինչի՞ առջև է կանգնեցնում բանաստեղծին: Ինչո՞ւ է նա երագում մանկության օրերի վերադարձը:
5. Ի՞նչ գերության շղթայի մասին է ակնարկում բանաստեղծը, հայ ժողովուրդն այդ տարիներին քաղաքական ի՞նչ վիճակի մեջ էր գտնվում:
6. Հայ ժողովրդի ծանր կացությունը նկատի ունենալով՝ ինչպե՞ս է բանաստեղծը դիմում Ապոլլոնին, ի՞նչ է ասում նրան և նրա տված քնարն ինչի՞ հետ է փոխում:
7. Ինչո՞ւ է քնարը բնորոշում «սև» մակդիրով («սև քնար») և այն փոխում սրով: Ո՞ւմ դեմ պիտի պայքարեր հայ ժողովուրդը:
8. Ինչպե՞ս է ավարտվում բանաստեղծությունը: Վերջին տան մեջ հանուն ազգի փրկության ո՞ւմ է դիմում բանաստեղծը:
9. Ինչո՞ւ է Նալբանդյանն իրեն բնորոշում «ազատության թարգման»: Օգտվելով իր բառապաշարից՝ ուրիշ ի՞նչ արտահայտություններով կբնորոշեք նրան:

# ՌԱՓԱՅԵԼ ՊԱՏԿԱՆՅԱՆ

## 1830–1892

*Ռափայել Պատկանյանն ազգային-ազատագրական պայքարի երգիչ էր: Նա գրել է բանաստեղծություններ, պոեմներ, պատմվածքներ և վիպակներ: Զբաղվել է մանկավարժությամբ: Թողել է բավականին հարուստ գրական ժառանգություն:*



Ռափայել Պատկանյանը ծնվել է 1830 թվականի նոյեմբերի 20-ին Նոր Նախիջևան քաղաքում: Պատկանյանների գերդաստանը շատ հայտնի էր ոչ միայն իրենց քաղաքում, այլև ամբողջ Կովկասում:

Հոր՝ Գաբրիել քահանայի վարժարանում նախնական կրթություն ստանալուց հետո Պատկանյանը 1843–1849 թվականներին ուսումը շարունակում է Մոսկվայի Լազարյան ճեմարանում: Ճեմարանը չավարտած՝ մեկնում է Թիֆլիս և Ներսիսյան դպրոցում դասավանդում ռուսերեն, ինչպես նաև հոր հետ խմբագրում «Արարատ» շաբաթաթերթը: Այդտեղ էլ տպագրվում են նրա առաջին բանաստեղծությունները: Բարձրագույն կրթություն Պատկանյանն ստանում է նախ Դորպատի համալսարանում, ինչի ճանապարհը բացել էր Խաչատուր Աբովյանը, այնուհետև ուսումը շարունակում է Մոսկվայի համալսարանի պատմալեզվագրական բաժնում, Պետերբուրգի զինվորական-բժշկական ակադեմիայում, ի վերջո, Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների բաժնում և այն ավարտում 1860 թվականին:

Մոսկվայում 1854-ին նա ստեղծում է «Գամառ Քաթիպա» անունով գրական մի խմբակ: Պետերբուրգ տեղափոխվելուց հետո լույս տեսած տետրերում հիմնականում զետեղվում են Պատկանյանի գեղարվեստական երկերը:

Այստեղ էլ 1856 թվականին տպագրված «Արաքսի արտասուքը» բանաստեղծությունը լայն տարածում է ստանում, վերածվում ժողովրդական երգի և հանրաճանաչ դարձնում հեղինակի անունը:

Գրական գործեր գրելու հետ մեկտեղ Պատկանյանը կազմում է երգարան, այբբենարան, մայրենի լեզվի դասագրքեր, թարգմանում է Եզոպոսի առակները: Այսինքն՝ նա ամեն ինչ անում է ժողովրդի գրագիտությունը բարձրացնելու համար: Նաև այդ նպատակով 1863-ին հիմնում է «Հյուսիս» շաբաթաթերթը:

1864 թվականին լույս է տեսնում նրա բանաստեղծությունների առաջին ժողովածուն: Նոր գրականության հետ մեկտեղ նա պաշտպանում էր նաև նոր լեզվի՝ աշխարհաբարի շահերը: Մշակում է բանահյուսական («Քյոռ օղլի»), պատմական («Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը») նյութեր: Գրում է ազգային վերածնունդ ազդարարող բանաստեղծություններ ու պոեմներ («Հայ և հայություն», «Օրորոցի երգ», «Ազատ երգեր» շարքը), երգիծում, ծաղրում է հայությունից հեռացողներին («Մայրաքաղաքում կրթված հայ երիտասարդ», «Մայրաքաղաքում կրթված հայ աղջիկ»):

1867 թվականին Պատկանյանը հաստատվում է հայրենի քաղաքում և նախ իր

բացած պանսիոնում, ապա թեմական դպրոցում աշխատում որպես հայոց լեզվի ուսուցիչ: Հիմնում է մանկապարտեզ, մանուկների համար ստեղծում է մանկական բանաստեղծություններ, իր հայրենի բարբառով գրում է նաև երգիծական գործեր, որոնք ի մի է բերում «**Նոր Նախիջևանի քնար**» ժողովածուի մեջ:

Պատկանյանը գրել է նաև արձակ երկեր, որոնցից են «**Չախուս**» պատմվածքը, «**Փառասերը**», «**Տիկին և Նաժիշտ**» վիպակները:

Պատկանյանը նոր ժամանակների առաջին հեղինակներից մեկն էր, ով մեծապես նպաստեց հայ ժողովրդի ինքնաճանաչմանը և ազգային ինքնագիտակցության բարձրացմանը:

Պաշտպանելով աշխարհաբարը՝ նա կողմ էր պարզ խոսքին: Այս տեսակետից նա ծաղրում էր բոլոր նրանց, ովքեր խոսում և գրում էին ճոռոմ լեզվով: Ըստ նրա՝ այդպիսի մարդիկ «*ես գնացի տուն և ճաշեցի*» ասելու փոխարեն ասում են. «*ես ոտնաշարժություն արեցի ի կողմն իմ տան և իմ մարմնեղեն օրգանիզմը լեցուցի մարմնակազդուրիչ նյութերով*»:

Ժողովրդի կողմից սիրված բանաստեղծը մահացել է 1892 թվականի սեպտեմբերի 7-ին Նոր Նախիջևանում:

## ՕԳՏԱԿԱՐ Է ԻՄԱՆԱԼ

### ՊԱՏԿԱՆՅԱՆՆԵՐԻ ԳԵՐԴԱՍՏԱՆԸ

Պատկանյանների գերդաստանը հայ ժողովրդին տվել է բազմաթիվ արժանավոր զավակներ: Ռափայելի պապը՝ Սերովբեն, ուսուցիչ էր և բանաստեղծ, հայրը՝ Գաբրիել քահանան, ուներ դպրոց, որտեղ ուսանել է ինչպես Ռափայելը, այնպես և Միքայել Նալբանդյանը: Նա Թիֆլիսում հիմնադրել է «Արարատ» շաբաթաթերթը, եղել է Ներսիսյան դպրոցի տեսուչը, գրել է պոեմներ, վեպեր, բանաստեղծություններ: Ռափայելի հորեղբայրը՝ Միքայել Պատկանյանը, թատերագիր էր և թատերական գործիչ, իսկ հորեղբոր որդին՝ Քերովբե Պատկանյանը նշանավոր հայագետ էր: Նրա եղբայրը՝ Հովհաննեսը, նկարիչ էր: Պատկանյանների տոհմը մեծ ներդրում ունի հայ արվեստի ու մշակույթի մեջ:

### «ԳԱՄԱՌՔԱԹԻՊԱ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

1854 թվականին Ռափայել Պատկանյանը Մոսկվայում կազմակերպում է «Գամառ Քաթիպա» գրական խմբակցությունը: Այդ ձևակերպումն առաջացել է երեք ընկերների անվան և ազգանվան հապավումից, ավելացրած ա հոդակապը՝

Ռափայել Պատկանյան,

Գևորգ Քանանյան,

Մնացական Թիմուրյան:

Փորձեք գտնել հապավումների մասնիկները:

«Գամառ Քաթիպան»-ն մինչև 1857 թվականը հրատարակում է իր գրական տետրերը, որից հետո խումբը ցրվում է, և այդ անունով հանդես է գալիս միայն Ռափայել Պատկանյանը:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ե՛րբ և որտե՞ղ է ծնվել Ռափայել Պատկանյանը:
2. Ի՞նչ կարող եք ասել Պատկանյան գերդաստանի մասին:
3. Նախնական և բարձրագույն կրթությունները որտե՞ղ է ստացել Պատկանյանը:
4. Ինչպիսի՞ աշխատանքային գործունեություն է ծավալել նա:
5. Ի՞նչ կարող եք ասել «Գամառ Քաթիպա» գրական խմբակցության մասին, ինչպե՞ս եք բացում այդ հապավումը:
6. Ո՞ր բանաստեղծությամբ Պատկանյանը դարձավ հանրաճանաչ և ժողովրդին սիրելի գրող:
7. Գեղարվեստական երկերին զուգահեռ ուրիշ ի՞նչ գրքեր է տպագրել Պատկանյանը:
8. Թվարկե՛ք Պատկանյանի գրական երկերը:

## ԱՐԱՔՍԻ ԱՐՏԱՍՈՒՔԸ

ՆՎԵՐ ԳԵՎՈՐԳ ՔԱՆԱՆՅԱՆԻՆ

Մայր Արաքսի ավերով  
Քայլամուր գընում եմ,  
Հին-հին դարուց հիշատակ  
Այլաց մեջը պըտում եմ:

Բայց նոքա միշտ հեղհեղուկ,  
Պըղտոր ջըրով եզերքին  
Դարիվ-դարիվ խըփելով  
Փախչում էին լալագին:

– Արա՛քս, ինչո՞ւ ձըկանց հետ  
Պար չես բռնում մանկական,  
Դու դեռ ծովը չի հասած՝  
Սըգավոր ես ինձ նըման:

Ինչո՞ւ արցունք ցայտում են  
Քու սեգ, հըպարտ աչերից,  
Ինչո՞ւ արագ փախչում ես  
Այդ հարազատ ավերից:

Մի՛ պըղտորիլ հատակըդ,  
Հանդարտ հոսե՛ խայտալով,  
Մանկությունը քու կարճ է՝  
Շուտ կը հասնիս դեպի ծով:

Վարդի թըփեր թո՞ղ բըսնին  
Քու հյուրընկալ ավի մոտ,  
Սոխակները նոցա մեջ  
Երգեն մինչև առավոտ:

Մըշտադալար ուռիներ  
Սառ ծոցի մեջ քու ջրիին,  
Ճկուն ոստրն ու տերև  
Թող թաց անեն տապ օրին:

Ափերիդ մոտ երգելու  
Հովիվք թո՛ղ գան համարձակ,  
Գառն ու ուլը քու վըճիտ  
Ջուրը մըտնին միշտ արձակ:

Մեջքը ուռցուց Արաքսը,  
Փրփուր հանեց իր տակից,  
Ամպի նըման գոռալով,  
Էսպես խոսեց հատակից.

– Խիզա՛խ, անմիտ պատանի,  
Նիրհըս ինչո՞ւ դարևոր  
Վրդովում ես, նորոգում  
Իմ ցավերը բյուրավոր:

Սիրելիի մահից ետ  
Ե՛րբ ես տեսել, որ այրին  
Ոտից գըլուխ պըճնվի  
Իր զարդերով թանկագին:

Որի՞ համար զարդարվիմ,  
Որի՞ աչքը հրապուրեմ,  
Շատերն ինձ են ատելի,  
Շատերին՝ ես օտար եմ...

Իմ ազգակից գիժ Բուռը,  
Թեև այրի ինձ նըման,  
Ըստրկորեն կրում է  
Գայթակղիչի կուռ շղթան:

Բայց նա ինձ չէ օրինակ,  
Ես հայ՝ հայիս կըճանչնամ,  
Օտար փեսա չուզելով,  
Ես միշտ այրի կըմնամ:

Կար ժամանակ, որ ես էլ  
Շըքեղազարդ հարսի պես  
Հազար ու բյուր պըչրանքով  
Փախչում էի ափերես:

Հատակըս պարզ ու վրճիտ,  
Կոհակներըս ոլորուն,  
Լուսաբերը մինչև այգ  
Ջրիս միջին էր լողում:

Ինչըս մընաց էն օրից,  
Ո՞ր ջրամոտ գեղերըս,  
Ո՞րը իմ շեն քաղաքից,  
Ո՞ր բերկրալի տեղերըս:

Տուրքը ջրի ամեն օր  
Իր սուրբ ծոցեն Արարատ  
Մայրախընամ ինձ սընունդ  
Պարզևում է լիառատ:

Բայց ես այն սուրբ ջրերով  
Սուրբ Ակոբի աղբյուրին  
Պիտի ցողեմ արտորամյքն  
Իմ ատելի օտարին...

Մինչ իմ որդիք,- ո՞վ գիտե –  
Ծարավ, նոթի, անտերունչ  
Օտար աշխարի հաժում են  
Թույլ ոտքերով կիսաշունչ...



Հեռնի, հեռնի քըշեցին  
Բընիկ ազգըն իմ Հայկյան,  
Նորա տեղը ինձ տըվին  
Ազգ անկըրոն, մոլեկան:

Դոցմ համար զարդարեմ  
Իմ հյուրընկալ ափերը,  
Եվ կամ դոցմ հրապուրեմ  
Ճըպոռոտ, պըլշած աչերը:

Քանի որ իմ զավակունք  
Այսպես կու մընան պանդուխտ՝  
Ինձ միշտ սըգվոր կը տեսնեք,-  
Այս է անխաբ իմ սուրբ ուխտ...

Էլ չի խոսեց Արաքսը,  
Հորձանք տվեց ահագին,  
Օղակ-օղակ օձի պես  
Առաջ սողաց մոլեգին:



## ԲԱՌԱՐԱՆ

**քայլամուր** – մուրված

**ալյաց** – ալիքների

**պտրում եմ** – որոնում եմ

**դարիվ-դարիվ** – լեփ-լեցուն, մինչև ափերը լցված

**ձկանց** – ձկների

**սեգ** – վեհ, հպարտ

**խայտալ** – ուրախությունից թռչկոտել, խաղալ, ցնծալ, ցուլալ, փայլել

**մշտադալար** – միշտ կանաչ

**ոստ** – շյուղ, մատղաշ ճյուղ, շիվ

**տապ** – շոգ

**ուռցուց** – ուռեցրեց

**նիրհ** – նինջ

**դարևոր** – դարավոր

**այրի** – ամուսինը մահացած և այլևս չամուսնացած կին

**պճնվել** – զարդարվել, շքեղորեն գեղեցկանալ

**կճանչնամ** – կճանաչեմ

**շքեղազարդ** – շքեղորեն զարդարված, ճոխ, շռայլ

**պչրանք** – զարդարանք

**ափերես** – ափերիցս

**կոհակ** – ալիք

**Լուսաբեր** – այստեղ՝ Արուսյակ մուրակը

**մայրախնամ** – մոր խնամած, մայրական խնամքով մեծացած

**արտորայք** – արտեր

**նոթի** – անոթի, քաղցած

**անտերունչ** – անտուն, տունուտեղ չունեցող, թափառական

**մոլեկան** – մոլեռանդ, մոլեգին, կատաղի

**դոցա** – դրանց

**պլշած** – աչքերը չռած

**զավակունք** – զավակները

**հորձանք** – հորդացած ջրերի արագ հոսանք, բարձր ու մեծ ալիք, ջրապտույտ, սահանք

## ՕԳՏԱԿԱՐ Է ԻՄԱՆԱԼ

### ՄԱՅՐ ԱՐԱՔՍ

Արաքս գետի պատմական անունը Երասխ է: Ըստ Խորենացու՝ Երասխ անունն առաջացել է Արամայիսի թոռան՝ Երաստի անունից: Սկզբից ևեթ ընդունվել է որպես հայոց մայր գետ: Հին Կտակարանում համարվել է դրախտի չորս գետերից մեկը և կոչվել Գիհոն (Գեհոն): Գեհոն կամ Ճեհոն եբրայերեն նշանակում է հարձակմամբ հոսել: Արաքս հունարեն նշանակում է աղմկել:

Արաքսը համարվել է բուն հայկական գետ: Գետի երկարությունը 1072 կմ է: Սկիզբ է առնում Բյուրակնի աղբյուրներից, միանում է Կուր (Քուռ) գետին և թափվում Կասպից ծովը: Վտակներից են Ախուրյանը, Հրազդանը, Մեծամորը (Սևջուր), Քասախը, Արփան, Որոտանը, Տղմուտը: Նրա վրա կառուցվել են կամուրջներ՝ Բասենի, Երվանդակերտի, Արտաշատի, Նախիջևանի և Զուղայի: Արաքսը տղմոտ, պղտոր գետ է, հաճախակի փոխում է հունը, վարարում է հատկապես մայիս ամսին: Զրերն օգտագործվում են ոռոգման նպատակով: Գետի ջրերի օգտագործումով կառուցվել են ջրամբարներ:

Արաքսը գովերգվել է հայ և այլազգի գրողների կողմից: Հռոմեացի բանաստեղծ Վերգիլիոսը (Ք.ծ.ա. 74-19) Արաքսը բնորոշել է այս տողերով՝ «և գետն Երասխ՝ կամուրջներ չհանդուրժող»: Մեկ ուրիշ հռոմեացի բանաստեղծ՝ Ալբիոս Տիբուլլոսը (Ք.ծ.ա. 54-19) գետին տվել է «Աղվորիկ Արաքս» բնորոշումը: Արաքս գետի նկարագրությունն առկա է Բաժնու «Սամվել» վեպի մեջ («Արաքսի որոգայթները»): Արաքս գետը հիշվում է բազմաթիվ ավանդությունների մեջ: Այն դարձել է անձնանուն, տեղանուն: «Արաքս» անունով կան թերթեր, հաստատություններ և այլն:

Ռափայել Պատկանյանի «Արաքսի արտասուքը» բանաստեղծությունը գրվել է 1855 թվականին, վերածվել է ժողովրդական երգի:

### ԴԻՄԱՌՆՈՒԹՅՈՒՆ

Դիմառնությունը գեղարվեստական այն հնարքն է, երբ անշունչ առարկաները դենք են ստանում և անձնավորվում: Այդպես է իր «Ողբ Եղեսիոյ» (1145 թ.) պոեմը գրել Ներսես Շնորհալին: Ահա այստեղ Պատկանյանը շնչավորել, անձնավորել է Արաքսը. գետը լեզու առած խոսում է բանաստեղծի հետ:

Դիմառնությանն ասում են նաև **բարառնություն, անձնավորում**: Այն հնագույն ճարտասանական միջոցներից մեկն է, որ ուսուցանվում էր հոգևոր դպրոցներում և մեր նախնիներին ծանոթ էր դեռևս 5-րդ դարում թարգմանված «Պիտոյից» գրքից:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ գիտեք Արաքս գետի մասին:
2. Ի՞նչն է բանաստեղծն Արաքսին դիմում «Մայր Արաքս» արտահայտությամբ:
3. Ի՞նչն է բանաստեղծը քայլամուկը:
4. Ի՞նչ է ասում բանաստեղծը Արաքսին: Առանձնացրե՛ք այդ տները:
5. Ի՞նչ է պատասխանում Արաքսը: Առանձնացրե՛ք նաև այդ տները:
6. Ի՞նչն է Արաքսը հուսահատ, սգավոր, ի՞նչ է նա ասում ժողովրդի ճակատագրի մասին:
7. Ի՞նչն է Արաքսն իրեն համարում պանդուխտ:
8. Ի՞նչ բնույթի բանաստեղծություն է սա, և ի՞նչ է խորհրդանշում բանաստեղծի ու Արաքսի զրույցը:
9. Ի՞նչ գիտեք դիմառնության մասին, և ի՞նչպե՞ս է բանաստեղծն այդ գեղարվեստական հնարքը կիրառել այս գործում:

## ՕՐՈՐՈՅԻ ԵՐԳ



Արի՛, ի՛մ սոխակ, թո՛ղ պարտե՛զ մերին,  
Տաղերով քուն բեր տըղիս աչքերին.  
Բայց նա լալիս է. դու, սոխակ, մի՛ գալ,  
Իմ որդին չուզե տիրացու դառնալ:

Ե՛կ, արեղաձա՛գ, թո՛ղ արտ ու արոտ,  
Օրորե՛ն տըղիս, քընի է կարոտ.  
Բայց նա լալիս է. դու, ձագուկ, մի՛ գալ,  
Իմ որդին չուզե արեղա դառնալ:

Թո՛ղ դու, տատրակի՛կ, քու ձագն ու բունը,  
Վուվուով տըղիս բեր անուշ քունը.  
Բայց նա լալիս է. տատրակի՛կ, մի՛ գալ,  
Իմ որդին չուզե սըգավոր դառնալ:

Կաչաղանկ ճարպիկ, գող, արծաթասեր,  
Շահի զըրուցով որդուս քունը բեր.  
Բայց նա լալիս է. կաչաղանկ, մի՛ գալ,  
Իմ որդին չուզե սովդաքար դառնալ:

Թո՛ղ որսըղ, արի՛, քաջասիրտ բազե,  
Քու երգը գուցե ի՛մ որդին կուզե...  
Բազեն որ եկավ՝ որդիս լըռեցավ,  
Ռազմի երգերի ձայնով քնեցավ:





## ԲԱՌԱՐԱՆ

**մերի** – անտառ, մայրի ծառ

**տիրացու** – եկեղեցական ստորին պաշտոնյա, քահանայի օգնական

**աբեղաձագ** – արտույտի տեսակ

**արոտ** – արոտավայր, արածելու խոտ, արածելու ժամանակաշրջանը

**աբեղա** – միայնակյաց կրոնավոր, վանական կրոնավոր, կուսակրոն քահանա

**տատրակիկ** – տատրակ, վայրի աղավնի

**վուվու** – տատրակների, աղավնիների ձայնը

**սովդաքար** – վաճառական, առևտրական

**բազե** – գիշատիչ թռչուն, փոխաբերաբար՝ քաջարի, խիզախ

## ՕԳՏԱԿԱՐ Է ԻՄԱՆԱԼ

### ՕՐՈՐՈՑԱՅԻՆ ԵՐԳԵՐ

Հայ ժողովրդական պոեզիան հարուստ է օրորոցային երգերով: Մայրը, քնեցնելով իր մանկանը, նրա հետ օրորում է իր երազանքները կյանքի, ապագայի, հայրենիքի մասին: Զավակին մաղթում է երջանիկ, անփորձանք կյանք և ապագա:

Այս երգերում և՛ մանկան գովքն է, և՛ մոր անձնական ապրումներն են: Ժողովրդական օրորոցայիններ գրի է առել Կոմիտասը: Հայտնի են Ակնի, Վանի, Կարինի օրորոցայինները, որոնք ազգային քնարական երգարվեստի արժեքներ են:

Պատկանյանի այս օրորոցայինի մեջ մայրն իր զավակին մեծացնում է որպես հայրենիքի զինվոր:

Պատկանյանն այս բանաստեղծությունը գրել է 1881 թվականին: Այս վերնագրով ունի նաև մեկ այլ բանաստեղծություն («Քուն եղիր, բալաս»):

Մոր անունից մանուկը չի ուզում ո՛չ տիրացու դառնալ, ո՛չ աբեղա, ո՛չ սգավոր, ո՛չ առևտրական, այլ միայն հայրենիքի զինվոր: Նրա քունը տանում է միայն քաջասիրտ բազեի ռազմի երգերի հնչյունների ներքո: Սա հայրենասիրական հրաշալի բանաստեղծություն է, ունի իր մեղեդին և երգվում է:

### ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Բնույթով ինչպիսի՞ բանաստեղծություն է «Օրորոցի երգ»-ը:
2. Ինչպիսի՞ կառուցվածք ունի երգը: Մայրն ինչ թռչունների է դիմում, որպեսզի նրանք քուն բերեն իր մանկան աչքերին: Բայց ինչո՞ւ մանուկը քուն չի մտնում:
3. Վերջին տան մեջ մայրը ո՞ր թռչունին է դիմում, և ինչ երգի ձայնի տակ է նա քնում:
4. Ի՞նչ դաստիարակչական նշանակություն ունի այս բանաստեղծությունը:
5. Սովորե՞ք այս բանաստեղծության համար գրված մեղեդին և փորձե՞ք երգել:

## ՎԱՐԴԱՆԻ ԵՐԳԸ

«ՔԱՋ ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻ ՄԱՀԸ» պոեմից

Հիմի էլ լրռենք, եղբարք, հիմի էլ,  
Երբ մեր թըշնամին իր սուրն է դըրել,  
Իր օրհասական սուրը մեր կըրծքին,  
Ականջ չի դընում մեր լաց ու կոծին.  
Ասացե՛ք, եղբարք հայեր, ի՞նչ անենք,-  
Հիմի էլ լրռենք:

Հիմի էլ լրռենք, երբ մեր թըշնամին  
Դավով, հրապուրքով տիրեց մեր երկրին,  
Ջընջեց աշխարհքից Հայկա անունը,  
Հիմքից կործանեց Թորգոմա տունը,  
Խըլեց մեզանից թագ, և խոսք, և գենք,-  
Հիմի էլ լրռենք:

Հիմի էլ լրռենք, երբ մեր թըշնամին  
Խըլեց մեր սուրը – պաշտպան մեր անձին,  
Մըշակի ձեռքիցն էլ խոփը խըլեց,  
Այդ սուր ու խոփից մեր շղթան կըռեց.  
Վայ մեզ, շըղթայով կապած գերի ենք,-  
Հիմի էլ լրռենք:

Հիմի էլ լրռենք, երբ մեր թըշնամին  
Սոսկալի գենքը բըռնած մեր գլխին  
Կուլ տալ է տալիս արտասուք առատ,  
Աղեխարշ բողոք վաղուց ապիրատ.  
Մեր գըլուխ լալու Եփրատ ո՞ր պըտռենք,-  
Հիմի էլ լրռենք:

Հիմի էլ լրռենք, երբ մեր թըշնամին  
Լիրբ գոռոգությամբ լըցրած իր հոգին,  
Արդարության ձայնն հանած իր սըրտից  
Արտաքսում է մեզ մեր բընիկ երկրից.  
Պանդո՞ւխտ, հալածյա՞լ, եղբարք, ո՞ր դիմենք,-  
Հիմի էլ լրռենք:

Հիմի էլ լրռենք, երբ մեր թըշնամին,  
Անհոգ մեր բերած ծանր զոհերին,  
Յուր լիրբ նըզոված ձեռքը կարկառեց,  
Ազգության վերջին կապը պատառեց.  
Հայի կորուստը մոտ է, ի՞նչ անենք,-  
Հիմի էլ լրռենք:

Հիմի էլ լրռենք, երբ մեր թըշնամին  
Արհամարհելով մեր փառքն ազգային,  
Մեր եկեղեցուն ձեռնամերձ եղավ,  
Գառնազգեստ գայլին մեզ գըլուխ դըրավ.  
Սուրբ խորան չունինք, արդ ո՞ր աղոթենք,–  
Հիմի էլ լրռենք:

Հիմի էլ լրռենք, մարդիկ ինչ կասեն,  
Երբ մեր տեղ քարինք, ապառաժք խոսեն.  
Չե՞ն ասիլ, որ հայք արժանի էին  
Այդ ըստրկական անարգ վիճակին.  
Մեր սուրբ քաջ նախնյաց գործերը գիտենք,–  
Մինչև երբ լրռենք:

Թո՛ղ լրռե մունջը, անդամալույծը  
Կամ՝ որոց քաղցր է թշնամու լուծը,  
Բայց մենք, որ ունինք հոգի ու սիրտ քաջ,  
Եկ անվախ ելնենք թըշնամու առաջ.  
Գոնե մեր փառքը մահով ետ խըլենք –  
Ու այնպես լրռենք:



## ԲԱՌԱՐԱՆ

**օրհասական** – մահաբեր, սպանիչ, բախտորոշ, ծայրահեղ ծանր վիճակ

**դավ** – գաղտնի մտածված չար արարք, նենգ արարք, դավադրություն

**հրապուրք** – հրապույր, գեղեցկության, գրավչության զգացում, հմայիչ

**Թորգոմա տուն** – Հայաստան

**մշակ** – հողի աշխատավոր, երկրագործ, ընդհանրապես՝ աշխատավոր, բեռնակիր

**խոփ** – գութանի կամ արորի մետաղյա մասը, որը խրվում է հողի մեջ և պատ-  
ռում նրա շերտը

**աղեխարշ** – աղիքները խաշող, կսկիծ, մորմոք պատճառող

**ապիրատ** – անիրավ, չար, անողոք

**պտռել** – որոնել

**լիրբ** – անամոթ, անպատկառ, անառակ

**գոռոզություն** – ինքնահավանություն, մեծամտություն, ամբարտավանություն

**նզովք** – անեծք, նզոված՝ անիծած

**կարկառել** – ձեռքը մեկնել, պարզել, նաև՝ քարեր կուտակել

**ձեռնամերձ** – ձեռքը հասցնելու չափ իրար մոտ, ձեռքը հասցնելու տարածություն

**գառնազգեստ գայլ** – գառան կերպարանք ընդունած գայլ, խորամանկ գայլ

**մունջ** – համր

**անդամալույծ** – խաթարված, աղավաղված մարդ, հաշմանդամ

«Վարդանի երգը» հասված է «**Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը**» պոե-  
մից (գրել է 1856-ին, տպագրել 1861-ին), բանաստեղծն այն բնորոշել է որպես վի-

պասանություն: Այդ հատվածը վերածվել է նաև հրաշալի երգի: Ամբողջ պոեմը գրված է հայրենասիրական բարձր տրամադրությամբ:

«Վարդանի երգի» ծաղրանմանությամբ Միքայել Նալբանդյանը բանտարկության տարիներին (1862–1864) գրել է «Մամիկոնյան մեծ Վահանի պատասխանը» բանաստեղծությունը. սկսվում է «Հիմի էլ խոսենք, եղբարք, հիմի էլ...» տողով, իսկ կրկներգը «Հիմի էլ խոսենք» կիսատողն է:

## ՕԳՏԱԿԱՐ Է ԻՄԱՆԱԼ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ

Տարբեր աղբյուրներում Հայաստանը դարերի ընթացքում հիշատակվել է տարբեր անուններով՝ Թորգոմա տուն, Ասքանազյան գունդ, Հայասա, Հայկազանց երկիր, Նաիրի, Արարատի (Արարադի) երկիր (Ուրարտու), Բիայնա (Վանի թագավորություն), Հայք, Հայոց աշխարհ, Արմենիա, Հայաստան: Իսկ 20-րդ դարում որպես պետականություն՝ Հայաստանի Հանրապետություն (1918–1920), Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն (1920–1991), Հայաստանի Հանրապետություն (1991-ի սեպտեմբերի 21-ից առ այսօր):

#### ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ո՞ր պոեմից (վիպասանությունից) է «Վարդանի երգը» հատվածը:
2. Ո՞րն է բանաստեղծության կրկներգը և ի՞նչ իմաստով է այն կիրառվում:
3. Ինչպիսի՞ն էր հայ ժողովրդի վիճակը, և ինչի՞ կոչ է անում բանաստեղծը:
4. Ինչպե՞ս է ավարտվում «Վարդանի երգը»: Ի՞նչ էք հասկանում ազգային արժանապատվություն ասելով:
5. Ժամանակի ընթացքում ի՞նչ անուններ են տրվել հայոց հայրենիքին:
6. Հիշատակե՞ք հայոց պետության անունները 20-րդ դարում: Մտաբերե՞ք նաև հայոց հնագույն թագավորությունները, թվարկե՞ք արքայատոհմերը: Ո՞րն է եղել հայոց վերջին պետությունը 11-14-րդ դարերում:

### ՆՈՐ ՏԱՐԻ

Երնեկ, թե այս Նոր տարին  
Վերջ տար Հայի ցավերուն.  
Չարը կորչեր, ու բարին  
Բուն դըներ մեր սըրտերուն:

Երնեկ, թե այս Նոր տարին  
Ազատ շընչեր Հայաստան,  
Եվ շուրջ Մասիս մեր սարին  
Փայլեին արտ-անդաստան:

Երևե՛կ, թե այս Նոր տարին  
Ոտքի կանգներ Հայաստան,  
Եվ կհաքանդ մեր Կարին  
Լիներ քաղաք մեր ոստան:

Երևե՛կ, թե այս Նոր տարին  
Հայ սըրտի մեջ ուժ հոսեր,  
Ապավինած յուր սըրին,  
Հայը քյուրդեն չի սարսեր:

Երևե՛կ, թե այս Նոր տարին  
Հայ ազգ ի մի գումարվեր,  
Ի գլուխ Կարնո հայ ամրին  
Հայի դրոշակ ծածաներ:

Հայեր, երբեք չերկմըտենք.  
Կըկատարվի այդ ամեն,  
Եթե իսպառ մենք հանենք  
Փոքրոգություն մեր սըրտեն:



## ԲԱՌԱՐԱՆ

**արտ–անդաստան** – դաշտ, հանդ, մշակովի հող

**Կարին (Էրզրում, Թեոդուպոլիս, Արզրում)** – հնագույն հայոց քաղաքներից մեկը: Եղել է հռոմեացիների, արաբների, սելջուկների, մոնղոլների, պարսիկների, թուրքերի գերիշխանության ներքո: 11-րդ դարում Կարինում վերաբնակվել են հայոց Արծն քաղաքի բնակիչները: Արծնից տարբերելու համար այն կոչել են Արծն (Արզն) Ռոմ (Ռում), այսինքն՝ Հռոմեական Արծն, քանի որ գտնվում էր Բյուզանդական գերիշխանության տարածքում: 1829-ին քաղաք են մտել ռուսները, որից հետո քաղաքի հայ բնակչությունը (մոտ 20.000) 1830-ին վերաբնակվեց Ջավախքում: Ռուսները գեներալ Լորիս-Մելիքովի գլխավորությամբ Կարին են մտել նաև 1877–1878 թթ. ռուս–թուրքական պատերազմի ժամանակ, ինչն էլ Պատկանյանին հույսեր է ներշնչել և դարձել այս բանաստեղծության ազդակ: Կարինն ունի միջնաբերդ: Մինչև 1915 թվականը եղել է հայաշատ քաղաք, հայ արհեստագործության, կրթության ու մշակութային կենտրոն:

**ոստան** – թագավորանիստ քաղաք, մայրաքաղաք, գլխավոր քաղաք

**ապավինել** – մեկի հովանավորության՝ պաշտպանության տակ մտնել, ապաստանել, պատսպարվել, հենվել

**սարսել** – սոսկալ, սարսափել, սարսռալ, ցնցվել, սասանվել, ահաբեկել, վախեցնել

**ամր** – ըստ Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարան»-ի՝ նորագյուտ բառ՝ բառ, բան, խոսք, հրաման, խոստում, գիտություն: Այստեղ պետք է նշանակի ամրություն, ամրոց միջնաբերդ, որի վրա հայի դրոշակ է ծածանվում

Ռափայել Պատկանյանն այս բանաստեղծությունը գրել է 1879 թվականին: Ամբողջ գործը մաղթանք է հայ ժողովրդին, որպեսզի ազատ շնչի, ոտքի

կանգնի և հնագույն Կարինը դառնա քաղաք-ոստան, այսինքն՝ մայրաքաղաք: Դրա համար հայը պիտի ուժեղ լինի, ապավինի իր սրին, չվախենա թշնամիներից, դառնա հավաքական ուժ և իր քաղաք-ոստանում իր դրոշը ծածանի: Նա հույս է հայտնում, որ այդպես էլ կլինի և դրա համար առնվազն պետք է հաղթահարել փոքրոգությունը: Այս բանաստեղծությունը ևս ունի հրաշալի մեղեդի և երգվում է առ այսօր:

### ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչ առիթով է Պատկանյանը գրել «Նոր տարի» բանաստեղծությունը և ինչ է մաղթում հայ ժողովրդին:
2. Ինչ երազանք կա բանաստեղծության այս տողերում. «Եվ շուրջ Մասիս մեր սարին // Փայլեին արտ-անդաստան», «Եվ կիսաքանդ մեր Կարին // Լիներ քաղաք մեր ոստան»:
3. Տեղեկատու աղբյուրների օգնությամբ խորացրե՞ք ձեր իմացությունները Կարին քաղաքի մասին:
4. Ինչ մաղթանքներով է ավարտվում բանաստեղծությունը:

# ՎԻՆՅԱՄ ՇԵՔՍՊԻՐ

## 1564–1616



Անգլիացի բանաստեղծ և թատերագիր Վիլյամ Շեքսպիրը համաշխարհային գրականության մեծագույն դեմքերից մեկն է: Նրա անունն ու գործը թափանցել են աշխարհի քաղաքակիրթ ժողովուրդների արվեստի ու մշակույթի մեջ և յուրովի դարձել ազգային արժեք:

Շեքսպիրը թանկ ու հարազատ է նաև հայ ժողովրդին և ամենևին պատահական չէ նրան Հովհաննես Թումանյանի տված անփոխարինելի բնորոշումը՝ համաշխարհային գրականության հորիզոնի վրա փայլատակող «հսկայական արեգակ»:

Վիլյամ Շեքսպիրը ծնվել է 1564 թ. ապրիլի 23-ին Անգլիայի Ստրատֆորդ (Ստրատֆորդ-ոն-Էյվոն՝ Էյվոնի Ստրատֆորդ) քաղաքում: Հայրը՝ Ջոն Շեքսպիրը, եղել է առևտրական և կաշվե ձեռնոցներ արտադրող արհեստավոր, կյանքի մի շրջանում՝ նաև Ստրատֆորդի քաղաքագլուխ, քաղաքային ավագանու անդամ: Մայրը՝ Մերի Արդեն:

7-14 տարեկան հասակում Շեքսպիրը սովորել է քաղաքի «Քերականական» դպրոցում: Այս բնույթի կրթօջախները կոչված էին փոխարինելու եկեղեցական դպրոցներին, և դպրոցի կարիքները հոգացող քաղաքացիների որդիներին տալիս էին անվճար աշխարհիկ կրթություն: Գլխավոր առարկան լատիներենն էր: Ուսուցիչները հիմնականում լավ կրթություն ստացած համալսարանականներ էին:

Այդ տարիներին Անգլիայում կային բազմաթիվ թատերական խմբեր, որոնք ներկայացումներ էին տալիս ոչ միայն մայրաքաղաք Լոնդոնում, այլև տարբեր բնակավայրերում: Այդ թատերախմբերը հյուրախաղերով լինում էին նաև Ստրատֆորդում, որոնց ներկա է եղել Շեքսպիրը:

1585-ին, երբ նոր էր լրացել 20 տարին, նա հեռանում է հայրենի քաղաքից և ապրուստ որոնում Լոնդոնում: Ենթադրություն կա, որ նա Լոնդոն էր փոխադրվել թատերախմբերից մեկի հետ:

Շեքսպիրը գրական ասպարեզ է իջել 1590 թվականին: 25-26 տարեկան էր, երբ գրեց իր առաջին պատմական թատերգությունը՝ «**Հենրի IV**»-ը:

Այն ժամանակ ընդունված էր մի սովորություն. գրողները մշակում էին արդեն հայտնի դիպաշարերը, որոնք վերցնում էին հնագույն շրջանի հույն և հռոմեացի հեղինակներից, ժամանակագրություններից, իրենց անմիջական նախորդներից: Իր 37 թատերգություններից 34-ը այդպես է գրել նաև Շեքսպիրը:

Ժամանակի թատրոնները համարվում էին ժողովրդական արվեստի օջախներ: Շեքսպիրը կապվում է թատրոններից մեկի հետ և աշխատում որպես թատերագիր ու դերասան: Սկզբնական շրջանում նա նաև հին թատերգություններ էր նորոգում՝ կատարում լրացումներ, թարմացնում, արդիականացնում և նախապատրաստում բեմադրության:

Թատերական կյանքի այս բուռն վերելքի տարիներին էլ նա գրում է իր թատերգությունները՝ պատմական ժամանակագրություններ (քրոնիկներ),

ողբերգություններ և կատակերգություններ: Իսկ որպես դերասան Շեքսպիրը կատարել է երկրորդական դերեր: Օրինակ՝ իր «**Համլետ**» ներկայացման մեջ կատարել է Ուրվականի դերը:

Բացի թատերգություններից նա գրել է երկու պոեմ՝ «**Վեներա և Ադոնիս**» (1593), «**Լուկրեցիայի առևանգումը**» (1594) և սոնետներ:

Սոնետը (ինչպակ) որպես կայուն ձև ունեցող բանաստեղծության տարատեսակ տարածված էր միջնադարում: Հայտնի էին Դանտեի, Պետրարկայի սոնետները:

1592–1598 թթ. Շեքսպիրը գրել է 154 սոնետ, որոնք ունեն կենսափիլիսոփայական բովանդակություն: Դրանց մեծ մասը նվիրված է բանաստեղծի երիտասարդ բարեկամին, մի մասը՝ թուխ աղջկան, ով սիրո կերպարանքով հայտնվել է հեղինակի կյանքում, հետո դավաճանել է նրան ընկերներից մեկի հետ: Ահա Շեքսպիրի սոնետներից մեկը՝ հերթականությամբ 30-րդը.

*Երբ կարոտակեզ մտորմունքների լռին ատյանում՝  
Ամփոփում եմ ես իմ տարիների հուշերը անցած,  
Հառաչում եմ միշտ, թե՛ անխ, չգտա փնտրածս կյանքում,  
Եվ հին վշտի հետ նորն է հեծեծում ժամերս կորած,*

*Թրջվում են այդժամ իմ աչքերն անհուն խնդության սովոր,  
Մահվան գիշերում կորած հարազատ դեմքերի համար,  
Հեծեծում եմ ես սիրո մոռացված վշտերը բոլոր  
Եվ ցավով հիշում քարուքանդ եղած վայրերն անհամար,*

*Վշտով եմ խորհում անցած-գնացած դառնության մասին,  
Եվ գումարելով անցյալի ամեն կսկիծ ու հառաչ,  
Ստանում եմ ես հառաչանքներիս այս գումարը սին,  
Որ պիտ վճարեմ վերստին, ինչպես տարիներ առաջ,*

*Բայց երբ խորհում եմ միայն քո մասին, անգին բարեկամ,  
Օ՛, փարատվում են ամենացավոտ մորմոքներն անգամ:*

Շեքսպիրի ստեղծագործական կյանքը բաժանվում է չորս շրջանի:

**Առաջին շրջանում** (1590–1594) գրել է պատմական ժամանակագրություններ, կատակերգություններ և նշված պոեմները:

**Երկրորդ շրջանում** (1594–1600) գրել է պատմական ողբերգություններ, կատակերգություններ, «Ռոմեո և Ջուլիետ»-ը (1595) և սոնետներ:

**Երրորդ շրջանը** (1600–1608) նրա ստեղծագործության ամենահասուն փուլն է: Լույս աշխարհ են գալիս «Համլետ» (1601), «Օթելլո» (1604), «Լիր արքա» (1605), «Մակբեթ» (1606) ողբերգությունները և այլ գործեր:

**Չորրորդ շրջանը** (1609–1613) ևս հարուստ է ողբերգություններով:

Շեքսպիրի թատերգությունները նախ բեմադրվել են, ապա միայն դրանց մի մասը տպագրվել է:

Դարաշրջանը Վերածնունդի տաղանդավոր մարդկանց գործունեությամբ ձևավորել էր սեր արվեստի հանդես: Թատրոնները լիքն էին հանդիսականներով, տպագրության գյուտը գիրքը մատչելի էր դարձրել, ստեղծվել էր ընթերցող խավը, աստիճանաբար համալրվում էին անձնական գրադարանները:

1594 թվականից Շեքսպիրը մի թատերախմբի անդամ էր, 1603-ից այն վերանվանվեց «**Թագավորական**» և ներկայացումներ էր տալիս նաև արքունիքում: 1599-ից նա եղել է «**Գլորիա**» (երկրագունդ իմաստով) թատրոնի բաժնետեր և դերասան: Նույն թվականին ձեռք է բերել ազնվականի տիտղոս: Նրա նյութական վիճակը բարելավվել է, գնել է տներ և կալվածքներ:

1612 թվականին Շեքսպիրը հրաժեշտ է տվել ոչ միայն Լոնդոնին, այլև թատրոնին և վերադարձել ծննդավայր: Այս վաղաժամ հեռացման հավանական պատճառը որոշ ուսումնասիրողների կարծիքով եղել է նրա հիվանդությունը: Ահա ծննդավայրում էլ Շեքսպիրը վախճանվել է 1616 թ. ապրիլի 23-ին՝ իր ծննդյան օրը, 52 տարեկան հասակում և թաղվել է Ստրատֆորդի Սուրբ Երրորդության տաճարում:

Հայ իրականությանը Շեքսպիրը ծանոթ է դեռևս 18-րդ դարի վերջերից: Թարգմանվել և բեմադրվել են նրա գործերը: Գերազանց են համարվում Հովհաննես Խան-Մասեհյանի թարգմանությունները («Համլետ», «Օթելլո», «Մակբեթ», «Լիր արքա» և այլն), որոնց նա կցել է նաև առաջաբաններ և ծանոթագրություններ: Շեքսպիրի որոշ գործեր, ինչպես նաև սոնետները հայերեն ունեն մի քանի թարգմանություններ:

Շեքսպիրի առաջին գործը, որ 1866-ին ներկայացվել է հայ բեմում «**Վեներտիկի վաճառականը**» կատակերգությունն է, իսկ 1867-ին Հակոբ Վարդուկյանը բեմադրել է «**Մակբեթ**»-ը: Հետագայում բեմադրվել են նրա բազմաթիվ ողբերգություններ ու կատակերգություններ:

Շեքսպիրյան դերերի լավագույն կատարողներ են եղել Պետրոս Ադամյանը, Հովհաննես Զարիֆյանը, Սիրանույշը, Վահրամ Փափագյանը, Արուս Ոսկանյանը, Հրաչյա Ներսիսյանը, Գուրգեն Զանիբեկյանը, Մետաքսյա Սիմոնյանը, Խորեն Աբրահամյանը և ուրիշներ:

Շեքսպիրը նաև ստեղծագործական ազդակներ է հաղորդել հայ գրականությանը (Թումանյան, Չարենց, Պ. Սևակ): «Համլետ» ողբերգության Ուրվականի տեսիլքը նոր արտահայտություն ստացավ Լևոն Շանթի «Հին աստվածներ» թատերգության տեսիլաշարի մեջ:

1965-ին Հայաստանի գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտում հիմնվել է Շեքսպիրագիտական կենտրոն: Լույս են տեսել «**Շեքսպիրական**» մատենաշարի յոթ հատորներ:

## ՎԻՆՅԱՄ ՇԵՔՍՊԻՐԻ ՄԱՍԻՆ

Հիշում եմ, ցանկանալով գովաբանել Շեքսպիրին, դերասանները հաճախ ասում էին, որ երբ նա գրում էր, ապա (ինչ էլ որ գրելու լիներ) երբեք ոչ մի տող չէր ջնջում...

Ես սիրում էի նրան որպես մարդ և հարգում եմ նրա հիշատակը մյուսներից ոչ պակաս (ինձ համար ևս նա կուռք է): Նա ազնիվ, պարզ, ազատ բնույթի տեր մարդ էր, ուներ հոյակապ երևակայություն, աչքի էր ընկնում մտքի խիզախությամբ և դրա արտահայտման վսեմությամբ: Այդ պատճառով նա գրում էր այնպիսի թեթևությամբ, որ ժամանակ առ ժամանակ հարկ էր լինում կանգնեցնել նրան:

Նա շատ սրամիտ էր և միշտ չէ, որ հարկ էր համարում իրեն զսպել...

Դարի շնչ: Հիացմունքի առարկա, բավականության աղբյուր, մեր բեմի հրաշք, հառնիր, իմ Շեքսպիր: Դու ինքդ քեզ հուշարձան ես առանց շիրմաքարի և կապրես, քանի դեռ կապրի քո գիրքը և քանի դեռ մեկ խելքն ի գորու կլինի այն կարդալու և գովերգելու քեզ...

Ցնծա՛, Բրիտանիա, դու կարող ես հպարտանալ նրանով, ում Եվրոպայի բոլոր թատրոնները պետք է պատիվ տան: Նա պատկանում է ոչ միայն իր դարին, այլ բոլոր ժամանակներին:

... Քո արվեստը, իմ ազնիվ Շեքսպիր, իր բաժինն ունի: Չնայած բանաստեղծի նյութը բնությունն է, նրան ձև է տալիս իր արվեստը...

Դե, լուսավորիչ մեզ, բանաստեղծների աստղ, սպառնա՛, ներգործի՛ր, հանդիմանի՛ր և ոգեկոչի՛ր մեր անկում ապրած թատրոնը, որ այն ժամանակից ի վեր, ինչ դու լքել ես մեզ, ընկղմվել է գիշերային սուգի մեջ և վախենում է ցերեկվա լույսից, բացառությամբ այն օրերին, երբ դու լուսավորում ես բեմը քո լույսով:

*Բեն Ջոնսոն, անգլիացի թատերագիր,  
Շեքսպիրի ընկերը, բարեկամը և մրցակիցը,  
նրա թատերգություններից մեկում  
Շեքսպիրը հանդես է եկել որպես դերասան*

Այն կերպարները, որոնք ստեղծել է Շեքսպիրը, ոչ թե որևէ կիրք, որևէ արատ կրող տիպեր են, ինչպես Մոլիերի երկերում, այլ բազմաթիվ կրքերով լի, բազմաթիվ արատներով լի կենդանի էակներ: Հանգամանքները հանդիսատեսի առաջ ծավալում են նրանց բնավորության բազմակողմանիությունը:

*Ալեքսանդր Պուշկին*

Մենք՝ հայերս էլ, որ երբեք խորթ չենք եղել գրականության ոչ մի ճանապարհին և վաղուց սիրել ենք Շեքսպիրը, նրա մահվան երեքհարյուրամյակի օրը արդեն ունենք մեր արժանավայել ներկայությունը, և ինձ էնպես է թվում, թե էսօր Շեքսպիրի գերեզմանի վրա արդեն կանգնած է հայկական Համլետը՝ հոգիացած Ադամյանը, իբրև հայության ներկայացուցիչ, և դժվար թե ուրիշ որևէ ազգ էլ կարողանա ավելի գեղեցիկ մի ներկայացուցչություն ունենալ էսօրվան օրը Ստրադֆորդում իր հարգանքն ու մեծարանքը ցույց տալու համար»:

*Հովհաննես Թումանյան*

**ՕԳՏԱԿԱՐ Է ԻՄԱՆԱԼ**

## **ՇԵՔՍՊԻՐԱԿԱՆ**

Վիլյամ Շեքսպիրն ընտանիքի ութ երեխաներից ավագն էր: Երեք քույրերը մահացել էին մանուկ հասակում: Ապրողներից չորսը տղաներ էին, մեկը՝ աղջիկ:

Շեքսպիր ազգանունն անգլերենում ունի նիզակ ճոճող իմաստ՝ Shake-speare:

«Քերականական» դպրոցում սովորելու տարիներին Շեքսպիրն ուսումնասիրել է հռոմեացի հռետոր Կիկերոնի ճառերը, նամակները և իմաստախոսությունները, Վերգիլիուսի և Օվիդիուսի բանաստեղծությունները, Պլավտուսի,

Տերենտիուսի և Սենեկայի թատերգությունները: Շեքսպիրի սիրելի հեղինակը Օվիդիուսն էր:

Շեքսպիրի ոճի ձևավորմանը նպաստել է ուսումնառության մեթոդը՝ աշակերտները հեղինակների ասույթները լատիներենից թարգմանում էին անգլերեն, անգլերենից՝ լատիներեն: Նպաստել են նաև ճարտասանական վարժությունները: Դրանք նրա շատ մենախոսությունների ու երկխոսությունների մեջ վերածվել են հռետորական կատարյալ արվեստի:

Դպրոցում Շեքսպիրը եղել է աշխույժ, կատակասեր տղա:

1582 թվականին 18 տարեկանում Շեքսպիրն ամուսնանում է իրենից ութ տարով մեծ էին Հետտուեի հետ: Նրանց առաջնեկը աղջիկ էր՝ Սյուզան, հետո ծնվեցին երկվորյակները. տղան՝ Համնետ և աղջիկը՝ Հուդիթ: Համնետը տասնմեկ տարեկանում մահացավ: Նրա անունը Շեքսպիրն անմահացրել է իր «Համլետ» թատերգության մեջ: Համնետ և Համլետ՝ տարբեր գրությամբ միևնույն անուններն են:

Նա ապրեց անգլիական Վերածնունդի դարաշրջանում, երբ առաջնային դարձավ մարդու արժանապատվությունը, երբ մարդկությունն ազատագրվեց կաթոլիկ եկեղեցու հազարամյա դաժան գերիշխանությունից և փորձեց վերականգնել (վերածնել) նախաքրիստոնեական շրջանի հունա-հռոմեական գրական արժեքները:

Մինչ Շեքսպիրը և Շեքսպիրի ստեղծագործության տարիներին Անգլիան զարգացման բուռն ընթացքի մեջ էր: Հաղթական պատերազմներն Իսպանիայի դեմ, իսպանական «Անպարտելի արմաղա» նավատորմիչի կործանումը, ծովագնացությունը, նոր հայտնաբերվող երկրները, տնտեսական աճը, քաղաքների զարգացումը, դպրոցների, տպարանների հիմնադրումը նպաստում են նաև երկրի մշակութային վերելքին:

Հաջորդաբար հանդես են գալիս բազմաթիվ թատերագիրներ, արձակագիրներ, բանաստեղծներ, գիտնականներ, սխրալի կենսագրության տեր անհատներ: Ջեֆրի Չոսերին հաջորդել են Ֆրենսիս Բեկոնը, Թոմաս Մորը, Էդմունդ Սպենսերը, Ջոն Լիլին, Քրիստոֆեր Մարլոն, Թոմաս Բիդը, ծովագնաց Ֆրենսիս Դրեյքը և շատ ուրիշներ:

Շեքսպիրի ժամանակ թատրոնը շրջափակված մի տարածք էր: Պատերը ներսից ունևոր հանդիսականների համար ունեին օթյակներ, իսկ ժողովուրդը կանգնում կամ նստում էր բեմի առջև: Թատրոնները տանիք չունեին: Չկային կին դերասաններ: Կանանց դերերը կատարում էին տղամարդիկ:

Որպես ժողովրդական արվեստ թատրոնը գիտնական համալսարանականների սրտով չէր և նրանց կողմից քիչ չէին գրավոր ու բանավոր քննադատությունները:

Թատերգությունները, ի տարբերություն ներբողային ոճի պոեզիայի, անգամ չէին համարվում գեղարվեստական ստեղծագործություններ, այլ լոկ գոեհկաբանություններ՝ հասցեագրված հասարակ ժողովրդին՝ նավաստիներին, արհեստավորներին: Իսկ ժողովրդական թատրոնի դերասանը դասվում էր ցածրակարգ մարդկանց շարքը: Սակայն աստիճանաբար այս վերաբերմունքը փոխվեց:

Քիչ չէին թատրոն հովանավորողները: Շեքսպիրը ևս ունեցել է իր հովա-

նավորները և երբեմն անգամ իրեն նսենացնելով՝ նրանց նվիրել բարձրագույն գովեստներ:

Անգամ մի կարճ շրջան Շեքսպիրը հայտնվում է իր հովանավորի շքախմբում, գործը նրան ներբողներով մեծարելն էր: Բայց, հավանաբար, զգալով, որ դա, այնուամենայնիվ, իր տեղը չէ, վերստին վերադառնում է թատրոն: Մասնագիտական պատվախնդրությունը նաև ներքին արժանապատվություն է թելադրում ու պահանջում: Դրա շնորհիվ էլ աստիճանաբար սովաբացել է Շեքսպիրի երկրպագուների շարքը:

Շեքսպիրը շատ արդյունավետ ստեղծագործող էր: Իրավացի է շեքսպիրագետ Ալեքսանդր Անիկստր. «Շեքսպիրը գործունյա մարդ էր և արգասաբեր արվեստագետ: Քառորդ դարում նա գրել է երեսունյոթ թատերգություն, երկու պոեմ, սոնետների մի շարք: Նա խմբագրում էր այլ հեղինակների երկեր, որոնք բեմադրվում էին իր թատրոնում: Նա ինքն էր իր թատերգությունների բեմադրիչը, խաղաց բեմի վրա ոչ պակաս, քան տասնհինգ տարի»: Մանրամասնենք՝ մեկ տարվա ընթացքում նա երբեմն գրում էր երկու-երեք թատերգություն: Միայն 1594-1598 թթ., այսինքն՝ թատերական հինգ խաղաշրջանում նա գրել է 13 գործ: Ավելացնենք, որ նույն այս թվականներին առանձին-առանձին տպագրվել է նրա ութ թատերգություն, իսկ 1605-1615 թթ. լույս է տեսել ևս 20 գիրք:

Թատրոնի պահանջարկը շատ մեծ էր: Բավական է հիշատակել հետևյալ փաստը. Շեքսպիրի ժամանակի թատրոններից մեկը երեք տարվա ընթացքում բեմադրել է տարբեր հեղինակների 55 նոր թատերգություն:

Թատրոն սիրում էր նաև Եղիսաբեթ թագուհին: 1590-1603 թթ. արքունիքում տարբեր թատերախմբեր բեմադրել են 90 ներկայացում:

Թատրոն սիրում էր նաև հաջորդ գահակալը՝ Անգլիայի և Շոտլանդիայի թագավոր Հակոբ (Ջեյմս) I-ը, ով բանաստեղծություններ էր գրում և գրքեր տպագրում: Նրա օրոք արդեն միմիայն թագավորական տան անդամներն իրավունք ունեին հովանավորել թատերական խմբերին: Ահա նա էլ «Գլոբուս» թատերախմբին արժանացնում է «Թագավորական» կոչվելու պատվին: Դերասաններն անգամ աշխատավարձ էին ստանում պալատի գանձարանից և ներկայացումներ բեմադրում արքայի համար: Այստեղ բեմադրվել են նաև Շեքսպիրի ողբերգություններն ու կատակերգությունները, այդ թվում՝ «Օթելլոն», «Վենետիկի վաճառականը», «Վինձորի զվարճասեր կանայք»: Այս արքայի օրոք՝ 1603-ից մինչև Շեքսպիրի մահվան տարին՝ 1616 թվականը, «Գլոբուս»-ը բեմադրել է 177 ներկայացում:

Արդեն 1608-ից Շեքսպիրի անունն այնքան է տարածվում ժամանակակիցների մեջ, որ նրա թատերգությունները միաժամանակ բեմադրվում են երկու թատրոններում:

Իսկ երբ սկսվել էին նրա «Հենրի VIII» թատերգության փորձերը, «Գլոբուս» թատրոնում հրդեհ բռնկվեց և ամեն ինչ մոխիր դարձավ: «Հենրի VIII»-ը դարձավ Շեքսպիրի վերջին թատերական երկը:

Շեքսպիրն իր ցանկացած երկի համար ունեցել է սկզբնաղբյուր: Ժամանակագրությունների համար հիմք է ծառայել Ռաֆայիլ Հոլինշեդի «Անգլիայի, Շոտլանդիայի և Իռլանդիայի ժամանակագրություններ» (1587) պատմագիտական գիրքը: Նրա ձեռքին է եղել նաև հույն պատմիչ Պլուտարքոսի «Համեմատական

**կենսագրություններ»** երկի անգլերեն թարգմանությունը՝ ծնունդ տալով «**Հուլիոս Կեսար»**, «**Անտոնիոս և Կլեոպատրա»**, «**Կորիոլանոս»**, «**Տիմոն Աթենացի»** ողբերգություններին: «**Սխալների կատակերգություն»**–ը Պլավտոսի կատակերգություններից մեկի մշակումն է, Օվիդիոսից է ներշնչվել «**Վեներա և Ադոնիս»** պոեմը գրելիս: «**Լիր արքա»**–ի նախահիմք դարձած գործի հեղինակը թեև անհայտ է, բայց թատերգությունը պահպանվել է:

Նրան մտավոր լիցքեր են հաղորդել Ֆրանսուա Ռաբլեի «**Գարգանտյուա և Պանտագրյուել»**, Սերվանտեսի «**Դոն Կիխոտ»** վեպերը, Միշել Մոնտենի «**Փորձեր»**–ը: Կրկնենք, որ դիպաշարերի այսպիսի փոխառությունները ժամանակին ընդունված էին: Օրինակ, Գյոթեի «**Ֆաուստ»**–ին նախորդել են մի քանի հեղինակների արձակ և չափածո «**Ֆաուստ»**–ները:

Շեքսպիրյան փոխառությունների կապակցությամբ կար նաև մեկ այլ գործոն՝ հանրությունը սիրում էր արդեն լսած, իրեն ծանոթ դիպաշարերի բեմականացումը: Իմացածը գրավում է, չիմացածը ստուգում է պահանջում, երբեմն էլ վանում է: Այսպես, նրա 37 թատերգություններից 34–ի հիմքում ընկած են փոխ առած դիպաշարեր, որոնք նա հասցրել է անթերի կատարելության:

Տարբեր են Շեքսպիրի բառապաշարի հաշվարկման սկզբունքները. ըստ Մաքս Մյուլլերի՝ 15.000 բառ, ըստ Է. Հոլդենի՝ 24.000 բառ:

Շեքսպիրի մահվան օրը Իսպանիայի մայրաքաղաք Մադրիդում կյանքի 69–րդ տարում մահկանացուն է կնքել Վերածնունդի դարաշրջանի մյուս հսկան՝ արձակագիր և թատերագիր Միգել դե Սերվանտես Սաավեդրան: Ավելացնենք, որ միաժամանակ են լույս տեսել նաև երկու գրողների գլուխգործոցները՝ Շեքսպիրի «**Համլետ»** ողբերգությունը և Սերվանտեսի «**Դոն Կիխոտ»** վեպը:

Շեքսպիրի մահից յոթ տարի անց նրա դերասան և թատերագիր երեք ընկերների ջանքերով և չորս հրատարակիչների աջակցությամբ 1623 թվականին 998 էջ ծավալով, մոտ 1000 օրինակ տպաքանակով լույս տեսավ մեծագույն գրողի երկերի մեծադիր ժողովածուն: Գիրքն ուներ այսպիսի վերնագիր՝ «**Պարոն Շեքսպիրի կատակերգությունները, ժամանակագրությունները և ողբերգությունները: Տպագրված է ստույգ և նախօրինակ բնագրերից:**»

Գրքին կցված է Շեքսպիրի բարեկամ ու մրցակից և այս գիրքը նախաձեռնողներից Բեն Ջոնսոնի պոեմը՝ «Հեղինակի հիշատակին՝ իմ սիրելի Վիլյամ Շեքսպիրին, և այն մասին, ինչ որ նա թողել է մեզ»:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ո՞վ է Շեքսպիրը: Փորձեք բնութագրել նրան:
2. Երբ և որտեղ է ծնվել Շեքսպիրը, ինչ կրթություն է ստացել:
3. Ի՞նչ կարող եք ասել նրա անձնական կյանքի մասին: Ովքեր էին ծնողները: Ո՞վ էր նրա կինը, ինչ երեխաներ ունեցավ:
4. Շեքսպիրի գործունեությունը Լոնդոնում. Երբ մեկնեց Լոնդոն և ինչ էր անում այնտեղ:
5. Երբ է գրական ասպարեզ իջել Շեքսպիրը, ինչ բնույթի ստեղծագործություններ է գրել:

6. Ինչ եք հասկանում, երբ ասում են՝ Շեքսպիրի բանաստեղծական ժառանգություն: Այլ կերպ՝ Շեքսպիրը բանաստեղծ:
7. Թվարկեք Շեքսպիրի ստեղծագործության շրջանները և ասեք, թե իր նշանավոր ողբերգությունները ո՞ր շրջանում է գրել:
8. Ո՞ր թատերախմբի անդամ էր Շեքսպիրը: Շեքսպիրի գործունեությունը թատրոնում:
9. Ե՞րբ է մահացել Շեքսպիրը և որտե՞ղ է թաղվել: Նույն օրը էլ ո՞ր նշանավոր գրողն է մահացել:
10. Ո՞վ էր Բեն Ջոնսոնը և ինչպե՞ս է բնութագրել Շեքսպիրին:
11. Ինչպե՞ս են Շեքսպիրին բնութագրել Պուչկինը և Թումանյանը:
12. Շեքսպիրը և հայ իրականությունը: Ինչ գիտեք այս մասին:
13. Ուրիշ ի՞նչ կարող եք ասել Շեքսպիրի կյանքի և գործունեության, նրա ապրած ժամանակի և նրա արվեստի մասին:

## «ՀԱՄԼԵՏ» ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**«Համլետ»** ողբերգությունն առաջին իսկ բեմադրությունից հետո (1600–1601 թթ. խաղաշրջան) շատ մեծ ընդունելություն գտավ: Անգամ ներկայացվեց Քեմբրիջի և Օքսֆորդի համալսարաններում, այն դեպքում, երբ համալսարանականներն ընդհանրապես դեմ էին ժողովրդական թատրոնին: **«Համլետ»**-ը ներկայացվել է նաև հեռավոր նավարկության դուրս եկած նավերից մեկի վրա: Ներկայացումից հետո այն տպագրվել է 1603-ին, իսկ 1604-ին լույս է տեսել լրացված ամբողջական տարբերակով:

Ինչպես Շեքսպիրի մյուս երկերը, **«Համլետ»**-ը ևս այլոց կողմից ունի նախնական գրական մարմնավորումներ, որոնցից մեկը բեմադրվել է 1589 թվականին:

Խորքում **«Համլետ»**-ի հիմքը Ք.Ծ.ա. 5-րդ դարի հույն ողբերգակ Էսքիլեսի **«Օրեստիա»** եռագրության դիպաշարն է և հերոսների գործունեությունը:

Այս կապակցությամբ կա նաև տեսակետ, ըստ որի՝ **«Համլետ»**-ի դիպաշարի ակունքը IX դարում է, կապվում է յուտլանդական արքայազն Ամլետի հետ, ում պատմությունը 1200 թ. շարադրել է դանիացի տարեգիր Սաքսոն Քերականը: Հետագայում այն մշակել է ֆրանսիացի գրող Բելֆորը (**«Ողբերգական պատմություններ»**, 1580), ումից էլ Շեքսպիրից առաջ օգտվել է անգլիացի մեկ այլ թատերագիր և ստեղծել իր **«Համլետ»** (1589) ողբերգությունը: Այդ երկը թեև մեզ չի հասել, բայց ծանոթ պետք է լիներ Շեքսպիրին:

Շեքսպիրի մշակումը միանգամայն այլ է, մի բացառիկ գլուխգործոց: Այն, ինչպես արդիական է իր ժամանակի համար և ունի պատմաքաղաքական հիմնավորում, այնպես էլ մշտապես նոր է բոլոր ժամանակների համար:

Ինչպես մյուս գործերում, այնպես էլ **«Համլետ»**-ի մեջ Շեքսպիրն սկզբից մինչև վերջ ստեղծել է բովանդակային լարվածություն և այդպես զարգացրել գործողությունը: Նրա միտքն իմաստուն է, ոճը կատարյալ, սեղմ և ասույթներով լի, հերոսների գործողությունները շատ բնական ու տրամաբանական ընթացքով զարգանում են դեպի հանգուցալուծում: Շքեղությունն ու փայլը Շեքսպիրի արտիստիկ ոճի ուղեկիցներն են, բանաստեղծական ներշնչանքը և արտասանական կշռույթը նրա խոսքը դարձնում են ներգործող ու հզոր:

Շեքսպիրը բնական և ազատ հանճար է:

Շեքսպիրը հավասարապես կանգնած է իր թե՛ դրական և թե՛ բացասական հերոսների կողքին: Նրա բացասական հերոսները սոսկ բացասական հատկանիշերի կրողներ չեն, այլ ամբողջական մարդիկ են, ովքեր ունեն նաև դրական կողմեր: Նույնքան բարդ ու հագեցված են դրական հերոսների կերպարները, նրանք նույն ամբողջական մարդն են՝ որոշակի գաղափարի կամ զգացմունքի վառ ու նպատակային արտահայտությամբ: Ինչպես դրական, այնպես և բացասական հերոսները երևում են բնականոն զարգացման մեջ: Նրանց միշտ առաջնորդում է որևէ գերիշխող հոգեվիճակ: Այստեղից էլ Համլետի շուրթերով թատրոնին տված Շեքսպիրի բնորոշումը. «Հայելի պահել բնության առջև»:

**«Համլետ»**–ը բարդ ստեղծագործություն է: Ինչպես ներկայացվող երրորդ արարը, այնպես և ամբողջ թատերգությունն ըմբռնելու համար անհրաժեշտ է ծանոթանալ երկի բովանդակությանը:

**«Համլետ»** ողբերգությունը բաղկացած է հինգ արարվածից: Գործողությունները տեղի են ունենում Դանեմարքայի (Դանիայի) Էլսինոր դղյակում:

**Արարված առաջին:** Պահնորդ զինվորները զրուցում են իրենց աչքին երևացող Ուրվականի մասին, որ շատ նման է նոր մահացած արքային, ում անունը, ինչպես և որդու անունը Համլետ է: Արքայազն Համլետի բարեկամ և ուսանողական ընկեր Հորացիոն այդ մասին լուր է տալիս նրան: Համլետը, ով Վիտենբերգի համալսարանի ուսանող է, եկել էր իր հոր անակնկալ մահվան և հուղարկավորության կապակցությամբ և պիտի վերադառնար, բայց հոր մահվան հանգամանքների հետ կապված, կասկածանքների մեջ ընկնելով՝ մնում է: Նրան տանջում է այն միտքը, թե ինչպես է իր մայրը՝ Գերտրուդ թագուհին, իր հոր մահից մեկ ամիս չանցած, ամուսնացել թագավոր հռչակված հորեղբոր՝ Կլավդիոսի հետ: Իսկ պալատում սուգի փոխարեն ուրախություն է տիրում:

Համլետը սիրում էր հորը և նվիրված էր նրա հիշատակին: Այդ կապակցությամբ Հորացիոյին ասում է. «Հայր... կարծես թե տեսնում եմ հորս... Հոգու աչքի մեջ: Մայրդ էր, Հորացիո, իր ամեն բանով: Մեկ էլ չեմ տեսնի նրա նմանը»:

Այս ընթացքում մեծ սենեկապետ Պոլոնիոսի, նրա որդի Լաերտի և դուստր Օֆելյայի զրույցից պարզվում է Համլետի և Օֆելյայի սիրո գաղտնիքը:

Համլետը հանդիպում է հոր Ուրվականին և խոսում նրա հոգու հետ: Հոր Ուրվականն ասում է՝ լուր են տարածել, թե պարտեզում քնած ժամանակ օձն է ինձ խայթել, բայց դա սո՛ւտ է, քանի որ եղբայրը թույն է լցրել իր ականջների մեջ: Հայր Համլետը որդի Համլետին վրեժի է կոչում հանուն դանիական գահի անարատության ու պատմական արդարության:

Համլետի հետ են հավատարիմ ընկերներ Հորացիոն և Մարցելուսը: Այս հոգեբանական կացության մեջ Համլետն ասում է իր նշանավոր խոսքը.

*Ժամանակն իր շավղից դուրս է սայթաքել, օհ, բնիստ իմ դժխեմ,  
ինչո՞ւ ծնվեցի, որ հենց ես ուղղեմ:*

**Արարված երկրորդ:** Պոլոնիոսը մեկին ուղարկում է Փարիզ՝ վերահսկելու ուսանող որդու՝ Լաերտի գործողությունները: Իսկ Օֆելյան իր հայր Պոլոնիոսին պատմում է Համլետի անակնկալ այցելության և այն մասին, թե ինչպես է ինքը, հոր խորհուրդի համաձայն, փորձել վերադարձնել նրա նամակներն ու ընծաները:

Թագավորը խոսում է Համլետի այլափոխման մասին, իբր նա զրկվել է գիտակցությունից, խիստ փոխվել է: Թագավորն իր վստահելի մարդկանցով վերահսկողություն է սահմանում Համլետի վրա: Մայրը Համլետի այլափոխումը բացատրում է հոր մահվամբ և իր ու նոր թագավոր դարձած Կլավդիոսի հապճեպ ամուսնությամբ: Պոլոնիուսը թագավորի և թագուհու առջև հայտարարում է, թե Համլետը խելագարված է. «Քանի որ եթե բուն խենթությունը որակել կուզեք, // Ինչ է այն, թե ոչ՝ լինել ոչ այլ ինչ, քան թե խելագար»: Պոլոնիուսը կարդում է նաև Համլետի սիրային նամակներից մեկը՝ հասցեագրված Օֆելյային: Ասում է, որ Համլետը հասել է թեթևամտության: Իսկ ինքն արգելք է դրել այդ սիրո դեմ: Իրենց հերթին Պոլոնիոսի խորհուրդով թագավորի և թագուհու հետ նրանք որոզայթ են լարում Համլետի դեմ որոշելով գաղտնի հետևել նրա և Օֆելյայի հանդիպմանը:

Համլետն ասում է, որ Դանեմարքան իր համար բանտ է: Համլետը փառաբանում է մարդ արարածին որպես աշխարհի գեղեցկություն, բայց և հիասթափված է նրանից, որովհետև այն մարդիկ, ովքեր ժամանակին իր հորն են ծառայել, հիմա վիզ են ծռում հորեղբոր առջև ու քծնում նրան:

Ամրոց են այցելում թափառական դերասաններ և առաջարկում իրենց ծառայությունը (այս հատվածում Շեքսպիրը թատերական արվեստի մի ամբողջ տեսություն է զարգացնում): Իսկ Համլետը որոշում է. «Պետք է այս նորեկ դերասաններին հորեղբորս առաջ // Մի բան խաղալ տամ, որ նման լինի հայրիկիս մահվան», // Եվ ցնցվի թե չէ՝ գիտեմ ինչ կանեմ, // Ներկայացումն է այն որոզայթը, // Որով կբռնեմ/ արքայի խիղճը»: Սրանով Համլետը ցանկանում է ստուգել իր կասկածները հոր սպանության կապակցությամբ:

**Արարված երրորդ:** Թագավորը Համլետի վարքը համարում է «աղմկահույզ և վտանգալից խելագարություն»: Հաջորդում է Համլետին և Օֆելյային գաղտնի հետևելու տեսարանը: Օֆելյային հանդիպելիս Համլետը հանդես է գալիս «Լինել թե չլինել» հայտնի մենախոսությամբ: «Կար մի ժամանակ, որ քեզ սիրում էի», – ասում Համլետը, արդեն իսկ հասկանալով, որ Օֆելյան գործիք է դարձել իրեն վերահսկելու և լրտեսելու համար: Համլետը Օֆելյային խորհուրդ է տալիս մտնել կուսանոց, որովհետև եթե ամուսնանա և լինի «զգաստ, ինչպես սառույց, մաքուր, ինչպես ձյուն», դարձյալ զերծ չի մնա զրպարտությունից: Համլետը շարունակում է. «Աստված ձեզ այլ երես է տվել, իսկ դուք ձեզ համար մեկ այլ երես եք շինում օրորվում եք, շորորվում եք... և ձեր լկտիությանը անգիտության երևույթ եք տալիս»: Գաղտնի դիտելով Համլետին՝ թագավորը հասկանում է ամեն ինչ և, պալատից նրան հեռացնելու նպատակով, որոշում է Անգլիա ուղարկել: Մինչ այդ Համլետը դերասանների հետ նախապատրաստում է իր հոր մահվան տեսարանը՝ Ուրվականի ասածին համապատասխան ներկայացնելու կատարված իրողությունը: Հաջորդում է թատրոն թատրոնի մեջ տեսարանը: Իրեն անփույթ երևույթ տալով՝ Համլետն արդեն իսկ համոզվում է, որ իր հորը սպանել է իր հորեղբայրը, իսկ մայրը մասնակից է հանցանքին: Համլետի հասցեին թագավորն ասում է. «Չեմ սիրում նրան, ոչ էլ մեզ համար ապահով բան է // Թույլ տալ, որ նրա խելագարությունն ազատ թափառի, // ... Որ վտանգը մեզ այսպես մոտ կենա»:

Ներկայացումից հետո Համլետի և մոր միջև տեղի է ունենում այսպիսի երկխոսություն.

*ԹԱԳՈՒՀԻ. – Համլետ, դու հորդ խիստ վշտացրել ես:*

*ՀԱՄԼԵՏ. – Մայր իմ, դու հորս խիստ վշտացրել ես:*

Թագուհին նկատի ունի Կլավդիոսին, իսկ Համլետը՝ իր իսկական հորը:

*ԹԱԳՈՒՀԻ. – Չե՞ս ճանաչում ինձ:*

*ՀԱՄԼԵՏ. – Ինչո՞ւ չէ, շատ լավ,*

*Թագուհին ես դու, տեգորդ կինն ես, ոչ բարով մայրս...*

*Չպետք է գնաս մինչև դիմացդ հայելի պահեմ,*

*Որի մեջ տեսնես հոգուդ ներքինը:*

Այս լարված իրադրությանը գաղտնի հետևում էր Պոլոնիուսը, ում շարժվելու ճանից Համլետը հասկանում է, որ նա լրտեսում է իրենց և բացականչելով՝ «Այս ինչ է, մո՞նկ է», սրտախողխող է անում այդ «միջամուխ հիմարին»:

Բախումը հասնում է գագաթնակետին: Համլետը համոզվում է, որ պետք է թագավոր հորեղբորից և թագուհի մորից լուծի իր հոր սպանության վրեժը: Այդ վրեժը նրան պարտադրում է նաև հոր Ուրվականը:

**Արարված չորրորդ:** Թագավորը թագուհուն վերստին ասում է, որ Համլետի ազատությունն ամենքի համար վտանգավոր է: Համլետը բացահայտում է իր վրա վերահսկիչներ նշանակված, բայց բարեկամ ձևացող Ռոզենկրանցի և Գիլդենշտերնի կերպարները: Համլետին հեռացնելու նպատակով՝ թագավորը նրան նավով Անգլիա մեկնելու հրահանգ է տալիս:

Իր սիրո հանդեպ Համլետի սառչելու և հոր մահվան պատճառած ցնցումների հետևանքով դյուրազգաց Օֆելյան խելագարվում է և թագավորի ու թագուհու առջև սկսում է անկապ երգեր երգել:

Այս ընթացքում Լաերտը գաղտնի վերադառնում է Ֆրանսիայից և հոր սպանության վրեժով լցված՝ զոհ որոնում, իսկ ամբոխը նրան ցանկանում է անգամ թագավոր ընտրել: Լաերտը պալատում հանդիպում է թագավորին և ասում. «Անարգ թագավոր, ետ տուր ինձ հայրս»: Թագավորը Լաերտին տրամադրում է Համլետի դեմ: Լաերտը տեսնում է խելագարված քրոջը:

Համլետից նամակ է գալիս Հորացիոյին և թագավորին, ըստ որի՝ իրենց նավի վրա ծովահեններ են հարձակվել, ինքը գերի է ընկել և հիմա գտնվում է Դանիայի ափերին: Մինչ Համլետը կվերադառնար՝ թագավորը նորից բորբոքում է Լաերտին նրա դեմ և նախապատրաստում ողբերգական հանգուցալուծումը:

Ազատվելով երկրից վտարվելու կանխամտածված որոգայթից, որով թագավորը դավադրաբար նրա համար մահ էր սահմանել, Համլետը կրկին վերադառնում է պալատ:

Ինչպես Դանիայի թունավորված հանգուցյալ արքան և արքայազնը կրում են Համլետ անունը, նույնպես Նորվեգիայի թագավորն ու նրա որդին կոչվում են Ֆորտինբրաս:

Հայրերն ապրում են որդիների մեջ:

Հայր Համլետը պատերազմում հաղթել ու սպանել էր հայր Ֆորտինբրասին և պայմանավորվածության համաձայն՝ տիրացել նրա կալվածքներին: Կլավդիոսը դավադրաբար թունավորել և սպանել էր եղբորը, ամուսնացել նրա կնոջ հետ և նստել գահին: Ե՛վ Համլետի, և՛ Ֆորտինբրասի մեջ եփվում է

վրեժը: Ավելանում է երրորդ որդին: Համլետը սպանում է մեծ սենեկապետ, Օֆելյայի և Լաերտի հայր Պոլոնիուսին, ով կարող էր լինել նաև իր աները: Հոր վրեժը պատրաստ է լուծել նրա որդին՝ Լաերտը:

Երեք որդիներ սպանված երեք հայրերի պատիվն են պահանջում:

Թագավորը Համլետին այսպես է բնորոշում՝ «Նա բոլորովին անփույթ լինելով, բնությանը ազնիվ՝ բարձր է ամեն մի խարդավանքից»: Սա ասում է Լաերտին, որպեսզի վերջինս մենամարտի Համլետի հետ և թունավոր սրով խոցի նրան:

Այդ պահին թագուհին լուր է բերում, որ խելագարված Օֆելյան խեղդվել է գետում:

**Արարված հինգերորդ:** Գերեզմանափորները փոս են փորում Օֆելյայի համար: Այս հատվածում Շեքսպիրը կյանքի բուռն պայքարին հակադրում է կյանքի ունայնության սառը շունչը:

Համլետը գերեզմանոցում է: Նա մենախոսում է պալատական նախկին ծաղրածու Յորիկի գանգի հետ: Բերում են Օֆելյայի դիակը: Համլետը անակակալի է գալիս: Լաերտը և նա ցատկում են գերեզմանափոսի մեջ: Օֆելյայի հանդեպ Լաերտի եղբայրական սիրուն ու ցավին Համլետը հակադրում է իր սերն ու իր ցավը. «Ես սիրում էի Օֆելյային. // Քառասուն հազար եղբայր չեն կարող // Իրենց գորովի ամբողջ քանակով իմ սերը կազմել»:

Դոյակի դահլիճներից մեկի գավիթում թագավորի և թագուհու առջև Համլետն ու Լաերտը մենամարտում են: Թունավորված սուրը նախ խոցում է Համլետին, ապա, մյուս սրի հետ փոխս ընկնելով, խոցում նաև Լաերտին: Թագուհին, առանց իմանալու, խմում է թունավորված գինին և մեռնում: Վիրավորված Լաերտը բացում է դավադրության գաղտնիքը: Համլետը թունավոր սրով խոցում է արքային: Արքան մեռնում է: Լաերտը ներում է Համլետին ու մեռնում:

Այդ պահին երևում է Լեհաստանից հաղթությամբ վերադարձած Ֆորտինբրասը, ով ողբում է Համլետի մահը, նաև ասում. «Գալով ինձ... ունեմ նաև հին իրավունքներ այս երկրի վրա»:



## ԲԱՌԱՐԱՆ

**Ցուտլանդիա** – թերակղզի. այժմ Դանիայի և Գերմանիայի տարածքում

### ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ովքեր են «Համլետ» ողբերգության գործող անձինք:
2. Ինչ գործողություններ են կատարվում առաջին արարվածում:
3. Ո՞վ էր արքայազն Համլետը:
4. Ինչ էր կատարվել Համլետի հոր հետ, ինչ էր հանգուցյալ թագավորի անունը:
5. Ինչպե՞ս է Համլետի սպանված հայրը լուր տալիս իր մահվան հանգամանքների մասին և ինչի՞ է մղում որդուն:
6. Ովքեր էին Համլետի ընկերները:
7. Ո՞վ էր նոր թագավորը, և ինչ դրդապատճառներով Համլետի մայրը դավաճանեց ամուսնուն:
8. Ինչ գործողություններ են կատարվում երկրորդ արարվածում:

9. Ո՞վ էր Պոլոնիուսը, ո՞վ էր Օֆելյան, ի՞նչ կապ կար Համլետի և Օֆելյայի միջև:
10. Ի՞նչ հոգեվիճակում էր գտնվում Համլետը պալատական միջավայրում: Ինչո՞ւ էին լրտեսում նրան և վերահսկում գործողությունները:
11. Ինչո՞ւ է Համլետը ցանկանում պալատում կազմակերպել ներկայացում:
12. Ընդհանուր գծերով ներկայացրեք երրորդ արարվածը:
13. Ի՞նչ գործողություններ են կատարվում չորրորդ արարվածում:
14. Ի՞նչ կատարվեց Օֆելյայի հետ:
15. Ո՞վ էր Լաերտը և ինչո՞ւ վերադարձավ Ֆրանսիայից:
16. Ովքե՞ր էին սպանված երեք հայրերը, ովքե՞ր էին նրանց որդիները և ինչի՞ էին ձգտում:
17. Ի՞նչ գործողություններ են կատարվում հինգերորդ արարվածում:
18. Ներկայացրեք գերեզմանոցի տեսարանը: Ի՞նչ խորհուրդ ունի գանգի հետ Համլետի մենախոսությունը:
19. Ի՞նչ խարդավանք էր նյութել թագավորը Համլետի դեմ:
20. Ներկայացրեք Համլետի և Լաերտի մենամարտը:
21. Ինչպե՞ս է ավարտվում ողբերգությունը:

ԱՐԱՐՎԱԾ ԵՐՐՈՐԴ  
ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ  
**Մի սենյակ դրյակում**

*Գալիս են թագավորը, թագուհին, Պոլոնիուսը, Օֆելյան,  
Ռոզենկրանցը և Գիլդենշտերնը*

ԹԱԳԱՎՈՐ.– Չե՞ք կարող արդյոք ոչ մի դարձվածքով մի կերպ հասկանալ, թե ինչու է նա սարքել այս բոլոր իրարանցումը, իր հանգիստ կյանքը այսպես բրտորեն խռովեցնելով Այս աղմկահույզ և վտանգալից խելագարությամբ:

ՌՈՋԵՆԿՐԱՆՑ.– Խոստովանում է, թե նա իր միտքը ցրված է զգում, Բայց ի՞նչ պատճառով, ոչ մի պայմանով չի ուզում հայտնել:

ԳԻԼԴԵՆՇՏԵՐՆ.– Եվ թույլ չի տալիս, որ հարցաքննենք.  
Այլ հնարագետ խելագարությամբ միշտ խույս է տալիս, Երբ փորձ ենք անում, որ իր իսկական վիճակի մասին Մի բան հայտնի մեզ:

ԹԱԳՈՒՀԻ.– Ձեզ լավ ընդունեց:

ՌՈՋԵՆԿՐԱՆՑ.– Այո՛, կատարյալ ջենտլմենի պես:

ԳԻԼԴԵՆՇՏԵՐՆ.– Բայց ինքն իր վրա ճիգ գործ դնելով:

ՌՈՋԵՆԿՐԱՆՑ.– Խոսքի մեջ ժլատ՝ բայց մեր հարցերին շատ ազատորեն Պատասխանում էր:

ԹԱԳՈՒՀԻ.– Փորձեցի՞ք նրան զվարճացնել:

ՌՈՋԵՆԿՐԱՆՑ.– Դեպքն այնպես բերեց, որ ճանապարհին Մենք հանդիպեցինք դերասանների,

Եվ երբ այս մասին նրան հայտնեցինք՝  
Կարծես այս լուրը նրան մի տեսակ հրճվանք պատճառեց:  
Դերասանները արդեն այստեղ են, և, որքան գիտեմ,  
Հրաման է տվել, որ հենց այս գիշեր իր առաջ խաղան:  
ՊՈԼՈՆԻՈՒՍ.– Այո՛, շատ ճիշտ է, և ինձ պատվիրեց,  
Որ խնդրեմ ձերդ վեհափառությանց,  
Տեսնել և լսել ներկայացումը:  
ԹԱԳԱՎՈՐ.– Ամենայն սիրով.  
Գոհ եմ լսելով, որ նա այժմ այդպես տրամադրված է:  
Ազնիվ պարոններ, դուք էլ ավելի մղեցեք նրան,  
Քաջալերեցեք դեպի այդպիսի զվարճություններ:  
ՌՈԶԵՆԿՐԱՆՑ.– Այո՛, տեր արքա:

*Ռոզենկրանցը և Գիլդենշտերնը դուրս են գնում*

ԹԱԳԱՎՈՐ.– Սիրելի Գերտրուդ, դու էլ հեռացիր.  
Քանզի գաղտնապես մարդ ենք ուղարկել Համլետին բերի,  
Որ Օֆելյային որպես դիպվածով հանդիպի այստեղ:  
Իր հայրը և ես իբր իրավացի հետազոտիչներ,  
Այնպիսի մի տեղ ուզում ենք թաքչել, որ անտես՝ տեսնենք  
Եվ դատենք նրանց տեսակցությունից և նրա ձևից,  
Թե սիրո՞ւց է նա այդպես տառապում, թե ուրի՞շ բան կա:  
ԹԱԳՈՒՀԻ.– Շատ լավ, հնազանդ եմ: Իսկ դու, Օֆելյա,  
Մաղթում եմ սրտանց, որ շնորհալի գեղեցկությունդ  
Լինի Համլետի մտացնորության բարի պատճառը,  
Եվ մեծ հույս ունեմ, որ առաքինի հատկություններդ  
Ետ բերեն նրան իր սովորական ճանապարհի վրա,  
Երկուսիդ ի պատիվ:  
ՕՖԵԼՅԱ.– Տա՛ Աստված, տիկին:

*Թագուհին գնում է*

ՊՈԼՈՆԻՈՒՍ.– Եկ, Օֆելյա, և շրջիր այստեղ:  
Ողորմած տեր իմ, եթե կհաճեք, եկեք թաքնվենք:  
(Օֆելյային) Կարդա այս գրքից. թող զբաղմունքի այդ ձևացումը  
Բնական գույն տա մենակությանդ:  
Հաճախ այս բանում պարսավելի ենք,– և շատ փորձված է,–  
Որ սուրբ երեսով և բարեպաշտիկ շարժումներով  
Սատանային իսկ շաքարոծում ենք:  
ԹԱԳԱՎՈՐ.– (Առանձին) Օ՛հ, ճշմարիտ է:  
Ինչպես այդ խոսքը խարազանում է իմ խղճմտանքը:  
Պոռնիկի այտը՝ շպարի շնորհիվ գեղեցկացրած՝  
Այնքան տգեղ չէ իր սնգույրի մոտ,  
Որքան իմ գործը՝ սաստիկ ներկված իմ խոսքերի մոտ:  
Օ՛հ, ինչ ծանր բեռ:

ՊՈԼՈՆԻՈՒՍ.– Ահա գալիս է. թաքնվենք, տեր իմ:

*Թագավորը և Պոլոնիոսը գնում են: Գալիս է Համլետը*

ՀԱՄԼԵՏ.– Լինել թե չլինել, այս է խնդիրը.

Ո՞րն է հոգեպես ավելի ազնիվ,

Տանել գոռ բախտի պարսաքարերը և սլաքները,

Թե՞ զենք վերցրնել ցավ ու վշտերի մի ծովի ընդդեմ,

Եվ, դիմադրելով՝ վերջ տալ բոլորին:

Մեռնել, քնանալ, ոչինչ ավելի.

Եվ մտածել, թե մի պարզ քնով մենք վերջ ենք տալիս

Այն սրտացավին և բյուր բնական անձկություններին,

Որոնց ժառանգն է մեր հեգ մարմինը,

Մի վախճան է դա՝ հոգով բաղձալի:

Մեռնել, ննջել, ննջել... գուցե երազել.

Ա՛յ, ցավն այդտեղ է. քանզի այդ մահվան քնի ժամանակ

Ի՞նչ կերպ երազներ պիտի գան գուցե,

Երբ այս մահացու կապանքը մեզնից թոթափած լինենք:

Ահա ինչ որ մեզ խորհել պետք է տա, այս նկատումն է,

Որ այսչափ երկար տևել է տալիս թշվառությունը:

Թե ոչ, ո՞վ արդյոք կուզեր հանդուրժել

Աշխարհի այնքան նախատինքներին և մտրակներին,

Հարստահարիչի անիրավության,

Մեծամիտ մարդու արհամարհանքին,

Քամահրած սիրո տվայտանքներին,

Օրենքի բոլոր ձգձգումներին,

Պաշտոնյաների աներեսության,

Այն հարվածներին, որ համբերատար արժանավորը

Ստանում է միշտ անարժաններից,

Այնինչ կարող էր մարդ իր հաշիվը իր ձեռքով փակել

Մի մերկ դաշույնով: Ո՞վ կհոժարեր այսքան բեռ կրել,

Հեծծել ու քրտնել տաղտուկ կյանքի տակ,

Եթե երկյուղը մի ինչ-որ բանի մահվանից հետո,

Այն անհայտ երկրի, որի սահմանից

Ոչ մի ուղևոր չի վերադառնում,

Չձգեր կամքը երկբայության մեջ, և մեզ չստիպեր

Տանել ավելի այն չարիքները, որ այստեղ ունենք.

Քան թե սավառնել դեպի նոր ցավեր, որոնց անգետ ենք:

Խոհամտությունն, այսպես, ամենքիս վախկոտ է դարձնում.

Եվ հենց այս կերպով վճռականության բնածին գույնը

Ախտաժետվում է խորհրդածության գունաթափ ցուլքից,

Եվ շատ ձեռնարկներ, մեծ ու կարևոր.

Շեղվում են այսպես իրենց հոսանքից,

Եվ գործ կոչվելու անարժան դառնում:

Բայց կ'աց, ո՛վ է այս: Սիրուն Օֆելյան:– Ո՛վ հավերժահարս,  
Աղոթքներիդ մեջ թող հիշվեն նաև բոլոր մեղքերս:

ՕՖելզԱ.– Ինչպե՞ս է արդո՞ք ձեր բարձրությունը այսքան շատ օրեր:  
ՀԱՄԼԵՏ.– Շատ խոնարհաբար շնորհակալ եմ. լավ եմ, լավ եմ, լավ:  
ՕՖելզԱ.– Տեր իմ, ձեզանից ես հիշատակներ ունեմ ստացած,  
Որ վաղուց ի վեր ուզում եմ ետ տալ. ստացե՛ք խնդրեմ:  
ՀԱՄԼԵՏ.– Երբե՞ք: Ես ոչինչ չեմ ընծայել քեզ:  
ՕՖելզԱ.– Հարգելի տերս, դուք շատ լավ գիտեք, որ ընծայել եք,  
Եվ հետոն էլ բառեր, այնպես քաղցրաբույր.  
Որ այդ իրերը էլ ավելի թանկ դարձնում էին:  
Հիմա, որ նրանց բույրը թռել է, ետ առե՛ք կրկին.  
Մի ազնիվ հոգու ճոխ ընծաները գծուծ են թվում,  
Երբ պարգևողը անսեր է դառնում: Ստացե՛ք, տեր իմ:  
ՀԱՄԼԵՏ.– Հա՛, հա՛, առաքինի՛ ես դու:  
ՕՖելզԱ.– Տեր իմ...  
ՀԱՄԼԵՏ.– Գեղեցիկ ես:  
ՕՖելզԱ.– Ի՞նչ է ուզում ասել ձեր բարձրությունը:  
ՀԱՄԼԵՏ.– Եթե առաքինի և գեղեցիկ ես, առաքինությունդ ոչ մի հա-  
րաբերություն չպիտի թույլ տա գեղեցկությանդ հետ:  
ՕՖելզԱ.– Բայց, տեր իմ, ո՞ւմ հետ է կարող գեղեցկությունն ավելի  
լավ հարաբերություն ունենալ, քան թե առաքինության հետ:  
ՀԱՄԼԵՏ.– Այո՛, ճիշտ ես ասում, որովհետև գեղեցկության կարողություն-  
ըն ավելի շուտ ընդունակ է առաքինությունը լրբության փոխելու, քան թե  
առաքինության ուժը կարող է գեղեցկությունը իր պատկերին նմանեցնել,  
այս բանը երբեմն պարադոքս էր թվում, բայց հիմա ժամանակը հաստա-  
տեց, որ ճշմարիտ է: Կար մի ժամանակ, որ ես քեզ սիրում էի:  
ՕՖելզԱ.– Այո՛, տեր իմ, ինձ այդպես էիք հավատացնում:  
ՀԱՄԼԵՏ.– Իսկ դու չպիտի հավատալիր, որովհետև առաքինություն-  
ըն չի կարող այնպես պատվաստվել մեր հին ծառաբնի վրա, որ ոչինչ  
չմնա այդ ծառաբնից, ես քեզ չէի սիրում:  
ՕՖելզԱ.– Ուրեմն էլ ավելի խաբված եմ եղել:  
ՀԱՄԼԵՏ.– Մտի՛ր կուսանոց, ինչո՞ւ ես ուզում մեղավորներ աշխարհ բե-  
րել: Ես ինքս քիչ թե շատ պարկեշտ մարդ եմ, բայց դարձյալ ինքս իմ մեջ  
այնպիսի բաներ եմ տեսնում, որ ավելի լավ էր մայրս ինձ ծնած չլիներ:  
Ես շատ հպարտ եմ, քինախնդիր, փառամոլ, ավելի շատ չարություններ  
ունեմ ձեռքիս տակ, քան միտք՝ նրանց տեղ տալու, քան երևակայություն՝  
նրանց ձև տալու, քան ժամանակ՝ իրագործելու: Ինչո՞ւ ուրեմն ինձ նման  
էականեր քարշ գան երկրի և երկնքի միջև: Մենք բոլորս էլ առաջնակարգ  
սրիկաներ ենք. մեզնից ոչ մեկին չհավատաս: Գնա՛, մտիր կուսանոց:  
Հայրդ ո՞ւր է:  
ՕՖելզԱ.– Տանն է, տեր իմ:  
ՀԱՄԼԵՏ.– Դռները պինդ փակիր վրան, որ հիմարի դերը միայն ի՛ր  
տան մեջ խաղա: Մնաս բարով:  
ՕՖելզԱ.– (Առանձին) Օ՛հ, փրկիր սրան, բարերա՛ր Աստված:

ՀԱՄԼԵՏ.– Եթե երբևէ ամուսնանաս՝ քեզ այս անեծքը օժիտ կտամ եղիր զգաստ, ինչպես սառույց, մաքուր, ինչպես ծյուն, դարձյալ զերծ չես մնա զրպարտությունից: Մտիր կուսանոց, գնա. մնաս բարով: Եվ կամ, եթե անպատճառ պետք է ամուսնանաս, ամուսնացիր մի հիմարի հետ, որովհետև խելացիները լավ գիտեն, թե դուք նրանց ինչ հրեշներ եք դարձնում: Հայդե, կուսանոց. և շուտ. մնաս բարով:

ՕՖԵԼՅԱ.– (Առանձին) Երկնային զորություններ, բուժեցեք սրան:

ՀԱՄԼԵՏ.– Ձեր ներկարարության մասին էլ շատ եմ լսել, այո, շատ: Աստված ձեզ այլ երես է տվել, իսկ դուք ձեզ համար մի այլ երես եք շինում. օրորվում եք, շորորվում եք, լեզուներդ եք ծռում, Աստուծո արարածներին մականուններ եք կպցնում, և ձեր լկտիությանը անգիտության երևույթ եք տալիս: Գնա՛, էլ չեմ ուզում այդ բաները տեսնել, դրանք ինձ խենթացրել են: Նրանք, որ արդեն ամուսնացած են, բացի մեկից, թող ապրեն. մյուսները թող մնան ինչպես կան: Մտիր կուսանոց:

### *Դուրս է գնում*

ՕՖԵԼՅԱ.– Ի՞նչ ազնիվ հոգի փչացավ այսպես,  
Դրանիկի աչքը, գիտունի լեզուն, զինվորի սուրը,  
Այս պերճ պետության հույսը և վարդը,  
Տարազի հայելին, ձևի կաղապարը,  
Բոլոր դիտողների դիտման առարկան, այսպես փչանա՛:  
Եվ ես, կանանց մեջ ամենից լքված և տարաբախտս,  
Որ ըմբռնվում էի նրա գեղգեղուն ուխտերի մեղրը,  
Այժմ տեսնում եմ այն ազնիվ և վեհ դատողությունը  
Կոտրած զանգի պես խժալուր դարձած և աններդաշնակ.  
Ծաղկած հասակի այն անզուգական դեմքն ու տիպարը  
Խենթությամբ խամրած: Օ՛հ, վայ թշվառիս,  
Որ այն էլ տեսա, այս էլ տեսնում եմ:

### *Թագավորը և Պոլոնիուսը գալիս են*

ԹԱԳԱՎՈՐ.– Սեր: Նրա մտքերն այդ կողմ չեն հակված,  
Եվ ասածները, թեև քիչ անկապ, խենթի խոսքեր չեն:  
Նրա հոգու մեջ մի որոշ բան կա,  
Որի վրա վիշտը թուփս է նստել,  
Եվ վախենում եմ թուխսից ելածը մի վտանգ լինի,  
Որի առաջը առնելու համար՝ շուտափույթ վճռով  
Ա՛յս որոշեցի. պետք է անհապաղ Անգլիա գնա  
Անվճար տուրքը գանձելու համար: Գուցե ծովերը,  
Տարբեր երկրներն, իրենց այլազան առարկաներով,  
Վանել կարենան նրա սրտի մեջ բույն դրած նյութը,  
Որի վրա ուղեղն անվերջ բախելով՝  
Նրան այս ձևով փոխակերպել է: Ձեր կարծիքն ի՞նչ է:  
ՊՈԼՈՆԻՈՒՍ.– Լավ է, բայց դարձյալ համոզված եմ ես,  
Որ նրա ցավի ծագումն ու սկիզբը

Մերժված սերն է:– Եկ այստեղ, Օֆելյա:  
 Պետք չունես կրկնել իշխան Համլետի քեզ ասածները.  
 Արդեն լսեցինք: Տեր արքա, արեք ինչպես կամենաք,  
 Եվ սակայն, տեր իմ, թե հարմար դատեք, թող խաղից հետո  
 Թագուհի մայրը նրան առանձին թախանձանք անի,  
 Որ իր ցավն ասի, թող շիտակ խոսի իր զավակի հետ.  
 Եվ եթե թույլ տաք, ես կթաքնվեմ այնպիսի մի տեղ  
 Որ լսեմ բոլոր խոսակցությունը,  
 Եթե իր մայրն էլ անհաջող դուրս գա,  
 Ապա Անգլիա ուղարկեք նրան,  
 Կամ թե փակեցեք՝ ուր հարմար դատի իմաստնությունը ձեր:  
 ԹԱԳԱՎՈՐ.– Թող այդպես լինի, մեծավորների խելառոպությունը  
 Չպետք է մնա առանց հսկողի:


*Դուրս են գնում*

**ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ  
 Մի գավիթ դոյակում**

Գալիս է Համլետը մի քանի դերասանների հետ

ՀԱՄԼԵՏ.– Խնդրեմ հատվածն այնպես արտասանիր, ինչպես ես քեզ համար արտասանեցի, թեթև և սահուն: Բայց եթե դու էլ մեր դերասաններից շատերի պես գոռգոռաս, ապա ավելի լավ կլիներ, որ իմ տողերը քաղաքի մունետիկներին արտասանել տայի: Ոչ էլ կարիք կա շարունակ ձեռքովդ օղը սղոցելու այսպես, այլ ամեն բանի մեջ չափավոր եղիր, որովհետև կրքի հեղեղի, փոթորիկի և, այսպես ասենք, հողմապտույտի մեջ անզամ պետք է սովորես մի տեսակ բարեխառնություն պահել, որ հարթություն տա խոսքիդ: Ա՛հ, հոգիս փշաքաղվում է, երբ լսում եմ ինչպես մի հաղթանդամ կեղծամավոր արարած մի զորեղ զգացում ծվիկ-ծվիկ է անում, հին լաթ է շինում գետնահարկի հասարակության ականջը պատռելու համար. հասարակություն, որի մեծ մասը ընդունակ չէ ուրիշ բան ըմբռնելու, բայց միայն անբացատրելի մնչակատակներ և աղմուկ: Մտրակել տալ կուզեի այդ տեսակ արարածին, որ Տերմագանտին էլ գերազանցում է, Հերովդեսից էլ հերովդանում է: Խույս տուր, խնդրեմ, այդ բանից:

Ա. ԴԵՐԱՍԱՆ.– Խոսք եմ տալիս ձերդ բարձրության:



ՀԱՄԼԵՏ.– Ոչ էլ շատ մեղկ պետք է լինես, այլ սեփական ճաշակդ պետք է ղեկավարդ լինի: Շարժումների բառերիդ հարմարեցրու, և բառերը շարժումներիդ, հատկապես ուշադիր լինելով, որ բնական չափավորությունից դուրս չելնես, որովհետև ամեն բան, որ չափազանցված է, խաղի նպատակին հակառակ է, ինչ որ թե՛ հնուց և թե՛ հիմա միշտ եղել է և է՛, այսպես ասած, մի հայելի պահել բնության առաջ. ցույց տալ առաքինության իր սեփական դեմքը, մոլության իր պատկերը, և ժամանակի դեմքին ու մարմնին՝ իր տեսքն ու տիպը: Արդ, եթե դա շատ խիստ դուրս բերվի կամ շատ թույլ, գուցե անգետներին ծիծաղեցնի, բայց բանիմացներին միայն անախորժ կարող է լինել, իսկ մեկ բանիմաց մարդու կարծիքը ձեր աչքին ավելի մեծ կշիռ պետք է ունենա, քան թե մյուսների մի ամբողջ թատրոն: Ա՛հ, դերասաններ եմ տեսել խաղալիս, և լսել, թե մարդիկ նրանց ինչպես էին գովասանում, որոնք, մեղք չլինի ասել, ոչ քրիստոնեի խոսվածքն ունեին, ոչ քրիստոնեի կեցվածքը, ոչ էլ հեթանոսի, ոչ նույնիսկ աղամորդու, և այնպես ուռում և պոռում էին, որ մտածում էի, թե պետք է բնության բանվորները նրանց ստեղծած լինեն, և այն էլ՝ ոչ շատ լավ, այն աստիճան գարշելի նմանություններ էին դրանք մարդկային ցեղի:

Ա. ԴԵՐԱՍԱՆ.– Այդ բոլորը մեզ մոտ քիչ թե շատ բարեփոխել ենք, տեր իմ:

ՀԱՄԼԵՏ.– Պետք է հիմնովին փոխեք: Թող ձեր միմոսի դեր կատարողները այն միայն ասեն, ինչ որ իրենց համար գրված է: Դերասաններ կան, որ մի քանի ապուշ հանդիսատեսների ծիծաղեցնելու համար իրենք են սկսում ծիծաղել, այնինչ հենց այդ ժամանակ խաղի մի կարևոր կետը ուշադրություն է պահանջում, դա շատ խայտառակ բան է, և ցույց է տալիս այդ ձևով վարվող դերասանի ողորմելի սնափառությունը: Գնացեք և պատրաստվեք:

*Դերասանները դուրս են գնում  
Գալիս են Պոլոնիուսը, Ռոզենկրանցը և Գիլդենշտերնը*

Ի՞նչ եղավ, տեր իմ, թագավորը գալ՞ու է արդյոք այս գլուխգործոցը տեսնելու:

ՊՈԼՈՆԻՈՒՍ.– Այո՛, թագուհին էլ միասին, հենց հիմա գալիս են:

ՀԱՄԼԵՏ.– Ուրեմն դերասաններին ասացեք, որ շտապեն:

*Պոլոնիուսը դուրս է գնում*

Դուք էլ օգնեցեք, որ շտապեն:

ՌՈԶԵՆԿՐԱՆՑ ԵՎ ԳԻԼԴԵՆՇՏԵՐՆ.– Այո՛, տեր իմ:

Ռոզենկրանցը և Գիլդենշտերնը դուրս են գնում

ՀԱՄԼԵՏ.– Էհե՛յ, Հորացիո:

*Գալիս է Հորացիոն*

ՀՈՐԱՑԻՈ.– Պատրաստ եմ, տեր իմ, ձեր ծառայության:

ՀԱՄԼԵՏ.– Լսիր, Հորացիո. քեզնից ավելի ուղղամիտ մարդու

Դեռ չեմ հանդիպել ծանոթներիս մեջ:

ՀՈՐԱՑԻՈ.– Սիրելի՛ տեր իմ:

ՀԱՄԼԵՏ.– Չկարծես թե քեզ շողոքորթում եմ.

Ինչ շահ կարող եմ հուսալ քեզանից,  
Որ բացի ուրախ բնավորությունից մի հասույթ չունես  
Ապրուստ ու հագուստ հոգալու համար:  
Ինչո՞ւ փայփայել չքավոր մարդուն.  
Ոչ, շողոքորթի մեղրածոր լեզուն  
Անմիտ պերճության ոտքը թող լիզե,  
Եվ իր ծնկների ճկուն լիսեռներն այնտեղ կորացնե,  
Ուր որ քծնանքին վարձ է սպասում:  
Լսո՞ւմ ես, Հորացիո, այն օրից ի վեր, որ մատաղ հոգիս  
Իր ընտրության մեջ ինքնիշխան դարձավ,  
Եվ հասու եղավ մարդկանց իրարից զանազանելու,  
Նա քե՞զ որոշեց, կնքեց իր համար.  
Քանզի դու հավետ մի մարդ ես եղել,  
Որ ամենայն ինչ կրելով հանդերձ՝ ոչինչ չես կրում,  
Եվ բախտի ամեն վարձն ու հարվածը  
Ընդունել ես միշտ միահավասար շնորհակալությամբ:  
Օրինյալ են նրանք, որոնց մեջ արյունն ու դատողությունն  
Այնպես համաչափ զուգախառնված են,  
Որ լոկ շվի չեն բախտի մատերին,  
Որ ինչպես ուզե վրան նվազե:  
Տուր ինձ այն մարդը, որ իր կրքերի գերին չլինի,  
Եվ ես սրտիս մեջ տեղ կտամ նրան, սրտիս սրտի մեջ,  
Ինչպես այժմ քեզ: Բայց այս շատ եղավ:  
Լսիր. այս գիշեր արքայի առաջ ներկայացում կա.  
Եվ մի տեսարան մոտ է իմ հորս մեռնելու կերպին,  
Որ պատմել եմ քեզ: Խնդրում եմ, երբ գա այդ տեսարանը,  
Դու հոգուդ բոլոր խորատեսությամբ դիտիր հորեղբորս.  
Եթե մի որոշ ճառի ժամանակ  
Թաքուն ոճիրը հանկարծ իր որջից դուրս չհարձակվի՝  
Ապա այն ոգին, որ մենք տեսել ենք, մի չար ոգի է,  
Եվ խորհածներս՝ Վուկանի սալից ավելի մրոտ:  
Լավ դիտիր նրան, ես էլ աչքերս դեմքին կհառեմ,  
Հետո երկուսս մեր կարծիքները կմիացնենք  
Նրա երեսի արտահայտածը դատելու համար:

ՀՈՐԱՑԻՈ.– Լավ, տե՛ր իմ. եթե խաղի ժամանակ  
Փորձե իմ աչքից մի բան գողանալ և չբռնվի՝  
Ես կհատեմ գողոնի գինը:

ՀԱՄԼԵՏ.– Ահա գալիս են ներկայացումին.

Ես պետք է այստեղ անփույթ երևամ. մի տեղ գտիր քեզ:

*Դանիական քայլերգ: Գալիս են թագավորը, թագուհին, Պոլոնիուսը,  
Օֆելյան, Ռոզենկրանցը, Գիլդենշտերնը և ուրիշ պալատականներ ու  
պահակներ՝ ջահերով*

ԹԱԳԱՎՈՐ.– Ինչպէս է մեր եղբորորդի Համլետը:

ՀԱՄԼԵՏ.– Շատ լավ, իսկապէս, քամելեոնի պես եմ կերակրվում, օր եմ ուտում, խոստումներով եմ խճողված. աքլորներին չեք կարող այս կերպով գիրացնել:

ԹԱԳԱՎՈՐ.– Այդ պատասխանը ինձ համար չէ, Համլետ. այդ խոսքերը ինձ չեն պատկանում:

ՀԱՄԼԵՏ.– Ոչ էլ ինձ արդեն:– **(Պոլոնիոսին)** Տէր իմ, ասացիք թե համալսարանում մի անգամ մի բան եք խաղացել, այնպես չէ՞:

ՊՈԼՈՆԻՈՒՍ.– Այո, տէր իմ, և լավ դերասան էի համարվում:

ՀԱՄԼԵՏ.– Ինչ եք խաղացել:

ՊՈԼՈՆԻՈՒՍ.– Հուլիոս Կեսարի դերը, և սպանվեցի Կապիտոլիումում.

Բրուտոսն սպանեց:

ՀԱՄԼԵՏ.– Շատ բիրտություն էր նրա կողմից այդպիսի երևելի կովին Կապիտոլիումում սպանել:– Դերասանները պատրաստ են:

ՌՈԶԵՆԿՐԱՆՅ.– Այո, տէր իմ, ձեր հրամանին են սպասում:

ԹԱԳՈՒՀԻ.– Եկ այստեղ, սիրելի Համլետ, եկ նստիր կողքիս:

ՀԱՄԼԵՏ.– Ոչ, սիրելի մայր, այստեղ ավելի քաջող մետաղ կա:

ՊՈԼՈՆԻՈՒՍ.– **(Թագավորին)** Օ՛հո՛ր, լսեցի՞ք ինչ ասաց:

ՀԱՄԼԵՏ.– Օրիորդ, թոյլ կտամք, որ ձեր գոգի մեջ ձգվեմ:

*Ձգվում է գետնի վրա Օֆելյայի ոտքերի առաջ*

ՕՖԵԼՅԱ.– Ոչ, տեր իմ:

ՀԱՄԼԵՏ.– Ուզում եմ ասել՝ գլուխս ձեր գոգը դրած:

ՕՖԵԼՅԱ.– Այո, տեր իմ:

ՀԱՄԼԵՏ.– Կարծում եք վստ մտքով ասացի:

ՕՖԵԼՅԱ.– Ոչինչ չեմ կարծում, տեր իմ:

ՀԱՄԼԵՏ.– Լավ գաղափար է՝ աղջիկների սրունքների մեջ ձգվել:

ՕՖԵԼՅԱ.– Ինչ, տեր իմ:

ՀԱՄԼԵՏ.– Ոչինչ:

ՕՖԵԼՅԱ.– Շատ ուրախ եք, տեր իմ:

ՀԱՄԼԵՏ.– Ո՛վ, ցն:

ՕՖԵԼՅԱ.– Այո, տեր իմ:

ՀԱՄԼԵՏ.– Ինչ արած. ձեր զավեշտաբանն եմ ես: Մարդ ուրախ չլինի, ինչ անի. մեկ այնտեղ նայիր, տես մայրս ինչպես ուրախ է, և երկու ժամ չկա, որ հայրս մեռել է:

ՕՖԵԼՅԱ.– Ոչ, երկու անգամ երկու ամիս է, տեր իմ:

ՀԱՄԼԵՏ.– Այդքան երկար, ուրեմն թող սատանան սև հագնի, ես մի ձեռք սամույր եմ հագնելու: Տէր Աստված, մարդ երկու ամիս առաջ մեռնի և դեռ չմոռացվի: Ուրեմն կարելի է հուսալ, որ մի մեծ մարդու հիշատակը դեռ վեց ամիս իր մահից հետո կարող է տնել, բայց, սուրբ կոյսը վկա, պետք է եկեղեցիներ շինի, թե ոչ՝ կմոռացվի ինչպես այն փայտե ձին, որի տապանագիրն էր.

**«Ա՛խ ափսոս, ա՛խ ափսոս, փայտե ձին մոռացվեց»:**

*Երաժշտություն: Մնջակատակի դերասանները*

Գալիս են մի թագավոր և մի թագուհի, շատ սիրով. նախ թագուհին համբուրում է թագավորին, հետո նա՝ նրան. թագուհին ծունկ է չոքում թագավորի առաջ և սիրային ցույցեր է անում: Թագավորը նրան վեր է բարձրացնում, և իր գլուխը թեքում է նրա վզին. հետո թագավորը պառնում է ծաղիկների վրա: Թագուհին տեսնելով, որ նա քնեց՝ հեռանում է: Մի քիչ հետո ներս է գալիս մի մարդ, վեր է առնում թագավորի թագը, համբուրում է, թույն է լցնում թագավորի ականջի մեջ և դուրս է գնում: Թագուհին վերադառնալով՝ թագավորին գտնում է մեռած և ողբ ու կոծ է անում: Թունավորողը կրկին գալիս է երկու-երեք մունջերի հետ և այնպես է ձևացնում, կարծես թե մասնակցում է թագուհու վշտին: Մեռյալին տանում են դուրս: Թունավորողն աշխատում է ընծաներով թագուհու սիրտը շահել. թագուհին սկզբում դժկամություն է ցույց տալիս, բայց վերջը ընդունում է նրա սերը: Դուրս են գնում:

ՕՖԵԼՅԱ.– Ինչ միտք ունի այս, տեր իմ:

ՀԱՄԼԵՏ.– Miching mallecho, այսինքն՝ չարագործություն:

ՕՖԵԼՅԱ.– Երևի մնշակատակը խաղի նյութն է ներկայացնում:

#### *Գալիս է նախերգակը*

ՀԱՄԼԵՏ.– Հիմա սա մեզ կասի: Դերասանները գաղտնիք պահող մարդիկ չեն. ամեն բան կհայտնեն:

ՕՖԵԼՅԱ.– Կարծում եք, թե տեսարանի նշանակությունը կասի:

ՀԱՄԼԵՏ.– Այո, և ամեն տեսարանի, որ նրան ցույց տաք: Դուք մի՞ ամաչեք ցույց տալուց, նա էլ չի ամաչի նշանակությունն ասելուց:

ՕՖԵԼՅԱ.– Շատ չարն եք, շատ չարը, լավ է խաղին մտիկ տամ:

ՆԱԽԵՐԳԱԿ.– Թե՛ մեր ողբերգի և թե՛ մեզ համար

Ներում ենք խնդրում շատ խոնարհաբար,

Եվ աղաչում ենք, որ համբերությամբ

Հաճեք պատվել մեզ ձեր ունկնդրությամբ:

ՀԱՄԼԵՏ.– Նախերգանք է այս, թե մատանու մակագիր:

ՕՖԵԼՅԱ.– Այո, շատ կարճ է, տեր իմ:

ՀԱՄԼԵՏ.– Կնոջ սիրո պես:

#### *Գալիս են երկու դերասան, իբրև թագավոր և թագուհի*

ԲԵՄԻ ԹԱԳԱՎՈՐ.– Երեսուն անգամ Ֆեբուսի կառքը արել է շրջան

Տելլուսի շուրջը, և Պոսեյդոնի աղի պետության,

Երեսուն անգամ տասներկու լուսին պտույտ են գործել,

Տասներկու անգամ երեսուն գիշեր երկրի շուրջ դարձել,

Այն օրից, ինչ սերը մեր սրտերն իրար է զուգավորել,

Եվ ինչ Հիմենեն մեր ձեռքերն իրար է միավորել:

ԲԵՄԻ ԹԱԳՈՒՀԻ.– Շատ այդքան անգամ արև ու լուսին թող գան ու գնան,

Եվ մեր սրտերը միշտ անկեղծ սիրով անբաժան մասն.

Բայց, վայ, վերջերս հիվանդ ես թվում, և այնպես տրտում,

Սովորությանդ այնպես հակառակ, որ վախ ես ազդում.

Բայց երկյուղներս, ինչ էլ որ լինեն,

Թող նրանք, տէր իմ, քեզ չվրդովեն.

Կանանց սրտի մեջ երկյուղն ու սերը միշտ համաչափ են,

Կամ նրանք բնավ գոյություն չունեն և կամ անչափ են:

Թե որքան մեծ է իմ սրտի սերը

Քեզ ցույց են տվել ձիգ տարիները.

Եվ ինչ չափով որ չափվում է սերը,

Չափվում են նաև իմ երկյուղները.

Ուր սերը մեծ է, փոքրիկ կասկածը մեծ վախ է դառնում.

Երբ մեծանում են փոքրիկ վախերը՝ սերն է մեծանում:

ԲԵՄԻ ԹԱԳԱՎՈՐ– Ավանդ, սիրելիս, պետք է բաժանվենք, այն էլ քիչ օրից

Մարմնիս ուժերը հոգնել են այլևս իրենց պարտքերից.

Եվ ինձնից հետո սիրուն աշխարհում պետք է դեռ ապրես,

Հարգված, սիրված և գուցե նույնիսկ դու նորեն սիրես:

Եվ նոր ամուսին...

ԲԵՄԻ ԹԱԳՈՒՀԻ– Օ՛հ, մի՛ վերջացնի. Աստված ոչ անի՛,

Որ սիրտս այդպես քեզ դավաճանի.

Եթե ես երկրորդ ամուսին առնեմ՝

Թող որ հավիտյան անիծյալ լինեմ:

Երկրորդ ամուսին չէ առել մի կին,

Եթե չէ դավել նախկին կյանքին:

ՀԱՄԼԵՏ.– **(Առանձին)** Օշինդր է, օշինդր:

ԲԵՄԻ ԹԱԳՈՒՀԻ– Երբ այրի կինը փնտրում է կրկին մի նոր կողակից,

Սիրուց չէ բնավ, այլ միայն շահի ստոր փափագից.

Մեռած ամուսնուս ես երկրորդ անգամ ինքս եմ սպանում,

Երբ իր անկողնում երկրորդ ամուսնուց համբույր եմ առնում:

ԲԵՄԻ ԹԱԳԱՎՈՐ– Ես հավատում եմ, թե այժմ անկեղծ են քո ասածները.

Բայց որքան հաճախ ինքներս ենք կոտրում մեր վճռածները,

Եվ որոշումը մեր հիշողության գերին է միայն,

Ծնվելիս հուժկու, բայց տոկունությամբ խիստ աղքատ է այն.

Եվ հիմա որպես մի տհաս պտուղ ծառին կպած է,

Բայց ցած է ընկնում առանց թափ տալու՝ երբ որ հասած է:

Զարմանալի չէ, որ մոռանում ենք

Մենք մեզ վճարել, ինչ որ մե՛զ պարտ ենք.

Ինչ որ կրքի մեջ վճռում ենք գործել՝

Երբ որ կիրքն անցավ, անմիտ է դարձել.

Թե՛ բուռն վիշտը, թե՛ բուռն խինդը բավ է, որ հանգչեն,

Իրենց սեփական որոշումները իրենք կջնջեն.

Ուր խնդությունը հրճվում է սաստիկ, վիշտը կսկծում,

Չնչին մի դեպքից հրճվում է վիշտը, և խինդն է լացում:

Հավերժական չէ մեր այս աշխարհը, և շատ պարզ բան է,

Որ մեր բախտի հետ և մարդկանց սերը փոփոխական է.

Եվ մինչև այսօր դեռևս անլույծ է այս հարցը խրթին,

Թե բախտն է արդյոք սիրո առաջնորդ, թե սերը՝ բախտի:

Մեծ մարդն ընկնելիս՝ մտերիմները թողնում փախչում են,

Փոքրը մեծանալիս՝ թշնամիները գալիս, փակչում են,  
 Եվ մինչև հիմա բախտին հետևող եղած է սերը.  
 Ով կարոտյալ չէ՝ նրան պակաս չեն բարեկամները.  
 Եվ ով փորձում է կարոտության մեջ փուլ բարեկամին՝  
 Նա ինքն իր ձեռքով դարձնում է նրան իր թունդ թշնամին:  
 Բայց թող, որ կարգով ես եզրակացնեմ, ինչ սկսել եմ.  
 Մեր բախտն ու կամքը միշտ ընթանում են այնպես հակընդդեմ,  
 Որ տապալվում են մեր խորհուրդները բախտի բերմունքից,  
 Մերն է խորհուրդը, բայց նրա ելքը՝ անկախ մեր կամքից:  
 Դու մտածում ես, որ չես լինելու մի երկրորդի կին.  
 Մեռնում է միտքդ, երբ որ մեռնում է քո տերը նախկին:  
**ԲԵՄԻ ԹԱԳՈՒՀԻ**– Թող որ երկիրը ինձ սնունդ չտա, և երկինքը՝ լույս,  
 Գիշեր ու ցերեկ հանգիստ ու հաճույք չտան խղճալուս,  
 Թող որ փոխարկվեն հոյս ու հավատս հուսահատության,  
 Ճգնավորի պես մատնված լինեմ բանտի տրտմության,  
 Եվ ուրախության դեմքը խամրեցնող ցավերն անհամար  
 Խուժեն խմբովին, կործանեն ինչ որ թանկ է ինձ համար,  
 Ոչ այս աշխարհում, ոչ հանդերձյալում ինձ դադար չտան՝  
 Թե այրի լինեմ և ցանկամ կրկին նոր ամուսնության:  
**ՀԱՄԼԵՏ**.– (Օֆելյային) Թե հիմա դրժե՞ իր երդումները:  
**ԲԵՄԻ ԹԱԳԱՎՈՐ**– Ահեղ երդումներ. այժմ, սիրելիս, թող ինձ մի րոպե,  
 Ոգիս թմրում է, թող քունը մի քիչ տաղտուկս խաբե:  
**ԲԵՄԻ ԹԱԳՈՒՀԻ**– Քունը ուղեղիդ թող օրոր անի,  
 Եվ ոչ մի փորձանք մեզ չբաժանի:

*Թագուհին գնում է*

**ՀԱՄԼԵՏ**.– Մայր իմ, ինչպես ես գտնում այս խաղը:  
**ԹԱԳՈՒՀԻ**.– Տիկինը շատ է երդվում կարծես:  
**ՀԱՄԼԵՏ**.– Օ՛, բայց խոսքը կպահի:  
**ԹԱԳԱՎՈՐ**.– Նյութին ծանոթ ես. վատ բան հո չկամ:  
**ՀԱՄԼԵՏ**.– Ոչ, ոչ. կատակ են անում, կատակով թույն. ոչ մի վատ բան չկա:  
**ԹԱԳԱՎՈՐ**.– Խաղի անունն ի՞նչ է:  
**ՀԱՄԼԵՏ**.– Մկան թակարդ: Ինչպես այլբանորեն: Այս խաղը մի մարդասպա-  
 նություն է ներկայացնում, որ կատարվել է Վիեննայում: Գոնզագո է դուքսի անու-  
 նը, կնոջ անունն էլ՝ Բատիստա: Հիմա կտեսնեք, սրիկայության մի գլուխգործոց  
 է, բայց մեզ ի՞նչ փույթ, դա չի կարող դիպչել ձերդ վեհափառությանը, ոչ էլ մեզ.  
 մենք մաքուր խիղճ ունենք. վերքոտ ձին թող խրտնի, մեր մեջքը պինդ է:

*Գալիս է մի դերասան, Լուցիանոսի դերում*

Ահա մի մարդ, ում անունը Լուցիանոս է, թագավորի եղբորորդին է:  
**ՕՖԵԼՅԱ**.– Դուք այնպես լավ եք մեկնաբանում, ինչպես խաղի նախերգակը:  
**ՀԱՄԼԵՏ**.– Ես շատ լավ կարող եմ քո և սիրելեանիդ մեջ մեկնաբանի դեր  
 կատարել, միայն թե խամաճիկների կոտրատվելը տեսնեի:  
**ՕՖԵԼՅԱ**.– Շատ սուր եք, տեր իմ, շատ սուր եք:

ՀԱՄԼԵՏ.– Ցավից կգոռայիր մինչև սայրս բթացնեիր:

ՕՖԵԼՅԱ.– Ավելի լավ, և ավելի վատ:

ՀԱՄԼԵՏ.– Այդպես եք սխալվում ամուսին ընտրելիս:– Դեհ, սկսիր, մարդասպան, գրողը տանի քեզ, մահրդ, բաց թող այդ ծամածռությունները և սկսիր: Եկ. կռկռան ագռավը վրեժ է պահանջում:

ԼՈՒՑԻԱՆՈՍ.– Խորհուրդներ խավար, և ձեռքեր ճարպիկ և թույներ ազդու.

Ոչ մի արարած իբր ականատես, և ժամ ձեռնտու.

Դու դժխեմ խառնուրդ, կեսգիշերային խոտերից քամված,

Եվ Հեկատեի անեծքով նյութված, երիցս նեխած.

Բնական թովքդ, մահառիթ ուժդ թող շուտ ներգործի,

Արշավի իսկույն առողջ կյանքի դեմ, ավերմունք գործի:

*Թույնը թափում է քնողի ականջի մեջ*

ՀԱՄԼԵՏ.– Պարտեզի մեջ թունավորում է մարդուն, թագավորությունը ձեռք ձգելու համար: Անունը Գոնզագո է. պատմվածքը իսկապես գոյություն ունի, և շատ ընտիր իտալերեն գրված: Հիմա կտեսնես, թե մարդասպանը ինչպես է ձեռք բերում Գոնզագոյի կնոջ սիրտը:

ՕՖԵԼՅԱ.– Թագավորը վեր կացավ:

ՀԱՄԼԵՏ.– Ինչ է, սուտ հրդեհից վախեցավ:

ԹԱԳՈՒՀԻ.– Ինչ պատահեց ձեզ, տեր իմ:

ՊՈԼՈՆԻՈՒՍ.– Դադարեցրեք խաղը:

ԹԱԳԱՎՈՐ.– Ճրագ, ճրագ, գնանք:

ՊՈԼՈՆԻՈՒՍ.– Ճրագ, ճրագ, ճրագ:

*Ամենքը դուրս են գնում, բացի Համլետից և Հորացիոյից*

ՀԱՄԼԵՏ.– Խոցված եղնիկը թող ցավից ողբա,

Առողջ եղջերուն ուրախ թռչկոտե,

Մեկը թող քնի, մյուսն արթուն մնա,

Այս հին աշխարհի օրենքը այդ է:

Եվ սրա հետ մեկտեղ, պարոն, մի անտառ փետուր գլխարկիս,

Եվ երկու մեծ կարմիր վարդ կոշիկներիս, միթե բավական չի լինի,

որ ինձ մի տեղ տան դերասանների մի խումբի մեջ, եթե

մի օր ամբողջ գույքս մոխիր դառնա:

ՀՈՐԱՑԻՈ.– Գուցե կես բաժին կտան ձեզ:

ՀԱՄԼԵՏ.– Ո՛չ, մի ամբողջ բաժին:

**Գիտես, Դամոն, իմ սիրելի,**

**Այս գահն եղավ ավերակ,**

**Դիոսի տեղ ո՞վ է նստել,**

**Մի իսկական... խեղկատակ:**

ՀՈՐԱՑԻՈ.– Ավելի լավ էր իր բառով վերջացնեիք\*:

ՀԱՄԼԵՏ.– Սիրելի Հորացիո, հազար ոսկի գրավ կդնեմ, որ ուրվականի

---

\* Հորացիոն սպասում էր, որ Համլետը կասի **Մի իսկական ավանակ:**

ասածը ճշմարիտ էր: Նկատեցի՞ր:

ՀՈՐԱՑԻՈՒ.– Այո՛, տեր իմ:

ՀԱՄԼԵՏ.– Երբ թունավորելու խոսքը եկավ՝ տեսա՞ր:

ՀՈՐԱՑԻՈՒ.– Շատ լավ դիտեցի:

ՀԱՄԼԵՏ.– Ա՛հ, հա՛: Եկեք մի բան նվագեք. եկեք, սրնգահարներ:

**Եթե այս արքան խաղը չսիրեց,  
Պատճառը այն է... որ չհավանեց:**

*Գալիս են Ռոզենկրանցը և Գիլդենշտերնը*

Հայդեն, մի քիչ երաժշտություն:

ԳԻԼԴԵՆՇՏԵՐՆ.– Ազնիվ տեր, թույլ տվեք ձեզ երկու խոսք ասեմ:

ՀԱՄԼԵՏ.– Մի ամբողջ պատմություն կարող ես, պարոն՝

ԳԻԼԴԵՆՇՏԵՐՆ.– Թագավորը, տեր իմ...

ՀԱՄԼԵՏ.– Հը, ի՞նչ կա:

ԳԻԼԴԵՆՇՏԵՐՆ.– Քաշվել է իր սենյակը և սաստիկ հուզված է:

ՀԱՄԼԵՏ.– Շնտ խմելուց:

ԳԻԼԴԵՆՇՏԵՐՆ.– Ոչ, տեր իմ, բարկությունից:

ՀԱՄԼԵՏ.– Եթե խելացի մարդ լինեիք՝ բժշկին կհայտնեիք, ոչ թե ինձ: Եթե ես նրան լուծողական տամ՝ գուցե նա էլ ավելի կմաղձոտի:

ԳԻԼԴԵՆՇՏԵՐՆ.– Ազնիվ տեր, մի քիչ ավելի կարգ ու կանոն դրեք ձեր խոսքերի մեջ, և այդպես մի խրտնեք խոսքիս նյութից:

ՀԱՄԼԵՏ.– Ես հանդարտ եմ, պարոն, խոսիր:

ԳԻԼԴԵՆՇՏԵՐՆ.– Թագուհին՝ ձեր մայրը, սաստիկ վրդովված, ինձ ուղարկել է ձեզ մոտ:

ՀԱՄԼԵՏ.– Բարով ես եկել:

ԳԻԼԴԵՆՇՏԵՐՆ.– Ոչ, տեր իմ. այդ քաղաքավարությունն անտեղի է: Եթե կբարեհաճեք ինձ օրինավոր պատասխան տալ՝ ձեր մոր պատվերը կկատարեմ, թե ոչ, ձեր ներողությունը և իմ վերադարձը կլինեն պաշտոնիս վերջավորումը:

ՀԱՄԼԵՏ.– Պարոն, չեմ կարող:

ԳԻԼԴԵՆՇՏԵՐՆ.– Ի՞նչ չեք կարող:

ՀԱՄԼԵՏ.– Օրինավոր պատասխան տալ: Խելքս խանգարվել է: Բայց ինչ պատասխան որ կարող եմ տալ, կտամ քեզ, կամ ավելի ճիշտ, մորս:

Ուրեմն, կարճ, բանն ի՞նչ է, ասում ես մայրս...

ՌՈԶԵՆԿՐԱՆՑ.– Ձեր մայրն ասում է, թե ձեր վարմունքը նրան շատ զարմացրեց և ապշեցրեց:

ՀԱՄԼԵՏ.– Ջարմանալի՞ որդի, որ կարողանում է իր մորը այսպես զարմացնել: Բայց ասա տեսնեմ, այդ մայրական զարմանքը ուրիշ պոչ էլ ունի՞ թե ոչ. այդ ասա:

ՌՈԶԵՆԿՐԱՆՑ.– Ուզում է քնելուց առաջ խոսել ձեզ հետ իր առանձնարանում:

ՀԱՄԼԵՏ.– Կհնազանդեմ, թեկուզ տասն անգամ էլ մայրս լինի:

Ուրիշ գործ էլ ունե՞ս ինձ հետ:

ՌՈԶԵՆԿՐԱՆՑ.– Տեր իմ, մի ժամանակ դուք ինձ սիրում էիք:

ՀԱՄԼԵՏ.– Հիմա էլ սիրում եմ, երդվում եմ այս գողերով և շորթողներով:  
(Ձեռքերն է ցույց տալիս):

ՌՈՋԵՆԿՐԱՆՑ.– Սիրելի իշխան, ինչ է ձեր այս վրդովմունքի պատճառը. ինքներդ ձեր ձեռքով փակում եք ձեր ազատության դուռը, երբ ցավերդ թաքցնում եք ձեր բարեկամից:

ՀԱՄԼԵՏ.– Պարո՛ն, հառաջադիմելու մարմաջն է ինձ տանջում:

ՌՈՋԵՆԿՐԱՆՑ.– Ինչպես կարելի է, երբ թագավորն ինքը ձեզ է նշանակել Դանենարքայի գահաժառանգ:

ՀԱՄԼԵՏ.– Այո, պարո՛ն, բայց «Մինչև խոտը բուսի»... Առակը մի քիչ մզլուտել է:

### *Գալիս են դերասանները և երաժիշտները*

Ա՛հ, երաժիշտները. տվեք ինձ այդ սրինգներից մեկը: **(Գիլդենշտերնին)** Ե՛կ, քեզ մի բան ասեմ... Ինչո՞ւ ես այդպես ետևիցս ընկել, և չես թողնում, որ շունչ քաշեմ, կարծես որոշած լինես ինձ թակարդի մեջ ձգել:

ԳԻԼԴԵՆՇՏԵՐՆ.– Ահ, տե՛ր իմ, եթե անձնվիրությունս շատ խիզախ է, պատճառն այն է, որ սերս դեպի ձեզ քաղաքավարությանն ուշ չի դարձնում:

ՀԱՄԼԵՏ.– Լավ չհասկացա: Կարո՞ղ ես այս սրինգի վրա մի բան նվագել:

ԳԻԼԴԵՆՇՏԵՐՆ.– Ոչ, տե՛ր իմ:

ՀԱՄԼԵՏ.– Խնդրում եմ:

ԳԻԼԴԵՆՇՏԵՐՆ.– Հավատացե՛ք, չեմ կարող:

ՀԱՄԼԵՏ.– Աղաչում եմ:

ԳԻԼԴԵՆՇՏԵՐՆ.– Կյանքումս սրինգ ձեռք չեմ առել, տե՛ր իմ:

ՀԱՄԼԵՏ.– Բայց դա նույնչափ դյուրին բան է, որչափ սուտ ասելը: Մատերդ դիր այս լեզվակների վրա և շարժիր, բերնովդ էլ փչիր, և տես ինչ հրաշալի երաժշտություն դուրս կգա: Նայիր, ահա լեզվակները:

ԳԻԼԴԵՆՇՏԵՐՆ.– Բայց չեմ կարող մատերս այնպես շարժել, որ մի ներդաշնակ բան դուրս գա, այդ ճարտարությունը չունեմ:

ՀԱՄԼԵՏ.– Դե լավ. հիմա տես թե ինչ անարժան արարած ես համարում դու ինձ, ուզում ես նվագել իմ վրա, այնպես ես ձևացնում, որպես թե ծանոթ ես իմ լեզվակների հետ. ուզում ես իմ գաղտնիքը սրտիցս դուրս քաշել, ուզում ես ձայնս փորձել՝ սկսած ամենացած նոտայից մինչև ձայնաշարիս ամենաբարձրը. մյուս կողմից՝ շատ երաժշտություն և հրաշալի հնչյուն կա այս փոքրիկ գործիքի մեջ, և դու չես կարողանում նվագել: Մա՛րդ Աստուծո, կարծում ես թե ես մի սրինգի չափ էլ չկամ: Անվանիր ինձ, ինչ գործիք որ կուզես. թեև կարող ես ինձ չարչարել, բայց վրաս նվագել չես կարող: **(Գալիս է Պոլոնիուսը):** Բարև ձեզ, պարոն:

ՊՈԼՈՆԻՈՒՍ.– Տե՛ր իմ, թագուհին կամենում է խոսել ձեզ հետ, և իսկույն:

ՀԱՄԼԵՏ.– Տեսնո՞ւմ եք այն ամպը, որ կարծես ուղտի ձև ունի:

ՊՈԼՈՆԻՈՒՍ.– Պատարագը վկա, ուղտի նման է, ճիշտ որ...

ՀԱՄԼԵՏ.– Ինձ թվում է, թե մի աքիսի նման է:

ՊՈԼՈՆԻՈՒՍ.– Մեջքը աքիսի է նման:

ՀԱՄԼԵՏ.– Կամ կետ ձկան:

ՊՈԼՈՆԻՈՒՍ.– Շատ նման է կետ ձկան:

ՀԱՄԼԵՏ.– Ուրեմն շուտով կգամ մորս մոտ: **(Առանձին)** Սրանք ինձ այնպես հիմարի տեղ են դնում, որ քիչ է մնում սիրտս տրաքվի:– Շուտով կգամ:

ՊՈԼՈՆԻՈՒՍ.– Այդպես էլ կասեմ:

ՀԱՄԼԵՏ.– Ինչ դյուրին բան է «շուտով» ասելը:

Մենակ թողեք ինձ, բարեկամներս:

*Ամենքը գնում են, բացի Համլետից*

Ահա գիշերվա հուռութքի ժամը,  
Երբ հորանջում են գերեզմանները,  
Եվ դժոխքն ինքը ժանտախտ է փչում աշխարհի վրա:  
Այժմ կարող էի տաք արյուն խմել,  
Եվ այնպես դաժան գործեր կատարել,  
Որ լույս ցերեկը կդողահարվեր վրան նայելուց:  
Գնամ մորս մոտ: Ո՛վ սիրտ, մի՛ կորցրու քո բնությունը,  
Ներոնի հոգին թող մուտք չգտնե այս պինդ կուրծքի մեջ.  
Թող անգութ լինեմ, բայց ոչ հրեշային.  
Պետք է մորս հետ դաշույններ խոսեմ, բայց ոչ գործածեմ.  
Լեզուս ու հոգիս թող այս բանի մեջ կեղծավոր լինեն.  
Որչափ էլ նրան խոսքով նախատեմ,  
Հոգիս, մի՛ թույլ տուր, որ գործով դատեմ:

*Գնում է դուրս*

ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

*Գալիս են թագավորը, Ռոզենկրանցը և Գիլդենշտերնը*

ԹԱԳԱՎՈՐ.– Չեմ սիրում նրան, ոչ էլ մեզ համար ապահով բան է

Թույլ տալ, որ նրա խելագարությունն ազատ թափառի:

Գնացեք, ուրեմն և պատրաստվեցեք.

Իսկույն կուղարկեմ ձեր հանձնագիրը.

Պետք է նա ձեզ հետ Անգլիա գնա:

Մեր աստիճանի նկատումները չեն կարող թույլ տալ,

Որ վտանգը մեզ այնպես մոտ կենա,

Ինչ որ ամեն ժամ ծագում է նրա լուսնոտությունից:

ԳԻԼԴԵՆՇՏԵՐՆ.– Շուտ կպատրաստվենք: Շատ նվիրական ու սուրբ երկյուղ է

Հոգալ այնքան շատ անձերի մասին,

Որ ձերդ մեծության շնորհից ապրում և սնուցվում են:

ՌՌԶԵՆԿՐԱՆՑ.– Սոսկ և մասնավոր անհատն էլ պարտ է

Իր հոգու բոլոր թափով ու զրահով

Իրեն զերծ պահել ամեն փորձանքից.

Որքան ավելի այն անձը, որի բարօրությունից

Կախված է մնում շատերի կյանքը.

Վեհափառության վախճանը երբեք մենակ չէ լինում.  
Այլ հորձանքի պես քաշում է իր հետ մերձավորներին.  
Մի ծանր անիվ է, բարձրաբերձ լեռան ծայրին հաստատված,  
Որի վիթխարի շառավիղներին  
Տասնյակ հազարով փոքրագույն բաներ զողված, պրկված են.  
Եվ երբ ընկնում է, ամեն մի կցորդ, չնչին հետևորդ  
Ընկերանում է ճայթուն խորտակման:  
Երբեք չէ եղել, որ թագավորը մենակ հառաչի,  
Այլ միշտ ընդհանուր վայնասունի հետ:  
ԹԱԳԱՎՈՐ.– Դեհ, պատրաստվեք, խնդրեմ, շտապ ճամփա ընկնելու.  
Պետք է այս ահի ոտքը շղթայենք,  
Որ այժմ խիստ ազատ շրջագայում է:  
ՌՈՋԵՆԿՐԱՆՑ ԵՎ ԳԻԼԴԵՆՇՏԵՐՆ– Կշտապենք, տեր իմ:  
*Ռոզենկրանցը և Գիլդենշտերնը գնում են դուրս  
Գալիս է Պոլոնիուսը*

ՊՈԼՈՆԻՈՒՍ.– Տեր իմ, գնում է իր մոր սենյակը.  
Ես էլ կմտնեմ արրասի ետև, որ ականջ դնեմ:  
Խոսք եմ տալիս ձեզ, թագուհին նրան խիստ կպարսավի:  
Եվ այո, ինչպես ինքներդ ասացիք, և լավ ասացիք,  
Հարմար կլինի, որ բացի մորից մի այլ ունկնդիր,  
– Քանզի մոր սիրտը չի կարող երբեք անաչառ լինել –  
Թաքուստից լսի խոսակցությունը: Մնաք բարով, տեր.  
Քնելուց առաջ ես նորից կգամ, լսածս կասեմ:  
ԹԱԳԱՎՈՐ.– Ընորհակալ եմ, սիրելի տեր իմ:  
*Պոլոնիուսը գնում է*

Օ՛հ, գարշ է մեղքս, և մինչև երկինք բուրում է հոտը.  
Այն ամենահին, անդրանիկ անեծքն է վրան դրված,  
Եղբայրասպանություն: Աղոթել, ավանդ, չեմ կարողանում  
Թեև փափագս նույնչափ սաստիկ է, որչափ որ կամքս.  
Ավելի զորեղ մեղքս հաղթում է զորեղ դիտումիս.  
Եվ մի մարդու պես, որ կատարելու երկու գործ ունի,  
Վարանոտ կանգնած՝ չգիտեմ արդյոք ինչից սկսեմ,  
Անտես անելով մեկն էլ, մյո՛ւսն էլ:  
Նույնիսկ եթե այս անիծյալ ձեռքը  
Եղբոր արյունով թանձրացած լիներ՝  
Մի՞թե գթառատ երկնքում չկա բավական անձրև,  
Որ լվա նրան, ձյունի պես ճերմակ:  
Ի՞նչ բանի է պետք ողորմությունը,  
Եթե ոչ մեղքը դիմագրավելու.  
Եվ աղոթքի մեջ ի՞նչ կա, բայց միայն երկու զորություն.–  
Փորձանքից պահվել, քանի չենք ընկած,  
Եվ ներում գտնել՝ ընկնելուց հետո: Վեր նայեմ ուրեմն.

Մեղքս անցանկ, բայց ո՛հ, աղոթքի ի՛նչ ձև ինձ կծառայե.  
 «Ներիր ինձ իմ ժանտ սպանությունը»:  
 Ոչ, դա հարմար չէ, քանի դեռ իմն են այն արդյունքները,  
 Որոնց համար է, որ ես գործեցի սպանությունը,–  
 Թագս, թագուհիս, ձեռք բերած փառքս:  
 Կարող է մի մարդ ներում ստանալ  
 Պահելով հանդերձ մեղքի արդյունքը:  
 Այո՛, աշխարհի եղծ կարգերի մեջ՝  
 Կարող է մեղքի ոսկելից ձեռքը  
 Մեկդի վտարել արդարությունը.  
 Սակայն այդպես չէ այնտեղ, վերևում.  
 Այնտեղ այդպիսի ձեռնածություններ բանի չեն գալիս.  
 Այնտեղ ամեն գործ դրվում է մեջտեղ հարազատ գույնով,  
 Եվ մենք ինքներս հարկադրվում ենք ճակատ առ ճակատ,  
 Ատամ առ ատամ մեր մեղքերի դեմ վկայություն տալ:  
 Էլ ի՛նչ ուրեմն, էլ ի՛նչ է մնում.  
 Մնում է փորձել, թե ի՛նչ է կարող ապաշխարանքը.  
 Եվ ի՛նչ չէ կարող, բայց ի՛նչ, երբ որ մարդ զղջալ չի կարող:  
 Օ՛հ, թշվառ վիճակ, կո՛րծք, սև ինչպես մահ,  
 Սոսնձոտ հոգիս, որքան ճգնում ես քեզ ազատելու,  
 Այնքան ավելի կաշկանդում ես քեզ:  
 Օգնեցե՛ք, հրեշտակներ, մի փորձ փորձեցե՛ք,  
 Վա՛ր, համառ ծնկներ. սիրտ պողպատալար,  
 Փափկիր, ինչպես որ նորամանուկի մատաղ ջիղերը,  
 Գուցե ճար կա դեռ:

*Հեռանում է և ծունկ չորում: Գալիս է Համլետը*

ՀԱՄԼԵՏ.– Ա՛յ, կարող էի ճիշտ հիմա անել, աղոթք է անում:  
 Եվ հիմա կանեմ, և նա այս կերպով երկինք կգնա.  
 Բայց արդյոք այդպես վրեժս կհանվի՞, պետք է լավ կշռել:  
 Մի պիղծ սրիկա հորս սպանի, և փոխարենը  
 Ես, միակ որդին, նույն սրիկային երկինք ուղարկեմ:  
 Բահ, շնորհ է դա, վարձ է, ոչ վրեժ:  
 Նա հորս բռնեց անազնիվ կերպով, լավ կերած խմած  
 Բոլոր մեղքերը լրիվ բողբոջած, վառ, ինչպես մայիս.  
 Եվ թե իր հաշիվն ինչ վիճակում է,  
 Ո՛վ է իմանում, բայց միայն Աստված,  
 Սակայն, դատելով մեր հանգամանքով և մտածությամբ,  
 Ծանր է վիճակը: Ուրեմն ի՛նչ վրեժ է, որ զարկեմ նրան  
 Ճիշտ, երբ իր հոգին սրբվելու վրա է,  
 Երբ որ հարդարված ու պատրաստված է իր անցքի համար:  
 Ոչ, ետ գնա, սո՛ւր, ընտրիր ավելի սոսկալի առիթ,  
 Երբ գինով քնած կամ կատաղությամբ բորբոքված լինի,  
 Կամ իր անկողնի ազգապղծական վայելչության մեջ,

Կամ թուղթ խաղալիս, կամ հայիոյելիս, մի գործի վրա,  
 Որից փրկութեան հոտ անգամ չգա,  
 Եվ այնպէս զարկիր, որ կրունկները երկնքին դիպչեն,  
 Եվ հոգին այնպէս պիղծ ու սև դառնա,  
 Ինչպէս այն դժոխքն, ուր գնալու է: Մայրս սպասում է...  
 Այդ դեղը միայն երկարեցնում է հիվանդ օրերդ:  
**ԹԱԳԱՎՈՐ.– (Չոքած)** Բառերս թեև թռչում են վերև,  
 Սակայն մտքերս մնում են ներքև:  
 Երբեք բառերը առանց մտքերի երկինք չեն հասնի:  
*Գնում է:*

ՏԵՍԱՐԱՆ ՉՈՐՐՈՐԴ  
**Թագուհու առանձնասենյակը**

*Գալիս են թագուհին և Պոլոնիուսը*

**ՊՈԼՈՆԻՈՒՍ.–** Նա իսկույն կգա: Խիստ եղեք իր հետ.  
 Ասացեք նրան, թե իր խաղերը մի տեղ են հասել,  
 Որ էլ հանդուրժել անկարելի է,  
 Եվ թե շատ անգամ ձեր մեծությունը միջամտել է,  
 Եվ պատվար եղել արքայի ցասման և նրա միջև:  
 Ես կթաքնվեմ հենց այստեղ: Խնդրեմ, խիստ եղեք իր հետ:  
**ՀԱՄԼԵՏ.– (Դրսից)** Մայր, մայր, մայր:  
**ԹԱԳՈՒՀԻ.– (Պոլոնիուսին)** Ապահով եղեք, իմ մասին երբեք վախ մի ունեցեք:  
 Հեռացեք. լսում եմ իր ոտքի ծայնը:  
*Պոլոնիուսը թաքնվում է արրասի ետև: Գալիս է Համլետը*

**ՀԱՄԼԵՏ.–** Ասա, մայր, ինչ կա:  
**ԹԱԳՈՒՀԻ.–** Համլետ, դու հորդ խիստ վշտացրել ես:  
**ՀԱՄԼԵՏ.–** Մայր իմ, դու հորս խիստ վշտացրել ես:  
**ԹԱԳՈՒՀԻ.–** Ամոթ է, ամոթ, դու վատ լեզվով ես պատասխան տալիս:  
**ՀԱՄԼԵՏ.–** Ամոթ է, ամոթ, դու չար լեզվով ես հարցումներ անում:  
**ԹԱԳՈՒՀԻ.–** Վնի, ինչ է, Համլետ:  
**ՀԱՄԼԵՏ.–** Ինչ է պատահել:  
**ԹԱԳՈՒՀԻ.–** Չե՞ս ճանաչում ինձ:  
**ՀԱՄԼԵՏ.–** Ինչո՞ւ չէ, շատ լավ,  
 Թագուհին ես դու, տեգորդ կինն ես, ոչ բարով՝ մայրս:  
**ԹԱԳՈՒՀԻ.–** Եթե այդպես է, մարդիկ կկանչեն քեզ խելքի բերեն:  
**ՀԱՄԼԵՏ.–** Թող, թող, եկ նստիր, չպետք է շարժվես,  
 Չպետք է գնաս մինչև դիմացդ հայելի պահեմ,  
 Որի մեջ տեսնես հոգուդ ներքինը:  
**ԹԱԳՈՒՀԻ.–** Ինչ ես անելու, ինձ սպանել ես ուզում. օգնություն,  
 Էհե՛յ, օգնություն:

ՊՈԼՈՆԻՈՒՍ.– (Արրասի ետևից) Էհեյ, օգնություն, հասե՞ք, օգնությո՞ւն:  
ՀԱՄԼԵՏ.– (Սուրը քաշելով) Այս ի՞նչ է, մո՞լկ է:  
*Սուրը խրում է արրասի մեջ*

Մեռնվ. մեկ դուկանտ, որ մեռավ–պրծավ:  
ՊՈԼՈՆԻՈՒՍ.– (Ետևից) Օ՛հ, սպանեց ինձ:  
*Ընկնում է գետին և մեռնում*

ԹԱԳՈՒՀԻ.– Վայ ինձ, ի՞նչ արիր:  
ՀԱՄԼԵՏ.– Չգիտեմ դեռ ի՞նչ, թագավորն է սա:  
ԹԱԳՈՒՀԻ.– Օ՛հ, ի՞նչ հախուռն, արյունահեղ գործ:  
ՀԱՄԼԵՏ.– Արյունահեղ գործ, գրեթե նույնչափ վատ, սիրելի մայր իմ,  
Որչափ սպանել մի թագավորի  
Եվ ամուսնանալ նրա եղբոր հետ:  
ԹԱԳՈՒՀԻ.– Որչափ սպանել մի թագավորի:  
ՀԱՄԼԵՏ.– Հենց այդպես, տիկին, այդպես ասացի:  
*Արրասը բարձրացնում է և տեսնում է, որ Պոլոնիոսն է*

Ա՛յ թշվառ, հախուռն, միջամուլս հիմար. բարի ճանապարհ.  
Քեզնից մեծի տեղ ենթադրեցի քեզ. ստացիր բախտդ:  
Տես, ի՞նչ վտանգ կա ուրիշի գործին խառնվելու մեջ:  
*Թագուհուն*

Հերիք ձեռքերդ այդպես գալարես, հանդարտ կաց, նստիր,  
Եվ թող տուր, որ ես սիրտդ գալարեմ.  
Եվ պիտի անեմ՝ թե կակուղ նյութից հորինված լինի.  
Եթե անիծյալ սովորությունը  
Պղնձացրած չլինի նրան,  
Եվ թումբ ու պատնեշ դարձրած ամեն զգացմունքի դեմ:

ԹԱԳՈՒՀԻ.– Ես ի՞նչ եմ արել, որ հանդգնում ես այդպես աղմուկով բար-  
բառել իմ դեմ:

ՀԱՄԼԵՏ.– Այնպիսի մի գործ,  
Որ համեստության շնորհքն ու շիկնումն աղավաղում է,  
Առաքիներությունը կեղծ է անվանում,  
Եվ անմեղ սիրո սիրուն ճակատից պճղում է վարդը  
Եվ նրա տեղը մի պալար դնում.  
Որ դարձնում է պսակի ուխտը  
Խաղամոլների սուտ երդումներից ավելի խարդախ.  
Որ ամուսնության դաշինքի միջից քաղում է ոգին,  
Եվ դարձնում է անուշ կրոնը բառերի հագներգ:  
Երկնքի դեմքը բոցավառված է,  
Այո, և այս պինդ, կայուն զանգվածը, թախծալից դեմքով,  
Որպես մոտեցած աշխարհի վերջին՝  
Վշտահարված է արարքիդ վրա:

ԹԱԳՈՒՀԻ.– Վայ ինձ, ի՞նչ արարք, որ հենց նախերգից

Այսպես գորգորում և որոտում ես:  
 ՀԱՄԼԵՏ.– Նայիր դու այստեղ, նախ այս պատկերին, և ապա սրան,  
 Այս երկու եղբոր դիմագիրներին:  
 Տես ինչ շնորհք կա այս դեմքի վրա.  
 Իսկն Հիպերիոնի գանգուր վարսերը.  
 Ճակատը կարծես Արամազդինն է,  
 Ա՛չքը Արեսի, սաստելու համար և հրամայելու,  
 Կեցվածքը նման բանբեր Հերմեսին,  
 Որ երկնահամբույր մի լեռան վրա նոր իջած լինի.  
 Մի համադրություն, մի ձև, իսկապես,  
 Որի վրա կարծես ամեն մի աստված իր կնիքն է դրել՝  
 Իր հավաստիքը աշխարհին տալու, թե ահա մի մարդ.  
 Այս էր ամուսինդ: Իսկ այժմ նայիր, այս մյուսին նայիր,  
 Այս է ամուսինդ. բորբոսնած մի հասկ,  
 Որ վարակում է առողջ եղբորը: Աչքեր ունեն դու.  
 Եվ կարողացար այս շքեղ լեռան արոտից իջնել,  
 Եվ պարարտանալ այս ճահիճի մեջ: Հա՛, աչքեր ունես:  
 Դու հո չես կարող սեր անվանել այդ.  
 Քո տարիքի մեջ արյան բորբոքը մեղմ է և խոնարհ,  
 Եվ դատողության սպասարկու է:  
 Եվ ինչ դատողություն կարող է անցնել սրանից սրան:  
 Զգացում ունես, այլապես իղձեր չէիր ունենա,  
 Բայց անտարակույս այդ զգացումը կաթված է ստացել,  
 Քանի որ երբեք խենթությունն այդքան չէր դուրս գա ճամփից.  
 Ոչ էլ զգացումն այդչափ ցնորքի գերին կդառնար,  
 Որ ընտրողության մի փոքրիկ քանակ պահած չլիներ  
 Այսքան ահագին մի տարբերություն զանազանելու:  
 Ինչ դև է եղել, որ աչքակապուկ խաղալով քեզ հետ՝  
 Շորթել է խելքդ: Աչքերը առանց շոշափելիքի,  
 Շոշափելիքը առանց տեսության,  
 Ականջներն առանց ձեռքի կամ աչքի,  
 Հոտառությունը առանց մյուսների,  
 Կամ հավատարիմ մի զգայարանի հիվանդ մասնիկն էլ  
 Չէր կարող այդքան անզգա լինել:  
 Ամոթխածությո՛ւն, ո՞ր է շիկնանքդ: Ո՛վ ըմբոստ դժոխք,  
 Եթե կարող ես տարիքոտ կնոջ ոսկորների մեջ  
 Այսքան հեստանալ՝ թող հրաբորբոք ջահելության մոտ  
 Առաքինությունն ինչպես մոմ լինի, և բոցից հալչի:  
 Ամոթ մի կոչիր, երբ գրոհ է տալիս բռնակալ հրայրքը,  
 Երբ սառույցն անգամ այնպիսի թափով բոցավառվում է,  
 Եվ դատողությունն ինքն էլ դառնում է կրքի կավատը:  
 ԹԱԳՈՒՀԻ.– Օ՛հ, Համլետ, լռիր, աչքերս ուղղում ես դեպ հոգուս խորքը,  
 Որտեղ տեսնում եմ սև ու խո՛ր բիծեր,  
 Որոնք չեն ուզում գունաթափ լինել:

ՀԱՄԼԵՏ.– Եվ ի՞նչ, և ապրել մի ճարպոտ մահճի գարշ քրտինքի մեջ,  
Աղտի մեջ խաշված՝ իրար գգվելով և սիրվելով  
Մի խոզանոցի աղքյուսի վրա:

ԹԱԳՈՒՀԻ.– Օ՛հ, էլ մի խոսիր, Համլետ, մի խոսիր.  
Ամեն մի բառդ մի դաշույնի պես ականջս է խրվում:  
Էլ բավական է, անուշիկ Համլետ:

ՀԱՄԼԵՏ.– Մի սրիկա՛, մարդասպան, մի անա՛րգ ստրուկ,  
Որ հին ամուսնուդ մեկ տասներորդի քսաներորդն էլ չէ,  
Թագավորների այդ խեղկատակը,  
Թագավորության և իշխանության քսակահատը,  
Որ պահարանից թագը գողացավ, դրեց գրպանը:

ԹԱԳՈՒՀԻ.– Ա՛խ, բավական է:

ՀԱՄԼԵՏ.– Ցնցոտիների, կարկատանների այդ թագավորը...  
*Գալիս է Ուրվականը*

Ա՛հ, փրկեցեք ինձ, և ձեր թներով ճախրեցեք վրաս,  
Երկնային պահակներ:– Ի՛նչ է ցանկանում սրբազան ոգիդ:

ԹԱԳՈՒՀԻ.– Ավանդ, ցնդել է:

ՀԱՄԼԵՏ.– Չէ՞ որ եկել ես դանդաղկոտ որդուդ հանդիմանելու,  
Որ փչացնելով ժամանակ ու կիրք՝ հետաձգում է  
Ահեղ հրամանիդ ստիպողական գործադրությունը:  
Օ՛հ, ասա՛:

ՈՒՐՎԱԿԱՆ.– Մի՛ մոռացիր դու. այցելությունս նրա համար է,  
Որ սրի կրկին գրեթե բթացած մտադրությունդ.

Նայիր, զարզանդը պատել է մորդ:

Օ՛հ, մտիր նրա ոգորոզ հոգու և նրա միջև.

Երևակայությունն ավելի խիստ է տկար մարմնի մեջ:

Խոսիր մորդ հետ:

ՀԱՄԼԵՏ.– Ի՛նչ ունես, տիկին:

ԹԱԳՈՒՀԻ.– Դո՛ւ ի՞նչ ունես, դո՛ւ, որ աչք ես հառել դատարկությանը,  
Եվ խոսակցում ես աննյութ օդի հետ:

Աչքերիդ միջից ոգիդ խուժում է վայրենի թափով,

Եվ փողի ձայնից քնից վեր թռած զինվորների պես՝

Պառկած մազերդ, կարծես կյանք առած,

Ցցվում են, կանգնում արմատների վրա:

Օ՛հ, քաղցրիկ զավակ, հուզմունքիդ տապի և բոցի վրա

Սառն համբերություն պետք է սրսկես: Այդ ո՛ր ես նայում:

ՀԱՄԼԵՏ.– Նրան, այ՛, նրան, տես ինչպե՛ս գունատ աչք է ոլորում:

Իր տեսքն ու դատը, եթե քարերին քարոզ կարդային,

Նրանց զգայուն կդարձնեին:– Մի՛ նայիր վրաս,

Մի՛գուցե քո այդ գթասրտությամբ

Փոխես իմ դաժան որոշումները, և այն ժամանակ

Իմ անելիքը թափուր կլինի իսկական գույնից.

Արցունքներ գուցե, փոխանակ արյան:

ԹԱԳՈՒՀԻ.– Ո՞ւմ հետ ես խոսում:

ՀԱՄԼԵՏ.– Չե՞ս տեսնում, այնտեղ:

ԹԱԳՈՒՀԻ.– Ոչինչ չեմ տեսնում, թեև տեսնում եմ ամենն ինչ որ կա՛:

ՀԱՄԼԵՏ.– Եվ ո՞չ էլ լսում:

ԹԱԳՈՒՀԻ.– Եվ ոչ էլ լսում, բացի մեր ձայնից:

ՀԱՄԼԵՏ.– Վահ, այնտեղ նայիր, տես, հեռանում է.

Հայրս, իր զգեստով, ինչպես երբ ողջ էր,

Նայիր, հենց հիմա ելնում է դռնից:

*Ուրվականն անհետանում է*

ԹԱԳՈՒՀԻ.– Դա քո ուղեղի դարբնածն է միայն.

Այդպես անմարմին գոյացություններ ստեղծելու մեջ

Երևակայությունը շատ ընդունակ է:

ՀԱՄԼԵՏ.– Երևակայությունն, երակս նույնքան չափով է խփում,

Որքան որ քոնը, և նույնքան առողջ նվազ է ածում:

Ոչ, ասածներս խենթությունից չեն.

Կուզե՞ս, փորձիր ինձ, և ես կարող եմ ասածս կրկնել,

Իսկ խենթությունը շեղումներ կաներ:

Ի սեր Աստուծո, մայր իմ, մի՛ դնիր քո հոգու վրա

Հանգստացուցիչ այն սպեղանին,

Թե խենթությունս է քեզ հետ խոսողը, ոչ թե քո մեղքը.

Դա խոցոտ տեղը մաշկով կծածկի, կաշի կբերի,

Այնինչ գարշելի ապականությունը, ներսից փորելով,

Պիտի վարակի անտեսանելի:

Խոստովանք արա երկնքի առաջ,

Ջղջա անցյալը, խոյս տուր գալիքից,

Աղբյուս մի՛ շաղ տուր վատ խոտերի վրա, որ էլ չուռճանան:

Ներիր ինձ իմ այս առաքինությունը,

Քանզի այս գիրացած ժամանակների պարարտության մեջ

Առաքինությունն ինքն է ստիպված

Մոլորություններից ներում աղերսել, այո, խոնարհվել,

Եվ հրաման խնդրել՝ նրան բարություն անելու համար:

ԹԱԳՈՒՀԻ.– Ա՛, Համլետ, սիրտս միջից կես արիր:

ՀԱՄԼԵՏ.– Դեն՝ ձգիր քեզնից նրա վատ կեսը,

Եվ մյուս կեսով մաքուր կյանք վարիր: Բարի գիշեր քեզ:

Բայց հորեղբորս գարշ անկողինը մի՛ մտնիր կրկին.

Առաքինություն ստանձնիր գոնե, թեկուզ չունենաս.

Քանզի այն հրեշ սովորությունը,

Որ ճարակում է ամեն զգացում,

Մոլորությանց մեջ դե, գոնե այս բանով հրեշտակ է նա,

Որ նաև ազնիվ և լավ գործերի վարժության համար

Տալիս է հագուստ կամ մի համազգեստ՝ դյուրով հազնելի

Ջսպիր քեզ այս գիշեր, և դա մի տեսակ դյուրություն կտա

Հաջորդ գիշերվա ժուժկալությանդ:

Երրորդն ավելի դյուրին կլինի. և վարժությունը  
Կարող է, այո, նույնիսկ բնության դրոշմը փոխել,  
Կամ հաղթել դևին, կամ թե հրաշալի իր կարողությամբ  
Դուրս ձգել նրան: Նորեն, բարի գիշեր,  
Եվ երբ դու ուզես օրհնված լինել,  
Ես էլ կխնդրեմ քո օրհնությունը:

### **Պոլոնիուսին ցույց տալով**

Այս մարդու համար սրտանց զղջում եմ. բայց երկինքն ուզեց,  
Նրան ինձանով և ինձ նրանով պատժելու համար,  
Որ ես լինեի իր խարազանը և դատավորը:  
Կտանեմ նրան, և նրա մահվան  
Ինքս կլինեմ պատասխանատուն.  
Կրկին և կրկին բարի գիշեր քեզ.  
Թող անգութ լինեմ, հենց միայն բարի լինելու համար:  
Վատ է սկսվել, բայց դեռ գալու է ավելի վատը:  
Մեկ բառ էլ, մայր իմ:

ԹԱԳՈՒՀԻ.– Ինչ պետք է անեմ:

ՀԱՄԼԵՏ.– Ոչ այս բաները, որ հիմա կասեմ. ոչ, ամենևին.

Թող փքված արքան նորեն քաջի քեզ իր անկողինը,  
Եվ փայփայելով թուշդ կսմթի, քեզ «մուկիկ» կանչի,  
Եվ իր գարշահոտ մի զույգ համբույրով,  
Կամ թե անիծյալ իր մատներով վիզդ շոյելով՝  
Բոլոր եղածը խոստովանել տա,  
Թե ես էպպես խենթ չեմ, այլ խենթ եմ խորամանկորեն:  
Հարմար կլինի, որ հայտնես նրան. քանի որ ղվ է,  
Եթե ոչ միայն մի սիրուն, զգաստ, խոհեմ թագուհի,  
Որ մի չղջիկից կամ մի պադդուկից, արջակատուից  
Այսպես թանկագին տեղեկություններ թաքցրած պահեր:  
Ոչ, այլ հակառակ գաղտնապահության և ողջմտության՝  
Բաց քո զամբյուղը տանիքի վրա,  
Թող թռչունները թռչեն, և ինքդ մտիր նրա մեջ,  
Եվ հանրածանոթ կապիկի նման՝ փորձելու համար,  
Կտուրից ընկիր և վիզդ կոտրիր:

ԹԱԳՈՒՀԻ.– Ոչ, վստահ եղիր, եթե բառերը շունչ են, շունչը՝ կյանք,  
Կյանք չկա իմ մեջ, քո ասածները արտաբերելու:

ՀԱՄԼԵՏ.– Գիտե՞ս, որ պետք է Անգլիա գնամ:

ԹԱԳՈՒՀԻ.– Մոռացել էի, այդպես է վճռած:

ՀԱՄԼԵՏ.– Նամակ է կնքված, և իմ այն երկու դասընկերները,

Որոնց կարող եմ այնքան վստահել, որքան իժերի,  
Իրենք են տանում հրամանաթուղթը.

Պետք է ինձ համար ճանապարհ հարթեն,

Եվ առաջնորդեն դեպի որոգայթ: Հոգ չէ, թող գործեն.

Զվարճություն է ական փորողին

Հենց իր սեփական պայթուցիկներով օդը թռցնել.  
 Եվ բանս վատ է, եթե ես նրանց ականների տակ  
 Դեռ մի կանգուն էլ խորունկ չփորեմ,  
 Եվ ցատկեցնեմ մինչև լուսինը: Ինչ քաղցր բան է,  
 Երբ երկու դավեր գալիս են շիտակ իրար հանդիպում:  
 Այս մարդն ինձ համար գործ է դառնալու:  
 Պետք է փորոտիքը քաշ տամ ու տանեմ կողքի սենյակը:  
 Մայր, բարի գիշեր: Այս խորհրդականն ինչպես լուռ ու մունջ,  
 Եվ խորհրդապահ, և ծանրախոհ է,  
 Սա, որ իր կյանքում խենթ ու շաղակրատ մի սրիկա էր:  
 Եկ, պարոն, պետք է գործդ ավարտեմ: Մայր, բարի գիշեր:

*Հակառակ ուղղությամբ դուրս են գնում: Համլետը քաշ է  
 տալիս Պոլոնիուսի դիակը*



## ԲԱՌԱՐԱՆ

- որպես դիպվածով հանդիպի** – իբր պատահաբար, իբր թե անակնկալ հանդիպել  
**թաքչել** – թաքնվել  
**անտես տեսնենք** – աննկատ մնալով տեսնենք  
**մտացնորություն** – մտքի ցնորվածություն, անկապ, ցնորված խոսք  
**բարեպաշտիկ** – բարեպաշտ՝ հավատացյալ, աստվածավախ  
**շաքարոծել** – շաքարով օծել, քաղցրացնել, վատը լավի տեղ մատուցել  
**սնգույր** – դեմքի (մարմնի) քսուք, շպար  
**գոռ** – ահեղ, ահավոր, խրոխտ, հպարտ, սեգ  
**պարսաքարեր** – պարսատիկով նետվող քարեր, փոխաբերաբար՝ բամբասանք, զրպարտություն, չարախոսություն  
**անձկություն (անձուկ)** – նեղ լինել, նեղություն, նեղվածություն, սրտնեղություն, նաև՝ տագնապ, կարոտ, տենչանք  
**քամահրել** – արհամարհել, բանի տեղ չդնել  
**երկբայություն** – տարակուսանք, երկմտություն, երկընտրանք, կասկածանք  
**ախտաժետվել** (ախտաժետ) – հիվանդ, ցավագար, ախտավոր, ախտալից, ախտաժետվել՝ դառնալ այդպիսին  
**գծուծ** – անշուք, նվաստ, աղքատիկ, խեղճ, չնչին, անարգ, ժլատ, մանրախնդիր  
**պարադոքս** – սովորականից դուրս, ընդհանուրից տարբեր, անսովոր, տարակարծություն, տարամտություն  
**քինախնդիր** – քենը՝ վրեժը, հանել ձգտող, վրեժխնդիր, հատուցման հետամուտ, չներող, չար, չարախնդիր  
**կուսանոց** – կույսերի մենաստան՝ վանք  
**դրանիկ** – արքունական պաշտոնյա, պալատական զորք, զորագունդ  
**խժալուր** – լսելիքին անախորժ, ականջ ծակող, աններդաշնակ, խառնակ  
**թուխս** – ձվերի վրա նստող և ձագ հանող թռչուն, հավն իր ճուտերով  
**մունետիկ** – թագավորական հրամանները հայտարարող պաշտոնյա, որևէ բան հռչակող  
**ծվիկ-ծվիկ անել (ծվեն-ծվեն անել)** – պատառոտել, մասերի բաժանել, հո-

շոտել, բզկտել

**մնջակատակ** – համր կատակ, ծամածռություն, դեմքի և ձեռքերի հեգնական շարժում, ծաղրածուի կատակներ

**Տերմագանտ** – միջնադարյան կրոնական ներկայացումներում (միստերիաներ) մարմնավորել է դաժան աստվածություն, ում երկրպագել են մահմեդականները

**Հերովդես** – հրեաների թագավոր, ում օրոք ծնվել է Քրիստոսը: Անգլիական միջնադարյան պատկերացումների համաձայն՝ եղել է շատ դաժան բռնակալ

**միմոս** – ծաղրածու, խեղկատակ

**լիսեռ** – առանցք, սռնի, **ծնկների լիսեռ** – ծնկների առանցք

**գուգախառնվել** – միախառնվել, միավորվել

**վուլկան** – հրաբուխ, վուլկանի սալ՝ հրաբուխի քար

**գողոն** – գողացած իր, գողոնք

**քամելեոն** – մողեսների խմբին պատկանող կենդանի, որ ունակ է գույնը փոխել շրջապատին համապատասխան, փոխաբերաբար՝ անկայուն, անհաստատ, անսկզբունք մարդ

**Հուլիոս Կեսար** – (**Գայոս Հուլիոս Կեսար, Ք.ծ.ա. 100–44**) – հռոմեական ինքնակալ, հանրապետականների դավադրության զոհ

**Կապիտոլիում** – բլուր Հռոմում, որի վրա գտնվող միջնաբերդում սենատը գումարում էր իր նիստերը: Հուլիոս Կեսարը սպանվել է այդտեղ

**Բրուտոս** – (**Մարկոս Յունիոս Բրուտոս, Ք.ծ.ա. 84–42**) – քաղաքական գործիչ Հին Հռոմում, Հուլիոս Կեսարի դեմ դավադրություն կազմակերպողներից մեկը: Դավադիրների մեջ տեսնելով վերջինիս՝ Կեսարը բացականչել է. «Եվ դո՛ւ, Բրուտո՛ս»: Դարձել է դավաճան դարձած մերձավորներին ուղղված թևավոր խոսք:

**զավեշտաբան** – կատակախոս, կատակաբան

սամույր – կզաքիսների ցեղին պատկանող թանկարժեք մորթի ունեցող կենդանի, **սամույր հագնել** – սամույրի մուշտակ հագնել

**փայտե ձի** – Անգլիայում ժողովրդական տոնախմբությունների ժամանակ փայտե ձիերով հեծյալների միջև կազմակերպվում էին մրցումներ, զվարճանքի այդ ձևը Շեքսպիրի ժամանակ արդեն մոռացվել էր

**մունջ** – համր, խոսելու կարողությունից զուրկ, լուռ, չխոսկան, փոխաբերաբար՝ անձայն, վիճակին համակերպվող

**Ֆեբոս (Փոյբոս)** – շողափայլ, փայլուն (հունարեն), Ապոլլոնի երկրորդ անունը՝ որպես Արևի (Հելիոս) պաշտամունքի կրող, արեգակնային աստված

**Պոսեյդոն** – հունական դիցաբանության մեջ ծովերի աստվածը, Քրոնոսի որդին, հռոմեական դիցաբանության մեջ նրան համապատասխանում է Նեպտունը

**Հիմենեյ** – ամուսնության աստվածը հունա-հռոմեական դիցաբանության մեջ

**օշինդր** – բարդաձաղկավորների ընտանիքին պատկանող բազմամյա բույս, բարձվենյակ, աբսինթ, նգածաղիկ, ունի սուր հոտ և դառը համ, դեղաբույս է

**տհաս պտուղ** – չհասունացած, խակ պտուղ

**փուք (բարեկամ)** – փքած, ուռեցրած, իրական արժեքից գերազնահատված

**հակընդդեմ** – դեմառդեմ, դեմ դիմաց, նաև՝ իրար հակառակ, ներհակ

**Գոնզագո** – Լուիջի Գոնզագո, 1538 թ. ականջի մեջ թույն լցնելով՝ սպանեց Ուրբանոյի դուքսին, ում կինը Գոնզագո ընտանիքից էր: Ենթադրվում է, որ Շեքսպիրը ծանոթ է եղել իտալերեն գրված այդ պատմությանը:

**դժխեմ** – չարաբարո, դժնի, ժանտ, անագորույն, չարիք ծնող

**Հեկատե** – հունական դիցաբանության մեջ մանկածնության, հարստության, որսորդության, անասունների բազմացման և այլ հովանավորություններ ունեցող աստվածուհի: Միջնադարում համարվել է պիղծ ուժերի հովանավոր, ով դժոխքի շների և վիուկների ուղեկցությամբ շրջում էր գերեզմանների շուրջը: Այստեղից էլ «Հեկատեի անեծք» արտահայտությունը:

**փետուր գլխարկիս** – գլխարկի վրա ամրացված փետուր

**Դամոն** – երկու հավատարիմ ընկերների պատմությունը ներկայացնող վիպակի հերոս, նվիրված ընկերության խորհրդանիշ

**Դիոս** – նկատի ունի գերագույն աստծուն՝ Զևսին (Յուպիտեր), ակնարկը վերաբերում է Համլետի սպանված հորը

**մարմաջ** – տենչ, բուռն ձգտում, մոլուցք, նաև՝ մոլաքոր, քրտնխաշ

**«մինչև խոտը բուսի...»** – առածն ամբողջությամբ. «Մինչև խոտը բուսի, նիհար ձին սովից կսատկի»

**մզլոտել** – բորբոսնել, աննպաստ պայմաններից (խոնավություն, տաքություն) փշանալ, հնանալուց քայքայվել

**Ներոն** – հռոմեական ինքնակալ (37-68): Հայտնի է իր դաժանությամբ, սպանել է մորը, հալածել քրիստոնյաներին

**ժանտ** – դաժան, անողոք, անգութ, նաև՝ անտանելի, սաստիկ, ահավոր, սուկալի, ծանր, դառը

**արրաս** – նկարահյուս գորգ, հյուսկեն (գորբելեն), ինչի ետևում դարանակալած Պոլոնիոսին Համլետը սրախողխող է անում

**պճղել** – բաժանել, մասնատել, կիսել

**պալար** – կոճղեգ, գնդարմատ, բույսի արմատի կամ ցողունի ստորգետնյա հատված, գնդաձև մաս, նաև՝ մարմնի վրա գոյացած ուռուցք

**հագներգ (հագներգություն)** – տաղ, բանաստեղծություն, վիպերգ, դյուցազներգություն, չափածո երկի մի մասը, գուսանական երգ

**Հիպերիոն** – տիտան, Ուրանոսի և Գեայի որդին, Հելիոսի՝ արևի աստծու անուններից մեկը

**Արամազդ** – այստեղ օգտագործված է Զևսի փոխարեն՝ որպես գերագույն աստված

**Արես** – հունական դիցաբանության մեջ պատերազմի աստվածը

**Հերմես** – հունական դիցաբանության մեջ Զևսի բանբերն ու սուրհանդակը, առևտրի, հնարագիտության, խորամանկության աստվածը

**երկնահամբույր** – երկինքը համբուրող, երկնքին կպած, բարձրաբերձ, երկինքը համբուրող լեռ

**աչքակապուկ** – մանկական խաղ. մեկի աչքերը կապում են, և նա փակ աչքերով պիտի բռնի իրեն խփողներից մեկին

**հեստանալ (հեստ)** – անհնազանդ, անզուսպ, ըմբոստ, մոլեգին, կատաղի

**սիրվտել** – սիրահարվել, իրար սիրել, սիրաբանել

**աղբյուս** – աղբ, աղբակույտ

**քսակահատ** – նույնն է՝ գրպանահատ, գող

**զարզանդ** – զարհուրանք, սարսափ, սոսկում, զարհուրելի, սարսափելի

**ոգորել** – մարտնչել, պայքարել, մաքառել, կռվել, դիմադրել

**ճարակել** – ուտել, արածել, մաշել, սպառել, փոխաբերաբար՝ ոչնչացնել, հնձել  
**դյուրություն** – հանգստություն, անդորրություն, հարմարություն, հանգստա-  
վետություն, դյուրին – հեշտ, հարթ, ուղիղ, պարզ, մատչելի

**ժուժկալություն** – տոկունություն, դիմացկունություն, համբերատարություն,  
չափավորություն, զսպություն, ժուժկալ – տոկուն, դիմացկուն, համբերատար,  
գուսպ, չափավոր

**խարազան** – կաշվե մտրակ անասունների համար, փոխաբերաբար՝ պատիժ,  
հալածանք, կեղեքում, ճնշում

**պադդոկ** – գորտ, երկկենցաղ կենդանի, ապրում է ճահիճներում և ջրամոտ  
տեղերում

**արջակատու** – վայրի կատվի տեսակ

Ամբողջ թատերգության հիմքում արդարության որոնման և արդարության  
չհասնելու ողբերգությունն է: Պալատական դավերին ու դավադրություննե-  
րին, որոնց կազմակերպիչները երկրի ղեկավարներն են՝ թագավորն ու թա-  
գուհին, պալատական պաշտոնյաներն ու նրանց աջակցող ուժերը, Համլետը  
փորձում է հակադրել արդարության վրեժը: Նրա կերպարը հոգեբանորեն  
ձևավորվում է գործողությունների մեջ: Ազնիվ ուսանողը, ով եկել էր հոր մա-  
հը ողբալու, բացահայտում է պալատական դավերի մի մուտք աշխարհ և, ի  
վերջո, ինքն էլ զոհ գնում այդ դավերին:

Կերպարների բնութագրությունը սպառիչ է և ամբողջական: Թե՛ դրական,  
թե՛ բացասական հերոսներն ունեն իրենց գործելու շարժառիթները: Չկա մե-  
կը, որ խոսքի մեջ տկար լինի:

Ողբերգությունը գրված է բանաստեղծության ձևով: Թարգմանության մեջ  
պահպանված է խոսքի արտաբերության կշռույթը, լեզուն արտակարգ ճոխ  
է ու պատկերավոր, համեմատություններն ու մակդիրները շատ դիպուկ են ու  
բնութագրական: Թե՛ երկխոսությունների և թե՛ բազմիցս հանդիպող մենախո-  
սությունների մեջ Շեքսպիրն օգտագործել է հռետորական արվեստին բնորոշ  
ճարտասանական միջոցներ: Ոճական ամբողջությամբ ևս ողբերգությունը կա-  
տարյալ է: Իմաստախոսություններով հագեցած է գրեթե բոլոր հերոսների խոս-  
քը: Դրանք սեղմ և բնութագրական ասույթներ են: Ահա դրանցից մի քանիսը:

## ԱՍՈՒՅԹՆԵՐ

- Նա [հոր ուրվականը] օդի նման անխոցելի է:
- Թուլություն, անունդ կին է:
- Բայց պայթի, սիրտ իմ, քանի որ պիտի կապ դնեմ լեզվիս:
- Առաքինությունն ինքն էլ ազատ չէ զրպարտությունից:
- Առ ամեն մարդուց նրա կարծիքը,  
Դատողությունդ քեզ համար պահիր:
- Ոչ պարտք առ, ոչ տուր, քանզի շատ անգամ փոխատվությամբ թե՛ դրամն  
ես կորցնում, թե՛ բարեկամին...

- Այս օրվա օրը պարկեշտ մարդ լինել՝ նշանակում է տասը հազարից սուկ մեկը լինել:
- Ծեր մարդկանց աչքերից մի տեսակ թանձր ռետին կամ սալորենու խեժ է ծորում:
- Անհանգ ոտանավորի ոտքը կաղ կմնա:
- Տուր ինձ այն մարդը, որ իր կրքերի գերին չլինի, եվ ես սրտիս մեջ տեղ կտամ նրան, սրտին սրտի մեջ:
- Բառերս թեև թռչում են վերև, Սակայն մտքերս մնում են ներքև:
- Երբեք բառերը առանց մտքերի երկինք չեն հասնի:
- Երևակայությունն ավելի խիստ է տկար մարմնի մեջ:
- Թող անգութ լինեմ հենց միայն բարի լինելու համար:
- Սուր խոսքը քնում է հիմար ականջում:
- Այնպիսի արագությամբ հասիր ինձ մոտ, ինչպես եթե մահից փախչեիր:
- Մի ցավը դիպչում է մյուսի կրունկին՝ այնչափ որ շատ են:
- Բոցեղեն խոսքեր ունեմ ասելու, որ կվառվեին, Եթե այս հիմար արտասուքներս չհանգցնեին...
- Փոքրերի համար վտանգավոր է Ընկնել գորավոր ախոյանների Շաչուն կայծասփյուռ սրերի միջև:
- Սրան ճանաչելն անգամ անպատվություն է:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Երրորդ արարվածը կարդալուց հետո ցանկալի է, որպեսզի կարդաք ամբողջ երկը և պատասխանեք մի շատ ընդհանուր հարցի՝ ինչի մասին է Շեքսպիրի «Համլետ» ողբերգությունը:
2. Որտեղ է կատարվում ողբերգությունը:
3. Առանձնացրեք գործող հերոսներին և բնութագրեք նրանց:
4. Ո՞վ էր Համլետը, ինչ մտատանջություններ ու կասկածներ ուներ և հոր մահվան մանրամասները բացահայտելու համար ինչ քայլերի է դիմում:
5. Բնավորության ինչ հատկանիշերով են առանձնանում թագավորն ու թագուհին:
6. Ո՞վ էր Պոլոնիուսը և ո՞րն է նրա դերն ու կոչումը թատերգության մեջ: Ինչպիսի կերպար է նա:
7. Ովքեր էին վերահսկում Համլետի գործողությունները:
8. Անգիր արեք «Լինել թե չլինել» հատվածը, արտասանեք և փորձեք բացահայտել ասելիքի իմաստը:
9. Ներկայացրեք Համլետի և Օֆելյայի հանդիպման տեսարանը: Ինչ են խոսում նրանք:
10. Համլետի հեռանալուց հետո ինչ դատողություններ է անում Օֆելյան նրա մասին: Համլետի վարքի կապակցությամբ ինչ են խոսում թագավորն ու Պոլոնիուսը:

11. Ներկայացրե՞ք երկրորդ տեսարանը՝ Համլետը և դերասանները: Ի՞նչ խորհուրդներ է տալիս Համլետը դերասաններին:
12. Ներկայացումից առաջ ինչպե՞ս է Համլետը գնահատում Հորացիոյին և ի՞նչ հանձնարարություն է տալիս նրան:
13. Մանրամասն ներկայացրե՞ք թատրոնի թատրոնի մեջ տեսարանը: Ովքե՞ր էին դիտում ներկայացումը: Ի՞նչ են ներկայացնում դերասանները: Ներկայացման դիպաշարով Համլետն ի՞նչ էր ուզում բացահայտել: Ինչո՞ւ էր Համլետն այդ ներկայացումը վերնագրել «Մկան թակարդ»:
14. Ներկայացումից հետո ի՞նչ ապրումներ են ունենում թագավորն ու թագուհին:
15. Ներկայացրե՞ք Համլետի և մոր հանդիպման տեսարանը: Ի՞նչ բառերով են նրանք խոսում իրար հետ: Ի՞նչ է ասում Համլետը մորը:
16. Մոր հետ խոսելիս Համլետն ինչպե՞ս է գնահատում իր հորն սպանած և նրա թագն ու գահը յուրացրած հորեղբորը:
17. Ինչպե՞ս է ավարտվում երրորդ արարվածը:
18. Հանուն ինչի՞ էր պայքարում արքայազն Համլետը, և որն էր նրա գիտակցված գործողությունների բուն նպատակը:
19. Ամբողջ ողբերգությունը լի է շեքսպիրյան հանճարի փայլատակումներով. մի մասը ասույթների և իմաստախոսությունների ձևով ներկայացվեց ձեզ: Ողբերգությունը կարդալու ընթացքում փորձե՞ք գտնել նոր ասույթներ և ավելացնել այդ շարքին:
20. Խոսքի պատկերավորման ի՞նչ միջոցներ է օգտագործել Շեքսպիրը:
21. Ո՞վ է հայերեն թարգմանել «Համլետ» ողբերգությունը: Շեքսպիրից ուրիշ ի՞նչ թատերգություններ է նա թարգմանել հայերեն:



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....	3
ՄԵՍՐՈՂ ՄԱՇՏՈՑ .....	6
Հայ ժողովուրդը և հայոց գիրը .....	6
Նախամաշտոցյան գիր .....	6
Մեսրոպ Մաշտոցը և հայ գրերի գյուտը .....	8
Հայոց այբուբենի գաղտնիքները .....	11
Մեսրոպ Մաշտոցի շարականները .....	13
Կորյուն: «Վարք Մաշտոցի» (հատվածներ) .....	16
Մեսրոպ Մաշտոցի մասին .....	18
Մովսես Խորենացի .....	18
Հայոց գրերի պատմական նշանակությունը:	
Գրերի գյուտին հաջորդող գրական-մշակութային շարժումը .....	19
Ղազար Փարպեցի .....	25
ՓԱՎԱՏՈՍ ԲՈՒԶԱՆԴ .....	27
Փավստոս Բուզանդը և նրա «Հայոց պատմություն»-ը .....	27
Արշակ և Շապուհ .....	31
Շապուհ թագավորի մասին .....	31
Թե ինչպե՞ս Շապուհ թագավորը կրկին	
Արշակ թագավորին կանչեց .....	31
Թե ինչպե՞ս Շապուհը... փորձում է Արշակի միտքը և	
բանտարկում նրան .....	32
Հայոց Արշակ թագավորի մահվան մասին .....	36
ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ .....	39
Մովսես Խորենացին և նրա «Հայոց պատմություն»-ը .....	40
«Հայոց պատմության» կառուցվածքն ու բովանդակությունը .....	41
Հայկ և Բել .....	45
Հայկի ապստամբության մասին .....	45
Պատերազմի և Բելի մահվան մասին .....	46
Հայկից սերված ցեղերի և զավակների մասին .....	47
Արա Գեղեցիկ և Շամիրամ .....	50
Արայի և նրա մահվան մասին .....	50
Տիգրան և Աժդահակ .....	53

Տիգրանի մասին.....	53
Աժդահակի երկյուղի և կասկածանքի մասին.....	54
Թե ինչպես Աժդահակը... դիպվածը տեսնում է երագով.....	54
Խորհրդակիցների խոսքերը.....	55
Աժդահակի թուղթը.....	56
Թե ինչպես նենգությունը հայտնի դարձավ .....	57
Արտաշես և Արտավազդ .....	60
Ալանների հարձակումը մեզ վրա և պարտությունը.....	60
Արտաշեսի մահվան մասին .....	61
Արտավազդի թագավորելը.....	62
Խորենացին՝ բանաստեղծ.....	64
Ողբ.....	65
ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ .....	69
«Սասնա ծռեր» դյուցազներգությունը .....	69
«Սասունցի Դավիթ» (հատվածներ) .....	73
Ճյուղ առաջին .....	73
Ճյուղ երրորդ.....	85
Ճյուղ չորրորդ.....	104
Հովհաննես Թումանյան. «Սասունցի Դավիթը» (հատվածաբար).....	108
Հոմերոս. «Ոդիսական» (հատված).....	116
ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԵՌԵՐՆ ՈՒ ՏԵՍԱԿՆԵՐԸ... 123	
ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅՈՒՆ .....	127
ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ.....	135
Կյանքը և ստեղծագործությունը .....	135
Գրիգոր Նարեկացու մասին.....	137
Մեղեդի ծննդի (բնագիր և փոխադրություն) .....	141
Արվեստը .....	143
ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ .....	146
Կյանքը և ստեղծագործությունը .....	146
Ներսես Շնորհալու մասին .....	147
Առաւօտ լուսոյ (բնագիր և փոխադրություն).....	148

Հավատով խոստովանիմ .....	156
Երբ մահվան հրեշտակը փչի յուր փողը խիստ .....	157
Հանելուկ .....	157
Պոեմները .....	158
ՀԱՅՐԵՆՆԵՐ: ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿ .....	160
Նահապետ Քուչակ .....	160
Նահապետ Քուչակի մասին .....	162
Խառակոնիս .....	163
Հայրեններ .....	164
Հայրենների արվեստը .....	167
ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ .....	171
Կյանքը և ստեղծագործությունը .....	171
Սայաթ-Նովայի մասին .....	175
Աշխարհումըս ախ չիմ քաշի (բնագիր և փոխադրություն) .....	177
Բանաստեղծական արվեստը .....	181
ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ .....	186
Կյանքը և ստեղծագործական ուղին .....	186
Խաչատուր Աբովյանի մասին .....	190
Վեպ: Վեպի տարատեսակները .....	192
Դիպաշար: Դիպաշարի բաղկացուցիչ մասերը .....	194
Հառաջաբան .....	196
ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ .....	206
Կյանքը և ստեղծագործական ուղին .....	206
Նոր Նախիջևան .....	207
Միքայել Նալբանդյանի մասին .....	208
«Իտալացի աղջկա երգը» բանաստեղծության մասին .....	210
Իտալացի աղջկա երգը .....	211
Տիկնայք փափկասունք .....	213
Ազատություն .....	214
Ապոլլոնին .....	217
Մանկության օրեր .....	218

ՌԱՓԱՅԵԼ ՊԱՏԿԱՆՅԱՆ	222
Կյանքը և ստեղծագործական ուղին	222
Պատկանյանների գերդաստանը	223
«Գամառ Քաթիպա» խմբակցությունը	223
Արաքսի արտասուքը	224
Մայր Արաքս	228
Դիմառնություն	228
Օրորոցի երգ	229
Օրորոցային երգեր	230
Վարդանի երգը	231
Հայաստանի անվանումները	233
Նոր տարի	233
ՎԻԼՅԱՄ ՇԵՔՍՊԻՐ	236
Կյանքը և ստեղծագործական ուղին	236
Շեքսպիրի մասին	238
Շեքսպիրական	239
«Համլետ» ողբերգության կառուցվածքն ու բովանդակությունը	243
Համլետ (երրորդ արարվածը)	248
Ասույթներ	275



ԴԱՎԻԹ ՎԱԶԳԵՆԻ ԳԱՍՊԱՐՅԱՆ

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Խմբագիր՝

Արտակ Ոսկանյան

Սրբագրիչ՝  
Ձևավորումը՝  
Նկարիչներ՝

Անահիտ Պապյան  
Շողիկ Գալստյանի  
Սոնյա Դավիդյան

Շապիկի ձևավորումը՝

Աննա Կարապետյան  
Աննա Կարապետյանի

Պատվեր՝ 1146: Տպաքանակ՝ 37678:  
Թուղթը՝ օֆսեթ: Չափսը՝ 70x100/ 1/16, 18 տպ. մամուլ:  
Տառատեսակը՝ GHEA Koryun:

Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչություն ՓԲԸ տպարանում